
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ



ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ᐊᒃᑐᐃᓐᓇᓕᒃ ᓱᓴᐃᑦᑐᐃᓕᓴᐅᓕᖅ ᓄᓇᕗᑦ ᓯᓚᑖᓂᒃ 1955

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
VIII ՀԱՏՈՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԲԱՐՆԵՐ
ՄԻՔԱՅԵԼ ԵՎ ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆՆԵՐԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍՆԶՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՏՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ)

ԳԻՐՔ Բ.

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակություն

ԵՐԵՎԱՆ 2023

ՀՏԴ 821.19-31 Իսահակյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Ի 755

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ
Ա. Վ. Իսահակյան (գլխավոր խմբագիր), Գ. Է. Գասպարյան,
Վ. Գ. Դևրիկյան, Ա. Լ. Մանուկյան, Է. Գ. Միլիտոնյան,
Ա. Վ. Մուշեղյան, Ս. Պ. Մուրադյան, Մ. Հ. Սարգսյան, Լ. Կ. Վիրաբյան


Բնագրերը հրատարակության պատրաստեցին
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՑԱՆԸ և ԼԱՈՒՐԱ ՎԻՐԱԲՑԱՆԸ
Նախաբանը գրեց և ծանոթագրեց
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՑԱՆԸ

Հատորի խմբագիրներ՝ Ա. Վ. Իսահակյան, Վ. Գ. Դևրիկյան

Իսահակյան Ավետիք
Ի 755 Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով: Հատոր ութերորդ: Ուստա Կարո և Օրթեն Հարութ (Երկրորդ տարբերակ): Գիրք Բ / Ավ. Իսահակյան.– Եր.: «Էդիթ Պրինտ» հրատ., 2023, 1040 էջ:

ՀՏԴ 821.19-31 Իսահակյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-75-939-5
© Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2023
© ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔ, 2023



Ավետիք Իսահակյանը իր երևանյան տան այգում, 1957 թ.
(լուսանկարը՝ Իդա Կարի)

ՆԱԽԱԲԱՆ

(Բնագրագիտական տեղեկանք)

Սույն հատորում ընդգրկված բնագրերը շարունակում են «Ուստա Կարո և Օրթե Հարութ» վեպի երկրորդ տարբերակի հատվածական բնագրերի և ծրագրային գրառումների և ամբողջական գլուխների հրապարակումները երեք թեմատիկ խմբավորումներով՝ Ուստա Կարոն Անիում, Ուստա Կարոն Գյումրիում և Բագրանի ուխտը ընդարձակ գլուխը:

Այս երեք թեմաներից առաջինը՝ Ուստա Կարոյի այցը Անի, առանձին գլխով մշակված է վեպի առաջին տարբերակում «Կայծակը և Ուստեն իրենց խմբով Անի են գնում» վերնագրով[1]: Այս մշակումը հիմնականում ձկարագրական է՝ պատմական անցյալի հիշատակների արժևորումով: Իսահակյանը վեպի երկրորդ տարբերակը ծրագրելիս բովանդակային առումով այս հիշատակների արժևորումից և հայ ժողովրդի անցյալի մասին խորհրդածություններից և գնահատականներից բացի, Անիի պատումի մեջ նախատեսել է ավելացնել հայ ժողովրդի ողբերգական վիճակի և հիմնականում հայկական հարցի լուծման ուղիների մասին թեման: Բազմաթիվ գրառումներում հայ հասարակության գրեթե բոլոր շերտերը՝ քաղաքական կուսակցությունները (դաշնակցություն, հնչակյան, սոցիալ-դեմոկրատ կուսակցու-

---

[1] Տե՛ս **Ավետիք Իսահակյան**, ԵԺ 14 հատորով, հտ. 7, Եր., 2016, էջ 254-280:

թյուններ, պահպանողականներ, ռուսամետ կամ թուրքամետ խմբեր, բոլշևիկներ, մտավորականության և հոգևոր դասի, գյուղացիության ներկայացուցիչներ, ուսուցիչներ, հոգևորականներ և այլն) քննարկում և բանավիճում են հայկական հարցի լուծման ուղիների և մեթոդների շուրջ:

Անիին առնչվող գրառումները գրողը խմբավորել է «Անի գնալը. ճանապարհին» և «Անի» թիվ 30 և 31 թղթապանակներում՝ ութ խմբավորումով[2]: Ինքնագրերը գրված են տարբեր չափերի առանձին թերթիկների վրա և աշակերտական տետրերում, սև կամ կապույտ մելանով, սև մատիտով:

Առանձին խմբավորում է «20 թերթիկ» վերնագրված թղթապանակը[3]: Այս վերնագիրը դրել է արխիվը մշակողը: Սրանք հավանաբար Իսահակյանի խմբավորած գրառումներից դուրս մնացած, բայց «Անի» ընդհանուր թղթապանակում եղած նյութերն են:

Առանձին խմբավորում է նաև «Քաղվածքներ «Անի» գլխի համար» վերնագրով խմբավորումը[4]: Այս խմբավորման վերնագիրը նույնպես դրել է արխիվը մշակողը:

Անիին առնչվող գրառումներ կան նաև թեմատիկ այլ խմբավորումներում, որոնք սույն հրատարակության մեջ ներկայացրել ենք «Այլ թղթապանակներում ընդգրկված Անիին վերաբերող հատվածական բնագրեր և ծրագրային գրառումներ»[5] բաժնում: Ընդհանուր հաշվարկով այս հատորում ներկայացված է «Ուստա Կարոն Անիում» թեմային առնչվող 244 գրառում:

---

[2] Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 326-II:

[3] ԳԱԹ, ԻՖ, 295-II:

[4] ԳԱԹ, ԻՖ, 326-II:

[5] Տե՛ս սույն հր., գրառումներ 215-244, էջ 142-186:

«**Ուստա Կարոն Գյումրիում**» վերտառությամբ բաժնում զետեղել ենք «Գյումրեցի կապիտան Ղազարը», «Մելքոն վարժապետը», «Տեր Մլեհը» ամբողջական գլուխները և դրանց առնչվող հատվածական բնագրերն ու ծրագրային գրառումները[6], «Խելառ Տիգրանը» (9 գրառում), «Կենդանի Գազեթ, Բուլուլ Մարգարեն» (17 գրառում), «Տեռորը» (4 գրառում), «Ուստա Սհակը» (6 գրառում) գլուխների նախնական հատվածական բնագրերը: Գյումրիին առնչվող մնացած գրառումները զետեղել ենք «Ուստաև Գյումրիում» բաժնում (167 գրառում): Ըստ Իսահակյանի մտահղացման՝ Գյումրին վեպում ներկայացվելու էր նախ ընդհանուր համալնապատկերով (Գյումրվա սովորությունները, քաղաքային կյանքը, տարբեր խավերի և մասնագիտությունների մարդիկ, Գյումրվա թատրոնը, լուսանկարչատները, բաղնիքը, շուկան, սրճարանները, Գյումրվա ճարտարապետական հուշարձանները, պանդոկները, երգերը և այլն), ապա տիպաժների շարքով: Ըստ ծրագրային գրառումների գրվելու էր շուրջ 12 առանձին գլուխ, մինչդեռ վեպի առաջին տարբերակում «Ուստա Կարոն Գյումրիում» թեման ներկայացվել է մեկ գլխով[7]:

«**Գյումրեցի կապիտան Ղազարը**» գլուխը Իսահակյանը գրել է 1921 թ. Վենետիկում: Առաջին անգամ «Կապի-

---

[6] «Գյումրեցի կապիտան Ղազարը»՝ 1 տարբերակ և 4 գրառում, «Մելքոն վարժապետը»՝ 11 գրառում, «Տեր Մլեհը»՝ 21 գրառում: Այս ամբողջական գլուխները, որոնք գրողը հրատարակել է, «Ուստա Կարո» վեպի մաս են կազմում՝ ըստ գրողի վկայությունների (տե՛ս **Ավետիք Իսահակյան**, ԵԺ 14 հատորով, հտ. 8, գիրք Ա, Եր., 2022, էջ 31, 43, 51:

[7] Տե՛ս **Ավետիք Իսահակյան**, ԵԺ 14 հատորով, հտ. 7, Եր., 2016, էջ 281-308:

տան Ղազարը» վերնագրով տպագրվել է «Հայրենիք» ամսագրում[8], ապա՝ մեկ հատված փոփոխություններով՝ 1940 թ. հրատարակված «Ընտիր երկեր»-ի երկրորդ հատորում և 1948 թ. հրատարակված մեկհատորյակում: «Հայրենիք»-ի տեքստի խմբագրված մեկ այլ տարբերակ (հատկապես վերջին ենթագլուխը) տպագրվել է 1961 թ. լույս տեսած «Երկերի ժողովածու»-ի երրորդ հատորում (էջ 303-323): «Հայրենիքում» «Կապիտան Ղազարի տեսակցությունը փոխարքայի հետ» ենթագլուխը բաժանված է երկու մասի՝ «Կապիտան Ղազարի ամուսնական կյանքը և լեհերի ապստամբությունը» և «Ռուս-թրքական պատերազմը և Ղազար աղայի տեսակցությունը փոխարքայի հետ» ենթավերնագրերով[9]: Վերահրատարակելով՝ Իսահակյանը բնագրից հանել է լեհերի ապստամբությունը ճնշելու և կապիտան Ղազարի թոշակը կիսով չափ կրճատելու դրվագները՝ միացնելով այս երկու ենթագլուխները[10]: Նման փոփոխությունը, կարծում ենք, գրողը կատարել է թեմաների նկատմամբ խորհրդային սահմանափակումների պատճառով: Այս փոփոխության արդյունքում հեղինակը լեզվաոճական և կառուցվածքային մի շարք վերադասավորումներ է կատարել պատումի մեջ: Գլխի վերջին ենթագլուխների՝ «Հայրենիքի» բնագիրը սույն հրատարակության մեջ ներկայացրել ենք որպես բնագրային տարբերակ[11]:

---

[8] «Հայրենիք», 1923, ապրիլ, N 6, էջ 4-19:

[9] Նույն տեղում, էջ 15-19

[10] Տե՛ս ԵԺ, 1951, հ. 3, էջ 319-323:

[11] Տե՛ս սույն հրատարակությունը, էջ 240-249: «Կապիտան Ղազարը» գլխին առնչվող այլ գրառումները տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 327-II և սույն հրատ., էջ 250-255:

1951 թ. հրատարակության մեջ «Գյումրեցի կապիտան Ղազարը» գլուխը ինքնուրույն գլուխ է դարձել՝ «Ուստա Կարո» վեպի գլուխների շարքում՝ տողատակին ավելացնելով հետևյալ ծանոթագրությունը. «Ուստա Կարոն, երբ Գյումրի էր, լսեց ծերունի կապիտան Ղազարի քաջությունների մասին, փափագ հայտնեց ծանոթանալու նրա հետ, լսել նրա բերնից իր արկածների պատմություններից: Երեկոյան դեմ դարբին ուստա Մացակը առաջնորդեց նրան կապիտան Ղազարի հաճախած սրճարանը»[12]: Այս ծանոթագրությունը «Գյումրեցի կապիտան Ղազարը» գլուխը վեպի պատումին կապելու հղում պետք է համարել, քանի որ բուն բնագրում Ուստա Կարոն բացակայում է:

«**Մելքոն վարժապետը**» գլխի երկու հատվածական ինքնագրեր պահվում են ԳԱԹ, ԻՖ 98-I և ԻՖ, 493-II, և ևս երկու հատվածական ինքնագիր ԳԱԹ, ԻՖ, 327-II (թերթ 10, 11) գույքահամարների տակ: Այս չորս հատվածական ինքնագրերը նույն ձեռագրի հատվածներ են, ընդ որում ԻՖ, 327-II-ի ինքնագիրը (թերթ 11) անմիջական շարունակությունն է ԻՖ, 493-II-ի ինքնագրի (թերթ 3. արխիվում դրանք մշակվել են տարբեր գույքահամարներով), իսկ ԳԱԹ, ԻՖ, 327-II 10-րդ թերթը բնագրի վերջին պարբերությունն է:

«**Մելքոն վարժապետը**» գլուխը, որպես առանձին պատմվածք, առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրի 1923 թ. նոյեմբերյան համարում (էջ 3-7), առանց հեղինակային հղման, որ այս բնագիրը «Ուստա Կարո» վեպի գլուխներից է: Հետագայում՝ 1925 թ., Վահան Նավասարդյանին Վենետիկից գրած հուլիսի 21-ի նամակում Իսահակյանը հավաստել է. «Իմացած եղիր, որ

[12] Տե՛ս ԵԺ, 1951, հ. 3, էջ 303:

«Կապիտան Ղազար», «Մելքոն վարժապետ» չմշակված գլուխներ են «Ուստա Կարո»ից»[13]: Ընդգծած հեղինակային այս հղմանը՝ «Մելքոն վարժապետը», որպես առանձին պատմվածք, զետեղվել է սույն ակադեմիական հրատարակության 6-րդ հատորում[14]:

«Մելքոն վարժապետի «Մտաց մատյանից»» հատվածը Իսահակյանը Ռուբեն Դարբինյանին է ուղարկել 1923 թ. սեպտեմբերի 24-ին՝ գրելով. «Ուղարկում եմ «Մելքոն վարժապետ»ի համար այս կտորները, որ իր տեղին հարմարցնես: Ուզում եմ վարժապետի մտքերի թիվը հասցնել 100ի, բայց միշտ որոճալով լավերը շինել: Հիմա, երբ դա տպվի, կտեսնեմ թույլ կողմերը: Զարմանալին այն է ինձ համար, որ ես այնտեղիս տպվելուց հետո տեսնում եմ նրա թերությունները, կարծես ուրիշ բան է դառնում, մի այլ օբյեկտ, ինձնից հեռու, ուրիշից գրված: Այդպիսով բոլոր տպվածներս սրբագրում եմ: Ուրեմն, «Մելքոնի» տպվելուց հետո, մտքերս կմաղեմ և ժամանակի ընթացքում կփոխարինեմ ավելի հաջող մտքերով»[15]: «Ուստա Կարոյի» արխիվում նման մտքերի երեք մեծ ցանկ է պահպանվել, որոնց մի մասը ներառված է Մելքոն վարժապետի «Մտաց մատյանում», մնացածները օգտագործված են վեպի այլևայլ գլուխներում, ինչպես նաև գրողի արձակում ընդհանրապես: ԳԱԹ-ի Իսահակյանի արխիվում, ԻՖ 2172-II գույքահամարի տակ պահվում է նաև «Հայրենիքի» թերթոնը՝ հեղինակային ուղղումներով[16]:

---

[13] Տե՛ս ԵԺ 14 հատորով, հ. 14, Եր., 2021, էջ 111:

[14] Տե՛ս ԵԺ 14 հատորով, հ. 6, Եր., 2019, էջ 97-108, ծանոթագրությունը՝ էջ 775-776):

[15] ԵԺ 14 հատորով, հ. 13, Եր., 2020, էջ 508:

[16] Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 2172-II:

«**Տեր Մլեհը**» գլուխը, որպես առանձին պատմվածք, առաջին անգամ տպագրվել է Փարիզի «Ապագա» օրաթերթում, 1935 թ. (թիվ 110-115): ԳԱԹ, ԻՖ, 2178-II գույքահամարի տակ պահվում է «Ապագայի» թերթոնը՝ հեղինակային լրացումներով: «Տեր Մլեհը» գլուխը, ըստ Իսահակյանի ծրագրային գրառումների, պետք է զետեղվեր Ուստա Կարոյի՝ Գյումրի կատարած այցելությունը նկարագրող հատվածում՝ «Կապիտան Ղազարը» և «Մելքոն վարժապետը» գլուխների շարքում[17], սակայն հետագայում մշակել է որպես առանձին պատմվածք: Այդուամենայնիվ, «Ուստա Կարոյի» արխիվում այդ գլխին առնչվող հատվածական բնագրեր և ծրագային գրառումներ են պահպանվել, ուր հերոսի անունը կիրառված է երեք ձևով՝ Տեր-Մլեհի, Տեր-Մլե, Տեր-Մրեմ:

«**Խելաո Տիգրանը**», ըստ Իսահակյանի ծրագրային գրառումների, վեպի Գյումրվա գլուխներից մեկը պետք է լիներ: Գլխի վերջնական շարադրանք չի պահպանվել: Հատվածական գրառումների մի մասը հրատարակվել է Իսահակյանի արձակ երկերի հատորում[18], որպես առանձին բնագրային միավորներ, մինչդեռ դրանք «Ուստա Կարո» վեպի «Խելաո Տիգրանը» վերնագրով գրվելիք գլխի նախնական գրառումներ են:

«**Կենդանի Գազեթ, Բուլուլ Մարգարեն**» գլուխը վերնագրել ենք ըստ Իսահակյանի՝ Գյումրիին առնչվող գլուխների ցանկի[19]: Մեկ այլ ծրագրային գրառման մեջ Իսահակյանը գրում է. «Այս գլխի վերնագիրը կլինի. «Կ<ենդա-

---

[17] Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 327-II, տետր 2, էջ 3:

[18] Տե՛ս **Ավետիք Իսահակյան**, ԵԺ 14 հատորով, հ. 6, Եր., 2019, էջ 528-530:

[19] Նույն տեղում:

ևի> Գազեթը կամ Արշակ Ավետարանիչը»»[20]: Բուլուլ Մարգարեի և Կենդանի Գազեթի մասին բնագրային հատվածներ և ծրագրային գրառումներ կան նաև «Ուստա Կարոյի» Գյումրիին առնչվող այլ գրառումներում: Այս վերնագրի տակ դրել ենք առավել ընդարձակ գրառումները: Գլխի վերջնական շարադրանք մեզ չի հասել, սակայն հստակ է, որ այս երկու հերոսները գյումրեցիների տիպերը ներկայացնող կերպարներ են և լրացնելու էին կերպարների տիպաժային շարքը (Կապիտան Ղազար, Տեր-Մլեհ, Մելքոն վարժապետ, Խելառ Տիգրան և այլն):

«**Տեռորը**» - ըստ Գյումրիին առնչվող գլուխների ցանկի՝ Իսահակյանը ծրագրել էր այս վերնագրով առանձին գլուխ գրել[21]: Գլխի վերջնական շարադրանք մեզ չի հասել: Այս գլխում Իսահակյանը մտադրվել էր ներկայացնել 20-րդ դարասկզբին ՀՅԴ գործունեության ծրագրային ուղղություններից մեկը, որին քաջածանոթ էր որպես կուսակցական գործիչ:

Ի մասնավորի՝ ՀՅԴ 1905 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում կայացած Կովկասյան ռայոնական ժողովը, որին մասնակցել է Իսահակյանը (Գուսան), հայ-թուրքական ընդհարումների և ցարական կառավարության հակահայ քաղաքականությանը հակազդելու նպատակով բանաձև է ընդունում ահաբեկչության միջոցով պայքար մղելու մասին, ուր մասնավորապես ասված է.

«1) Ընդունում է տեռորը՝ պաշտոնական և ոչ պաշտոնական անհատների դեմ, որոնք մեզ համար աննպաստ դեր են կատարում թուրք-հայկական ընդհարումների խնդրում:

---

[20] ԳԱԹ, ԻՖ, 327-II, տետր՝ «Ուստան Գյումրիում» վերնագրով, էջ 3:

[21] Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 327-II, տետր՝ «Ուստա Կարոն Գյումրիում» վերնագրով, էջ 3

2) Տեռորի կարող են ենթարկվել բոլոր պաշտոնյաները՝ առանց պաշտոնների և աստիճանի խտրության:

3) Տեռորը կատարվում է «Հայկական Ահաբեկիչ Մարմին» անվան տակ:

4) Պրիստավին և նրանից ցածր պաշտոնյային տեռորի կարող է ենթարկել միմիայն տեղական Կենտրոնական Կոմիտեն»[22]:

Իսահակյանը հայ-թուրքական ընդհարումների ժամանակ գործողությունների տակտիկա մշակելու նպատակով առաջարկել է «Հայերին համախմբել և կոմպակտ մասսա կազմել»: Ըստ ժողովի արձանագրության. «Վերջին պահանջը սուր կերպով դրեց Գուսանը.- «Աչքի առաջ ունենալով, որ մենք ցրված ենք և ապրում ենք թուրքերի հետ խառն, որ թուրքերը դամոկլյան սրի պես մեր գլխի վերևը կանգնած են՝ պատրաստ ամեն րոպե ցած ընկնելու, որ ցրված ու խառն ապրելը ամենից շատ է փոխադարձ դժգոհության առիթներ տալիս, մենք պետք է դիմենք համախմբման գաղափարին, պետք է մեր մեջ ցրված թուրքերին դուրս քշենք, գուցե և նրանց հետ փոխադարձ համաձայնությամբ՝ գյուղեր փոխանակելով, և այդպիսով՝ մի հայկական կոմպակտ մասսա ստեղծել, որը կարողանա մշակել ու պահպանել իր սեփական կուլտուրան»[23]:

1904-1906 թթ. «Քարի Կենրոնական Կոմիտեի տեղեկագիրը» վավերագրում, որի հեղինակը Հայ Գուսանն է (Ավետիք Իսահակյանը), ներկայացված է կոմիտեի գործունեությունը ահաբեկչության ոլորտում. «Տեռորները,-

---

[22] Տե՛ս Նիւթեր ՀՅԴ դաշնակցութեան պատմութեան. հտ. Բ, 1985, էջ 240:

[23] Նույն տեղում, էջ 238:

գրում է Հայ Գուսանը,- 1904-05 շրջանում քիչ են եղել. սպանվել է մի վաշխառու մատնիչ. մի հայ քահանա՝ հուն ադավանություն քարոզող. մի երկու մատնիչներ, տեռորի են տրվել օսմանցի ջանբեզարներ (ապստամբներ) և մի շեյխ՝ որոնք եկել էին Քար զենք տանելու Թուրքիա, թվով 4 հոգի. անհաջող տեռորի տրվեց քաղաքի փոխգավառապետը»[24]:

«Ուստա Սհակը». «Ծերության հարցի» մասին գրառումները վկայում են, որ Իսահակյանը մտադիր էր Գյումրին ներկայացնող գլուխների շարքում մի առանձին գլուխ նվիրել այս խնդրին, հավանաբար «Ուստա Սհակը» վերնագրով: Ծերության թեման Իսահակյանը մշակել էր նաև վեպի «Ծերերը» գլխում[25]:

«Ուստա Կարոն Գյումրիում» թեմային առնչվող գրառումները գրողը խմբավորել է «Գյումրի» և «Գյումրիից վերադարձ» թիվ 32 և 33 թղթապանակներում, հինգ խմբավորումով[26]: Ինքնագրերը գրված են առանձին տարբեր չափերի թերթիկների վրա և աշակերտական տետրերում, սև կամ կապույտ մելանով, սև մատիտով. կարմիր մատիտով հեղինակը որոշ գրառումների վրա խոշոր տառերով, էջի երկայնքով գրել է «Գյումրի»: Գյումրիին առնչվող գրառումներ կան նաև թեմատիկ այլ խմբավորումներում: Այս գրառումներում որոշ համընկնումներ կան վեպի առաջին տարբերակի «Ուստան և

---

[24] Տե՛ս Նիւթեր ՀՅԴ դաշնակցութեան պատմութեան, հտ. Ե, Պէյրութ, 2007, էջ 52: Տե՛ս նաև Ռուբէն Տէր-Մինասեան, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ. Ա., Լոս Անճէլըս, 1952, էջ 86-101, «Տեռորները» ենթագլուխը:

[25] Տե՛ս **Ավետիք Իսահակյան**, ԵԺ 14 հատորով, հ. 8, Եր., 2022, էջ 400-420:

[26] ԳԱԹ, ԻՖ, 295-II:

Ձավուշը Գյումրիում» գլխի հետ[27], սակայն շատ են նոր թեմաներն ու դրվագները, որոնք մշակվելով դառնալու էին առանձին գլուխներ:

«**Բագրանի ուխտը**» գլխի վերջին հատվածը «Ուստա Կարո» անտիպ վեպից (Մի հատված «Բագրանի ուխտը» գլխից)» վերնագրով առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրի 1924 թ. մայիսյան համարում (էջ 2-9), ապա մասնակի խմբագրումներով և կրճատումներով, «Ուստա Կարոն Բագրանի ուխտին» վերնագրով 1948 թ. «Ընտիր երկեր»-ում (էջ 416-423), այնուհետև՝ 1951 թ. «Երկերի ժողովածու»-ի երրորդ հատորում (էջ 296-302):

«**Բագրանի ուխտը**» գլխի ամբողջական սևագիր տարբերակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ի Իսահակյանի արխիվում[28], որը առաջին անգամ հրատարակվել է Իսահակյանի երկերի վեցհատորյա հրատարակության չորրորդ հատորում[29]: Այս սևագիր տարբերակը բաժանված չէ ենթագլուխների, ինչպես որ ներկայացված է 1975 թ. հրատարակության մեջ: «Հայրենիքում» տպագրված հատվածն այստեղ բնագրի շարունակության մեջ անջատված է մեծ բացատով՝ առանց վերնագրի: Ըստ հատորը ծանոթագրող Ա. Ինճիկյանի՝ «Ուստա Կարոն Բագրանի ուխտին» հատվածը ««Հայրենիքի» տեքստի հիմնովին վերամշակած տարբերակն» է՝ ինքնագրից[30]: Իրականում հատորում տպագրվել է հենց «Հայրենիք»-ում տպա-

---

[27] Տե՛ս **Ավետիք Իսահակյան**, ԵԺ 14 հատորով, հտ. 7, Եր., 2016, էջ 281-308:

[28] Տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 330-II, էջ 1-40:

[29] Տե՛ս **Ավետիք Իսահակյան**, ԵԺ 6 հատորով, հտ. 4, Եր., 1975, էջ 286-331:

[30] Նույն տեղում, էջ 492:

գրված տարբերակը, որը Իսահակյանը վերնագրել է և նշել, որ տպագրվածը մի հատված է «Բագրանի ուխտը» գլխից: Հետևաբար այս հատվածը չպետք է բաժանել գլխի շարադրանքից՝ առանձին վերնագրով, քանի որ այդ բաժանում գրողը կատարել է ամսագրում տպագրելու համար միայն: Եվ իրոք, ԻՖ, 330-II գույքահամարով ինքնագրում «Ուստա Կարոն Բագրանի ուխտին» վերնագրված հատվածը «Բագրանի ուխտը» գլխի վերջին մասն է: Ինճիկյանը նախ ներկայացրել է ԻՖ, 330-II ինքնագիրը մինչև «Հայրենիքում» տպագրված հատվածը, այնուհետև բնագիրը շարունակել է ոչ թե ըստ ԻՖ, 330-II բնագրի, այլ դրել է նույն այդ հատվածի «Հայրենիքում» տպագրված տարբերակը՝ ներառելով այդ վերջին հատվածի 1948 և 1951 թթ. կրճատված հրատարակությունների մասնակի խմբագրումները: Այդպիսով վեպի մեկ գլուխը տրոհվել է երկու մասի: Ուստի այս գլուխը չի կարելի համարել վերամշակում: ԻՖ, 330-II ինքնագիրը այդ գլխի նախնական տարբերակն է, որի վերջին հատվածը վերամշակելով՝ Իսահակյանը հրատարակել է «Հայրենիքում»: Այս առաջին հատվածը հրատարակելով՝ Ա.Ինճիկյանը կրճատել է նաև բնագրի գրեթե մեկ քառորդը, ինչպես նաև մի շարք դժվարընթեռնելի հատվածներ:

Ըստ ծրագրային մի գրառման՝ Իսահակյանը «Բագրանի ուխտը» գլուխը բաժանելու էր չորս ենթագլխի.

«- ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ
ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ
ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ
ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ՀԱՐՈՒԹԻ ՏԵՍԻԼՔԸ»[31]:

[31] ԳԱԹ, ԻՖ, 425-II, թերթ 13:

Մեզ հասած ինքնագրում շարադրված են Բագրանի ուխտի առաջին երեք օրերի դրվագները, իսկ «Հարութի տեսիլքը» Իսահակյանի արխիվում առանձին գլուխ է, որը կզետեղվի հաջորդ հատորում:

«**Բագրանի ուխտը**» գլխին առնչվող հատվածական բնագրերը և ծրագրային գրառումները Իսահակյանը խմբավորել է «Բագրանում» վերտառությամբ թղթապանակում (երրորդ խմբավորում, 50 գրառում, տե՛ս ԳԱԹ, ԻՖ, 330-II):

Այս թեմայով հատվածական բնագրեր և ծրագրային գրառումներ կան նաև այլ թեմատիկ խմբավորումներում: Դրանք են.

Բագրանի քեֆը - Այս վերնագրով թղթապանակում պահվում են «Բագրանի ուխտ» գլխին առնչվող ծրագրային գրառումների և հատվածական բնագրերի առաջին խմբավորման բնագրերը[32]:

Բագրան. քեֆ - Այս վերնագրով թղթապանակում պահվում են «Բագրանի ուխտ» գլխին առնչվող ծրագրային գրառումների և հատվածական բնագրերի երկրորդ խմբավորման բնագրերը[33]:

Բագրանում. տոնին - Այս վերնագրով թղթապանակում պահվում են «Բագրանի ուխտ» գլխին առնչվող ծրագրային գրառումների և հատվածական բնագրերի երրորդ խմբավորման բնագրերը[34]:

Ուստան Բագրանում. Նյութեր - «Ուստան Բագրանում» թղթապանակում հեղինակը խմբավորել է թե՛ Բագ-

---

[32] ԳԱԹ, ԻՖ, 296/2-I, 26 թերթ:

[33] ԳԱԹ, ԻՖ, 296/2-II, 62 թերթ:

[34] ԳԱԹ, ԻՖ, 296/3-II, 11 թերթ:

րանի ուխտի, թե՛ վիպական այլ դրվագներին առնչվող գրառումներ[35]:

Բագրան - Այս վերնագրով թղթապանակում պահվում են «Բագրանի ուխտ» գլխին առնչվող ծրագրային գրառումների և հատվածական բնագրերի հինգերորդ խմբավորման բնագրերը[36]:

Բագրան. քեֆ. մենակ քեֆ - Այս վերնագրով թղթապանակում պահվում են «Բագրանի ուխտ» գլխին առնչվող ծրագրային գրառումների և հատվածական բնագրերի վեցերորդ խմբավորման բնագրերը[37]:

Այլ թղթապանակներում հանդիպող «Բագրանի ուխտը» գլխին առնչվող հատվածական բնագրեր և ծրագրային 38 գրառում ներկայացված են 248-286 համարակալմամբ:

Բնագրային տարբերությունները ներկայացված են տողատակերում:

Ինքնագրերում առկա հեղինակային ջնջումները թողնված են բնագրում՝ առնելով ուղղանկյուն փակագծերի մեջ՝ [ ], իսկ լուսանցային գրառումները դրված են տողատակին:

Բնագրերում կազմողի հավելումները դրված են սուրանկյուն փակագծերում՝ < >:

ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

---

[35] ԳԱԹ, ԻՖ, 296-II/4:

[36] ԳԱԹ, ԻՖ, 296/5-II, 25 թերթ:

[37] ԳԱԹ, ԻՖ, 297-II, 37 թերթ:

ՈՒՍՏԱ ԿԱՐՈ
ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ

(երկրորդ տարբերակ)

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ
ԱՆՒՈՒՄ

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԱՆԻՈՒՄ>

ԱՆԻ ԳՆԱԼԸ. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

1. ԱՆԻ ԳՆԱԼԻՍ

Երբ կայծակը մեկնում էր Հ.Յ Դաշնակցության ծրագիրը՝ սոցիալիստը ասաց. «Ամեն մարդ պիտի աշխատե՝ որ ուտե»:

Տիրացու Հովակը վրա բերեց. «Սուրբ Գրոց խոսք է. Պողոս առաքյալը ասում է. «Որ ոչն աշխատէ, կերիցէ և մի՛»:

Կայծակը գրեց ծոցատետրի մեջ:

2. ՀԱՅԱՍՏԱՆ

– Հայը առանց Հայաստանի մեռած է:

– Մենք կայինք թուրքերեն առաջ ու կլինենք թուրքերից հետո էլ: (Կայծակ)

– Վրացին երեք հայր կունենա – մեկը՝ սուտ խոսող, մյուսը՝ ավազակ, մյուսը տուտուց իշխան (Գյումրի):

3. ԱՆԻ

– Համաշխարհային պատմության մեջ, նույնիսկ Թուրքիայի պատմության մեջ չի եղել ավելի զարհուրելի

բան, որ թուրքերը բերել <են> հայ ժողովրդի գլխին: Մարդկության պատմության սկզբից չի եղել մի ժողովուրդ, որ իր դարևոր դրացու կամ հպատակի հանդեպ այնքան զարհուրանք, ոճիրներ կիրառեր, ինչպես թուրքը արավ իր դրացի և հպատակ հայի հանդեպ: Մի՞թե կարելի է այսպիսի մի գազան ժողովրդի սիրել...

4. ՃԱՌԵՐ

– Մենք կռվում ու մեռնում ենք հայ ժողովրդի փայլուն ապագայի համար:

– Ռուսական պատմական առաքելությունը – դրավել արևելքը, ընդմիշտ թուլացնել իսլամը, քաղաքակրթության այդ թշնամին:

– Թուրքիան = տանջարան:

– Ուժեղացնենք հայ ժողովուրդը ամեն կողմերով՝ տնտեսական և հոգեկան: Հացով և լույսով:

5. <ԵՐԲԵՔ ԽՈՐՈՒՆԿ ՄԻ ՔՆԻՐ...>

– Երբևք խորունկ մի քնիր, որպեսզի կարողանաս լսել մարդու նկուն ձայնը, որ «արդարության» է կանչում:

– Եթե ուզում ես, որ Աստված քո հանցանքները ծածկե,– աղքատներին հագցրու:

– Անպիտան պիծակ, մեղր չես չինում, մի խայթեր դոնե:

6. ԱՆԻ

Ռուստան և մյուսները հիշում են Անիում Աղասու քաջությունները, որ թուրքերին, քրդերին չարդեց և հայ

գերիներին ազատեց, որոնց պիտի սպաներին էդ գազաններըը:]

– Մահացու մեղք գործած կլինի այն հայը, որ կհավատա թյուրքի «ազնիվ խոսքին». աշխարհիս ամենանենգ ժողովուրդը թյուրքն է:

7. <ԽԵԼՔ ԽԵԼՔԻ ՏԱՆՔ...>

– Խելք խելքի տանք, ձեռք ձեռքի և Հայաստանը ծաղկեցնենք:

– Որպեսզի մարդ կարողանա իր պատիվը պահել, իր կյանքը նույնիսկ, և կարողանա ազնիվ մնալ – պետք է գիտենալ կռվել, կռվել, կռվել, մեռնել և մեռցնել:

– Հայաստան ազատվի, հայերս իրար գլուխ հավաքվենք, մի տուն լինենք, մեզի ցույց տանք:

– Թյուրքը, այդ չուն, սրիկա ազգը՝ ամենքով մեկ, ամբողջ ազգով՝ դարերի մեջ ոճիր են գործել հայերի գլխին. ոչ միայն թյուրքը, այլ բոլոր իսլամ ցեղերը, մեկը ծամել է մեզ, տվել է մյուսին:

8. <ԹՅՈՒՐՔԸ ԿՈՏՈՐՈՒՄ Է...>

Թյուրքը կոտորում է, ջնջում է հայությունը, և իրան արդարացնելու հույսը դնում է հանդիսատես մարդկության անբարոյականության, վաճառողության, կաշառակերության, լրբության, չահամոլության վրա: Ջարդում

է, և սուտ հերյուրանքներով վերջեն հայութեյանն է մեղավոր դուրս բերում: Եվ թյուրքի հետ միաձայն մեր «բարեկամները» կրկնում են մեր վրա թափված լուտանքները – վաչխառու ենք, գեչ ենք, ջհուդ ենք:

Եվ ջհուդներն էլ ասում են, թե մենք ջհուդ ենք:

– Քրիստոսի խաչի համար, խո, հայը չպիտի ամեն օր և հավիտյան խաչվի:

= Թյուրքի առածները, որ կբնորոշեն իր գազան հոգին.–

– Թյուրքը մի լուի համար ողջ վերմակը կվառե:

– Վարպետ գողը տանտիրոջը կկախե:

– Սպանվողն է մեղավորը:

ԱՆԻ

Ամեն հայ պիտի ուխտե վրեժ հանել եվրոպացուց, որ թյուրքից ավելի դաժան եղան. հայերին նետեցին կրակի մեջ, ջարդեցին և ամեն օր ջարդել են տալիս, այդպիսով լուծելով մեր հարցը:

9. <ՋԵՎՈՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՆԵՑ...>

<...>[1] ձևով երևան հանեց իր տրամադրությունը:

– Նայեց աչքերին առանց պատասխանելու:

– Պատասխանը աչքերի մեջն էր. ձեռքի շարժումով, ուսերի թափհարելով, հոնքերի վեր բարձրացնելով պատասխանում էր, հարցնում էր:

---

[1] Թերթիկը մկրատված է, սկիզբը պակաս է:

– Շրջիկը Անի կարդաց այցելուների մատյանը. ժպտում էր. և քանի գրություններ արտագրեց ծոցատետրի մեջ:

Ինքն էլ գրեց բոլորի կողմից. «Անի, դու մեր փառքի ֆենիքս, հարություն պիտի առնես քո աճյունից նորոգ, լուսե և հրե փառքով»:

Եվ բոլորի կողմից ստորագրեց:

10. ԹՅՈՒՐՔԸ

– Մենք եղել ենք թյուրքից առաջ, կլինենք և նրանից հետո, նրա դաժան ձեռքը (ծանր ու դաժան) որ հիմա կհարվածե մեր գլխին, վաղը մեր կոշիկը պիտի մաքրե (սրբե):

[– Թյուրքի կարմիր ստվերը. կարմիր ստվեր?]

– Թյուրքը կջանա մեր ստվերն անգամ ջնջել:

– Մեր հոգու հատկությունները մոնղոլական-(թյուրք) արշավանքների, հեղեղումների այն տիղմն է, որ նստել է մեր հոգու վրա: Մեր հոգու ներքսը անարատ է: Ավերք չունի:

11. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

«Եթե հայերը չուզենան անկախ Հայաստանի կազմումը, Անգլիան պիտի չինե». այսպես էր ասում Լ. Շանթը 1919 թ., այսպես էին մտածում շատ հայեր:

Մինչդեռ Անգլիան հայության ամենակատաղի թշնամին է, երկու դարուց ի վեր, Ռուսաստանի ուժեղանալուց, Պետրոս Մեծից ի վեր, երբ ռուսը ձգտեց կործանել թյուրքին և իջնել Ասիա:

Այսպիսով, իրերի դրությամբ, իրերի ճնշումով նա մեր մահաբերն է, չարդերից օգտվողը և չարդերը ներշնչողը:

12. <ԱՆԻ ԳՆԱԼՈՒՍ...>

– Անի գնալուս Կայծակն ասում է, որ Հայաստանը Թուրքի ձեռքից ազատելուց հետո պիտի ազատենք հարստահարողների ձեռքից, փողի իշխանությունից. և պատմեց, թե ասում են մի քաղաք կա, ոսկի քաղաք...

Ջավուշը Ուստին ցած ձայնով հարցրեց. «Ուստա ջան, ինչպես է որ էդ քաղաքը չես տեսել:– Կամ վրան չես լսել. կարելի է հնճարած է, օրթե դու տեղյակ չես:

Ուստան լռեց, չպատասխանեց:

– Կայծակի ճառում. թե Հայաստանի ոչնչացումը Թուրքի և ռուսի գործին կուգա. Հայաստան առանց հայերի:

13. ՈՍԿԻ ՔԱՂԱՔԸ

Անի գնալիս Կայծակը պատմում էր դաշնակցության ծրագրի մասին. ներկայում ազգը ազատել օտարների ձեռքից, որոնք ողջ ազգը կողոպտում են, ապագայում ամբողջ աշխարհը ազատել ընկերական-հասարակական կեղեքումներից, մարդը մարդու ձեռքից ազատել:

Սա հեռավոր գաղափար է, որին պիտի ձգտեն բոլոր, բոլոր ազգերը: Եվ դարձավ Ուստային ասավ.

– Ուստա, լսել եմ, որ քարվան ես ունեցել և շատ տեղեր ես եղել, ճի՞շտ է:

– Այո՛, քարվանապետի օգնական եմ եղել և Իրան-Թուրան ու բոլորքի երկրները ման եմ եկել:

— Ուրեմն շատ բաներ տեսած ու լսած կլինես, չէ՞:

— Այո՛, բաներ, որ թե որ մարդ պատմում է, հեքիաթի ու ստի պես կերևա:

«Արդեն նկատելի է, որ Ուստան մեծ երևակայության տեր մարդ է, հեքիաթասեր, ժողովուրդն այդպես է միշտ. լավ գիծ է»,— խոսեց ինքնիրեն կայծակը և հարցրեց.

— Ուստա, լսած կաս Ոսկի քաղաքի մասին:

— Ո՛չ, պարոն կայծակ, [ոչ լսել եմ — ոչ] ոչ տեսած ունեմ, ոչ լսած. Պղնձե քաղաքի վրա <...>[1]

14. <ՀՈՎԻՎԻ ՀՈԳԻՆ...>

— Հովիվի հոգին լեռներում ճուլվել էր ամպերի հետ:

— Անի: Ուստան իրեն զգաց այնքան հին, ինչքան Անին է. նրա տառապանքները, վշտերը վերապրեց նա. դարերով ապրել է նրանց հետ. նրանց մեջ. քնակիչների:

— Եթե մի հին սովորույթ, գաղափար, ծես չի կարելի կենդանացնել, ապրեցնել, այլ ուժով նորոգում են, կարելի է ասել, թե դիակը չկենդանացավ, դագաղը նորոգեցին, մեխեցին:

— Անիում. նա հասկացավ և ապրեց հայոց պատմությունը:

— Զանգի ձայնը այն ժամանակ է տխուր լինում կամ տխրություն հայտարարում, երբ հնչում է երկար պաուզաներով, թաղման զանգը...

15. <ՇԱՌԱՅԼ...>

— Շառայլ:

---

[1] Շարունակությունը չի պահպանվել:

– Կիզվող մորենու պես այրվեցի սիրով:

– Ինչպես մարած մոլորակը արևին (մայր) կձգտի, այնպես էլ...

– Իմ ծարավ, պապակ պահիս դառնությյան (կամ մի ուրիշ) բաժակը մի մոտեցրու ինձ:

– Քու մազդ է քնքուշ ալիրշում նման,
Որ ճերմակ վզիկդ առեր մանէման:
Ձծոցդ կու սիրեմ ճերմակ զէտ բամբակ,
Ծծերդ ի միջին կախած զերդ զանգակ.
Ցայթէ լուսն յիւրմէն զերդ բարկ արեգակ,
Մէկ ծիծդ լուսին և մէկը արեգակ:

– Լուսեղեն, լուսափրփուր, փշրվող ալիքներ:

– Կայծակը ամպերի դեզերը հրդեհեց[1]:

– Ամպի թևերով սլանամ:

– Երազի առագաստներ:

– Արծիվը թուխ ամպերի մեջ ծրարված:

– Անարև կյանք:

– Արցունքները աչքերս կայրեն:

– Աչխարհը ինքնիրեն քայլում է. ո՛չ մի Աստված չի կարող միջամտել նրա դործերին[2]:

– Իրիկունը, անդորը ստվերները երբ իջան՝ մի քնքուշ երգ կթափառի դաշտերը: Այդ ո՞վ երգեց[3]:

– Հոգին այն ժամանակ կհանդչի միայն, երբ բոլոր եղրազները թառամեն:

---

[1] Հեղինակը տողի կողքին կարմիր մատիտով խաչ է դրել:

[2] Տողի ներքևում սև մատիտով հեղինակը դրել է. *«Ինժեները»:*

[3] Հեղինակը տողի կողքին կարմիր մատիտով խաչ է դրել:

– Նազանք,– ինքնարտահայտում:

– Դժնե:– Հաղթաչունչ:

– Նրան մնացին միայն աչքերը՝ արցունք թափելու համար:

– Աստծու և մարդոց դեմ ոխ, քեն ունեցած մարդ եմ ես: (Ունեցող մարդը ես եմ):

– Ցնորամած = ցնորական, ցնդած:

– Մթաստվեր.– խորհրդամած.– մենավայր.– երանավետ.– նորաբույժ = հիվանդքաղ:

– Անցուդարձիկ փողոց = բանուկ փողոց:

– Հոգենվաղ երաժշտություն:

– Խորհրդաստվեր:

– Մելանուշ երգ:

– Անաչխարհիկ կյանք, երգ, սեր:

– Նիշ = նշան, cunmomz*:*

– Փառաբանանք:

– Ընկերություն = համայնք, հասարակություն:

16. ԱՆԻ

– Ես ատում եմ թուրքին, իբրև կործանող, անիմաստ, անհոգի մի ստոր ցեղի, և ատում եմ այն բոլոր մարդկանց, որոնք չեն ատում թուրքին:

17. <ԶԱՐԻՔ ԿԱՐԿԱՌԵԱԼ...>

Զարիք կարկառեալ գան ի հիւսիսոյ. Երեմ. Զ 1:

Ի հիւսիսոյ եկեսցեն թշուառացուցիչք. <Երեմ.> ԾԱ 48:

18. <ՎԱՍԱԿԸ ՀԱՍԱՎ...>

Վասակը հասավ Կապույտ լյառը, և կռվեցավ Արտաշեսի զորքի հետ, բայց չախջախվեցավ ու փախավ:

Տրդատ Թագավորը Անին նվիրել էր Կամսարականներին, ապա Աշոտ Առաջինը գնեց նրանցից, ողջ գավառով:

19. <ԵՎՐՈՊԱՆ ՀՈԳԻ ՉՈՒՆԻ...>

Եվրոպան հոգի չունի, այնտեղ ամեն ինչ վերածված է փողի, փողն է արժեքը ամեն բանի. փողով կարելի է գնել և պատիվ, սեր, հարգանք, պաշտպանություն, փառք, փողով ծախում են եվրոպացիք ամեն սրբություն. իրենց պատիվը, իրենց աղջիկներին, կանանց. սրբություն չի կա եվրոպական ազգերի մեջ, և այդ լուսավոր սրիկաները այնքան խորամանկ են, որ իրենց հոգեկան սնանկությունը չպարուսմ են պաշնիվ դաղափարներով, մարդասիրական խոսքերով: Կեղծավորներ, անհոգի, անսիրտ խաչագողներ,– ահա՛ Եվրոպան:

20. ԱՆԻԻ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵՐԻ ՃԱՌԵՐԻՑ

– Հայ ժողովուրդ, դու ունեիր հայրենիք, թշնամին, վայրագ մոնղոլը կործանեց, լծի տակ քաշեց նրան:

Դու ունեիր ազատություն, թշնամին ստրկություն բերեց:

Դու ունեիր ազգային կուլտուրա, նա փչացրեց:

Դո՛ւ ունեիր ճարտարապետություն, չքեղ, կործանեց:

Դո՛ւ ունեիր գրականություն, լեզուն...

Այսպես ուրեմն, չարունակ, այս ոճով և ոգով:

21. <ԱՆԻԻ ՔԱՂԱՔԻ...>

— Անի քաղաքի ոգեղինացած, բանաստեղծացած, իմաստավորված քարերը. ներշնչող, տպավորիչ, ապրեցնող, զգացում և հոգի ունեցող քարերը:

22. <ԻՐԱԿԱՆԱՑՐԻ...>

[— Իրականացրի իմ միտքը: Մտածել էի ինձ նետել կանանչ խոտի վրա, և արել էի:]

— Երկիրը ուժի մարմինն է. տիեզերական ուժերի մարմիններն են երկիրը, աստղերը, արևները, նյութը:

— Բավական է, որ թուրքի անունը տանք, և մեր երևակայության մեջ ծնունդ առնեն լենկ-թեմուրները, ալփ-ասլանները, համիդները, թալաաթները և անանուն չարդերը:

Թուրքը տիպար գազան, չարդարար:

23. <ՄԵՆՔ ԿԱՅԻՆՔ...>

— Մենք կայինք թուրքերից առաջ, կլինենք և թուրքերից հետո:

– Թուրքերը հայերից խելացի են և խորունկ հոգեբան: Հայը՝ ապավինած Եվրոպային, ջարդվում է, իսկ թուրքը լավ է ճանաչում մարդուն, Եվրոպան, և լավ գիտե, որ փողով կկաշառե նրան: Ո՞ւմ ինչ, թե կջարդվի հայը: Եվրոպացին փողի համար իր հորը և մորը կծախե...

24. <ՎԱՋԱՆ ՋՐԵՐ...>

– Վազան ջրեր, պաղորակ աղբյուրներ:

– Մայրախնամ սնունդ:

– Աստղերին մոտ Հայաստան:

– Մեր վզին լուծ դրին, բայց մեր հոգին բարձր լեռնեբու պես մնաց ազատ, անլուծ, ըմբոստ, աստղերուն մոտիկ. մեր հոգին չկարողացան նվաճել, ընկճել, մեր հոգուն չկարողացան տիրել. և մեր հոգին՝ ճգտում էր թոթափել լուծն ու շղթա. անկախության գաղափարն ուներ նա, ազատության, ինքնության Բանն աստվածային:

25. ԱՆԻ
(Ա. խոսողը)

Թյուրքին պետք է արմատախիլ անել մեր երկրից. եթե հիմա ուժ չունենք, սպասենք, համբերենք. դարերով դարան մտնենք, և հետո անխնա հարվածենք, ջնջենք. եթե ոչ – նա է մեր ջնջողը. այդ է նրա բնազդական և գիտակից էությունը – ջնջել հայությունը:

Բնության պատկերազարդ գիրքը:

Պզտի մարդ է – ոչ թե պզտիկ կամ պստիկ:

26. <ՈՐՊԵՍԶԻ ՄԻ ԱԶԳԻ...>

Որպեսզի մի ազգի դիվանագետի ձայնը լսելի լինի, պետք է որ, երբ նա հետևը նայե, երկու հարյուր հազար սվինների ծայրերը չողան իր ուսերի հետևից...

Ըստ Բիսմարկի:

«Արդարություն չկա քաղաքական աշխարհի մեջ, այլ ուժերի փոխհարաբերություն»:

27. ԱՆԻ

Մերուկը. ազգային-սոցիալիստ:

Մի սոցիալ-դեմոկրատ, ռուսական ժանրի, ապազգային:

Մի քահանա՝ քրիստոնյա: Սա ասում է, թե հայությունը պիտի հետևի բառ առ բառ Քրիստոսին. զոհվի՝ սեր քարոզելով քրդերին և թյուրքերին, երբ նրան մորթում են՝ նա պիտի օրհնի նրանց, և ներե, և սիրե իր երեխաներին մորթողներին...

Մերուկը՝ թե դա կրոն չէ, այլ ոճիր. կնշանակե քրիստոնեությունը եղել է եղեռնագործերի համար, գայլերի օգտին ստեղծված կրոն. սա մի հանցավոր ապշություն է, չսանձել ոճրագործին՝ կնշանակե, մորթել անմեղներին, թուլլերին, արդարներին. սա հիվանդ, ախտավոր մտայնություն է, մերժելի կրոն, զզվելի: Սրիկաներին հովանավորող կրոն: Աբդյուլ-Համիդ քրիստոնյա է, ուրեմն, որ ներում է ոճրագործ թյուրք ու քուրդերին.— ո՛չ: Հայու-

թյունը այդպես չի ըմբռնելու քրիստոնեությունը. եթե այդ է քրիստոնեության ոգին, ատում եմ այդ վախկոտ հրեային:

Իսկ Ռեսը թե՝ այնքան, որ խունկ ու մոմ ծախսեցինք Քրիստոսի համար, եթե վառող, արճիճ առնեինք, հիմա վաղուց ազատվել էինք, և կարիք չունեինք Քրիստոսին խնդրել, որ միշտ խուլ մնայ:

Կարոն.— Քրիստոսին լսողը տուն ու տեղ չպիտի կարողանա չինել. հրացանը Քրիստոսից ուժեղ է և հային մեծ օգնական...

28. <ԼՈՒԾԸ ՔԱՂՑՐԱՑՆԵԼ...>

— Լուծը քաղցրացնել —

— Անին դեռ չունչ ունի, չնչում է:

— Անին խոսցնում է, լեզու է տալիս մարդկանց, հիացնում, դյուրթում, հափշտակում:

— Անին մեծագործ սերունդի, սերունդների գործ է, կերտվածը. մենք՝ հետնորդներս, արժանի չենք նրանց:

— Անիում ամեն մի կոտրած քանդակ, ամեն մի քարի կտոր ձեզ խոսում է թուրքերի, բարբարոսների ձեռքը, վայրագությունները:

— Դարերի հայկական հարստությունից, հոգեկան և նյութական, փշրանքներ են հասել մեզ միայն:

— Հրաշագործ քարեր (վանքերի):

— Հրաշակերտ շենքեր, կամարներ, սյուներ, քանդակներ:

— Անիի մեջ, Առաքելոց եկեղեցու ժամատան պատի վրա գրված մի արձանագրություն կրում է 1384 թիվը: Դրանից հետո գրված արձանագրություն չի գտնվել.

այսինքն մինչև 14-րդ դարի վերջը բնակչություն կար Անի:

– Վանքերի լուսամուտները աչքեր են, վրանները հոնքեր՝ կամարները (չրջանակներ, կես չրջաններ):

– Էջ՝ [447] վերից վար ամբողջ էջը:

29. <Ո՛ ՏԱՅՐ ԶԳԼՈՒԽՍ...>

– «Ո՛ տայր զգլուխս իմ չտեմարանս ջուրց, և զաչս իմ աղբիւրս արտասուաց. զի նստեալ լայի զբեկումն ժողովրդեան իմոյ»:

Երեմիա մարգարե

«Իսկ բարեսէր և գեղեցիկ թագաւորն Վրաց Դաւիթ հանապազ իւր ամենայն թագաւորութեամբն կայր ի մեծ ուրախութեան և ի գինարբուս յիւր թագաւորանիստ քաղաքն Տփխիս: Եւ յաւուր միում էր մեծ ճաշ և ուրախութիւն առաջի թագաւորին և սովորութիւն է Վրաց հանապազ ամբարտաւանել և մեծամեծ բանս խօսել»:

Վարդան պատմիչ – Պատմութիւն Թաթարաց:
1247 թվին:

– Թաթարները մտնում էին հայոց վանքերը և պահանջում էին «միս սարի չափ, և գինի ծովի չափ». երբ չէին տալիս, չարամահ մեռցնում էին վարդապետներին:

30. <ԻՍԿ Ո՞ՒՐ Է ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ...>

— Իսկ ո՞ւր է իմ ընտանիքը, հարցրեց Կուրբանը, և նրա չունչը կանգ առավ մինչև պատասխան ստանալը:

— «Քեզ ձի չեմ կոչելու, քեզ ասելու եմ իմ եղբայր: Դու եղբորից ավելի լավ ես ինձ համար»:

Քիթաբ-Կորկուտ

— Այս քաղաքը (Անի) աշխարհի չորս կողմը, բոլոր ծայրերը հարուստ բեռներով քարավաններ էր ուղարկում և ընդունում:

— Նստել էր պահակը կամ քարավանապետը՝ մերկ սուրը ծնկների վրա դրած:

— «Թուլլ ձագին մի՛ արհամարհիր, նա գուցե առյուծի ձագ է»:

Արաբական առած

— «Իսկական սերը այն սերն է, որ վերջանում է մահով»:

Իբն-Հազմի խրատներից. XI դար:

31. <ՄՏԻՆ ՀԵԹԱՆՈՍՔ...>

— «Մտին հեթանոսք ի ժառանգութիւն Աստուծոյ, և պղծեցին զտաճար Նորա սուրբ»:

— Կարոյի գյուղը — ցուրտ, աղքատ բնությամբ և խեղճ բնակչությամբ:

— Դու խաչքար ես. քո մոտից անցնելիս մարդիկ գլխարկները հանում են:

— Նա Մասիսը ամեն անգամ տեսնելիս՝ գլխարկը հանում է:

— Նա ամեն անգամ Անին այցելելիս՝ տոնական զգեստներն էր հագնում՝ գնավուր չորերը և ասում էր. «Պանծալի մայրաքաղաքն եմ գնում, ինչպես կարելի է հասարակ չորերով գնալ»:

32. ՀԱՅԸ ԲԱՐԵԿԱՄ ԶՈՒՆԻ

Բարեկամ չունի նա. իր հարևանները նրա մահացու թշնամիներն են. թուրքը՝ կոտորող, թաթարը՝ կոտորող, քուրդը՝ կոտորող. վրացին, լեզգին, չերքեզը, չաչանը՝ կոտորող, մալականը՝ կոտորող, ավերող, թշնամուն գործակից. Եվրոպան, աշխարհը նրա արյունը չահագործող. իսկ ռուսը... Նա այնքան մեծ է, այնքան զբաղված մեծ հարցերով, և այնքան անգիտակ իր նվիրված բարեկամի վիճակին, որ հաճախ անտարբեր է, և երբեմն անգիտակից աջակցող նրա թշնամիներին, և նրա մեջ վխտացող օտարազգի տարրերը՝ գերմանացի, մանավանդ հրեա, և այլն, բացորոշ թշնամի...

33. <ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ...>

— Գրիգոր Արծրունին ծաղրում, հալածում էր Կ.Պոլսի ֆրազիստ ինտելիգենտներին, որ Հայաստանից հեռու, նրան չճանաչելով ճառում են նրա անունից. նա գրել է. «Կ.Պոլիսը մի ֆրազա է, իսկ իրողությունը՝ Հայաստանը»:

Գրում էր, թե ազգային ժողովը ինքնախաբեությամբ է զբաղված, թե գավառ պիտի գնալ, այնտեղ գործել:

Այնքան տարրացան, որ այնուհետև ամեն տեղից վեր կացող նույնն էր քարոզում, արծարծում:—

34. <ՀԱՅՈՑ ՏԱՌԱՊԱՆՔԸ...>

– Հայոց տառապանքը անսկիզբ է և անվախճան:

– Շա՜տ մեծ աբլոմբ ունի. էնպես վերեն վար կնետե:

– Կերակուրը բերին, առջևը դրին, ուզեցավ ոտով-ղլխով մեջը մտնել, ամչըցավ:

– Նրա տաղանդը սահմաններից անց է, անցել է:

– Աղջկա ձեռքը համբուրեցի, ականջից փսփսացի... կարմրեց, տաքացավ, բռնկվեց:

– Գալիս էինք երկաթուղով, ծունկս ծնկին էր դիպել, մի անուշություն զգում էի անվերջ. ուզում էի երկաթուղին հավիտյան երթար, ծունկս նրա ծնկին կպած:

– Այսչի մեջ մեր մտավորականները մահվան հավանականության տակ, ուզեցել են,– ինչպես մի ականատես պատմել է,– հավատալ հոգու անմահության. ականջ են դրել տերտերի քարոզներին, խոսել են այդ հարցի մասին...

Վախը ի՜նչեր է ստեղծում:

<ԱՆԻ>

35. ԱՆԻ

– Սաադիի միտքը զենքի մասին:

– Մենք դարեր ցանել ենք և չենք հնձել. հիմա պիտի հնձենք:

– Մեր դերը՝ լուսավորիչ՝ մեծ է արևելքում:

– Սոցիալիզմը մի անգամից չի կարելի տնկել. մենք սերմնացանի պես բուռ-բուռ պիտի ցանենք և ո՛չ թե ամբողջ սերմը միանգամայն:

– Մենք թեև փոքր ազգ ենք, բայց ներկայացնում ենք մի մեծ գաղափար – զոհվել մեր անհատականության համար:

36. ՀԱՅՈՑ ԴԵՐԸ

Հայոց ժողովրդին վիճակված է պատմության մեջ մի ծանր, դժվարին, բայց նույնչափ պատվավոր, փառահեղ դեր: Նա պիտի կրթե իր հայրենիքում և իր շուրջ գտնվող բորենիները, գազանները, գայլերը, ավանակները, անասունները, և նրանց պիտի մարդ դարձնե:

Հայությունը քանակով շատ քիչ է իր հարևանների հանդեպ, բայց որակով չա՛տ և չա՛տ բարձր. իր որակը կգերակշռե իր չնչին քանակը:

Քրիստոնեությունը բոլոր ազգերի համար ոչինչ բան է, բայց մեր համար նա ամեն ինչ <է>, որովհետև մենք ենք, որ մենավոր առաքյալի պես մխրճված ենք իսլամի մեջ՝ երբեմն խաչի վրա, երբեմն խաչի տակ՝ բայց երբեք դասալիք, խաչադրուժ, միշտ կանգուն պահելով Ավետարանի եկեղեցին, պայքարելով, նահատակվելով, նորից հարությունն առնելով և նորից հաղթանակով պայքարելով: Եվ այդպիսի թանգ գնով պահված եկեղեցին, քրիստոնեությունը, անգնահատելի է մեզ համար, անլքելի, անդավելի, անուրանալի...

37. ԱՆԻ

Այս դծերի, քանդակների, այս քարեղեն հոյակապ բանաստեղծությունը:

38. ԱՆԻ

Սատանան աշխարք կործանելու, ապականելու համար՝ ամենահաջող կերպով – դիպլոմատի տեսք ընդունեց:

Եվ այնօրվանից հաջողեց իր ավերումների մեջ:

39. ՀԱՅԻ ԴԵՐԸ

Հայը պատմական մեծ դեր, մեծ առաքելություն ունի. նա իր ազամանդյա մաքուր լեռների վրա պիտի հավիտյանս անմահ, անշեջ պահե Լուսավորչա կանթեղը, այդ կանթեղից նա լույս պիտի սփռե իր լեռների ոտքերի տակ փռված խավար տափաստանների, անապատների վրա – դիտություն, մարդկայնություն, իսկական քրիստոնեություն – սոցիալիզմի, եղբայրության լույսը: Այդ դերը վաղուց էր վիճակված նրան, բայց աշխարհի չար դիվական ուժերը խանգարեցին, բայց չկարողացան ջնջել. այժմ օրը մոտենում է՝ հաջողությամբ կատարելու իր միսիան, վարելու, ցանելու, առաջնորդելու իր հարևաններին դեպի վեր, դեպի իր անապակ երկինքը, դեպի իր վեհ, սուրբ գաղափարների աստղերը:

Քրիստոնեությունը հայի համար է ստեղծված. նրա հոգին նրա վրա է կաղապարված:

Մեր հարևանները ոչ թե պիտի մեր լեռների ջուրը խմեն, այլև մեր գաղափարներով հագեցնեն իրենց ծարավը. մենք նրանց հոգու մեջ պիտի լցնենք մեր գաղափարների աղբյուրները, կենդանի ջուր տանք:

Անի *– Թյուրքը ոճիրն է, եղեռն է, հրեշություն է:*

40. Անի

– Աչխատանքի և դրամի (ագլուխ) համաչխարհային կախումից մենք չենք կարող խուսափել, և չպետք է կամենանք խուսափել, եթե իսկապես սիրում ենք հայ ժողովրդի մեծամասնությանը. սակայն մի բան միշտ պիտի աչքի առաջ ունենանք, ինչպես նավապետը աչքի առաջ ունի բևեռի աստղերը – ազգային նյութական գոյության պահպանությունը թյուրքից, որ դարան մտած դարերով՝ սպանում է թե հայ դրամատերին, թե հայ բանվորին և գիտնականին:

41. Անի

Վիճողներից մեկը ասաց.–

Այո՛, ես գիտեմ, թե ինչո՞ւ է երազում դաշնակցությունը, ինչո՞ւ է նա երևակայող, ցնորատես, անիրական: Ազատագրման փափագը, դա է ծնում այդ անգործնական ծրագրները, այդ պատրանքները: Ամբոխներին պետք է սուտը, հրաշքը, երազը, հույսը, հույզը, իդեալ, Աստված:

Ժողովուրդներն ապրում են իդեալով, երազով, կրոնները նույնն են: Հայության իդեալը – ունենալ անկախ

տուն, ստեղծում է երազական տեսիլներ, երևակայության մեջ իրականացած Հայաստան...

[Մի խոսքով՝ ինչ որ մտածում եմ երազի, տենչանքի, հնքիաթի, առասպելի մասին. Լի-Բոն, Ցրեոյդ...]

42. Անի

Դաշնակները խոսում են,

— 7-րդ մեծ պետության (մամուլի) մասին:

— 61 հոդվածի մասին, որ պարտամուրհակ է տրված հայերին պետություններին և սուլթանի կողմից: Նրանք մեր պաշտպաններն են, չեն կարող իրենց ստորագրությունը ուրանալ:

— Խրիմյանի չերեվիը և իր թուղթը, Հարիսան:

Ուրեմն՝ զենք, ստիպելու մեր պաշտպաններին, որ վճարեն իրենց պարտքը — մեր արյան գինը:

43. Անի

Իրականությունը ճանաչելը քաջություն է և իմաստություն: Նայել իրականության աչքերի մեջ և նրա տեղը երազներ չդնել, և ցանկությունները իրական չհամարել:

Մեր իրականությունը սա է — փոքր մի ազգ, ընկած աշխարհագրական աննպաստ պայմանների մեջ, հզոր պետությունների մրցման կետում, բարբարոս ժողովուրդների հետ խառն, ուր գրեթե ոչ մի անկյունում մեր տանը չենք:

Ազատվել այդ վագրերի երախից առայժմ և դեռ երկար ժամանակ անկարելի է:

44. ԹՈՒՐՔԸ

— Ի՞նչպես կռվել և հաղթել թյուրքերին, երբ նրանք չատ են մեր համեմատաբար:

Նապոլեոնն ասել է, թե — Աստված մեծ բանակ ունեցողի կողմն է:

Նրանց քանակը տասնապատիկ է մեզնից, և զինված են ու վարժված, մարզված:

Ի՞նչ անենք թե մեր որակը բարձր կարող է լինել: Չէ՞ որ քանակը որակ է դառնում: Ուրեմն, թյուրքը քանակով-որակով մեզնից գերազանց է: Մեր ուժը չի պատի նրանց ընկճել: Հակառակը կլինի, ինչ որ եղել է մեր պատմության ընթացքում:

Իրականությունը անհերքելի է և անփոփոխելի:

Ոչ երևակայությունը, ո՛չ ցանկությունը կարող են մի մազաչափ փոխել:

45. <ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ...>

Իրական Հայաստանը չեք ճանաչում, ձեր երևակայության մեջ ստեղծել եք Հայաստան և նրա վրա եք չափում, կշռում ձեր գործերը — ավանտյուրան:

— Հոգեվարքի, երկար մղձավանջային հոգեվարքի մեջ է թրքահայը:

— 61 հոդված կնչանակե — գերեզման, մահավճիռ:

— Ինչպես մի մարդ ոտքի կանգնել:

— Մեր քրիստոնեական կրոնը և մեր հավատը դեպի քրիստոնյա Եվրոպան՝ ահա մեր կորստյան ուղին:

— Որակի և քանակի խոսքը Անիրում կլինի: Ուր քանակը (թուրքի) որակ կդառնա: Պատասխան ծերերի դաշնակներին:

— Քրիստոնյա Եվրոպա — սրիկաների, պոռնիկների, ավազակների բույն:

— Երազատեսություն,

Արկածախնդրություն:

— Դառն իրողություն, իրականություն, մանկամիտ:

— Երևակայությունից անունդ, լուրեր, հորդորներ առնողներ:

*— Անիում բռնում են դաշնակներին **հակասության** մեջ. առհասարակ դաշնակցության մեջ չա՜տ կան հակասություններ — հույս Եվրոպայի վրա և հայհոյանք Եվրոպային, հավատ՝ դիպլոմատիայի, քաղաքականության վրա և ծաղր, թշնամանք, և ձգտում, քարող՝ հենվել հայության ուժերի վրա:*

46. ԹՈՒՐՔԸ

Նա նախամարդն է, բնազդների, սանձարձակ բնազդների, քարայրների մարդը, որ փշրել, ջարդել, բռնաբարել կուզե միշտ: Ե՞րբ պիտի քաղաքակրթվի — դարեր հեռո:

Թուրքը նախամարդու պես, վայրագ անասունների պես ծարավ է արյան և կործանումների. դրանց մեջն է գտնում իր հաճույքը:

47. <ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ՓԱՌԱԲԱՆՈՒՄ ԵՆ...>

— Դաշնակցականները փառաբանում են, պարծենում են իրենց գործերով — բանկ օտտոմանի գրավում, Խանասորի արշավանքը (որի տարեդարձն են կատարում) և

1904 թվի Անդրանիկի Սասունի ապստամբությունը, և 1903 թվի կալվածական կռիվները:

48. ԱՆԻ

Մեկն ասում էր, որ թուրքերը բացարձակ պաղարյունությամբ մորթում են հայերին, ինչպես մսավաճառը իր արհեստի սառնությամբ մորթում է եզներին, ոչխարներին:

Նա մորթում է կատարելով քաղաքական մի ծրագիր — ջնջել հայ ցեղը, տեղ բանալ թուրքության:

49. ԹՈՒՐՔԸ

Թուրքը մի անփոփոխելի նպատակ ունի — հայերի ոչնչացումը, սպառ-սպուռ:

Հայաստանը առանց հայերի, որ թուրքերով լցնե և միանա Ատրբեջանին: Այդ նպատակի համար նա դիմակներ է հագնում — մարդասեր, քաղաքակրթություն, սոցիալիզմ... բայց կեղծիքներ են. ոչ մի բանի առաջ կանգ չի առնի իր նպատակին հասնելու համար. ո՛չ ամոթ ունի, ո՛չ վախ, ո՛չ գութ, ոչ սիրտ: Ամենքին կխաբե, ամեն ձև կառնի, ամենքի հետ կբարեկամանա, կկաշառե, կստե. կերդվի, կուլտուրայեն ճառեր կասե — միայն, միմիայն իրագործելու համար իր նպատակը — հայերին ջնջել:

50. ՈՒՍՏԱՆ ԱՆԿՄԱՆ ՕՐԵՐՈՒՄ

Պլոյի նամակը դեռ Ուստային չհասած, դեռ իբր թե գաղտնիք, գյուղում ճանճնվել էր. Ղուկասը լսել էր և

հրճվել և սկսել էր իր ցանցը հյուսել: Գյուղացիները, Ուստայի բարեկամները տակավին լավ չէին [համոզ...] հավատացել, վավերական դեռ չէին համարել, բայց սրտերի մեջ կասկածն ընկել էր, սառել էին Ուստայի հանդեպ: Չէին գալիս մոտը. երբ Ուստան գյուղամեջ գնաց, շատերը երես էին պահում, խուսափում էին նրան հանդիպելուց: Օսկանը տխուր էր, մտահոգ. Տացուն և Տիրացուն ուշ էին գալիս, և եկած պահերին էլ փչի վրա էին զգում իրենց:

Ուստան զգում էր այս՝ վարմունքների փոփոխությունները, բայց պարզ չէր գիտակցում, մտքովը լուրջ բան չէր անցնում:

Ջավուշը նույնպես տխուր էր թվում:

Ռեսը եկավ Ուստայի մոտ. Ուստան իհարկե չգիտեր, թե գյուրսը ինչ է դառնում իր անվան շուրջը: Հարցրեց. ի՞նչ կա գյուղում: Եվ ձայնի մեջ իմաստ կար:

Ջավուշը Ռեսին կանխելու համար, որ Ռեսը բերնից բան բաց չթողնե, ասաց.

— Ղուկաս չեղածը վրադ կհաչա:

— Թե ի՞նչ,— հարցրեց Ուստան:

— Թե՝ [Հայաստան երթցողիս նայե] Ուստայի ձենը Հայաստանեն կուգա, թե՝ Ուստան ո՞վ, Հայաստանը՝ ո՞վ: Այնօրին բաներ:

— Ես Հայաստան երթցողն եմ, ինքը երազի մեջն էլ Հայաստանեն հեռու կփախնի: Գող-ավազակ:

— Ռեսն ասաց. Վարպետ, չան հաչին ինչ կաշես. էն էլ մա՞րդ է, որ մարդու տեղ դնես. աղբի հոտեն ակռան հաներ, քու ոտքդ կուզե խածնել: Աչխարք կգարշի էդոնցեն, ինքը իրան մարդու պես հավնի. էդպիսի համար մեր Մուշը կասե.

«<անընթ.>...

51. <ՍԿՍԵՑ ՈՒՍՏԱՅԻՆ ԾԱՂՐԵԼ...>

<...>[1] սկսեց Ուստային ծաղրել: Տո՛, ինչ քյարվան, ինչ աչխարհտեսուԹյուն. փչան է, փչան: Ո՞վ դիտե որտեղից է. ինչո՞ւ չի դնում իրենց դյուղը: Արդյոք, մեկն իմանա էդ ասած գեղից է... հարցնողը լինի, ի՞նչ գործ ունիս էս կողմերը.— Հերդ ո՞վ է, աղբերդ ո՞վ է: Տեսնես ո՞ւմ տունն է քանդել ու փախստական է եղել, գլուխ կպահե... Գյուղացիք էլ չէին սիրում Ղուկասին, բայց դեհ, ուժով մարդ էր, հարուստ էր, դասեր ուներ գյուղում: Շատերն էլ պարտապան էին, լեզուները փորները քցած, ձեռները՝ կարճ:

Բայց երբ կայծակը տերտերից 300 րուբլի տուգանք առավ և Ուստան էլ հայհոյեց տերտերին, Ղուկասի մեջ օձեր բույն գրին: Եթե դատերից վախ չունենար, կմատներ Ուստային պրիստավի մոտ, որ պասպորտ հարցնեն, քննեն անունն ու տեղը, գյուղը: Ուստան դաչնակցական էր, իսկ ինքը ոչ միայն չէր (չէր ընդունում), այլև նրան թշնամի էին ճանաչում և մի կերպ, իբրև դրացիի հանդուրժում էին:

Իսկ երբ Ուստան դատավոր դարձավ և Ղուկասի մուրհակները ձեռքն ընկած պատռում էր, և մի օր էլ սպառնաց ծեծի քաշել զինվորների ձեռքով և բանդ դնել — Ղուկասը այլևս դուլ ու դադար չուներ. մտածում էր մի կերպ վրեժ լուծել: Եվ հասավ վրեժի օրը. հիմա հերթը իրենն է — քանի որ Ուստան դաչնակցուԹյունից հեռացված է, էլ ինքը վախ չունի: Ծայր տվեց բամբասանքներ սանամորների մասին. դա ամենազգայուն չիղն է մարդկանց: Հետո Թե լուր ունի Գյումրվա քաղաքեն, որ Սա-

---

[1] Սկիզբը պակաս է:

լուտ էդ անունով մարդ չի եղել, «Հազարութչենց տղա» էդպես տուն էլ գոյություն չունի:

Կարոն աճամի հողից է, գողություն է էրել, ձեռքեն արունք թափել չի գա, տղամարդու գործ է, կարելի է, [կնիկ է սպանել ու] խայտառակ, անամոթ բաներ է արել, գողություն, բողություն... գլուխն առել ռուսի հողն է փախել...

Իսկ ռեվոլվեր քաշելուց հետո, պահանջում էր [– եթե գյուղից չքշեք, կսպանեի / կամ ես արունս աչքս կառնեմ, բայց չարժե էդ անառակի / թոկե փախածի համար կարտեժ կատրժնիկ էլնել. ես պրիստավին կասեմ, թող]

Գյուղից քշեցեք, թե չէ արունք կելնի. մեր տղերքը արունքն աչքն առել են. քշեցեք երթա. կասեմ ձեզի. եթե ուզենամ պրիստավին, նաչալնիկի ականջ քցեմ թե ռեվոլվեր քաշեց, էս մարդը, որ մեր գեղից չէ, պասպորտ կհարցնեն, կքննեն, հոտը դուրս կուգա, Սիբիրի ճամբան առջևը կբացվի, ոնց որ սանամորների ճամբեքը բաց էին...

Աղբեր, լավն էն է, առանց գեչուության, թո՛ղ իրեն քարվանն առնի քաշվի երթա իմ գեղեն. ես քրիստոնյա մարդ եմ. չեմ ուզե ոչ արունք, ոչ Սիբիլ: Տերտերս էդպես [ուզե] կհրամայե:

52. ՁԱՌԵՐԻՑ

Քսենոփոնի գոված Հայաստանը, օրհնած երկիր, դաբերի մեջ պղծեցին մոնղոլները. եկան այդ պղտոր հոսանքները, հորդանները, աղտեղեցին մեր դաշտերը, մեռցրին մեր անտառները, ցամքեցրին մեր աղբյուրները, փոշիացրին մեր պալատները, հրաշակերտները և իրենց աղ-

բերը կուտելով նրանց տեղը՝ ասում էին մեզ՝ թե Հայաստան չկա, նա մեր հայրենիքն է եղել միշտ և կմնա, դուք մեր ռայաներն եք:

Ձայներ — Հետի տերը զորավոր կլինի: Սարեցին իջավ, տնեցուն դուրս արավ:

53. ԿԱՅԾԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ I ԳԼԽՈՒՄ

Ամեն հայ պիտի ճգտի սուլթանին սպանել. այսինքն, ոչ թե նրան անձնապես, դա երկրորդական է, այլ նրա կառավարությունը, նրա իշխանությունը, նրա տիրապետությունը Հայաստանի վրայից: Հայաստանը հային պիտի լինի, և նրա ոչ հայ բնակիչները՝ քուրդ, թուրք, պիտի հպատակվեն մեր իշխանությանը, մեր օրենքներին: Նրանք կմնան հավատարիմ, մենք լավ կվարվենք նրանց հետ, եղբոր պես. և ես գիտեմ, որ նրանք գոհ կլինեն մեր իշխանությունից, որովհետև մերը կլինի մարդասեր, ազատ, արդար, և ոչ թե սուլթանականի պես բռնակալ, գազանային: Նրանք կկրթվին, մարդ կդառնան մեր ձեռքի տակ և կապրեն մարդավայել:

Այդ ապագայի համար, այսինքն՝ ապագա ազատ և անկախ Հայաստանի համար, նրանք ևս պիտի կռվեն մեր չարքերում, եթե խելք ունեն, սուլթանի դեմ. թուրք, քուրդ մեզ հետ սուլթանի դեմ: Թերևս ապագայում երեք ազատ պետություններ կազմվեն, յուրաքանչյուրը յուր հողի վրա — հայկական, քրդական, թուրքական:

Նրանք մեզնից պիտի օրինակ վերցնեն. և դրա համար է որ մենք Ասիայում պատմական դեր ունենք — լուսավորելու, ազատություն բերելու, արդարություն, իրավունք, ռամկավարություն, կուլտուրա:

54. <ՋԱՎՈՒՇԸ ԱՆԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ...>

Ջավուշը Անի կայարանում, Գյումրի գնալիս, առաջին անգամ է, որ տեսնում է երկաթուղին: Երբ լոկոմոտիվը եկավ՝ փչչալով, ինչալով, դղրդոցով, վախեցավ, հետ-հետ քաշվեց, և զարմացած ասաց[1].

— Մարդու ձեռքից բան չի պրծնի, մենակ հոգի չի կտրող տա:

Երբ հասան Գյումրի, Ջավուշն ասաց. ի՜նչ շուտ հասանք. ով գիտե, սելով, քարվանով երկու օրվա ճամբա էր... Ուստան պատասխանեց.— Հա, Քյոռօղլին ասել է, հնճարք եղավ, տղամարդությունը վերջացավ, մաչինեն եղավ, աչխարք պստիկցավ:

Երևկոյան, քնելիս, Արաուլի սրճարանում, Ջավուշն ասաց — Երեկ էս ժամանակ Անի էինք, էսօր էստեղ. մարդը հաստատ որ անթև հավք է:

55. <ԵՎՐՈՊԱՆ ԱՍՈՒՄ Է ԹՈՒՐՔԻՆ...>

Եվրոպան ասում է Թուրքին. ինձ այս տուր, այն տուր, այս հողը, այսքան փող, այս մենաշնորհը — ես քեզ կարդարացնեմ: Եվ Թուրքը տալիս է, հայերից կողոպտում ու տալիս:

Եվրոպան հայի արյունից իր համար դրամագլուխ է չինել. շահագործում է միշտ մեր նահատակությունը և վերջը մեզ լքել:

Եվ այսպես վարվեց, մինչև որ ջնջվեց հայ ազգը:

---

[1] Լուսանցքում՝ «Երևանում տեսել էր նա»:

Միևնույն է, եթե հեղափոխությունը չգար, և կոտորածներն էլ չլինեին, հայ ժողովուրդը իր հայրենիքի մեջ պիտի հալվեր, ոչնչանար, արհամարհելի փոքրամասնություն պիտի դառնար. 5 դարի ընթացքում հայաբնակ Հայաստանը ավելի քան կիսով չափ թրքացել, քրդացել է, հայ ազգը կամ ճուլվել է, մաշվել, կամ կոտորվել և գաղթել զանազան կողմեր: Այս ընթացքը, այս պրոցեսը անընդհատ շարժման, իր ուժի մեջն է, ինչ որ դարերի մեջն էր, նույնը ավելի թափով մեր աչքերի առջևն է կատարվում: Հայկական հողը անցնում է օտարներին — այսպես մի դար ևս, և Հայաստանը կդառնա աշխարհագրական անուն, ինչպես որ Պաղեստինն է, Հրեաստանը, ուր բացի հրեաներից ամեն ազգ կա: Եկավ հեղափոխությունը, և ամեն ճիգ դրծ է դնում վախճան դնել այս ամենօրյա հյուծումին, նա հայ ժողովրդին մղում է գենքի, զինված կռվի դաշտ. մեռնել կամ ազատվել. և իրոք, ավելի լավ է մեկ անգամ մեռնել, <քան> թե ամեն օր մեռնել, դանդաղ, թոքախտավորի պես, հյուծվել, տանջվել անխուսափելի մահվան հեռանկարով: Սակայն հեղափոխությունը պիտի հաղթանակե:

Մենք պիտի ստիպեինք մեր պետությանը ոչ թե միայն չջնջվելու համար, այլ կարելի լինելու համար ապրել անկախ, ստեղծելու համար մեր հոգուն վայել մթնոլորտ, մեր ինքնուրույն քաղաքակրթության զարգացնելու համար մեր անհատական, մեզապատկան հատկությունները, դրսևորելու համար մեր ներքին աշխարհը, աշխարհին մեր խոսքը ասելու:

— Ազգայնությունից քայլում է, գնում է դեպի միջազգայնություն, համամարդկություն, անհատականությունից դեպի ազգը, ազգից դեպի մարդկությունը:

Առաջին ճակատ — կռիվ համաթուրանիզմի, համիսլամականության դեմ, պաշտպանելու համար մեր գոյությունը իբրև ազգային անհատ. կռիվ այնքան ժամանակ, մինչև որ ոչ մի թյուրք-քուրդ-թաթար չվստահանա անպատիժ կերպով վնասելու մի որևէ հայի՝ իբրև հայ ազգի անդամի:

Երկրորդ ճակատ. կռիվը տան մեջ, ազգի ծոցում՝ ընդդեմ հարստահարողների, վաշխառուների, տիրող դասերի:

ԱՆԻ

Պահպանողականը — քրիստոնեական սեր:

Թաթոսը — Քրիստոսին լսենք, տուն ու տեղ չպիտի դնենք. էնքան մոմ որ վառեցինք, նրա փողով փրկել էինք Հայաստանը:

Պահպանողական — Սիրիր թշնամիներիդ: [Սերը սեր կզարթ...]

[Ռեսը] Թաթոսը — Թե որ Քրիստոսի ժամանակ թյուրք լիներ, Քրիստոս էդ խոսքերը չէր ասի:

Պահպանողական — Թյուրքն էլ մարդ է, սիրիր, և սերը սեր կզարթեցնե նույնիսկ վայրագ գազանի սրտում:

Ամեն թուրք՝ լինի ազատամիտ թե հետադեմ, եվրոպականացած թե ասիացի մնացած, գրագետ թե անգրագետ — ամենքն էլ համաձայն են հայ կոտորելու մեջ, ամենքն էլ ուրախ, որ հայը ջնջվի, ամենքն էլ ոճրագործ են:

— Հայը դարևոր խաչակիր զինվոր է:

— Հասարակության, ինչպես և ազգի գոյությունը խարսխված է զոհերի վրա. ճակատագիրն այնպես դատա-

վոր է, որ ազգի ամենամաքուր, ամենաքաջ, ամենաազնիվ զավակները (անհատները) պիտի զոհվեն, մեռնեն ամբողջի համար: Արյունով, արցունքով, մահով է կենդանի մնում ազգը, ազգային կատարյալ գաղափարը, իմաստը: Այսպես, միշտ լավերը պիտի մեռնեն վսեմի համար և վատերը պիտի մաքրվեն:

Քրիստոս, հայոց ազգ:

Թուրքը հայերին մորթոտեց, կախեց, այրեց, խեղդեց, փշրեց, կողոպտեց, և Եվրոպան լսեց ու ասաց՝ սուտ է: Ականատես վկաներ եկան ամեն ազգերից ու հաստատեցին, Եվրոպան ասաց՝ սուտ է:

Սուտ է, որովհետև կաշառված է. կաշառված են պատգամավոր ու ծերակույտ, դատավոր ու զորավար, նախարար ու նախագահ, վիպասան ու մամուլ:

56. Անի

Սոցիալ-դեմոկրատը — կարիք չկա Հայաստան ստեղծել, մարդիկ կոտորել տալ. թո՛ղ ամեն մի հայ ճուլվի իր միջավայրի հետ, ռուս դառնա, թյուրք, քուրդ, պարսիկ, բուլղար և այլն: Միևնույն է, վերջը բոլոր ազգերը հալվելու են չաքարի պես մարդկային ծովում, հանրամարդկության ծովում: Պիտի լինի մի լեզու և մի հայրենիք — ողջ երկրագունդը: Բուրժուազիան իշխող դասերն են, որ ազգությունների բաժանման, պետությունների բաժանման գաղափարը պահում են իրենց շահերի համաճայն: Աղքատ, չունևորի համար չկա հայրենիք և

ազգ: Եվ վերջապես ինչ է ազգությունը — հին դարերի պատմական մի սխալ, մի նախապաշարմունք. էապես երկու տնտեսական դրություններ կան, հին լեզվով ասած, երկու ազգ՝ բանվոր և հարստահարող: Դրանք պիտի կռվեն իրար դեմ, և ոչ թե հայը թյուրքի դեմ, թյուրք ազգը անգլիացու դեմ: Ընդհակառակը. բոլոր ազգերի բանվորները պիտի միանան՝ իբրև մի ազգ, մի մարդ, մի հոգի, մի կամք, բոլոր ազգերի հարուստների դեմ, իբր մի ազգի դեմ: Եվ այն ժամանակ կգա իսկական դրախտը, ոսկի դարը, առանց դասակարգի, առանց տարբեր ազգի, այլ մի հայրենիքում, մի ազգի եղբայրներ, որ իրար չեն շահագործում, ինչպես այժմ հայ կամ վրացի ազգասերը շահագործում է հայ կամ վրացի չունևորին:

Ծերը — երազներ, ցնորքներ, պատրանք... բանվորն է, որ հայրենիքի կարիք ունի, բուրժուայի համար ամեն տեղ հայրենիք է. հայրենիքը նա իր գրպանի մեջ է ման ածում... Դա ռուսո-հրեական հիվանդություն է. եվրոպական ազգերը այդպես չեն ըմբռնում սոցիալիզմը: Ազգերը չեն ոչնչանա, չեն ձուլվի. անհատականությունը չի կորչի. վայ այն դարին, որ պիտի նա չքանա — ազգ-անհատը: Այլաբերում, վատասերում, այլանդակում. ահա ձեր քարոզը:

Ծերունիի ծրագիրը — հայացնել երկիրը, հայրենիք ստեղծել, անհատականություն, դեմոկրատիա,— ազգային սոցիալիզմ:

Ռես Հոսե – Երբ ասում են, թե թյուրքը մարդագայլ է, նա թե՝ ոչ, ավելի վատ է. մարդագայլը դիակներ է ուտում, իսկ թյուրքը – կենդանի, ողջ մարդկանց:

[Սուտ էլ կա, սուտ:
Սուտ կա ազգ կփրկե, սուտ կա, ազգ կկորցնե:
Տիրացուն –
– Էդպես սուտեր մենք էլ կխոսենք, բայց պոլսեցիք...]
– Երկինք-երկիր մեկ եղան, Ուստա Կարոյին ծնեցին:
– Բաղձանքս, երազս նյութավորվեց:
– Հայի ուժը կշեռքի վրա բան չի ավելցնե:
– Մարդը՝ եսական, անհատը՝ եսական, պետությունը՝ եսական:
– Հայկական հարցի լուծումը մարդկության բարոյականության չափանիշն է, խղճի և գթության:
– Լացով բան ձեռք չես բերի, այլ՝ ուժով, զենքով:
– Եվրոպան Աստված չունի. անգութ, չահասեր, սրիկա:
– Թյուրքի և քրդի պես հարևան ունեցողի համար ինչ Աստված, ինչ Քրիստոս, ի՛նչ սոցիալիզմ, ի՛նչ ազգերի համերաշխություն, գայլի գլխին ավետարան չեն կարդում, այլ երկաթե գավազան:

Պատերազմի մասին

Ծերուկը – Տիրապետելու պատերազմը վատ է, բայց ազատության, ինքնապաշտպանության պատերազմը սրբազան է:

57. ԱՆԻ

Ծերունին.
Պահպանողական.

Ս<ոցիալ> դեմոկրատ.

Ծերունին՝ ազգային, կես-դաշնակցական, մարտնչող, հայրենիք ճանաչող, հայերի մեծ ապագա ընդունող, թուրքաասյաց, հեղափոխական.

«Առանց հեղափոխության հայ ազգը կճուլվի, կկորչի, կռվի մեջ կհաղթանակենք, միջազգայնությունը — ապազգայնությունը — այլաբերումն է, անհատականության խեղաթյուրում, թյուրքերին պիտի ոչնչացնել, ո՛չ մի հաշտություն, ո՛չ մի դաշնակցություն: Սոցիալիզմը — ազգի ծոցում. ժողովրդին է պետք հայրենիք և ոչ թե հարուստին. հարուստի համար ամեն տեղ հանգիստ կա և հայրենիք:

Պահպանողական. հեղափոխությամբ կջնջվի ազգը. Եվրոպան գազան է. «Հայաստանն առանց հայերի» ամենքի համար ձեռնտու է, թե թյուրքի, թե ռուսի, թե Գերմանիայի, թե Անգլիայի և թե Ֆրանսիայի: Եթե մինչև վերջին հային թյուրքը սպանե, Եվրոպան մատը մատին չի խփե և թյուրքի հետ կբարեկամանա:

58. <ՄԵՆՔ ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԻ ՉՈՒՆԵՆՔ...>

<...>[1] մենք սեփական ուժ չունենք, որ թյուրքերից խլենք մեր հողը. ո՞ւմ վրա է մեր հույսը:

Խոհեմություն է խաղաղ մնալ, բարեկամանալ թյուրքի հետ, աշխատել, համբերել, լուսավորել թե մեզ, թե թյուրքին, «երկնքի թագավորություն» բերել մեր երկրում: Եվրոպացիք ձեռք են քաշել, նա մեր գերեզմանափորն է.

---

[1] *Սկիզբը պակաս է:*

1895-6 թթ. ջարդերը ապացուցեցին, թե մենք այնքան անգետ ենք և չահագործման աղբյուր: Թյուրքի հետ բարեկամանանք, Թյուրքիան մերը կլինի ժամանակով:

Սոցիալիստ — Սոցիալիզմ, ինտերնացիոնալիզմ, ընդհանուր հեղափոխությունը դա է փրկելու ազգերը և մեզ. ազգությունների դարն անցել է: Հայրենիք չկա: Ազգ չկա, կա երկու ազգ՝ չահագործող և չահագործվող: Մենք պիտի միանանք բոլոր ազգերի պրոլետարիատի հետ և կռվենք բոլոր տիրողներին...

Համաձայն եմ բարեկամանալ Թյուրք ժողովրդի հետ, նրանց աչքերը բանալ հարստահարող բեկերի, աղաների, փաշաների հանդեպ և տապալել սուլթանի բռնությունը: Հայը մենակ չի կարող: Դաշնակցությունը ազգի տունը քանդում է:

59. ԿԱՅԾԱԿԸ ԱՆԻՈՒՄ

Անի թափառելիս, չա՜տ հուզված, խոցված, երեկոյան հացի վրա, գինի խմած, ընկերների մոտ մենախոսում է.

— Անի, հին երազ, ավեր երազ. Հայաստան, նոր Հայաստան, մանուկ վերածնված Հայաստան, նոր Անի... Ահա նոր երազ, ոսկի, աղամանդ երազ. ցնորք, անրջական իրականություն, որ մեր հոգիներում ապրում ես, ով դու սուրբ երազ, դու միակ Իրականը, Իսկականը, Ճշմարիտը. մյուսը սուտ է, իրական չէ. երազ, դու իմ հոգու աչխարհ, դու Պլատոնի գաղափարների երկինք, դու անմահ տեսիլների վայր, դու հրեղեն պատկեր... երա՞զ. դու ինքը հույսն ես, հավատն ես, սերն ես, կյանքը... Ով կարող է ապրել առանց երազի:

Ամեն մարդ երազ ունի, աղքատը երազ ունի, հիվանդը, մահամերձը, թագավորը...

Եվ այլն, և այլն: Երազի մասին իմ տեսակետը:

Իսկ մանրավաճառի մասին թե՝ հլունքները գոհար են դառնում, չիթերը, կտավները՝ մետաքս ու թավիշ, էշը՝ նժույգ. երբ Անիից ներս է մտնում.— դա ազգային հպարտության մասին <է>, երբ իրենք դարբասից ներս են մտնում:

— Անի. Մայր-եկեղեցին: Սա Պլատոնի դեղեցիկի իդեալի մարմնացումն է, ոչ թե սովերը. Պլատոնի դեղեցկության կաղապարը վայր է ընկել նրա դաղափարների աշխարհից, ընկել է այստեղ — ահա դեղեցիկը՝ կատարյալ, ամենակատարյալ, անսահման — աստվածային դերակատարյալ...

— Դարերե ի վեր հայն է հալածված,
Ինչո՞ւ, էնդուր որ չա՛տ է աչքաբաց:
Գ. Քաթիպա

Ինչ է ուզում ղարիբ մշեցին մեզնից.— ո՛չ վող, ոչ մարդ, այլ թուր, հրացան, վառոդ, թնդանոթ.

Այդ է ուզում ամբողջ Հայաստանը մեզնից:

Կայծակը ոգևորված՝ Անիում (Հայ պատանին. 109 եր.).

«Կեցցե չատ օրեր մանուկ-Հայաստան.
«Եղբարք, բանը դեռ անշոշափելի»

ապա

Հարավ-Հյուսիսեն փոչի բարձրացավ...»

– Ընկերներ, ազատ Հայաստանը մեր հոգում կա, ահա աչքերս փակում եմ և տեսնում եմ ազատ Հայաստանը իր ազամանդե լեռներով՝ փռված ու ծավալված. այդ Հայաստանն է հավիտենականը, ճշմարիտը, իրականը, այո՛, ազատ Հայաստանի գաղափարն է իրականը, այդ երազն է իրականը. իսկ ներկա ստրուկ Հայաստանը, արյունոտ Հայաստանը, դա սուտն է, ժամանակավորը, առժամյան՝ իբրև մի մղձավանջային երազ, որ պիտի ցնդի չուտով, տեղի տալով մեր հոգու մեջ ապրող իսկական, իրական հավիտենական ազատ անկախ Հայաստանին... (և այստեղ վերջացրեց վառված):

Հարավ-Հյուսիսեն փոչի բարձրացավ...

Մենք էլ ուրիշ ազգերի պես իրավունք ունինք, անկապտելի իրավունք օգտվելու արևից: Եվ մեր իրավունքը ձեռք կբերենք կռվով, զենքով ու բռունցքով:

60. ՈՒՍՏԱՆ ԱՆԻՈՒՄ

[Պալատի մեջ քնում է մի քիչ և մի]

Բագրատունյաց պալատում պառկել է քնելու համար. քունը դեռ չտարած երազում է, սրտի ուզածը երազում. իրեն-իրեն մտքի մեջ խոսում... Հայաստանը ազատել են, ինքը, իր զորքը. Անին նորոգել են, ցրված հայերը իրար գլխու են հավաքվել, ազատ, անկախ Հայաստան, զոր-

քով, բերդերով, հարուստ, ապահով... այդ մտքերի վրա քունը տանում է, և մնացածը տեսնում է աչքով, երազում... վերանորոգված Անին. իրեն փառքով ընդունում են. երգ, թնդանոթներ արձակում, տանում են պալատ, նստում է թագավորի և թագուհու հետ սեղան, Սանամը մի կողմը, Զավուշը մյուս կողմը, և երեխան գիրկը (մոր)... կեր, խում, կենացներ... Զարթնում է:

61. Անի

Զավուշ ջան, մտքի մեջ հալա դու չինե էս քանդված պալատներն ու ժամերը, պարիսպներն ու դռները, դումար քաղաքը, տես ինչ փառայ փառ քաղաք կըլնի:

Եվ նստեցին, ու սկսեցին իրենց երևակայության մեջ Անին շինել, լրացնել... այնքան չքնաղ շինեցին, որ զարմացած ու հիացած՝ մի պահ լռությունից հետո իրար երես նայելով ձայնեց<ին> — պահ օ՛հ. չըսված, չտեսնված, չլսված քաղաք է եղել:

62. Անի. Ջորում (Ախուրյանի)

Ջորը ղողանջում էր մեծ, հեռավոր զանգի պես, խուլ, խորհրդավոր. ղողանջների մեջ պատմական անցյալի հազար դաղտնիք, հազար լաց ու խոսք, սեր ու մրմունջ խտացած...

Ժամի տակ պառավներ... Ուստան սանամորների մոտից եկավ անցավ ժամի տակով, նայեց ծերերին, ասավ — ա՛խ, ինչ լավ է ասված՝ մեռնել ըլներ, ծերություն չըլներ:

Առնես ատրճանակ, մեկ-մեկ սպանես էդ եվրոպացոց:

63. ԿԱՐՈՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ

Անի: [Երազում:] Ջավուշն հարցնում է, որ Հայաստանը թափենք թշնամու ձեռքից, Ուստա, հետո ի՞նչ պիտի լինի մեր գործը:

Ուստան— Իմ ձեռքովս Անի պիտի նորոգեմ, ու ավերված գյուղերի ու քաղաքների վրա նոր-նոր չինեմ. մենակ ազատելը քիչ է. երկիրը ձեռքի մեջ ունենալու համար պիտի չենցնել:

Շենցնողն է երկրի, աշխարքի տերը. եթե թուրքը երկիր չինող լիներ, երկրի տերն էլ կմնար: Ինձ համար Օրթե Հարուրթի խոսքերն ու կայծակի սոցիալիստ խոսքերը ջորիի սերմ է, ցանես, չի բուսնի:

Մենք Հայաստան կազատենք, տուն ու պալատ կշինենք, թող ապրեն ուրիշները մեջը. մեր անմահական անունը մեզ հերիք է:

64. ԱՆԻԻ ԾԵՐՈՒԿԸ

Մաքիվելլական խրատներ է տալիս —

— Ամեն ազգի պետություն ստեղծվել է զոռով, ուժով, բռնությամբ, արյունով և խորամանկությամբ:

— Զորավարը պիտի լինի քաջ, խելոք և խորամանկ, խարդախ. երբեմն [դրուժ] ուխտադրուժ, խոսումնազանց, դաշներ քանդող:

65. <ԵՐԲ ՈՒՍՏԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ...>

— Երբ Ուստան ընկերների հետ Անի քաղաքի հոյակապ դարպասից ներս մտավ, այնպես զգաց, թե հետևում մնաց սովորական, առօրյա հասարակ աշխարհը և աչքերի առաջ տարածվեց ու խորացավ մի նոր աշխարհ, ուր ամեն ինչ կախարդված է, ուր հեքիաթ է, իրական հեքիաթ, բայց և ուր ամեն ինչ երազ է, անիրական, հրաշք ու գաղտնիք, խորհրդավոր և հրապուրիչ:

66. <ՀՈԳԻՆ ԼՑՎԱԾ Է ԲՅՈՒՐ ԵՐԳԵՐՈՎ...>

— Հոգին լցված է բյուր երգերով, երբ շրջում էր բնության մեջ: Բնությունը լեզու առած խոսում է հետը:

— Աչքերը մաշվել էին գրքերի վրա:

— Նա ի՞նչ գործ ունի այստեղ, ինչո՞ւ է եկել: Ինքը չի եկել. ոտքերը իրեն կամքից անկախ, մեքենայաբար քայլել, բերել են նրան այստեղ:

— Մենք և թուրքերը տարբեր ցեղեր ենք. տարբեր հոգևկան, տարբեր բարոյական, տարբեր հոգեբանության, մտայնության, զգայնություններ. այսինքն՝ տարբեր բարոյականներ, հոգեբանություններ — զգայնության կամ զգայության:

67. ՈՒՍՏԱՆ ԱՆԻ

— Տեսնես ո՞վ է չինել էս տաճարը, էս պալատը: Ի՜նչ վարպետ է եղել, անունն ի՞նչ է եղել, քանի՞ տարեկան, աչքերը, ի՞նչ տեսք է ունեցել: Կնիկ, երեխա ունեցե՞լ է...

Ա՛խ, մեկ տեսնեի, աչքիս մի րոպե[1] երևար կամ երազիս հաստատ տեսնեի...

Տեսնես, ես որ էն ժամանակ լինեի, ի՞նչ վարպետ կլինեի, ինչե՛ր կշինեի թագավորի հրամանով... ինչ վարպետների ձեռքի տակ սորված կլինեի... Կարելի է էս մայր-եկեղեցին ես չինած էղնեի կամ էս մեծ կարմունջը... Ո՞վ դիտենա...

68. ԱՆԻ

Երբ շրջիկ Կայծակը և պարոն Աղբալյանը ոգևորված ճառում էին հայոց, Անիի անցած փառքերից, թագավորներից, բանակից, պատերազմներից և հաղթություններից, Ուստան տեսավ Անիի դռներից դուրս են հոսում ժողովուրդ, արքա, իշխաններ, դրոշակներ, դիմադրում են հաղթող, վերադարձող բանակներին: Լսեց ուռաներ, կեցցեներ, երգեր, թնդանոթների տրաքոցներ, հրացանների ճայթյուններ, քիթը լցվեց վառոդի բարկ հոտով ու ծխով, աչքերը տրորեց ծխից կսկծացող, և տեսավ, որ հենց ականջի տակ պայթում են կրակված հրացեններ, Կայծակը ատրճանակ է արձակում, Հլղաթը ատրճանակ է արձակում, և վառոդի ծուխը պատել է բոլոր այս խմբին:

69. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ (ԱՆԻ)

— Խրիմյանի ասածը, երկաթե չերեփը, Հարիսան: Սրանով կոչ եղավ զինված ապստամբության և դուռ բացվեց մեր ծով դժբախտությունների:

---

[1] Բնագրում՝ րոպպե:

— Անգլիան միշտ, 100 տարուց ավելի, խանգարեց հայ ժողովրդի ազատագրման գործին՝ չթողնելով ռուսների կողմից Հայաստանը գրավելուն: Եվ ոչ էլ ինքը ազատեց հայերին: Այս բոլորը Հնդկաստանի համար՝ չթողնելով Ռուսիայի առաջխաղացման դեպի Հնդկաստան, միշտ զոր-ծեղացնելով մուսուլմանությունը՝ թուրքին և Պարսկաս-տանը, իբրև պատվար: Հայաստանը իբրև ճամբա կամ դուռ դեպի Հնդկաստան, դեպի տաք ծովերը՝ ուրեմն այդ դուռը դոցել թուրքերով՝ ջնջելով հայությունը:

70. ԱՆԻ

Ուստան փափագ զգաց ծնված լինելու Անիի փառքի ժամանակ: Տեսնես, ի՞նչ կլինեի, մտածում էր նա, էս նշա-նավոր վարպետների ձեռքի տակ, և էլ երևելի ուստա ե-ղած կլինեի, կարելի է էս պալատը ես շինած էղնեի, կամ էս վանքը... Բայց կարելի է զորավար եղած լիներ. այո՛, զորավար, հայ զորքի գլուխն անցած՝ կռվեր հայու թշնա-միների դեմ, որ միշտ նույն է եղած՝ թուրքը... կռվեր, ջարդեր... փառքով հետ դառնար, Ավագ դռնից ներս մտներ Անի, դնար պալատը, թագավորի քովը նստեր՝ սուրը վրեն... ճաշի նստեր, իրեն պատվին տված ճաշին...

71. ԱՆԻ. ՔՈՋԸ

— Մենք մեր աղքատ, լեռնոտ երկրի տերը չենք. մեր գյուղերի արոտատեղիների մեծ մասը թուրք քոչվորների է պատկանում գարնան սկզբից մինչև աշուն:

Թուրքը ուժեղ է: Ռուսը նրա բարեկամն է, կաշառակեր ռուսը, հայատյաց ռուս-վրացի պաշտոնյան. ավեր, թա-լան, գողություն, սպանություն քոչի պատճառով:

72. ՈՒՍՏԱՆ ԱՆԻՈՒՄ

Նստել է ավերակների տակ, մի քարի վրա, նայում է ավերակներին և խորհում...

— Ի՜նչ վարպետներ են չինել, տեսնես ի՞նչ մարդիկ են եղել... դեմքը, ձայնը: Կնիկ են ունեցել, տղաներ: Քեֆ են արել, տանջվել, մեռել... ո՞ւր են դրանց գերեզմանները... Հող են դառել և խառնվել արտի հողերի հետ... Ժողովուրդը, իշխաններ, թագավորներ, զորք — հող...

73. <ՈՒՍՏԱՆ ՀԱՐՑՆՈՒՄ Է...>

Ուստան հարցնում է՝ ո՞վ է չինել Անիի մայր եկեղեցին, ո՞վ է նրա վարպետը —

Կարծեմ — Տրդատ ճարտարապետը:

74. ԱՆԻԻ ՎԱՐԴԱՊԵՏԸ

Առաջ մառանում կար ալյուր, բլղուր, բրինձ, եղ, մածուն, կարագ, սեր և հոգեկան-բնական մի ցատկում անելով՝ հարեց.— Սեր կար, եղբայրասիրություն, ազգասիրություն, ժամասիրություն, աստվածասիրություն:

75. ԱՆԻ

Մեկն ասում է.

«Փարիզի զարդարված չորս անկյունիցը Անվա քանդված մեկ պատը լավ է»:

76. Անի

— Ավերակների ներկա չեղջերը, աններդաշնակ, անհեթեթ կույտերը, անիմաստ քարե դեղերը երբեմն եղել են ներդաշնակություն, ձև, ոճ, համաչափ, տրամաբանված, իմաստավորված, նշանակություն ունեցող ամեն մի քարը, բեկորը...

— Ուր է Անիի ստեղծագործ ժողովուրդը, նա, որ օդի մեջ կառուցել է այս քնքուշ, նուրբ սյուներն ու կամարները, նա, որ քարե տաբերքին իմաստ ու հոգի է տվել.— չկա, չկա. այժմ՝ այս խեղճ ու կրակ ժողովուրդը, նրա հաջորդը, մազապուրծ, կողոպտված, ոտնահարված, կուչ է եկել այս հոյակապ ավերակների պատերի տակ և գոմի է վերածել այս հրաշալիքները...

77. <ԷԴ ԿՆԻԿԸ...>

— Էդ կնիկը պողվատիկ թուր է՝ ոսկեբուռ կոթով, կարե՛ կանցնի:

— Ձկնորսները վերջիվերջո դեմքերով նմանվում են ձկներին: Հովիվները՝ ոչխարներին, գյուղացիք՝ հողին ու արտին, եզան ու բնությանը:

Անի

Եվրոպան ծնեց հայոց հարցը և թաղեց՝ մեռցնելով 100000-ներով հայություն:

78. Անի

Երբ երկու վիճող կողմերը իրարուց հեռացան, Թիֆլիզից եկողները ասացին. լավ տղերք են, բայց զառանցող-

ներ: Մի ուրիշը – Հայ ժողովրդի լոպպազութ֊յունը դաշ֊նակցութ֊յան մեջ է խտացած, մարմնացած:

Իսկ Կայծակի խումբը –

Ճարպոտ գլուխներ, բռթողներ: Կռվել ու մեռնել չգի֊տեն, այդ վախից ու անկարողութ֊յունից գաղափարաբա֊նութ֊յուն են ստեղծել, ինքնարդարացման համար:

Փառք, որ ժողովուրդը ձեզ հետ չէ:

79. ԱՆԻ

Մի ազգի անկախութ֊յան համար [երեք] երկու պայ֊մաններ պետք են.

ա. Դրացիների բարի կամքը,

բ. Աշխարհագրական նպաստավոր դիրքը:

Մի բան, որ մենք չունինք. մեր դրացիները թշնամի են մեզ, մեր աշխարհագրական դիրքը թշնամի է բնականո֊րեն, և կամ մի պայման, բոլոր բացասական տարրերը ջնջող – նյութական ուժ, քանակ, որ նույնպես չունենք. ուրեմն մեզ մնում է խոնարհիլ իրերի տրամաբանութ֊յու֊նը, բավականանալ ½, ¼ անկախութ֊յամբ և կապվել Ռու֊սիայի հետ, միշտ համերաշխ լինելով դրացիների հետ:

80. <ԿԱՄ ԵՐԱԶ ՏԵՍԱԾ...>

Կամ երազ տեսած, կամ ապրած – միևնույն բանն է:

Անի: Այս չքնաղ եկեղեցիները իրենց բարձրիկ գմբեթ֊ներով մի֊մի քարակերտ, քարահյուս (քարեղեն) աղոթք֊ներ են՝ ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ:

Syrinx = *սրինգ (Հունարեն կարծեմ):*

81. ԱՆԻ

Զինաստանից մինչև Բագու և Թավրիզ, այնտեղից էլ մինչև Ստամբուլ թուրքերեն են խոսում. դուք ինչպե՞ս պիտի այս թրքական ովկիանոսի մեջ նավավարեք. մենք, հայերս, մի ափ ժողովուրդ:

Ռուսը, ահա թե ով պիտի այդ ովկիանոսը ցամքեցնե:

82. ԱՆԻ

Ուստան. Ախ, ինչպես կուզեի էղնել Անիի չեն ժամանակը, հայոց թագավորների ժամանակը: Մեծ մարդ կէղնեի: Զորավար: Հեչ որ չէղնեի՝ գլուխ վարպետ կէղնեի, և մայր եկեղեցու պես մի վանք էլ ես կշինեի կամ թե չէ պալատներ, չէ թե հիմիկվա օրվա պես — մարագներ, գոմեր ու այվաններ՝ դարմանի, եղների ու դյուղացոց համար:

Շրջիկ կայծակը ոգևորված խոսում է տիկ. Այծեմնիկի մասին իբրև հայկական ժաննա դ'Արկի մասին...

83. ԱՆԻ

Սոցիալ-դեմոկրատի ճառը...

Դուք մոռանում եք բանվոր դասակարգի գոյությունը: Նա պիտի գա և քանդե պիտի այս հին աշխարհը՝ ցար, սուլթան, եվրոպական դիպլոմատիա... և փրկե պիտի աշ-

խարհը և նրա մեջ Հայաստանը: Դուք ծաղրում եք բանվորին, չեք տեսնում նրա պատմական մեծ դերը, արհամարհում եք նրան, նա, որ չարժիչ ուժն է կյանքի, ստեղծողն է արժեքների: Եթե նա չլինի՝ ո՛չ հաց կունենաք, ո՛չ հագուստ, ո՛չ գիրք ու գեղարվեստ: Ո՛չ կառք ու երթևեկության միջոցներ... Հենվեցեք սոցիալիզմի վրա, նա կտա Ձեզ ձեր Հայաստանը, թե չէ աշխարհում ո՛չ մի այլ ուժ չկա բռնակալների ձեռքից խլելու Ձեր և բոլոր ստրկացած ժողովուրդների հայրենիքը...

84. ԱՆԻ

– Հայաստանը եղել է վահան պաշտպանության՝ Վրաստանի համար: Եթե Վրաստանն ունի ներկայիս (1904 թ.) այս հողերը և հոծ, գրեթե անխառն վրացի ազգաբնակչություն – դա չնորհիվ Հայաստանի է, հայկական պայքարի ընդդեմ թուրք մոնղոլների...

85. ԱՆԻ

Նրա առաջին պարիսպները քաշեց Աշոտ Ողորմածը, երկրորդ մեծ պարիսպները նրա որդին Սմբատ Բ. Տիեզերակալը: Նա ամենաքաջ, հանդուգն, ձեռներեց Բագրատունիներից մեկն էր. նա գահ բարձրացավ 977 թվին, սկսեց մայր եկեղեցու հիմնադրումը, Տրդատ ճարտարապետը, որ առաջ չինել էր Արգինայի եկեղեցին Խաչիկ կաթողիկոսի ծախսով: 20 տարի Տրդատը աշխատեց տաճարի վրա: Սմբատը մեռավ՝ չավարտած չենքը, հենց հիմնադրման տարիներում, չենքը չարունակեց և ավարտեց

նրա եղբոր Գագիկ Շահանշահի կինը՝ Կատրանիդե թագուհին, Սյունաց Վասակ թագավորի աղջիկը 1001 թվին: Տրդատը չինեց մի հսկա գմբեթ չորս վերառաք, նուրբ և քնքուշ սյուների վրա՝ գմբեթը երկնային կամարի նմանություն ուներ, ինչպես վկայում է Ստ. Ասողիկը:

Ներդաշնակություն, պարզություն, վեհություն — ահա Մայր եկեղեցին:

Կախված էր գմբեթից մի ջահ, որ բերել տվել էր Սմբատը Հնդկաստանից. սելճուկ բարբարոսները՝ Ալփ-Ասլանի ոհմակները 1064 թվականին փշրեցին բյուրեղյա ջահը և վար իջեցրին մարդահասակ արծաթյա խաչը գմբեթի ծայրից, և կիսալուսինը դրեցին փոխարենը:

Նոր սելճունդը մի հասարակ փայտյա դուռ դրեց գլխավոր մուտքի վրա: Գյուղացիները, նոր, անկման, կործանված հայ ժողովուրդ — հիմա դոմ և ախոռ է չինել հայ վանքերը: Գաճաճներ մեր մեծագործ նախնիքների, մենք՝ ապազգայնացած, կորցրած հավատ, ավանդություններ, աստվածներ, ներշնչում, փառատենչություն, հերոսական ոգի, դարձած ստրուկ, աղքատ, ցնցոտի, այլասերված, անփառունակ, եսամոլ, անընդունակ զոհաբերման, քաջագործության, սխրագործության, անձնազոհության...

86. ԱՆԻ

Զգացված չենքեր, ապնիվ հոգով, հավատով կառուցված. սրտով, սիրով:

Այս կենդանի լեզուն, ավերակներում, խոսում են հինհին դարերից, մեր նախահայրերի մտքերից, ճաշակից, երազանքներից:

Մեզ տանում են դեպի խորքերը մեր գոյության (լինելության), մեր ակունքները, մեզ միացնում են մեր հայրերի հետ, մեր իդեալների հետ, միջնորդ են, կենդանի կապ ու խոսք, հեռավոր նրանց հետ...

87. ԱՆԻ

Թուրք, պարսիկ, վրացի, ռուս...

Սև օղակ, որ խեղդում է մեզ...

Թուրքն ու պարսիկը դարերի մեջ հյուծեցին մեզ, ոչնչացրին... Ո՞րտեղից որտեղ հասանք...

Ռուսն եկավ, մոռացավ մեր օգնությունը, հենվեց թուրք և պարսիկ խանների և բեկերի վրա և վրաց թավադների վրա...

88. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ

Անիում: Մեր այս քաղաքականությամբ ոչինչ չենք շահի: Նույնիսկ երկու աչք չի մնա մեզ ողբալու մեր անհուն կորուստը:

Մեզ կոտորում են... Դուք կարծում եք, թե դրանով աչխարհի սիրտը կմորմոքի մեր վրա — երբեք: Մեր կոտորածների վրա փոքրիկ ժողովուրդները, օրինակ՝ վրացիները, կխնդան, կուրախանան, իսկ մեծերը կաչխատեն օգուտ հանել թուրքերից — ռուսը, գերմանացին, անգլիացին, ֆրանսիացին:

89. ԱՆԻ

Ա՛խ է անում պարոն Կայծակը:

Ախ, հանկարծ, մի կախարդական գավազանով ժամանակը հետ դառնար կամ մի հնարքով տեսնեի Բագրատունյաց թագավորության ժամանակ Հայաստանը. այնպես, ինչպես նա եղել է — լեռները, դաշտերը, անտառները այդպե՞ս են եղել, ինչպես հիմա են. գյուղերը, ժողովուրդը, լեզուն, տարազը, տուն ու տեղերը, սայլերը, եզները, կովերը, ձիերը, նրանց սարքերը: Քաղաքների կյանքը, տները, շուկան, կանայք, տղամարդիկ, զորքը. արհեստները, իշխանները, թագավորը, թագուհին... Այնպես, ինչպես եղել են: Ասում են երկնային տարածությունների մեջ կան նկարված անցյալը: Հռոմը, Բաբելոն, Հնդկաստան և այլն: Ա՛խ, տեսնեի մի օր այդ ազատ, դասական Հայրենիքը, Տիգրան մեծի, Տրդատի... Եվ իսկույն մեռնեի...

90. Անի

Մեկը անիշխանություն է քարոզում:

Որտեղ պետություն կա, իշխանություն կա, այնտեղ բռնություն կա, լուծ, ճնշում, անհատականի ջնջումը: Մարդը պիտի ազատ լինի, ազգությունը պիտի ազատ լինի...

Հակառակորդը ասում է.— Դուք մտածում եք, արդյոք, ինչ կլինի մարդու, հասարակության վիճակը, երբ վերջանա իշխանությունը — ոճիրներ, եղեռներ, արյունհեղություն, բռնություններ. քար քարի վրա չի մնա. մի քայլ անգամ չպիտի կարողանաք փոխել՝ առանց կյանք կորցնելու: Միայն չարերը, ուժեղները կապրեն՝ այն էլ միառժամանակ:

Անիշխանությունը թերևս իդեալ է, միայն այն պայմանով ընդունելի է նրա իրականացումը, երբ մարդ-արա-

րածը հասնի բարոյական բարձր կատարելության, ճանաչի ուրիշի ապրելու իրավունքը, ճանաչի իր և ուրիշի ազատության սահմանները:

– Գյուղացու համար, և մտածողի համար էլ ի տես տիեզերական հարցերի.– աչխարհ<ի> բանները, երևույթները իրականի և հեքիաթականի խառնուրդ են. նրա աչքում չնչվում է իրականության և հեքիաթի սահմանագիծը:

Գյուղացին, մանկան պես, բնությունն ու կյանքը հեքիաթներով է գիտակցում[1] / ներընկալում:

91. <ԱՆԻՒ ՎՐԱ...>

– Անիի վրա՝ Բագրատունիների վրա երկու մեծ ազդեցություն կար՝ Բաղդատ և Բյուզանդիա: Վերջինը ավելի ուժեղ էր. երկու մեծ ճանապարհ՝ դեպի Բաղդատ և Բյուզանդիա:

– Անի՛... դեղեցկությունից, ներդաչնակությունից, չքնաղ ձևերից և խորունկ իմաստությունից հետո՝ հիմա անհեթեթ քարակույտեր՝ անիմաստ խառնիճաղանջ քարերի և քաոս...

92. ՈՒՏԱ ԿԱՐՈՆ

Անի: Շրջիկը կամ մի ուրիշը, տեսնելով գիշերը լուսնյակին, ասում է պաթեթիկ չեչոտով – «Ով լուսին, դու հավերժական վկա աչխարհի գործերին: Դու տեսել ես Ա-

[1] Բնագրում բառը վերցված է չրջանակի մեջ՝ որպես տարբերակ:

նին իր հոյակապ վիճակում, չեն, պայծառ, հարուստ, մարդաշատ, տեսել ես հայոց թագավորներին, չքնաղ թագուհիներին, տեսել ես մեր զորքը՝ հաղթությունից դառնալիս, մեր այրուձին... Տեսել ես մեր ծաղկած այգիները, պարտեզները, պալատները. տեսել ես Անիի դարպասներից ներս ու դուրս անելիս ծանրաբեռն կարավանները, որ եկել էին հեռավոր աշխարհներից՝ Բյուզանդիայից և Պարսկաստանից և գնում էին հեռավոր աշխարհներ... Տեսնում ես նաև հիմա անկյալ վիճակը՝ թուրքի թրի տակ և ռուսի մուրակի տակ, տեսնում ես մեր վիշտն ու կոտրածները... Բայց, չուտով կտեսնես մեր նորոգ փառքն ու չքեղությունը, մեր ազատ Հայաստանը իր ազատ, բախտավոր ժողովրդով...»

Կտեսնես, ուռա՛հ, ուռ՛ռ՛ահ...

93. <ԱՅՊԻսԻ ՍՐԻԿԱ...>

— Այսպիսի սրիկա, լիրբ, անգութ, գազան մարդկանցով ծեփված է հասարակական մեր կյանքը:

— Կուսակցականություն,

Փաստաբրություն,

Ջուլվածություն:

— Ազգություն ոչնչացնել — շատ մեծ, մեծագույն հանցանք է:

94. <ԱՆԻՆ (ԱՎԵՐԱԿՆԵՐԸ)...>

— Անին (ավերակները) մեռած չեն հայի համար, կենդանի են, նույնիսկ ավեր չեն, այլ շեն են, կառուցված,

նորակառույց. երբ մտնում է Անի, մտնում է իր մայրաքաղաքը՝ չեն, ներկա, եռուն, զորքով, թագավորով, գահով...

Տեսնում է ավերակները, մի պահ տխրում, ապա երազում է, և երազը կենդանի, չեն, անկործան, հզոր, կենսահորդ, եռուն Անին փռում <է> ավերակների վրա:

— Ուստան Անիում կես արթուն և կես քուն տեսավ Անին, ժողովուրդը, զորքը, թագավորներ, հրեղեն ձիեր, կանայք, երեխաներ, իշխաններ, փառք պանծալի, չքեղություն, ճոխություն, կյանք, կենդանություն, գործեր...

95. ԱՆԻ

Ծերը թե՝ Անին մեր տունն է, ազատ խոսենք մեր վիճակի մասին: Վրացին միշտ մեր թշնամին է, միշտ թուրքին բարեկամ. չխաբվել նրանից, որովհետև շատ նենգ, կեղծավոր, լեզվանի կնկա պես ժողովուրդ է:

Այնտեղ կային ուրիշ երկու մարդ. մեկը — կոնսերվատիվ-պահպանողական (Զիլքիլով. Ենկիբարյան). Կավկաս պիտի նայեք, թե կհաղթեք. Եվրոպան իր շահը ունի, հույս մի դնեք, զուր մի կոտորել տվեք հայերին:

Մյուսը սոցիալ-դեմոկրատ — Թե աշխարհը դմակ է, Անգլիա, Գերմանիա, Ռուսիա՝ դանակատներ. ամեն մեծ դանակը և ախորժակը Անգլիան ունի, նրանք գիշատիչ են և մսակեր, բերանկոխ ուտողներ. ամենամեծ սրիկան Անգլիան է, ամենափոքրը — Ռուսիան: Չհավատալ Անգլիային, այդ խորամանկ, անգութ բորենուն, որ միշտ թրքասեր է, նույնը՝ գազան Գերմանիան, նույնը՝ Ֆրանսիան, կեղծավոր. ամենեն լավը նորեն ռուսն է. չմոռա-

նալ. և եթե ընտրություն կա նրանց միջև՝ ռուսեն լավը չենք կարող գտնել:

96. Անի

— Անին ուներ 40 բանալի, որ հանձնեց Պետրոս Գետադարձը հույներին. ուրեմն 40 դուռ?, աշտարակ և այլն. դռներից մեկը կոչվում էր Ծաղկոց դուռն. կար Դվնո, Կարուց, Երևանի, Գայլաձորի...

Ծաղկոցը երևի Ծաղկաձորի դուռն է:

— Անիում, ուր խոսվում էր հայոց պոլիտիկայի մասին. կշտամբել վրացիներին, որոնք դավում են, թուլացնում են հայերին. այնինչ նրանց իսկ չահն է ուժեղ հայ ժողովուրդ՝ ընդհանուր թշնամու դեմ կանգնելու համար. հայերի անկումից անմիջապես հետո՝ հերթը նրանցն է: Հայերի հետ միասին պետք է պայքարեն թուրքության և ցարիզմի դեմ:

— Պատմական ակնարկները, փառքի մասին խոսքերը, դրվագները. Բագրանում աստվածների (դիցավանի) մասին խոսելիս (Ոսկեմայր Անահիտ, Աստղիկ, Վահագն, Վանատուր, Արամազդ...) պետք է խոսվի Ուստա Կարոյի և Հարությի ներկայությամբ, որ նրանք էլ լսեն և ոգևորվեն:

Տրդատ Հարտարապետ.
Վահրամ Սպարապետ.
Այծեմնիկ տիկին.
Թաթուլ Վանանդեցի.

Այս անուննները հիշել և գովել:
Աշոտ Երկաթ
Սմբատ աչխարհաչեն, տիեզերակալ, չահինչահ
Գագիկ Բ.

Աղասի:

Մի քանի գրութիւններ՝ այցելողներից: Օրինակ Գեղամյանի ճամբորդական նոթերից հանած, «Փորձ»-ից:

Մանավանդ անցյալ փառքի և ապագայի հեռուներից: Այսպիսի անցյալ ունեցող ազգը չի կորչի և կվերակենդանանա:

97. <ԱՐԳԻՆԱՑԻ ԿԱԹՈՂԻԿԵՆ...>

– Արգինայի կաթողիկեն չինել է Տրդատ ճարտարապետը Մոկացի Խաչիկ կաթողիկոսի ծախքով:

Ասողիկը այսպես է նկարագրում այդ տաճարը – «Շինեաց զսուրբ կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանաւք գմբէթարդ խորան երկնանմման, հանդերձ եւս երիւք եկեղեցեօք՝ նոյնաձեւ, հրաշատեսակ, չքնաղագեղ յօրինուածով, եւ զարդարեաց մեծապայծառ, ծիրանածաղիկ, ոսկեթել անկուածովք ի զարդ ոսկւոյ եւ արծաթոյ եւ ամենայն զարդու պայծառութեան ջահաբորբոք լուսաւոր անաւթոց»:

Մ<ատթէոս> Ուռհայեցին ասում է, թե կաթողիկոսական աթոռը հայոց թագավորական աթոռից նվաստ չէր:

Օրինակ, Պետրոս Գետադարձի ժամանակ դա մի ընդարձակ եկեղեցական պետություն էր, հինգ հարյուր թեմ ուներ, հարյուրավոր եպիսկոպոսներ: Կաթողիկոսարանում միշտ գտնվում էին 12 եպիսկոպոս, 4 վարդապետ, 60 երեց և 500 աշխարհականներ:

Երբ Պետրոսը Կ. Պոլիս գնաց, իր շքախումբը կազմված էր 300 զինված մարդկանցից, 100 եպիսկոպոսներից, վարդապետներից և քահանաներից. բացի այդ՝ ևս երկու հարյուր (200) հետևակ ծառաներից:

Վարդան Բարձրբերդցին ասում է, որ մայր եկեղեցու գաղափարը կապրանիտե թագուհուն տվել է երազում հրեշտակը՝ խոստանալով, որ ինքը կօգնե շինության և շինողներին:

Նվիրված էր ս. Աստվածածնա անունին: Սակայն Սմբատ Տիեզերակալն է հիմքը դրել տաճարի, 981 թվին և վերջացել է 1001 թվին, Գագիկ Շահենշահի օրով: Երկնանման գմբեթով՝ ըստ Ասողիկի:

98. <ԱՆԻ, ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՆԵՐՇՆՉԱՐԱՆ...>

Անի՛, հավերժական ներշնչարան...

Երբ Անի քաղաքում եմ լինում, հետևս զգում եմ բանակները, արքայական զորությունն, մշակույթի, արվեստ...

99. ԱՆԻ

Այստեղ գաղափարը կաղապար հագավ, առավ: Այստեղ նյութացավ, և նյութը հոգի դարձավ... հոգիացավ:

Հարուքը խնդրում է Աստծուց, որ հայտնություն անե, պարզե իրեն կնքած գրքերի խորհուրդը (Թ<ոմա> Գեմբացու խոսքերից):

Տերտերը փառաբանում է Աստծուն: Հարուքին խրատում, առաջին անգամ, սատանայի դեմ զինում. «Նմանողություն Հիսուսի Քրիստոսի» քարոզում, Գեմբացու խոսքերից մի-երկու հատ: Ապա կարդում է հատվածներ Սուրբ Գրքից և Նարեկից և ճամբա դնում:

Աստված ստեղծեց մարդուն իր պատկերների նման. ուրեմն մեր քավորի կտոր գոչ ու փսլինքոտ տղա՞ն էլ Աստծու պատկերն ունի:

Եթե Աստված պատժում է և չնորհում է մարդկանց մեռցնելով, ի՞նչ հաչիվ ունի ծծկեր երեխայի հետ, որ դեռ բերնի ճամբան չգիտե:

Հարուքը տեսիլի գնաց, ո՛չ թե երազ:

100. ԱՆՎՈ ԴՌՆԵՐԸ

Ավազ դուռն
Գլիճորի դուռն
Ծաղկոցաճորի դուռն
Կարուց դուռն (Հյուսիս)

Երևանա կամ Դուռնա դուռն (արևելյան կողմն):

Արփ-Արսլանը 1064 թ. խաչը հանում է մայր եկեղեցվո վրայե և մահիկ դնում, կործանում է բյուրեղյա ջահը, որ 12 լիտր է կշռելիս եղել <անընթ.> ձեթ պարունակելիս:

Խծկոնքից մոտ երեք վերստ հեռավորությամբ Տիկոռ (Տիկոր):

Տիկորից 5 ժամ (հինգ) Մրենը:

Մրենի եկեղեցին չինել է 613 թվին Դավիթ Սահառունին, իսկ Տիկորինը 5-րդ դարում Սահակ Կամսարականը:

101. Անի

Բուրժուազիան է իշխում աշխարհին: Նա է ճնշում ազգերը ու պատերազմներ սարքում, մեր ջարդերը նրա միտքն է. պետք է ոչնչացնել բոլոր բուրժուաներին՝ անգլիական, ֆրանսիական, գերմանական, ռուսական:

Ուստան հարցրեց կայծակից, թե ինչ է բուրժուա:

Նա թե — Հարուստ, փողատեր մարդը:

(Ղուկաս աղա՛, մտքի մեջ ասավ Ուստան, սպասե, հերդ կանիծենք):

102. <...ԵՎ ԳԱՀԱՎԻԺՈՒԹԵԱՆՑ>

<...>[1] և գահավիժուլթեանց:

Աւա՛ղ զրկանացս, աւաղ թշուառական պատմուլթեանս:

Հայ ցեղը և հալածանքները, հոգեբանական լուսին տակ

Հ. Պողոսյան, Ամերիկա

Երազի քաղցրությամբ հիշեցնել, տեսնել պատմությունը, երևալ:

– Լայնաեզր հոսանք,

– Ոսկե հեղեղ:

103. ԿԱՑԾԱԿԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Զոհեր տվինք, չա՛տ, և դեռ չա՛տ զոհեր ենք տալու, առանց զոհի չի մեղմանա բ<ռ>նության Աստուծո սիրտը, բռնությունը ժողովուրդների արյան գնով է ծախում ազատության իրավունքը:

---

[1] Սկիզբը պակաս է:

104. ԱՆԻ

Եվրոպացիք և մնացած աշխարքները — մինչև ատամները զինված են, հետևները թնդանոթներ ու միլիոնավոր սվիններ, բայց ձեռքին Ավետարան սիրո և իրավունքի, ճնշում են, պիշատում ժողովուրդներին, մանր ազգերին ու ճառում եղբայրությունից, արդարությունից, քրիստոնեական սիրուց, խաբելու համար. մենք չպիտի խաբվենք թուլլերին վայել այդ սկզբունքներից, խաբվողը զոհ է, էշ-նահատակ. մենք այնքան ուժեղ պիտի լինենք, որ եվրոպացու հետ նույն լեզվով խոսենք, և նույն զենքով կռվենք:

Խելոքները ասում են, իմաստունները հավատում են:

105. ԱՆԻ

Ուսաան պառկել էր մի ավերակ պատի տակ. մի ձայն լսեց. ո՞վ էր. աչքին ներկայացավ մի մարդ՝ քարտաշի/որմնադիրի գործիքները ձեռքին, ուրիշ տեսակ հագուստ հագած, առջևը մի բուրճ էր չինում, վարպետ կերպով. Ուսաան աչքերը տրորեց, վարպետը չկար:

— Էս բուրճը չինող լուսահոգի վարպետն է, երևցավ աչքիս ու աներևույթ եղավ. հոգին հլա չինած բուրճի բոլորքն է...

106. <ՍԵՐՄԱՆԵՑԵ՛Ք...>

Սերմանեցե՛ք մի միտք, դուք կհնձեք մի գործ.
Սերմանեցե՛ք մի գործ, դուք կհնձեք մի սովորույթ.

Սերմանեցե՛ք մի սովորություն, դուք կհնձեք [մի բախտ, վիճակ, ճակատ, ճակատագիր] մի բնավորություն:

Սերմանեցե՛ք մի բնավորություն, դուք կհնձեք մի բախտ (վիճակ, բնավորություն):

107. <ԹՈՒՐՔԸ ԿՋԱՐԴԵ...>

— Թուրքը կջարդե, կավերե, կթալանե, կբռնաբարե, հետո կջարդե, կավերե, կթալանե, կբռնաբարե, և հետո ջարդելով, ավերելով, թալանելով, բռնաբարելով՝ կարդարանա ամբողջ լուսավոր ու խավար մարդկության առջև, նախանձը չարժելով մանավանդ լուսավոր մարդկության:

— Երբ մեր անկախությունը փաստ դառնա:

— Թատրոնը, վեպը մի ցոլարան է կյանքի իրականության:

— Դիվանագիտական սադրանքներ:

— Հայաստանը ծնավ նրա հոգում, այս օտար մարդու: Հայաստանը նրա հոգում ծնած՝ աշխարհ եկավ նա:

— Այս «գաղափարական» գործիչները ոչնչով տարբերվում են եվրոպական այնքան տխրահռչակ (դիվանադետ) տիպարներից:

— Աշխարքը մի իրականություն է. եթե կա տարբերություն, այդ մեր երևակայության մեջն է, մեր ըմբռնումների:

— Եվրոպական ազգերը անգթության մեջ իրարուց չեն տարբերվում, եթե կա տարբերություն, այդ էլ մեր երևակայության մեջն է սոսկ:

108. ԱՆԻ

Սոցիալիստը — փրկությունը ամբողջ մարդկության և հայերի՝ սոցիալիստն է:

Ոչ մի ազգ միսիոն չունի: Ի՞նչ միսիոն ունի հայը կամ ռուսը — ոչինչ: Ամեն մարդ պիտի ապրի, չտառապի, <անընթ.> զարգացնել՝ լավ ապրելու համար, հաղթել բնությանը՝ լավ ապրելու համար, լավ ապրել — կուշտ, առողջ, երկար, չտանջվել, բախտավոր լինել կամ զգալ, և ուրիշներին չչահագործել:

Մյուս բաները — միստիկություն է, մետաֆիզիկա, կրոնական հին ապրումների մնացորդներ:

109. <ԹՈՒՐՔԸ ՓՉԱՑՐԵՑ...>

— Թուրքը փչացրեց մեր երկրի անտառները, չորացրեց մեր երկիրը, աղբյուրները, գետերը: Անապատ դարձրեց, անապատ, որտեղից որ նա դուրս էր եկել, և անապատը հետը տանելով ու սփռելով իր ոտք դրած տեղը:

110. <23 ԺԱՄ 50 ՐՈՊԵ...>

— 23 ժամ 50 րոպե տանջանք, 10 րոպե — հանգիստ = ամուսնություն:

— Հայոց վիշտը անսկիզբ է և անվախճան:

— Այս քարեղեն մագաղաթները — հայոց վանքերի քարերը:

— Օրը գա, բարին հետը, օրը գալիս է առանց բարին հետը:

Գեղամին,
Ալազանին,
«Հայրենիքին»
— Սեպուհին —
Ալազանի —
Վ<ահան> Զաքարյան
Պ<ողոս> Մակինց<յան> —
Ս<տեփան> Զորյան
Հ<ակոբ> Խաչատրյան:

111. ԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԸ

— Անշուշտ, ես ընդունում եմ էս կարծիքը, որ առանց ռուս պետության չկա հայ ժողովուրդ: Ռուս պետականության ուժով պահվում է հայի ֆիզիկական գոյությունը, որովհետև զսպված է այդ ուժի չնորհիվ թուրք-թաթարական կործանիչ տարերքը: Բայց այդ ժամանակավոր է և պատահական:

Իմ համոզմունքով՝ միայն սոցիալիզմի հաղթանակով ապահովվում է հավիտյան փոքրիկ ժողովուրդների գոյությունը և ինքնությունը: Քանի կան մեծ, կայսերապաշտ, տարածողական, ծավալվող դրամատիրական պետություններ, որոնց էությունն է գրավել, ծավալվել, տիրել չուկաներ, գաղութներ, կողոպտելու, շահագործելու, չեն կարող փոքր ազգերը ապրել, ինքնուրույն կյանք ունենալ: Երբ ջնջվեն այդ ընչաքաղց պետությունները, նրանց տիրող դասակարգերը ոչնչանան, և մնան միայն

աշխատավոր տարրերը, ջնջելով իրենց գոյությամբ դասակարգին... այն ժամանակ միայն չունչ կքաշեն ազգերը և ողջ մարդկությունը:

Սոցիալիզմը կփրկի հայությունը:

Ուրիշ ելք չկա:

112. ԱՆԻ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

— Ոճրագործ է այն մարդը, որ քարոզում է հայ-թրքական համերաշխություն, իրար հանդեպ բարեկամություն, հավատ և սեր. որովհետև այդ քարոզներին անկեղծորեն կհավատա հայ ժողովուրդը, իսկ թուրքը կկեղծե, կնենգե, և հաջող, պատեհ վայրկյանին մահացու հարված կուտա հային, որը նրան հավատացած՝ անպատրաստ կլինի դիմադրավելու:

Ընդհակառակը, ավելի մարդասիրական կլինի անվստահություն, թշնամություն, վրեժ քարոզել, որով հայը զինված ու աչալուրջ կլինի և թուրքը ախորժակ չի ունենա հարձակվելու՝ գիտնալով, որ անկորուստ կերպով չի պիտի <կարողանա> իր վայրագությունները գործ դնել:

(Այս միտքը մշակել և հակիրճ ու ազդու գրել):

113. <ԱՅՍ ԱՇԽԱՐՀԸ...>

— Այս աշխարհը քաջասիրտներուն կվերաբերի:

տը Թոքվիլ

— Պայքարն հաջողության պայմանն է, մեր թշնամին մեր օգնականն է:

Ռոպերտ Բիլ

Տիկոր. 5 դարու չենք:
Թոռ ու թաց:

Հայր Ալիշանի մասին Ջիվանը երգել է.

«Ծիսով կաթոլիկ, բայց հոգով հայ է,
Սիրում է Հայաստան հայր Ալիշանը»:

Միհր կամ արևի որդին, Որմզդի ծնունդ: Հազար ականջ ունի և տասը հազար աչք ունի, որով տիեզերքի մեջ անցած դարձածը լավ կլսե-կտեսնե:

Միհր կնշանակե բարեկամ:
Ավիս խալդերի, Ուրարտի, ջրի, գետերի աստվածն էր: Ջրի, գետի աստված, ուրեմն Նեպտունը:

ՈՒՏԱ ԿԱՐՈ

— Թյուրքը ազգայնություն ասելով հասկանում է — ջարդ, վերածնունդ ասելով՝ ջարդ. հայրենասիրություն՝

չարդ, ոգևորություն՝ չարդ, բարեփոխություն՝ չարդ, սահմանադրություն՝ չարդ:

— Ամեն թյուրք՝ իսլամճի է, թուրանճի.— իսլամչի, թուրանչի:

— Մահմեդական երկրները, իրար ուտողներու երկրներ են, իրար ուտող բաներ են թյուրքերն:

— Մաշադի ղուլի հաճի օղլի Աբաս քիչի աղա Մանսուր խանի թոռը:

114. ԱՆԻ

Ուստան ասաց, որ երկու վարպետներ, եղբայրներ, Անիի պարիսպները չինելիս, սկսում են մեծ դռնից, ու մնաս բարև ասում են, բաժանվում. չինելով, չինելով 40 տարի հետո միանում են մյուս ծայրում ու իրար ձեռք տալիս, ավարտում ու մեռնում:

115. ԱՆԻ ԿԱՄ ԱՅԼՈՒՐ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԻ ՃԱՌԻ ՄԵՋ

Ավետարանի խոսքերով կարելի չէ հրացանը լցնել, վառոդ և արճիճ է պետք:

116. ԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԸ

Հեղափոխականը, որ կռվում է տիրող դասի դեմ, որ անցել է պետական ղեկի գլուխը — նա իր հոգու մեջ դև

պիտի ունենա, կործանե եղածը, որ նորերը գան և նորը կերտեն. կործանել – գործ և ոչ թե խոսքով ջուր ծեծե:

Ջինված մարգարեներն են պատմությունը չինողը և ոչ թե խոսքի մեքենաները: (Խոսող մեքենաներ):

117. ԱՆԻ

Այստեղ մեր հոգին նյութ է դարձել, ձևավոր նյութ: Մեր մտածումներն ու զգացումները մարմնացել են ու ոճ հագել:

Այստեղ քարերը հոգի են դարձել:

118. ԱՆԻՈՒՄ
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

6 ուղղություն գոյություն ունի:

I. Հեղափոխությամբ ազատել Հայաստանը, զենքի ուժով, հակառակ Թուրքի և Ռուսի միակուռ կամքին, Եվրոպայի օգնությամբ, Անգլիայի...

II. Թրքական օրիենտացիա: Հույս չունենալ Եվրոպայի վրա և վախենալ ռուսից: Ռուսիան է, որ ջարդել տվեց հայերին:

III. Ռուսական օրիենտացիա:

IV. Ապոլիտիկ, պահպանողական. մենք եկեղեցական ազգ ենք:

V. Հոգեկան Հայաստան. մեզ պետք են մարգարեներ և ոչ թե դիպլոմատներ: Լեզու, մշակույթ, համերաշխություն, սեր դեպի թշնամիները: (Ճարտարապետություն):

VI. Սոցիալիզմ, ինտերնացիոնալիզմ, սոցիալ-դեմոկրատիա. ապազգայնություն:

Անիում այցի էին եկած երկու խմբակ հայեր: Եվ երրորդը Ուստա Կարոյի խումբն էր: Առաջին խմբի մեջ կային սոցիալ-դեմոկրատը և ռուսասերը: Երկրորդի մեջ պահպանողականը, թրքասերը:

Կամ, մի խումբ էր եկած Թիֆլիզից, ինտելիգենտ մարդիկ, տարիքավորներ և երիտասարդներ:

119. <ՍԵՐԸ՝ ՍԱՀՄԱՆԱՎՈՐԸ...>

— Սերը՝ սահմանավորը վերածում է անսահմանի, վախճանավորը՝ անվախճանի, մահկանացուն՝ անմահի:

— Ան՛հ:

Նրա ազնվական քարերը և նրանց կշռույթը:

Մայր-եկեղեցու քարերը և կշռույթը:

120. <ԳՏՆԵԼ ՄԻ ՎՐԱՑԻ ԻՇԽԱՆ...>

— Գտնել մի վրացի իշխան, որ պարտք չունենա:

— Եթե մի ազգ պետություն (սրբություն) չունի, նա կձուլվի վերջիվերջո: Լեզուն կկորցնե և կվերանա: Եթե պետություն չստեղծենք, կորած են հայն էլ, լեզուն էլ <անընթ.>:

Ան Ի

121. Ան Ի

— Բանվորը իդեալ չունի, բանվորը ազգություն չի ճանաչում, ավանդություններ չի սիրում: Նա մտահոգ-

ված է միայն իր եսական շահերով, ազատվել աշխատելուց և ապրել հարուստների պես:

Եթե իդեալի մասին խոսք լինի — հայց և հաճույք — ահա նրա իդեալը:

— Դա զրպարտություն է, բանվորը հայրենիք ունի և ազգություն ճանաչում է:

Պահպանողական, սոցիալ դեմոկրատ:

— Ֆրանսիայի սիրտը դը Գոլլն է:
Սիրտը = ներքին մարդը, անկեղծությունը:

122. Անի

Ա. Մարդը — (Մերը) անվեհեր, համոզված մտածող հայոց անկախության. ո՛չ ռուս, ո՛չ թյուրք, այլ հայ անկախ պետություն. ռուս և թյուրք մեր թշնամիներն են, մեկը՝ քաղաքակիրթ, մյուսը՝ բարբարոս. բայց հայը բաժանելու և ճմլելու մեջ՝ երկուսն էլ համամիտ: Հավատում է հայկական առաքելությանը. սոցիալիստ չէ, այլ դեմոկրատ, բայց աշխատավորների պաշտպան: Մուսուլմանությանը ատող, վրացուն ատող:

Բ. Ավելի խոհեմ է. ռեալ պոլիտիկ. չի հավատում հայ պետության կարելիությանը, ինքն էլ է ատում թյուրք-ռուս, բայց ռուսական օրիենտացիոն ունի — չի սիրում վրացուն և թաթարին, բայց քարոզում է հարևանների միջև համերաշխությանը. կուլտուրայի, կրթության պաշտպան: Ազգասեր է, սոցիալիստ չէ:

Բ–ը ինտերնացիոնալ. ապազգային. հակառակ է ազգության պահպանման և պետություններ կազմելուն. թող ճուլվեն ազգերի և պետությունների մեջ:

Երկու ազգ կա — հարուստ և աղքատ, դրամատեր և բանվոր:

123. ԱՆԻ

1000 տարի առաջ, անշուշտ, այսպիսի մի պայծառ օր էր, այս շքեղ արևն էր նորից վառվում Անի քաղաքի վրա, այս թռչունների պապերն էին, երևի, սավառնում այս գմբեթների վրա, Ախուրյանի նույն ղողանջն էր հնչում ձորից, երբ թագավորի ներկայությամբ, ստվար ժողովրդի, կանանց և երեխաների ներկայությամբ — երևելի քարագործ Տրդատ ճարտարապետը, քարը ձեռքին, հիմը դրեց մայր-եկեղեցու: Ո՞ւր են նրանք հիմա, ո՞ւր են հանգչում նրանց փոշիները հիմա — երևի մեր վրա է ծորում, մենք չնչում ենք այս օդի հետ նրանց փոշին...

124. <ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ, ԻՀԱՐԿԵ...>

— Գյուղացիները, իհարկե, բոլորովին անծանոթ էին կարոյի անցյալին: (Ուբեմն) Պիտի հավատային Ուստայի պատմություններին, որոնք լցնում էին այդ երկար տարիների բացը:

— Անիի, մեր հնությունների, իմաստավորված քարերի վեպը:

— Ասացի ամենից անուշ ձայնով: (Խնդրելու, համոզելու, կարեկցություն զարթնեցնելու համար):

– Նրանց արմատները չորացել են (դաշնակների):
– Մեկ-երկու չարի և զարկեցի:
– Խարխոխ չունեցող մարդիկ են: Անհիմ, անսկզբունք:

125. <ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ, ՈՐ...>

Դուրս բերել, որ Ուստան անձնական կյանքում, հարաբերությունների մեջ, առևտուրի, սուտ չէր խոսում բնավ, մարդու չէր խաբում, խաբեբա մարդ չէր. Ուստան իր խոստումը կատարող էր, տված խոսքը բռնող, բայց որ բան<ը> գալիս էր զրույցներին, պատմություններին, որ գործնական խնդիրների հետ չէր կապված, զուտ երևակայական, գեղարվեստական չրջանին էր վերաբերում, ընկնում էր ստեղծագործական, հնճարելու, ստի, պատրանքի, խաբեության մեջ:

126. <ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ...>

<...>[1] հեքիաթներ:

Ճարտարապետական հնություններ – վանք, բերդ, պալատ, պարիսպ, մատուռ, գերեզման, աղբյուր, կամուրջ:

Սալահարկ ճանապարհների մասին զրույցներ, ովքեր են չինել, ե՞րբ, ո՞ւր են գնում: Գետի մասին՝ առասպելներ, հյուրի, փերի, ջրի աղջիկ:

Սատանայի, դևերի մասին:

Հեղափոխական անցյալից:

---

[1] Սկիզբը պակաս է:

Կարծիքներ հարևան ազգերի մասին:

Բյանդրբազի խաղը և յալանչու խոսքերը:

Բագրանի ուխտը — մանրամասն:

Գյուղը գյուղից ո՞րքան է հեռու, ինչ սար ու ձոր, ժայռ, այր, հոր, բլուր, աղբյուր, առու:

Այս գյուղերի չրջանը — Տիկոր, Ագրակ, Մավրակ, Ծպնի, Զուչի, Դյուզ-քեզար, քրդական թե եզդիական գյուղեր, Նախճվան, Բագրան, Բվիկ, Քիրս, Խառ, Ղարաբաղ: Մրեն, Խոշավանք, Մաղասբերդ, Ալաճա, Յաղլճա, Արազ, Ախուրյան — դրանց բոլորի մասին մանրամասն հարց ու փորձ:

1916. 16 հոկտեմբեր. ժընև:

— Հաստա՛տ, Ուստա Ջան, ուստուբյունդ քեզի հալալ է.— Ուստա անունը մենակ քեզի է վայել[1]*:*

— Ականջներիս չհավատացի:

— Մ՞ւր պիտի փախնիս Աստծու վրանի տակից:

— Անցում = Մահ. վերջ. ավերում:

— Քնով էի անցել:

— Անցական = Անցավոր:

— Աչխարհի անցավոր լինելը կյանքը դարձնում է երազ: Մահը աչխարհը դարձնում է երազ:

— Աչխարհը կնկա վրա է, կնիկն էլ՝ սար:

— Կնիկը աչխարքի տակն է. աչխարքի տակը՝ կնիկն է (տակ[2] *— հաստակ, հիմքը):*

— Կնիկը կամ սիրուն (տնկոզ, չքեղ) պիտի հագնի, կամ մերկ պիտի ման գա:

---

[1] Տողի դիմաց՝ լուսանկարում. «*Տիկոր*»:

[2] Ինքնագրում՝ *տաստ.* ուղղել ենք ըստ բովանդակության:

Գեչ Հագուստը կսրբապղծե կնկա սիրուն մարմինը, բնական գեղեցկությունը:

— Մեծ սարը մեծ բուք ունի,

Մեծ մարդը մեծ խոսք:

— Նա իր երկաթը երկու կրակի վրա կտաքցնե:

— Խոփը սուր է, հանդը բաժանովի:

— Կայծակը:— Տեսե՛ք, Մասիսը ալմաստե սաղավարտը գլխին՝ կանգնած է ժամանակի դեմ, միշտ կռվի պատրաստ... այդպես էլ<...>[1]

127. Անի

Սոցիալիստը. մինչև բուրժուական իրավակարգը Եվրոպայում և ցարիզմը չխորտակվի՝ ձեր Հայաստանը չի ազատվի. դուք այնքան միամիտ եք, որ չգիտեք, թե սուլթանը նրանց վրա է հենված:

Ինձ համար սակայն ազգ, լեզու և հայրենիք գոյություն չունի. տիեզերաբնակ եմ, տիեզերական զգացումներ ունեմ:

Ուրիշը. Ի՛նչ հասարակական կարծիք, մամուլ — բոլորը պետական քաղաքականության գործիքներ են, և վերջինը, որ կարծիք է ստեղծում, արդյունաբերական անոնիմ, անանուն ընկերություն է, և միշտ կաշառված:

Եվ ի՞նչ պատմական դատաստանից եք խոսում. դա ի՛նչ պատրանք է, ստություն. պատմությունը մարդկա-

---

[1] Վերջը պակաս է:

յին՝ կրքերի պատմություն է, և պատմագիրներն էլ կրքով լցված կուսակցամոլներ են. և վերջապես մեր մահից հետո՝ ի՜նչ դամբանականներ ունենք, որ երբևէ Մադրիդում մեկը 100-200 տարի հետո մեզ պիտի ողբա:

Սոցիալիզմը պիտի փրկե...

Թերևս, բայց մինչև այդ մենք փթած կլինենք, և մեր ջնջված ազգի փոշին պիտի իջնի մեր երկիրը տիրող մարդկանց ոտների վրա:

Մենք շատ մեծամիտ ազգ ենք. հպարտ, մեր չափն ու կշիռը չճանչցող. մենք մեզ երևակայում ենք, մեծ բան ենք կարծում, մեր փափագը, մեր երազը, մեր զգացումը իրական ենք համարում. մեզ հաշվում ենք Փոքր Ասիայի ջահակիր, նոր խոսք ասող, առաքելություն ունեցող. սուտ բաներ. ինքնախաբեություն. իրատես չենք, այլ երազատես, չենք տեսնում մեր քանակն ու որակը, և մեր ինքնասիրահարության աշտարակի բարձունքից նայելով արհամարհում ենք վրացին ու թուրքը...

Եվ տղայական կերպով պահանջում ենք, որ Եվրոպան, ողջ աշխարհը մեզնով հետաքրքրվի, լցվի, ներշնչվի մեզնով. և երբ այդ բացակայում է, լաց ենք լինում ու նզովում մարդկությունը...

Ուստան լսեց այս բոլոր հակասական, հակաճառ մտքերը, հասկացավ, կամ ավելի շուտ զգաց նրանց

իմաստը և ասաց իրեն. ամեն մի քարի տակից մի ճայն է գալիս, ամեն մի գանկից մի խոսք, լավն էն է, մարդ իր հավատով՝ իր էշը քշե, երթա:

128. ՈՒՍՏԱՅԻ ԵՐԱԶԸ. ԱՆԻ

Հայաստան ազատված. կկառավարե մեծ Բյուրոն: Ինքը հազարավոր վարպետ և բանվոր ճեռքի տակ Հայաստանը կվերաշինե — կամուրջ, դպրոց, ճանապարհներ, ջուր կբերե, ծառներ կտնկե, առուներ կբանա, ամբարներ կշինե և տներ, տներ, տներ՝ օրհնված օճախներով՝ չունևորների համար:

129. ԱՆԻ

Կբերե, ծառ կտնկե... Թողեք պոռոտ խոսքերը. գո՛րծ, գո՛րծ, գո՛րծ:

— Բարձի վրա մնաս — անեծք

— Բարձի տակին ուտես — անեծք

— Էս բոլոր հնարքները, գործերը, նրա բարձի տակեն են ելել:

— Ապտակեց, աչքերը աստղնտեցին, կայծկտեցին —

— Ստորերկրյա, ընդերկրյա աշխարհ:

— Ուստա Կարոյի չունը՝ սանամորների սիրած:

— Զարթնեց, չգիտեր, ուր էր:

Արևելք-մուտք կորցրել էր, արևի ծագը սպասում էր արևելքից, դուրս եկավ արևմուտքից:

— Ամպերը Հաբեշից են:

— Մի պատկերը մոռացնել է տալիս մյուսը:

130. Անի

[Ուստան կամ] Կայծակը հոգու խորքում լսում էր մեր պապերի դարավոր ձայնը: Արյունս նրանց արյունն է, տենչս, սերս նրանցն է. նրանք ապրում <են> իմ միջով, ապրում են, մղում են ինձ հաղթանակի...

131. Անի

— Պիտի քարոզել ու արմատացնել հայ ժողովրդի մեջ մարդասիրական գաղափարներ ու զգացումներ. սիրել Թուրքին, վրացուն, ռուսին: Հումանիզմ: Մենք փոքր ազգ ենք, չենք կարող բռունցքով խոսել, այլ սիրո զենքով:

— Ի՞նչ անմիտ, ամբարտավան խոսքեր. մեր բահերն ալ կանեն անոնց չանսատակ:

— Եթե նույնիսկ հայերն էլ չուզենան Հայաստան, Անգլիան հակառակ մեր կամքի պիտի Հայաստան ստեղծե — մի թումբ ռուսի և թուրքի միջև:

— Ուստան լսում է՝ ճերմակ ածուխ (ջուր, գետ). Անիում լսում է Գալիցինի մասին. Պլեվեի տեռորը (Գյումրի թերևս), և բաներ, որոնցից հյուսում է իր ապագայի երազը:

Հողը պատնեշել, որ ջուրը չտանի:

— Կայծակը տեսնում է Անի մի սիրուն օրիորդ. և հիշում է, վերապրում է իր անհույս, պլատոնական սերը, և հարբած ժամանակ ճառում է պլատոնական սիրո մասին. Ուստային չա՜տ է դյուր գալիս: Ու երգում է.

Էս իմ բարդիքն են. անուշ կխշշան...

Ուրեմն պլատոնական սիրո խտացած մի ճառ. ռոմանտիկ սեր.— սեր, դու Աստված ես, դու զարդարում ես երկիրը, դու ես վառում ծաղիկները, դու ես վառել աստղերը, դու ես արևը, տիեզերքի հոգին: Կին, հրեղեն...

— Մարդկությունը լսե-չլսե ինձ, մարդկությունը արհամարհե կամ չարհամարհե մեզ, պիտի ասեմ այս հավերժական արևին, որ անբարոյական է նա, չար, կաշառակեր է այս մարդկությունը և ոճրագործ, թուրքին գործակից, և սուտ է նրա քաղաքակրթությունը:

— Աչխարք կքանդեմ էս խոսքիս վրա, թե սուտ լինի:

— «Տիեզերքը [կայրեմ ու] կվառեմ ու կճչամ՝ սուտ է»:

Ա<վետիս> Ահարոնյան

Դաշնակցականների ճառերը հյուսել դաշնակից.

Հնչակինը՝ հնչակից.

Սոցիալիստինը՝ սոցիալիստից:

Անի ընկերվարականը արտասանում է «Սոցիալիզմ» ամեն բանի տակն ու վրան, մարքսիզմ, մատերիալիզմ, դիալեկտիկա, պատմական-մատերիալիզմ...

— Վերջը բոլոր ազգերը ձուլվելու են իրար մեջ՝ դառնալով մի մշակույթ, մի մարդկություն, մի լեզու:

— Ժողովրդասպան թուրք և ռուս:

— Անի գնալիս՝ մանր ճանճեր, որ պարսով հետևում են նրանց, խոսելիս բերանների մեջ էին մտնում, չնչելիս՝ քթերի մեջ՝ ուղևորների:

— Ուստան Անի, մի երկու ժամ մենակ. գնաց հյուսիսային պարսպի սովերի մեջ նստեց, թուխթունը դրեց առջևը, ծխում էր ու խորհում — անցյալը կենդանացավ երևակայության մեջ և աչքի առջև պարզվեց արքայական Անին, և ապագան հայի և Անիի:

132. <ԵՆՊԵՍ ԷԻՆՔ ՀԱՐԲԵԼ...>

— Էնպես էինք հարբել, որ քուրդն ու էշը իրարուց չենք կարող ջոկել:

կամ

հավն ու չունը.

կինն ու կովը:

133. ԱՆԻ

Վանահայրը.

— Սիրելիս, սիրեմ զքեզ:

134. ԱՆԻ

Հետադեմ է թուրքը. մոլեռանդ, վայրենի, քուրդի հետ միասին, պետք է փշրել այդ քարե գանգերը: Պետք է նրանց մարդ դարձնել, որ հայն էլ կարողանա մարդավա-

րի ապրի: Տուն մի առ, այլ լավ դրացի. մեզ լավ դրացիներ են պետք:

135. <ՈՒՐ Է ԱՅՆ ԱՍՏՂԱԳԵՏԸ...>

— Ուր է այն աստղագետը, որ գտնի այն աստղը, որ առաջնորդե հայությունը դեպի ազատության նավահանգիստը:

136. <ՄԱՀԸ ԹՈՒՐՔԻ ՄԵՋ...>

— Մահը թուրքի մեջ պտտվում է մեր չուրջը:

— Նա ուներ բզով ծակած սուր աչքեր, որ կարծես չարունակ մի բան էին որոնում:

— Աչխարհում, տիեզերքի մեջ, ամեն ինչ փոխվում է, անցնում, նոր ձև առնում, միշտ կորցնելով անհատականը, միայն մահն է մնում անայլայլ:

137. ԱՆԻ

— Դուք ասացիք, թե եթե մարդը ապրելու միջոց ունենա, բարոյական կլինի. հակասում եք ձեզ. հարուստներին կոչում եք լիրբ, սրիկա, բայց չէ՞ որ նրանք ապրելու միջոց ունին. ապա ինչո՞ւ...

— Քրիստոնեությունը վնասեց ոչ միայն մեզ, այլև ամբողջ մարդկության. նա խզել <է> հելլեն-հռոմեական ճշմարիտ մշակույթը, ամբողջ 1000 տարի, մինչև վերածնունդը, և այդ 1000 տարվա եկեղեցու միահեծանու-

Թյան ժամանակ զարգացավ բռնատերը, խավարը, թաթարականությունը և իսլամը. քրիստոնեությունը թուլացրեց բանականությունն ու արիությունը:

138. Անի

— Իհարկե մի-երկու թուրք կարելի է սիրել, կան նրանց մեջ լավ մարդիկ. բայց թուրքությունը դեշ է. ես ատում եմ թուրքությունը: Նրա էությունը ոճիրն է, խավարը, չարը: Նա կործանել է մեզ, փչացրել մեր մշակույթը, մեր լեզուն, մեր ոճը... Անին նրա կործանող ուժի պատկերն է. ի՞նչ է տվել նա աշխարհին — ջարդ, արյուն, Լենկ-Թեմուր, Սուլթան Համիդ... մեր պատմությունը մեզ կտակել է մի խոսք՝ վրեժ. դա է մեր ժառանգությունը — վրեժ. ոչնչացնել թուրքությունը և կամ զսպել այդ հրեշը.— և աշխարհը վրկել այդ աղտեղող գարշ տարրից...

139. Հե. Անիոիմ

Սերը սեր կծնի. բայց մեկ հալթենք, հետո. երբ ուժով լինենք՝ բոլորը՝ քուրդ, վրացի, եվրոպացի մեզ բարեկամ կդառնան:

140. Անի

Կարոն պատմում է Փիլոսին, թե երկու եղբայր պարիսպը քաշել են, իրար ձեռք տվել ու բաժանվել են, երբ հասել են մյուս ծայրին՝ հալևորվել են:

Ղզ-ղալասի մասին.— քաղաքի աղմուկից հեռու — պա-լատ է շինել իրեն համար:

— Քոռ բվերը վայ էին տալիս իրենց գլուխը:

141. Անի

— Աշխարհի վրա, մարդկության մեռած խղճի վրա ըն-կած է նահատակված հայության սուրբ դիակը:

— Հայի դիակը կախված է մարդկության վզից:

142. <Մենք ճամբորդ ենք...>

— Մենք ճամբորդ ենք, ճամբորդ հոգեբանության-մբ. մենք ուխտավոր ենք՝ գնում ենք մեր ուխտավայրը, սրբարանը, բագինը, մեհյանը. մեր հոգու հայրենիքը — դրա համար մենք բան չենք շինում, չենք կերտում, մենք միայն ճգտում ենք, երազում ենք, տենչում ենք՝ այնտեղ գնալ, այնտեղ հինել...

— Դու պատ ու պատվար ընդդեմ բարբարոսների, դու սլիտի հզոր լինես, հզոր պատնեշ. անառիկ, անմատույց բուրգերով ու աշտարակներով և լույս տաս քո բուրգե-րից, իբրև թումբ...

143. <Ուստայի շինած տները...>

— Ուստայի շինած տները, օթախները (սենյակները), օ-ճախները մինչ այդ եղածներին նման չէր, տարբերվում էր. իր ոճն ուներ Ուստան. իր ոճով էր շինում, մանա-

վանդ բուխարինները: Եվ Ուստայի ոճը տարածվում էր այդ շրջանի գյուղերում:

Ա.Նի

Ջոր է մեր երկիրը, ջրերը հոսում են գաղտնի, ստորերկրյա, ձորերի միջով, մերկ է, դաշտ չկա. քար ու ժեռ. անտառ չկա, օդը չոր, դաժան, մարդիկ էլ չոր, դաժան: Պիտի բնակելի դարձնել երկիրը: Երանի նրան, որ աղբյուր կ<...>[1]

144. <ԳՆՈՒՄ ԷԻՆ Ա.Նի...>

— Գնում էին Անի. բորբ արև էր. թամբի կաչիները կրակ էին դարձել. քարերը, ժայռերը գոլ են արձակում:

[— Առավոտ, արևի ճաճանչների ոսկի թերթերը չեղ ընկել էին պատուհանից ներս. երկու աղավնի իրար կտուց էին տալիս Ուստայի պատուհանի գոգում:]

Շունը հաչում էր ըստ բախտի, մի ստվերի վրա, մի հոտ զգալով:

Հավերը կրկչում էին:

Մի հորթ բառաչում էր:

— Ալմաստը դեռ մանուկ էր, բայց զգեստի տակից դծվում էին նորահաս ոտինքների ձևը և ազդրների փափուկ կորությունը:

— Առանց խոսքերի նայում էին իրար ու հասկանում:

---

[1] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է, շարունակությունը չի պահպանվել:

145. ԱՆԻ

Ճառերի, խոսքերի, վեճերի մեջ – հայի պատմությունը, էությունը, հատկությունները, կուլտուրան, ճարտարապետությունը, լեզու, ապագա, պայքար թուրքի դեմ, պայքար՝ լեզու և կուլտուրա պահելու համար:

Սեղանի ճառում – կենաց են խմում Սմբատ Բագրատունու, Բագրատունի դինաստիայի հիմնադրի, Աշոտ Երկաթի, Գագիկ Բ..., Վահրամ Սպարապետի, Թաթուլ Վանանդեցու, տիկ<ին> Այծեմնիկի:

Ուրիշ տեղ – խմում են Դավիթ Բեկի, քաջ Աղասու և Սերոբ փաշայի կենացները:

146. <ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՍԱՎ ԹԵ...>

Կաթողիկոսը ասավ թե՝ Ակոռեն դու ես մնացել, դու պիտի կարգվիս, որ գեղը չենցնես իբր նոր Ադամ ձեր գեղի համար:

– Եւ առեալ զառ եւ զաւար զբանակին պարսից...

– Բամբիշ ի լեզու պահլաւկաց նոյնպէս զտիկինն կամ զթագուհի նշանակէ:

– Կապկոհ է անուն լերինն Կովկասու. այսինքն՝ լեառն կաֆ կամ կապ: Ցարդ եւս բնակիչք տեղւոյն զվլադիկավկազ քաղաք կապկայ կամ կավկայ յորջորջեն:

– Առիճ կամ Առինճ այս բառիս նշանակությունը հիմա անհայտ է. թերևս ավան կամ գյուղ կթվի լինել. օրինակ՝ Բագայառինճ, Մկնառինջ, Տիրառիճ և այլն:

– Արաբիա = Տաճկաստան. հինները արաբներին տաճիկ էին ասում:

— Բագրատունիների պինանչանը — առյուծն էր, ինչպես կա Անիի դարբասի վրա քանդակած:

147. <ՀԱՅՐԵՆԻ՛Ք...>

— Հայրենի՛ք, ուրտեղից քաղցր ձայներով կանչում են քեզ. հազար ձեռքեր կանչում են քեզ. անկեղծ շրթներ հիշում են քեզ. և կարոտի աչքերով սպասում են քեզ...

Գամ ծույդ, հողիդ հետ հող դառնամ, ծառիդ հետ ծառ...

— Բարի երկինք, բարի գետ, հարազատ հող:

Քուլլր գևիլյուռ, եղբայր աղբյուր, ընկեր ճանապարհ:

148. <ԽՈՍԵԼԻՍ...>

Խոսելիս, մի բան պատմելիս, հեռանում է բուն նյութից և ուրիշ բան է պատմում, մոռանալով սկզբի բուն նյութը. այդ պատճառով էլ, երբ մի բանի մասին էր խոսում, միշտ ասում էր մոտը եղողին. միտքդ պահե, թե ինչո՞ւ մասին խոսք եղավ. իմ ձիու գլուխը կերթա, ո՞ւր տեղ հասնելս չեմ գիտնա:

Օրինակ. աղջկան մի նայիր, ամաչում է. վար կընկնի. մի աղջիկ էր, անունը X. դրան նայում էինք. հա՛, էդ աղջկա հետ պատիկ ժամանակներս խաղում էինք... Հետո Երևան տեսա նրան, դրա մարդը տարօրինակ էր, կյանքից մի դեպք, նա մի քույր ուներ, էդ քույրը մի չուն ուներ, փախավ մի ձոր, ձորի մասին, և այլն, և այլն, և այլն. ապա հարցնում է, բուն խոսքը ի՞նչ էր.

— Թե աղջկան մի նայեք, կամչնա, վար կընկնի:

149. <ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ...>

— Հայ ժողովուրդը իր երկիրը թաթախել է իր կուլտուրայով, ամեն մի քար իմաստավորել է իր դաղափարով, իր աչխարհըմբռնումով. ինչ նորեկ խավ որ դա ծածկելու հայ ենթահողը, չի հաջողի նրան այլասերելու. հայությունը դուրս կգա նրա տակից, կխոսի նորեկների միջոցով:

Հայ ժողովուրդը իր երկրի 5-րդ տարրն է: Օդ, հուր, ջուր, հող և հայություն: Քայլում ենք Անիի փլատակների մեջ — նրա փողոցներում, ուր անցել են հայկական բազմաթիվ սերունդներ, նրա հրապարակում, չենքերի տակ — և խոսում է Հ. Թումանյանը: Թվում է որ նա խոսում է դարերի մեռած անեցիների հետ, կարծես ողջերի հետ — և նրանք հաստատում են նրա խոսքերը: Նրա խոսքերը արձագանքում են Անիի հոյակապ չենքերի կամարները, իսկ Անիի արձագանքը լսում է ամեն մի հայրենասեր հայ:

150. <ԵՐԲ ՇՐՋՈՒՄ ԷԻՆՔ...>

— Երբ շրջում էինք Օհաննեսի հետ Անիում, թվում էր թե չէ ընդհատված մեծ կուլտուրա ունեցող Անիի կյանքը... Օհաննեսը Անիի քաղաքացի է, նրա ծննդավայրը Անիումն է գտնվում, և միայն այստեղ նա հանգիստ է, երջանիկ և հպարտ, մյուս բոլոր տեղերում — օտար է, պանդուխտ, այստեղ է գտնում նա իր հանգիստը: «Պան-

դուխտ եմ <անընթ.>» – այստեղ նա գտել է <անընթ.>աններին:

151. <ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք ԹԵ ԻՆՉ Է...>

– «Իսկ գիտե՞ք թե ինչ է հայ ժողովուրդը.– այդ այն ժողովուրդն է, որը ամբողջ մարդկության պատմության մեջ ամենախորհրդավոր պատմությունն ունի...»

Լեոն Բլուա

(Հռոմի պապին գրած մի նամակի մեջ:)

– «Հայկական ոճը, հավասարակշռության և ներդաշնակության հանճարեղ գյուտը, որով սնվել է ամբողջ Եվրոպան և մանավանդ Վրաստանը»:

Կ. Զ.

152. <ՍՄԲԱԿՔ ԵՐԻՎԱՐԱՑ...>

«Սմբակք երիվարաց նոցա մաշեցին զլերինս մեր»:

Մաթ. Ուռհայեցի

(Սելճուկների մասին)

Սերճուկներ

153. <Կ.ՊՈԼՍՈՒՄ, 1913 Թ. ...>

Կ.Պոլսում, 1913 թ. «Գրերի գյուտի» հազարամյա... տարեդարձի չքեղ տոների առթիվ Ս<իմոն> Զավարյանը ասել է Կ. Զորյանին.

«Տխմարները, հասկանո՞ւմ են՝ ինչ են անում: Այս ցույցերին տաճիկները ջարդով մեզ պիտի պատասխանեն: Այո՛, ես գգում եմ, ես վստահ եմ, որ ջարդով պիտի պատասխանեն, երբ առաջին առիթը ներկայանա... Պատմությունը մեզի ոչինչ է սորվեցրել, մենք մեր պոռատախոսության զոհը պիտի դառնանք»...

«Հայրենիք» ամսագիր, 1927, նոյեմբեր

154. ԹՅՈՒՐՔԸ

— Թուրքը հաստ վիզ ունի — վավաշոտության արդյունք: Ավելնորդ բան է թուրքին պաշտպանությունը ստանձնել. իր գանկը ցույց է տալիս իր ստորությունը:

Ինչ փափագ որ ունի նա կյանքի մեջ, երբեք լավագույնին և բարձրագույնին հասնելու համար չէ:

Նա միայն քանդելու կձգտի, և միշտ կկարծե իր նպատակին հասնել հրով ու սրով:

— Գաղտնապահությունը իր մեծ կարողությունն է. նրա դիվանագիտությունն էլ այդ է: Նա երբեք իդեալական չէ, այլ միշտ նյութապաշտ:

— Ինքզինքին վրա բավական տիրել գիտե. չա՛տ խորամանկ է և միշտ վերապահ. երբեք իրեն չի մատնում. և այլազան կերպով իր իսկական գույնը պահել գիտե: Հետևաբար թուրքին ընկերակցությունը խիստ վտանգավոր է:

Հաճույք կզգա խաբեության և դավադրության մեջ:

Զուրկ է բարձրագույն չինիչ մտային հղացումներե: Տնաքանդ է և ո՛չ տնաչեն, սակայն գիտե օգտվել ո՛չ

Թուրքերի տաղանդից, որոնք չինել են ինչ որ աչքի ընկնող բան կա Թուրքիայում:

Նա ինքնահատուկ հաճելի ձևերով կջանա ուրիշների և օտարների գնահատման արժանանալ:

Նա ինքնահավան է, անձնասեր, իշխանական, դոռոզ, նախահարձակ:

Խրոխտ է, կսիրե տիրապետելը, կսիրե կառավարական պաշտոնյա լինելը:

Վերջապես նա շատ երկար ժամանակի և ուղեղային հակա բարեվիճակություններուն կկարոտի կարևոր ազգ մը կոչվելու արժանի լինելու համար:

J.Millot Savern

Անդամ Անգլիո պանկաբանական ընկերության:

1924 թ.

155. <ՀՆՁՈՒՄ ԵՆ ՋԱՆԳԵՐԸ...>

Հնչում են զանգերը, բարձր ու ղողանջ, լսո՞ւմ եք դուք, ես լսում եմ. ձիեր, դուխյուն, Արքան է դուրս գալիս քաղաքից, դաշտի վրա խաղ կա, զորախաղ...

* * *

— Կայծակը կարճ ու հակիրճ գծում է հայոց ազգի ծագումը, պատմությունը, կռիվները դոյության համար, դարերի կռիվ՝ կրոնի, խղճի, ցեղի համար, հանուն իր ստեղծագործ մտքի, կռիվ ընդդեմ Ասորեստանի, Մարաստանի, Պարսկաստանի, Հռոմի, Հույնի, մոնղոլի, Թուրանի և ռուսի, մինչև օրս, և հաղթանակը զգում եմ ես մեր

լեռների, երկաթե լեռների հետ տեսնում եմ ես, հոգուս մեջ լսում եմ նրա ձայնը, փայլը տեսնում եմ... դուք մի՞թե չեք տեսնում...

Բոլորը տեսան և զգացին... ամենից շատ Ուստա Կարոն, որ զգաց թե ինքը միշտ ներկա է եղել այդ հին օրերին՝ կռվին ու տագնապներին, վերք տվել ու վերք ստացել, բայց հայության պես վիրավորվել ու չմեռել. և գնում է դեպի վերջնական հաղթության...

(Մ՞ւր են մեզ հալածող ազգերը — ասուր, Բաբելոն, մար, պարսիկ, Հռոմ, Բյուզանդիոն, արաբ... չկան, հերթը գալիս է թուրքի և ռուսի. [նրանց մահը մեր ձեռքն է]):

— Բալզակ — Փառքը և փայլը կուրտիզանուհիների:
— Աբեղյան-Մատենճյան — Գրելու արվեստը:
— Մեծարենց:

156. ԹՈՒՐՔ: ԳԱՅԼԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

«Երբ թափառական թուրք օրտուները կմատնվին ոչնչացման վտանգին Հայաստանի բուք ու ձյունին պատճառով, գայլ մը կուգա և մոլորված օրտուները կառաջնորդե էրզրում»:

Ռուբեն

157. <ՀԱՅ ԵՆՔ, ՄՈՌԱՑԱՆՔ...>

— Հայ ենք, մոռացանք չուտով:

Հարուրթն ասաց աղետի մյուս օրը, երբ կայծակին՝ թե վերջացել է աղետի <անընթ.>ուրյունը:

158. <ՓԻԴԱՀԻՆԵՐԸ ՊԱՇԱՐՄԱՆ...>

Փիդահինները պաշարման մեջ – վանքերի մեջ, այրերի մեջ, կռվել, կռվել 25 հոգով 1000-ի դեմ, սպանել 500-600 ասկյար, քուրդ, և հետո վերջին փամփուշտով ինքնասպան լինել:

– 30 հոգով – 1000-ները փախցնել, ջարդել, սարսափեցնել:

– Պատերը ծակել և փախչել՝ սարսափ ձգելով՝ հաղթելով ասկյարներին:

159. <ԱՆԻ ԳՆԱԼԻՍ...>

– Անի գնալիս – ուղեկցող զինվորները փամփուշտակալներով:

160. <ՄԵՐ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՍ...>

– «Մեր՝ բանաստեղծներիս կոչումը, գուցե և անգիտակցորեն, մի այն զգացմունքներ հարուցանելն է: Թո՛ղ դուրս գան կտրիճները գործի համար ու բոյերը տեսնենք»:

Գամառ-Քաթիպան գրում է 1878-79 թ. Աբ<գար> Հովհաննիսյանին:

Ռ. Բերբերյանը ասում է՝ ազատագրական մեծ խնդիրները իրենց իրագործման համար պահանջում են գործունեության մարդիկ, բայց նախօրոք անհրաժեշտ են բանաստեղծներ, մարգարեներ և այլ «ներշնչվածներ», որոնք զրդում են այդ «գործունեության մարդկանց» դեպի գործ:

161. <ՀԱՅԸ ՇԱ՛Տ ԴԺԲԱԽՏ...>

— Հայը չա՛տ դժբախտ ժողովուրդ է: Զուռնի բարեկամ, հալածված է. ամեն ազգ նրան ոտնահարում է. ամենքի տուրը չինում է, բայց նրան հալածում են, ատում, քշում, կողոպտում:

Մեծ պատերազմի մեջ գետերով արյուն թափեց, և ոչինչ չշահեց, իսկ բան չարած ազգերը օգտվեցան:

— Հայը ունի աչխատելու, զարգանալու մեծ ցանկություններ: Այսօրվա մերկ հայը վաղը չնորհքով կհագնի: Իսկ այսօրվա հագած թուրքը վաղը մերկ է:

— Հայը գեչ սովորություններ, ունակություններ, բնույթ ունի. խոսել, գաղտնիք չպահել, դյուրավ հավատալ:

Հայը գիշերը երազ է տեսնում, առավոտը, տեսածը իրականություն է ընդունում և պատմում ամեն տեղ:

162. <Ո՛Չ ՄԻ ՏԵՂ ՉԵՄ ԳՏՆՈՒՄ...>

— Ո՛չ մի տեղ չեմ գտնում, որ հանգիստ նստեմ: Մի բան կրծում է սիրտս և մղում է թափառել: Գնում եմ հիմա հոգուս հայրենիք, հանգիստ վայրը գտնելու. թերևս սա երազ է. բայց հոգ չէ. երազով է մարդս կենդանի...

Այսպես է մոտավորապես բնորոշում Գ<ամառ> Քաթիպան իր զգացումը...

— Չէ՛, չէ՛, հայ ազգը, չէ՛ ազգ հնացած,
Անպիտան զավակ այս ներկա դարին.

Նա դեռ յուր վերջին խոսքը չէ հայտնած,
Հանճարը չէ ցուցած օտար ազգերին...

Գ<ամառ> Քաթիպա

163. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

1878-9 թվականներին, Հայաստանը ազատվելու վրա էր, մինչև Վան-Մուշ, բայց Անգլիան խափանեց՝ Գերմանիայի օգնությամբ: Ռուսները վախից տեղի տվին. ուրիշ բան՝ եթե մենք այն ժամանակ զինված լինեինք և կռված: Եվրոպան ուժեղ ազգերին է սիրում: Այս մտայնության հետևանքն էր, որ Խրիմյան Հայրիկը մի պատկերով (հարիսա, չերևիկ) պարզեց «մարդասեր Եվրոպայի» էությունը՝ դաժան, եսամոլ, ընչասեր: Միայն Գլադստոնն էր, որ անկեղծորեն պաշտպանում էր Անգլիայում հայկական ապատագրումը Թուրքիայի ձեռքից, որոնց համարում էր նա «հակամարդկային մի սեռ մարդկության ովկիանոսի մեջ» –

– «Ամայի և քարքարոտ Հայաստան»

Պուշկին, 1830 թվին, իր «Դեպի Էրզերում» ուղևորության մեջ:

164. <ՄԱՐԴԱՍԵՐ, ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ...>

«Մարդասեր, լուսավորված» Եվրոպայի համար, առանց համեմատության, իր չուկայի շահերը արժեքավոր են ու իրական, անփոխարինելի, քան հայ մանուկների ու կանանց ջարդը: Հայի արյան հեղումը բարեկամ պե-

տուբյան ներքին գործերն են. ուրիշ բան, եթե Բյորսան վնաս է կրում, այն ժամանակ խոսում է մարդասիրությունից, իդեալներից:

165. <ՈՒՍՏԱՆ ԱՆԻ ԱՍՈՒՄ Է...>

— Ուստան Անի ասում է, ա՛խ, ինչի՞ հայոց թագավորների ժամանակ չէի ապրել: Կամ վարպետ կլինեի, կամ զինվոր-զորապետ:

Մոտավորապես այսպես:

166. <ԱՆԻ, ՔԱՐԵՂԵՆ ԵՐԱԶ...>

— Անի՛, քարեղեն երազ:

— Մեր դաշտերի քաղցրությունը, բարությունը:

— Մենք պիտի կռվենք մի անհույս հույսով, ու պիտի հաղթենք թուրքերին:

167. <ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ...>

— Հայրենասիրությունը պոռոտախոսություն չէ:

— Պոռոտախոսությունը հայրենասիրություն չէ:

168. ՊԱՏԱՆԻՆ

Այդ հասակում մարդ խանդավառ է, ոգևորված, հավատացող, մարդասեր, բարի, ազնիվ, ասպետ:

Երջանիկ է, ամեն բան արժեք ունի իր աչքում – գիտություն, հայրենիք, գիրք, ժողովուրդ, գործ, նպատակ:

Լիքն է նրա համար աշխարհը, ծայրեծայր լիքը:

Երբ մարդ սիրահարված է՝ աշխարհը չկա նրա համար կամ ամփոփված է սիրո մեջ:

169. ԱՆԻ. ԳՅՈՒՄՐԻ. ՔԱՐՈԶԻԶԸ

Թուրք պետության համար երկու անգամ երկու կնշանակե հայերին կոտորել, ջարդել, ոչնչացնել:

– Ազգը տեղ է ու ցեղ, ոճ է և ճակատագիր, լեզու է և զգացմունք:

170. <ՎԱՂՈՒՑ Է...>

[– Վաղուց է երեսիս հետ
Սիրաս չէր խնդացել:]

Քանի սուլթանը կա՝ հայը կուշտ հաց չպիտի կարողանա ուտել:

171. <ՀԱՐՈՆ...>

– Հարոն, Միլու, Ջեմբերս:

– Նամակները Իտալիա, ուր ֆրանսացիք ուզում են Հայաստանից Տունիս չինել: Թյուրքերի ուրախությունը: <անընթ.> գնում է. բոլոր տարրերը հաշտվել են:

2 մարդ է մեղավոր միլիոն հայ ջնջելու մեջ. վերջն էլ մի մարդ (Թալաաթ), վերջն էլ ոչ ոք. մի հրաշքով ջարդվել են հայերը. կամ իրանք իրանց են ջարդել:

Ֆրանսիան անվերջ խոսում է պատժից, հատուցումից՝ միայն իր համար, իսկ թուրքերին չոյում է: Արդարություն՛ն, ֆրանսական արդարություն, թքել եմ երեսիդ վրա:

172. <ՄԵՂՄ, ՀԵՌԱՎՈՐ...>

— Մեղմ, հեռավոր, մարդկային. ոչ թե պրոպագանդա, սոցիալիստական-կոմունիստական ճառերը: Այլ մարդը: Ոչ մի բռռացող տենդենց:

— Վերջացավ վայրկյանը, սկսվեց հավիտենականությունը: (Կյանքը և մահը):

173. <ԵՆԹԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ...>

— Ենթագիտակցական —

Նրա մեջ պիտի անցնի, տարրանա, որպեսզի բանաստեղծանա:

— Պատերազմի չրջանի, հաղթանակի չրջան:

— Հապճեպով, քանակին ուժ տված:

— Գրական չորս ձև, եղանակ. ինչ որ եղել է, ինչ որ կա, ինչ որ պիտի լինի, ինչ որ կուզենայի լինի:

— Ոճի խնդիր. մշակույթի հարց:

– Մեքենային է, որ մարդիկ աստվածացրել են: Հին աստվածները մարդկային աշխատանքի ճիգերի, մարտերի, մաքառումների աստվածացումներն էին, պաշտպանները: Դարբին, երկրագործություն, ծովագնացություն, խաչնարածություն, այգեգործություն: Պրոմեթեոսը գործիք է՝ կրակ հանելու մեքենա, որ աստված դարձուցին:

174. ԱՆԻՆ

Գեղարվեստական իրականություն, իրականացում:

Մայր տաճարը հայկական ոճի ամենակատար իրականացումը: Գեղեցկության կատար, ծայր: Բացարձակ:

175. <ՇԱՏ ԵՂԱՎ...>

– Շատ եղավ, չռայլեցիր = դովեցիր:

– Մենք ոչխար ենք, հոտ, ժողովուրդս, քո սրինգի ձայնով կերթանք: Ձայնին կերթանք:

– Ով որ էս բանը տեսնի, կծերանա: Մենք ջարդ տեսանք, սով տեսանք: Մենք հեղափոխություն տեսանք՝ ծերացանք:

– Մարդը վիայտից չէ՛, այո, բայց երկաթից էլ չէ, վերջապես:

– Հին ընկերը,
Հեծած ձին,
Գործածված կնիկը.
Սրանք են լավագույնները:

176. <ՇԱ՛Տ ՄԱՆ ԵԿՈՂԸ...>

– Շա՛տ ման եկողը չա՛տ բան կտեսնի. չա՛տ բան տեսնողը չատ բան ձեռք կբերե, չա՛տ բան կսովորի:

– Անուս է ինչ որ խելքը փչուս է.

Ֆանտեզիներ = քամիներ:

Ֆանտեզի = խելքի փչածներ:

– Միտքը որ չտեսնի, աչքը չի տեսնի: Տիկ<ին> Պործաճյանը որոնուս էր մեզ. անցնուս է մեր սրճարանի առաջով, ուր նստել էինք, նայուս է մեզ, չի տեսնուս, որովհետև հավատացած է, որ մենք մյուս սրճարանումն էինք:

Աչքը նայուս է, չի տեսնուս, որովհետև միտքը չի տեսնուս. միտքը մյուս սրճարանի վրա է:

177. ՀԱՅ ԱԶԳԸ

Եվրոպայի և Ասիայի դռան մեջ կանգնած, երկու կուլտուրաների չաղկապ և զտող:

Հին ազգ, իմաստուն ազգ, ստեղծող. մեր նախնիքը տվին մարդկութ֊յան հացը, ցորենը, խմորը...

Առաջին քրիստոնյա ազգ:

Մեր լեզուն, մեր ճարտարապետութ֊յունը:

Մենք կռվեցինք մոնղոլների դեմ – եղանք պատնեշ ու վահան:

Հույների հետ ստեղծեցինք Բյուզանդիայի կայսրութ֊յունը, կռվեցինք արաբների դեմ:

Խաչակրաց արշավանքները և զոհ դնացինք մարդկութ֊յան համար: Ապերախտ մարդկութ֊յան համար:

178. <...ԲՈՒԺԵԼ ՎԵՐՔԵՐԸ...>

<...>[1]րող է բուժել վերքերը, որ հասցնում է իմ ասպետը:

— Ո, մարդապետներից ամենասպիտակը (սպիտակադույնը) հանիր իմ կրծքից այս նիզակի բեկորը, որը նրան (կուրծքս) պատառում է. սառը պողպատից ես սառչում եմ և цепенею.

Վստահելով (доверчиво) *նա մոտեցավ: Բայց նա ուժերը հավաքելով, սրի բերանով չփացրեց* (полоснул) *գեղեցիկ նրա դեմքը...*

— Բնությունը, ամբողջ տիեզերքը սեղմել-խտացրել է մի կաթիլի մեջ — սերմ, հյուլե:

— Գեղարվեստագետը, բանաստեղծը խտացրեց մի կաթիլի մեջ — մի աֆորիզմ: (Մի ամբողջ աշխարհահայացք):

— Մերուն իները եկան իրենց գավազաններով:

179. ԱՆԻ

— Ոչ մի ազգ միսիա չունի, ինչպես և ռուս ազգը: Բոլոր ազգերն էլ ենթարկված են միայն տնտեսական և բնական օրենքներին:

Աստվածակիր, Աստվածախույզ (նրան) ժողովուրդներ չկան, հատկապես, իրար նման են, բացի թուրքերից:

— Թուրքի հերն անիծած, միշտ էլ, երեկ էլ, էսօր էլ, 1000 տարի առաջ էլ, 1000 տարի հետո էլ:

---

[1] Սկիզբից 3 թերթ պակաս է: Հեղինակի էջակալմամբ սա 4-րդ էջն է:

– Պատմությունը խոսում է անձերի մասին և սովորեցնում է հասկանալ ապագան:

180. <ԱՆՑՅԱԼԸ ՄԵՐ...>

– Անցյալը մեր հիշողության մեջն է, անցյալը մեր հիշողությունն է, բայց նա մեր հիշողության մեջ առարկայորեն, իրականորեն չէ արտացոլված, այլ մաքրված, փոփոխված, գունավորված, մեր տրամադրության, մեր տեսչանքներին ներդաշնակված: Մեր հիշողությունը կրավորական ուժ չէ, նա ներգործող է, ստեղծագործող է:

181. ՆՎԱԳՈՒՄ Է ԶՈՒՐՆԱ

1. [Հովհաննիսյան] Հովսեփյան
2. Միրխավոյան

1. Շարամի
2. Հավլա-կարե
3. Որֆանի
4. Խալաֆ
5. Բասո
6. Դոլավե. պար
7. Հայ-լո
8. Վայ-լո
9. Խոփանի: Պար:
Ոչինչ չի ուզում, հուզված է, մեռած, նեղացած:
– Արվեստի ուժը, ազդեցությունը – կինոնկարը տեսան, և վազեցին կռիվ:

— Հայերը ունեն քարի պաշտում: Հասկացությունն:

— Մայրավանքը, ի՞նչ սինթեզ է բնության հետ, պեյզաժի հետ: Նույն դույնը. ժայռ ժայռի նման:

— Կոսմիկ պաշտում = դոհ, այլևս բան չի ցանկանում:

182. <ԱՆՈՒՆՆԵՐ ԵՆ ԴՆՈՒՄ...>

— Անուններ են դնում օտարազգի, մեծ մասով եվրոպական, ռուսական փոխադրությամբ:

— Ամուսնանում են նույնիսկ թուրքերի հետ, աղջիկները, սակայն ոչ մի թրքուհի չի ամուսնանում հայ տղայի հետ: Վիպակներում հայ աղջիկը երազում է թուրք տղային, և թուրք տղան հայ աղջկան, համահավասար հայ և թուրք վիպակներում:

— Ամեն բանի մասին երգվում, պատմվում, գրվում, բայց ոչ մի անգամ հայ անցյալից, հայ պատմությունից: Կատարյալ ապազգայնացում՝ միջազգայնության պիտակի տակ:

183. <ՄԵԾ ԵՐԱԺԻՇՏԻ ՀԵՏ...>

Մեծ երաժիշտի հետ անձամբ ծանոթացա միայն 1926 թվի վերջերը, երբ նոր էի վերադարձել արտասահմանից: [Առաջին հանդիպումը] Այդ մեծատաղանդ մարդու հետ առաջին հանդիպումից այն տպավորությունը ստացա, որ նա այս աշխարհի մարդ չէր, նրա ոտքերը հազիվ էին դիպչում այս երկրին, նրա հոգին՝ մտորումներով ու երազանքներով բարձր ոլորտների, բարձր սֆերաների բնակիչ էր: Իր մեջ ամփոփած այդ փխրուն մարդը՝ լսում էր ձայներ, որոնք մեզ մատչելի չէին:

Դժբախտաբար երկար չտևեց մեր ծանոթությունը – և բարեկամության ժամանակավոր շրջանը. այդպիսով մեր <...>[1]

– Աբովյանի հարցը:
– Ա. Շ.-ի Նազարյանի հարցը:
7. կտոր

– Էշդ առջևը ձգել պատել է աչխարհը, քցիր ու ժուռ արի, պատիր:

– Աչքդ խփիր ու բաց՝ տունը չինվել է:
– Թե կուզես Աստված տեսնել, էս լավությունը արա:

184. ԿՐՃԱՏՈՒՄ

Աչք = աչքի լույսանք:
Ալ = Ալեքսանդրապոլ. = Անի:
Բ. = Բագրան:
Դ. = դատեր: Դաշ = դաշնակցություն:
Ե. = երազների մասին:
Թ. = Թորո, Թորոյի մոտ:
Թք = թյուրքի մասին
Ղ. = Ղուկաս: Ղարս:
Կ. = կին:
Պր = պրիստավ:

---

[1] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է:

Ռ. = ռուս:
Ս. = Սանամ:
Տաց. = Տացու:
Տիր. = Տիրան:
Շր. = շրջիկ:
Վ.Թ. = վարժապետ Թաթոս
Փ. = Փանոս:
Օ.Հ. = Օրթե Հարութ
Ու.կ. <= Ուստա կարո>

185. <ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ...>

— Երևակայություն, հիշողություն, գրքեր եղած տեղը, ի՞նչ ասել է մենակություն կամ ձանձրույթ...

— Նրա սովերը պատի վրա հսկա ձև էր առել և ծամածռություններ էր անում, դև էր դառնում, առասպելական կենդանու ձևեր...

— Վտանգը մոտ էր, նա այլևս չէր դերասանություն անում, դեր խաղում, վախը նրան մոտեցրել էր բնականության: Անկեղծ էին իր անդրադարձումները, ձևերը...

186. <ՄԱՍԻՍԸ ՆՅՈՒԹԱՑԱԾ...>

— Մասիսը նյութացած, իրացած գաղափար է. Մասիսը երևում է աննյութացած՝ գաղափարի պես: Մի վեհ մտածումի, մտքի պես:

— Ներդաշնակության մեջ, բնության մեջ, ուր խճճված միտքը կձերբազատվի և լարված հոգին կհանգչի:

– Ռոմանտիզմ չէ, երևակայություն չէ, այլ իրական ապրումներ են, իրական տառապանքներ:

– Քաղաքը, տները, ծառերը, մարդիկ... երևում են կես-իրական, ուրվային:

– Այս գիրքը հիմա պիտի կարդալ, այս հասուն տարի-քում, ուրիշ գլխով:

187. <ՍԱՄՎԵԼ ՂԱՐԻԲՅԱՆ...>

Սամվել Ղարիբյան
Սպիտակ (Համամլի)
դպրոց N 2

limen = *մուռ, մամուռ, նախնական բույսեր*

– Անտրոպոլոգ Լուշան, հայատյաց:

– Թուրքերն ասում են, ով որ շատ բան գիտե, նա շատ կսխալվի:

– Եգիպտացիք (հները) ասում էին, անիծվի նա, ով դիրն է գտել:

[– Խ<աչատուր> Աբովյան. մեծ իրադարձության նա-խօրյակին, ռուս ուժի իշխանության՝ դեպի Կովկաս իջնե-լը, կովկասահայության մեծ մասի գրավումը ռուս պե-տության կողմից, պարսկական հետամնաց, ֆեոդալական պետության ձեռքից, խանների հարստահարությունից ա-զատում: Պարսկական իսլամական ֆանատիզմից դեպի ա-վելի ազատ կարգ ունեցող, մարդկային ռուս պետություն – էպիկական ժամանակաշրջան, էպիկական գրվածք է «Վերք Հայաստանին»:]

188. <ԳՈՒՅՆԵՐԻ ԼԵԶՈՒ...>

– Գույների լեզու:

– Լեզու առանց ձայնի:

– Քարերի, ջրերի, իրերի լեզուն:

– Խորոզը մեռնելիս էլ աչքը աղբյուրից չի հեռացնում:

– Այս տղան մեջով է, բովանդակություն ունի, խելք, շնորհք ունի:

– Օրմանյանին.

– Շա՛տ լավ այստեղ ըսածնիդ լսեցինք, հիմա էլ ասա այն, թե ինչ ասիր Ելդզում սուլթանի նախարարին:

(Օրմանյան գնում էր մի խնդիրքով պալատ, և գալիս էր հայերի մոտ մեծ-մեծ ճառում էր որպես թե իր ասածների վրա, մինչդեռ երևակայական բաներ էին. ոգևորվում էր և սուտ. ստեղծում էր. այնինչ իրականը այն է, որ նա հոն շա՛տ մեղմ և շա՛տ քիչ է խոսել և ուրիշ լեզվով):

189. ԱՆԻ ԿԱՄ ԱՅԼՈՒՐ

– Պարոն Երվանդ Ազբալյանի կողմից.

– Մեր ժողովրդի արմատները հազար տարիներ առաջ թաղված են Արարատի և Վասպուրականի հողերի խորքում: Բևեռագրերի խրթին դիչերի մեջ պիտի որոնել մեր պատմության արշալույսը:

190. <ՋԱՐԱՀԻՇԱՏԱԿ ԻԹԹԻՀԱՏ...>

– Ջարահիշատակ իթթիհատ, Թալաաթ:

– Ուխտավորներ, գաղափարական ուխտավորներ:

– Շա՛տ թագավորների գահերը հրաբուխային գագաթների են նման:

– Աչնան տխրությունը, գերեզմանների տխրությունը սիրտս մտավ:

Սրտիս տխրությունը ներկեց չրջապատս տխուր գույնով: Սրտիս տխրությունը տխրեցրեց բնությունը, արտաչխարհը, իրերը, առարկաները:

– Զգոհացած իղձեր – անմեռ տանջանքներ, կսկիծներ:

– Այս աղջկա գլուխը բոցի պես, որ ցայտում է վեր:

– Այս նկարիչը փորձեց թարգմանել արևելքը: Ներքնատես հանճար, աչք:

– Այս բանաստեղծության կենդանի բուրումներով ճոխ:

– Անին թարգմանել է հայի հոգին կախարդ ձևերով:

191. <ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ՄԱՐԴԸ...>

– Սիրահարված մարդը բարի է դառնում բոլոր մարդկանց և բոլոր իրերի հանդեպ:

Հարուստը՝ երբ սիրահարվեց, պատրաստ եղավ օգնելու ամեն մեկին և օգնում էր:

Ուստան, երբ բաղից դուրս եկավ, թևեր ուներ ուսին, արևը սրտում: Մի գյուղացու սայլ դեմ էր առել մի փոսի մեջ. կարոն բոլոր ուժով ու սրտով օգնեց, սայլը հանեց փոսից: Մի ծխախոտ տվեց գյուղացուն, և գնաց, պատրաստ օգնելու, հասնելու ամեն տեղ, ամեն մարդու:

Ամեն բան կարող էր անել. աստղերը մարել և նորից վառել: Ամբողջ մի բանակի՝ հեծելու զորքի ուժ կար իր մեջ:

Անի. որ զանգի պես ղողանջում էր:

Գյումբրիից հետ գալուս –

Ախուրյանը մերկացած թրի նման պսպղում էր ձորի մեջ, ասես, ձայնը կտրել, մտել էր ներս:

Արաքսը՝ արծաթե գոտիի պես քանդվել գալիս էր:

Ալաճայից առվակները սղոցել էին լանջերն ու ժայռերը, և ճերմակ թելերի պես փրփրած թռնում էին քարերի գլխից:

193. ԱՆԻՆ

– Մի ավերակ եկեղեցի՝ ցցված երկնքի դեմ:

– Անին՝ ավերակներ, բարձրահասակ բույսեր, փամփուշտներով, որ ոտքերի տակ պայթում էին՝ կոխվելով. և բվե՛ր, բվե՛ր...

– Կյանքը հեռացած էր այս քաղաքից, լքելով: Մի մեռած, անցած քաղաք, կրթությունն, արվեստ և հանճար՝ ամայի, մոռացված: Մի հին լեզու, քարեղեն լեզու, որ պատմում է մի դժբախտ ժողովրդի կյանքը, երկրի նման այսօրվան՝ անտեր, ոտնակոխ...

194. ԱՆԻ

– Արյունով լերդացած են հայ ժողովրդի պատմության ճանապարհները. այդպես է ներկայումս, այդպես է լինելու և ապագայում. մինչև ե՞րբ... մինչև որ մարդկությունը ազնվանա, բարոյանա...

ՇՐՋԻԿ ԿԱՅԾԱԿԸ

Զառանցում է, տեսնում է – Ահա Ալփասլանը պաշարել է Անին, հյուսիսի կողմից: Քաղաքը լցված էր հայերի բազմությամբ՝ գյուղերից քաղաքներից այստեղ ապաստանած:

1001 եկեղեցիներում պատարագ էր մատուցվում ժողովրդի փրկության համար: Կռիվ, կռիվ: Բայց թուրքերը քաղաք մտան: Յուրաքանչյուր թուրք երկու ձեռքերում մի-մի դաշույն բռնած և մի դաշույն էլ ատամների մեջ... Ջարդ, կոտորած, չխնայվեց հասակ ու սեռ: Մայր եկեղեցու խաչը վար ձգեցին, մահիկ դրեցին տեղը, փչրեցին Սմբատ Թագավորի ընծայած հնդկական ջահը:

Ահա Փալտուն Ամիրան, կռիվ, տիկին Այծեմնիկ, կռվեց ու մեռավ...

Մայր եկեղեցու իջած գմբեթի բաց բոլորակի վրայից սահում էին սպիտակ ամպի կտորներ, և վայրի աղավնիները ծփալով անցնում էին:

Գետակը, <անընթ.>, չառաչուն ալիքներով, ծփումներով, թռչկոտում էր քարից քար:

Ախուրյանը՝ հանդարտ, անտարբեր Անիի պատմության, անցյալին և ներկային, ճակատագրին անվրդով հոսանքով ծանրաքայլ իջնում էր՝ լիզելով բազալտի ժայռերը: Այդպես եղել է 1000 տարի առաջ, այդպես է լինելու և 1000 տարի հետո:

195. <ՈՎ ՈՐ ՀՈԳՈՒ ԱՉՔԵՐ ՈՒՆԻ...>

— Ով որ հոգու աչքեր ունի և սրտի ականջներ, կտեսնի աշխարհի իրերի այն կողմը և կլսե նրանց խորհուրդի ձայնը: Ձայները:

[Ճառերից]

— Արագածի մայրական գրկի մեջ և Արարատի նահապետական հայացքի տակ աճում է ու հասակ քաշում հայ ժողովուրդը:

Ներկայիս է սա, ոչ թե առաջ, 1904 թ., երբ կար Վան, Մուշ, Կարին:

196. ԱՆԻՒ ԿԱՄ ԱՅԼՈՒՐ ՃԱՌԵՐԻՑ

Հայաստան — արևելքի և արևմուտքի միջև մեծ ճանապարհների հանդրվան, հանգույց:

Հայաստանի վրայով է Ասիան կապվել Եվրոպայի հետ. հետևապես Հայաստանն է, որ առաքելություն ունի Եվրոպայի քաղաքակրթությունը տանելու Ասիա:

Նա առևտրական, նաև լուսավորության ուղին է:

197. ԱՆԻ. ՃԱՌԵՐ
ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Թուրք, թուրք, միշտ թուրքը, դարերի թուրքը, ահա մեր ճակատագիրը:

Խորտակեց, փշրեց և մեր հին կուլտուրան, մեր լեզուն աղճատեց, մեր երկիրը պատեց ավերակներով, մեր ցեղը

տասանորդեց, տասից մեկը մնաց... այս դարերի մեջ, այսօր էլ այդպես է, վաղն էլ... նրա ձգտումն է ոչնչացնել մեզ, պատմությունն է այդպես մեր, և այդպես պիտի լինի... Թուրքի տարրն այդպես է. նա հայրենիք է ստեղծում մեր հողի վրա՝ մեզ ջնջելով. բայց մենք չենք ուզում մեռնել, մենք ապրել ենք ուզում և այն համոզումն ունենք, որ բարոյական ուժով, որակով մենք բարձր ենք այդ թուրք թանձր ու հետամնաց զանգվածից:

Պիտի կռվենք. գոյության կռիվ, տեսակի կռիվ. կռվի բոլոր ձևերով.— ուժ, փող, խելք, գիտություն:

Բայց մենք մենակ ենք մեր կռվի մեջ. մեր դրացիները՝ վրացի, քուրդ՝ թշնամի են մեզ, վախենալով մեր որակից...

Ռուսը թշնամի է մեզ՝ իր մոնղոլական բնազդական սիրով համացեղակիցների հանդեպ և իր թշնամության՝ լույսի, կուլտուրայի հանդեպ, որ հայն ունի և բերում է, չինում է:

Եվրոպան համակիր է թուրքին՝ իր շահերի համար. Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, <անընթ.>, Իտալիա...

Մենք մենակ ենք, դեմառդեմ, գլուխ գլխի թուրքին... կռիվը մենք պիտի տանենք բազմաձևով, ջնջել, ոչնչացնել թուրքը՝ ո՛չ — դա ոչ կարող ենք, ոչ էլ ցանկալի է, այլ փոխել նրան, մարդկայնացնել, հանել նրա ճիրաննեըը, սուրը առնել ձեռքից, ղուրանը առնել ձեռքից, նրա ձեռքը տալ դութան, մկրատ, ասեղ, ուրագ, մուրճ...

Սոցիալիզմ — ահա մեր զենքը՝ քրիստոնյան նոր դարեըի — սոցիալիստը: Քրիստոնեությունը կործանեց Հռոմը, սոցիալիզմը կկործանե մեր թշնամիներին՝ ռուսին, թուրքին, Գերմանիային, Ֆրանսիային, Անգլիային, Իտալիային, աշխարհին. բուրժուազիական-աղայական-խանական-<անընթ.>-փաշայական-սուլթանական-ցարական-կայսերական աշխարհին...

— Սուտ է Գլադստոնի խոսքը՝ օգնել հայությանն կնշանակն օգնել քաղաքակրթությանն: Սուտ է, որովհետև իմպերիալիստ լորդի բերնից է ծագել. Գլադստոնի համար իր զավակների հագած թյուրքի բուրդն ու բամբակը հազար անգամ արժեք ունի, քան հայ ժողովրդի կյանքն ու մահը՝ ամբողջապես...

Ճշմարիտ է Մարքսի խոսքը.

Ընչազուրկները բոլոր երկրների միացեք:

Միացեք ձեզ կողոպտողների դեմ... Հայ ժողովուրդը ամենաընչազուրկն է և ամենակողոպտվածը՝ կողոպտվածը բոլոր ժողովուրդների իշխողների ձեռքով, և իրեն ծոցից ելած իշխողների՝ հարուստների ձեռքով...

Հայ ժողովո՛ւրդ, աշխարհի ամենեն ազնիվ, սուրբ և համեստ, մաքուր ժողովո՛ւրդ, <...>[1]

198. <ՀԱՅԿԱԲԱՐ ԳՈՐԾԵԼ...>

— «Հայկաբար գործել» = հսկայաբար, դյուցազնաբար:

— Վահան Մամիկոնյանի մասին.

«Թող ճերմակաձին գինի խմե»:

199. <ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ...>

Հայկական հարցն ու Եվրոպան:

Հարցի սկզբի հոգեբանությունը:

---

[1] Վերջը պակաս է:

200. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Եվրոպան բարբարոս է:
Թուրքերը խելացի են:
Եվրոպան չահագործում է մեզ:
<անընթ.>
Ամոթ քաղաքակրթության:
Մահ քաղաքակրթության:
<անընթ.>

201. <ՎՐԱՑԻՆԵՐԸ ԿՈՄՊԱԿՏ ԵՆ...>

— Վրացիները կոմպակտ են, հոծ են, խիտ. ոչ թե միայն թվով, բնակչությամբ մեկ հողամասի վրա, այլև, այդ հետևանքով բարոյական, ազգային զգացումով և ազգային գիտակցությամբ:

Ֆիզիկական կոմպակտությունը ծնում է հոգեկան-բարոյական կոմպակտություն: Վրացու ուժը դրա մեջն է, մեր թուլությունը ցրվածության մեջն է:

Ցրված ենք, իրար չենք հասկանում, իրար չենք զգում:

202. <ՍՎԱՉՑԻ ԲԻՁԱՑԻ...>

Սվազցի բիձայի դատավարությունը մտցնել վեպի մեջ, ցույց տալու համար դաշնակցության դատական սիստեմը:

Թե գողն էր փախչում, թե ապրանքատերը:

— Մարդ ինչ որ կքաղաճա, կուզե, կմտածե, մտորե, այն բանն էլ կերազե, չուզածդ բանը չես երազե:

— Հարուրթը:— Ուստա Ջան, դու աշխարքն ու էնոր բաները էնպես կտեսնես, ինչպես որ կուզես, կփափագես, կերազես, աշխարքը սրտիդ պես կդարձնես ու կհավատաս քու երազին ու տեսածին:

Ես բայց աչքերով, արթուն խելքովս աշխարքը էնպես կտեսնեմ, ինչպես որ է — գեղ, չար, անկատար, ներհակ, թշնամի, ու էդոր համար էլ կիմանամ, որ միտքս թմրի, ու քեզ պես դառնամ, աշխարքը երազիս մեջ տեսնեմ, սրտովս, ուղածովս,— լավ, ուրախ, անպակաս, բախտավոր:

Վեպիս մեջ սոցիալիզմը տեղ ունի, բայց բոլոր չըթիկնեըը քարոզում են այսպես, թե սոցիալիզմը հեռավոր նպատակ է, լուսավոր, առաջնորդող բևեռային աստղ, որին բևեռած մեր հայացքը՝ կքայլենք այս խավարի և արյունի միջով. բայց ներկայումս, քանի որ ազգի գոյությունը վտանգի մեջ, ստրկության մեջ հալվում է ու բարոյապես վատթարանում, իր անհատական դիմագիծը կորցնում <է>, թրքանում, քրդանում, ռուսանում, ուստի մենք պիտի կռվենք, որ ստեղծենք հայության համար անկախ կամ ինքնիշխան վիճակ, առնվազը այնպիսի մի վիճակ, որ գոյությունը անվտանգ լինի, և մեր ազգային դեմքը անխաթար մնա, և մենք կարողանանք զարգացնել մեր հոգեկան կարելիությունները, ազատ ստեղծագործենք:

Ամենից առաջ պետք է մեր կյանքը ազատենք ոչնչացումից, մեր աշխատանքը համեմատական կողոպտումից, ապա, պայքարենք մեր աշխատանքի լիակատար ազա-

տուԹյան, անվԹարուԹյան, անկախուԹյան համար. հետո ազատագրենք աշխատանքը. հիմա մեր կյանքը ազատագրենք, մեր կանանց պատիվը, մեր երեխաների կյանքը քրդի, Թուրքի բռնուԹյունից ու յաԹաղանից: Բայց այդ կռվի միջոցին, նաև, հնարավոր կերպով, հարմար տեղին, կիրառենք սոցիալիստական ծրագրից կյանքի մեջ իրականացնելու, ինչ որ կարող ենք. դրանով ճանապարհ կհարԹենք դեպի սոցիալիզը հայ մարդու կյանքի և հոգու մեջ: Ներկայումս, այս այրող ներկայիս մեջ,– հայ դառն իրականուԹյունը ունի անմիջապես իր հրամայականները. բայց և մյուս ձեռքով հող կպատրաստենք սոցիալիզմին. սերմեր կցանենք, մտայնուԹյուն կստեղծենք (սոցիալիստական մտայնուԹյուն, տրամադրուԹյուն, զգացումներ, մԹնոլորտ):

Եվ սոցիալիզմի իրականացման համար արդեն դարերի պայքար պետք է և վերջապես հոգեկան բարեշրջում, հեղափոխուԹյուն էլ անհրաժեշտ է. մտքերի, տրամադրուԹյան նախատվյալներ պետք են, նախապատրաստական կրԹուԹյուն: Հոգին պիտի ազատվի բուրժուական-քաղքենի աշխարհահայացքից, որի վրա պիտի Թափվի, ճուլվի սոցիալիզմը իբրև նյուԹական վերնաշենք, հակառակ այն տեսուԹյան Թե, նյուԹականը հիմք է, հոգեկանը վերնաշենք: Առաջ ենԹակայական, հետո առարկայական. դա ավելի ամուր կլինի, հասունացած, հոգին կդրսևորվի. և ի սկզբանե էր բանն...

204. <ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻ ՄԵՋ...>

Հայոց վանքերի ոճի մեջ գեղեցիկը տեսիլ է դարձել, ոգի ունի՝ խոսում է ու դյուԹում, խորհում ու Թռցնում հոգիդ:

205. <ԻՆԺԵՆԵՐ...>

— Ինժեներ: Ցույց տալ, որ իրենց ջարդված ազգը ոչ-խար չէ, իրենց հավասար ազգ է, ի՞նչ շահ ունի ռուսը՝ որ թող է տալիս հային ջարդելով՝ զորեղացնել սահմանների վրա թուրք, թուրք տարրը... Բայց ռուսը ե՞րբ է խելք ու-նեցել, որ հիմի ունենա. արդեն ինքը չէ իրան կառավա-րողը, ներմանացիք ցարին են կառավարում, հրեաները՝ ինտելիգենցիային:

— Ծո՛վ եղիր, համբերիր, ծով սիրտ...

206. <ՈՒՍՏԱՆ ՆԱՅՈՒՄ ԷՐ...>

— Ուստան նայում էր ճանապարհին և Անիում հին վանքերին, ամրոցներին, պարիսպներին — և սիրտը ան-տեսանելի թելերով կապվում էր նրանց հետ... սիրում էր, հիանում, ափսոսում...

— Տեսնես ի՞նչ ուստա է չինել, ինչ գլուխ-վարպետ, ի՛նչ սուրբ մարդ... տեսնես ի՞նչ մարդիկ են եղել էստեղ, մեծ-մեծ հայ մարդիկ, իշխաններ, թագավորներ, կտրիճ-ներ, իմաստուններ. ի՛նչեր են խոսացել, մտքել... երնեկ էր՝ ես էդ ժամանակը ըլնեի, էդ մեծ հայերու հետ կանգ-նեի մեկտեղ, խոսեի հետները, կարելի է՝ ես էլ գլուխ-վարպետ կէղնեի.— կարելի է, էս պալատը չինողը իմ օխթ պապս է եղել, ի՞նչ իմանաս, Ջավուշ ջան, ու պապիս չնորքը իրան օխթը թոռանն է հասել...

— Այս միստիկ կապի մասին կայծակն էլ է մտածում, թերևս նա է մտածում... Զգում է, որ ինքը ներկա է եղել... իր պապերն են եղել նրանք — այդ իշխանները, իմաս-տուններն, վարպետները, քաջերը... Նրանք մեր մեջ են,

հիմա, նրանց արյունը, այս խորախորհուրդ նյութը, հոդու նյութը, հոգեկան նյութը:

Այս կետի մասին լավ մտածել:

207. <ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ...>

— Հայկական հարցը մարդկության խղճի փորձաքարն է:

— Ուստան չա՜տ սիրեց Աղասու գիրքը, Դավիթ Բեկը:

— Ուրիչ մի տեղ. երբ մի մարդու մասին ասում են, թե էշ է, հաստատ էշ, Ուստա Կարոն ասում է թե՝ ասած է թե որ մարդու օխթը պորտը քննես, տակեն սատանա դուրս կգա, դրսեն էլ — էշ:

— Թյուրքը հիշե,

Թուրը քաշե:

— Որտեղ բռունցք, էնտեղ իրավունք:

— Սատանի առջև էլ մոմ պիտի վառել — սա է դիպլոմատիա, քաղաքականություն: Պոլիտիկ:

208. <ՀԱՐՈՒԹԸ ԿԱՐՈՑԻՆ...>

Հարուստը կարոյին՝

— Էդ արագի չիշը ինձ տուր, թե ո՞ւր կուզես գնա:

— Մարդ չեմ, թե որ էդ բանը չանեմ:

— Ի՜նչ մեծ վարպետներ են եղել Անի չինողները. նրանք աչխարհ կրնային չինել, չէ թե մենակ Անի (Կարո):

— Աչխարքի բանը չիտակ է. աչքերդ են ծուռ տեսնող:

209. ԹՑՈՒՐՔԸ

Թյուրքը զինվորական-ռազմիկ ժողովուրդ է, ինչպես և քուրդը. նրանց ոտները – ձին է, ձեռքերը – զենքը. դրանով, ձիով ու զենքով, ստրկացրել են հայերին և ծծում են մեր աշխատանքը. և քանի որ մենք ապրում ենք այդ ցեղերի մեջ, մենք էլ պիտի ռազմանանք. ձի նստենք և զենք չարժենք:

– Թյուրքերն ի՞նչ գործ ունեն մեր երկրներում, նրանց պիտի քշել իրենց բուն հայրենիքը – Սիբիր:

210. <ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ՇԻՐԱԿԻ...>

Ուստա Կարոն Շիրակի արևելյան գյուղերից է, այն մասից, ուր Շիրակը միանում է Աբարանին:

– Վրացիների մասին ասում է ծերուկը՝ լապստրակակեր ազգն վրաց:

Ռուսները մեր բնական դաշնակիցներն են. մյուս մեր հարևանները քուրդ, թյուրք, թաթար, լեռներից՝ իբրև բարբարոս ցեղեր, մեր թշնամիները. վրացիները նրանց պիտի գործադներ մեր դեմ: Չհավատալ եղբայրությանն, համաձայնությանն քարոզներին. թյուրքը, քուրդը՝ ո՞վ, սոցիալիզմ, եղբայրություն, դաշնակցություն, ազատություն, հեղափոխություն – ո՞վ: Իրարու մերժող, չնչող սկզբունքներ են. ուր որ թյուրք կա, այնտեղ կա միայն ստրկություն, հոգևոր և մարմնական, բռնություն, բանտ, կախաղան, յաթաղան, ննդություն և սրիկայություն: Վրացին, որ իրեն քաղաքակիրթ կկարծե, նրանց հետ դաշնակից է, խորհրդատու:

Վրացին տիկն է, նրանք բերանը. վրացին է թույնը չինում, դանակը սրում մեր դեմ. նա մեր թշնամին է՝ վատ տեսակի սոցիալիստական դիմակի տակ:

..... տո՛ւր գինի,
Կնկա հետ քնի.
Հետդ տա՛ր կաշառ,
Կնիկը քեզի առ:

Ուստա Կարո

211. <ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ...>

— Ֆրանսիան հաղթվեց, որովհետև իդեալ չուներ: Դասակարգային շահերն էին նրան ղեկավարում, ոգևորում, չահադիտական, փողը:

— Գյուղացին չունի մի օրվա տեղ (<անընթ.> մի ժամվա) և գալիս հեքիաթներ է պատմում:

Ինչպես մեր գիշերին կողբ գնալ, գալիս:

— Մեր դարավոր իրականությունն է միշտ պատերազմը, ջարդը, ավարը, կործանումը:

– Երբ Ուստան բարձրացավ Անիի պարիսպների վրա, աշտարակի կատարին կանգնեց, իրեն մեջ անսովոր ուժ զգաց: Ձորքով լցվեց, տեսավ իրեն զորավոր, աչքը արյունը կոխեց, ուզում էր ջարդել, փրթել Հայուքյան հին ու նոր բոլոր թշնամիներին, փրկել հայոց ազգն ու Հայաստանը:

(Պարիսպների ուժը, հրաշք):

– Աբիխը Անիի պարիսպները համեմատում է Հռոմի պարիսպների հետ, և համարում է մեր պարիսպները Հռոմինի հետ համահավասար. անչափ վեհ, հզոր, ներշնչող, ազդու: Խրոխտ պարիսպներ, խրոխտ ոգու մարմնացումներ, ներկայացնում են մեծ ուժ, կորով, կամք...

Սմբատ Տիեզերակալի:

– Անիի լռած աղբյուրները:

– Անի կմախք՝ բայց մեր երևակայությունը կենդանացնում է նրան, միս և արյուն տալիս:

– Պարիսպները Անիի ճակատն է:

Դվինը կործանվելուց հետո այդ անունի դուռը վերակոչվել է Երևանա դուռն: Դվինի դռան մոտի աշտարակի կարնիսի վրա քանդակված է վիշապ և եզան գլուխ:

Այդ աշտարակի վրա ելավ Ուստա Կարոն: (Կամ ուրիշ տեղ):

212. <ՊԱՐՍԻԿ ՇԱՀԻ...>

– Պարսիկ շահի պատմական – ռուսների մասին:

Նրանք իմանսըզ են,
Տղամարդիկ՝ նամուսսըզ,
Կնիկները՝ թումբանսըզ:

— Հասարակութեան մէջ մենակ ես. չես մերվում մարդկանց հետ. ձանձրանում ես, իսկ մենակութեան մէջ քնավ մենակ չես, քո հուշերի հետ ես, անցյալ կյանքի հետ, սիրելիներիդ և սիրածներիդ հետ. և այլն, և այլն:

— Մեր երկրի վրա պիտի տարածվեն մեծ մտքեր, մեծ իդեաներ, ոգևորիչ, բարձրացնող գաղափարներ, եթե ոչ՝ մարդը կնանրանա, կանասնանա, կոչնչանա... կգռեհկանա:

213. <ԵՍ ԻՄ ԵՂԲԱՅՐԱԿԻՑՆԵՐԻ...>

«Ես իմ եղբայրակիցների և արյունակիցների սիրո համար ուրախությամբ կցանկանայի նզովվիլ Քրիստոսից»:

Պողոս Առաքյալ

214. ՍՏ<ԵՓԱՆՈՍ> ԱՍՈՂԻԿԻՑ

«Սա (Աչոտի որդի Սմբատ) լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրեան գետոյ մինչեւ ցձորն Ծաղկոցաց, կրով եւ վիմով[1] մածուցեալ, մահարձանօք եւ աշտարակօք բրգօնց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քա-

[1] Բնագրում՝ *վիմաւք:*

ղաքին, եւ մայրապերան դրամբք՝ երկաթագամ հաստատեղոյս բեւեռապինդ ամրացուցեալ: Արկանէ հիմն եւ մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին չիննաց յԱրփինայ»:

«Այլ կին (Գագիկի) նորա Կատրամիդէ թագուհի բարեպաշտուհի եղեալ[1], չիննաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք գմբէթաւորեալ խորան երկնանման, եւ զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարադործ անկուածոց, արծաթեղէն եւ ոսկեղէն անօթոց եւ բազմապայծառ լուսատուս անօթոց վայելչութեամբ, որովք ջահանայք ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ»:

<ԱՅԼ ԹՂԹԱՊԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆԻԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

215. ԱՆԻ

— Գլադստոնը անկեղծ է ասել, թե դիվանագիտական խոսք է, թե Հայաստանին օգնելը քաղաքակրթության

---

[1] Իսահակյանը կրճատել է Ասողիկի բնագրի «*որ էր դուստր Վասակայ՝ Սիւնեաց իշխանին*» արտահայտությունը:

օգնել կնշանակե. բայց իրական է այդ և ճշմարիտ, որով-հետև հայ ժողովուրդը լուսեղեն սյունի պես, լուսեղեն Մասիս, կանգնած է վայրի ու վայրագ, խավար ու տմարդի ժողովուրդների առջև՝ իր առաքելական խորհրդով՝ լուսավորել, մշակել, մարդկայնացնել այդ անասուն ու դազան փոշի ժողովուրդները՝ թուրք-քուրդ, թուրքմեն-թաթար...

216. ԱՆԻ ԳՆԱԼՈՒՍ ՃԱՄԲՈՒՄ

Կայծակը ասում է, թե Ուստա, լսել եմ, որ չա՛տ տեղեր ես ճամբորդել, ճի՞շտ է:

— Այո, պարոն Կայծակ, չա՛տ:

— Որ կողմերն է քեզ ամենեն չա՛տ դուր եկել:

— Ամեն տեղ իր համն ունի. մարդը գիտե. խոսքի օրինակ, քեզ պես մարդոց համար, քո ասած մտքերի, ծրագրների, բնաբանների համար ամենեն հարմար ու նման տեղը դտա Ոսկի քաղաքը, ուր ես չեղա, բայց էնտեղեն եկողներ կային, լավ բաներ կպատմեին, որ քեզի չա՛տ դյուր կգա:

Եվ Կայծակի խնդիրքի վրա պատմում է:

Կայծակը հիացած ասում է. եթե այդ քաղաքը հիմա չլինի էլ, մոտ ապագայում պիտի լինի. դա է հավիտենական քաղաքը:

Եվ հանեց ծոցի տետրը ու նշանակեց Ուստայի ասածը: Ուստան չափազանց ուրախացավ:

Ջմռռանամ ասել, որ հաճախ Կայծակը գրում էր ծոցի տետրի մեջ:

«Փորձի» մեջ նայել Գեղամյանի Անին և մեջ բերել մի երկու հայտնի դովական խոսքեր Անիի և հայերին ուղղված, որ կայծակը կարդում է Անիի պատերում:

Ձեռք բերել նայելու Ա.Հովհաննիսյանի «Եվրոպացիների կարծիքը հայերի մասին» — օգտվել դրանից:

Անի. Երկու մարդ կային, մեկը՝ ծեր, մեկը — երիտասարդ:

Ծերը — ազգասեր, հեռատես:

Երիտասարդը — կողմնակից ազգերի համերաշխության՝ թյուրքի, վրացու, քրդի:

Կայծակը վերջինիս կողմն էր. և երբ կայծակը հայտնեց, թե թյուրքերի հետ պիտի բարեկամանանք, թյուրք ժողովրդի հետ միասին տապալենք կառավարությունը ու եղբայրանանք, մի հայրենիք ստեղծենք,

Ծերուկը ասաց.— Անհիմն երազ է: Նա միշտ պիտի կոտորե մեզ:

Կայծակը թե՝ նա հիմա մեզ կկոտորե, բայց վաղը մեր ձեռները համբուրելով ներողություն կխնդրե, և միասին կվերանորոգենք Հայաստանը:

Ծերուկը ծաղրեց, իսկ երիտասարդը սկսեց իր սոցիալիստական-համերաշխական տեսությունը: Եվ փոխանակ երկրային թագավորության՝ դրեց երկնային թագավորության մասին.— լույս, եղբայրություն, կրթություն, դիտություն... Հոգեկան, մտավոր կյանք, ստեղծագործող աշխատանք...

Դաշնակցությունը պիտի կանգնած լինի զուտ և նեղ ազգային հողի վրա. (դասերի կռիվը դա ընտանեկան գործ է. թո՛ղ լինի): Նրա գերագույն կոչումը և նպատակը պիտի լինի ազգը կազմել և պաշտպանել օտարների դեմ, ամենից առաջ թյուրքերի, որոնք դարերից ի վեր

ձգտում են ոչնչացնել հայութիւնը, և մյուս ազգերի՝ քրդերի, վրացիների դեմ, որոնք նպաստում են թյուրքերին (թյուրքն ու վրացին իրար բերան թքել են): Համերաշխություն, ազգերի դաշնակցություն... դարտակ խոսքեր են իրականության համար: Երկու հակամարտ տարրեր իրար հետ չեն կարող դաշնակցել. հայը մի ազնիվ, ընտիր, օգտակար, չինարար ցեղ է, և այդպես էլ կմնա մինչև իր վերջը, իսկ թյուրքը մի ստոր, անազնիվ, վնասակար ցեղ է, կործանիչ, և դրա մեջ էլ պիտի ջնջվի, ոչնչանա: Գայլը կարող է քաղաքակրթվել, իսկ թյուրքը՝ <...>[1]

217. <ՀԱՅԸ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐՆ Է...>

— Հայը քաղաքակրթության զինվորն է Ասիայում:

— Թուրքիան մի չարդարար և հարկահան կառավարություն է. կամ ավելի ճիշտն անվանված՝ մի ավազակապետություն է:

Անիի երիտասարդ սոցիալիստը ասում է, թե վաղվան օրը սոցիալիզմն է. սոցիալիզմը, ամբացնելով և համասփռելով ժողովրդապետությունը, պիտի հաստատե համերաշխության կապը բոլոր ժողովուրդների միջև, որոնք սոցիալիզմից առաջ հանապազ իրար միս էին ուտում: Սոցիալիզմի չնորհիվ կվերջանան ընդմիշտ պատերազմները, ամեն կռիվ մարդկանց միջև կվերջանա, և մարդկանց բոլորին կհամախմբե մի մեծ բանակի մեջ՝ գիտության և արվեստի զորապետությամբ, զորավարությամբ

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

կամ հրամանատարությամբ, ընդդեմ բնության թշնամի ուժերի:

Այն օրը, որ կդադարի մարդու կեղեքումը մարդու միջոցով, ամեն վատ ու չար բան իր մահը կգտնի, տեղի տալով երկնային թագավորությանը մեր՝ մինչև այդ ողբալի, տխուր, դժոխք դարձած երկրագնդի վրա:

Ծերունին ասավ.

— Երկու ձեռքով կստորագրեմ քո ասածների տակը. միայն մի բան ինձ համար, և ամեն հայի համար պիտի լինի բացարձակ կերպով անընդունելի,— համերաշխություն թյուրքերի հետ: Դարևոր դասը և ամեն օրվա դասը մեզ չափազանց կերպով սորվեցրեց, թե թյուրքերը ո՛չ մի պայմանի, ո՛չ մի դաշնի ընդունակ չեն, քանի որ նրանք ի բնե մի նենգ, ուխտադրժված, խաբեբա և չնապայլերի ցեղ են: Աշխարհի ամեն անկյուն կարող է խաղաղություն, ժողովրդապետություն, ընկերավարություն տիրե, սակայն թյուրքերի մոտ — երբեք, սակայն թյուրքերի և հայերի միջև՝ հավիտենապես երբեք: Հայի և թյուրքի մեջ մի պայման կարող է լինել — ուժի և թույլի. կամ հայը պիտի այնքան ուժեղ լինի, որ թյուրքը մտքով չանցկացնե հային վնասել, կամ հայը այնքան թույլ և ոչինչ պիտի լինի, որ համակերպի իր դիակային դրությանը:

Հայը իրավունք չունի թյուրքին հավատալու. այդ հավատը հայի համար մահաբեր է, քանի որ թյուրքը երբ ուժ զգա իր մեջ, պիտի հային հարվածե. այդպես է եղել 1000 տարի առաջ, այդպես է եղել ամեն օր, և այդպես է այս ժամին, և վաղը, և 1000 տարի հետո էլ: Թյուրքը իբրև դիշատիչ գազան, վայրենի և անբան, միայն մի բան գիտե գնահատել՝ ուժը, կոպիտ, բռնի ուժը: Հայը թե սոցիալիստ լինի, թե քրիստոնյա, թե ռազմամոլ —

միշտ պիտի կոպիտ ուժը, գնդակը, սուրը պաշտե, չմեռնելու, չոչնչանալու համար, որովհետև ամեն մի թյուրքի գանգում, կրթվածների գանգում ավելի ուժեղ, քան անկիրթի, օձի պես ծվարած է այս հազարամյա թույնը — միտքը՝ ոչնչացնել հային՝ արմատից. մինչև վերջին ծերը և մոր արգանդի մեջ երեխան:

Թյուրքը մարդ չէ, լավ իմացեք. և, չնեղանաք, որ ասեմ. հիմար է, ապուշ է այն հայը, որ թյուրքին մարդ կհամարե և դաշն կկապե. այդպիսի հայի երեխան վաղը մորթված կլինի իր բարեկամ թյուրքի ձեռքով իսկ:

Մենք կարիք չունենք արտագրել տուտուց վրացիներին, այդ ստախոսների հետ գործ չունենք. դրանց սոցիալիստները ավելի ազգամոլ են, քան ազգամոլ անուն ունեցողները. և հայկական սոցիալիզմը թող պատճեն չվերցնի ռուս-հրեական սոցիալիզմից. դա մի խենթ, տղայական մտայնություն է մանկամիտ ռուսների մոտ, իսկ հրեաների համար միևնույն է — հայրենիք չունեն. ուր հաց, այնտեղ կաց, ուր հաց, այնտեղ հայրենիք: Մենք մեր պատմությունն ունենք, մեր ճակատագիրը, և մեր առանձնահատուկ հրամայականները, պահանջները, պայմանները...

— Թյուրքերի դեմ վատ մտքեր Ռեսը և Փիլոսն են միշտ ասում, իսկ կայծակը ընդհանրապես կառավարության դեմ. նա չի խոսում ժողովուրդներին հակառակ:

Ռուսների դեմ էլ գյուղացիք վատ են արտահայտվում, իսկ կայծակը նորից միայն կառավարության դեմ:

Թումանի խմբի հոգեհանգիստից հետո Թաթոս վարժապետը կարդում է «Հոբ երանելի» [իմ] ժողովուրդ»:

Ապա Ուստի մոտ ենթակոմիտեի զինվորները հացի են կանչվում, ուր Կայծակը այստեղ խոսում է Եվրոպայի մեղսակցության, ռուսների դավաճանության և այլն, մասին դնպի հայ ժողովուրդը, ջարդերը:

Անի գնում են՝ Ուստան, Փիլոսը, Կայծակը, զինվորներ, Թաթոսը, Հովակը. վերջինս իբրև լավ ծանոթ հայ պատմության՝ նա պատմում է ջահի, խաչի մասին:

Հարությի կինը չի մեռել, այլ մի երեխայով ապրում է Հարությի հոր տանը: Հարությը նրան չի սիրում, բայց խղճում է: Հարությը սիրում է Հրեղենին՝ մտքի աղջկան, և նրան մի քիչ, շատ և շա՛տ և շա՛տ քիչ նման Անուշկին: Իսկ Հովակը, որ տերտերացու էր պատրաստված՝ կինը մեռնում է, և նոր կին է առնում, ուստի իրավունք չի ունենում քահանա դառնալ:

Ուստան Թորոյի հետ տամա չի խաղում Սանամին առաջին անգամ բաղում տեսնելուց հետո. այլ դատավարության ժամանակ մի օր գալիս է Սանամին տես՝ գաղտնի՝ Լորիկի մոտ. ապա գնում է Թորոյի մոտ. տամա են խաղում և խոսում Հայաստանի մասին. Թորոն այդտեղ է արտահայտում ռեակցիոներ մտքեր, որ Ուստային տհաճելի են սաստիկ:

— Թորոն ասում է. թող իմ մաս Հայաստանը չազատվի. ես փող չեմ տա, չեմ օգնի, խելքիս չի նստի. էդ գազանների ձեռքեն չի կարելի ազգը ազատել. տղայական գործեր կանեն դաշնակը. իմ կարճ խելքով՝ էդ կռիվներեն բան դուրս չի գա, հիմա էլ վրան բարդել են սոցիալիզմ. հարուստի և աղքատի կռիվ, որպես թե հարուստները աղքատներին թալանել են ու հարստացել...

Կանչե՛, կռունկ, կանչե, քանի գարուն է,
Աչխարքին արև է, մեզի արուն է:

Թյուրքերը մինչև այսօր դեռ ամբողջ Քրիստոնյա աշխարհին կոչում են շուն, գյավուր: Եվրոպայում իրենց ցույց են տալիս եվրոպացուց ավելի եվրոպացի, քաղաքավարի, քաղցրալեզու, կանանց հետ քնքուշ, նուրբ, իսկ իրենց երկրում՝ իրենց ճիշտ պատկերով՝ վայրենի, կոպիտ, գազանաբարո, կանանց չան տեղ դնող, բռնակալ, անասնական: Եվ եվրոպացիք թե՛ շլացած նրանց կեղծությամբ, թե՛ ոսկիներով՝ գովաբանում են թյուրքերին՝ աչխարհի այդ սրիկա, գազան ցեղին:

— Մեր օրորոցի երգը պիտի վրեժի երգը լինի թյուրքերի դեմ. մեր երդումը պիտի լինի — թյուրք ոչնչացնել: Ատելությյուն դեպի թյուրքը, քուրդը, վրացին. մենք մեր բախտավոր օրերում չպիտի մոռանանք մեր դժբախտ օրերը, և մեր միլիոն անմեղ, չարաչար կերպով զոհված նահատակները. մեր և թյուրքի միջև պիտի լինի հավիտենական կռիվ, ինչպես բարիի և չարի միջև. մենք այն

օրը պիտի հանդիսատ քուն մտնենք, երբ ասենք թե՝ վրեժ-ներս հանեցինք թյուրքերից:

Թյուրքը մեզ 1000 տարի է ոչնչացնում է, և պատկեց իր գազանությունը չտեսնված զարհուրանքներով,— մենք նույնը պիտի անենք — 1000 տարի. հիմա մերը պիտի սկսվի:

Նա մերից մեկն է սպանում, մենք 10 պիտի սպանենք, 100 պիտի սպանենք, որովհետև մեր մեկը արժե նրանց 100, 1000-ը:

Մեր աղջիկները տարբերվում են եվրոպացիներից նրանով, որ մերոնք թույն են խմում թյուրքերի ձեռքը չընկնելու համար, իսկ եվրոպացիք իրենք են ընկնում թյուրքերի գիրկը:

Այս ամեն կոտորածների, զարհուրանքների մեջ հայ ազգի հույսը և հավատը մնաց կանգուն, աննկուն, անսասան, ինչպես Մասիսը Հայոց աշխարհում:

Անի: *Սոցիալ-դեմոկրատները ասում են, դաշնակցականներն էլ առանց ամաչելու կրկնում են այս մեծ սուտը, թե թյուրք ժողովուրդը չարդարար չէ, այլ կառավարությունն է վատ. ո՛չ, պարոններ, թյուրք ժողովուրդը ավելի վատ է իր կառավարությունից. երբ կառավարությունը հրամայում է չարդել, թյուրք ժողովուրդը մի*

չտեսնված հաճույքով ու աննման անգթությամբ է ձեռնարկում, կատարում ջարդ՝ նրբամտություններով՝ կանանց փոր բանալ, երեխային ողջ-ողջ այրել, մոր առաջ տղային կտրատել, հոր ձեռքով աղջիկը սպանել, որդու արյունը մորը խմցնել...

ՋԱՎՈՒՇԻ ՄԱՍԻՆ

Ջավուշի խնդիրը վեպիս մեջ ծանր խնդիր է. նա թյուրք է, բայց հայասեր, նա թյուրք է, բայց Հայաստան է գնում. ինչպես անել:

Հնարավոր է, որ Ջավուշը Ուստային սիրե, ընկեր լինի, մտերիմ, անդավաճան, բայց երբ գալիս է հայի և թյուրքի կռիվ, Ջավուշը ո՞ւմ կողմը պիտի բռնե:

Այստեղ օգնության է գալիս դաշնակցության ծրագիրը: Ուրեմն Ջավուշին այնքան պարզ պիտի լինի դաշնակցության ծրագիրը, թե սա չի ուզում սպանել թյուրք ժողովրդին, կռվել կրոնի և թյուրքության դեմ, և ապա՝ սուլթանի, բռնության, զուլումի, կառավարության: Որ դաշնակցությունը ուզում է թե հայի, թե թյուրքի համար ստեղծել լավ աշխարհ, որ հայ և թյուրք եղբոր պես ապրեն:

Այդ իրագործելու համար պիտի կռվել այդ գաղափարի հակառակորդների դեմ, ով էլ որ լինի — այդ:

Սակայն գյուղացիներից, չատերը, որ դրական են և ռեալիստ, չեն հավատում թյուրքերին և այդ գաղափարին, համարում են ցնորք. օրինակ՝ Անիի ծերուկը:

Իսկ Ռես-Հոսեն Ուստի հետ ծանոթանալու օրից թշնամաբար դիրք բռնեց դեպի Ջավուշը. միշտ ասում էր Ուստին. լավ թյուրք չկա, միլիոնի մեջ էլ չկա, ամբողջ

թյուրք ազգի մեջ էլ չկա, դեղապտի նույնիսկ: Ուստի խոսքին՝ թե Զավուշըս լավն է, ձեր ասած թյուրքերի պես չէ, Ռեսն ասաց՝ կարելի է նա թյուրք չէ, հայի սերմ է, բայց էլի անխախտ ատում էր Զավուշին և կասկածում, թե վերջը դա Ուստի դլխին փորձանք է բերելու, մանավանդ երբ միասին պիտի Հայաստան գնային: Ռեսի համար պարզ էր, որ Զավուշը Ուստին մատնելու է թյուրքերի ձեռքը. և նույնիսկ Ուստի վիզը Զավուշը պիտի կախաղանի պարանը ձգե՝ խեղդելու համար:

Եվ Ռեսը պատմում էր օրինակներ, թե ինչպես տարիների, աղուհաց միասին կերած թյուրք բարեկամները իրենց ձեռքով սպանում էին բարեկամ հայերին ավելի անգթությամբ, քան անծանոթները: Թյուրքին հացդ կերցնես, ավելի ոխերիմ կդառնա, քան անոթի թողնես. դա մի տեսակ գազան է, որ անունը չունի, նմանը չունի աշխարհիս երեսը ապրող բոլոր գազանների մեջ. դրա անունը վրան է — թյուրք:

Վախնամ Զավուշդ վաղվան առակի օձի պես իր տաքացնողին կծե:

Վեպը այնպես տանել, որ երևա հայ ժողովրդի մեջ սարսափելի անվստահությունն դեպի թյուրքը. դարերի փորձնական բնազդ, մի անանուն ատելություն. և ցուցադրել այնպես, որ դաշնակցությունը երևա իբրև նոր մտքերի, նոր զգացմունքների քարոզիչ, սակայն իդեալիստ, անիրական, երազող:

Եվ նույնիսկ վեպի վերջը, երբ ազատված է Հայաստանը, մի կերպ, չա՞տ ճարպիկ կերպով ակնարկել.— օրինակ՝ երբ համաշխարհային պատերազմով Հայաստանը դարձավ ահեղ կռվի դաշտ, ուր զոհվեցին միլիոնից ավելի հայեր թյուրքերի ձեռքով, որոնց դաշնակցությունը եղ-

բայրութիւն էր քարոզում և համագործակցութիւն, երբ [բանվորական] ընկերվարութիւն իրականացնող սոցիալիստ բոլշևիկները[1] նահատակ Հայաստանը հանձնեցին [թյուրքին] իրենց դահիճներին սոցիալիզմի համար, ու երբ վերջիվերջո ամոթից զարթնած մարդկային խիղճը [լուծեց] համաձայնվեց ստեղծել ազատ Հայաստան, այդ ժամանակ գյուղացիք նստած իրենց ավեր տների առաջ... մի մարդ եկավ և լուր ու նամակ բերեց Ուստա Կարոյից...

— Անի. Ես սոցիալիզմին հակառակ չեմ և հավատում եմ նրա հաղթանակին. սոցիալիզմի իրականացնելը կարելի է, բայց հիմա — անկարելի է. դրա համար նախապատրաստողական երկար տարիներ պետք են, նախապայմաններ, տնտեսական զարգացած հիմունքներ:

Հայ ժողովրդի ամեն մի գործը, ստեղծված մնացել է թերի, կիսատ, անավարտ՝ չնորհիվ թյուրքերի արշավանքների, ավերածումների, քանդումների: Գրեթե մենք ամեն բան միշտ նորից ենք սկսել, և էլի կիսակատար կործանվել. այսպես ասած մենք ցերեկը շինել ենք, գիշերը նրանք քանդել են: Եվ վերջապես հոգիներս բերաններս առած հասանք XX դարի չեմքում:

Հարութին ասում է, թե ամեն լավ բան երազ է, սուտ է, երիտասարդություն, գեղեցկություն, առողջություն,

---

[1] *պրոլետարիատը... ընչազուրկ* (Ծանոթ.՝ Հեղինակի):

ճշմարտություն, արդարություն, իրավունք, սեր, գութ, բարություն — սուտ են. իսկ չարը, կեղծը, ցավը, ծերությունը, սպանությունը, ծեծը, տանջանքը, մահը ճշմարիտ են:

Կարոն ասում է. օր ու գիշեր քուրդ ու թյուրք հայերին չարդում են, չարաչար. անտեր է հայը, զենք չունի, պաշտպան չունի. մահմեդականները հայերին կոտորում են, իբրև քրիստոնյաների, և ամեն տեղից մահմեդականները թափվում են Հայաստան թյուրքերին միանում՝ չեչեն, չերքեզ, լակղի, արաբ, առնաուտ, քրիստոնյա չարդելու, իսկ ոչ մի քրիստոնյա ազգ մեզ օգնության չի գալիս: Ռուսն ասում է, թե Հայաստանը պետք է առանց հայերի, մյուս քրիստոնյաները նույնն են անում, թեև նույնը չեն ասում: Մենք մահի բերանն ենք. մի քանի տարի անց — հայ չի մնա արևի տակ:

Եվ Ուստի աչքերը լցվեցին արյուն-արցունքով:

Հարությը այսպիսով հասունանում էր «ոչինչի-հեչի» գաղափարին:

— Մի տխրիր, Ուստա, մի լաց, ամեն բան կանցնի. լացողն էլ, լաց տվողն էլ...

— Կարոն ասում է. պարոն Կայծակ, կասես, որ երկու կռիվ ունենք՝ տանը և դուրսը, թյուրքի և Հարությաի դեմ, այսինքն ես գնացել եմ իմ խմբով թյուրքի դեմ կռիվ, մեկ էլ կլսեմ, որ ներսը կռիվ կա. ինչ պիտի անեմ. ետ պիտի դառնամ, թե պիտի կռվեմ թյուրքի հետ:

– Չէ, դու կկռվես էնտեղ, տունը մնացողները՝ տանը:

– Դեհ, էն ժամանակ տունը մնացողներից էլ մարդ չի դա թյուրքի դեմ, ու կարելի է թյուրքի դեմ կռվողներից էլ մարդ գնա տունը. կվախենամ, էնպես դուրս գա, որ էլ ոչ տանը լավ կռվենք, ո՛չ դուրսը, կամ երկու տեղն էլ հաղթվենք: Լավ չի լինի, որ առաջ մեկն աննենք պրծնենք, հետո դառնանք մյուսին:

Անի. Ծերուկն ասում է. Դաշնակցությունը կուզե մեր հարևան ժողովուրդներն մեզ հետ դաշնակցե. ծիծաղելի քարոզ. անհեռատեսություն. ավելի չո՛ւտ է անպատճառ, հարևաննները կդաշնակցեն մեր դեմ, և հատկապես դաշնակցության դեմ, որ այդ գաղափարը կքարոզե: Թյուրքին, քրդին և նույնիսկ վրացուն միայն ույժով պիտի քարոզես. ույժ ունեցիր նրան ծեծելու, նա կլսե քեզ... և հայն էլ կատարած կլինի իր միսիան՝ կրթել, լուսավորել իր շրջապատը. ջահակիր աղդ:

Մոնղոլ ցեղը՝ թյուրք-թաթար՝ կրակի պես լիզեց մեր աչխարքը, ավերեց-ցամաքեցրեց: Աստված նրա արմատը կտրե, չորացնե:

Կարոն Հարուքին պատմում է, թե կայծակը ասում է, թե եվրոպացիք թյուրքերին չա՛տ են սիրում, որովհետև օգուտ ունեն, փող են ստանում. թեև թյուրքերը եվրոպա-

ցոց աչքի առաջ օրը-ցերեկով հայերին սպանեցին, կին, եբեխա, ծեր, տները քանդեցին, վառեցին, եկեղեցի, քահանա, գիրք պղծեցին, բայց էլի եվրոպացիք ասում են, թե թյուրքերը ազնիվ մարդիկ են, բարի, աստվածավախ. էդ եվրոպացիք ոչ միայն անգութ են, անխիղճ, այլև անամոթ են, լիրբ, լիրբ...

Եվ ուրիշ բաներ էր պատմում, այս բոլորը Հարութի հոգին լցրին հուսահատությամբ և ցասումով. և ելավ նզովեց արար-աշխարհ և Աստված:

Փիլոսին կամ Գասպարին՝ դուրս բերել չա՜տ միամիտ, պարզ մարդ. նախիվ, երեխա, որ հավատում է Ուստին անպայման, նրա հեքիաթներին, քարավանին և նպատակներին. և ուղղակի անճնվեր մինչև մահ:

Կինը սատանի թառափ է:

— Կայծակն ասում է.— Է՜հ, եվրոպացի՜, մենք ի՜նչ մեծ կարծիք ունինք դրանց վրա. փողապա՜շտ, ուրիշ ոչի՜նչ. ի՜նչ արդարություն, ազնվություն, ճշմարտություն, կրթություն, սո՜ւտ խոսքեր են, սո՜ւտ ու փուտ...

218. <ՍԿԶԲՈՒՄՆ ԷՐ ԲԱՆԸ...>

«Սկզբումն էր Բանը. և Բանն Աստուծոյ մոտ էր. և Աստված էր Բանը:

Նա սկզբումն Աստուծո մոտ էր: Ամեն ինչ նորանով եղավ, և առանց նորան ոչինչ չեղավ, ինչ որ եղավ:

Նորանով էր կյանք, և կյանքը մարդկանց լույսն էր: Եվ լույսը խավարումը լույս էր տալիս. և խավարը չիմացավ նորան:

Աչխարքումն էր, և աչխարքը նորանով եղավ, և աչխարհքը նորան չճանաչեց: Իրանների մեջ եկավ, և իրանները նորան չընդունեցին»:

219. ԱՆԻԻ [ԿՈՐԾԱՆՈՒՄԸ] ԿՈՏՈՐԱԾԸ 1064 Թ.

Ալփասլանը կրակի պես լիզեց ամբողջ Արարատը: Մտավ Անի, այնքան կոտորեց, այնքան կոտորեց կին, երեխա, այր, որ օրայների (օրան) պես դիզեց քաղաքում. ողջ քաղաքը ծայրեծայր ծածկեց դիակներով. Ախուրյանը արյան գույն ստացավ: Կողոպտեցին ամեն տուն և եկեղեցի, այրեցին, մոխրացրին, ամեն արվեստ, գեղեցկություն կամ ավերեցին, կամ հափշտակեցին. ժողովրդից չատերին այրեցին և գետի մեջ խեղդեցին:

Մայր եկեղեցու հռչակավոր արծաթի մեծ խաչը վեր առան, և բյուրեղե ջահը, որ Սմբատ Թագավորը բերել էր տվել Հնդկաստանից՝ փչրեցին: Խաչը տարավ և Նախճավան դրավ մզկիթի դռան հառաջ ոտքի կոխան՝ անարգելու համար այն:

Երվանդ Թագավորը 80 Թ. չինեց Բագարան քաղաքը, և այնտեղ տեղափոխեց Արմավիրից կուռքեր. և իր եղբայր Երվազ քրմապետ կարգեց: Բագարանի և Երվանդակերտի միջև (Ախուրյան և Արաքս) տնկեց մայրի անտառ, որ կոչվեց Ծննդոց անտառ, ու լցրեց և այծյամներ, եղինս, եղջերուս, ցիռ, վարազ:

Սմբատ սպարապետը բռնեց քրմապետին, պարանոցից մի երկանաքար կապեց և դեսը խեղդեց:

220. ՓՈԽԱՆԱԿ ԹՈՒՄԱՆԻ ԽՄԲԻՆ, ՍԱՍՈՒՆԻ 1914 ԹՎԻ ԿՌԻՎՆԵՐԸ ԵՎ ՋՈՀԵՐԸ

Կայծակի ճառերից: Նրանք հերոսներ են, Թումանը, Վաղոն, Մարտիրոսը... Ամենքը երիտասարդ, ոմանք գրեթե պատանի, կյանքով, կորովով լի, գեղեցիկ, գեղեցիկ, ամբողջ ապագան սիրով ու բախտով լի վառ առաջները, բայց նրանք արհամարհեցին այդ երկրորդական դանճերը՝ գոհ բերեցին հայրենիքի համար, հայ ժողովրդի համար, ավելի մեծ բանի համար, քան իրենց անձնական կյանքն ու երջանկությունը. նրանք ուրիշին, հայրենիքը, ազգը հազար անգամ ավելի սիրեցին, քան իրենց անձը, և դրա համար մահ ընդունեցին՝ կյանք տալով հայրենիքին:

Մենք էլ ենք ապրում, դողում ենք կյանքի համար, ժլատի-գծուծի պես խնայում ենք մեր օրերը — գաղափարին գոհ չբերելու համար. տեսեք՝ նրանք ինչքա՜ն մեծ են մեզնից, մենք նույնիսկ մեր փողն ենք խնայում, իսկ նրանք իրենց կյանքն են տալիս...

Բայց կգա մի օր, և մենք էլ միլիոնավոր մարդկանց պես կմեռնենք ու կմոռացվենք, իսկ նրանց անունները աստղերի պես հավիտյան կապրեն և կփայլեն ազգի գլխի վերևը. որովհետև նրանք աղբյուր եղան ուրիշի համար, որ անուշ երգելով պիտի երթան հավիտյան՝ հայրենի դաշտերը կենդանացնելով. այստեղ է ասել Եղիշեն — մահ կա մահ է, մահ կա անմահություն է:

Վարժապետն էլ է խոսում, Տիրացուն էլ — որ ասում է՝ յորենի մասին՝ որ ընկնում-մեռնում է...

— Ջանազան ճառերի համար:

Մահմեդական զզվելի, վայրագ, անազնիվ, ստոր, նենգ. տղամարդ տարրը ամեն կողմից օղակել է, երկաթե օղակով չուրջ-պատել մեր հայրենիքը. բայց մենք ուժ ունենք, եթե կամենանք, կարող ենք փշրել այդ օղակը:

221. ԹՈՒՄԱՆԻ ԽՄԲԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ՕՐԸ

— Ղուկասի կրծքին զարկելուց հետո, երբ Ուստային զինվորները թևերն ընկած տուն տարան ու քեֆ սարքեցին, երգեցին.

«Մենք անկեղծ զինվոր ենք առանց ի վիճակ...»

«Ստամբոլը պիտի դառնա արյան ծով».

Այս տողը մի յոթն անգամ կրակոտ կրկնեցին...

222. ԱՆԻ

— Եթե սխալ տանենք... վաղը կգա նոր սերունդը մեզ նզովելով կկրկնե մեր այսօրվան և մեր 1000 տարվա տառապանքները:

— Ուստան ուշի-ուշով, քննական հայացքով կնայեր Անիի չենքերը՝ վարպետության, ճարտարապետության տեսանկյունից:

— «Մհերի» վեպը դնել կամ այստեղ, կամ մի այլ տեղ:

— Թովմա առաքյալի երազը. պատմում է մի ծեր քահանա...

— Ոսկե քաղաքի մասին պատմում է մի ինտելիգենտ մարդ...?

— Թյուրք-թաթար-քուրդ — այդ խավարի, լժի ծնունդները, չարի, ավերի, սրի հրեշները, այդ գազանները, լույսի, գիտության, ստեղծագործության, շինարարության թշնամիները, քաղաքակրթության փչացնողները... Դրանց գլուխը պիտի ջնջխել, դրանց պիտի փոշի չինել, լծել աշխատանքի, մարդ դարձնել, եթե կարելի է. եթե ոչ — ջնջել, ջնջել. սա պիտի լինի մեր ազգի գործը, պատմական դերը, մեր պետության, մեր սոցիալիզմի մեծ գործը, մեծ նպատակը:

— Սոցիալիզմ — ազգի ծոցում. ազգերը իրենց համար, մենք էլ մեզ համար:

— Կարոյի երազը Անի,— Հայաստանն ազատ, չեն, ուրախ, բախտավոր, ծաղկած, լուսավոր, հարուստ. վանքեր, քաղաքներ, դյուղեր — նորոգված, պայծառացած:

— W. Վայտմանի խոսքերը Հայի մասին.

Գլադստոնի խոսքերը.

Հաքստհաուզենի խոսքերը:

— Հայը՝ ապագայի ազգն է:

— Թաթարները, մոնղոլները, թյուրքերը՝ երբ արշավում էին Հայաստանի և ուրիշ ազգերի վրա, անխնա կոտորում էին, այրում, երեխա, ծեր, կին մորթում՝ այդպիսով սարսափ էին ձգում ժողովուրդների վրա, ընկճում էին նրա հոգին՝ դեռ չհասած, չտիրած, հեռվից հաղթահարելով. հեռավոր տեղեր լսում էին դրանց մասին ու զարհուրած, գլուխը կորցրած դիմադրության ուժը կորցրած՝ խառնիխուռն փախչում էին: Այդպես էին հաղթում:

— Ժամանակը չպիտի թուլացնե մեր վրեժի բոցը թյուրք-քուրդ-թաթարների հանդեպ. չպետք է հավատալ երբեք նրանց բոզ լեզուներին. նենգ են նրանք և դրու-

ժան. օձ են՝ միշտ թունավոր, հավիտյան թունավոր, խայթիչ: Ջախջախիր նրանց գլուխը, ուր որ կհանդիպես: Դրա մեջն է մեր և աշխարհի փրկությունը:

Եվրոպան չի ճանաչում նրանց և իր տեսակետով է դատում: Եվրոպայի կարծիքը մեզ համար արժեք չունի:

— Սոցիալիզմը, ինչպես և ամեն եվրոպական երևույթ, չարժուամ, բնական է և տրամաբանական, որ պիտի մեր երկրի պայմաններին հարմարեցնենք:

— Ապազգային սոցիալիզմը լինում է ի հաշիվ փոքր ազգությունների. անհայրենիք սոցիալիզմը զրկում է մարդկային ամենաքաղցր գանձից — հայրենիքից միայն փոքր ազգերին. այդ սոցիալիզմը մեծ ազգերի աշխարհակալական ձգտումի տարբեր երեսն է, տարբեր գործոնը, սակայն նպատակը միշտ նույնն է — ճուլել փոքր անհատական խմբումները մեծերի մեջ: Այդ միջազգային սոցիալիզմից կշահեն անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, ռուսները և այլն: Փոքր ազգերը պիտի աչքերը բանան այդ վտանգի առջև, և սոցիալիզմը ազգայնացնեն:

— Թյուրք վայրենի, բարբարոս ցեղը, որ մարդագայլին ավելի մոտ է, քան մարդուն, չնչել է ու չնչում է հայի պես մի կուլտուրական ժողովուրդ: Պարզ ու որոշ. գայլը պատառում է մարդուն, և մյուս մարդիկ, եվրոպացիք, որ ուժ ունեն գայլին զսպելու, ընդհակառակը խրախուսում են նրան, ատամները սրում, և պատռված մարդու գրպանները կողոպտում...

— Ծերունին: Հայրենասեր է, դեմոկրատ, ազգային սոցիալիստ, միլիտարիստական. հակառակ թյուրքահայ դաշնակցության — համերաշխության,— Ֆեդերացիայի: Հայրենասեր է, որովհետև հայը ընտիր ցեղ է, լուսավորող, առաքելություն ունեցող. իր խոսքը պիտի ասե՝ որ խանգարել են նրան ասելու: Դեմոկրատ է, որովհետև հայ

ժողովուրդն է, որ պայքարել է, նա է, որ տանջվել է. վերին շերտերը փախել են կամ պասիվ եղել, հարմարվել. սոցիալիստ է՝ որովհետև ազգի մեծամասնությունը պիտի լավ ապրի. միլիտարիստ է, որովհետև շրջապատված ենք բարբարիկ ցեղերով, որոնք միայն զենքն են պաշտում. հակաֆեդերալիստ է, որովհետև չի կարելի թշնամու հետ դաշնակցել, նենդ, խաբեբա, այդ թշնամու հետ:

Ծերունին հայության խղճմտանքն է, ազատ, բացարձակ, առանց պոլիտիկայի, պայմանների, այն, ինչ որ ուզում է հայությունը.— բացարձակ անկախություն, տեր յուր երկրի և ճակատագրի. նա մեծ համարում ունի հայության դերի մասին, ոգևորված է հայությամբ. ատում է անսահման կրքով թյուրքին և հայու թշնամիներին. ատում է ռուսին, վրացուն, քրդին, եվրոպացուն, և չի հավատում նրանց ո՛չ մեկին, ո՛չ մի խոստումի. ատում է միջազգային սոցիալիզմը, որ անտարբեր է դեպի հայը և թյուրքին բարեկամ:

223. Անի

Անի, պարոն Կայծակը գտել էր «Կռունկ» հին ամսագիր, 1861 թ.: Կարդում էր, ապա բարձրաձայն ասաց.

— Հին ցավ է, բայց միշտ նոր. ա՛յ այս կտորը —

«Դու պատմիր նույնպես թե մեր վանքերը
Օրավուր քանդում են, կրում են քարերը...
Ասա՛, չատ վանքի անդին հնությունք
Վիմափոր խաչերն ու ճարտարություն
Ա՛խ, այն անօրեն պարսիկն ու քրդեր
Փշրել են քարով և փլցրել սյունք» —

– Մինչև հայը ազգ չդառնա, նա մարդ չի դառնա:

– Ով որ մի կոպեկ ունի, պիտի տա հայրենիքին,

Ով որ մի փամբուշտ ունի՝ պիտի տա հայդուկին:

– Կարո՞ղ եք պատկերել ազատ Հայաստան. Մասիսից մինչև Վան, Սասուն, ազատ, երջանիկ: Այդ երազը վաղը կյանք կդառնա...

Ո՞վ կարող է կասեցնել հեղափոխության ընթացքը – ոչ ոք: Նա գետ է, հեղեղ է. ով կարող է հետ դարձնել նրան:

[Ո՞վ կարող է կանգնեցնել]

224. ԱՆԻ

– Ոտների տակ թնդում է հողը, գետինը:

– Քարերը սրբատաշ, հղկված և թեթև:

– Փողոցներ Անիի մեջ – Վերին, Ներքին փողոց, Զարփնա փողոց, Դարբնափողոց:

– Անիի պատերի վրա գրված.

«Աչխատիլ և երբեք չհուսահատիլ»:

«Այսքան զորություն ունեցող մի ազգ եթե մինչև հիմա չի անհետացել, այսուհետև երբեք չի անհետանա» (ֆրանսերեն և <անընթ.>):

– Զամչյանի պատմությունից.

«Ազգ մեր եւ եկեղեցի իբրեւ ողկոյզ ճմլեցաւ ի հնձանս, ոտնակոխ եղեւ թշնամեաց ժողովրդի մեր, յաւեր դարձան քաղաքք և աւանք մեր...»

– Անին կործանել են Ալփասլանը: Փառլու, սրա ժամանակ էլ Այծեմնիկ տիկինը: Հետո Զարմաղան խանը:

– Անթիվ բուեր կան աշտարակներից ու պարիսպների բուրգերից վայող, թախիծ սփռող տխուր քաղաքի վրա:

— Անին ունեցել է 40 դուռ, 40 բանալի ըստ պատմության: Դռները — Ավագ դուռ, Ծաղկոցաձորի դուռ, Կարուց դուռ, Դունա կամ Երևանյան դուռ: Կամրջադուռ, Գլիճորի դուռ:

— Ամայի փողոցներում վազում են[1] Արարատի և Արագածի հողմերը, քամիները:

— Աստուծո ձեռքից են ելել այս սարերը, ծառերը, ճանճերը. նրա մատների գործն է:

— Մասիսը տեսնելով՝ իրագործում ես մտքում ունեցած իդեալը մեծության, վեհության մասին:

Մասիսը ամեն գովեստներից ու երևակայության չափերից առավել է, նա ինքնագլուխ լեռ է վսեմ, հոյակապ, և իր պարզ վեհափառությամբ:

— Ախուրյանը Անիի ձորում հոսում է եղեգների միջով, առանց ձայնի, չունի չչնջյուն, խոխոջյուն, չունի չառաչ. տխուր է և թախծալից:

225. ԱՆԻ

Սոցիալիստն ասում է թե՝ անմիտ, անբնական և վնասակար, անմարդկային բաներ են՝ հայրենասիրություն, ազգասիրություն, որոնք մղում են ազգերին իրար դեմ՝ պատերազմի, որը ամենասրիկա բանն է: Ոճրագործ են հայրենասերները:

Սոցիալիզմը — ահա ճշմարիտ քրիստոնեությունը. նա պիտի վերջ տա պատերազմներին ու կեղեքումներին, և

---

[1] Բնապրում՝ է:

սուլթանին, և ցարին: Նա դրախտ պիտի դարձնե աշխարհը, և մարդիկ — ընկերներ:

Այն հարցին թե՝ ժողովուրդները պատրաստ չեն, և ազդության միջոցով պիտի հասնել հանրամարդկայինին՝ նա պատասխանում է.— այդ տատիս խոսքերն են. [մարդ] ժողովուրդները երբեք պատրաստ չեն լինի, և իշխող դասերը երբեք չեն թողնի՝ որ նա պատրաստվի. մենք ունենք մեր կանտեան իմբերատիվը — «Եթե դու չես ուզում ինձ ընկեր լինել, դանգըդ կփչրեմ»: Բռնությամբ, այո՛, և հեղափոխությամբ, բռնությամբ զինված մարգարեներն են միայն հասել իրենց առաջադրված նպատակներին:

Դուք չեք հավատում մարդկության հաղթանակին. Բուդդայի, Լաոտձիի, Քրիստոսի, Սոկրատի, Կանտի, Մարքսի իդեալները ծաղր են ձեզ համար, և մարդը՝ Պրոմեթեոսը, ձեր կարծիքով միշտ շղթայված պիտի մնա՝ և պատերազմի ու շահագործման անգղը պիտի կրծե միշտ նրա լյարդը. բայց ինքը Պրոմեթեոսը իր դարավոր տառապանքի մեջ չկորցրեց յուր հավատը — որ բռնությունը պիտի չնչվի, և իմաստությունը պիտի հաղթե: Մենք բռնություն ենք գործում բռնության դեմ: Մի կռիվ, վերջին կռիվ և խաղաղություն ու արդարություն իշխելու են հավերժապես:

— Հերակլիտն ասել է — իրավունքի համար ժողովուրդը պիտի կռվի: Հայ ժողովուրդը ուրեմն պիտի կռվի:

— Այլևս չպետք է իշխե «հզորի իրավունքը», այլևս չպետք է սուրը դնել արդարության նժարում, պիտի գա Եսայի մարգարեի տեսիլը՝ ընկերական աշխարհը:

— Սխալ է Շոպենհաուերը՝ որ ասում է թե օձին կրթելով՝ թույնը չես հանել, որ մարդկային պատմությունը՝ մի արյունոտ, անմիտ, անտրամաբանական զառանցանք է. ոչ,

Նա նպատակ ունի — որ հասնե բարեշրջությամբ՝ իր մեջ կրելով հեղափոխություն ևս,— նպատակ՝ բացարձակություն՝ ապատ, արդար, դերմարդկային բացարձակություն:

(Biologie des Krieges. օգտվել այդ դրքից)

— Սոցիալիստը: Սխալ է, թե պատերազմները կրթում ու կազդուրում են մարդկանց, ընդհակառակը՝ այլասերում են նրանց, թուլացնում, անբարոյականացնում և մթքով ու հոգով ստորացնում, ինչպես թուրքերին, որ ամենապատերազմիկ ցեղն է:

Իսկ դրա փոխարեն հրեանները՝ որ ռազմիկ չեն՝ ամենահեռանդուն, տոկուն, աճուն, խելոք, հանճարեղ, երկարակյաց ցեղն է:

Պատերազմների մեջ սպանվում են քաջերը, մնում են վախկոտները, ստորները, թուլամորթները...

226. Անի

— Երբ մարդ այս հոյակապ, բարձրահաճ կամ ոճավոր ավերակների նշխարների վրա ոտք կոխելով, երևակայությամբ պանա դեպի նրանց կանգուն, փառավոր, նախկին վիճակը, ի՛նչ չքնաղ պատկեր կտեսնի. ստեղծող ժողովուրդ, ճոխություն, մշակույթ, դիտություն, ուժ, ազգային կամք — կյանք, հայկական ոգի ու տիպ... և ապա աչքը դարձնե իրականին — դերեզման, ավեր, որբություն, քայքայում, անկում, կորցրած ոճ ու ոգի, տգիտություն. [բարբարոսություն]... և այս ամենը վաչկատուն, վայրի թուրքն ու իսլամը: Սարսափելի է, անարգանք, անխղճություն: Վայրի ուժի հաղթանակը ոգու վրա:

Ո՞ր ազգն ունեցավ այսպիսի զարհուրելի ճակատագիր:

Դարերով ժայռոտ մի երկիր հղկես, մշակես, ստեղծես մշակույթ, ոճ, գեղեցկություն, ոգի, բանաստեղծություն, արվեստ.— և վերադ խուժեն բորենիների մի անդուլ, անդադար հեղեղ, չար, լիրբ, վայրագ, փչրեն, խորտակեն քեզ, որ իրենց վայրագ յուրտը, անասնական յուրտը դնեն այդ գեղեցկության վրա, և ցնկնեն անթիվ բորենիներ, մինչև այսօր, և դեռ չա՜տ ապագաներում:

Եվ զգալ այս կռվի մեջ միայնակ, ողջ քաղաքակիրթ կոչված մարդկության մեջ. XX դարում, մենակ, դեմ առ դեմ եվրոպական զենքերով, փողով, խորհուրդներով զինված անլուր դահիճների...

227. ԱՆԻ ՌՈՒՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թեև ռուսը մեր գլխին չատ փորձանք է բերել, ծուռ աչքով է նայում մեզ, վրացիներին գրգռում է մեր դեմ, խլեց մեր կալվածքները (եկեղեցու, դպրոց), փակեց ուսումնարանները, կուլտուրական հիմնարկությունները, կրոնափոխություն է տարածում մեր մեջ, տարրալուծում է մեզ, փչացնում, անբարոյականացնում, պետական մեքենայի մեջ չի առնում մեզ և, և որ ամենից վատթարը — նրա արևելյան քաղաքականությունը — խրախուսում է հայկական ջարդերը, սուլթանին նեցուկ է լինում, և այլն, և այլն, բայց դարձյալ պիտի արդարությունը խոսենք, դա ռուս բյուրոկրատիան է, կառավարությունը. ռուս ժողովուրդը և իր ընտրանին, մտավորականությունը, ինտելիգենցիան մասնակից չէ այս արհավիրքներին,

Հիմարությունների, ռուս ժողովուրդը և նրա ընտրանին ամբողջ աշխարհի լավագույն տարրն է. երկրագնդի ամենից լավ ժողովուրդը ռուսն է. մարդասեր է, ղդացում ունի. բարի է, սեր ունի. ինչ են եվրոպացիք՝ անգլիացիք և գերմանացիք, ավազակներ ու եսամոլ, չահագործող, անսիրտ մարդիկ են, մարդ-գազաններ. ֆրանսիացիք՝ կեղծավոր և չահամոլ. թուրքի մասին խոսք չկա որակելու՝ այնքան աննման բորենի է:

228. <ԱՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ. ԾԵՐՈՒՆԻՆ...>

— Անի քաղաքում. Ծերունին (Ուստա Կարո):

Թուրքերը կողոպտում են հայ ժողովրդին, հայ հարուստներին, գյուղացուն, վանքերը, թալանում են, սպանում են և այդ փողերով կաշառում են եվրոպական մամուլը (ֆրանսական, գերմանական, անգլիական և այլն), կաշառում են դիպլոմատներին՝ մինիստրներին, սենատորներին (ֆրանսական, անգլիական, գերմանական, ավստրիական) և մեղադրում են հայերին (զոհերին), հայ ժողովրդին, հայ գյուղացուն, պաշտպանում են թուրք ջարդարարներին, արդարացնում են սուլթանին, փաշաներին, պաշտոնյաներին, թուրք և քուրդ ջարդարար մասսաներին... Շատ ստոր են, լիրբ, անազնիվ եվրոպան:

229. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անի: Մեկն ասում է, թե դաշնակցությունը կործանում է ազգի տունը: Մի քանի տասնյակ մարդ է ղրկում Հա-

յաստան, որոնք կոտորում են հանդիպող թուրք կամ քուրդ գյուղացուն, և սահմանապահ զինվորին կամ զինվորներին, և գրգռում են թուրք պետության ու ամբոխին, և մեկի տեղ 100 կամ հազարն են ջարդում: Եվրոպա էլ գոյություն չունի, անտեղի հույս և սպասում:

Գոնե միանան թուրք հեղափոխականներին, թուրք և քուրդ բանվոր, ռանչպար, չահագործվող աշխատավորների հետ և միասին ձգտեն, կռվեն, տապալել սուլթանին, թուրք վայրագ, դաժան պետությանը:

Ջեն հասկանում, որ հայը մենակ չի կարող կռվել սուլթանի հետ, եթե նույնիսկ թուրք և քուրդ ժողովուրդները չեզոք մնան, թո՛ղ որ նրանք չեզոք չեն մնում և միանում են ջարդելու, ավերելու...

Կռիվը պետք է լինի սուլթանի դեմ, և ոչ թուրք ազգի դեմ, թրքության դեմ:

Սրանք բոլորը Ուստայի սրտով են. Ուստան Ջավուշին ասում է, թե — իմ սրտովս է խոսում, իմ սիրտս էլ էդպես է մտածում, միշտ, միշտ, ամեն տեղ:

230. ԿԱՅԾԱԿԸ ԿԱՄ ԾԵՐԸ. ԿԱՄ ՄԻ ՈՒՐԻՇԸ

Ավելի շուտ Անիում:

— Ահա այս ավերակները, այս հոյակերտ մարմնացումները հայկական երազի, գեղեցիկ տեսիլի, Պլատոնի գեղեցիկի գաղափարը այս քարերի մեջ է մարմնավորվել, բայց տգեղ, ավերիչ մոնղոլը պղծեց ու աղբի հետ խառնեց, իր հոգու նման...

Դավաճան, կաշառվող աշխարհ. փողապաշտ, կռապաշտ Եվրոպա, որ փարիսեցու լեզու ունես, պոռնիկի հո-

դի, խոսում ես քարիից և գեղեցիկից, բայց ուժի իրավունքն ես ճանաչում ու երկրպագում: Մոնղոլը եկավ կոպիտ երկաթով տիրեց մեզ, ջարդեց ու կոտորեց, ինչպես ավազակների ոհմակը ներս կխուժե մի տուն, կսպանե բնակիչներին, և իրեն տեր կհռչակե նրանց տանն ու հողերին ու կայքին, և ողջ մնացածներին գերի-ծառա կդարձնե (այնպես էլ թյուրքը), և մարդիկ կվավերացնեն նրա ոճիրը ու հետը կքաղեկամանան:

Այդպես և թյուրքը. եկավ Հայաստան և Բյուզանդ. ավիրեց, կողոպտեց, ստրկացրեց. և Եվրոպան ճանաչում է բռնավորի, ավազակի իրավունքը, որովհետև ինքն էլ նույնն է, ավազակ, բռնավոր...

— Ես գերեզմանում հանգիստ չպիտի քնեմ, եթե հայերը թյուրքերից 70 պորտ վրեժ չլուծեն: Նզովված լինի այն հայը, որ հաշտության ձեռք պիտի մեկնե իր հորը, պապին սպանողին. թյուրքի հարվածին հակահարվածը պիտի դա թեկուզ 1000 տարի հետո:

— Ինչպես որ եթե ամբողջ հայությունը, մինչև վերջին հայը թյուրքը մի օր կոտորե, և այդ օրը պայծառ լինի, ու հայի համար մի կտոր ամպիկ երկինքը չի հանդես բերի, այնպես էլ ոչ մի եվրոպացու, նույնիսկ հայասերի, աչք մի կաթ արցունք չի թափե հայ ողջ ազգի մահի վրա:— Հայեր, խելքերդ հավաքեցեք...

231. ԳԵՐԵԶՄԱՆՆՈՑ

— Գերեզմաննոց: Ամեն քարի տակ մեռելներ. եթե վեր կենան, ի՛նչ մարդիկ, կիներ, ասպետներ՝ որ իսկույն ձի պիտի ուզենան, երգիչներ՝ քնար պիտի խնդրեն, աղջիկներ՝ սիրահարներ, և այլն, և այլն:

— Անի: Պարիսպների մեծ դռներից դուրս պիտի պոռթկան ձիավոր ասպետները, իշխաններ, սեպուհները, փողով և թմբուկով և պիտի սլանան թշնամու դեմ, հաղթանակի համար:

— Անիում (Հայաստանում, ավերակներում կամ հենց ամայի դաշտերում, ուր պատմություն կա, պատմական է կամ հին է մի խոսքով) զգում եմ, որ քայլում ես կամ ապրում ես պատմության մեջ, աչքերը լարած նայում ես՝ դեպքերը բաց չթողնելու, ականջներդ լարած — ամեն մի տեղից, ամեն մի քարի տակից խոսք կարող է լսվել, սպասում ես:

— Հայ գյուղացին սերտորեն կապված է, ճուլված, չաղկապված Հայաստանի հետ, հողերի, ժայռերի, ջրերի... մեկը մյուսին լրացնում է:

— «Նա հավատալու համար պիտի տեսնի: Նրան չի բավում իր երևակայությունը. նա պահանջում է գաղափարի կամ զգացումի չոշափելի պատկերացում»:

— Հին գերեզմաններոց, ուր էլ չեն թաղում, մի մարդ էր թափառում, ծեր. խարխլած, մահվան դրացի. այս տեսարանին ներդաշնակ էր այս մարդը: Լրացնող:

232. <ՍՐԻԿԱ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՈՒՆԸ ՄԻ ՏՎԵՔ...>

— Սրիկա Եվրոպայի անունը մի տվեք, երբ խոսք է բացվում հայկական հարցի մասին:

— Սգավոր կինը՝ մեղմակի բաժան շուրթերով:

— Ուստա Կարոն հաճախ շատախոսում է, երբ գրգռվում է, ներկաների ուշադրությունը խթանում է նրա փառասիրությունը: Կամ իր ձայնը գրգռում է, բորբոքում է իրեն. արյունը տաքանում է, երևակայությունը կենդանանում է:

— Վեպի նկատմամբ:

Երբ մեկը խոսում է, պետք չէ, որ թատերական ձևով դիալոգ լինի (հաճախ այդպես պետք է, մանավանդ կարոյի և Հարութիի զրույցի մեջ), այլ պիտի նկարագրել, թե մեկի խոսքը ի՞նչ հոգեկան անդրադարձում է գործում լսողի վրա, ներքին և արտաքին նշաններով: Դեմքը ի՞նչ եղավ:

Այլապես արձանագրություն դուրս կգա: Բայց ամեն անգամ նույնը չպիտի կիրառել, որովհետև ձանձրալի կլինի և երկարաշունչ:

Ամբողջ վեպի ոճը պիտի լինի կտրուկ, սեղմ, վառ, թարմ, կենդանի, աշխույժ, և ոչ ճոռոմ, պերճախոսական: Շատախոս չպիտի լինի, թեև վեպը կարող է հատորներ կազմե:

— Անին մի քարեղեն դիրք է, մի դյուցազներգակ-մատյան:

Անիի ամեն չենքը — մի-մի քարեղեն քերթվածներ են, բանաստեղծություններ:

— Ուխտավոր, հավատավոր, գաղափարապաշտ հայ մեր սերունդը ոչնչացավ... ամեն ոք դավաճանեց նրան: Ամեն գույնի սոցիալիստներ, գրողներ, կուսակցություններ, ազգեր...

— Պետք է այս ցեղերը, տոհմերը խառնել, զանգել, զանգված չինել: Ազգ կաղապարել հետո նրանից:

— Վեպը — կյանքի գաղափարական պատկերացումը պիտի լինի:

— Նա ապրում էր իր սրտի մեջ: Իր սրտի մեջ է ապրում նա ամբողջապես: Նա ապրում է իր սրտի մեջ ամփոփված: Աշխարհը իր սրտի մեջն է ամփոփել:

— Կամք = նկարագիր, բնավորություն, անհատականություն: Ուժեղ մարդ:

Մեծ կամքերը կարող են տանել այս բեռը, փրկել ժողովուրդը:

– Տիպ = ձև, տեսակ:

Այս տիպի կոչիկներ = ձևի, տեսակի:

– Լապտերի ոսկե լեզուն:

– Ինչո՞ւց մեռավ: Նաև չգիտենք ասել, թե ինչով էր ապրում: Մի չքավոր պատվավոր մեռելի մասին:

233. ԱՆԻ

Սմբատ Բ. չինել տվեց Տրդատ ճարտարապետի ձեռքով մայր եկեղեցին, բայց վաղահաս մահվան պատճառով՝ լրացրեց Գագիկ Ա-ի կինը՝ Կատրամիտե թագուհին. 989-1001. Գագիկ Բ. Մայր եկեղեցում թագավոր օծվեց 1042 թվին:

Անին ուներ 40 բանալի (40 դուռ):

Անին երեք անգամ սարսափելի ավարի, ավերի ու ջարդի հանձնվեց. Ալփասլան, 1064 թ., Զարմաղան – 1239, Լենկթամուր – 1387:

Անիի դռները – Ավագ դուռ.
Դունա դուռ.
Կարսա դուռ.
Երևանի դուռ:

234. <ԱՆԻՈՒՄ...>

– Անիում, որ թե մենք էն վախտ սաղ լինեին<ք>՝ հայոց թնգավորների վախտը, ու մեզ տային Անին չինե-

լու, չա՛տ բան դհա լավ, ուստությամբ կշինեինք... Մա-ղասա բերդի ուստեն լավ ուստա է եղել, Աստված լուս դարձնե էնոր հոգին:

235. <ՄԻ ՀԱՅ ՄԱՐԴ, ՄՏԱՎՈՐԱԿԱՆ...>

Մի հայ մարդ, մտավորական, Անի կամ Գյումրի, դեմ էր հայկական հարցին, այսինքն, հայ ժողովրդի ազա-տագրական չարժմանը. նա ասում էր՝ թե Եվրոպան կօգ-նե, չի օգնե, հայտնի չէ ինձ, բայց հաստատը կասեմ, որ շատ վտանգավոր, աղետալից բան է՝ գրգռել թուրքին, թուրքը վայրենի վայրագ գազան է և անասուն, անխիղճ, անգութ հրեշ. սարսափելի ոճիրներ կգործե՝ կվառե բոլոր հայերին, կմորթե, կջարդե, կջնջե... գերեզմանատուն կդարձնե Հայաստանը: Թողեք, խաղաղ նստեք, թուրքը ինքնիրեն կկործանվի, պետք չկա, որ մենք էլ նրա հետ կործանվենք կամ մեզ կործանելուց հետո ինքն էլ կոր-ծանվի. միակ խելացի բանն է, ողջ մնալ և նայել, թե ինչ-պես վերջանում է այս գազանը՝ արյունով, ժողովուրդնե-րի դիակներով զանգված պետությունը, աշխարքի ամե-նագազան, ամենազզվելի, ամենամուռտատ ժողովուրդը:

236. <ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ ԽՈՒՄԲԸ ԱՆԻՈՒՄ...>

— Ուստա Կարոյի խումբը Անիում խմեց, խմում էր և դինի էր հեղում ավերակների կտորների վրա, ինչպես սովորություն է գերեզմանների վրա, թափում են, հետո բուտիլկանները կոտրեցին քարերին զարկելով:

— Պարիսպների վրա նետերի անթիվ ծակեր:

Այլ հարվածներ:

— Ավագ դռան դեմ, մուտքի, պարիսպի վրա կա շրջանակի մեջ մի բարձրաքանդակ. վազող առյուծ: Երևի, Բագրատունիների զինանշանը:

— Կարդալ Լաստիվերտցին՝ Անի՝ Թագավորների մուտքը՝ ողբի մեջ:

— Թուրքերը ոչ միայն ավերել են հայ քաղաքներն ու շենքերը, այլև բնությունը՝ դաշտ, ձոր, անտառ, գետ, լիճ...

— 1000 տարուց ավել է Անին զարմացնում, հիացնում է մարդկանց չեն թե ավերակ իր վիճակով:

237. <ՈՒՍՏԱՆ ԱՆԻԻ ՄԵՋ...>

Ուստան Անիի մեջ լսեց Հայաստանի ազատագրման մասին թեր ու դեմ կարծիքներ: Անհաղթելի դժվարություններ, ջարդեր, ապարդյուն կոտորածներ:

Եվրոպայի անտարբերությունը: Ցարի հակառակվելը: Ջուր տեղ չարժման մեջ ձգած գործ — հեղափոխությունը:

Այս մտքերն էին, որ նրան մղեցին մեծ ծրագիր կազմելուն — մեծ բանակ կազմելուն:

— Իզուր նահատակություն է,— ասում էին Անիում,— ուղարկել կտրիճ, ջահել տղերք թուրքի բերան. ափսոս են, նպատակի չեն ծառայի: Եվրոպան չի շահագրգռված, դեմ է, կամ անտարբեր է. օգուտը թուրքից է: Էչ նահա-

տակ պետք չէ լինել, այլ բան՝ եթե մեծ բանակ կազմել, մի մեծ պետություն էլ անկեղծ սրտով ու շահով մեզ հետ լինի, կազատվենք: Բայց ո՛չ այն կա — բանակ, ո՛չ էլ — օգնող, պաշտպան պետություն: Անտեր ենք, քիչ ենք, թուլլ ենք, նվազ ենք: Դուք էլ՝ իզուր մի ավելի թուլացրնք, պստիկցրնք մեզ:

Սրանք անհրաժեշտ են, որ Ուստան լուսաբանվի:

238. <ԹՈՒՐՔԸ՝ ՀԱՅԵՐԻՆ ԿՈՏՈՐԵԼՈՎ...>

— Թուրքը՝ հայերին կոտորելով՝ ո՛չ միայն հայության թշնամին է, այլև մարդկության, մարդկայնության թշնամի, մարդկային ցեղի, հումանիստ քաղաքակրթության:

— Կ.Պոլսի հրեաների խախամապետը՝ Նաումը, 1918-19 թվերին, այսինքն՝ հայկական հարցի ժամանակ, գնաց Ամերիկա հակահայկական և թրքասիրական պրոպագանդ տանելու... Սրիկա...

— Հնդկական Գանդին թրքապաշտպան էր և հայերի դեմ:

— Թումանի խումբը — 1904 թ. թուրքերի սահմանն անցնելու ժամանակ կռվի բռնվեց թուրքերի հետ. սահմանապահ ռուսները կրակի տակ առան հայերին, օգնեցին թուրքերին: Թումանը խմբին կարգադրեց ռուսների վրա կրակ չբանալ, հանձնվել նրանց. ռուսները անխնա կոտորեցին հայերին. երկու հայ կարողացել էին հանձնվել ռուսներին. սրանք էլ այդ երկուսին հանձնեցին թուրքերին, որոնք էլ ռուսների աչքի առջև մորթեցին հայ հայդուկներին:

Ամիսներ հետո Ջանփոլադյան Համոն տեռորի տվեց ռուսների պոլկովնիկին:

– Ռուսական դեսպանը (Ֆրանսիայում) ասել է բժիշկ Հակոբ Զավրիևին, թե կարելի է հիանալ հայ խմբերի հերոսությամբ վրա, բայց իզուր զոհեր են, հայկական հարցը չի լուծվի. ո՛չ մի պետությունն չահագրգռված չէ հայերի ազատագրությամբ. բոլորը թուրքերին չոյում են...

– Թչնամին մահմեդական է, էն էլ թուրք:

– Իբրև թե սուլթան Համիդն ասել է, թե ես եմ ստեղծել հայկական հարցը: Այսինքն՝ Խրիմյանին, Նար-Պեյին և մյուսներին ուղարկել է Եվրոպա հայերի հարց բարձրացնելու, Բեռլինի ժողովին: Այնտեղ ռուսների ձեռքից (Հոդված 16) առան Հայաստանը, տվին Անգլիայի և Եվրոպայի հսկողությանը, այսինքն՝ թաղեցին: Գործում էին ոչ թե հայերի օգտին, այլ ռուսների դեմ, թուրքերի օգտին:

– Թուրքերը (Թալաաթի) միշտ միևնույն հանգերգը ունեն – հայերը մեզ դավաճանեցին, մենք էլ կոտորեցինք նրանց. պետական անհրաժեշտություն էր դա:

239. <ԱՅՍՕՐ, 1955 ԹՎԻ...>

– Այսօր, 1955 թվի ապրիլի 30-ին լսեցի, որ Գ. Զիլեբինը եղել է Թրքամոլ, և մենք՝ հայերս, զոհն ենք նրա Թրքամոլության: Նա վարում էր բոլշևիկյան քաղաքականություն մինչև 30-ական թվականների սկիզբը... Բոլշևիկյան Թրքամոլ, Թրքապաշտ քաղաքականություն... Սրիկա, ոճրագործ...

Ասողը նրա գործակիցներից մեկն է, Մոսկվա պատմաբան, դասախոս...

— Հայ ժողովուրդը:

Հայ ժողովուրդը, միամիտ, քաղաքականությունից բան չհասկացող, 19-րդ դարի վերջերից հավատում էր քրիստոնյա պետությունների մարդասիրությանը, քաղաքակրթությանը — Ֆրանսիային, Անգլիային և «արևելյան քրիստոնյաների պաշտպան Ռուսիային»: Նա թուրքերից դարերով չահագործված, ստրկացած՝ բնական է, որ ձգտում էր ազատության, աշխարհի ամենածանր լծից ազատվելու. Բալկանյան ժողովուրդների ազատվելը նրան խրախուսիչ օրինակ էր, և վերջապես «լուսավոր Եվրոպան կար», մամուլը (VII-րդ պետությունը)... ըմբոստացավ խեղճ հայ ժողովուրդը... և կոտորեցին նրան. թուրքը, քուրդը, արաբը, չերքեզը, չեչենը կոտորեցին նրան. ռուս կառավարությունը կոտորեց — հայ-թրքական ընդհարումներ, Թումանի խումբը... և անվերջ:

Եվրոպական պետությունները՝ Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան նպաստեցին թրքերին, խրախուսեցին... եղավ պատմության մեջ չեղած ոճիրը. մի հին ժողովրդի ոչնչացրին, և հազարամյա իր հայրենիքից չպրտեցին դուրս...

Այդ բոլորը արին պետությունները իրենց շահերի համար՝ թուրքերին օգտագործելու, դաղութացնելու, իրար դեմ հանելու, թուրքին իրար դեմ, ռուս, գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի իրար դեմ... մինչև որ գտավ իր հզոր պաշտպանը <անընթ.> ամերիկացի... իսկ մերոնք նայում են այդ, բերաններուն ջուրը գնում է. ինչպես կուզևին նրանք թուրքին գրկել, փայփայել, զոհել իրեն նվիրված հայերին, հող տալ, փող տալ, ուժ տալ... Ջիչերին, և մյուսները անվերջ. Եվրոպան, Ամերիկան չաքարի պես լիզում են թուրքերին, ի՞նչ<ու> ռուսը հետ մնա, չէ՞ որ թուրքը և քարտեզով, և արյունով շատ ավելի մոտ

է թուրքին, քան մյուսները... Ռուսների կեսը մոնղոլ արյունից է, նույն ցեղից է...

Լիզեցեք, պարոննե՛ր, ավելի լավ բանի արժանի չեք...

240. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐՆ Է»

Ուստան ասում է՝ հազար տարի էլ մնա, հազար տարի էլ անցնի Հայաստանը մերն է ու մերը. թեկուզ թուրքերի ձեռքում լինի. Հայաստանը մեր պապենական հողն է, մեր հորական հողը. իրավունքը մերն է, ուժ ունենք թե չունենք, մեկ է: Հայերս միշտ պիտի պահանջենք, ասենք, կռվենք, մեռնենք Հայաստանի հողերի համար. ոչ մի հայ չպիտի հաշտվի թուրքի հետ, հողերը նրան տալու հետ: Մի հայ էլ որ մնա աշխարքում, էդ հայը նորից պիտի ասե, խոսի, պահանջե, կռվի, հողը հետ խլե, հողին տիրանա... նոր հետո մեռնի...

Այս է Ուստայի վերջին խոսքը Զավուշին:

241. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ» ՄԵՋ

Ինչ տեսակի Ռուսաստան էլ որ լինի – ընդունելի է հայերիս համար: Մեզ պետք է զորեղ Ռուսիա, նրա մեծությունը, մեծանալը. ուժովանալու մեջն է մեր փրկությունը, այլապես կորած ենք:

Թույլ Ռուսիան կլինի գերմանացիների, ճապոնացիների և թուրքերի բաժին: Իսկ մեզ համար թուրք չլինի, ով ուզում է լինի:

Սակայն պետություն, անկախություն չունեցող ժողովուրդները տիրապետվում են, ենթարկվում, ձուլվում,

վերջանում: Սա պատմական փաստ է. բայց երբ մի ժողովուրդ գիտակից է, ազգային գիտակցություն ունի (ինչպես չեխերն են և լեհերը), նրանք չեն կորչի, կմնան, չեն ձուլվի:

Բացի այս բոլորից, այն ժողովուրդը, որ ունի լեզու, հայրենիք, ոճ, գրականություն, ազգային ոճ, երաժշտություն, էպոս... նա չի կորչի, հայ ժողովուրդը ունի ազգային ոճ – լեզու, եսի լեզու, մելոս, ճարտարապետություն... նա չի կորչի:

Այսպես խոսում էին Անի, Բագրանում, Գյումրիում, և զորանում էր Ուստա Կարոն:

242. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

– 1919-20 թվերին Անգլիայի գաղութների մինիստրը (Հնդկաստանի նաև) ասաց.

– Չի կարելի հայերի համար ճնշում գործ դնել թուրքերի վրա, Հնդկաստանի մուսուլմանները զայրացած են, վրդովված են այդ հարցով:

– Նույնը ասել է Պուանկարեն, Ֆրանսիայի նախագահը. չի կարելի թուրքերին ճնշել, նրանք Ֆրանսիայի բարեկամներն են: Իսկ ուրիշ մինիստր ասել է. Թուրքերը մեր հաճախորդներն են (մուշտարիները):

– Գերմանացիները, ազգովին, թուրքին օգնական, դաշնակից են, հային թշնամի: Գալով ռուսներին՝ նրանք թշնամացան հայերի հետ հայկական հարցի ծագման օրից:

Երբ Եվրոպան, 1895 թ. միացած ուզում էին սուլթանի վրա ճնշում գործադնել մայիսյան ռեֆորմները ընդունել տալու համար, Կ. Պոլսի դեսպան Նելիտովը հայտնեց

սուլթանին, թե իմ տերը (ցարը) համաձայն չէ պետությունների հետ Ձեզ ճնշելու... «Կոտորեցեք, Ձերդ մեծություն, կոտորեցեք»: Որովհետև ռուսները կարծում էին, թե Անգլիան ուզում է Հայաստան ստեղծել ռուսական հառաջխաղացման դեմ: Դրան լուսաբանում է այն փաստը, երբ 1895 թ. Խրիմյան կաթողիկոսը ուզում էր գնալ Ցարին տեսնելու, թե կաթողիկոսության տրադիցիան էր այցը տալու, և թե մանավանդ խնդրելու կայսրին հայոց հարցի մասին. երկար ամիսներ ձգձգելով ու սպասել տվին կաթողիկոսին, վերջն էլ Պետերբուրգում նրան հասկացրին թե, ինչո՞ւ եք եկել այստեղ, Լոնդոն պիտի գնայիք... Այդ ժամանակ էր, որ արտաքին գործերի մինիստր Դուռնովոն ասաց, չեմ հիշում ինչ առիթով, թե «Մենք չենք ուզում մեր սահմանների վրա նոր Բուլղարիա ստեղծել»: Այսինքն՝ արգելել թուրքին տիրելու:

Երևանի բանդում ժանդարմի պետը ինձ ասաց. «Հայաստան չկա, կա ապագայի հայկական ռուսական պրովինցիա...»

Երբ հարցրի, թե մենք էլ այդ ենք ուզում, միայն որքան կարելի է չուտ, որովհետև ժողովուրդը ոչնչանում է — ասաց. «Երբ որ ազդանշան տանք, դուք էլ կօգնեք մեզ այդ խնդրում...»

Այդ ժամանակվա ռուսները բարձր պաշտոնից մինչև ստորը, ինտելիգենտ թե հասարակ՝ ծաղրում էին հայերին, ատում, և թուրքերին, վրացիներին գրգռում հայերի դեմ, և բարեկամացան տաճիկների հետ, սուլթանի հետ միասին ոչնչացնելու հայկական տարրը. բանդարկություն, աքսոր, դպրոցներ փակել, կրթական, կուլտուրական հիմնարկներ (թերթ, գրադարան, հրատարակչություն) ջնջել, փակել: Կուկունյանի դատ, Օլթիի, Իգդիրի խմբերի ջարդ թուրք զորքերի հետ... Գալիցին — ամբողջ

մի 30 տարի՝ Ռուսաստանում հայահալած քաղաքականությունը...

Անգլիան ու Ռուսիան, Գերմանիան ու Ֆրանսիան, Ամերիկան և այլևայլ պետություններ իրենց շահերի համար զոհեցին մի ամբողջ հին ժողովուրդ, ջնջեցին նրա դարերի կուլտուրան, քանդեցին նրա հոյակապ ճարտարապետական կոթողները, փչացրին նրա մատյանները մագաղաթյա, ջնջեցին նրա անունը իր հազարամյակների երկրից, սպանեցին նրա ֆոլկլորը, լեզուն, անցյալը, ներկան, նաև... ապագան:

Այդ քրիստոնյա, քաղաքակիրթ պետությունները այդ բոլոր գազանությունները արեցին Թուրքի ձեռքերով... Թո՛ւրք, Թուրք, Թուրք, ոչ մի ժողովուրդ իր հարևանին այն մահացու հարվածը չի տվել, ինչպես Թուրքը հային...

— Թուրքը այնպիսի ոճիր, եղեռն է գործել հայերի հանդեպ և պիտե, որ հայերը ձգտում են վրեժը հանել, դրա համար նա հիմարների համաձայնությամբ խլեց Կարսը, Սուրմալին (Բաթումի փոխարեն), որպեսզի Հայաստան չստեղծվի, մեծանա, և վրեժխնդիր լինի ապագայում. ուզեց Կովկասի հայերին և Հայաստանն էլ ջնջել, որ պարտք պահանջող չլինի. լավ գիտե՝ որ ոչ ռուսը և ոչ մի այլ ուժ, բացի հայերից, իրեն օձիքը բռնող չի լինի, և չկա:

Այս պիտի հասկանան մերոնք և ուժեղացնեն Հայաստանը, և վնասեն բոլոր այն ուժերը, որ նպաստում են Թուրքին:

— Աշխարքի մեջ ամենաչար, անգութ, լիրբ և զզվելի ժողովուրդը թուրքն է. և ինչ ազգ կամ պետություն սիրում է նրան՝ նա էլ թուրքի պես բան է՝ օրինակ՝ Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը և այլն, և այլն:

— Անգլիան՝ հայ ժողովրդի պաշտպանման գործը, դատը՝ Կիպրոսի դաշնագրով ինքը վերցրեց, որպեսզի խանգարեր հայ դատի հաջողությունը: Անգլիան վաճառեց հայ ժողովրդին. թերևս ռուսներին արգելեր Հայաստանը տիրելու: 16-րդ հոդվածի դեմ՝ Սան Ստեֆանոյի դաշնագիրը:

— Բագուի արևելյան ժողովուրդների ժողովը՝ Զինովևի և Էնվեր փաշայի նախագահությամբ, Ռուսաստանի ներշնչումով... Ժողով, ցույց, սպառնալիք Անգլիային, Անտանտին, և՝ իհարկե հայկական հարցին...

— Զինովևի բեռլին գործուղումը (1919-20 թթ.) գերման սոցիալ-դեմոկրատներին համոզելու որոշ պունկտերի շուրջը միանալու Սովետին և Թուրքիային: Երբ գերմանական սոցիալ-դեմոկրատները պատճառաբանեցին թե՝ ինչպե՞ս կարելի է միանալ ջարդարար Թուրքիայի հետ (հայ ջարդերը), Զինովևը պատասխանեց, թե հայերի համար չի կարելի 200000000 — երկու հարյուր միլիոն իսլամին արհամարհել, չգնահատել. այդ մեծ ուժ է <անընթ.> բուրժուազիայի դեմ... (Էլ ի՞նչ հայկական հարց, էլ ի՞նչ մարդասիրություն). ռուսները ջանում էին իրենց գլուխը ազատել գինված միջամտությունից... Ո՞ւմ էր հետաքրքիր հայկական արյունը...

— Առաջին օրից Լենինը հայտարարեց՝ հաշտություն առանց անեկսիայի և առանց կոտրպուդցիայի... Գրաված հողերը հետ տալ, և պատերազմի ծախսերը չառնել...

Թուրքին տվին դրաված հայկական հողերը՝ Վան, Բիթլիս, Մուշ, Կարին, Երզնկա և անթիվ հարստություն...

Թուրքերը իսկույն բարեկամացան բոլշևիկների հետ, դաշինք կնքեցին, բոլշևիկ դարձան, և արշավեցին Հայաստանի վրա (Կովկասի), հայտնի են Բագվի ջարդերը, Շամախու, Շուշիի, Ագուլիսի... Եվ գրավեցին Օլթի, Արդահան, Կարս, Սուրմալի.—

Լենինը հայտարարեց՝ ցարը պատերազմում էր Հայաստանը և նեղուցները տիրելու համար... մեզ պետք չեն դրանք: Մենք թուրքի հետ եղբայր ենք...

Եվ մեծ ջարդարարները՝ Թալաաթ, Էնվեր, Քյազիմ, Քեմալ փաշաները դարձան նրան եղբայրները... մարսեցին հայ ժողովրդի արյունը և երկիրը... վրան ավելացնելով Նախճվան, Ղարաբաղ, Ախալքալաք...

243. <ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԱԶԳՈՎԻՆ...>

Հայ ժողովուրդը, ազգովին, գրեթե թալանվեց, մերկացավ. 1915 թվին ամբողջ թրքահայությունը թալանվեց, ջնջվեց, փախավ: Ռուսահայերը գրեթե բոլորը թալանվեց — Բագու, Բաթում, Ռոստով-Նախճվան: Շուշի, Շամախի, Դերբենդ, Նուխի, Արդվին, Արդանուշ, Արդահան, Ագուլիս, Հին Նախճավան, Իգդիր, Կաղզվան, Կարս, և նույնիսկ Ալեքսոլ:

Դարձավ աշխարհի ամենաաղքատ ժողովուրդը:

244. <ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐԸ ՀԱՅԵՐԻՑ...>

— Հայաստան երկիրը հայերից իսպառ դատարկվելով և հայ ժողովրդի ոչնչացումով մարդկությունը մի մեծ ի-

մաստուֆյուն չահեց – այն, որ ինքը չատ ստոր է, գազան է, լիրբ է, կործանվելու արժանի...

– Հայ ժողովուրդը մեծ, ամուր հավատ ուներ եվրոպական ժողովուրդների մարդասիրության, ազնվության համար: Նա հավատացած էր, որ մի փոքր չարժում թուրքերի դեմ, մի փոքր կոտորած, մի քիչ արյուն թափել, և Եվրոպան կվրդովվի, կհուզվի և կազատի Հայաստանը... Եթե գիտենար, որ Եվրոպան ստոր է, գազան, ոճրագործ... Հայ ժողովուրդը չէր չարժվի, թուրքերի հանդեպ հավատարիմ կմնար, և չէինք ջարդվի: Մեր հավատը և չատ կույր հավատը, մեր միամտությունը մեզ ոչնչացրեց...

1896 ջարդին Կ.Պոլսում, այն վիրավորված հայը, որը գլուխը մի կերպ բարձրացնում է (փողոցում, քարերի վրա ընկած) հարցնում է՝ անգլիական նավերը չեկա՞ն...

Խեղճ մարդ... խեղճ հայություն...

Մենք չճանաչեցինք ո՛չ եվրոպացուն և ո՛չ թուրքերին: Թուրքը լավ ճանաչում էր եվրոպացուն, ռուսին, դրա համար էլ նրանք հանդգնեցին կոտորել հայերին և խլել նրա հողերը՝ Կարս, Սուրմալու...

– Թուրքը բացարձակորեն հայից ավելի լավ էր ճանաչում եվրոպացուն, և առհասարակ աշխարքը, մարդուն:

Մենք ռոմանտիկ էինք, մենք կարծում էինք, հավատացած էինք, թե մարդը ազնիվ է, եվրոպացի մարդը, բարի է, մարդասեր, քրիստոնյա, թուրքերի մասին էլ վատ կարծիք չունեինք. իսկ թուրքը գիտեր, որ մարդը սրիկա է, եվրոպացի, ամերիկացի – փողասեր, դաժան, նենգ, խաբեբա... Թուրքը գիտեր, որ ինչ էլ որ անե, եվրոպացին պիտի ներե, որովհետև չահ ունի:

Թուրք (բագվեցի) Ախմեդովը (Թյուրքերամ, Ահմեդ օղլին) հայերին ասել էր Տրապիզոն 1918 թվին, հայ

պատգամավորներին... «Հասկացեք դրությունը. ի՞նչ հայ, ի՞նչ Հայաստան. Եվրոպան Թյուրքիային պետք է պահե, պետք է նրան...»

Եվ լիրը Եվրոպան՝ Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա... և մյուսները սիրաշահեցին Թուրքին, դիակը կենդանացրին, ոչ մի ջարդարարի չպատժեցին... և այդ օրերը Քեմալը մարդ էր ուղարկում Մոսկվա, մոսկովները իսլամական համադումար էին կազմել Բագու՝ նախագահությամբ Էնվեր փաշայի և Զինովևի: Զիչերինը սիրալիր նամակ էր գրում Կարա-Բեքիրին: Քեմալին անվանում էին բոլշևիկ, եղբայր... Զենք տվին, ոսկի տվին, պաշտպանեցին կոնգրեսներում, Սան-Ռեմո-Ռապալլո, Լոզան: Եվ երբ Թուրքերը ջարդում էին հայերին Կովկասում ամեն տեղ, սրանք փաղաքշում էին Թուրքերին և Վորոշիլովը պատրաստվում էր Զմյուռնա գնալ՝ կարսը նվիրում էին՝ չխնայելով Անին, իսկ Քեմալը Թուրք կոմունիստներին ծովն էր թափում...

ՈՒՏԱ ԿԱՐՈՆ
ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ

(Հատված «Ուստա Կարո» վեպից)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Կապիտան Ղազարը կենսաթոշակի արժանացած, ռուս Կայսերական[1] բանակի[2] հին սպա էր, պատերազմների մեջ եփված և[3] բազմափորձ: Թեպետ[4] յոթանասուն տարեկանից[5] անց[6] մի ծերունի էր[7], սակայն տակավին առույգ էր՝ հոգով և մարմնով: Ապացուցելու համար իր բազուկի ուժը, նա հուպ էր տալիս մի ափով միայն երիտասարդների ձեռքը և լուրջ ցավեցնում[8], թեև իր կտրիճ[9] տարիքին՝ քարը սեղմելով միջից[10] արյուն էր կաթեցնում[11], ինչպես վկայում էր ինքը:

Միջահասակ էր, բարեձև կազմվածքով: Քիթը՝ կոր, կզակը՝ սուր: Քայլում էր ամուր և հաստատ, առանց ցուպի օգնության: Ձայնը հզոր էր և հնչուն: Եվ տեղն էր

---

1 D *չիք*
2 D + *մի*
3 D *ու*
4 D Թեև մոտ
5 D տարեկան
6 D *չիք*
7 D + ընչացքը և գլխի մազերը բոլորովին ճերմակ
8 D ցավացնում
9 D երիտասարդ
10 D մեջեն
11 D + եղել

տակավին[1] աչքերի լույսը, որը պղտորվում էր միայն, երբ երգել էր տալիս իր[2] իսկ ձայնակցությամբ այս հին, սիրած երգը, որ հիշեցնում էր զինվորի գուրկ[3], չարքաշ կյանքը:

Այս երգը միշտ երգել էր նա կռվի և հաղթանակի օրերին, և երգում էր հիմա իր վերջացող[4] օրերի երեկոյին.—

«Զինվորիս երգերը, եղբա՛րք, լսեցե՛ք,
Աչխարհիս բանները լա՛վ մտածեցե՛ք.—
Մեկն ունի մեծ տներ, մյուսը[5] գյուղ ունի,
Միայն խեղճ զինվորը ոչի՛նչ բան չունի —
Շորերը՝ թանկագին, փորը միշտ քաղցած,
Տո՛ւր ձիուն միշտ գարի, ինքդ կե՛ր չոր հաց,
Թե քաջ պատերազմես[6], կտան քեզ պարգև,
Թե ոտքդ կորցնես, կասեն՝ մնաս բարև»:

Հագնում էր կազակի[7] զգեստ սև մահուդից: Կուրծքը բազմաթիվ[8] արծաթե մեդալներով[9] և[10] խաչերով զարդարված, մեջքին ոսկեզօծ գոտի, որից պետական[11] հանդիսավոր օրերին կախում էր արծաթապատ դաշույնը: Դնում

---

1 D *չիք*
2 D իրևն
3 D + և
4 D վերջացած
5 D մյուսն
6 D պատերազմիս
7 D կոզակի
8 D + ոսկե և
9 D մեդայլներով
10 D ու
11 D *չիք*

էր կազակի[1] փափախ[2] բանվածքներով, երբեմն[3] զինվորականի գլխարկ՝ կակարդով[4], կարմիր լայն[5] երիզով:

Ղազար աղան, ինչպես գյումրեցիք[6] սովորաբար կոչում էին նրան, բարեկեցիկ վիճակ[7] ուներ, զավակների և թոռների տեր: Ընտանեկան պարկեշտ անուն էր վայելում քաղաքի մեջ: Շա՛տ ժամասեր էր ու աստվածավախ, բարի և աղքատախնամ:

Հայրական մի ընդարձակ տուն ուներ մեծ և պարսպած պարտեզով[8]: Իր սենյակը զենքերի փոքրիկ[9] թանգարանի նման էր. պատերը ողջ ծածկված էին վայրի կենդանիների մորթիներով, որոնց որսացել էր իր իսկ ձեռքով Կովկասի ամեհի լեռներում, ռուսական անծայր դաշտերում, Լեհաստանում և Թուրքիայում:

Մորթիների վրա ներդաշնակ ձևերով ու խնամքով կախված էին մեծ քանակով՝ զանազան տեսակի և ոճի զենքեր՝ մանր ու խոշոր դաշույններ, սրեր, հրացաններ, փչտովներ, կարաբինաներ[10], որոնց յուրաքանչյուրը իր հատուկ փառավոր պատմությունն ուներ՝ իրավունքով ձեռք բերած[11] Բեյբուրթովի[12] պատերազմին, Շամիլի և Վարշավայի կռիվներին:

---

1 D կոզակի
2 D + ոսկե
3 D + ռուս
4 D կոկարդով
5 D հաստ
6 D Ալեքսանդրոպոլցիք
7 D կյանք
8 D պարտիզով + տան մի մասը վարձու էր տրվում միշտ:
9 D փոքր
10 D + և ատրճանակներ
11 D բերված
12 D Բիբուրթովի

Իր նստած թախտի տակ կար մի երկաթյա արկղ, ուր աչքի լույսի պես պահվում էին թագավորից և[1] փոխարքայից ստացած գովեստի և գերազանցության թղթերը, իր խաչերի և մեդալների[2] վկայականները, մուրհակներ, պահեստի դրամ և իր կենսաթոշակի տետրակները,— որոնց մեջ գրված էր արքայական գանձարանից ամսեամիս ստացած թոշակը[3], իբրև արդար հատուցումն իր արժանավոր զինվորական ծառայության «Հանուն[4] հայրենիքի, թագավորի և հավատի»:

Առավոտ վաղ զարթնում էր Ղազար աղան, մի-երկու կանոն Սաղմոս էր քաղում, մի-երկու գլուխ Նարեկ էր կարդում, ապա գնում եկեղեցի: Այնտեղ՝ հատուկ իր գորգի վրա կանգնած՝ ձայնակցում էր տերտերների և տիրացուների բոլոր ժամասացություններին՝ գոց, անվրեպ կերպով: Եվ հետո ժամի դուռը կուչ եկած աղքատներին ողորմություն տալով՝ դառնում էր տուն և սկսում պարտեզում[5] աշխատել, ուր հասցնում էր ծաղիկներ ու բանջարներ և մի քանի պտղաբեր ծառեր — բալ, կեռաս, տանձ և խնձոր:

Կեսօրվա հանգստից հետո[6] շարունակում էր պարտեզի[7] աշխատանքը: Ապա իր մշտապես ընտրած[8] փողոցներով գնում էր[9] տասնյակ տարիներից ի վեր իր[10] հաճա-

---

1 D ու
2 D մեդայլների
3 D որոնց միջոցով ամեն ամիս արքայական գանձատունից ստանում էր իր թոշակը *փխ* որոնց մեջ գրված էր ... ստացած թոշակը
4 D *չիք*
5 D պարտիզում
6 D + նրանից
7 D պարտիզի
8 D իր ընտրած մշտական *փխ* իր մշտապես ընտրած
9 D + իր
10 D *չիք*

խած սրճարանը, որ սովորական ժամադրավայրն էր ժամանակն անցած, տարիքավոր մարդկանց: Նրանք հավաքվում էին այնտեղ վերստին[1] ասելու և վերստին[2] լսելու իրենց կյանքի դիպվածներն ու դրվագները[3], որոնց վերհիշումը կախարդական զորություն ուներ վերապրեցնելու անդարձ թռած քաղցր երիտասարդությունը...

Երեկոյան ժամի զանգերը լսելուն պես՝ Ղազար աղան կտրում էր իսկույն իր կամ ընկերների խոսքի թելը, շտապում էր եկեղեցի, ապա նորից տուն, անպայման տանելով հետը մի թաշկինակ լեցուն մրգերով իր սիրելի գերդաստանի մեծի ու պստիկների[4] համար:

Այսպես էր կապիտան Ղազարի[5] ամենօրյա կյանքը՝ անխախտ, բանուկ ժամացույցի նման, ժամը՝ ժամին, վայրկյանը՝ վայրկյանին[6]:

ՂԱԶԱՐ ԱՂԱՅԻ ՏՈՀՄԸ, ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԱՂԹԸ

Ղազար աղայի Մալխազյանց ազնվական տոհմը Տուրուբերան աշխարհից էր: Բերանացի ավանդություննների համաձայն՝ Մալխազյանց ընտանիքը անմիջական շարունակությունն էր հինավուրց Խոռխոռունի իշխանական

---

1 D *չիք*

2 D *չիք*

3 D արկածներն ու դիպվածները *փխ* դիպվածներն ու դրվագները

4 D մանր ու խոշորների *փխ* մեծի ու պստիկների

5 D Ղազար աղայի

6 D վայրկյանը՝ վայրկյանին, ժամը՝ ժամին *փխ* ժամը՝ ժամին, վայրկյանը՝ վայրկյանին

տան՝ սերված Հայկ Նահապետի Խոռ որդուց, որ ապա Վաղարշակ Թագավորի օրով Խոռխոռունի Մալխազը նրա Թիկնապահն եղավ, դարեդար ժառանգելով այդ մեծ պաշտոնը:

Եվ իսկապես էլ, Մալխազենք ունեին Խոռխոռունյաց գավառում ընդարձակ հողեր: Նրանց սեփական Խոռանց մեծ գյուղը հին դարերից ի վեր շինված էր Սիփանա ծաղկոտ լանջերին: Մալխազենց բերդի նման հին տունը կառուցված էր երկու ձորաբերանի ժայռերի վրա, որոնց աղբյուրները գոչգոչալով իջնում-թափվում էին մոտիկը փռված վանա կապույտ ծովակի մեջ:

Ա՛յնքան հարուստ է եղել Ղազար աղայի հայրը՝ Մալխազ աղան, ա՛յնքան հարուստ, որ փաշաներն ու վալիները ոսկի էին պարտ առնում[1] նրանից: Դրանց[2] չվճարված մուրհակները, մինչև օրս՝ հիշատակի համար պահում էր Ղազար աղան երկաթյա արկղի մեջ: Մալխազ աղայի մի չոր խոսքի վրա էրզրումից քարավաններով[3] ապրանք էր գալիս-թափվում[4] նրա դուռը:

Սիփանա արոտները ծածկված էին[5] Մալխազենց տեսակ-տեսակ ձիերի երամակներով, ոչխարների հոտերով, տավարների նախիրներով: Ոչխարները կթում էին[6] սարերի գլուխը և այնտեղից կավե խողովակներով կաթը աղբյուրի պես հոսում էր[7] մինչև Մալխազի տունը

---

1 D ոսկի են պարտք առել *փխ* ոսկի էին պարտ առնում
2 D Նրանց
3 D քարվաններով
4 D է եկել-թափվել
5 D ծածկված են եղել
6 D են
7 D հոսել է

և լցնում[1] հսկա տաշտերը՝ պանիր ու յուղ չինելու համար:

Ամեն տարի տասը մեծ կարաս գինի՝ բերանները կնքած՝ ետ էին դրվում անձեռնամուխ պահվելով, քառասուն տարուց հետո բացվելու համար: Նրա ծառաներին, աղախիններին, հովիվներին, այգեպաններին ու մշակներին թիվ ու համար չկար: Աշխարհ բանում էր նրա համար ու աշխարհ ուտում էր նրա հացը:

Մալխազ աղան[2] տան մուտ մի հյուրանոց-խան էր չինել[3] ճամփորդների, անցնող ու դարձողների համար: Հարուստ ու աղքատ, ամեն լեզվի ու հավատի մարդ, իջնում էր այնտեղ, օրերով իրենց կողքին պառկում, ուտում-խմում. ամենքը իրենց պատվի համաձայն շահվում ու խնամվում և[4] չարունակում էին իրենց ճանապարհը. անունները հարցնող չկար, համրանքը պահող չկար:

Հինգաչքանի[5] մի ջրաղաց օր ու գիշեր ցորեն[6] էր աղում այդ մեծ տան պետքին բավելու համար. ձիթահանքն էլ իրեն կարգին:

Ղազարը՝ Մալխազ աղայի միահատիկ[7] անդրանիկ զավակը[8] ծնվել է 1826[9] թվին, հունվարի 12-ին[10], ինչպես վկայում է տոհմական ձեռագիր հին Նարեկը, որի հիշա-

---

1 D լցրել է
2 D չիք Մալխազ աղան
3 D + տված
4 D ու
5 D Տասը աչքանի
6 D ալյուր
7 D + և
8 D տղան
9 D 1825
10 D մեկին

տակարանի մեջ նշանակված է ընտանեկան այս մեծ դեպքը:

Այդ տարին ծերերի կողմից չտեսնված ու չլսված[1] ցուրտ[2] է եղել, այնպես ցուրտ, որ թուքը գետին չէր հասնում[3], ձկները սառել են Վանա ծովի մեջ և անտառի ծառերը այրող ցրտից վառվել ու բոցին են տվել:

— «Էդ տարին,— ինչպես պատմում էր Ղազար աղան[4] ծնողներից լսածը,— էդ տարին բոլոր ծնված երեխաները մեռել են՝ հայ, թուրք, քուրդ: Մնացել եմ մենակ ես, մենակ ես: Խոսքը[5] մեր աշխարհի մասին է, ուրիշ տեղի ծնվածներ կան, պատահել եմ:

Զարմանք բան չկա, թե որ պատճառն իմանաք. ինչու որ ամեն բան պատճառ ունի, բացի միայն անպատճառ աստվածությունեն[6], ու դրա համար էլ Աստված անպատճառ կա, խոսք ու վեճ չի վերցնի[7], հավատով խոստովանիմ:

Ծնվելես օրթն օր հետո, մկրտության սուրբ խորհուրդը կատարելու ժամանակ, հայրս հրամայել է, որ ինձ եռման ջրի մեջ մկրտեն, ու անունս էլ դրել է[8] Ղազարոս: Հիմի, համբերեցեք, կիմանաք, թե ինչու համար: Հա՛, ժամի դռան առջևն էլ բերել կուտա սառույցը վրան կապած մեկ տաշտով ջուր: Մկրտությունենետո[9], հայրս ական-

---

1 D չտեսնված ու ծերերի կողմից չլսված *փխ* ծերերի կողմից չտեսնված ու չլսված

2 D ցուրտ-սառնամանիք

3 D հասնի

4 D + իր

5 D Խոսքս

6 D աստվածությունից

7 D վերցնեն

8 D դնել կուտա

9 D Հետո

Թոթափելի, ինքն իր ձեռքով կառնի ինձի, մորե մերկ, ու սառույցը կոտրելով ձեռաց կկոխե ջրի մեջ. եռման ջրեն սառը ջրի մեջ, գլխո՞ւ եք: Կկոխե[1] ասելով. «Թե ապրավ, կնշանակե, Ղազարոսի պես հարություն առավ. թե մեռավ, Աստված ողորմի անմեղ հոգուն»:

Էսպես սառը ջրի մեջ թողնելով[2] մեկ պահ, հետո կհանե ինձի կաս-կապույտ դառած, չունչ կենդանի...

Ուրախացած կդուչե լուսահոգի հայրս, «Տղաս անունը վայելեց. Ղազարոս հարյավ[3] ի մեռելոց, տղաս դառավ ջանփոլադ, պողպատիկ, վրան թուր ու արճիճ պիտի չբանի»:

Հորես օրինակ առնելով մեր հողի ժողովուրդը՝ հայ, թուրք, քուրդ, էդ տարին իրենց նորածինները ամենքը մեռցրին, որը՝ եռման ջրի մեջ, որը՝ սառը ջրի մեջ: Զդիմացան էդ անմեղ հոգիները: Էդ պատճառով էլ ես մնացի մենակ էդ տարվա ծիներեն[4], ու էդպիսով[5] էլ նրանց կատարելիք քաջությունները ես մենակս կատարեցի:

Ո՛վ հայեր[6], չլինի թե դուք էլ ձեր երեխաների գլուխն[7] էդ փորձն[8] անեք, փորձանք կլինի[9], իմ բանս ուրիշ էր:

Ողորմածիկ հայրս, որ իմաստուն մարդ էր, ինձի հետո ասավ՝ թե պողպատիկությունս հիսուն տարեկան ժամանակս անցնելու է: Ինչ որ անելու եմ, մինչև[10] էդ տարին

---

1 D չիք եռման ջրեն սառը ջրի մեջ, գլխո՞ւ եք: Կկոխե
2 D կթողե
3 D Հարյալ
4 D ծնվածներեն
5 D էդպեսով
6 D Նայի՛ր փխ Ո՛վ հայեր
7 D գլխուն
8 D փորձությունն
9 D կըլնի
10 D մինչի

անելու եմ: Էդ թվեն դենը հասարակ մահկանացու պիտի լինեմ[1] ու ափսո՜ս, էդպես էլ եղավ...

Հիմի հասկացա՞ք հորս միտքը: Ոնց որ դարբիններըը տաք երկաթը ջուրը կմխեն պողպատ շինելու համար, էնպես էլ հայրս[2] դարձուց ինձի մուխ տված երկաթ, ու էդ պատճառով էր, որ ամեն կռիվներու մեջ վրաս ճանճերու պես գնդակ ու թուր կթափվեին ու բրդի[3] կծիկներու պես ետ կդառնային՝ մեկնակ հագուստս մաղ-մաղ ծակելով: Միայն կայծակը, երկնքի թուրը, վրաս կրնար բանի: Թե որ զարկվեի[4], կայծակին պիտի զարկվեի[5], ինչու որ պողպատը կայծակը իրան կքաշե[6]»:

Եվ Ղազար աղան մինչև հիսուն տարեկանը կայծակից լուրջ վախ ուներ: Երբ երկինքը ամպոտում էր ու որոտում, նա փախչում էր ու պահվում տան կենտրոնի մութ սենյակը և վերմակների ներքև կծկվում[7]: Միայն հիսուն տարեկանից հետո այդ վախը թուլացավ, բայց իսպառ չանցավ:

Մի անգամ նույնիսկ նա ակներև մահից ազատվեց[8], որի համար միշտ այդ տարեդարձին մի գառ մատաղ էր անում:

Այսպես պատահեց: Դալստանում[9], երկնքին կպած լեռների մեջ, Իմամ[10] Շամիլի դեմ կռվելիս, հանկարծ ամ-

---

1 D լինիմ
2 D + Մալխազ աղան
3 D բրդե
4 D զարնվեի
5 D զարնվեի
6 D + էն էլ Ասուված պահեց
7 D փախչում-մտնում էր ամենից մութ անկյանը և վերմակների ներքև պահվում *փի* փախչում էր ու պահվում ... ներքև կծկվում
8 D ազատվել է
9 D Դալստան
10 D *չիք*

պերից ընկնում է ահավոր կայծակը, ուղիղ Ղազար աղայի վրա: Ղազարը վայրկյան ու գլուխը չկորցրած փախչում է, վազում, կայծակն էլ ետևից, ինքը փախչում է, կայծակն էլ ետևից, կրընկկոխ, մի թիզաչափ հեռու միայն[1], որ նույնիսկ այրում է[2] Ղազար աղայի փափախը: Հազիվ խեղճը իրեն ձգում է[3] մի խոր քարայրի մեջ, իսկ կայծակը դիպչում է[4] ժայռին՝ փշուր-փշուր անելով ժայռապատառաժը:

Մանուկ Ղազարի մկրտության այսպես[5] հաջող ելքի համար Մալխազ աղան մեծ կոչունք է տալիս[6] հազար մարդու — հայի, թյուրքի, քուրդի, որոնք գալիս են մեծամեծ նվերներով ու արմաղաններով, բերում են նժույգ-ձիեր, թանկարժեք գորգեր, քերմանչալեր, ոսկե և արծաթե իրեր[7]...

Այդ օրը հազար[8] հավկիթ են կոտրում[9] ձվածեղի համար, երեսուն եզ են մորթում[10], հարյուր ոչխար, երեք հարյուր հավ, մի տաշտ աղ ու պղպեղ են բանեցնում[11], հինգ կարաս արդար յուղ: Բրինձը, հացը և մնացած բաները էլ ամեն ոք կարող է իր մտքի մեջ ամբողջացնել՝

---

1 D *չիք*
2 D այրել է
3 D ձգել է
4 D դիպել է
5 D այսպիսի
6 D տվել
7 D *չիք* Հայի, թյուրքի, քուրդի ... ոսկե և արծաթե իրեր
8 D տասը Հազար
9 D կոտրել
10 D մորթել
11 D բանեցրել

լրիվ պատկեր առնելու համար: Գինին ու օղին... այն էլ աղբյուրի պես հոսել է[1] հարբեցնելով դյուզ ու քաղաք:

Երբ ռուսները 1828-1829 թվերին արշավեցին թուրքերի վրա, հաղթեցին[2] Սուլթանին[3] և դրավեցին Կարսն ու[4] Էրզրումը[5], Մալխազ աղան իր քաջերով միացած էր ռուսներին՝ փափագելով, որ քրիստոնյա թագավորի հովանին[6] տարածվի հայոց աշխարհի վրա[7]: Բայց երբ Անգլիայի պահանջով ռուսը ստիպված եղավ ետ տալ գրավված[8] հողերը, Մալխազ աղան էլ հարկադրված եղավ, հապարավոր հայերի հետ[9], ռուս[10] զորքի հետ գաղթել, որովհետև օգնելով ռուս թագավորին՝ վատամարդ էր եղել Սուլթանի աչքին և վախենում էր Սուլթանի վրեժից[11]:

Այսպես, Մալխազ աղան լքեց[12] իր ծով-հարստությունը, պապական հողերը և, առնելով իր ընտանիքը, ձիերի և տավարի[13] հազիվ[14] մի մասը ու միայն մի դոմեզի[15] տի-

---

1 D թափվել է
2 D ջարդեցին
3 D Սուլթանի զորքը
4 D չէր դրավեցին Կարսն ու
5 D + դրավեցին
6 D իսկը *վրա* քրիստոնյա թագավորի հովանին
7 D + և քրիստոնյա հայ ժողովուրդը ազատվի անօրեն թուրքի ու քրդի ձեռքից:
8 D դրաված
9 D *չէր* հազարավոր հայերի հետ
10 D ռուսի
11 D եթե մնար, Սուլթանը իր պարտության վրեժը նրանից պիտի հաներ, սրի քաշելով բոլոր էդն ու արուն, մեծն ու մանուկը, ինչպես նրանց սովորությունն է եղել միշտ *վրա* օգնելով ռուս թագավորին ... Սուլթանի վրեժից
12 D թողնց
13 D ձիերից ու տավարից
14 D *չէր*
15 D երկու ուչխարի *վրա* մի դոմեզի

կով ոսկի[1], վախճալ եկալ Գյումրի[2], հոդ գնեց՝ տուն շինեց, պարտեզ տնկեց և ընդմիշտ[3] հաստատվեց այնտեղ:

Ռուսաց պետությունը, ճանաչելով թեև Մալխազենց ազնվականությունը և գրելով նրանց ընտանիքի անդամների անուննները ազնվականների Ոսկի[4] Գրքի մեջ, սակայն պատշաճ վավերաթղթերի չգոյության պատճառով, չընդունեց նրանց հայկազն խոսխոռունի իշխան լինելը, որով Մալխազենց տունը պիտի հանդիսանար[5] աշխարհի[6] ամենահին տունը չորս հազար տարվա հնությամբ, ռուս ազգից չորս անդամ հին: Մը թագավորը այդ կհանդուրժեր[7]...

Մալխազ ազան մի կողմից դժգոհ է, որ թողել է հայրենիքը և իշխանական վիճակը, բայց մյուս կողմից էլ գոհ էր, որ քրիստոնյա թագավորի ձեռքի տակ անարգել, միշտ լսում է հայոց եկեղեցու զանգերի հրեշտակային ձայնը, որ դարերից ի վեր պապանձված էր մահմեդական տերության մեջ[8]:

Այդ ժամանակները մանուկ Ղազարը վեց-յոթ տարեկան էր: Երբ դարձավ տասը տարեկան, հայրը առավ տարավ նրան Թիֆլիս, տվեց[9] ազնվականների դպրոցը,

---

1 D + ու պրծավ

2 D Ալեքսանդրոպոլ

3 D չիք

4 D ոսկի

5 D լիներ

6 D չիք

7 D կհամբերեր

8 D Եվ սակայն նորից գոհ էր Մալխազ ազան, որ խաչապաչա թագավորի թևի տակ էր ծվարել՝ հանդիստ ու ապահով: փխ Մալխազ ազան մի կողմից դժգոհ է ... մահմեդական տերության մեջ:

9 D տվավ

որպեսզի[1] ուսում առնի, զինվորական դառնա, կռվի ու մեռնի հայրենիքի[2] համար:

Ղազարը տասնևինը[3] տարեկան էր, երբ փայլուն կերպով ավարտեց զինվորական դպրոցը: Եվ ինչպես երիտասարդ, դեղեցիկ ու[4] մանավանդ ազնվական տան որդի, փոխարքան — նամեստնիկը նրան առավ իր չքախմբի մեջ, իբրև իրեն թիկնապահ:

Ժառանգական ուժերի ի՛նչ գաղտնի խորհուրդ կար այս երևույթի մեջ, որ Վաղարշակ արքայի թիկնապահ Մալխազի թոռը երկու հազար տարի հետո դառնում էր փոխարքայի թիկնապահ: Բայց ի՞նչ զարմանալու բան կա, քանի որ մի անգամ ջուր գնացած տեղից վերստին[5] ջուր կերթա, և ծառերը հազարավոր տարիներից հետո նույն պտուղներն են տալիս: Եվ թիկնապահ դառնալով՝ Ղազարը իր նախահայրերի պես հավատարիմ էր ու քաջ, զենքի մեջ վարժ ու հմուտ: Մասնակից էր նա, իբրև թիկնապահ, պալատական բոլոր հանդեսներին ու պարերին, արքայական որսորդություններին և ճանապարհորդություններին:

Այդ ժամանակները մի մեծ տոնի առթիվ[6], Կովկասի հին սովորույթի համաձայն, պալատի առջևի մեծ հրապարակի վրա ձիարշավ տեղի ունեցավ և ջրիդ խաղ:

Այստեղ էր, որ երիտասարդ սպա Ղազարը ցույց տվեց առաջին անգամ իր շնորհքն ու քաջությունը: Նա չքեղ

---

1 D որ
2 D + և թագավորի
3 D տասնևինն
4 D և
5 D նորից
6 D առիթով

հագնված՝ հեծել էր նժույգը՝ սերված պապական ազնիվ ձիերի արյունից:

Նամեստանիկն ու իր տիկինը՝ իշխաններով ու գեներալներով և սրանց զարդարված կանանցով շրջապատված՝ բազմել էին պալատի պատշգամբում: Մեկ էլ... նշան տրվեց[1] ու մրցողները ձիերը չարժման մեջ դրին:

Մրցողների մեջ կային շատ ազնվատոհմ երիտասարդներ, բայց ամենից առավել աչքի էին ընկնում երեք[2] հոգի, թե իրենց թանկագին հագուստներով, թե իրենց ընտիր նժույգներով[3]: Մեկը[4] վրաց գահազուրկ թագավորի տղան էր[5], որ նույնպես ռուսական զինվորական պաշտոնի մեջ էր, մյուսը Իրանի շահի քառասուն կանանցից մեկի տղան էր, որ հյուր էր եկել Թիֆլիս՝ փոխարքայի մոտ, իհարկե պետական մի գաղտնի հանձնարարությամբ, իսկ երրորդը՝ Ղազարն էր, Խոռխոռունյաց տոհմի պայազատը[6]:

Մրցակիցները դեռ իրար ասպարեզ չէին հրավիրել, երբ պարսիկ արքայազնը[7] հակառակ ընդունված կանոնին, հանկարծակի ջիրիդի ձողը[8] թափով նետեց Ղազարի վրա: Բոլորովին միամիտ էր Ղազարը, սակայն իր բախտից ձողը վրիպեց[9]:

---

1 D տրվեցավ
2 D երկու
3 D ձիերով
4 D + Ղազարն էր, մյուսը
5 D *չիք*
6 D *չիք* մյուսը Իրանի շահի ... Խոռխոռունյաց տոհմի պայազատը
7 D վրացի թագավորազնը *փխ* պարսիկ արքայազնը
8 D փայտը
9 D Աստծուց էր, որ փայտը չդիպավ նրան *փխ* իր բախտից ձողը վրիպեց: + «Դե՛հ, գիտեք էլի՛,– ասում էր միշտ Ղազար աղան՝ այս անցքը վերապատմելիս,– վրացին միշտ կնախանձի հային: Նրա ընու.թի մեջն է էս բանը. վերջին չունչի հետ պիտի դուրս գա, հնար չկա»:

Ղազարը[1] միանգամայն պաղարյուն կերպով ձայնեց[2] հրապարակով մեկ.

— Շահզադե՛[3], դու հյուր ես, պատիվդ պահեցի:

Արքայազնը դոռոզաբար խնդաց քթի տակ, և նորից նետեց: Այս անգամ էլ վրիպեց: Ղազարը ուժգին գոչեց[4].

— Շահզադե՛[5], ներողություն խնդրե[6]:

Շահզադեն[7] ներողություն չխնդրեց: Հայ սպան նորից գոչեց[8].

— Շահի տղա՛[9], էս անգամ կխնայեմ քեզ[10] ու միայն փափախդ կթռցնեմ:

Ասելն ու ձողը նետելն ու փափախը թռցնելը մեկ եղավ: Հանդիսականները ապշած մնացին[11]: Արքայազնը վիրավորվեց ու[12] սաստիկ կատաղեց, ձին լարեց Ղազարի ետևից և ձողը[13] նետեց: Ղազարը ակնթարթում[14] իր նժույգի փորի տակն անցավ[15]: Ձողը[16] թռավ նժույգի վրայով: Ղազարը, փորի տակից ձին քշելով, բռնեց սու-

---

1 D Երևոսասարդ հայ ազնվականը *փխ* Ղազարը
2 D գոռաց
3 D վայրը
4 D *չխք* Շահզադե՛, դու հյուր ես... Ղազարը ուժգին գոչեց
5 D Կնյա՛զ (Լշխան)
6 D + թե ո՛չ, փայտն եկավ
7 D Արքայազնը
8 D բղավեց
9 D *չխք* Շահի տղա
10 D *չխք*
11 D մնացին ապշած *փխ* ապշած մնացին
12 D *չխք* վիրավորվեց ու
13 D վայրը
14 D *չխք* + անցավ
15 D *չխք*
16 D վայրը

բացող ջիրիդաճողը[1] *տակավին գետին չընկած, ապա հուժկու ձայնով գոռաց*[2]*.*

– Ա՛յ չահի տղա[3]*, մեղք ես, ներողություն խնդրե:*

Շահզադեն[4] *համառեց:*

Ղազարը թե[5] *«այս անգամ էլ կխղճամ ծաղիկ կյանքիդ ու ձիուդ ականջը կթռցնեմ»:*

Եվ լարեց ճողը[6]*, ձիու ականջի մի մասը պոկ եկավ ու թռավ: Հանդիսականները այս անգամ չհամբերեցին ու ծափ տվին: Արքայազնը խայտառակված*[7] *ավելի և ավելի զրգռվեց ու գայրացավ*[8]*, ձին քշեց հեռու, մինչև հրապարակի ծայրը և այնտեղից լցված՝ բաց թողեց, մոտեցավ, շատ մոտեցավ Ղազարին և ճողը*[9] *նետեց, վերջինս թռավ կանգնեց ձիու վրա և ճողը*[10] *իրեն մոտեցած վայրկյանին այնպես ճարպկորեն*[11] *բռնեց, ոնց որ մարդ թռչող ճանճը կբռնի*[12]*: Հանդիսականների վրա ջուր մաղվեց, չնչերը կտրած սպասում էին դեպքի զարգացմանը...*

Հայ ազնվականը այս անգամ, առանց խոսք ասելու[13] *ճողը խաղցրեց գլխի վերևը*[14] *և այն է պիտի նետեր, որ*

---

1 D իշխանի նետած փայտը *փխ* ջիրիդաճողը

2 D նորից բղավեց *փխ* հուժկու ձայնով գոռաց

3 D Կնյազ *փխ* Այ չահի տղա

4 D Իշխանը

5 D ձայնեց

6 D նետեց փայտը *փխ* լարեց ճողը

7 D *չիք*

8 D զայրացավ ու գրգռվեց *փխ* գրգռվեց ու զայրացավ

9 D փայտը

10 D փայտը

11 D ճարպիկորեն

12 D կբռնե

13 D + երեսը խաչակնքեց հայավարի խաչով

14 D *չիք* ճողը խաղցրեց գլխի վերևը

նամեսանիկն ու տիկինը թաշկինակները ճոճեցին ձայն տալով.

– Լազա՛ր, Մալխազո՛վ, բավակա՛ն է, բավակա՛ն է...

Ղազարի ձեռքը թուլացավ, ձողն ընկավ գետին...

Փոխարքան կանչեց նրան իր մոտ.– «Ապրի՛ս, կարիճ, ասաց, քո վհանձնուβյան համար այս մեդալը[1] հիշատակ-նվեր»... Եվ մեդալը[2] ուղեց փակցնել հայ քաջի կրծքին: Նամեսանիկի տիկինը քաղցր ժպիտով իր կրծքի վրայից հանեց գնդասեղը և իր ձեռքով ամրացրեց ժապավենը...

Ղազարը հուզված համբուրեց մեծ տիկնոջ և փոխարքայի ձեռքը, ապա խոնարհ ու համեստ կանգնեց նրանց սպասին:

ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ «ԳԼԽՈՒ ԳԱԼԱԾՆԵՐԸ»

[3]Ղազար աղան կեսօրից անց՝ նստել էր Հաճիսպասի[4] սրճարանում, իր մշտական տեղը: Այ կողքին իր հին ընկերն էր՝ Փելպշեր Գալուստը, որն իբրև զինվորական բժշկի օգնական, ներկա էր Դաղստանի կռիվներին[5] և Ղազար աղայի քաջ գործերից շատերը տեսել էր իր սեփական աչքերով[6]:

---

1 D մեդայլը

2 D մեդայլը

3 D + Աշուն էր: Բարակ, անվերջ անձրև էր մաղում:

4 D *չիք*

5 D որ Դաղստանի կռիվներին, իբրև զինվորական բժշկի օգնական *փխ* որն իբրև ... ներկա էր Դաղստանի կռիվներին

6 D շա՛տ բան աչքով տեսել էր ու ականջով լսել ականատեսներից՝ Ղազար աղայի քաջ գործերի մասին *փխ* և Ղազար աղայի քաջ ... իր սեփական աչքերով

Ցելդչեր Գալուստը մի փոքրահասակ, վտիտ ծերուկ էր. հակառակ կապիտան Ղազարի՝ մոլի խմող ու ծխող: Մատներն ու մորուքը ծխելուց կարմրադեղին դույն էին ստացել[1]:

Սրճարանը լի էր մարդկանցով: Ավելորդ[2], տեղի ու անտեղի[3] խոսակցություններով բռնված էր մթնոլորտը, որը միաժամանակ հագեցած[4] էր սրճի հոտով, ծխի մշուշով:

Սրճարանը ներս մտավ Ուստա Կարոն, դարբին ուստա Մացակի և Ջավուշի հետ: Դարբին Մացակը Ուստա Կարոյին ներկայացրեց Ղազար աղային:

— Ղազար աղա,— ասաց նա,— խնդրեմ ճանանչ եղեք երևելի վարպետ Ուստա Կարոյի հետ: Քու անունդ շատ է լսել, ուզեց քեզի տեսնի:

Ղազար աղան ծանրությամբ ձեռքը մեկնեց.

— Բարով եք եկել, որտեղացի եք:

— Ղարսա Նախճվան գեղը կնստիմ: Ինչպես ուստա Մացակ աղբերս ասավ, շատ մենճ փափագ ունեի հրամանքիդ տեսնելու:

— Ի՞նչ բանի վարպետ ես:

— Տուն կշինեմ,— պատասխանեց Ուստա Կարոն:

— Վնաս չունի, վնաս չունի — լավ բան է. աշխարհաշեն դործ է: Աստված է՛լ ավելի շնորհք տա:

Ուստա Կարոն զննեց Ղազար աղային — իգիթ կապիտանի ճերմակել էին ոչ միայն գլխի նոսր մազերն ու բեղ-մորուքը, այլև հոնքերը:

«Հե՛յ վախ,— մտքի մեջ հառաչեց Ուստան,— կրակը պնացել է, մոխիրն է մնացել»:

---

1 D ստացած
2 D ավելնորդ
3 D տեղի-անտեղի
4 D ծծված

Սրճարանի սպասավորը ձախ ափի մեջ իրար վրա դարսած կլիխաններ չարեց հյուրերի առջև և սուրճ լցնելով ասաց.

— Ուստա Գաբրելից:

Ուստա Մացակը աչքերը պտտեցրեց սրճարանի չորս կողմը և դառնալով հյուրասիրող ուստա Գաբրելին գլխով չնորհակալության նշան արավ:

— Ղազար աղա,— դիմեց ուստա Մացակը,— վարպետ Ուստա Կարոն շատ կփափագի քու պատմություններեն մեկ-երկու բան լսել, շատ կխնդրվինք:

Ղազար աղան չլսել ձևացավ:

Ուրիշներն էլ միջամտեցին թախանձելով[1].

— Ղազար աղա, մեր օտար հյուրի պատիվը մի՛ կոտրի[2], մենք էլ կխնդրվինք. մի քիչ կյանքիդ պատմություններն արա, մենք էլ[3] լսենք, օրն անցնի, երթանք տներս...

Ղազար աղան էլ հենց հոգով-սրտով այդ էր ուզում: Սիրում էր իր արկածները պատմել, նորից-նորից[4], հազար անգամ, որովհետև անդիտակից կերպով զգում էր, որ երբ պատմում է[5] իր կյանքի վեպը՝ կամաց-կամաց ետ է[6] գալիս[7] անցյալը, դառնում է[8] այսօրվա օր, իրական, ապրող ներկա կյանք: Լսում է[9] վառոդի հոտն առած ու դրգռված ձիերի խրխինջը, նրանց սմբակների դափն ու դոփյունը, փողերի

---

1 D չ*ի*ք Սրճարանը ներս մտավ Ուստա Կարոն ... Ուրիշներն էլ միջամտեցին թախանձելով

2 D չ*ի*ք մեր օտար հյուրի ... մենք էլ կխնդրվինք

3 D չ*ի*ք մենք էլ

4 D նորեն-նորեն

5 D էր

6 D էր

7 D + կենդանանում էր իր վառավոր

8 D էր

9 D էր

և թմբուկների ռազմիկ-ոգևորիչ ձայնը: Տեսնում է[1] ու լսում թնդանոթների կրակն ու որոտը: Սրճարանը դաշտային միկիտան[2] է[3] դառնում, ունկնդիրները՝ զինվորներ: Զգում է[4], որ իր մարմինը նորից պողպատանում է, արյունը եռ է գալիս պրկված երակների մեջ և սիրտը պատերազմի թմբուկի պես զարկում է ու դղրդում... Եվ բազուկը[5] տանում է[6] Թրին, թեև Թուրը[7] սենյակի պատից էր կախված[8]...

Սակայն մի պահ նազ արեց, որ նորից խնդրեին:

— Ի՞նչ պատմեմ, գիտեք, չատ անգամ եմ պատմել, համն ելել է: Ուրիշ բան խոսենք[9] :

— Ղազար աղա, համը չի ելել: Քու պատմություններն ամեն օրվա[10] հացի պես են, որ մարդ միշտ կուտե ու չի զզվի: Պատմե, կշտանալիք չունինք:

— Ո՞րը պատմեմ, ի՞նչը պատմեմ, էնքան չատ են[11],— մտածկոտ ասաց Ղազար աղան[12], ինքն իր հետ խոսելով, սակայն որոնելով մի կենտրոնական[13] թել, որից սկսեր բանալ իր պատմությունների կծիկը:

---

1 D էր
2 D *Հեղինակը ծանոթագրել է.* «Բանակի գինետուն, վրանածածկ»:
3 D էր
4 D էր
5 D ձեռքը
6 D էր
7 D + իր
8 D + Հնչտանքով տեսնում էր թուրքի, չաչանի, քրդի թռչող գլուխները, որ թափվում էին արյան աղբյուրների միջից իր ոտների ներքև...
9 D խոսինք
10 D ամենօրյա
11 D *չիք* ինչքան չատ են
12 D + կարծես
13 D կեդրոնական

— Գլխեն պատմե, Ղազար աղա, իրիկվան զանգերին դեռ ժամանակ շատ կա,— կրկին թախանձեցին[1]:

— Ժամանակ շատ կա,— հաստատեց Ղազար աղան՝ ձևի համար իր ժամացույցին նայելով ու չտկվեց[2] նստած տեղում:

Ուստա Կարոն սուրճ ու թեյ պատվիրեց բերել բոլոր ներկա եղողների համար[3]:

Սրճի կճեխանները և թեյի բաժակները[4] նորոգվեցին, չիբուխներն ու ծխամորճները սկսեցին կայծի տալ, տամայի և նարդու[5] խաղերը դադար առան:

Կապիտան Ղազարը[6] մի սուրճ ևս խմելուց հետո սրբեց բեղերը և կծիկը բացեց:

— Կարիճ երիտասարդ էի, դեռ երեսուն տարեկան[7] չեղած, որ էն խորամանկ Անգլիան, աշխարքի անառակ[8] Ֆրանսիան ու քսակ կտրող Իտալիան միաբանած[9] քրիստոնեից Թշնամի Սուլթանի հետ[10] պատերազմ բացին մեր Թագավորի[11], Նիկոլայ Պաբլովիչի[12] դեմ[13]: Կռվի մեկ ծերը[14]

---

1 D + ուրիշներն էլ միացած նրանց հետ
2 D շիտկվեց
3 D *չիք* Ուստա Կարոն սուրճ ... եղողների համար:
4 D *չիք* և թեյի բաժակները
5 D նարդի
6 D Եվ նա *փխ* Կապիտան Ղազարը
7 D տարու
8 D + կնիկ
9 D + երեխա մորթով
10 D քրիստոնեի արյունը խմող Թուրքի հետ *փխ* քրիստոնեից Թշնամի Սուլթանի հետ
11 D + դեմ, լուսահոգի
12 D Պավլովիչի
13 D *չիք*
14 D ծայրը

Ղրիմու[1] վրա էր, մեկել ծերը[2] մեր քաղքեն բռնած[3]: Նամեստնիկը Թիֆլիզեն ելավ եկավ Գյումրի[4]: Ես էլ հետն էի: Ծնողներուս[5] օրհնությունն առած՝ կսպասեի հրամանի: Մեկ դիշեր էլ հրամանը տվին, մեր[6] զորքն անցավ Արփաչայը, մտավ[7] Թուրքի հողը: Մեր գեներալն էր հայազգի իշխան Բեյբուդովը[8]: Նամեստնիկը մնաց մեր քաղքի[9] բերդը: Ես ձիավոր էի ու հարյուրապետ: Թուրքի զորքը՝ շատ խառնիխուռն էր[10] բայի-բոզուկ, Ղասապ-Թաբուրի, ենիչարի, ջիլո, զեյբեկ, արաբ, չերքեզ, չաչան, առնավուտ ու իրենք Թուրքերը և էլ[11] քրդերը: Թրի ու թնդանոթի բերան տված՝ քշեցինք նրանց, ժողվեցինք Քյուրակ-դարա ու Քյադիկլար, ու ջարդեցինք[12], փրթեցինք, էնպես որ մեկ տարի բոլոր դրանց լեչերի վրա ագռավները մրջյուններու[13] պես կբանեին ու իրենց բները էնտեղ էին շինել...

Եկանք[14] հասանք Ղարսա բերդի առաջը ու կանգ առանք: Դուք գիտեք՝ որ Ղարսա բերդը անառիկ է. հիմի որ անգլիչանի ու ֆրանցուզի խելքով ու հնարքով[15] էլ անառիկ դառած[16]:

---

1 D Խրիմու
2 D ծայրը
3 D սկած
4 D Ալեքսանդրոպոլ
5 D Ծնողներիս
6 D չիք
7 D չիք
8 D Բեբուդով
9 D քաղաքի
10 D ինչ շուն ու գել ասես մեջն էր փիս շատ խառնիխուռն էր
11 D չիք և էլ
12 D + ջարդեցինք ու
13 D մրջյունների
14 D Էնտեղն եկանք
15 D հնարքներով
16 D դարճած

Մարդու միսը թուրքի կողմն[1] էր, փողն ու կռվի վարպետությունները էդ անամոթ եվրոպացիներու կողմը[2]: Էդ պատճառով էլ էս կռիվը շատ երկար քաշեց, երկուերեք տարի:

Էսպես. Ղարսա առաջն էինք, ձմեռը վրա հասավ: Ի՜նչ ձմեռ — սուր ածելի, ձեռք ու ոտք կտրեր-կթափեր: Բայց, պիտեք, ես ի՜նչ դիմացկուն տղա էի. ճիշտ որ Ջանփոլադ. երկաթ-Հոգի[3] — ողորմած Հոգի հայրս էն սկիզբեն գլխուս ճարը տեսել էր: Արմանք-զարմանք բաներ կանեի, բոլոր զորքի բերանն էր անունս: Թյուրքերն էին, որ[4] անունս դրել էին «Ջան-փոլադ», տեսնելով, որ իրանց ծանր ու սուր յաթաղաններով, երբ կզարնեին ինձի, միս ու ոսկորներս պողպատի պես «չը՜նկ» ձեն կուտային ու արյուն չէր կաթի: Էս չըխկ ձենով բռնված էր կռվի դաշտը — ամեն կողմը — չլսող մարդ չէր մնացել[5]: Ինձ[6] որ կտեսնեին բռռալով կփախնեին.— ամա՜ն, եկավ Ջան-փոլադը:

Ես էլ փափախս կքաշեի ականջներուս վրա[7] ու ինձ կքցեի փախչող թշնամու ետևը. զա՜րկ, որ կզարկես, թուրս կտաքանար[8] ու կծռվեր. ես նորեն նոր ուժ կառնեի ու կսրվեի. ի՞նչ աննենք, թե թուրս բութ էր դառել:

---

1 D կողմնն

2 D կողմնն

3 D չիք

4 D էլ իրանք փխ էին, որ

5 D չիք Էս չըխկ ձենով ... մարդ չէր մնացել:

6 D Էս բանեն հետո ինձ

7 D ականջներս փխ ականջներուս վրա

8 D կտաքնար

Ա՛խ[1], *չեք գիտի*[2], *թե էս ձեռքս ինչքան ուժով էր,— ափսոսանքով ցույց տվեց Ղազար աղան աջ բազուկը,— մեկ զարկով*[3] *գլուխ*[4] *կթռցնեի, մարդը պանիրի պես կկիսեի...*

Էնպես եղավ, որ երբ կռիվ կլներ, դեմս էլ մարդ չէի տեսնի... Ստիպված եղա հագուստս փոխել, սոլդատի շինել[5] *հագնել, որ ասկյարները*[6] *չիմանային՝ թե ես եմ*[7]*: Բայց կարճ ժամանակ հետո նորեն գլխի կընկնեին էդ անիրավները...*

Իրիկուն կլիներ[8]*, ետ դառնալու փողը կփչեր, լագըր*[9] *կդառնայինք: Բոլոր սալդատներն ու խազախները*[10] *մեռելի պես կփռվեին կրակի չուրջը:*

Լագըրի մեջ շատ տեղ մեծ-մեծ օջախներ կային վառած, որ զինվորները տաքնային,— չմոռնաք որ ձմեռ էր[11]*,— տակառներով էլ արաղ*[12] *կար էս ու էն դին: Ես կրակին իսկի չէի մոտենա, կերթայի արաղը ջրի պես կխմեի, կուտեի ինչ որ ձեռս*[13] *ընկներ, ու յափունջիս փաթթված*[14] *սառած գետնի վրա կպառկեի: Գիշերը ծարավցած ժամանակս կելնեի, սառույցը կկոտրեի, ջուրը կքա-*

---

1 D Է՛խ
2 D գիտե
3 D + երկու
4 D + իրար հետ
5 D + (վերարկու)
6 D թուրքերը
7 D *չիք* թե ես եմ
8 D կըլներ
9 D + (բանակ)
10 D կողակներն ու սոլդատները *փխ* սալդատներն ու խազախները
11 D *չիք* չմոռնաք որ ձմեռ էր
12 D + (օղի)
13 D ձեռքս
14 D փաթթված

չեի գլուխս ու նորեն կքնեի, ոնց որ բմբուլներու վրա լինեի[1], տաք սենյակի մեջ: Թե՛ արագի, թե՛ իմ արուեստ տաքութիւնեն[2] գիշերը բոլոր՝ վրայես շոգին կելներ, քիչ կպատահեր, որ յափռունջուս վրա սառուցէ բռներ կամ բերներես սառուցէ[3] կախվեր...

Շատերը հիվանդացան ու մեռան, կրնամ ասել, որ հրով ու թրով էնքան գինովր չմեռան, ինչքան հիվանդութիւններեն[4]: Ես իսկի չհիվանդացա, գլխու ցավն ինչ է՝ չունեցա, ոչ[5] թե մենակ էս կռվին, հապա բոլոր գալիք մյուս կռիվներին էլ[6]: Կյանքիս մեջ միայն մեկ անգամ հիվանդ պառկա, էն էլ մեր տան մեջ, լավ կերած, լավ խմած: Տիֆով էի բռնվել. դոխտուրները[7] ճեռք էին քաշած եղել ինձեն, հույսերը կտրած: Էդ[8] գիշերը ծարավ-պապակ՝ ծածուկ փախել եմ անկողնես, մտել եմ մեր մառանը, մորս դրած թթուբշինն (թթու) կուշտ-կուշտ խմել եմ,— ու էդ առավոտը մորեն նոր ծնված՝ ողջ-առողջ ոտքի եմ կանգնել, գիտես թե իսկի բան պատահած չի եղել հետս:

Հա՛, էն կասեի, որ Ղարսը առնելու գործը երկարացավ: Մեր գեներալները խորհրդի նստան, ու էն միտքը դուրս բերին թե՝ բերդը չուտով առնելու ճարը[9] բերդի տակը գտնվող[10] վառոդի ամբարը տրաքացնելն է[11]. Համ

---

1 D լլնեի
2 D տաքութիննեն
3 D սառուցը
4 D հիվանդութիւններով
5 D էէ
6 D կռիվներուն
7 D դոխտորները
8 D ես
9 D միջոցը
10 D գտնված
11 D տրաքացնելու է

ճամփա բանալու համար, համ թշնամուն սարսափեցնելու համար:

Հիմի ո՞վ էր էն խելառ կտրիճը, որ գլուխը փեշը դներ՝ երթար: Ես էի էդ խելառը: Մեջ ընկա, ասի թե՝ կերթամ:

Կնյազ[1] *Բեյբուրթովը*[2] *նայեց աչքերիս*[3] *մեջ, կուզեր ասել, թե՝ «Մեկուճար ես, ափսոս ես»*[4]*: Ես էլ իրան*[5] *աչքերու մեջ նայեցի, ասել կուզեի թե՝ «Ինձի փառքից մի ղրկիր»*[6]*...*

Վերջապես, ինչ երկար գլուխ ցավցնեմ. գիշերը ծածուկ, մենակ ճամփա ընկա, ոչխարի սև մորթին վրաս քցած. տեղն ևկած ժամանակը չորս թաթ[7] *կերթայի, որ ղարաղուլները*[8] *(պահակ)*[9] *իմանային, թե անասուն կլինի*[10] *երթացողը. մեկ խոսքով՝ հոգիս բերանս առած՝ գնացի...*

Լույսը չբացված՝ երկինքը բոցով լցավ[11]*, աշխարք՝ դղրդոցով, ամբարը տրաքեցրի...*

Ասկյար, փաշա[12] *փախչող-փախչողի*[13]*: Կեսօր չեղած բերդի վրա էինք, բերդի մեջ եղած անգլիչան, ջիլո-միլո*[14]

---

1 D Իչխան
2 D Բեբուդովը
3 D աչքերուս
4 D «Դու հայ ես, արյունս ես. էդ բանը մի աներ, մեղք ես, ռուսը շատ է, թո՛ղ իրենք անեն» *փխ* «Մեկուճար ես, ափսոս ես»
5 D իրեն
6 D «շատ ու քչի բան չկա, սրտի մեջն է բանը. սրտիս մեջ համ քաջությունն կա, համ աղգիս սերը...» *փխ* «Ինձի փառքից մի ղրկիր»...
7 D թաթով
8 D պահապանները
9 D չիք
10 D կրնա ըլնի
11 D լցվեցավ
12 D + անգլիչան, ֆրանցուզ
13 D + եղավ
14 D ասկյարները *փխ* անգլիչան, ջիլո-միլո

ավլեցինք, թափեցինք բերդի պատերեն ցած, Ղարսա ջուրը սրբեց տարավ:

Իրիկունը[1] Բեյբուրթովը[2] լալով գրկեց ինձի, ճակատս պաչեց ասելով. «Մեր զորքի[3] պարծանք, ասա, ի՞նչ կուզես»: Ես էլ ասի. «Ուզածս եղավ, բերդն առանք, էլ բան չեմ ուզե»: Առջևս թափեց խաչերն ու մեդալները[4] թե՝ «որը կուզես՝ առ, բոլորն առ»: Ես էլ ասի թե՝ օրենքի կարգով տուր, աստիճանիս հարմար: Էս խաչերն ու մեդալները[5] ինքը տվավ, տեսեք՝ վրան գրած է՝ «Քաջուրթյան համար. 1855 թվին»:

Եվ Ղազար աղան՝ ոգևորված կրծքին զարկելով[6] ցույց տվեց չքանչանները, մեկ-մեկ նայելով հանդիսականների աչքերին, ապա չարունակեց խոսքի թելը[7]:

— Գարունը նոր էր բացվել: Իշխան Բեյբուրթովը[8] ինձի մեկ զաղանի նամակով չտապ ղրկեց նամեստնիկի մոտ, Գյումրի քաղաքը: Գնալ-գալու համար երկու օր միջոց տվավ: Ձիս նստա ու թռա:

Մշկոներու մոտ ձիուս ոտներն ընկան մեկ քանի զաղթական հայեր: Մեկ մարդ ու կնիկ լացով ասին թե՝ քրդերը[9] իրենց լուսի պես աղջիկը փախցրին, տարան: Ու ցույց տվին տարած կողմը: Էլ չմտածեցի պաշտոնիս մասին, նորեն թռա: Մութը կոխեց. ի՜նչ մութ — սև ձուխ.

---

1 D Իրկունը
2 D Բեբուդովը
3 D Ավգի *փխ* Մեր զորքի
4 D մեյդալները
5 D մեյդալները
6 D զարնելով
7 D նորից խոսքը *փխ* խոսքի թելը
8 D Բեբուդովը
9 D թուրքերը

մատը աչքդ կոխեին, չէիր տեսնի: Մեկ ոտքս ձիու վրա, մեկէլը գետնին՝ ականջս դրած հողին, կլսեի աղջիկ փախցնող քրդերի[1] ոտքի ձենը — հեռու, հեռվանց:

Ջիս կրակ ու քրտինք մտած՝ կանգնեցրի Ջուխլուի ա-վերակ կարմունջի վրա:

Տեսած կաք, ի՞նչ խոսք, մեր նախնյաց[2] չինած էդ զար-մանալի կարմունջը[3] մեջը դարդակ, կամարակապ, իջևան տուն: Ջիս թողեցի դուռը, ես[4] ներս մտա: Շատվոր չնչի ձեն առա[5], խոմփոցներ, նրանց մեջեն երեխայի պես մեկ անուշ չունչ: Էս է, հայի աղջիկն է, մտածեցի[6], ու կամաց-կամաց մոտեցա, մատներովս երեսը շփեցի[7], տեսա, հայի աղջիկն էր[8]: Երկու քուրդ[9] փռել էին[10] յափունջին աղջկա վրան, իրանք պառկել էին յափունջու վրա երկու կողմեն: Էնպես որ աղջիկը չէր կրնա ժաժ գալ յափունջու տակը. ո՞ւր մնաց ելներ ու փախներ:

Մտածեցի՝ սպանեմ քրդերին[11], աղջիկը առնեմ. վա-խեցա, որ նրանց ձենեն մեկէլները զարթնեն[12], կռվի բռնվինք, մուրթի մեջ խեղճ աղջիկը զարկվի:

Հնար մտածեցի: Խանջալովս յափունջին երկու կողմեն կամացուկ կտրեցի, աղջիկը հանեցի մեջերեն, առա ձիուս

---

1 D թուրքերի
2 D հայոց թագավորների փխ մեր նախնյաց
3 D շենքը
4 D *էիք*
5 D + թուրքի ու քրդի
6 D + ես
7 D նայեցի տեսա փխ երեսը շփեցի
8 D *էիք* հայի աղջիկն էր
9 D թուրք
10 D են
11 D թուրքերին
12 D զարթնին

վրա: Լույսը չճեղքված հասցրի հորն ու մորը: Նրանց օրհնանքն առած՝ եկա հասա Դյումրի նամեստնիկի մոտ[1] ու նամեստնիկի պատասխան նամակն էլ առած՝ բերի տվի Բեյլբութովին[2], որոշված ժամանակին, վայրկյանը վայրկյանին:

Էստեղ էն ախուր բանը պիտի ասեմ որ,— ձայնը իջեցնելով, հառաչանքով ասաց Ղազար աղան,— մեր քաջությունները զուր անցան: Ավազակ, խայտառակ եվրոպացիք պահանջ դրին, պայման կապեցին ու մեր կռվով առած հողերը նորեն ետ տվինք Սուլթանին[3]...

Ղազար աղան մի պահ լռեց: Ուստա Կարոն կրկին[4] սուրճ հրամցրեց[5] նրան, խմեց[6], հանգստացավ, ապա մի նոր պատմության գլուխ սկսեց[7]:

Սա արդեն նրա սովորույթն էր. երբ նա մի անգամ բաց էր թողնում պատմությունների կծիկը, այլևս, հակառակ իր կամքին, գլորվում էր, գլորվում էր կծիկը, մինչև որ մի արտաքին հանգամանք առաջը կտրեր[8]:

— «Էս պատմությունս էլ,— չիտկվեց դեպի Ուստա Կարոն, կարծես միայն նրա համար էր պատմում իր զրույ-

---

1 D մոտը

2 D Բևրութովին

3 D որ քրխաոննի արունով առած հողերը հետ տվինք թուրքին: + Էս բանի վրա մեր թագավորը հանկարծակի մեռավ արտի ցավին: Ու նորին մեր խեղճ հայերը դերի դառան կռապաշտ թուրքին. Է՛յ վախ, Է՛ վախ... *փխ* ու մեր կռվով առած հողերը նորեն ետ տվինք Սուլթանին

4 D *չխք* Ուստա Կարոն կրկին

5 D Հրամցրին

6 D + մի քիչ

7 D Ու կրկին շարունակեց պատմության թելը *փխ* ապա մի նոր պատմության գլուխ սկսեց

8 D *չխք* չիտկվեց դեպի Ուստա Կարոն ... Էս անմոռանալի պատմությունս էլ

ցը,— էս անմոռանալի պատմությունս էլ[1] էն ժամանակվա համար է[2], երբ Դաղստանի իմամ Շամիլը Կավկազի բարձր սարերու ծերին թառած՝ դլուխ էր բռնել[3] մեր թագավորի դեմ, հարկ չէր տալիս, չէր հնազանդում ու Սուլթանի հետ էր իրեն սիրտն ու գործը»[4]:

Նամեստնիկը, Ղարսա կռվեն հետո, ինձի հետը նորեն Թիֆլիզ էր տարել. ինձի իրեն հարազատ տղայի պես կսիրեր, պալատի մեջ փակ դուռ չկար առջևս:

Հիմի որ կռիվ սկսավ, կանչեց՝ մեջքիս զարկեց, ասավ,— «Ռեզի տեսնիմ, Լազա՛ր, էս անգամ կապիտան պիտի դառնաս»:

Էսպես դնացինք Դաղստան կռվի:

Շատ դժվար էր էս կռիվը, քանի որ Դաղստան ասածդ — սարեր ու ձորերու մեկ թնջուկ, քեզի[5] օրինակ: Առաջդ[6] բաց դաշտ չկար, որ թչնամուդ բրդեիր[7], հապա՝ սար ու քար[8], անդունդ ու անտառ, գազաններու բուն: Ելիր, իջիր, վա՛յ թե ոտքդ դուրս պրծներ, մինչի անդունդը մերիկ կանչելով պիտի երթայիր: Մեր ռուսի սալդաթն[9] էլ՝ դաշտ ու դուրանի մարդ. սարը տեսներ ամպ կկարծեր, ձորը

---

1 D *չիք* Սա արդեն նրա սովորությունն էր ... Հանգամանք առաջը կտրեր:

2 D վրա է

3 D բարձրացրել

4 D *չիք* Հարկ չէր տալիս, չէր հնազանդում ու Սուլթանի հետ էր իրեն սիրտն ու գործը:

5 D ձեզի

6 D առջևդ

7 D + ուտելիր

8 D ձոր + քար–ապառաժ

9 D սոլդատն

տեսնել՝ ջուր ու գետ[1]: Էս ամեն պակասն էլ կլրացնեին իրանք՝ Շամխլի իգիթ զինվորները — չաչան, լեզգի[2], չարքյազ[3] անվախ, անահ. մահն երես չդարձնող սրբած թրեր:

Արի՛ ու էս կռվեն գլուխ հանե: Թնդանոթը կտրաքեցնեինք՝ կերթար կդիպչեր ապառաժներուն. թշնամու տեղ վայրի հավքերն ու անասունները ծակ ու ծուկերեն փախ կուտային, կթռնեին...

Մեկ էլ հանկարծ, սատանան դիտի[4], որտեղեն[5] Շամխլի զորքի զափազուլի մեծ-մեծ գնդակները կարկուտի պես վրաները կթափվեին: Զորս դին կնայենք[6] մարդ-մուրդ չէր երևա[7]... կերթային մութն ու ծմակ անտառներու մեջ կկորեին: Ո՞ւմ հետը կռվեիր — ծառներու[8], քարերու, թե՞ հավքերու հետ:

Էստեղ[9], վրաս չխնդաք, որ ասեմ թե՝ չատ անգամ կռվի ժամանակ մորուքս մեր պոլկի[10] համար օրացույց դարձավ: Էս էլ գիտնալու է, որ հիմի է՝ մորուք կպահեմ ծերուԹյանս պատվի համար: Առաջ Աստծու իրան օրը թրաշ կանեի: Բայց կռվին, սար ու ձորերու մեջ, ազատ ժամ ու[11] մի՞ջ կար թրաշի — ամենևին: Մորուքս

---

1 D ամալը սարեն չէր ջոկե, ձորը ջրեն *վի՛ս* սարը տեսներ ... ջուր ու պետ

2 D չաչաններ, լեզդիներ

3 D *չիք*

4 D Ասաված դիտե *վի՛ս* սատանան դիտի

5 D որ տեղերեն

6 D կնայեինք

7 D երևնա

8 D ծառերու

9 D *չիք*

10 D + (վաչտի)

11 D *չիք* ազատ ժամ ու

երեսիս[1] վրա երկու-երեք մատ հաստությամբ կնստեր: Ընկերներս կհարցնեին – «Մալխազով, էսօր ամսու քանիսն ենք, ի՞նչ օր է[2]»:

Ես էլ ձեռքովս կշփեի երեսս[3], ճիշտ ու ճիշտ օրը, թիվը[4] կասեի. ինչու որ մորուքիս հաստ ու բարակ, կարճ ու երկեն մազը ժամանակի աստիճանը ցույց կուտար: Միտքս էի պահում վերջին թրաշիս օրն ու ամսաթիվը, ու հիմի ավելացնելով էդ թրաշից հետո անցած օրերը, որ ինչպես ասի՝ մորուքս ցույց կուտար, մտքիս մեջ կհաշվեի ու անսխալ կիմանայի, թե ինչ ժամանակի մեջ կգտնվեինք[5]:

Շատ անգամ նամեստնիկը խնդալով կհարցներ. «Էյ, Լազար, օրացույցդ ի՞նչ նշանց կուտա»:

Կշփեի մորուքս ու ձեռաց կասեի, խոսքի օրինակ. «Ջերդ մեծությունն, էսօր սեպտեմբերի ութն է, օրը հինգշաբթի»: Ու մորուքս չատ տերտերներեն ավելի չիտակ ցույց կուտար:

Ասելիքս էս չէր, հապա էն, որ նամեստնիկը իրան կուտեր, որովհետև ամոթ էր ողջ աշխարքի առաջ, թե ռուսաց զորքը, անգլիչանին ու ֆրանցուզին ծակը մտցնող ռուսաց զորքը, հիմի անճար մնացել է էս սարերու վայրենիներու դիմաց:

---

1 D երեսներուս

2 D էսօր ի՞նչ օր է, ամսու քանիսն ենք *փխ* էսօր ամսու քանիսն ենք, ի՞նչ օր է

3 D մորուքս

4 D *չիք*

5 D կիմացներ, թե քանի օր կա, որ թրաչ չեմ ունեցել: Ու գիտնալով վերջին թրաչիս օրը՝ մտքիս մեջ հաշվելով, ինչ ժամանակի մեջ գտնվելներս անսխալ կիմանայի *փխ* Միտքս էի պահում վերջին թրաչիս ... ինչ ժամանակի մեջ կգտնվեինք

Էստեղ չմոռանամ[1] *ասել, որ էս կռվի միջոցին*[2] *առաջին հեղ ծանոթացա Գալուստ աղբորս հետ, որ դոխտուրի մոտ փելդշեր էր,— ղլուխը թեթևակի թեքելով դեպի փելդշեր Գալուստը*[3]*,— բայց դոխտուրեն չատ բան կհասկնար ու չատ գործ կտեսներ: Մեկ քաղաքից էինք, լավ բարեկամացանք, աղբեր դառանք:*

Ունկնդիրներից ոմանք Ուստա Կարոյի հետ հայացքները ուղղեցին դեպի ծերունի փելդշերը, որը համեստությամբ ղլուխը կախեց և սկսեց դողդոջ մատներով ծխախոտ փաթաթել[4]*:*

Նամետանիկի հետ կկռնեինք սարերու ղլուխը թշնամու տեղը դտնելու համար: Ինքը դյուրբին[5] *(հեռադիտակ)*[6] *կդներ աչքերին ու*[7] *կնայեր*[8]*: «Մալխազով, կասեր ինձի, ես էն սարի լանջին ղինված մարդիկ կտեսնեմ*[9]*, դուն ի՞նչ կասես»: Ես էլ՝ ձեռքս ճակտիս աչքերիս*[10] *վրա դրած՝ կնայեի ու կասեի. «Ջերդ մնծություն, ներո՛ղ եղիր, տեսածդ չիտակ չէ. ոչխարի հոտ է երևացողը*[11]*»:*

Ու վերջը միշտ իմ խոսքս կըլներ:

---

1 D չմոռնամ

2 D ժամանակ

3 D *չիք* ղլուխը թեթևակի ... փելդշեր Գալուստը

4 D *չիք* Ունկնդիրներից ոմանք Ուստա Կարոյի ... դողդոջ մատներով ծխախոտ փաթաթել:

5 D դիտակը

6 D *չիք*

7 D *չիք*

8 D + կասեր

9 D ես բանը էսպես կտեսնեմ *փխ* կասեր ինձի, ես ... մարդիկ կտեսնեմ

10 D *չիք*

11 D ես բանը էս տեսակ կտեսնեմ *փխ* ոչխարի հոտ է երևացողը

Էսպեսով էր, որ[1] իմ աչքիս զորությունը փրկեց պատերազմը ու մեզի հաղթություն բերեց[2]: Ինոսքիս լավ ականջ դրեք, ամենեն լավ տեղն ենք պատմությանս:

Ես, որ արծվի պես մեկ աչքս[3] էս սարի վրա էր, մեկել աչքս[4] էն[5] սարի, մեկ[6] օր իրիկվան դեմ[7] տեսա, որ Հեռվեն Թշնամու չատ[8] զորք կուգար մեր վրա:

Հաշվեցի, տեսա, թե որ մենք էստեղ մնանք, նրանք պիտի վրա տան մեզի, չորս կողմեն փաթթեն[9], հում-հում պիտի ուտեն մեզի[10]: Նորեն հաշվեցի, տեսա, թե որ մենք վրա տանք, առավոտ չեղած՝ նրանց կբռնենք ձորի մեջ, մենք՝ վերև, իրենք՝ ներքև, ուղղակի հալած արճիճի տակ նրանց կխեղդենք: Կնշանակե՝ զորքը պիտի առաջ քշել: Բայց զորքը առանց Նամեստնիկի Հրամանի տեղեն չի շարժվի: Իսկ թե Նամեստնիկին ասեմ, ժողովի պիտի նստին, տեսածիս չպիտի հավատան, եկողն էլ գիշեր է, որ իրենք[11] տեսնեին. թե որ հավատան էլ, պիտի քննեն, խոսեն, վիճեն, ժամանակ պիտի կորի, բաներս բուրդ պիտի դառնա: Վճռեցի գործս ինքնագլուխ տեսնեմ: Հենց որ Նամեստնիկը քուն մտավ, ես ձիս առանց թամբի ու առանց սանձի հեծա, որ տեսնողը համոզվեր թե չիտակ

---

1 D *չիք էր, որ*
2 D *չիք ու մեզի հաղթություն բերեց*
3 D *ոտքս*
4 D *ոտքս*
5 D *մյուս*
6 D *մի*
7 D + *նայեցի*
8 D + *մնծ*
9 D + *ու*
10 D *չիք*
11 D + *էլ*

վռազ էի: Լազըրի[1] մեկ ծայրեն մյուս ծայրը վազեցի դռռալով — «Նամեատնիկը հրաման տվավ ինձի, որ զորքը տանեմ[2], ելեք, հագնվեք, չուտ, չուտ». ամենքը մեկ վայրկյանի մեջ ոտքի ելան, ճիավոր ու ոտավոր, կազմ ու պատրաստ:

Զորքի գեներալները ինձի հարցրին — «Ո՞ւր պիտի երթանք»:

Ես չուզեցի[3] ճշմարիտն ասեմ[4]. գաղտնիք պահելը հաջողության էն սկիզբն է ու կեսը: Էսպես պատասխան տվի.— Ջիբուխիս ծուխը ուր որ կերթա, ետևեն արեք:

Ես հիմի ծուխս չեմ քաշի[5]. առաջ չիբուխս բերնես վար չէր ընկնի: Բայց քանի տարիքս առա ու պողպատությունս էլ անցավ, ծուխն ու խումը թողեցի: Մերությունը հանաք բան չիմանաք: Նապոլեոն մեծն էլ, ինչպես ուսումնարանի մեջ կարդացել էի, որ Հարյուր[6] պատերազմների մեջ եղավ ու իսկի վերք չունեցավ[7]. (կարծեմ, որ ինքն էլ պողպատված էր). բայց որ ծերացավ, փորի ցավեն ընկավ մեռավ: Ժամանակի խարտոցը ամեն բան կուսես. պողպատ էլ չի դիմանա, ժայռ-ապառաժ էլ:

Զորքը բոլորը ինձի հնազանդվեցավ[8]: Սուտ հրամանի հանելուս մարդ չկասկածեց, քանի որ բոլորին հայտնի էր, որ նամեատնիկը ամենեն շատ ինձի կսիրեր ու կհավատար: Առանց հրամանի ներս ու դուրս կանեի, մինչև իսկ

---

1 D + (բանակ)
2 D տանիմ
3 D չուզեցա
4 D ասել
5 D քաշև
6 D Հարուր
7 D + ևս
8 D հնազանդեցավ

իրան[1] քնած սենյակը կմտնեի ու կզարթնեցնեի: Ու մանավանդ որ՝ նրա գրած ու բերանացի հրամանները դեներալներին ես կհայտնեի[2]: Մեկ էլ որ ամեն մարդ գիտեր, թե որ սուտ խոսեի, ասել կուզեմ, սուտ հրաման տայի, նամեստնիկը գլուխս պիտի կտրել տար, թեկուզ լինճ հոր պես կսիրեր. էս օրենք է պատերազմի:

Ես էլ մտածեցի. թող փրկեմ զորքը, թող գլուխս կտրեն: Մեկ օր եղել եմ՝ մեկ օր էլ պիտի մեռնիմ, բայց անմահ անուն կթողնեմ[3], հորս ու մեր քաղաքի համար[4] հավիտենական փառք ու պարծանք:

Զորքի գլուխն անցած կերթայի: Վա՛յ թե ձիս չհնազանդեր ու գլուխն առներ, փախներ. պապիս ձիերը հրեղեն էին ու կատաղած[5]: Ծնկներովս էնպես կսղմեի փորին, որ չունչը կկտրեր, կանգ կառներ...

Հա՛, զորքի գլուխն անցած էսպես կերգեի.

«Խմենք պիտի, պարենք պիտի,
Երբ մահը գա, մեռնենք պիտի,
Հայրենիքի պատվի սիրուն[6].
Զարկենք պիտի, մեռնենք պիտի...»:

Էսպես կերգեի, ու ժամանակ-ժամանակ էնպես կիմանայի, թե մահի կերթամ... Էս մտքերու մեջն էի, երբ հասա ուզածս տեղը՝ Դարգո[7], Սալավաթ սարերու տակը:

---

1 D իրեն
2 D կհանձնեի
3 D + ու ազգիս ու
4 D չիք ու մեր քաղաքի համար
5 D կատղած + բայց
6 D Թագավորի, ազգի պատվին փոխ Հայրենիքի պատվի սիրուն
7 D + Իչքերին

Զորքս չարեցի կռվի համար ու սպասեցի: Մեկ էլ ձորը լցվավ[1] Շամխլի զորքերով: Նրանք միամիտ էին, մեղի չէին տեսել:

Օրվա լույսի[2] հետ կրակ ու բոց բացինք: Ի՜նչ կռիվ, ի՜նչ կրակ: Բոլոր տեսած կռիվներս սրա քով խաղկընելիք: Ձաչաններն ու լեզդիները առյուծի պես կկռվեին, դայլի պես կոռնայինն: Մերոնք էլ պակաս առյուծներ չէին: Մենակ վախն էն էր, որ նրանք չատվոր էին, սարի ու ձորի կռվի մեջ վարժ: Երկու օր ու գիշեր կռիվ ունեցանք: Մեր կողմից[3] թե մեկ մարդ կվիրավորվեր, նրանց կողմից[4] հարուրը կվիրավորվեր:

Ես կռվի կրակ ու բոց տեղերն էի: Ձիս, հրեղեն ձիս, զարկվեցավ տակս, ձախ թևս էստեղ վիրավորվեցավ. թևիս էն տեղը, որ հայրս մկրտությանս ժամանակ[5] բռնել էր[6] ու պաղ ջրի մեջ կոխել էր[7] ինձի, էդտեղ[8] մուխ չէր առել ու հասարակ մսի պես էր մնացել: Էդ վերքը Գալուստ աղբերս ինքը հետո լավացրեց: Էնպես լավացրեց, որ տեղն էլ չի երևա հիմի[9]:

Վերջապես երկու օր հետո՝ առջևներս էլ մարդ չկար — մենակ մեռած, լեշեր, հատ ու կտոր մարդ փախավ, էն էլ իմամին սև լուր տանելու համար:

---

1 D լցվեցավ
2 D լուսի
3 D կողմեն
4 D կողմեն + տասը կընկներ
5 D պահին
6 D *չիք*
7 D մեջ էր կոխել *փխ* մեջ կոխել էր
8 D էդտեղը
9 D *չիք* Էնպես լավացրեց, որ տեղն էլ չի երևա հիմի:

Ուրախ ու[1] զվարթ, երգով ու խաղով դառանք լագըր (բանակատեղ)[2]: Երկու օր ոչ կերել էինք, ոչ քնել, բայց նորեն թռնելով կերթայինք, թև էինք առել. հաջողությունը մարդուն թև կուտա:

Լագըր մտանք-չմտանք՝ նամեստնիկի ծառաները՝ թթված դեմքերով եկան առաջներս կտրեցին, ինձի տարան նամեստնիկի քովը: Ինքը լսել էր ինքնագլուխ հրաման տալս, էնպես էր զայրացել, որ ինձ տեսնելս[3] ու գլուխս կտրելը մեկ պիտի ըլներ: Էսպես կյանքս մազե կախված էր եղել: Գեներալները գործի հոտն առնելով հետս եկան: Նամեստնիկը ինձի տեսավ թե չէ բարկությունից[4] կրակ կտրած, ոտքերը գետնին[5] զարկեց ու գոռաց — «Էստեղ նամեստնիկը ե՞ս եմ, թե դու»,— և[6] հրամայեց, որ վրայես խաչերն ու մեդալները[7] և էլ էպոլետները[8] պոկեն:

Գեներալները վախու պապանձվել էին: Իմ իսկի պետքս չէր. գիտես թե՝ ինձի հետ գործ չուներ էս բանը: Ծառաները եկան, յափունջին[9] առան վրայես. ի՜նչ յափունջի՝ քարմազ դառած: Նամեստեիկը տեսավ զարմացավ: Ջեռքիս վերքեն էլ դեռ արյունը[10] կկաթեր, մոռացել էի կապել:

---

1 D *չիք*
2 D (բանակ)
3 D տեսնելն
4 D բարկութենեն
5 D գետին
6 D ու
7 D մեդայլները
8 D ուսնոցները փխ և էլ էպոլետները
9 D յափունջիս
10 D արունը

Նամեստնիկը նայեց ինձի, նայեց գեներալներին[1], էդ վայրկյանին գեներալները մեկ մարդու պես ընկան նրա ոտները՝ աղաչելով. «Ձերդ մեծություն, ներե[2] Մալխազովին. նա ազատեց Ձեր զորքը. թշնամին հաղթված է»:

Նամեստնիկը էս խոսքի վրա մոտեցավ ինձի, նայեց, խղճմտանքով[3] նայեց, աչքը ընկավ հադուստիս[4]: Վրաս-պլուխս, փափախս, չերքեզկաս, կոշիկներս[5] ամենքը ծակծկված: Հանել տվեց[6] վրայի հադուստներս... Ի՜նչ ասեմ, 50 հատ, 100 հատ գավախլուի գնդակների արճիճներ[7] թափվեցին հատակի վրա:

«Մա՛րդ աստծու, էսքան գնդակ ես կերել ու չես մեռել, հրա՛շք է, Աստված վկա»:

Կուրծքս բացեց, տեսավ, ողջ[8] կապուտցած. գնդակները ուժով դիպել էին, միս ու ոսկրս[9] չէին ծակել, դիպած տեղերը կապուտցել[10] էին մենակ: Էս բանի վրա սիրտը էնպես կակղեց, որ գրկեց ինձի, ճակատս պաչեց ասելով.

– Կապիտա՛ն Լազար, իմ[11] սիրելի՛ Լազար...

Էսպես դառանք կապիտան:

Էս հրաշքի համար էր, որ Նամեստնիկը ինքն[12] իր ձեռքով նամակ գրեց Թագավորին[13], ու էն ժամանակվա

---

1 D գներալներուն
2 D ների՛ր
3 D խղճմտած
4 D + մի բան որ ես չէի տեսել
5 D փափախ – չերքեզի – կոշիկ *փխ* փափախս, չերքեզկաս, կոշիկներս
6 D տվավ
7 D փամփուշտներ *փխ* գնդակների արճիճներ
8 D բոլորը
9 D ոսկորն
10 D կապուտցրել
11 D *չիք*
12 D *չիք* Նամեստնիկն ինքն
13 D Թագավորին Նամակ գրեց *փխ* Նամակ գրեց Թագավորին

Պետերբուրի[1] ու Մոսկվայի կազեթները զարմանալի բաներ դրեցին վրաս – «Լազար Մալխազով, կավկազսկի գերոյ[2]»: Ամեն մարդու և կնկա բերանն էր էս խոսքը: Թագավորը[3] խաչ ղրկեց: Ա՛յ, է՛ս խաչն է՝ Սուրբ Գյորգի[4]: Գալուստ աղբերս էս բոլոր բաներում ականատես է:

Այդ միջոցին ֆելդչեր Գալուստը, կոկորդը չիտկելով, խռպած ձայնը հարմարեցնելով՝ ասաց.

– Կազեթները կպահեի. միայն վերջի տարիներս թոռներս մուկի պես ծակ ու ծուկ մտան, փչացրին թուղթ ու կազեթ: Ղազար աղայի ձեռքը ես լավցուցի, ոսկորները ավազ էին դառել: Է՛յ գիտի օրեր...

Ղազար աղան չարունակեց իր խոսքը.

– Նամեստնիկը ամեն բան տեղին իմացավ գեներալներեն: Լսեց, որ երկու օր ու գիշեր բան չենք կերել ու աչք չենք փակել[5]: Հրամայեց ծառաներուն, ինձի տարան իրա սենյակներեն մեկը, հանվեցրին, դեղ քսեցին մարմնիս վրա, պառկեցրին, հավի ապուր կերցրին, ռոմով չայ[6] խմցրին: Հանգստացա ու քուն մտա: Մեկ օր ու երկու[7] գիշեր մեջքիս վրա քնել էի: Երբ որ զարթնա, ոնց որ գարնան նոր բացված արեգակ:

Իրիկունը էս հաղթությյան պատվին՝ նամեստնիկի մոտ կերուխում եղավ[8], պար ու մուզիկա: Ես նոր հագուստներ

---

1 D Պեաբրուլի
2 D + (հերոս)
3 D + ինձի
4 D Գիորգիյ
5 D գոցել
6 D ռում փխ ռոմով չայ
7 D չիք
8 D կար

հագած, կապիտանի էպոլետները[1] դրած՝ նամեստնիկի առաջն ելա:

Է՛յ, ինչ երջանիկ օր էր. անմահական, դրախտի օր...

Մուզիկան ածեց. չամպայնի դինիները տրաքվեցան, փրփուրը մոմած հատակը բռնեց: Խմեցինք թագավորի, թագուհու, հայրենիքի[2] կենացը: Հետո պարը սկսավ: Նամեստնիկը ինքը առաջինը պարեց՝ կազաչկա[3], հետո ես, հետո բոլոր գեներալները[4], օֆիցերները:

Ես ինչքան չնորհք ունեի՝ թափեցի — մերկ խանջալներով պարեցի, բուռնիկան[5] գլխիս[6] դրած, չամպայնի լիքը բաժակները ճեռքիս պարեցի, կամարինսկի[7], կազաչկա, լեզգինկա[8]: Խենթ ու խելառ, ոչ հոգնել կար, ոչ էլ կշտանալ...

Էյ վա՛խ, էյ վա՛խ, անցած օրին օր չի հասնի. սուտ բան է մնացածը[9]:

Հապա կերանք-խմեցինք, երգեցինք, պարեցինք երեք օր, երեք[10] գիշեր: Երեք օր ու գիշեր որ լրացավ, Շամիլի

---

1 D ուսնոցները

2 D + նամեստնիկի, մեր զորքի ու նվաճած ծառայիս

3 D + (պար)

4 D գեներալներն + ու

5 D + (չիշը)

6 D գլխուս

7 D + կամարինսկի (պար)

8 D *չիք* կազաչկա, լեզգինկա

9 D *չիք* սուտ բան է մնացածը: + Նամեստնիկն էլ՝ հասարակ սոլդաոի պես հարբած, գեներալներու հետ կերգեին էն իմ երգը.—

«Խմենք պիտի, պարենք պիտի,
Երբ մահը գա, մեռնենք պիտի,
Թագավորի, ազգի պատվին.
Զարկենք պիտի, մեռնենք պիտի...»

10 D ու

կողմեն մարդ եկավ, թե իմամը անճնատուր է: Հասկացա՞ք, թե բանը ուրտեղեն ծագում առավ, Շամիլի տաչտը ուրտեղեն ծակվեց[1], գլխո՞ւ եք...

Ղազար աղան հարկ համարեց այստեղ վերջացնել իր պատմությունը. թե՛ հոգնել էր, թե՛ արդեն բավական ուշ էր: Մի տաք-տաք սուրճ խմեց սրա վրա. մինչ այդ իրիկվան ժամի զանգերը տվին: Բոլոր ունկնդիրներին մնաս բարևասելով և բոլորից հարգալից[2] բարև ընդունելով, ելավ ֆելդշեր Գալուստի հետ ժամ գնաց, սակայն մեջքը դրեթե բոլորովին ուղղվել էր՝ քայլում էր գլուխը բարձր, կեցվածքը՝ զինվորական, փափախը[3] գագաթի ծայրին[4], ու մի քիչ[5] աջ ականջի վրա չրջած:

ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ՆՐԱ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԵՏ

Կապիտան Ղազարի և ֆելդշեր Գալուստի մեկնելուց հետո՝ Ուստա Կարոն և ուստա Մացակն էլ թողին սրճարանը և գնացին Ուստա Կարոյի իջևանը: Ուստան չատ հետաքրքրված էր իմանալու Դաղստանի կռիվներից հետո կապիտանի անցրած կյանքը: Մացակը պատմեց, ինչ որ ինքը լսել էր ու տեսել, ինչ որ ողջ քաղաքը գիտեր նրա հետագա կյանքի մասին:

---

1 D ծակվեցավ
2 D Հարգանքի
3 D + մի քիչ
4 D գագաթն *փխ* գագաթի ծայրին
5 D չիք մի քիչ

Դազստանը նվաճելուց հետո փոխարքան Պետերբուրգ է գնում պատերազմի և հաղթանակի մասին զեկուցում տալու ցարին և մնում այնտեղ. նրա տեղը ուրիշ փոխարքա է գալիս Կովկաս: Ղազարն էլ գնում է Ալեքսանդրապոլ ծնողներին տեսնելու և մնում է նրանց մոտ: Եվ որովհետև այլևս փոխարքայի թիկնապահ չէր, լավ է համարում մնալ հոր տանը և ծառայել տեղական բանակի մեջ:

Ծնողները բավական ծերացել էին և բոլորովին մենակ էին: Նրանց աչքերը ջուր էր կտրել մի հատիկ որդու ճանապարհը սպասելով: Գրեթե քսան տարի աննշան ընդհատումներով, նա բացակա էր տնից. և հիմա որ իրենց ձեռքն ընկավ, ուղղակի ուժով-զոռով բռնեցին նրան պսակեցին մի գեղեցիկ, համեստ աղջկա հետ, որպեսզի խռխռուննայց տոհմը չվերջանար:

Ընտանեկան կյանքը շատ խորթ եկավ Ղազարի համար: Երկար ժամանակ չէր կարողանում հարմարվել նոր կյանքի ձևերին: Մարդը տարիներով դուրսը, լեռներում ու դաշտերում, կատարյալ վայրենացել էր: Կռիվների մեջ ե՞րբ էր նա մոր ձեռքով եփած անուշ կերակուր տեսել, շատ անգամ քաղցից որսի միսը հում-հում էր կերել կամ ծառի չոր կեղևը ծամել: Ե՞րբ էր նա կնոջ ձեռքով ձգած անկողին մտել. քարն էր եղել բարձ և թաց գետինը՝ անկողին: Այսպիսի մարդը ինչպե՞ս հարմարվեր փափուկ կյանքին:

Մի խոսքով՝ սիրտը տան վրա դեռ տաք չէր: Ծառայությունից ազատ օրերը որսի էր գնում կամ ընկեր-օֆիցերների հետ գինարբուքի մեջ գիշերները ծայրե ծայր լուսացնում:

Տանը եղած միջոցին էլ կամ ձին էր լողացնում, կամ զենքերով էր զբաղվում, կախված տեղերից վար բերում,

մաքրում, նորից կախում և նոր-նոր ձևերով դասավորում փայլեցրած զենքերը պատերի վրա: Սակայն կամաց-կամաց այս վայրի թռչունը սովորեց ընտանեկան բակին, սիրեց կնոջն ու երեխաներին, որ արդեն երկու հատ էին՝ մի տղա, մի աղջիկ:

Մալխազ աղան խիստ կրոնական մարդ էր, որ առանց «եկեսցէ»-ի անկողին չէր մտնում. Ղազարն էլ ենթարկվեց հոր ազդեցությանը, որի հեղինակությունն ընդունում էր անպայման և հնազանդվում էր սիրով: Դարձավ եկեղեցասեր և սկսեց «Հոգու ետևեն» ընկնել: Առավոտ կամ երեկո անպատճառ, գոնե մի անգամ, ժամ պիտի գնար, ջերմեռանդ աղոթք աներ ու թեթևացած խղճով տուն դառնար:

«Պատերազմներու մեջ կամա-ակամա, գիտությամբ ու անգիտությամբ և մասամբ նորին,— ամեն անգամ այս կերպ էր ասում Ղազար աղան, երբ խոսք էր բացվում այդ առիթով,— կրնա պատահել, որ չատ մեղք գործած ըլնիմ, անմեղ արյուն թափած, թեկուզ թագավորի հրամանով: Բայց հոգի ունիմ Աստծուն տալու, դառն հաչիվ ավուր ահեղ դատաստանին: Միայն էս մեկ թուրս հազար գլուխ է կտրել, հապա՞ մնացած թրերս ու փչտովներս, որ հաչվենք, ճոթը մինչի Ղըրմզ կհասնի: Թե որ միայն մեկ անմեղ արյուն էլ թափած ըլնիմ, նորեն հաչիվը չատ խիստ էր ըլնելու»:

Խոսքը այն կեռ և ծանր թուրի մասին էր, որ կախել էր արջի մորթու վրա, իր անկողնու գլխավերևը:

Քաջ մարդկանց մոտ հնուց հարգի օրենք կա, որ հազար հատ գլուխ թռցրած թուրը պետք է հանգստյան կոչել ու պատվով կախել բարձր ու պատվավոր տեղից: Այդպիսի մի նշանավոր, սրբագործված թուր ուներ կապիտան Ղազարը. տեսնողը տեսել է այն, ով որ ուզում է՝ կարող է տեսնել իր աչքերով և հավատալ: Թեև գյում-

բեցիք ասում էին՝ թե այդպիսի երեք թուր ունի Ղազարը, բայց այդ ճիշտ չէ. ճիշտը մեկ թուր է:

Ղազար աղան քաղաքում հարգված մարդ էր, բայց մի դարչնի բամբասանք չատ դառնացրել էր նրա սիրտը, որ չէր կարող մոռանալ: Մի քանի արուն-բերան գյումրեցիք նախանձից տարածել էին՝ թե Ղազար աղան պատերազմում թալան է արել, թուրքերին, դաղստանցիներին կողոպտել է, նույնիսկ բանակի դույքից ծախել է, դրա համար էլ հիմա այսպես ապահով, անկարիք ապրում է: Անպիտանները մոռանում են, որ նա թոշակ ունի, տուն ունի. Մալխազ աղան դոմշի ակով ոսկի է բերել, քաղաքում մի մեծ քարվանսարայի բաժնետեր է... բայց արուն-բերան մարդկանց ի՜նչ խոսք հասկացնես:— «Տո՛, ե՞ս թալան, կողոպուտ,— զայրացած ասում էր նա,— վա՛յ, վա՛յ, վա՛յ. ես որ փող ուղենայի, ձեռքս բռնողն ո՞վ էր: Ուրիշները բեռներով իրենց տները ոսկի, արծաթ, շալ ու աբրեշում, խալիներ ղրկեցին: Ես ամեն կռվի մեջ աչքս կուշտ մտա ու կուշտ դուրս ելա: Ես իմ փողիս հարգը չդիտեի, ուրիշի փողին ի՞նչ աչք պիտի տնկեի: Խոսքի օրինակ. Դաղստանի կռվեն հետո, երբ տուն կդառնայինք, մենք չոր, ամայի տեղով անցնելուս, զինվորիս մեկը մրսեց, հիվանդ պառկավ: Ջայ պիտի խմեցնեինք, որ քրտներ, լավանար: Սամովարի ջուրը տաքացնելու համար կպչան (փայտիկ) չկար: Ծոցիս մեջ եղած թուղթ փողերս բոլորը վառեցի, զինվորիս համար չայ չինեցի: Մենակ էս բանը հերիք էր կազեթի մեջ քցել՝ իմացնելու համար, թե ես ի՜նչ սրտի տեր մարդ էի և էլ միշտ էն սրտի տեր մարդն եմ: Ես հորես ուրիշ օրինակ չունեի, Մալխազենց տան մեջ արատ չի եղել ու չպիտի լինի»:

Երբ Ղազար աղան բավական տարիքն առավ՝ հրաժարվեց զինվորական պաշտոններից, սկսեց օրեցօր նույնպես

հրաժարվել զինվորական ունակութիւններից. Թողեց զինարբուքները, որսի ելնելը և ուրիշ մանր ու աննշան սովորութիները, ամբողջապես նվիրվեց ընտանիքին և եկեղեցուն:

Այսպիսի պարկեշտ կյանք վարելով, անցավ բավական ժամանակ, երբ նորից ռուս և թուրք իրար դեմ ելան, 1877 թվին: Ղազար աղայի հոգում կրկին ոտքի կանգնեց զինվորականը՝ կապիտանի սուրը ձեռքին: Թեպետ անցել էր ճակատագրային հիսուն տարին և ակներև կերպով կորցրել էր պողպատիկութիւնը, բայց դարձյալ ուժ ուներ և մանավանդ ուժեղ փափագ այս անգամ էլ չափվելու թուրքերի հետ, անպատճառ մի թուր էլ «հազարով օրհնված» — հանգստի կոչելու:

Սակայն ձեռքն ու ոտքը կապված էր ընտանեկան անհաղթելի արգելքներով: Նրա խեղճ մայրը ձմռան մեջ վախճանվել էր և ծերունի Մալխազ աղան էլ կսկծուց կաթվածահար անկողին էր ընկել: Այժմ ինքն էր տան մեծը, միակ կարող տղամարդը: Ո՞ւմ թողներ հիվանդ հորը, անփորձ կնոջը մատաղ երեխաներով: Չէ՞ որ որդիական և հայրական սրբազան պարտականութիւններ ուներ կատարելու: Դժվարին կացութեան մեջ էր կապիտան Ղազարը: Սակայն ամեն օր նոր-նոր զորախմբեր էին գալիս Ալեքսանդրապոլ ճակատ մեկնելու համար, զինվորական քայլերգով և որոտալից երաժշտութեամբ: Ղազարը՝ իր բոլոր մեդալները կրծքին չարած, ոգևորված ընդառաջ էր գնում նրանց, ճանապարհին ու կազարմաններում խոսում էր զինվորների և զինվորականների հետ: Իբրև հին փորձված զինվոր խրատում էր նրանց ու խրախուսում, սովրեցնում էր նրանց աչխարհագրական տեղերը, կռվի ձևերը, թուրք զինվորի թույլ և ուժեղ կողմերը ցույց տալով:

Եվ որքան որ մեծ էր կռվի մեջ նետվելու արդելքը, այնքան էլ զորեղ էր մարտնչելու իղձը: Հորը խնամելուց ազատ ժամերը նա իր սենյակը քաշված, փայլուն ու խոսուն գենքերի տակ, գիշերները լուսացնում էր թղթերի վրա՝ կարան ու էրզրումը առնելու պլանները քաշելով, հարձակման, պաշարման նախագծեր կազմելով: Խորհելով, որ այս ամենը Լոռիս-Մելիքովին պիտի հանձնի՝ իբրև մի փորձված զինվորի կողմից համեստ առաջարկներ:

Վրդովվում էր պատերազմի մասին անհաջող լուրեր լսելիս և աստիճ ափսոսում էր, որ ինքը այնտեղ չէ: Ցավով տեսնում էր իր անփոխարինելի բացակայությանը:

Հիվանդ հոր մոտ նստած՝ հոգով նա կռվի դաշտումն էր: Իրական միջավայրը ջնջվում էր: Տեսնում էր իրան բանակի գլուխը կանգնած, իր քաշած պլանները ձեռքին, հին օրերի պես՝ սուրը մերկացրած՝ հարձակում է գործում Թշնամու վրա: Ահա պաշարել է նա Ալաճա-սարը, որի գլխին Թառած Մուխթար փաշան մի քանի օր առաջ նեղն էր ձգել ռուս գեներալ Գեյմանին, իսկ հիմա ինքը՝ Ղազարը, նեղն է ձգել Թուրք փաշային, որը ոսկի Թուրն հանձնելով Ղազարին՝ անձնատուր է լինում: Ահա՛ Ղարսն ընկնում է նրա ոտների տակ: Ահա ինքը իր ձեռքով ցարի դրոշակը կանգնեցնում է բերդի գլխին: Ցարը հեռագրով նրան առաջին աստիճանի Գյորգիի խաչ է նվիրում և գեներալության հասցնում... Հայրը ցավից նեղված հառաչում է և Ղազարին հանում կռվի մեջից և դարձնում տխուր, անփառունակ իրականությանը:

Երբ Լոռիս-Մելիքովը, որ այս պատերազմի զորապետն էր, Ալեքսանդրապոլ եկավ, կապիտան Ղազարը իր բոլոր մեդալներով զարդարված՝ ներկայացավ նրան, հանձնեց իր պլանները: Գեներալը շատ չնորհակալ

եղավ, գնահատելով նրա փորձառությունը, որովհետև ինքը առաջին անգամն էր, որ Ղարսի կռվի մեջ պիտի մտնի, այնինչ կապիտանը մի անգամ արդեն եղել է և հաղթող դուրս ելել: Ղազարը ցավով հայտնեց կռվին իր չմասնակցելը, և զորապետը ցավով ընդունելով այս հանգամանքը, մխիթարեց նրան և ապահովեցրեց, որ իր ընկեր ռուս և հայ գեներալները ամեն բան կանեն, ինչ որ կապիտանի սրտի ուզածն է: Ապա նրան, իբրև հավատարիմ զինվորի, կարգեց բերդի մեծ վառոդատան գլխավոր պահապան: Անճնվեր մարդ պետք էր այս կարևոր տեղի համար, որովհետև քիչ անգամ չէ պատահել, որ պահապանները փողի համար գողանալ են տալիս վառոդի կեսը և փոխարենը սև հող լցնում: Մնաս բարևին զորապետը ասաց.— «Միամիտ եղիր, կռվի գործը լավ ձեռքերու մեջ է: Պատերազմեն հետո նորեն կտեսնվենք»,— խորհրդավոր ձայնով չեչտելով այս վերջին խոսքերը:

Ռուս և հայ գեներալները լրիվ կատարեցին Ղազարի երազած և չկատարած քաջությունները:

«Մարդիկ իմ գործս տեսան, խիղճս հանգիստ է: Ղարսն առան՝ էրզրումը վրան, Արդահանն առան՝ Բաթումը վրան: Ուրիշ էլ բան չէի ուզե»,— ասում էր Ղազար աղան մխիթարված:

Լոռիս-Մելիքովը չմոռացավ վարձատրել հավատարիմ կապիտանի ծառայությունը, թե՛ մեդալ տվեց և թե՛ դրամական նվեր:

Մի երեկո էլ, հաղթանակի այդ օրերում, Ղազարը լսեց, թե հին փոխարքան Թիֆլիս է եկել նոր գրաված երկրները տեսնելու համար: Պատշաճ ու պատվավոր համարեց Թիֆլիս գնալ՝ փոխարքայի աչքին երևալու համար, քան թե Ալեքսանդրապոլ մնար և սպասեր, որ նամեստնիկի Ղարս անցնելու միջոցին ներկայանար նրան:

Կապիտան Ղազարը անկեղծ փափագում էր իր սիրած փոխարքային օր-առաջ տեսնել, հին անուշ օրերը վերհիշել միասին: Համոզված էր, որ փոխարքան չի մոռացել իրան:

Այսպիսի տրամադրությամբ կապիտան Ղազարը ձին նստավ և մեկնեց Թիֆլիս: Հասած օրվա մյուս առավոտ հարդարված ու զարդարված ճամփա ելավ փոխարքայի իջած պալատը գնալու համար: Ինքը, իբրև ուղղակի ականատես՝ այսպես էր պատմում այդ տեսակցությունը:

— «Գլուխս կախ՝ մտածելով ասելիքիս մասին, կերթայի ինձ ու ինձ, երբ մեկը հետևես երկու ափով աչքերս բռնեց, ասելով — «Թե իմանաս ո՞վ եմ ես...»: Հրաշք բան էր ու անհավատալի.— ինքը նամեստնիկն էր: Ասացի.— «Ծառայիդ ինչպե՞ս ճանչցար, Ձերդ մեծություն»: Նամեստնիկը աչքերս թողեց, գրկեց ինձի, ասելով.— «է՛, Լազար, սիրելիս, ինչքա՜ն ես փոխվել, երանի՛ էն օրերուն»: Ես, աչքերս լցված՝ համբուրեցի ձեռքը: Ինքը բոլորովին ծերացել էր՝ ճերմա՜կ, ճերմա՜կ: Պատվեր տվավ, որ մեկէլ օրը պալատ երթամ: Գնացի, երկար խոսեցինք անցած օրերից, ինձի ճաշի պահեց: Մնաս բարևիս, զավակներուս նվերներ տվավ: Էսպես՝ սիրտս ուրախ, դարձա եկա տուն: Բայց քաղաքիս մեջ համբավ էր ընկել ու մինչի օրս էլ շատերը սխալմունքով կպնդեն, թե ես եմ նամեստնիկի աչքերը բռնել ու հարցում արել: Ես ասել եմ ու միշտ էլ կասեմ, որ էս բանը բոլորովին սխալ է, սուտ է: Նամեստնիկը ինքը իրեն իսկ ձեռքերով բռնեց աչքերս: Էդ խաղը իմ կողմեն անկրթություն և ամբարտավանություն կլիներ ինձեն էնքա՜ն բարձր աստիճան ունեցող մարդու դիմաց: Բայց չիտակը էն է, որ նամեստնիկը բռնեց աչքերս ու էդ հարցումն արավ: Ես սուտը չեմ սիրե. ամեն ինչի մեջ ճշմարտությունը լավ բան է»:

<«ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ» ԳԼԽԻ ՎԵՐՋԻՆ ԵՆԹԱԳԼԽԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ>

ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԼԵՀԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Փոխարքան Պետերբուրգ գնաց պատերազմի մասին զեկուցում տալու, և մնաց այնտեղ: Նրա տեղը ուրիշ փոխարքա եկավ Թիֆլիս: Կապիտան Ղազարն էլ Ալեքսանդրոպոլ գնաց՝ ծնողներին այցի և մնաց նրանց մոտ:

Եվ որովհետև այլևս թիկնապահ չէր, լավ համարեց մնալ հոր տանը և ծառայել տեղական բանակի մեջ:

Ծնողները բավական ծերացել էին և բոլորովին մենակ էին: Նրանց աչքերը ջուր էր կտրել մի հատիկ որդու ճանապարհը սպասելով: Գրեթե քսան տարի նա բացակա էր տնից, և հիմա որ իրենց ձեռքն ընկավ, ուղղակի ուժովղորով բռնեցին նրան պահեցին մի հարուստ, գեղեցիկ աղջկա հետ, որպեսզի Խոռխոռանյաց տոհմը չվերջանար:

Ընտանեկան կյանքը չա՛տ խորթ եկավ Ղազարի համար: Երկար ժամանակ չէր կարողանում հարմարվել նոր կյանքի ձևերին: Մարդը տարիներով դուրսը, լեռներում ու դաշտերում, կատարյալ վայրենացել էր: Կռիվների մեջ ե՞րբ էր նա մոր ձեռքով եփած անուշ կերակուր տեսել. չա՛տ անգամ քաղցից որսի միսը հում-հում էր կերել, կամ ծառի չոր կեղևն էր ծամել: Ե՞րբ էր նա կնոջ ձեռքով ձգած անկողին մտել. քարն էր եղել բարձ և թաց գետինը՝

անկողին: Այստեղի վայրի մարդը ի՜նչպես հարմարվեր փափուկ կյանքին:

Մի խոսքով՝ սիրտը տան վրա տաք չէր: Ծառայությունից ազատ օրերը որսի էր գնում կամ ընկեր-օֆիցերների հետ գինարբուքի մեջ դիշերները ծայրն ծայր լուսացնում:

Տուն եկած միջոցն էլ կամ ձիերն էր լողացնում ու վարժեցնում, կամ զենքերով էր զբաղվում. կախված տեղերից վար բերում, մաքրում, նորից կախում և նոր-նոր ձևերով դասավորում փայլուն զենքերը պատերի վրա...

Սակայն կամաց-կամաց այս վայրի թռչունը սովորեց ընտանեկան բակին. սիրեց կնոջն ու երեխային, որ չուտով երկու հատ դարձան՝ տղա ու աղջիկ:

Մալխազ աղան խիստ կրոնական մարդ էր, որ առանց «եկեսցէ»ի՝ անկողին չէր մտնում. Ղազարն էլ ենթարկվեց հոր ազդեցությանը, որի հեղինակությունն ընդունում էր անպայման և հնազանդվում էր սիրով: Դարձավ եկեղեցասեր և սկսեց «հոգու ետևեն» ընկնել: Առավոտ կամ երեկո անպատճառ, գոնե մի անգամ, ժամ պիտի գնար, ջերմեռանդ աղոթք աներ ու թեթևացած խղճով տուն դառնար:

«Պատերազմներու մեջ կամա-ակամա, գիտությամբ ու անգիտությամբ և մասամբ նորին,— ամեն անգամ այս կերպ ասում էր Ղազար աղան, երբ խոսք էր բացվում այդ առթիվ,— կրնա պատահել, որ չա՛տ մեղք գործած ըլնիմ, անմեղ արյուն թափած, թեկուզ թագավորի հրամանով: Բայց հոգի ունիմ Աստծուն տալու, դառն հաշիվ ավուր դատաստանին: Միայն է՛ս երեք թուրս ամեն մեկը հազար գլուխ է կտրել, հապա մնացած հրացաննե՞րս, որ հաչվենք, ճոթը մինչի Ղըրմզ կհասնի: Թե որ միայն մեկ

անմեղ արուն էլ թափած ըլնիմ, նորեն հաչիվը չա՛տ խիստ էր ըլնելու»:

Խոսքը այն երեք թուրերի մասին էր, որ եռանիկյունի ձևով կախել էր արջի մորթու վրա, իրեն անկողնու սնապին: Քաջ մարդկանց մոտ հնուց հարգի օրենք կա, որ հազար հատ գլուխ թռցրած թուրը պետք է հանգստյան կոչել ու պատվով կախել բարձր ու պատվավոր տեղից: Այդպիսի երեք նշանավոր, սրբագործված թուր ուներ կապիտան Ղազարը. տեսնողը տեսել է այն: Ով որ ուզում է՝ կարող է դնալ տեսնել իր աչքերով և հավատալ:

Այսպես մոտ յոթ-ութ տարի հանգիստ ապրեց հոր հարկի տակ, երբ մի օր էլ լեհական ապստամբությունը ծագեց: Կապիտան Ղազարը լսեց, զայրացավ ու կատաղեց: Պատից կախված զենքերը լեզու առան ու նախատում էին նրան, թե՝ ամոթ է, որ տղամարդը կնոջ փեշը բռնե՝ նստի, երբ թագավորի դեմ անպիտան մարդիկ գլուխ են բարձրացրել: Արյունը մրրկում էր նրա սրտում և գիշերներն ամբողջ պատերազմի մեջ էր, գոռում և գոռգոռում էր, քնած տունը վախի ու սարսափի մեջ ձգելով:

Վերջապես, չկարողանալով ներքին այս հզոր պահանջին հակառակիլ, ուժով ծնողներից թողություն և օրհնություն առավ, ու գնաց Լեհաստան, իբրև կամավոր պինվոր: Ճանապարհին մտավ Թիֆլիս, հավաքեց մի քանի հին ընկերներ, և միասին գնացին Ռուսաստանի ծովի պես անծայր դաշտերով, հասան ռուս բանակին ու միացան: Շա՛տ քաջ գործեր տեսան, ջարդեցին, ցան ու ցիր արին լեհերին ու հաղթանակով մտան Վարշավա քաղաքը:

Գեներալները հրաման տվին զինվորներին ու կոզակներին ամեն վայրենություն գործ դնելու ժողովրդի վրա:

Զինվորները անդթաբար սկսեցին երեք օր ու գիշեր խեղճ ժողովրդին կողոպտել, ծեծել, տանջել: Տուն չմնաց չթալանված: Կողոպտեցին թե հարուստին, թե աղքատին. Տալան ունեցած-չունեցածը, մինչև վերջին թելը: Կողոպուտով չբավականացած, անմեղ աղջիկների ու կանանց պատվին էլ ձեռք գարկեցին: Անպատմելի բռնություններով խայտառակեցին բանակի հաղթական դրոշակը:

Սակայն կապիտան Ղազարը արգիլելով արգիլեց իր ձեռքի տակ գտնվող զինվորներին միանալու այս խղճի ու ամեոտարանի հակառակ դիվական արարքների մեջ: Իր զինվորներից մեկը, որ փորձել էր մի աղջկա պատվին դիպչել, բռնեց ողջ զորքի աչքի առաջ մտրակով այնքան ծեծեց, որ կիսամեռ հազիվ ձեռքից առան, տարան հիվանդանոց:

«Արի տե՛ս, որ էս իմ խղճմտանքով վարմունքս,— ասում էր կապիտան Ղազարը,— մեկել կողմեն էլ հայությունս ինձի չա՞տ զլխացավանքի պատճառ եղավ: Էն ոչի՛նչ, որ քաջություններիս համար նշան ու նվեր չտվին, ո՛չ էլ զեներալության աստիճան առա, որ իմ արդար իրավունքն էր: Հապա մազ մնաց, որ եղածեն էլ զրկվեի: Պատճառն էն էր որ՝ ուրիշներու պես գաղանություն չարի խեղճ մարդկանց վրա ու չթողի որ զինվորներս էլ անեին:

Տղամարդը տղամարդու հետ գործ ունի: Հո՞ մենք գողության ու լրբության համար չէինք գնացել: Ուրիշ կնիկներու պատիվը պահելով իմ կնկա պատիվը պահած կհաշվեի: Ես հորես ուրիշ օրինակ չունեի. Մալխազենց տան մեջ արատ չի եղել ու չպիտի ըլնի:

Բանն էր որ, արուն-քերան չա՞տ մարդիկ կային զորքի մեջ, ուս ու նեմեց զեներալներ, գրեցին Պետերպոլ մինիստրին թե՝ հայ Լազար Մալխազովը պոլյակներեն կա-

շառաք է առել՝ թագավորի դեմ կռվող էդ պոլյակներին պաշտպանելու համար: Եվ էլ ավելի սուտ ու գեշ խոսքեր:

Վերևն էլ գեշ խոսքերուն ավելի կհավատան, քան թե լավ խոսքերուն... Տո՛, ես կաշա՞ռք. Ես, որ փող ուզենայի, ձեռքս բռնողն ո՞վ էր: Ուրիշները բեռներով իրենց տները ոսկի, արծաթ, շալ ու աբրեշում ղրկեցին: Ես ամեն կռվի մեջ աչքս կուշտ մտա ու ելա: Որ փող ուզենայի, հիմի ոսկե պատերով տուն շինած կըլնեի: Տո՛, ես իմ փողիս հարգը չգիտեի, ուրիշի փողին ի՞նչ աչք պիտի տնկեի:

Խոսքի օրինակ. հենց էդ Վարշավի կռվեն հետո, երբ տուն կդառնայինք, մենք ամայի տեղով անցնելուս, զինվորիս մեկը մրսեց, հիվանդ պառկավ: Ջայ պիտի խմցնեինք՝ որ լավնար: Սամովարի ջուրը տաքցնելու համար կպչան (փայտիկ) չկար: Ծոցիս մեջ եղած թուղթ փողերս բոլորը վառեցի, զինվորիս համար չայ շինեցի: Մենակ էս բանը հերիք էր կազեթի մեջ քցել՝ իմացնելու համար, թե ես ինչ սրտի տեր մարդ էի: Է՛հ, ի՛նչ ասես:

Ինձի դատի կանչեցին, մեղադրեցին կաշառք առնելու մեջ, բայց ընկեր-զինվորներուս վկայությամբ ազատվեցա: Միայն թոչակիս կեսը կտրեցին: Ի՛նչքան դես ու դեն ընկա, լսող չեղավ: Ուզեցա իմ նամեստնիկին խնդիրք գրել: Լուսահոգի հայրս չթողեց, թե փողի համար անպատիվ բան է մինչի վերերը ձայնս հասցնեմ: Է՛սպես զրկեցին ինձի»:

Սակայն Մալխազ աղան ո՛չ միայն արգիլեց, որ իր որդին վոխարքային խնդիր տա, այլև խստագին կերպով պահանջեց նրա հրաժարումը զինվորական ծառայությունից, իբրև ազնվական պատասխան այս սև ապերախտության երեսին նետված: Հնազանդ որդին կատարեց

հոր կամքը, հրաժարվեց զինվորական ասպարեզից: Իր սիրտն էլ արդեն բավական լցված էր այս անարդար, ամարդի վարմունքի հանդեպ:

ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՂԱԶԱՐ ԱՂԱՅԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԵՏ

Ղազար աղան հրաժարվելով զինվորական պաշտոններից, սկսեց օրեցօր նույնպես հրաժարվել զինվորական ունակություններից. թողեց զինարբուքները, որսի ելնելը և ուրիշ մանր ու աննշան սովորույթները. ամբողջապես նվիրվեց ընտանիքին ու եկեղեցուն:

Այսպիսի աշխատասեր և պարկեշտ կյանք վարելով՝ անցավ տասնուչորս տարի, երբ նորից ռուս և թուրք իրար դեմ դուրս եկան, 1877 թվին: Ղազար աղայի հոգում կրկին ոտքի կանգնեց զինվորականը՝ կապիտանի սուրը ձեռքին: Թեպետ անցել էր ճակատագրային հիսուն տարին և ակներև կերպով կորցրել էր պողպատիկությունը, բայց դարձյալ ուժ ուներ և ուժեղ փափագ այս անգամ էլ չափվելու թուրքերի հետ, գոնե մի թուր էլ «հազարով օրհնված» հանգստի կոչելու:

Սակայն ձեռքն ու ոտքը կապված էր ընտանեկան անհաղթելի արգելքներով: Նրա խեղճ մայրը ճմռան մեջ վախճանվել էր և ծերունի Մալխազ աղան էլ կսկծուց կաթվածահար անկողին էր ընկել: Այժմ ինքն էր տան մեծը, միակ կարող տղամարդը: Ո՞ւմ թողներ հիվանդ հորը, անփորձ կինը մատաղ երեխաներով: Չէ՞ որ որդիական և հայրական սրբազան պարտականություններ ուներ կատարելու: Անելանելի, դժվարին կացության մեջ էր կապիտան Ղազարը:

Սակայն ամեն օր նոր-նոր զորախմբեր էին գալիս Ա-լեքսանդրոպոլ ճակատ մեկնելու համար, զինվորական քայլերգով և որոտալից երաժշտությամբ: Ղազարը ոգևորված ընդառաջ էր գնում նրանց իր բոլոր մեդալ-ները կրծքին չարած, ճանապարհին ու կազարմաններում խոսում էր զինվորների ու զինվորականների հետ: Իբրև հին փորձված զինվոր խրատում էր նրանց ու խրախու-սում, սովրեցնում էր նրանց աչխարհագրական տեղերը, կռվի ձևերը, թուրք զինվորի թույլ և ուժեղ կողմերը ցույց տալով:

Եվ ո՛րքան որ մեծ էր կռվի մեջ նետվելու արգելքը, ա՛յնքան էլ զորեղ էր մարտնչելու իղձը: Հորը խնամելուց ազատ ժամերը նա իր սենյակը քաշված, փայլուն ու խո-սուն զենքերի տակ, ծխի մեջ կորած, գիշերները լուսաց-նում էր թղթերի վրա կարսն ու Էրզրումը առնելու պլան-ները քաշելով, հարձակման, պաշարման նախագիծեր կազմելով: Խորհելով որ այս ամենը Լոռիս-Մելիքովին պիտի հանձնե՝ իբրև մի փորձված զինվորի կողմից հա-մեստ առաջարկներ: Վրդովվում էր պատերազմի մասին անհաջող լուրեր լսելիս, և սաստիկ ափսոսում էր, որ ին-քը այնտեղ չէ: Ցավով տեսնում էր իր անփոխարինելի բացակայությանը:

Հիվանդ հոր մոտ նստած՝ հոգվով նա կռվի դաշտումն էր: Իրական միջավայրը ջնջվում էր: Տեսնում էր իրան բանակի գլուխը կանգնած, իր քաշած պլանները ձեռքին, հին օրերի պես՝ սուրը մերկացրած՝ հարձակում է գործում թշնամու վրա: Ահա՛ պաշարել է նա Ալաճա-սարը, որի գլխին թառած Մուխթար փաշան մի քանի օր առաջ ջար-դել էր ռուս գեներալ Գեյմանին, իսկ հիմա ինքը՝ Ղազա-րը, նեղն է ձգել թուրք փաշային, որը ոսկի թուրն հանձ-նելով՝ անձնատուր է լինում: Ահա կարսը ընկնում է նրա

ոտների տակ: Ահա ինքը իր ձեռքով դրոշակը կանգնեցնում է բերդի գլխին: Թագավորը հեռադրով նրան առաջին աստիճանի Գյորգիի խաչ է նվիրում և գեներալության հասցնում... Հայրը ցավից նեղված հառաչում էր և Ղազարին հանում կռվի միջից, և գարձնում տխուր, անփառունակ իրականության:

Երբ Լոռիս-Մելիքովը, որ այս պատերազմի զորապետն էր, Ալեքսանդրոպոլ եկավ, կապիտան Ղազարը իր բոլոր շքանշաններով ներկայացավ նրան, հանձնեց իր պլանները: Զորապետը չա՛տ չնորհակալ եղավ, գնահատելով նրա փորձառությունը, որովհետև ինքը առաջին անգամն է, որ Ղարսի կռվի մեջ պիտի մանի, այնինչ կապիտանը մի անգամ արդեն եղել է և հաղթող դուրս ելել:

Ղազարը ցավով հայտնեց կռվին չմասնակցելը, և զորապետը ցավով ընդունելով այս հանդամանքը, մխիթարեց նրան և ապահովեցրեց, որ իր ընկերը մյուս հայ գեներալները ամեն բան կանեն, ինչ որ կապիտանի սրտի ուզածն է:

Ապա կապիտան Ղազարին իբրև հավատարիմ զինվորի, կարգեց բերդի մեծ վառոդատան գլխավոր պահապան: Անձնվեր մարդ պետք էր այս կարևոր տեղի համար, որովհետև ռուս կամ վրացի պահապանները գողնալ են տալիս կեսը և տեղը սև հող լցնում:

Մնաս բարևին զորապետը ասաց.— «Հանգիստ եղիր. կռվի գործը լավ ձեռքերու մեջ է: Պատերազմեն հետո նորեն կտեսնվինք»,— խորհրդավոր ձայնով չեչտելով այս վերջին խոսքերը:

Հայ գեներալները լրիվ կատարեցին Ղազարի երազած և չկատարած քաջությունները:

«Մարդիկ իմ գործս տեսան, խիղճս հանգիստ է: Ղարսն առան՝ էրզրումը վրան, Արդահանն առան՝ Բա-

թումը վրան: Ուրիշ էլ բան չէի ուզե»,— ասում էր Ղազար աղան մխիթարված:

Մինչ այդ պատերազմը վերջացավ հաղթանակով, Լուիս-Մելիքովը չմոռացավ վարձատրել հավատարիմ կապիտանի ծառայությունը, թե՛ չքանչան տվեց և թե՛ դրամական նվեր:

Մի երեկո էլ, հաղթանակի այդ օրերում, Ղազարը լսեց, թե հին փոխարքան Թիֆլիզ է եկել նոր գրաված երկիրները տեսնելու համար: Պատշաճ ու պատվավոր համարեց Թիֆլիս գնալ՝ նրա աչքին երևալու համար, քան թե Ալեքսանդրոպոլ մնար և սպասեր, որ Ղարս անցնելուս ներկայանար նրան:

Կապիտան Ղազարը անկեղծ փափագում էր իր սիրած փոխարքային օր-առաջ տեսնել, հին անուշ օրերը վերհիշել միասին, գուցե և, մտքով անցնում էր նույնպես, խնդրեր իր կենսաթոշակի մասին, որից սկզբունքով նա չէր հաշտվել զրկվել՝ արդարացի կերպով համարելով այն՝ իր ճշմարիտ իրավունքը, իր անձնվեր ծառայության հատուցումը:

Այսպիսի տրամադրությամբ կապիտան Ղազարը ձին նստավ և մեկնեց Թիֆլիս: Հասած օրվա մյուս առավոտ հարդարված ու զարդարված ճամբա ելավ փոխարքայի իջած պալատը գնալու համար: Ինքը իբրև ուղղակի ականատես՝ այսպես էր պատմում այդ տեսակցությունը:

— «Գլուխս կախ՝ մտածելով ըսելիքիս մասին, կերթայի ինձ ու ինձ, երբ մեկը հետևես երկու ափով աչքերս բռնեց, ասելով — «Թե իմանաս ո՞վ եմ ես...» հրաշք բան էր ու անհավատալի. ինքը նամեստնիկն էր: Ասացի.— «Ծառայիդ ինչպե՞ս ճանչցար, Ձերդ մեծություն»: Նամեստնիկը աչքերս թողեց, գրկեց ինձի, ասելով.— «Է՛յ Ղազար, սիրելիս, ինչքա՜ն ես փոխվել, երանի՜ էն օ-

բերուն»: Ես աչքերս լցված համբուրեցի ձեռքը: Ինքը բոլորովին ծերացել էր՝ ճերմա՛կ, ճերմա՛կ: Պատվեր տվավ, որ մեկել օրը պալատ երթամ: Գնացի, ինձի ճաշ տվին: Իմացավ, որ թոշակիս կեսը պրկել են, բարկացավ ու զարմացավ: Մեկ խոսքս երկուս չեղավ: Երկու օր հետո հրաման եկավ, որ մինչի մահ ինձ հասանելիք թոշակս լրիվ, անաղարտ ստանամ, իմ մահես հետո էլ՝ կեսը կնոջս մինչի մահը: Ու էսպես մինչև էս օրս էլ կստանամ:

Մեծ շնորակալությամբ դարձա եկա տուն: Բայց քաղաքիս մեջ համբավ էր ընկել ու մինչի օրս էլ շատերը սխալմունքով կպնդեն, թե ես եմ նամեստնիկի աչքերը բռնել ու հարցում արել: Ես ասել եմ ու միշտ էլ կասեմ, որ էս բանը բոլորովին սխալ է, սուտ է: Նամեստնիկը ինքը իրեն իսկ ձեռքերով բռնեց աչքերս: Էդ խաղը իմ կողմեն անկրթություն և ամբարտավանություն կլիներ ինձեն էնքա՜ն բարձր աստիճան ունեցող մարդու դիմաց: Բայց չիտակը էն է, որ նամեստնիկը բռնեց աչքերս ու էդ հարցումն արավ:

Ես սուտը չեմ սիրե. ամեն ինչի մեջ ճշմարտությունը լավ է»:

<«ԳՅՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ

Ուստան Կենդանի Գազեթից լսում է նրա մասին, ազնվական ծագման և քաջությունների մասին, հետաքրքրվում է նրան տեսնել և իր ականջով լսել նրա բերանից:

Գնում են Ղազար աղայի սրճարանը. Կենդանի Գազեթը, Բուլուլ Մարգարեն ուրիշների հետ խոսք մեկ արած՝ խնդրում են Ղազարին և նա էլ սկսում է պատմել:

Պատմում է իր կռիվներից (Նախերգանքը և մյուս մասերը հեղինակը ինքն է պատմում. այդ մասը Ուստային պատմում են իր նոր ընկերները):

Այս մասում հեղինակը չկա, մինչև վերջը Ղազարն է պատմում. և թե իր ամուսնությունը, և թե ամուսնական կյանքը:

Ղազարը լսում է, որ Ցարի դեմ պոլյակները ոտքի են կանգնել, կռիվ են անում. գնում է օգնության. հասնելով ճակատ՝ լսում, տեսնում, հասկանում է, որ լեհերը նեղվելով Ցարի գեշ գուբերնատորներից և ուզենալով իրենց համար լեհ թագավոր ունենալ, ազատ ապրել, իրենց փափախի տակ ազատ տղամարդ, ոնց որ մեր հայերը կուզեն ու կզարկեն ու կզարկվեն սուլթանի դեմ... Ղազարը սիրելով իր թագավորին՝ հոգու մեջ իրավունք է տալիս լեհերին: Բայց ինչպես անե, որ չմասնակցե կռվին, քանի

որ դրա համար է եկել. դիմում է խորամանկության, թուրթուռնի ջուր է խմում և հիվանդանում, պառկում լազարեթում: Իսկ իր կամավորները գլուխ չունենալով, անգլուխ մարդը ինչացու է, մնում են՝ հասարակ բաներ անելով, մինչև Ղազարի դուրս գալը հիվանդանոցից: Ղազարը հենց նոր էր ոտքը դրել դուրս, երբ լեհերը հաղթվեցան, և ռուս զորքը հաղթական մտավ լեհերի հողը մինչև Վարշավա: Վերևից հրաման ստացած լինելով անխնա սպանել հաճելի չերևացող, կասկածելի թվացող լեհացուն, բռնաբարել կանանց և թալանել:

Ղազարի մարդիկն էլ հրաման ստացան միանալու զորքին, մանավանդ որ իրենք էլ էդ էին ուզում: Ղազարի վիճակը ծանր էր, ինչպես աներ, ինչպես չաներ, մոլորված էր: Նա հրաման չտվեց ո՛չ կողոպտելու, ո՛չ բռնաբարելու, ո՛չ սպանելու և պատժվեց: Դրա վրա դանգատ եղավ Ղազարի դեմ, գատի քաշեցին. թեև արդարացավ, բայց ռոճիկի կեսը կտրեցին, այն կեսն էլ տվեցին մեայն նրան նախկին քաջությունների պատվին:

Ղազարը դարձավ տուն, և հրաժարական տվեց:

Մնաց մինչև Ռուս-տաճիկ պատերազմը. չմասնակցեց, համ ծերացել էր, համ ընտանիքով բեռնված էր. [բերդի] վառոդատան պահապան եղավ, և այս մինչև վոխարքային տեսնելը:

Այս բոլորը, ինչպես ես եմ պատմել, ինքն է պատմում: Կարծեմ, ավելի հարմար կլինի, այսպես դրել: Ղազարը լավացավ, ելավ դուրս, հրաման ստացավ մեծ, վերջնական կռվին մասնակցելու, ոտիլված համաձայնեց՝ կեղծ ոգևորությամբ: Առավոտ, լուսաբացին, երբ զորքը փողը փչեց հարձակման, լեհերը վախու փախս տվին, ռուս զորքը նրանց հետևից կրկնակոխ մտավ լեհերի հողը: Հրաման եկավ վերևից, որ անխնա կոտորեն...

Երբ Ղազար-աղան վերջացրեց, Ուստան մոտեցավ, խոնարհ բարև տվեց, ասելով.

— Թե որ դու հիմի չահել էղնեիր, մեզի հետդ ժողված երթայիր սուլթանի վրեն, սուլթանը մկան ծակի համար իրեն թախթը կուտար ու Հայաստան կազատվեր. երնեկ մենք քու կիսատ չափ դործ տեսնենք:

2. ՂԱԶԱՐ-ԱՂԱՆ

Ղազարը հաճախ գործ է ածում դրաբար ձևեր ու բառեր, հին, մաշված ձևեր. միով բանիւ, փուքիոյ պնդութեամբ, պատճառաւ, նպատակաւ, իմ վրայօք, վերաբերմամբ, ի մասին, և ժողովրդական շատ ձևեր, երբեմն «կը», երբեմն «ում»: Երբեմն կեղնի, երբեմն լինում է, կըլնի...

Սկզբում խոսում են նրա մասին, թե հարուստ մարդ է, ազնվական, ժամասեր, թոշակավոր. ծեր է, բայց առույգ, սեղմում է ձեռքդ ցավեցնում: Գնում են կաֆե. դեմքի, հագուստի նկարագրություն:

Պատմում է իր «գլխի գալածները» մինչև նամեստնիկի տեսնելը:

Երբ Ուստան դառնում է իր բնակատեղը, լսում է նրա անցյալ կյանքը, և հեղինակը սկսում է նախերգանքից, ծագումը և ամուսնական կյանքը, մինչև այնտեղը, որ թողել էլ էր ինքը Ղազար-աղան:

Երբ սկզբում կենդանի կազեթն ու Բուլուլ Մարգարեն պատմում են նրա մասին, և այն դեպքը, թե ինչպես նա երկու թուրք ավազակի բռնում է ու գլուխները իրար գարկելով ջարդում, քցում ճամբու այս ու այն կողմը,— ապա ասում են «երթանք դայֆե, թող ինքը խոսի...»:

– Ղազարի լեզուն: Ամենեցուն համար, վասնորոյ մանաւանդ ուրեմն թէ, ժամանակի չրջանն լրացաւ: Եվ այլն, և այլն: Ամեն խոսքի տակն ու վրան՝ և այլն, և այլն:

– Երբ Ղազարը պատմում էր իր կռիվ դնալը լեհերի դեմ, Ուստան դուրս դնալիս ասաց Կենդանի Գազեթին. «Էնոր ամեն քաջութիւնները լավ էին, սրտովս էին, մենակ պոլյակներու դեմ երթալը լավ չէր. էնոնք էլ մեզի պես կուզեն ազատվեն, իրանց համար տուն ու տեղ եղնեն, իրանց պատկի տակը իրենց խելքը կտրածի պես ապրին, ընչի՞ երթալ էնոնց դեմ: Էդ մեկը լավ չէր, սրտովս չէր... լավ որ ուրիշներու պես տղա չէ մորթե: Թուրքն որ թուրք է, էնոնց կնկան ու երեխին ես ձեռք չեմ տա, մեղք է»:

3. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ

Բայլ նշանավոր խմբապետներից Ուստան ուզում էր Գյումրի տեսնել երեք հայտնի մարդկանց և ծանոթանալ հետները, որոնց անուննները մինչև Նախճվան հասել էին.– Կապիտան Ղազարը, Մելքոն վարժապետը և Ջաջուռցի Տեր-Մլեհ:

Ծանոթացավ առաջին երկուսի հետ. Տեր-Մելհն իր գյուղումն էր, Ուստան ժամանակ չունեցավ նրան տեսնել:

Մելքոն վարժապետի սրճարանը գնաց, խոսեց նրա հետ, լսեց նրա իմաստուն խոսքերից, հիացավ, և շատ դյուր եկավ իրեն այս միտքը. «Աչխարհը վարժապետ, մարդը՝ աշակերտ» և վոխեց, յուրացրեց ասելով՝ «Աչխարհը վարպետ, մարդը՝ աշկերտ»:

Գնաց և Կապիտան Ղազարի մոտ, որ արդեն 80 տարեկան էր, թեև նորից ուղղահայաց հասակով, աչքերը

տեղին, միայն հիմա գավազան էր գործ ածում, և ականջները լավ չէին լսում: Ականջների մասին ասաց Կապիտանը, թե ականջներիս վնասվելը հիմա կիմանամ, և պատճառը կհամարեմ, Դաղստանի լեռների մեջ ականջիս տակ դիպած կայծակը, որ մի քանի օր խլացրեց ինձ, մեկ էլ կուվի թնդանոթների տրաքոցի սարսափելի ձայնը, որոնք միշտ ականջիս տակն էին տրաքվում. այն ժամանակ ջահել էի և պողպատիկ, վրաս չէր ազդում, հիմա, որ ծերացա, կիմանամ ու կխոստովանեմ նրանց չորշոփը: Արդեն շա՛տ բան էր պատմել իր գլխին եկած փորձանքները և իր գործած քաջությունները: Դրանց վրա ավելացրեց հետևյալը: Մի անգամ [Բասենից] Կողբից գալիս էր Գյումրի. գնացել էր Կողբ, իր կնոջ եղբոր որդին այնտեղ գործ ուներ, գնացել էր այցի: Կարա-Ղարայի տակ, հանկարծ ձորից ելավ ու իրեն միացավ մի զինված թուրք. ավազակ էր, բարև տվավ և հետը գնում էր, ձիով, խոսակցում էր Ղազարի հետ, և չափում նրան վերից վար. մեջքի խանչալն ու ատրճանակը տեսնելով, սիրտ չէր անում վրա տալու, քիչ հետո մի քարի տակից ելավ մի զինված քուրդ, ձիով, բարևեց և միացավ: Կապիտանը միառժամ գնում էր նրանց մեջտեղով. աչքերը միշտ պահապան դնելով նրանց վրա՝ ձախ աչքով ձախին, աջ աչքով աջին: Ավազակները նայում էին նրա խաչ ու մեդայլներին, գաղտնի իրար նայում էին ու սիրտ չէին անում ձեռք բարձրացնելու, սպասելով հարմար վայրկյանի: Ղազարն էլ նույն վայրկյանին էր սպասում, երբ հասան մի նեղ ճամբի, ուր երեքն էլ ստիպված իրար քսվելով պիտի երթային, ականթոթափելի, Ղազարը թևերը փարթեց (փարտեց) նրանց գլուխներն առավ արմունկների մեջ, վզերը ամուր սեղմեց ու ձին՝ ոտքով խթելով, թռցուց, նրանց ձիերը ելան տակերից, թուրքքուրդ մնացին օդի մեջ, վզերից կախված, լեզուները

դուրս ելած, աչքերը ճակատների վրա, Ղազարը նրանց դլուխները զարկեց իրար, ոնց որ քարը քարին. կայծեր էին թռչում, և այդպես ձին քշելով, հասավ Արագի կամուրջի վրա, ու մեկ թափով նրանց նետեց ջրի մեջ, կամուրջից վար. աջինը աջ կողմը, ձախինը ձախ կողմը: Եվ տեսավ ինչպես խեղդվեցին, ինքը չիբուխը վառեց, ծխեց ու խնդաց:

Ուստան զարմացավ, հիացավ, և ասաց, ափսո՜ս տղամարդ, ծերացել է, թե չէ հետս երկիր կտաներ:

4. ՈՒՍՏԱՆ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ՄՈՏ

Հատկապես դնում է այն սրճարանը, պատվում է նրան, և ուրիշների հետ խնդրում է, որ նա պատմե իր դործերից:

Այս պիտի այնպես դրել, որ ամփոփ լինի, դուրս ձգելով լեհերի ապստամբությունը:

Պահելով չայ չինելու պատմությունը, իբրև ապացույց իր անշահասիրության: Իսկ ռոճիկից կիսով զրկվելը դնել մատնության դործ՝ Շամիլի կռվից հետո՝ որ զորքը մտավ Դաղստան և կոտորեց, իսկ ինքը անմաս մնաց: Հետո կարճ ձևով իր հրաժարումը, ամուսնանալը, ռուս-տաճիկ պատերազմը... ամենքը ինքն է պատմում, մինչև վերջը՝ փոխարքայի տեսակցությունը:

Այդ գլուխները կլինեն.

[Տեր-Մրեմ]

Կապիտան Ղազար

Մելքոն վարժապետ:

— Օգտվել Սիմոն վարժապետի (Վարպետիս հետ) նյութից:

ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

I

Ձեռքովդ դրածի պես միշտ կգտնեիր նրան սրճարանի իր հավերժական անկյունում, ակնոցը՝ քթին, ծուխը՝ բերնին, լրագիրը՝ ձեռքին. առջևը փայտե հասարակ սեղան, վրան՝ սուրճի գավաթներ, գիրք, գրիչ, թուղթ ու թանաք:

Մելքոն վարժապետը 55 տարեկան[1] էր, առողջ ու միջահասակ, ալեխառն մազ-մորուքով. առանձին ժամանակ լուրջ ու խոհուն դեմքով, իսկ մարդկանց մեջ՝ ժպիտը բարի աչքերում և անուշ ու խելացի խոսքը շրթունքի վրա[2]:

Հասակն առնելուց հետո սկսեց պարարտանալ. այնպես որ հաճախ բարեկամները կատակով ասում էին նրան.

— Վարժապետ ջան, փորդ օր-օրի վրա առաջ կերթա:

— Է՛հ, ես էլ օր-օրի վրա ետ կերթամ:

Մինչև գրեթե 50 տարեկան հասակը ծխական դպրոցում ուսուցիչ էր նա հայոց լեզվի և դասամիջոցներին՝ աշակերտների վրա հսկիչ. բայց, երբ օրենք դուրս եկավ, որով դասատուներից պատշաճ վկայական էր պահանջ-

---

[1] D + մի մարդ

[2] D + աչք, քիթ, հագուստ, ձևեր, շարժ ու ձևեր (ծրագրային դրառում է – Գ.Գ.):

վում, նա, այդպիսին չունենալով, դարձավ լոկ վերակացու:

Եվ երբ ռուսաց պետությունը գոցեց հայկական դպրոցները, նա էլ հազարավորների հետ մնաց բացը: Սակայն 25-ամյա երկար պաշտոնավարումից մի փոքր դումար ուներ ետ ձգած, որ մի բարեկամի մոտ պահ էր տվել, որից ամսեամիս մի բան էր առնում և խնայողաբար ծախսում:

Բավական էր այդ գումարը իրեն, որովհետև չոր գլուխ մարդ էր և սակավապետ, կերուխումի և ամեն բանի մեջ ժուժկալ:

Նա չէր ամուսնացել և չէր ամուսնացել սկզբունքով. նրա ասելով — «կինը զարտուղի հոլովվող էակ է». եւ լուսաբանում էր՝ ավելացնելով, որ եթե մտնի կյանքիդ մեջ, ա՛յնպես կխճճե ուղեղդ և ուղիդ, որ հորդ տան դուռն իսկ չես ճանաչի. մինչդեռ խելքը նրա համար է, որ մարդ գտնի իրեն առուն և վճիտ սրտով երթա մինչև վերջը:

Բայց այդ սկզբունքը նա չէր ուզում տիեզերականացնել. ընդհակառակը, ստեպ ասում էր, թե՝ — «Աչխարհը կնկա վրա է շինած,— ու կնիկն էլ՝ սուտի», թեև վերջին հատվածը միշտ քթի տակ մրմնջալով[1]:

Եվ վերջին տարիները լուրջ թե կատակով իր տարեկիցները[2] ասում էին նրան, թե՝ — Էս չեղավ[3], վարժա-

---

[1] ԻՖ 98-I – <...> թե ուրիշն է փորձանքի մեջ ընկնողը, ո՛չ թե ինքը, ուրիշն է հիվանդացողն ու ծերացողը, ոչ թե ինքը, ուրիշն է մեռնողը, ո՛չ թե ինքը, և սրա մեջն է մեր ապրելու հրաշքն ու գեղեցկությունը») *վրա* Բայց այդ ... մրմնջալով

[2] ԻՖ 98-I – հասակակիցները

[3] ԻՖ 98-I – *չէիք* Էս չեղավ

պե՛տ, մենակ մնացիր[1]*, լավ կլինի՝ մի կնիկ ճարես, քանի շատ ուշ չէ:*

Նա էլ կատակով պատասխանում էր.

— Ես էլ հա՛-հո՛ւ, էս է, կնիկ դառնալու վրա եմ. էլ կնիկն ինչո՞ւս է պետք:

Նա ապրում էր հորենական հին, պստիկ տնակում, այսինքն՝ գիշերները միայն քնում էր այնտեղ, որովհետև վաղ առավոտուց սրճարանումն էր արդեն մինչև ուշ երեկո: Այնտեղ[2] *էր ուտում-խմում ու հետմիջօրեի հանգիստն առնում: Այնտեղ*[3] *էր կարդում ու գրում: Այսպես, ամբողջ օրը, չհաշված այն պահերը, որ անց էր կացնում այս կամ այն բարեկամի արհեստանոցում կամ խանութում:*

Անգրագետների նամակ գրողն էր նա ու նամակներ կարդացողը, մուրհակներ ու պայմանաթղթեր գրողը, վեճեր մաքրողն էր ու խռովներին՝ հաշտեցնողը: Եվ իր այս անհրաժեշտ, օգտակար դերի համար ամենքը հարգում էին նրան, չարունակ հյուրասիրում[4] *կարծես այս կերպով վարձահատույց լինելով նրան. որով համարյա թե ծուխի և սուրճի համար դրամ չէր ծախսում*[4]*,— և բայառություն չէր նաև ճաշը, որ շատ հաճախ ծանոթ-բարեկամ հրավիրում էին նրան սեղանակցելու համար:*

---

[1] ԻՖ 98-I — մենակ մնացիր, վարժապետ *փխ* վարժապետ մենակ մնացիր

[2] D Հոն

[3] D Հոն

[4] D + նա

Եվ արդեն սովորական բան էր հայկական փոքրիկ քաղաքներում այն երևույթը, որ մարդիկ չէին կարող հացի նստել առանց հյուրի, ծխել[1] կամ սուրճ խմել[2] առանց ուրիշին հրամցնելու, ո՛ւր մնաց բոլորից հարգված վարժապետի վերաբերմամբ, որին պատվելը պատիվ էր և՛ պատվողի համար:

Այլևս ի՞նչ էր մնում իրեն ծախսելու – հագուստ, լվացք և ուրիշ երկրորդական պետքեր, որոնց համար իր խնայած դրամը լիուլի բավարար էր:

Այն սրճարանը, ուր բնակվում էր վարժապետը, վաղուց կորցրել էր իր տիրոջ անունը և կոչվում էր «Մելքոն վարժապետի սրճարանը»:

– Ո՞ւր կերթաս, ո՞ւր էիր:

– Մելքոն վարժապետի սրճարանը:

Եվ համբավավոր ժամադրավայրն էր նա քաղաքի արհեստավոր դասի: Այնտեղ հաճախում էին արհեստավորները, և գլխավորապես վարպետները, և նաև մանր խանութպանները:

Ամեն օր ճաշից հետո ու երեկոյին, իսկ կիրակի և տոներին, ողջ օրը բոլոր, հավաքվում էին այդ անվանի հարկի տակ պատվավոր վարպետները, խոսում էին քաղաքական և ազգային հարցերի մասին, իրենց համքարի և քաղաքի գործերի և դեպքերի մասին, հարցնում էին վարժապետի կարծիքը շոշափվող իրերի մասին, և ուշիուշով լսում էին նրան՝ իբրև հեղինակավոր մի անձի:

---

[1] D ծխում

[2] D խմում

Եվ արդեն վարժապետն էլ ամեն երևույթի մասին իր ուրույն կարծիքն ուներ՝ խտացած մի-երկու բառի մեջ, որ նման ժողովրդի իմաստուն առածներին[1], ասում էր տեղին ու հարկին:

Բացի այդ, նա ամեն օր կարդում էր նրանց համար օրվա լրագրները և մեկնաբանում անցքերը. իսկ ձմրան երկար գիշերները կարդում էր կամ պատմում զանազան վեպերից կամ ազգերի պատմություններից:— Մելքոն վարժապետը հիմի մեծերիս վարժապետն է,— լրջորեն ասում էին արհեստավորները, և գոհ էին իրենց վարժապետից:

Երբ սրճարանը օրվա որոշ ժամերին ամայի էր դառնում, վարժապետը, լռության ու մենության մեջ՝ ամփոփված իր տեղում, աչքերը՝ գոց, ծխախոտը՝ շրթունքից կախ, կծկված իր հոգու մեջ խորհում էր. խորհում էր[2] իր տեսածի ու լսածի վրա, անձնական ապրումների և ուրիշների փորձերի վրա, և խորհում էր ժամերով, որ ընդհատվում էր միայն հանգած ծուխը վառելու համար:

Եվ երբեմն հանկարծ աչքերը բաց էր անում, մի սուրճ էր ապսպրում, ապա սեղանի արկղից հանելով մի կաշեկազմ տետր, որի առաջին էջի վրա խոշոր տառերով նշանակված էր «Մտաց Մատեան» խորագիրը, և այնտեղ հաստատուն ձեռքով, կապույտ թանաքով մարմնացնում էր իր խորհածի արդյունքը.— երկու խոսք, մի մտածում, մի կարճ ու կտրուկ միտք:

---

1 D առածներին

2 D + նա

Այդ սովորութիւնը ուներ մոտ տասը տարուց ի վեր[1]:

Եվ ապա նորից սուզվում էր իր ներաշխարհի մեջ մինչև որ սրճարանը լցվում էր մարդկանցով և նրան արտաշխարհ հանում:

— Վարժապե՛տ ջան, ի՞նչ ես մտքում, հերի՛ք է: Թեյ, սուրճ, հրամանքդ ի՞նչ է ուզում,— դիմում էին հաճախորդները միաժամանակ ծխատուփին[2] սպասավորի[3] հետ ուղարկելով նրան:

Մելքոն վարժապետի կյանքը գրեթե բոլորովին թափուր էր արտաքին դեպքերից և արկածներից: Նա չուներ կյանքի պատմութիւն, իր հայրենի գավառից դուրս ոտք չէր դրել, ոգելից խմիչքներին թշնամի լինելով՝ մի՛շտ

---

1 ԻՖ 493-II — <...> «Մտաց մատյան» խորագիրը, ապա ներքևը մանր տառերով

Մելքոն վարժապետ Եղիկեան.
սկսեալ յամի 1893,
Ալեքսանդրապոլ: Եվ այնտեղ...

10 տարվա սովորութիւն էր, որին հավատարիմ կամքով հետևում էր մինչտ. ի՞նչ էր նրա նպատակը. արդյոք իբրև վարժապետ, որ կոչումն ուներ սորվեցնելու, ուզում էր ապագա սերունդներին ավանդել իր խորհուրդները, [թե ինքն էլ] լինելով մի մասնիկը մեծ բնութեյան, որ [գտնում է անպիտանութեյուն իր գործին և աննպատակ] գտնում է իրականացնել մի բան,—] թե ինքն էլ գտնում է աննպատակ ձևով իրականացնել մի բան, լինելով մասնիկը մեծ բնութեյան, որ ստեղծում է [անպիտանութեյուն իր] աննպատակ և <անբնթ.> իր գործը [և աննպատակ]: *տես* «Մտաց մատյան» խորագիրը ... տասը տարուց ի վեր

2 D ծխատուփնին

3 D սպասավորին

զգաստ, իր կշռված բնավորությամբ մի՛շտ անայլայլ, ո-րով ո՛չ մի մարդու հետ վեճ ու կռիվ չէր ունեցել:

Միայն պարտաճանաչ վարժապետ էր եղել թե՛ ուրիշ-ների, թե՛ նույնիսկ իրեն հանդեպ,— և ուրիշ ոչինչ:— «Աշխարհը չատերի համար,— ասում էր նա,— կռվի ու գլխացավանքի[1] տեղ է, ինձ համար նա պատուհան է, որ-տեղից նայում եմ աշխարհի բաների վրա, մտածում եմ ու ծուխս քաշում»:

Եվ թեպետ[2] գիտակից կամքով հեռու էր պահում իրեն աշխարհի խաղերից, սակայն երեք անախորժ դեպք հան-դիպեցին[3] նրան,— հակառակ իր գիտակից կամքին[4]:

Մի անգամ, երեկոյան դեմ, ամառը[5], գետը լողանա-լուց[6] վերադարձին, քաղաքից դուրս, երկու սրիկա հար-ձակվեցին[7] վրան[8], կողոպտեցին[9] ժամացույցն ու քսակը:

Այդ դեպքի վրա նա այլևս ժամացույց չառավ՝ ա-սելով.— «Մարդ ինչքան քիչ մտածե ժամանակի, ինչպես և մահի մասին[10], այնքան շատ ժամանակ կունենա[11]»:

---

1 D գլխացավի

2 ԻՖ 493-II – թեև

3 ԻՖ 493-II D հանդիպել էին

4 ԻՖ 493-II – [որ հիշում է առանց հուզմունքի] *փխ* հակառակ ... կամքին

5 ԻՖ 493-II – *չիք*

6 ԻՖ 493-II – լողնալուց

7 D հարձակվել էին

8 ԻՖ 493-II – հարձակվել էին վրան երեք սրիկաներ *փխ* երկու ... վրան

9 ԻՖ 493-II D – կողոպտել էին

10 ԻՖ 493-II – + այնքան ավելի լավ. երեխայի պես խաղով ընկիր ու չես իմանա լուսնալն ու մթնելը

11 ԻՖ 493-II – *չիք* այնքան շատ ժամանակ կունենա

Իսկ[1] *լողանալու*[2] *գնալիս, եթե մենակ էր, դրամ չէր առնում հետը*[3]*, խորհելով թե՝ «մարդ որ բան չունենա, գողից վախ չի ունենա»:*

Մի անգամ էլ ռուսաց գաղտնի ոստիկանները բռնեցին[4] *նրան՝ մեղադրելով, թե ժողովրդի*[5] *մեջ հեղափոխություն է քարոզում: Ոստիկանապետի մոտ նա անկեղծությամբ խոստովանել է, թե՝ ինքը թեև ազգասեր*[6] *մարդ է և*[7] *ազգի*[8] *ազատություն տենչացող, բայց հեղափոխական չէ, որովհետև, իր կարծիքով, հայի ուժերից վեր բան է <թուրքի և ռուսի բերնից> Հայաստան ազատելը:*

Չնայելով այս անկեղծ խոստովանանքին՝ նրան բանտ էին[9] *նետել, ուր մի ամիս մնալուց հետո միջնորդությամբ արձակել էին*[10]*:*

Երբ սրճարանում բոլորը ուրախ սրտով չնորհավորել էին նրա ազատումը, նա անտարբեր կերպով պատասխանել է.— «Ծուխս ու սուրճս անպակաս լիներ, ինչքան կուզեին, թող պահեին. բանտն էլ աշխարհ է, աշխարհն էլ՝ մի բանտ»:

Երրորդ դեպքն էլ այսպես պատահեց[11]*: Վարժապետը դպրոցական ամառվա արձակուրդին երեք ամսով գնացել*

---

1 ԻՖ 493-II – Այնուհետև

2 ԻՖ 493-II – լողնալու

3 ԻՖ 493-II – հետը դրամ չէր առնում *փխ* եթե մենակ էր ... չէր առնում հետը

4 ԻՖ 493-II D – բռնել էին

5 ԻՖ 493-II – ժողովուրդի

6 ԻՖ 493-II – հայրենասեր է *փխ* ազգասեր մարդ է

7 ԻՖ 493-II – + [բոլոր]

8 ԻՖ 493-II – ազգ[երի]

9 ԻՖ 327-II D – են

10 ԻՖ 327-II D – են

11 D այսպես է պատահել

է գավառի ջերմուկները լողանալու, ոսկրացավից բուժվելու համար, և իր տունը երեք ամսով վարձու է տվել մի այրի կնոջ: Վերադարձին խնդրել է կնոջը, որ թե վարձը տա և թե ազատե բնակարանը. կինը հրաժարվել է կատարել նրա պահանջը, պատճառաբանելով, թե հիմա փող չունի և թե ուրիշ տուն դեռ չի գտել: Վարժապետը մի շաբաթ պայմանաժամ է տվել, ինքը այդ միջոցին[1] ստիպված լինելով պանդոկում գիշերել:

Շաբաթը լրացած՝ նորից եկել է: Կինը այս անգամ մի ամբողջ ամիս միջոց է պահանջել: Վարժապետը սկզբում չէր համաձայնել, ապա համաձայնել է այն պայմանով, որ կինը գոնե վճարե վարձը, որպեսզի ինքն էլ կարողանա պանդոկում ապրել: Կինը դրան էլ չէր[2] համաձայնել: Վարժապետը՝ ճարահատ, սպառնացել է նրան օրենքի անունով:

Այնինչ՝ կինը, վայրկյան չփախցրած, դուրս է թռել փողոց, աղմուկ-աղաղակով գլխին է հավաքել ողջ թաղը և լալով ասել է, թե վարժապետը իր պատվին դիպել է. այրի, անտեր կնոջ անբարո առաջարկներ է արել, և իր մերժման վրա սպառնացել է անմիջապես իրեն պստիկ որբի հետ փողոց նետել. մի՞թե հայութիւն է խեղճ, աղքատ կնոջ հետ այդպես վարվել...

Գեչ մարդիկ հավատացել էին[3] այս զրպարտութեանը. լավ մարդիկ չէին[4] հավատացել: Եվ վարժապետի բախտից հավատացողների թիվը ավելի էր[5] եղել:

---

1 D + [թեև]
2 D չի
3 D ևն
4 D չեն
5 D է

Մինչ այդ՝ միջնորդներ էին[1] ծագել և համոզել էին[2] կնոջը, որ մի օրվա մեջ հեռանա և բերանը դոցե, իսկ[3] դրա փոխարեն՝ վարժապետը հրաժարվի դրամական պահանջից: Հակառակ դեպքում ոչ ոք պատասխանատու չէ, որ խայտառակությունը քաղաքի չորս ծայրը ձայն տա. «Անուշի կապել բանը, ուրիշ ճար չկա».— այդ էին[4] պնդել սրտացավ միջնորդները շարունակ:

Վարժապետը՝ հանկարծակիի եկած՝ համաձայնել է լռելյայն. մի կողմից էլ՝ բնազդական վախ ունենալով թե՛ կնոջական խորամանկությունից և թե՛ դատարանից ու փաստաբանից:

Սակայն այս դեպքը այնպես էր շշմեցրել վարժապետին, և միմիայն այս դեպքի վերաբերմամբ այնպես էր կողպվել նրա դատողությունը, որ մինչև վերջն էլ անկարող եղավ իր այդ ապրումը մի մտքի մեջ ձևել և հավերժացնել «Մտաց մատյանի» մեջ[5]:

Այս դեպքերից հետո ուրիշ անհաճո բան չի պատահել նրան: Եվ տարիներից ի վեր ապրում էր նա հանգիստ ու անտենչ[6], սրանցից հյուսված մի տեսակ գվարթության մեջ՝ ստեպ հայտնելով իր գոհունակությունը բարեկամներին.— «Հոգու խաղաղությունն է գլխավոր բանը, ու աշխարհս էլ մեր սրտի հայելին է[7]. տխուր ես, արևը աչքիդ կևևնա. ուրախ ես՝ պարտքերդ առնելիք կդառնան»:

---

1 D են
2 D են
3 D *չէ՛ք*
4 D են
5 D *չէ՛ք* և հավերժացնել ... մեջ
6 ԻՖ 327-II — [ապահով]
7 ԻՖ 327-II — [սիրտն է] *փխ* սրտի հայելին է

Սակայն, այս[1] խաղաղ հոգով հոսող կյանքը նորից իր մշտական թաքուն հոգսը ուներ, մի բաղձանք[2] – Աստվա՛ծ հեռո՛ւ պահե[3] կնոջից ու կռվից, փորձանքից ու բժշկից, դատարանից ու կառավարության դռնից[4]: Եվ հնա՞ր էր արդյոք, երբ նրանք չորս կողմդ կրակ են ձգել:

Եվ ամեն օր, առավոտ-երեկո, աղոթքի պես կրկնում էր այս բաղձանքը:

II

[5]ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ «ՄՏԱՑ ՄԱՏՅԱՆԻՑ»

– Կարճ խոսքը նշան է երկար խելքի,
Երկար խոսքը՝ կարճ խելքի:

– Պարծենողին կթռցնեն,
Հացը ձեռքից կփախցնեն:

– Ուրիշի համար լացողը
Ուրիշի աչքով կկուրանա:

– Մահը չլիներ,
Թագավորի ահը հերիք էր:

– Մեզ գովողները խելոք կերևնան:

---

1 ԻՖ 327-II – + [հանգիստ]
2 ԻՖ 327-II – *չիք* մի բաղձանք
3 ԻՖ 327-II – [ջանալ] հեռու [կենալ] *փխ* Աստված հեռու պահե
4 ԻՖ 327-II – կառավարությունից *փխ* կառավարության դռնից
5 ԻՖ 327-II – + Ծաղկաքաղ

— Հավն որ դրախտ երթա,
Հավկլթի ածելն էլի չի մոռնա:

— Հարուստ կինը գլխիդ կուտա,
Գիտուն կինը բերնիդ կուգա.
Սիրուն կինը դեսից-դենից
Քեզի պես-պես զավակ կուտա:

— Տեղ կուտաս կողքիդ,
Կնստին գլխիդ:

— Ուրիշի վնասը
Լինի՛ քո դասը:

— Անգետը չգիտցածից է գոհ.
Գիտունը գիտցածից՝ անգոհ:

— Ամեն բան պատճառ կունենա.
Կնկա լացը անպատճառ է:

— Երբ Հիսուս ասավ սիրիր թշնամուն,
Այն ժամանակ թուրք չկար աշխարհում[1]*:*

— Աշակերտի խելքը բաց,
Բերանն ինքը կբանա:

— Սորվեցնելով բան կսորվիս:

— Աշխարհը՝ վարժապետ,
Մարդը՝ աշակերտ:

---

[1] D չի՛ք Երբ Հիսուս ... չկար աշխարհում

– Հիմարը համառ կլինի,
Նեղսիրտը՝ կռվարար:

– Մարդիկ չատցան, իրար դիպան,
Տուգատն ընկավ, ելան վրան:

[– Վաճառականի երդումը
Կքանդե մարդու տունը:

– Շան հետևը կեցիր
Իշու առջևը:

– Քո կերածը որ փորս երթա,
Թագավորին գլուխ չեմ տա:

– Տղամարդը չէ կնկան սանձ դնողը,
Երեխան է կնկա հոգին հանողը:

– Երկու կնիկ դրախտի մեջ
Կրնա՞ն ապրի առանց վեճ:

– Հարուստի հացը
Աղքատի լացն է:

– Փողն ու գող –
Իրար ծնող:]

– Այսօրվա համար տուն կփորենք հողի մեջ,
Վաղվա համար բերդ կշինենք օդի մեջ:

– Աղքատ կնչանակե աղիքահատ:

— Մարդը հող է, ուշքն ու միտքը՝ փող.
Հարուստ մարդն է չբռնված գող:

— Ընկա, ելա, կորցրի, գտա...
Շա՛տ լսիր, քի՛չ հավատա:

— Մինչև զարթնի ձայնը խղճի,
Հոգին կուգա բերանը խեղճի:

— Խոսքը կքարոզե,
Գործը կհամոզե:

— Խղճա՛ ամենքին.
Սիրի՛ր ո՛չ մեկին.
Մի՛ փորձիր մարդուն,
Ապրի՛ր անհայտուն.
Այս է ամենից
Ապահով ճամփան:

— Ամենակարճ քունն իսկ
Աչխարհի վրա
Մարդու ամենաերկար տևող
Երջանկությունն է:

— Մենք կհավատանք վաղվա օրվան.
Վաղվա օրը — նենգ դավաճան[1]*:*

— Մարդու թշնամին իրեն փորն է:

---

[1] D *չիք* Խղճա ամենքին ... նենգ դավաճան

– Փող ունիս, կասեն՝ աղա՛ Պետրոս,
Փող չունիս, կասեն՝ այ տղա՛ Պետրոս:

– Կյանքը կարճ է,
Հույսն՝ երկար:

– Եթե քարը ծառ դառնա,
Ոսկի կացին քեզ ընծա:

– Կխոստանան –
Կգոսանան:

– Ով որ կասե՝ թե կռիվը լավ բան է.
Գլխին պի՛նդ զարկ, որ իմանա՝ ինչ բան է:

– Հարուստը կքաղե նուշը,
Աղքատը՝ փուշը:

– Մարդը տաչեղ է, բախտը՝ զիլ քամի,
Ուր որ ուզենա, կառնի, կտանի:

– Ընկեր կնչանակե ընդկեր.
Հե՛տս բանիր – հետս կեր:

– Հին ճորճը չի տաքցնե.
Ամենօրյա[1] նոր գործը
Հին փորճը չի քելցնե:

– Ով որ ստեղծեց երկու բերան,
Աչխարհ ճգեց կռվի մերան:

---

[1] D ամենօրվա

— Հույսն ինքնիրենից կգոյանա,
Ու ինքնիրենով կգոհանա:

— Ամուսին՝ մարդ ու կին —
Երկու հոգի — մի մարմին:

— Ժամանակի մաղարը
Կուտեն ողջ-աշխարհը:

— Տանջվելով՝ ժամանակը երկարցավ,
Երկարելով մեր խեղճ կյանքը կարճըցավ:

— Մոր լեզուն մոռցողը,
Հոր լեզուն իսկի չի հիշե:

— Նախանձ ուրիշի փառքին,
Սիրուն կնկան ու գանձին,
Կնշանակե, նախ իր անձին
Փառքն ուրիշի, գանձ ու կին:

— Հայրդ եթե մորդ անունով խոստում տա,
Գրավը առ, էլի նորից մի՛ հավատա:

— Կնիկը չնչիդ նստողն է
Պնչիդ զարկողը,
Ընչիդ ուտողը:

— Երկար չի կենա փողը շռայլի քսակում,
Սիրուն կնիկը՝ մեկ մարդու գրկում:

— Լավ հավը թրխսկան կնստի,
Լավ կնիկը՝ տղոցկան:

– Այն մարդո՛ւց վախեցիր,
Որ քեզնից կվախենա:

– Աշխարհը կա ու կմնա,
Մարդը կուգա ու կերթա.
Պատահմունքն է, որ կույր աչքով
Մարդկանց պիտի կառավարե,
Մեկին մարե, մյուսին վառե:

– Բարեկամը հարստության պոչն է,
Պոչն էլ՝ հարուստի ճանճաքշիչը:

– Մեկ մարգի բողկերն հավասար չեն իրար,
Ո՛ւր մնաց մարդիկ աշխարհե աշխարհ:

– Կնկա խուլը կա,
Մունջը չտեսա:

– Շա՛տ կարմունջի տեսակ ու ձև
Անցա, դարձա.
Հարուստի ու աղքատի միջև
Կարմունջ չտեսա:

– Քանի սև է թելը մազիդ՝
Կդիմանան հազար նազիդ:

– Այսօր աշխարհ մանեման,
Վաղը նեղլիկ դերեզման:

– Մարդ կհուսա գալիք օրվան,
Գալիք օրը՝ անելք գնդան:

Վենետիկ

<«ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՄՈՏ

Առաջ կենսագրականը, այն ամենը, ինչ որ գրել եմ:

Հետո Ուստան, Ջավուշը և Կենդանի Գազելը (որն ասել էր արդեն վարժապետի մասին) մտնում են սրճարան:

Տեսան, վարժապետը լուռ, աչքերը գոց նստել էր. երբ աչքերը բացեց, Գազելը հարգանքով բարևելով ասաց.

— Վարժապետ ջան, բարով տեսանք. չայըմ, ղայֆեմ խմենք:

— Խմենք,— պատասխանեց վարժապետը,— գլխով բարևը դարձնելով:

Մոտեցան նրան. ներկայացրին նրան Ուստային, Ջավուշին, ծանոթացրին:

Կարոն ասաց.

— Վարժապետ, քու գովքդ շատ եմ լսե. կարոտ կքաշեի քեզի տեսնել. [տեսա] փառք Աստծու, տեսա: Ինձի համար գիտնական մարդիկ առավել են հարուստ, իշխանավոր մարդոցեն:

Գազելը չչնջաց վարժապետի ականջին, Ուստան լսեց չչուկը. «Երևելի վարպետ մարդ է, գլուխ-ուստա, աչխարհ տեսած»:

Ասպա բարձր ձայնով ասաց.

— Վարժապետ ջան, Ուստա Կարոն, և էլ իրան ընկերը, և էլ ես, կխնդրենք գիրքդ բանաս, քանիմ՝ բան կարդաս, իմաստուն խոսքեր են. մարդ ինչքան լսե՝ չի կշտանա: Եվ էլ կուզե որ ես գրի առնիմ, որ ինքն միշտ քովն ունենա:

Վարժապետը համեստությունից կարմրեց, ապա կարդաց: Ուստան բերանը բաց լսում էր: Վերջացրեց. չնորհակալ եղավ Ուստան, միասին լավ ճաշ կերան: Մյուս օրը Կազեթը արտագրած տվեց մտքերը, որ Կարոն տարավ տվեց Հարությին. սա էլ կարդաց, ասաց.

— Լավ խոսքեր կան, բայց Սողոմոն իմաստունի խոսքերու առաջ ոնց որ քու չինած տները մեր Տիկորի վանքի առաջ:

Ջմոռանամ գրել, որ Ուստան Կ.Գազեթին նվեր առավ մի գույգ կոշիկ. խեղճի կոշիկների վրա հոգի չէր մնացել:

2. ՈՒՍՏԱՆ ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՄՈՏ

Ուստան լսեց նրա համբավը. գնաց նրա [հյուրանոցը] սրճարանը:

Տեսավ մի խոհուն մարդ իր համար նստել և մտածում է:

Ջավուշի հետ և իր ուղեկից Կենդանի Գազեթի հետ նստան և սուրճ առան և զրուցում էին, մինչև որ վարժապետը ուշքի եկավ՝ բացեց մի տետրակ և մեջը մի բան գրեց. այդ ժամանակ նրանք թեյ կամ սուրճ առաջարկեցին, և ապա մոտեցան նրան:

Մինչ այդ՝ մինչ նրա՝ վարժապետի ուշքի գալը, հեղինակը կարճ կերպով պատմում է նրա կենսագրությունն ու բնավորությունը:

Խոսում են հետը մի քիչ, ապա խնդրում են նրան կարդալ իր «Մտաց մատյանից»:

Ուստան հափշտակված էր նրանով:

3. ՈՒՍՏԱՆ ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՄՈՏ

Նրա մոտ շատ հարցումներ արավ, ի միջի այլոց, հարցրեց, թե աշխարհի մեջ ինչո՞ւ համար է չարությունն ու պիղծությունը:

Վարժապետը ասաց, թե ամեն բան չափավոր կերպով շատ օգտակար է, չափավոր չարիքը մարդուն առաջ կքշե, դրդե, ինչպես մոտուլը իշուն, եթե միայն աշխարհը անչար ու լավ լիներ, մարդիկ հանգիստ կքնեին, բան չէին անի, անասուն կմնային. ուսում-դիտություն-արհեստ-լուսավորություն չէր լինի: Ջարը թույնի պես բան է. կան թույներ, որ չափով գործածել՝ մարդկանց թե կբժշկե, թե կուժովցնե. շատը կմեռցնե, ինչպես և շատ մեծ չարիքը, չափից անցած չարիքը. մի խոսքով՝ չկա չարիք — առանց բարիքի:

Ուստան մխտքը պահեց և Հարությին ասաց վերջին տեսակցության ժամանակ, թե Գյումրի մի իմաստուն մարդ կա, անունը Մելքոն վարժապետ, էսպես ասաց, ես էլ էդ մտքին եմ:

4. <ՄՈՌԱՑԱ...>

Մոռացա.

Մելքոն վարժապետի հագուստը. երկար սերտուկ, սև բարակ [գալստուկ] փողկապ, անբաժան գոնտիկ՝ ամառ-ձմեռ թևի տակ:

Եվ այլն տիպիկ հատկություններ, ատրիպուտներ:

Հայություն է մի՞թե այդպես վարվելը, վարժապետի վայել բա՞ն է:

5. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏ ԵՎ ԿԱՐՈՆ

Գյումրի Ուստան շատ էր լսում սոցիալիզմի մասին, [ընկերներով] ընկերի պես կառավարվող աշխարհի մասին, և հարցրեց վարժապետին նրա կարծիքը, թե եղնելի՞ք բան է:

Վարժապետն ասավ, թե ես գիտնական մարդ չեմ, շատ բան չեմ հասկանում էդ ուսմունքից, միայն գիտեմ, որ լավ բան է, բարեգործություն է. միայն հավասարությունը խելքիս չի նստում. անասուններն են իրար հավասար, մարդը անհավասար է. եթե մարդկանց էլ իրար հավասարեցնեն, կնշանակե, մարդկանց էլ անասուն դարձնեն. չի լինի, թե որ լինի, լավ չի լինի:

6. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏ

— Թևի տակ, անուքի տակ դրած անբաժան զոնտիկը (անձրևանոց, հովանոց), ամառ-ձմեռ:

— Հագնում էր երկայն սերտույք, բաճկոն, և միշտ կոճկած ուներ կուրծքը:

Թեև նոր չէին հագուստներն ու կոշիկ, գլխարկ, բայց միշտ նորի երևույթը ունեին, որովհետև շատ մաքուր էր, խնամքով հագնված ու պահված: Միշտ զգույշ, որ ուտելիս յուղ չկաթի կրծքին, կամ մի որևէ խանութ նստելիս, հագուստը բևեռի չբռնկի ու պատառվի, մի

բան, որ չա՛տ սովորական էր խանութների մաշված ա-թոռների և սեղանների վրա:

— Շուտ-շուտ բաղնիք էր գնում, մազերը մաքուր պա-հում և ոչ երկար, այնպես որ հակառակ ուրիշներին՝ նրա օձիքը միշտ մաքուր էր, յուղոտ չէր: Թեև խիստ ծխող էր, բայց ատամները սպիտակ էին, որովհետև միշտ լվանում էր բերանը:

7. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ ԵՎ ՎԱՐՊԵՏ ՍԻՄՈՆԸ

Իրար բարեկամներ էին, սկսած 1910 թվից. այդ ժամա-նակ Մելքոն վարժապետը մոտ 56 տարեկան էր (56-57), իսկ Սիմոնը 48-50 տարեկան:

Իրար հետ միշտ տեսակցում ու խոսում էին քաղաքա-կանությունից:

8. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Ռուս ժանդարմի մոտ:

Թեև ճիշտը խոստովանեց իր անմեղությունը, բայց չարձակեցին. արդեն այն մի խոսքը, թե թրքի և ռուսի բերնից Հայաստանը խլելը անկարելի է, բավ էր, որ նրան բանտարկեին:

9. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ
(ուղղումներ)

Գիրք ու գրիչ, թուղթ ու թանաք:

— Օր-օրի վրա հետ կերթամ,— ժպտալով պատասխանում էր վարժապետը:

Որ եթե այդ հոլովվողը (կինը) մտնի կյանքիդ մեջ... դասը պիտի չկարողանաս ճանաչել:

«Աչխարհը կնկա վրա է չինված և թեև կնիկն է սրտի... սակայն վերջին հարվածը...

— Գնում էր այնտեղ քնելու. պայմանաթղթերը կազմողը:

Մազ-մորուքով, բաճկոնը կոճկված միշտ, վրա-գլուխը մաքուր ձնծաղիկի պես:

Եվ այդ սրճարանը համբավավոր ժամա<դրավայր էր>:

Քաղաքականության հարցերից:

[Իրերի վրա:]

— Պետքերի վրա:

— Այնքան ավելի չա՛տ ժամանակ:

— Ամուսին ու կին, երկու անհաշտ հոգի, մի հաշտ մարմին:

— Մարդ կհուսա գալիք օրվան,

Գալիք օրը — [նենգ] սև դավաճան:

— [Մեր անհաղթելի թշնամին մեր փորն է:]

— Վաղ հասակից (երիտասարդ հասակից նա ծխական դպրոցում ուսուցիչ էր հայոց լեզվի և դառավ հսկիչ:

Եվ երբ Ռուսաց ... բացը մնաց: Այդ ժամանակ նա արդեն մոտ 50 տարեկան կար, և մի նոր գործ սկսելու համար մանավանդ ուշացած. սակայն 25-ամյա երկար պաշտոնավարության մեջ — մի մեծ գումար հետ... [որ իր <անընթ.> մոտ պահ էր տվել]

— Եվ մանավանդ սովորական բան էր հայկական փոքրիկ քաղաք:

— Որին պատվելը արդեն պատիվ է և իրենց համար:

– Հայաստանն ազատել թ<ուրքի և> ռուսի ձեռքից:

– Հարուստը / Բախտավորը ինքնահավան կլլնի, թշվառ մարդը դյուրահավան:

– Վարժապետը 2 ամսով էր տվել իր տունը վարձով:

– Կառավարիչ ձեռը

Սանձն ալիտի ձիերը:

1) Նա է կառավարիչ ձեռը, ով դիտե սանձել ձիերը:

2) ով սանձել դիտե ձիերը:

10. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

– Պատվավոր մարդը չուտ կխաբվի:

– Մեծ մարդիկ մեծ սխալներ ունեն, կանեն:

– Սուտ չխոսող մարդը ճշմարտության կեսը կասե:

11. ԳՅՈՒՄՐԻ

Մելքոն վարժապետի լրագիր կարդալու ոճը, նրա և ունկնդիրների կարծիքները, ռեպլիկները լրագրի նյութերի և հեռագրների, լուրերի նկատմամբ à la Պռոշյան:

Օրինակ. «Գերմանիայի և Անգլիայի մինիստրների հանդիպումը Լոնդոնում», ռեպլիկ, կարծիք – Տեսնես ո՞ր ազգի տունը պիտի քանդեն էս դևերը:

ՏԵՐ ՄԼԵՀԸ

Շոգեկառքը զրընկալով գնում էր երկաթե գծերի վրայով: Ես կանգնել էի վագոնի դռների միջանցքում և պատուհաններից նայում էի դուրս, երբեմն աջ կողմս, երբեմն ձախ կողմս:

Կանաչ առավոտ էր, թարմ, ցողաթաթախ: Ամեն քար ու թուփ բյուրեղով զարդարուն: Կովերն ու եզները անհագ ախորժակով արածում էին ցողաթուրմ սեզը:

Մանուկ արևը ժպտում էր բոլոր իրերի երեսին, և նրա ոսկի ժպիտը չողչողում էր միլիարդավոր ցողերի մեջ:

Դաշտերը զմրուխտյա գետերի պես վազում էին դեպի շոգեկառքը: Վազում էին, վազում էին երկու կողմից և քսվելով վագոնների կողերին՝ սահում, անցնում էին:

Ցորենի մատաղ արտերը, կարմիր կակաչներով բոցավառված, ցոլում էին ու ծուփ տալիս: Արտույտները թփերի տակից, նետի պես, սլանում էին վե՛ր, դեպի արևը, և արևի ճաճանչների մեջ ոսկի էին դառնում:

Վեհանիստ Արագածի գագաթները՝ անբիծ սպիտակ, կարծես աննյութական էին, կարծես, բնազանցական երևույթներ էին:

Իսկ հանդիպակաց Հարսնաքար նազելի լեռը կանաչավառ թավշյա զգեստ հագած, ամպեղեն բարակ շղարշը երեսին նման էր իր առասպելի Հարսին, որ մեզնից շա՛տ դարեր առաջ, իր չքեղ ամրոցում, զարդարված սպասելիս է եղել փեսային պսակ գնալու համար, սպասել է, սպասել, բայց դավաճան փեսան չի եկել, և դժբախտ հարսը վշտից իրեն անդունդն է նետել...

Շիրակի դաշտե՛ր, իմ նվիրական ցորենի արտե՛ր, իմ պատանեկան անուրջների լուսեղեն աշխա՛րհ, ինչքա՛ն դեղեցիկ եք դուք:

Երբ նայում եմ ձեզ՝ մի անդորրություն և ներդաշնակություն ողողում է հոգիս:

Բոլոր մռայլ մտքերս վանում եք իմ սրտից հեռու, հայրենի դաշտե՛ր:

Անհուն խորանում է ձեր վրա կապույտ երկինքը, ամենապայծառ կապույտը բոլոր երկինքների մեջ:

Երբ նայում եմ քեզ, Շիրակի երկինք, հրաշքի պես փոխվում է ամեն ինչ.— աշխարհը դառնում է կապույտ երազ, աշխարհը դառնում է բանաստեղծություն:

Ծանապարհի եզերքին՝ դալար թումբի վրա, կանգնել էին երեք դեղջուկ պատանիներ՝ մախաղները մեջքերին կապած, մահակները՝ ձեռքերին: Կարմրաթուշ, պայծառ աչքերով:

Նրանք ուրախ, բարձր ճիչերով բարևեցին մեզ՝ ուղևորներիս, և վագոնների մեջ գտնվող աղջիկներին ծաղիկների փունջեր նետեցին:

Ինչքա՛ն ուրախ էին նրանք և կենսազվարթ...

Ինչպես կուզեի նրանց պես, նրանց հետ լինեի, բաց դաշտում, թարմության մեջ և նրանց կենսազվարթությունը ունենայի — ուրախ, զվարթ, բնության զգայակից և նրա հետ դաշն ու բարեկամ:

Մոտենում էինք Ջաջուռ գյուղին: Ջաջո՛ւռ, պատմական մշուշից եկած մի խորհրդավոր անուն:

Ինչքա՛ն անմեղ հեգնանքի նյութ է տվել նա կատակասեր գյումրեցիներին[1]*:*

---

[1] Հեղինակը գրել է սուբանկյուն փակագծերում (սև մատիտով). *<(Ալեքսանդրապոլ, Լենինական)>:*

«Ջաջուռից գրում են «Մշակ» լրագրին, թե ֆրանսիական մինիստրությունը տապալվեց»:

Երբ մեծ-մեծ խոսում է թերուս մեկը,— «Ջաջուռի համալսարանն է ավարտել. ի՞նչ կուզեք». ասում էին մեր գվարթ գյումրեցիները:

Հապա՞ Ջաջուռ գյուղի քահանան, տեր Մլեհը... հռչակավոր էր նա իր առածներով, զրույցներով, առակներով, քարոզներով:

Երբ Գեորգ Կաթողիկոսը (Ճեմարանի հիմնադիր) գալիս էր ամառանոց Արագածի վրա, տեր Մլեհին զրույցի էր կանչում իր մոտ: Կաթողիկոսը չա՜տ էր ախորժում նրա առակներից, պատմություններից: Նրան ոսկեզօծ խաչ էր նվիրել, որ տերտերը կրում էր կրծքի վրա արդար հպարտությամբ:

1896 թվականի հունվար ամիսն էր: Մաքուր սպիտակ ձյունով սավանված էր Շիրակը,— դաշտերն ու բլուրները, բոլոր ձորերը, մինչև լեռների բարձր բաչերը: Սպիտա՜կ, սպիտակ-լուսնային դաշտեր ու լեռներ:

Քեռուս որդու հետ գնում էինք Ջաջուռ: Երկաթուղին չկար դեռ այն ժամանակ:

Ձյունի վրայով սահում էր գյուղացու նախակերտ սահնակը, և ես այն զգացումն ունեի, թե լուսնի դաշտերի վրայով է, որ սահում ենք:

Գնում էինք Ջաջուռ՝ Բըդե ամուն տեսնելու: Բըդե ամին հանգուցյալ հորս մտերիմ ընկերն է եղել և գործակիցը: Միասին ճամփորդել են Կարս, Երևան, Լոռի, Թիֆլիս:

Բըդե ամին հորս ողջ ժամանակ օրերով մեր տանն էր ապրում: Նա գյուղից նվերներ էր բերում մեզ՝ եղբայրներիս, նախշուն գուլպաներ, որ իր հարսներն էին հյուսել, կարագ էր բերում, մեղր ու ներկած հավկիթներ:

Ամենից շա՜տ ինձ էր սիրում, որովհետև մեր տան կրտսերն էի ես:

Այժմ, տարիները հետո, գնում էի Բըդե ամու մոտ, որ հանգուցյալ հորս կարոտն առնեի նրանից:

Ամեն անգամ, երբ նա պատմում էր հորս հետ ապրած օրերից և միասին շրջագայած վայրերից, երևակայությունս ինձ պատեհացնում էր նրանց հետ:

Երբ ասում էր — «Մեկ անգամ գնացինք Լոռի՝ ջաղջի քարեր առնելու... Հե՛յ վախ, ի՜նչ անուշ օրեր էին... Լուսահոգին էսպես ասավ...», ինձ թվում էր, թե հայրս կենդանի է, ներկա է, և նրա լուրջ ու սիրող աչքերը գլխում են ինձ...

Բըդե ամու տանն ենք: Բարեկեցիկ վիճակ ունի Բըդե ամին: Գոմը լի տավարով, ոչխարով. ախոռը՝ ձիերով: Տունը շեն և ուրախ, փեթակի պես եղումուտով:

Նահապետական օճախ է — որդիներ, հարսներ, թոռներ: Երկու-երեք օրոցք շրխկում է անընդհատ:

Թոնիրները բոցին են տալիս, ծուխը մրցում է ամպերի հետ:

Հայց էին թխում, կերակուր էին եփում:

Երևկոյան, նստել ենք օդայում, մշտավառ հին օճախի շուրջը, նրա տրամադրող մթնոլորտի մեջ:

Բըդե ամին նստել է սրբազան երդի աջ կողմը, գորգի վրա, թիկն տված մեծ մութ-կապույտ բարձին: Երդի ձախ կողմը նստել է ծերունի Տեր Մլեհը:

Բըդե ամին էլ ծեր է, ավելի քան 70 տարեկան, ալեհեր է, բայց տակավին ամուր կազմվածք ունի, և խելացի խոսակից է:

Առաջին անգամ չէ, որ տեսնում եմ Տեր Մլեհին: Մանուկ օրերումս մի քանի անգամ տեսել էի նրան, հեռվից, անցողակի, բայց այս անգամ պատիվ ունեի բարձակից լինելու նրան:

Հիմա նստել եմ նրա կողքին և ուշի ուշով զննում եմ նրան:

Օդան բերնեբերան լցված է մարդկանցով: Բրդե ամու. օդան գյուղի ավագանիի ակումբն է: Վերի գլխում տեղ են գրավել, տերտերից և Բրդե ամուց հետո, գյուղի հարգելի ծերերը, առաջավորները: Ներքևում Բրդե ամու փեսաները, որդիները, իսկ թոռներն ու ծառաները կանգնել են պատերի տակ, դռան առաջ:

Բայց իմ դիտողության առանցքը Տեր Մլեհն է:

Տեր Մլեհը – մեծ գլխով, պտիկ գդակի տակից վար իջնող ճյուն-ճերմակ մազերով: Բրդոտ, թավ հոնքեր ունի՝ սև ու մեծ և բարությամբ լի աչքերի վրա կախված: Արծվաքիթ կեռ և սուր, քթախոտից սև ու դեղին դարձած ընչածակերով:

Փառավոր, ալեծածան մորուքը ջրվեժի պես իջել ծածկում էր ցայտուն լանջքը, որի վրա ոսկեզօծ խաչը փայլատակում էր հաղթանակով:

Լայնաթիկունք, մեծ իրան: Թևերը՝ կարճ, բազուկները՝ հաստ ու մազոտ, իսկ մատները – մեծ, ահագին:

«Տեր Մլե՛», – այսպես էին հնչում գյուղում ու քաղաքում, – մի սոսկ անուն չէր. նա բովանդակում էր ամբողջ մի փոքրիկ աշխարհ:

Ինչե՛ր չէին պատմում նրա մասին, ի՛նչ զվարթ միջադեպեր, ի՛նչ առասպելական զրույցներ:

Ասում են, որ ինքը չի կամեցել քահանա դառնալ: Լեռների հովիվ է եղել Սարիբեկը. ոչխարներին հովվողը ինչպե՞ս կարող է մարդկանց հովվել, բայց պապը, որ քահանա է եղել, ուզեցել է, որ թոռը իր տեղը բռնե, քահանայությունը իրենց տոհմից չհեռանա:

Սարիբեկը երկար ժամանակ ընդդիմացել է, իրեն չի զգացել «օծյալ» դառնալու արժանի, բայց վերջը հնա-

ղանդել է մեծ հոր և ծուխերի պնդումներին ու թախանձաններին:

Առասպելն ասում է, որ նա ո՛չ կարդալ գիտե, ո՛չ գրել, բայց ամբողջ սաղմոսները, ավետարանը, եկեղեցու ամունքները, չարականները, Նարեկի աղոթքները «ջրի» պես գոց գիտե, որ սովորել է մեծ հորից մխայն լսելով, սակայն գրքի մեջ չգիտե նրանց տեղը: Այնպես որ, երբ ձեռնադրող եպիսկոպոսը տիրացու Սարիբեկին հարցաքննելիս ցույց է տվել ավետարանի մի գլուխ, որ կարդա,– տիրացուն չի կարողացել կարդալ:

Եվ զվարթ դյումրեցիները, որ կատակասեր են և մարդու ձեռք առնող, այդ դյումրեցիները, ականատեսի պես, հաստատում են թե, երբ եպիսկոպոսը հարցրել է նրան, թե եկեղեցիս քանի՞ սուրբ խորհուրդ ունի, տիրացու Սարիբեկը, բթամատն ու ցուցամատը իրար չփելով, պատասխանել է – «700 սուրբ խորհուրդ»:

Այսինքն՝ 700 րուբլի:

Եվ եպիսկոպոսը իսկույն հավանություն է տվել և ձեռնադրել է նրան քահանա «Մլե՛» ծաղրանունը վրան դնելով:

Այսինքն թե՝ տիրացուն դործը մլելով, քշելով է գլուխ բերել:

Թեև դյումրեցիները արդար էին այս հարցում՝ համոզված լինելով, թե իրոք սա ծաղրանուն է, որովհետև բոլորի համար միանգամայն անծանոթ էր այս անունը և կարծում էին, թե մլել բայի հրամայական ձևն է:

Սակայն դյումրեցիների այս կատակը չատ էր զայրացրել ջաջուռցիներին, որոնց հատկապես չա՛տ էին ձեռք առնում նրանք: Սակայն Տեր Մլեհը իրեն մշտական բարի ժպիտով ասում էր. «Դյումրեցիները աչխարհիս երեսին ի՞նչ գիտեն որ, մենակ արագի գավաթին

մեծն ու պստիկը և էլ լոպպազության[1] էն թունդ տեսակները»:

Այս առասպելներին սակայն ո՞վ էր հավատացողը:

Ճշմարտությունն այն էր, որ տերտերը լավ էլ կարդալ ու գրել գիտեր, և մանավանդ երիտասարդ տարիքին այնպիսի հզոր ձայն ուներ, որ, ինչպես վկայում են իր հասակակից ծերունիները, երբ նա երգում էր եկեղեցում, նրա ձայնը լսվում էր գյուղի բոլոր տների մեջ էլ:

Գյուղացիները սիրում և հարգում էին իրենց տերտերին ամենից առաջ նրա անսահման բարության համար:

Բարի, գթառատ սիրտ ուներ նա բոլորի հանդեպ:

Ասում են, որ կյանքի մեջ ո՛չ մի մարդու մի ծանր խոսք չէր ասել նա, ո՛չ մեկի հետ կռված չէր:

Նրա չեն տնից տիրամոր ձեռքով միշտ ուտելիք էր բաշխվում գյուղի հիվանդներին, կարիքավորներին:

Զրույց էր բացված: Խոսում էր բան գիտցողը, աչխարհատեսը, և լսում էին երիտասարդները:

Թիֆլիզից Ալեքսանդրապոլ ճգվող երկաթուղին նոր էր շինվում: Ծակում էին Ջաջուռի հսկա լեռները թունելի համար: Գյուղացիները ապշել էին այդ վիթխարի գործի հանդեպ:

«Սարի երկու երեսից ծակում են, որ գետնի տակ իրար դիպնեն: Ի՛նչ հնճարք, ի՛նչ ուսմունք»:

— Տալյանները (իտալացիք), լավ, գիտակ վարպետներ են, բայց չա՛տ խման են և չա՛տ գող են: Վաստակածը տալիս են գինու և արաղի: Գողնում են բարութ, դինամիտ, բահ, քլունգ...»

---

[1] *Պարծենկոտություն* (ծան. Հեղինակի):

— Ինճիներ մեծերն էլ գող են. երկու սել հող են թափում, իրանք հինգ-վեց սել հաշիվ են դրում: Մեկ մանեթը (րուբլի) երեք մանեթի տեղ են հաշիվ ցույց տալիս թագավորի խազնին...»:

Հազար ու մի բանի մասին խոսեցին ու անցան:

Խոսք ծագեց Հայկական կոտորածների մասին, որ 1895 թվականին տեղի ունեցել էին դժբախտ Թրքահայաստանում:

Ահավոր լուրերը թափանցել էին Կովկասի Հայաստանի կորած-մոլորած գյուղերի անկյունները:

Հայ գյուղացու սիրտը մորմոքում էր իր հեռավոր, թշվառ եղբայրների համար:

«Գալան սուլթանը ջարդեց հայերին: <Ռուսը թուրքի կողմը բռնեց. ապրիս, ասաց:> Աչխարքը մատը մատին չդարկեց...»:

Այդ դաժան բանաձևն էր հածում գյուղեգյուղ:

Մի ծերունի հառաչելով ասաց.

— Թուրքի ձեռքը որ բռնող չլինի, հայի մուխը կմարի: Մենք զորք չունենք, մենք բերդ չունենք, օգնական չունենք: Ի՞նչպես պտի զլուխ ելնենք էդ բարբարոսի հետ: Զուլում բան է, զուլում:

— Բա՛, էս Աստված կընդունի՞,— խորին ցավով և զարմանքով բացականչեց Բըդե ամին,— էս ինչ աչխարհք է. մեզի մեր չի՞ բերել, մենք քա՞ր ենք թե հոգի չունենք... Աստված ի՞նչպես է համբերում...

Բոլորը տխրությամբ գլուխները կախեցին:

Բըդե ամին նայում էր ինձ. աչքերի մեջ համր և դառնագին հարց կար ինձ ուղղված:

Ես մտածում էի պատասխանիս մասին, երբ տխրած լռության միջից լսվեց Տեր Մլեհի հին, խռպոտ ձայնը.

— Աստծուն ի՞նչ. նրա ի՞նչ պետքն է. իսկի նրա դարդը չէ…

«Այս ի՛նչ տարօրինակ, գայթակղիչ խոսք էր մի ծեր քահանայի բերանից», զարմացած խոսեցի սրտիս մեջ:

Գյուղացիները բոլորը գլուխները բարձրացրին դեպի Տեր Մլեհը:

Նրանց հայացքի մեջ զարմանք չկար, այլ հետաքրքրություն: Գիտեին, որ իրենց սիրելի քահանան մի տեղին առակ ունի լեզվի տակ, որ հիմա պատմելու է:

Այդպես էր նրա ոճը — առանց առակի խոսք չուներ երբեք:

Տերտերը իր ծանրությամբ ձեռքը տարավ գրպանը, հանեց քթախոտի մեծ տուփը և մի ահագին պտղունց քթախոտ առնելով՝ նույն ծանրությամբ կոխեց ընչածակների մեջ:

Բըդե ամին անհամբեր էր:

— Տերտեր ջան, ինչպե՞ս թե Աստծու պետքը չէ: Բա՝ մենք նրա ստեղծը չե՞նք:

— Կեցի՛ր, որ ասեմ, տո՛, հեր օրհնած,— պատասխանեց նա և քիթը մեծ, մուգ-դեղին թաշկինակով սրբելով՝ սկսեց.

«Մեկ օր Աստված ասում է Գաբրիել հրեշտակին, թե իջնենք երկիր, տեսնենք ի՞նչ են դառել իմ ստեղծած ազգերը:

Իսկույն իջան երկիր: Հրեշտակը աչխարքի ամեն ծերերը հասնող ձենով կանչեց.— Ազգե՛ր, լեզունե՛ր, ինչքան որ կաք աչխարքիս վրա, եկեք անցեք Աստծու առջևով: Տերն ուզում է ձեզի տեսնի և ձեր ուզածը տա:

Արևելքից ու արևմուտքից, հարավից ու հյուսիսից օխթանասուն ու երկու ազգերը ժաժ եկան ու ճամփա ընկան:

Եկան Զինմաչինից ու Հնդստանից, եկան Արաբստանից ու Մըսրա երկրից, Հապաշից ու Հալապից, Իրանից ու Թուրանից:

Եկան ինկիլիզ, Փռանկ, ուռում և էլի շա՛տ ու շա՛տ ազգեր: Եկան ու եկան, եկան ու անցան Աստծու առջևով:

Աստված տեսավ, ճանչցավ նրանց, օրհնեց, խնդրանքները կատարեց:

Ետքի օրինակ. ինկիլիզն եկավ, Աստված ասաց.

— Ինկիլիզն է, ճանչցա, իմ ստեղծն է: Հարցրու տես, ինչ կուզե:

Հրեշտակը հարցրեց.

— Ի՞նչ կուզես:

— Ազվեսախելք,— ասավ ինկիլիզը:

— Թող ուզածն անպակաս լինի,— ասավ Աստված:

Եկավ ռուսը:

— Ռուսն է, իմ ստեղծն է: Տե՛ս, ինչ կուզե:

— Ի՞նչ կուզես,— հարցրեց հրեշտակը:

— Սալդատ,— ասավ ռուսը:

— Թող ուզածն անպակաս լինի,— ասավ Աստված:

Եկավ թուրքը:

— Թուրքն է: Իմ ստեղծն է. ինչ կուզե:

— Ջոռ[1],— ասավ թուրքը:

— Թող ուզածն անպակաս լինի,— ասավ Աստված:

Մեկ ազգ «Տեր, ողորմյա, Տեր, ողորմյա» երգելով, գալիս էր: Աստված նայեց, նայեց, չճանչցավ. դառավ հրեշտակին.

— Էս ազգը իմ ստեղծածը չէ. չճանչցա: Դու գիտե՞ս, ով է:

Հրեշտակը գլուխը ժաժեց:

---

[1] *Բռնություն* (ծան. հեղինակի):

– Հարցրու տեսնենք՝ ո՞վ է,– ասավ Աստված:

– Ի՞նչ ազգ եք,– հարցում արավ հրեշտակը:

– Հայ-քրիստոնյա:

– Հասկցա,– ասավ Աստված:– Էս իմ որդու բռնած հում գործերիցն է: Թո՛ղ երթան՝ Քրիստոսին աղաչեն: Իմ բանս չէ:

– Տեսա՞ք,– դարձավ Տեր Մլեհը մեզ,– որ իմ ասածը[1] ճշմարիտ է:

Հիմի պտի ասեք, լա՛վ, թող Քրիստոս օգնության հասնի: Քրիստոսի աչքը վախեցել է աշխարքից: Մեկ անգամ աշխարք եկավ, բռնեցին, խաչեցին, մահացրին, թաղեցին: Աստծու պես հայր չունենար, կորել գնացել էր»:

Գյուղացիները քթերի տակ խնդացին:

Բըդե ամին մռայլվեց, դժգոհ էր առակից:

– Տերտե՛ր, առակդ ավուր պատշաճի չէր: Խնդալու տե՞ղ է, որ խնդալու բան ես ասում, լա՛լու տեղ է...– գրեթե հանդիմանիչ ձայնով ասաց նա և լռեց:

Տեր Մլեհը լուրջ դեմք առավ.

– Առակ էր, միտքս ընկավ, ասի: Ինչ խոսք, որ միշտ էլ մեր հույսը Աստծու վրա պտի դնենք: Մենակ Աստծու կամքը անիմանալի է, անքննելի. չգիտենք, ի՞նչ է ուզում, ինչ է մտածում մեզի համար:

Բանն էն է, որ էսօրվա օրս թուրքը մեզի ջարդում է, մենք էլ՝ ի վեր աշխարքի անտեր, անտիրական որբ ենք:

Ասելս էն է՝ որ մենք որբի պես, մեր պորտը մեր ձեռքով պտի կապենք: Մենք պտի մեր գլխու ճարը տեսնենք:

– Ի՞նչ ճար ցույց կուտաս մեզի,– ջղայնացած հարցրեց Բըդե ամին:

---

[1] [առակը]

— Թուրքի հետ յոլա երթալ,— յուրաքանչյուր բառը շեշտելով ասաց տերտերը:

Աչխարհը յոլա երթալ է: Յոլա պտի երթաս կնկանդ հետ, որդոցդ հետ, դրացուդ հետ, բարեկամիդ ու թշնամուդ հետ, իշխանութեյան հետ:

— Ամենեն իմաստուն բանը — յոլա երթալն է:

— Թուրքի հետ յոլա չի երթըցվի,— լսվեց մեկի ձայնը,— կարելի չէ, չի երթըցվի, թե ուրիշ ճար գիտե՞ս, է՛ն ցույց տուր:

— Յոլա երթալ, մինչև աչխարքս աչխարք դառնա: Ուրիշ ճար չեմ տեսնում: Թո՛ղ ազգի մեծերը ուրիշ ճար ցույց տան: Իմ խելքս էսքան է կտրում,— հանգստութեյամբ կնքեց իր խոսքը Տեր Մլեհը:

Բարձր ձայնեց Բըդե ամու երեց որդին.

— Էնքա՛ն արյուն է թափվել, ինչո՞ւ արդար արյունը ջուր դարձնենք:

Թուրքն էլ մսից ու արյունից է շինված. նա էլ մահից կվախենա, թե որ դեմը տղամարդ տեսնի: Մենք էլ կարող ենք զարկել: Անիծեմ էս պուտ արյունը, որ ունենք... մեռնելը դերությունից հազար անգամ լավ է...

Նրա կրակոտ խոսքերը ոգևորեցին դռների մոտ հավաքված երիտասարդներին:

Ճակատները բարձրացան, բռունցքները կազմվեցին, ըմբոստ կոչեր խաչաձևեցին իրար:

— Թուրքը անչուն դեղ է տեսել, առանց մահակի ման կուգա:

— Թուրքը մենակ գենքից կվախենա: Թուրքը ուրիշ լեզու չի հասկանա:

— Ջենք չունեցողը ոչխարի պես կմորթվի...

Կավալեր Մելիքը,— այդպես էր դյուղը կոչում նրան,— ծխամորճը շրթների միջից հանելով և բարձր բռնելով, հրամայող ձայնով գոչեց.

— Սուսե՛ք, ես էլ բան ունեմ ասելու:

Մելիքը ռուս-թրքական պատերազմին, 1877-78 թթ. իբրև կամավոր մասնակցել էր ռուսական հետախուզային ձիավոր խմբերի մեջ: Քաջութիւններ էր գործել, խաչի շքանշանով պարգևատրվել: Գյուղի ազդեցիկ և ունևոր մարդկանցից մեկն էր:

— Տերտերս շատ չիտակ խոսք ասավ, բայց ուշ է. կռիվն ընկել է հայի և թուրքի մեջ, արուն է թափվել: Ետ դառնալ՝ շատ դժվար է: Իմ խելքովս, և էլ ճշմարիտ է, էս բոլոր արունքների մեղավորը ռուսն է: Հիմի պտի ասեք, ինչի՞ համար: Էն բանի համար, որ ռուսը հայերին օդ-օդ հանեց, կռվեցրեց թուրքի հետ իրեն օգուտի համար, թշնամի դարձրեց հային ու թուրքին իրար հետ:

Իրեն օգուտը առնելուց ետև, մեկդի քաշվեց, թե դուք գիտեք թուրքը: Ես էս բանը զուր տեղը չեմ ասում, աչքովս տեսա: Կռվի ժամանակ բոլոր հայերը ինչքա՜ն օգնութիւն ցույց տվին ռուսին. թուրքի զորքին ինչքա՜ն վնասներ տվին... Պատերազմը վերջացավ, հայերս գիտեինք, թե հիմի ռուսի պատիկ աղբերն ենք: Բայց ռուսը հայերից երես դարձրեց, թուրքի հետ բարեկամացավ: Մեր սրտով ու կյանքով տված բաները իսկի բանի տեղ չբռնեց. մեր վարժատուները փակեց, կուզե մեզի էլ ռուս դարձնել:

Մենք հողի պակասութիւնից մեռնում ենք, Ղարսա ամայի հողերը խնդրեցինք, չտվեց թե՝ ձեզի համար չէ: Ու տվեց մալականներին, թուրքերին, քրդերին:

Ռուսը երախտամոռ է: Էն, ինչ որ մենք ռուսին ցույց տվինք, թուրքին ցույց տված լինեինք, թուրքը մեզի հետ աղբոր պես կլիներ, մեկ հայի քիլթ չէր արունի...

Ռուսը հայի վրա նայում է ինչպես իրեն մեկ հավատարիմ ծառայի վրա, բայց թուրքին երես է տալիս, ինչու որ՝ թուրքը չատվոր է, ուժով է, թշնամի է:

Ռուսն է հայի տունը քանդել:

Էդ ոխի համար է, որ խաչ ունեմ, բայց իսկի չեմ կախում: Էս հո՞ ամենքիդ հայտնի է:

Հիմի ասելիքս էն է որ, թե կարող եղանք, տերտերիս խրատի պես, թուրքի հետ յոլա երթալ, չա՛տ լավ կլինի. թե չէ՝ ռուսի վրա հույս դնել անօգուտ բան է:

Մենք պտի մտածենք՝ մեկ ճար գտնենք:

Կավալեր Մելիքի խոսքը ներկաների մեջ առաջ բերեց վհատեցուցիչ տրամադրություն, որ ավելի թանձրացրեց մեր ծանոթ ծերունին՝ իր մռայլ միտքը գրեթե կրկնելով.

— Թե որ թուրքի ձեռքը բռնող չլինի, թուրքը մեր մուխը կմարե: Էդ ձեռքը բռնողը մենակ ռուսն է. էն էլ՝ էսպես: Զուլո՛ւմ է, զուլո՛ւմ...

Փարատելու համար այս ճնշող մթնոլորտը մի քանի հուսադրիչ խոսք ասացի:

— Դուք չափազանցության մեջ եք ընկնում,— մոտավորապես այսպես ասացի ես,— հայ ժողովրդի վիճակը ա՛յնքան անհույս չէ, ինչքան ներկայացնում եք:

Ռուսաստանը միշտ մեր բարեկամն է եղել, թեև նա շատ անգամ վնասել է մեզ, բայց տված օգուտները չա՛տ ավելի մեծ են եղել: Ռուս թագավորությունը ուզենա-չուզենա, բարիք է մեզ համար. մանր-մունր գնչ բաներով չպիտի դատել նրան: Երախտագետ պիտի լինենք ռուս մեծ ազգի հանդեպ: Իսկ ռուս մարդը չա՛տ բարի սիրտ ունի, ուրիշներին երբեք չարություն չի կամենում նա:

Պետք չէ հուսահատվել. հայ ժողովուրդը ավելի դառն ժամանակներ է ունեցել, բայց տեսնում եք, որ չի կորել: Միայն պետք է մենք հավատ ունենանք մեր վրա, սիրենք մեր երկիրը, մեր ազգը, օգնենք իրար: Աշխատենք ու երբեք չհուսահատվենք: Վերջը լավ կլինի:

Խոսելիս նայում էի երբեմն Տեր Մլեհին, երբեմն Բըդե ամուն. կարծես արևի ճառագայթներ էին անցնում նրանց դեմքերի վրայից:

Ես խոսքս վերջացրի:

Իջավ անդորրող, պայծառ մի լռություն...

Շոգեմեքենան թափով սուլեց և կառքերը աղմուկով կանգ առան:

Աչքերս բացի – Ջաջուռի կայարանի առաջ ենք:

Շոգեմեքենայի ծուխի պես ցնդեցին Բըդե ամու օդան, ներկանները, վեճերը...

Շատ տարիներ էին անցել այն օրվանից: Ջաջուռը անճանաչելի էր դարձել: Սպիտակ պատերով խոշոր կայարան, չուրջը՝ նոր շենքեր, ամբարներ, պարտեզներ: Երիտասարդ տղաներ, գործով, հապճեպ ելումուտ են անում, ապրանքներ են կրում ու բերում:

Անշո՛ւշտ, նրանք չեն տեսել Տեր Մլեհին ու Բըդե ամուն, որոնք վաղուց հեռացել են այս աշխարհից:

Երևի, նրանք չեն էլ լսած Բըդե ամու և տերտերի անունները.— այն օրերից հետո հզոր հողմեր չառաչելով անցան այս նահապետական երդիկների վրայից և սրբեցին-տարան հինավուրց կենցաղի այս միամիտ մարդկանց հիշատակները, անունները, խոսքերը:

ՏԵՐ ՄԼԵՀԻ ՔԱՐՈԶՆԵՐԻՑ

Ա.

Անօրեն ջհուդները և էլ կռապաշտ հոռոմացիք բռնեցին Հիսուս Քրիստոսին, թքեցին, ծեծեցին, ի խաչ հանեցին. ձեռքերին ու ոտներին մեծ-մեծ մեխեր զարկեցին, արյունն ելավ գնաց:

Աստ, Աստծո՛ւ տղա, իսկի ձենդ ելա՞վ:

Օրհնեց մենակ իրա դահիճներին: Ա՛յ ժողովուրդ, վայ թե մեկը ոտներդ կոխե, իսկույն ձեներդ աչխարք կբռնե: Պրիստավ, ջանդարմ կկանչեք:

Ծարավ էր, ջուր ուզես: Քացախ տվին: Մղրախով կողը ծակեցին, արյունն ելավ գնաց:

Աստ, Աստծո՛ւ տղա, իսկի ձենդ ելա՞վ: Աստծուն խնդրում էր, որ ներե էդ անօրեններին: Դուք որ նրա տեղը լինեիք, Գաբրիել-Մուքել հրեշտակները վար կբերեիք, աչխարք կքանդեիք, ամեն մարդու կամ կախարան, կամ Սիբիր կղրկեիք:

Օրինակ առեք Աստծու որդուց, ա՛յ անզգամ ժողովուրդ, համբերող եղե՛ք, իրար սիրեցեք: Ձեզի ցավ տվողին բարութիւն արեք: Ձեզի բամբասողին դովեցե՛ք, ձեզի զրկողին հաց տվեք. ձեր մալը գողցողին բանտ մի զրկեք, թե բանտի մեջն է, հանեցե՛ք: Ամեն:

Բ.

Ա՛յ Ժողովուրդ, գնացե՞լ եք Գյումրվա քաղաքը, գնացե՞լ եք Աղան աղբոր պրախտը[1]*, ձյուն-ձմեռ ժամանակ:*

Ներս կմտնես — տաք, լույս: Պատերի վրա սիրուն-սիրուն պատկերներ կախած, սեղանների վրա կարմիր-կապույտ ծաղիկներ դրած: Սաղանդարներ, անուշ խաղ ու տաղ: Մարդ կմոռնա աչխարքիս ցավն ու նեղութիւնը:

Ջայ ես ուզում, չայ են բերում, ղայֆա ես ուզում, ղայֆա են բերում: Տեսակ-տեսակ կերակուրներ, գինի, աբրաղ, տանճ, խնձոր:

---

[1] Տրակտիր, հաշարան, ալճատված ձևով, դրախտիր, դրախտ (ծան. հեղինակի):

Փող ունե՞ս, Աղան աղբոր դրախտի մեջ տեղ ունես:

Հիմի, ա՛յ ժողովուրդ, լավ միտք արեք. էս գյումրեցու դրախտը որ էսքան լավ է, հապա ի՛նչքան լավ պտի լինի Աստծու դրախտը – հազար, հազար, հազար անգամ լավ...

Մեննակ՝ Աստծու դրախտը մտնելու համար ծոցդ փող ունենաս՝ չի անցնի, պտի առնելիքներ ունենաս Աստծու դավթարի մեջ գրած:

Թե մեր աչխարքի մեջ աղքատին հաց ես տվել, տկլորին՝ հագուստ, տնանկին՝ տեղ. թե չարը խափանել ես, բարին առաջնորդել – էդ ամենը էնտեղ Աստծուն պարտք տվածի պես կհաչվեն հազարապատիկ չահը վրան, ու նրա դիմաց կվայելես անմահական դրախտը հուր-հավիտյան:

Գնացեք խաղաղությամբ. Աստծու աչքը ձեր վրա լինի: Ամեն:

Գ.

Սուրբ Ավետարանն ասում է. ողորմությունն տվողը երկնքի մեջ իրան համար քսակ կշինե, որ ո՛չ ժանգը կուտե, ո՛չ էլ գողերը կտանին:

Ո՛վ անխելք մարդ, լա՛վ իմացիր, որ էս աչխարքը անցավոր է, և էլ ինչ որ չինես երկրիս վրա, հիմքը ավազի վրա է: Ամեն բան պտի կործանի ու հող դառնա ձեր տունտուլիկներից բռնած մինչև ամենեն ամուր բերդերն ու թագավորների ոսկե պալատները: Ողորմությո՛ւն արեք, բարությո՛ւն արեք, տվեք ձեր ընկերոջը, ձեր հարևանին, օխթն օտարին և էլ ամենից առաջ ձեր թշնամուն: Աստծու մոտը քսա՛կ ունեցեք: Էդ կմնա. թե չէ մնացածը դարտակ բաներ են:

Ամենից մեծ բանը բարութիւնն է. և էլ Աստծու աչքին ամենից դուրեկան, սիրուն արարքը բարութիւնն է:

Աշխարքս մեկ այունի վրա է չինված — էդ բարութիւնն է: Բարութիւնը վերանա — աշխարքս կվերանա:

Խաղաղութիւնը ձեր տան վրա լինի և էլ ձեր սրտերի մեջ. դնացեք, Աստված ձեզի հետ: Ամեն:

ԱՌԱՔԻ ԿԱՐԳ ԴԱՍՎԱԾ ՏԵՐ ՄԼԵՀԻ ԽՐԱՏՆԵՐԻՑ

Սիրելի ժողովուրդ, ով որ ձեզի մեկ բան կասե, մի՛ մտածեք, թե սուտ է ասում:

Հավատացեք նրա խոսքին, էլի պինդ կացեք ձեր բանին:

* * *

Աշխատելը ամեն բանի ճար ու ճամբան է: Վազող ոտքը իրան համար նոր տրեխ կճարե. և էլ,— անգործ ձեռքը անոթի փորի վրա է:

* * *

Մեկ գործ բռնելիս խորհուրդ արա հորդ հետ, հերդ չկա՝ մորդ հետ. մերդ չկա՝ կնկանդ հետ. բայց էս էլ իմացիր, որ՝ մեկ փորձը հազար խրատից ուժով է:

Բայց նորեն,— խրատ տվողին հաց տվողի չափ պատվե:

* * *

Աշխարքս ծով է. չես իմանում՝ դեմդ ելնողն ով է:
Աչքերդ ինքդ բաց, քանի գլխիդ չեն գարկած:

* * *

Խաղաղություն սիրե՛, կռվի մակարդ մի՛ դառնար:
Եվ էլ,— մահակը ձեռքդ վեճի մի՛ բռնիր:

* * *

Ճշմարտությունը չա՛տ երես ունի. էդ պատճառով.—
Ականջիդ մեկը բարեկամի՛դ տուր, մեկէլը թշնամուդ:
Եվ էլ,— չիտակ բան կուզես քու մասիդ, գողտուկ ականջ դիր դուռ ու դրկիցիդ:

* * *

Աչխարքիս մեջ ուրա՛խ եղիր, հուսալո՛վ ապրիր,— կյանքն էնքան կարճ է, ինչքան տրտմությունը երկայն է:
Եվ էլ,— հույսով մեռնելը անհույս ապրելուց լավ է:

ՏԵՐ ՄԼԵՀԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Ա.

Ժամանակով թագավորի մեկը բարկանում է իրան ծառայողներից մեկի վրա, էդ մարդու ինչ-որ մեկ արարքի համար:

Հրաման է տալիս դահիճներին, որ նրան մեկ չտեսնված, չլսված պատիժ տան. և էլ խիստ հրաման է տալիս՝ էն տեսակ պատիժ տան, որ չմեռնի. ու երբ ինքը հրամայե, բերեն էդ մարդուն իրան քովը:

Ի՞նչ պատիժ տան, որ եղած չլինի: Դահիճները միտք են անում միտք, և էդ խեղճ մարդու աղդրերի կակուղ մխսերը ծակում են, ձեռքերն անցնում են ծակած մսերի միջից ու բերում են ձեռներն ոտքերի մեջտեղ իրար կապում:

Թադավորը լսում է, քեֆը գալիս է:

Մեկ օր անց ձեռքերն ազատում են, վերքերին դեղ են դնում, լավացնում:

Թադավորը հրաման է տալիս՝ էդ մարդուն բերեն իրան առաջը:

— Լա՞վ պատիժ էր: Հիմի խրատ առա՞ր,— ասում է թադավորը:

— Թադավորից եկածը միշտ բարի է: Հերը իրան որդուն չի կարող չար բան անել: Էդ՝ պատիժ չէր, էդ՝ բարիք էր:

— Հապա ո՞րն է պատիժը,— զարմացած հարցնում է թադավորը:

— Թադավորն ապրած կենա,— պատասխան է տալիս խեղճ մարդը,— իսկական պատիժն էն է, որ հին, լավ բարեկամդ օխթը տարվա օտարությունից տունդ հյուր կուդա, ու դու մեկ պատառ հաց ու պանիր չես ունենա նրա առաջը դնելու...

Թադավորը լսեց, ընկավ մտքերի մեջ:

Ու թանգագին նվերներով էդ իմաստուն մարդու սիրտն առավ և էլ իրան խորհրդական չինեց:

Բ.

Մեկ ջաղաջքի մեջ երկու մարդ ցորեն կաղային: Քով քովի էին: Էդ մարդկանցից մեկը, որ մեկ աչքով կույր էր,

տեսավ, որ իրան հարևանը երեսը ուրիշ կողմ է դարձրել, դողտուկ թիակը խրեց հարևանի ալրտան մեջ ու մեկ թի ալուր վերցրավ լցրեց իրան պարկի մեջ:

Ջաղաջպանը էս որ տեսավ, եկավ գողցողի ականջին ասավ.— «Հոգուդ մեղք չարի՞ր, որ հարևանիդ ալուրից գողցար»:

— Գողցա՞: Ես մեղավոր չեմ, թե որ գողցա: Մեկ աչքս կույր է, լավ չեմ տեսնում: Էնպես երևաց ինձի, թե իմ ալրատնից եմ վերցնում: Սխալվել եմ:

— Թե որ լավ չես տեսնում, թո՛ղ հարևանիդ օգտին սխալվելիր:

— Էդ բանի համար երկու աչքով պտի կույր լինեի,— պատասխան տվավ մեկաչքանին:

Էս առակը ցույց է տալիս թե՝ ուրիշին օգուտ տվողը երկու աչքով կույր պտի լինի: Ասել է թե՝ բաց աչքով ուրիշին լավություն չես կարող անել:

Ես ձեզի էն եմ ասում հիմի — բաց աչքով լավություն արեք, թե չէ կուզե՞ք որ Աստծու համբերությունը հատնի, ձեզի երկու աչքով կուրացնե, որ էն ժամանա՞կ կույր-կուրնա ուրիշին լավություն անեք:

Էս առակս քարոզի պես եղավ: Լսողաց՝ կատարողաց:

Գ.

Երբ որ Աստված բարկացավ Ադամի վրա ու դրախտից դուրս վռնդեց, Գաբրիել հրեշտակը՝ բոցեղեն թուրը ձեռքը Ադամին ու Եվային քշեց դրախտից չա՜տ հեռու և սաստեց, որ դրախտին իսկի չմոտենան:

Ադամը՝ գլուխը քաշ՝ առաջ ընկավ, Եվան էլ ետևից լալով-լալով գնում էր:

Մեկ ցուրտ քամի եկավ, Եվան դողում էր ցրտից. մեկ ծառ կար էնտեղ, մեջը փչակ: Եվան մտավ փչակի մեջ, կուչ եկավ. Ադամն էլ մեկ մեծ քարի տակ նստավ: Իրիկնադեմ էր. մութը կամաց-կամաց իջնում էր:

Ադամը նայեց երկրին – չորս կողմը՝ քար ու խոպան, թուփ ու մացառ, ամայի՛, ամայի՛...

Ադամը գլխին զարկեց, ա՛խ քաշեց, ասավ ինքնիրան.

– Ի՞նչ պտի լինի մեր ճարը, ի՞նչ պտի անեմ, երկիրը խոպան, ամայի, ես էլ մենակ մարդ: Ի՞նչպես պտի հաց ճարեմ, կնիկ պահեմ: Ո՛վ պտի օգնե ինձի...

Մեկ էլ քարի ետևից՝ մեկ ձեն լսվեց.

– Բա՛՛՛, ես, ես:

– Դու՞:

– Բա՛՛՛, ես, ես:

– Ո՛վ ես դու:

Ձենը բառաչեց.

– Բա՛՛՛, ես, ես:

Ադամը վեր եկավ, մոտեցավ, տեսավ քարի ետևը՝ մեկ կենդանի, մեծ կոտոշներով, նստել, որոճ է անում:

Սև, մեծ աչքերով կենդանին նայեց Ադամին:

– Դո՞ւ պտի օգնես ինձի,– հարցրեց Ադամը:

– Ես, բա՛՛՛, ես:

Ադամը շատ ուրախացավ, աչքերը լցվան արտասուքով, պաչեց կենդանու ճակատն, ասավ.

– Ես աղբեր չունեմ, դու ինձի աղբեր եղար:

Անունը դրեց եզ ու նորից պաչից ճակատը.

– Ե՛զ ջան, աղբե՛ր ջան:

Էն օրվանից եզը մեր օգնական ընկերն ու աղբերն եղավ:

Եզան քրոջ անունն էլ կով դրավ, այսինքն թե՝ քովը: Ինչու որ միշտ Եվայի քովն էր:

Ադամն ու Եվան նրանց օգնությամբ արտ վարեցին, կաթ ունեցան, տղա մեծցուցին:

Ասելս էն է որ, աղբոր պես և էլ քրոջ պես պտի սիրենք ու պահենք եզն ու կովը, որ մեզի հաց և էլ կաթ ու կարագ են տալիս, մեզի պահում են, ապրեցնում են:

1935 թ. Փարիզ[1]

[1] Հեղինակը ավելացրել է թերթոնի վրա:

<«ՏԵՐ ՄԼԵՀԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ՏԵՐ-ՄԼԵՀ

Ծերունի, սև դեմքով, ճերմակ մազերով, կարճ (Սմբատյան եպիս<կոպոս>ի նման):

Նրա կյանքից սուտ և ղորթ ասում են.

— Որ նա օրինակ առնելով, որ մայրերը լողացնում են երեխաներին ու քնցնում, նա էլ հավի ճագերին տաք ջրի մեջ է կոխում. «Բիթուն ճուճուները պառկան, մենճերը չպառկան...»:

— «Բալքի բարին էս է». ամեն դեպքին՝ մահ, աղետ, այդ էր ասում. պղտիկ ժամանակը, դեռը լողնալիս, ընկերների հագուստները ժողովում ընկնում է դեռը... կորչում է հագուստների մի մասը. ընկերները թափում ծեծում են, ասում է, բալքի բարին էս է:

— Մատները հաստ, մախաթի դեպքը:

— Երկու մեռել միասին է թաղում: Ժամին չուռ է տալիս Մաշտոցը, բացում է պսակի ծիսակատարության գիրքը, մեռելների վրա պսակի ծեսի գիրք է կարդում:

— Ողջացած մեռելը մեռցնում,— մյուս անգամ լավ մեռնի, նոր բերեք. երեխան տաք ջրի մեջ մեռցնում է, չեղավ, ուրիշը բերեք:

— Սալդատ տանելու հարցը. դնում է մի-երկու մարդու հետ նաչալնիկի բողոքում, թե պրիստավը սալդատ է պրում: Նաչալնիկը թե՝ գուբերնատորի հրամանն է... թե

նամեստնիկի... թե թագավորի: Մլեհը ասում է.— Էլ ճար չկա, բաներս բանջար բուսուկ է:

— Կնիկը մեռնում է. եպիսկոպոս առաջնորդից խնդրում է թույլտվություն երկրորդ կնիկ առնելու: Եպիսկոպոսը թե՝ օրենք չկա:

Մլեհն. *Բա ես ի՞նչդ/իմալ առանց կնիկ ապրեմ, ես հո վարդապետ չեմ, քահանա եմ. առանց կնիկ կյանքը անհամ է, մահ է, համով բան չէ:*

Եպիսկ<ոպոս>. *Ի՛նչ անենք:*

Մլեհ. *Ես ի՞նչ ընեմ հապա:*

Եպիսկ<ոպոս>. *Մենք ի՞նչ մեղ ունենք, որ քու կնիկը մեռավ:*

Մլեհ. *Ես ի՞նչ մեղավոր եմ, որ իմ կնիկը մեռավ:*

Եպիսկ<ոպոս>. *Ո՛չ դու ես մեղավոր, ո՛չ ես:*

Մլեհ. *Բա ո՞վ է մեղավոր:*

Եպիսկ<ոպոս>. *Մեղավոր չկա, Աստծու կամքն է:*

Մլեհը լռեց Աստծու անունը լսելով:

Եպիսկոպոսը գնալուց հետո մի քահանա ասում է.

— Դե՛հ, տերտեր, մի կերպ յոլա գնա, գեղը չկան էնպես հարսներ, կհասկնաս, ինչ կըսեմ:

Մլեհ.— *Կա, ինձ ի՞նչ. սարն էլ չա՛տ մարալ կա, քեզ ինչ. լավ է մի կաղ կով ունենամ իմ գոմը, կթեմ ուտեմ, թե 40 երինջ ուրիչի գոմերի մեջ:*

Մլեհի զրույցները —

— Ադամը դուրս ելավ դրախտից. ծառի տակ գրկեցին իրար Ադամ-Եվա, պառկեցին, պաչվտան, իրար ըսին. տո, դրախտը [մեզի] հետներս հանինք բերինք. դու մի ասեր՝ դրախտը էդ է եղել, մարդ ու կնկա ծոցը:

— Ռուսի ծագումը. Քրիստոս կանցներ. ձմեռ. մի սառած չեկ մարդ տեսավ, կենդանացրեց. էդ մարդն ելավ թե

չէ, բռնեց Քրիստոսի փողկապից թե – ո՞ւր, պաշպորտ ետա:

Քրիստոս նրան անիծեց ըսավ – Մարդ էիր [հիմի] էսա հետ ուռուս դառիր: Ու մարդը դարձավ ռուս. դամչին առավ ձեռքը, ծուռ խաչը կախեց վզին, ընկավ աշխարք:

2. ԳՅՈՒՄՐԻ

– Տեր Մլեն. ծաղրով ասում էին, թե Զաջուռի համալսարանումն է սովորել ու ավարտել:

Մոսկով համալ-սարա = քարվան-սարա:

Գարեջուր խմեց, չէր խմած իսկի, չհավանեց. տո, գրին, իշու գարին ինչ է որ, էնոր ջուրն ինչ ըլնի. հնչ չէ գարին հետը տային, կարելի է բանի նման ըլներ. էդոր տերերը գարին իրանք կուտեն, ջուրը [խալխին] ժողովրդին կուտան:

3. ՏԵՐ-ՄԼԵՆ

Տերտերը ուներ մի տիրացու, որ իր Պանչոն էր:

4. ՏԵՐ-ՄԼԵՆ

Աստված ընդունում է և քարոզում ասելով... հավատացեք որ կա, ի՞նչ կկորցնեք. թե որ էղավ, ետև ի՞նչ պատասխան տաք, առերես կմնաք: Մեկ էլ թե՝ Աստված հավատացողը մե հուսով՛մ կմեռնի. էդ էլ մեծ բան է. հուսով մեռնել:

5. <ԱՄԵՆ ՉԱՐԱՃԸՃՈՒԹՅՈՒՆ...>

<...>[1]րիկիցս, ամեն չարաճըճիութ֊յուն անում էի, ո֊րովհետև Բդե ամին պաչտպանում էր ինձ: Թեև հորիցս վախ չունեի, նա երբեք չէր բարկացել վրաս, բայց մորս անուշ ձեռներից չա՛տ ծեծ էի կերել:

Այժմ, տարիներ հետո, գնում էի Բդե ամու մոտ, որ հանգուցյալ հորս կարոտն առնեի նրանից:

Ամեն անգամ, երբ նա պատմում էր հորս հետ ապրած օրերից և միասին չրջագայած վայրերից, երևակայու֊թյունս ինձ պտրտցնում էր նրանց հետ:

Երբ ասում էր – «Մեկ հեղ գնացինք Լոռի ջաղջի քա֊րեր առնելու... հե՛յ վախ, ի՛նչ անուշ<...>[2]

<...>[3]Թուրքի ձեռքը որ բռնող չլինի, մեկ հայ չի պրծնի: Մենք զորք չունենք, բերդ չունենք, օգնական չունենք, ինչպես պիտի գլուխ ելնենք էդ բարբարոսի հետ: Ջուլում բան է...

6. <ԱՍՈՒՄ ԵՆ, ՈՐ...>

Ասում են, որ նա կարդալ գիտե, բայց գրել չգիտե: Ա֊սում են, որ նա ամբողջ Աստվածաշունչը, եկեղեցու աս֊մունքները, չարականները [սովորել է լսելով] գոց գի֊տեր, սակայն գրքի մեջ չգիտեր նրանց տեղը:

---

1 Սկիզբը պակաս է:
2 Վերջը պակաս է:
3 Սկիզբը պակաս է:

Բայց հզոր, եկեղեցու ձեղունները չարժող ձայն է ունեցել երիտասարդ տարիքին:

Ինքը չի կամեցել քահանա դառնալ. լեռների հովիվ է եղել Սարիբեկը, բայց պապը, որ քահանա է եղել, ուզեցել է, որ թոռը իր տեղը բռնե, իր ծուխերը հովվե, քահանայությունը իրենց տոհմից չհեռանա: Սարիբեկը երկար ժամանակ ընդդիմացել է, իրեն արժանի չի դատել «օծյալ» դառնալու, բայց վերջը հնազանդել է մեծ հոր և ծուխերի պնդումներին և թախանձանքներին: (Առասպելն ասում է, թե երբ ձեռնադրող եպիսկոպոսը հարցաքննել է տիրացու Սարիբեկին և հարցրել է, թե եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի, տիրացու Սարիբեկը, բթամատն ու ցուցամատը իրար շփելով, պատասխանել է. «700 սուրբ խորհուրդ», այսինքն՝ 700 ռուբլի: Եվ առասպելն ավելացնում է թե՝ եպիսկոպոսը իսկույն հավանություն է տվել և ձեռնադրել է նրան քահանա՝ գյուղացիների համար արտասովոր, անծանոթ մլեհ անունը դնելով:)

Սիրելի ժողովուրդ, ով որ ձեզի մեկ բան [կասե/ է ասում] մեկ մտածե, թե էդ մարդը մոտ սուտ է ասում,— հավատա նրա խոսքին, էլի պինդ կաց քո բանին:

Մեկ էլ որ — լսողը խոսողից խելոք պտի լինի:

Աշխատելը ամեն բանի ճար ու ճամփան է: Վազող ոտքը իրան համար տրեխ կճարե: Եվ էլ — անգործ ձեռքը անոթի փորի վրա է:

Մեծ գործ բռնելիս խորհուրդ հարցրու հորդ, հերդ չկա մորդ, մերդ չկա կնկանդ, բայց էս էլ իմացիր, որ մեկ վորձը հազար խրատից ուժով է:

Բայց նորեն – խրատ տվողին հաց տվողի չափ պատվե:

– Աչխարքը ծով է,
չես իմանում դեմդ ելնողն ով է:
Աչքերդ ինքդ բաց,
քանի դլխիդ չեն զարկած:

Խաղաղություն սիրե,
կռվի մակարդ մի դարձիր:
Եվ էլ – մահակը ձեռքդ վեճի մի բռնվիր:

7. <ՊՐԻՍՏԱՎ, ՋԱՆԴԱՐՄ...>

<...>[1] պրիստավ, ջանդարմ չկանչեք: Ծարավ էր, ջուր ուղեց, քացախ տվին, մզրախով կողքը ծակեցին, արյունն ելավ գնաց: Ասա՛, Աստծու տղա, իսկի ձենդ ելա՞վ: Ի՞նչ ձեն. Աստծուն կխնդրեր, որ ներե էդ անօրեններին: Դուք որ էնոր տեղն էղնեիք, Գաբրել-Մուքել հրեշտակները վար պտի [կ]բերեիք, աչխարք [կ]քանդեիք, ամեն մարդու Սիբիր [կ]խրկէիք:

---

[1] Սկիզբը պակաս է:

Օրինակ առեք Աստծու որդուց, ա՛յ անզգամ ժողովուրդ, համբերո՛ղ եղեք, ներո՛ղ եղեք, իրա՛ր սիրեցեք, [աղքատին հա՛ց տվեք, ճամբորդին տե՛ղ տվեք] ձեզի ցավ տվողին դուք բարութիւն արեք, ձեզի բամբասողին՝ դուք գովեցեք, ձեզի զրկողին դուք հաց տվեք... [Ձեզի] ձեր մալը գողացողին բանդ մի զրկեք, թե բանդի մեջ է, հանեցեք:

8. ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ ԱՌԱԿԸ

[Ազնիվ, լավ մարդն էն է, որ ոչ թե ուրիշին մուկ կդարձնե, հապա կապրեցնե ու կկանանչացնե: Հավքը թևով կթռնի, մարդը մարդով:]

— Ասողն ասել է, թե աշխարքի մեջ մարդկանց մեկ մասը կատու է, մեկել մասը՝ մուկ:

Ես էլ ասում եմ ձեզի, որ լավ, պատվական, արդար մարդն էն է, որ ոչ ինքը կատու կդառնա, ոչ էլ ուրիշի մուկ կդարձնե: Հապա՝ ուրիշին կապրեցնե-կկանանչացնե:

Հավքը թևով կթռնի, մարդը՝ մարդով:

[Դարձան դեպի տերտերը, նրանց հայացքի մեջ զարմանք չկար: Գիտեին, որ տերտերը առակ ունի ասելու ամենալուրջ հարցի [երբեմն ծիծաղ այլ ուրախ զվարթ հետևութիւնները]: Գիտեին, որ տերտերը ամենալուրջ հարցի մի բամբառակ բան պիտի պատմի, հետո միայն իր լուրջ խոսքը պիտի ասե: Փորձառու մարդու իր լուրջ խոսքը պիտի ասե: Փորձառու մարդու իր լուրջ խոսքը ա-

սելուց առաջ մի բամբառակ բան պիտի պատմե: Այդպես էր նրա ոճը: Առանց լուրջ կամ զվարթ առակի խոսք չուներ նա:]

9. ՏԵՐ-ՄԼԵՀ

Առակներից.

1) Ադամի և հրեշտակի կռիվը

2) Ադամը և եզը

3) Թագավորն ու վեզիրը

Ադամն ասաց.

[Ես Ադամ, դու – եզ.
Ես Ադամն եմ, դու էլ ես]
Ադամն եմ ես – դուն էլ եզ.
Ես ախպեր չունեմ,
Դուն ինձ ախպեր,–
Էն օրվանից մարդն ու եզը
Դառան ախպեր, [իրար]...

Նրա առածներից, մի 10–15 հատ:
Նրա քարոզներից – 2 հատ:

ՏԵՐ ՄԼԵՀԻ ԿԱՄ ՆՐԱՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԱՌԱԾՆԵՐԻՑ

Հույսով մեռնելը
Անհույս ապրելուց լավ է:

———

[Լսողը խոսողից
խելոք պիտի լինի:]

———

[Վազող ոտքը իրան համար
Նոր տրեխ կճարե:]

———

[Մահակը ձեռքդ՝
վեճի մի՛ բռնվիր:]

———

[Անգործ ձեռքը
Անոթի փորի վրա է:]

———

[Ընկերիդ խոսքին հավատա,
Էլի պինդ կաց քոռ բանին:]

———

Ականջիդ մեկը բարեկամի՛դ տուր,
Մեկելը՝ թշնամուդ:

———

[Մեկ փորձը հազար խրատից ուժով է:]

Անոթին հաց գտնի,
Առանց ակռայի կծամի:

[Աչքերդ ինքդ բաց,
Քանի գլխիդ չեն զարկած]:

[Խրատ տվողին
հաց տվողի չափ հարգիր:]

Շիտակ խոսք կուզես քու մասիդ,
Գողտուկ ականջ դիր դուռ ու դրկիցիդ:

Կյանքն էնքան կարճ է,
Ինչքան տրտմությունը երկար է:

«Տեր Մլե՛» – այսպես էին հնչում գյուղերում և Գյումրի քաղաքում,– մի ամբողջ փոքրիկ աշխարհ էր բովանդակում:

Ինչեր չեն պատմում նրա մասին, ինչ զվարթ միջադեպեր, ինչ <1 անընթ.> դրույցներ:

Մի սոսկ անուն չէր. բերում էր մի <1 անընթ.> նյութերի աշխարհ:

«Տեր Մլե» — այսպես էին հնչում գյուղերում ու քաղ<աքում>:

10. <ԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԳՆԱՑԵԼ ԵՔ...>

Այ ժողովուրդ, գնացել եք Գյումրվա քաղաքը, գնացել եք Աղան աղբոր դրախտը — խոսքի օրինակ ցուրտ ձմեռը: Աղան աղբոր դրախտը — ներս կմտնեք, տաք, լուս, պատերի վրա սիրուն-սիրուն պատկերներ կախուկ, սեղանների վրա կարմիր ու կապուտ ծաղիկներ դրուկ: Սաղանդարները թառ ու քամանչա են զարկում, երգում են անուշ ձեներով: Մարդ [արար աշխարհ մոռնում է] աշխարհի ցավն ու սևը մոռնում է:

[Ճրագը դրած է սեղանին]:

Ջայ ես ուզում, չայ են բերում, ղայֆա ես ուզում, ղայֆա են բերում, [խորոված] քյուֆթա, խաշ, տապակ, խորոված, ինչ որ սիրտդ ուզե: Արաղ, գինի: Ջմեռ ժամանակ՝ տանձ, խնձոր:

Քեֆ արա...

Մեննակ Աղան աղբոր դրախտի մեջ քեֆ անելու համար քսակիդ մեջ փող պտի ունենաս... թե չէ դուռը վրեդ փակ է: Բա, այ ժողովուրդ, լավ միտք արևք, Աղան աղբոր դրախտը որ էսքան լավ է, ինչքան [հազար] լավ

---

* *դրախտիր, [դրախտիրը] ճաշարան, աղճատված կրճատ ձևով ասում են դրախտիր, դրախտ* (ծան. Հակինակի):

պտի լինի Աստծու դրախտը — հազար, հազար, հազար անգամ լավ:

Հրեշտակների <1 անընթ.> հրեղեն ձեռքով եփած կերակուրներ Աստծու աջով օրհնված... Ի՜նչ անմահական խմիչքներ, ի՜նչ ծաղկունք, ինչե՜ր-ինչեր, որ խելք չես հանի [թագավորի պալատը Աստուծու դրախտի մոտ]

Մենակ՝ Աստծու դրախտ մտնելու համար՝ պիտի առնելիքներ ունենաս գրած Աստծու դավթարի մեջ: [Էս աշխարհի մեջ [տվածդ] արածդ բարությունը էն աշխարքի մեջ [չահով կստանաս]: Աղքատին հաց տված լինես, [նեղյալին] տկլորին՝ հագուստ, տնանկին տեղ, նեղյալին ձեռք բռնես, չարը խափանես, սիրես դեմդ ելնողին — էդ ամենը Աստծու դավթրի մեջ կգրվի, որպես թե՝ Աստծուն պարտք տված ես, էն աշխարքի մեջ՝ Աստծուց առնելիքները հազարապատիկ չահով հետ կստանաս:

Էս աշխարքի մեջ պտի տաս, որ էն աշխարքի մեջ առնես ու դրախտ վայելես հուր հավիտյան...

[Ա՛յ Հակոբ, դեհ ձեզի տեսնեմ]

[Շոգեկառքը կանգ առավ Ջաջուռի կայարանի առաջ: Մտորմունքից ես ելա իրական չրջապատը:

Շա՜տ տարիներ էին անցել այն օրվանից: Ջաջուռը անճանաչելի էր դարձել: Սպիտակ պատերով խոշոր կայարան, չուրջը նոր շենքեր, պարտեզներ, ամբարներ... Եբիտասարդ տղաներ, դործով, հապճեպ ելումուտ են անում, ապրանքներ են կրում ու բերում:

Անշուշտ նրանք չեն տեսել [կամ չեն հիշում] Տեր-Մլեհին և Բդե-ամուն, որոնք վաղուց հեռացել են այս աշխարհից]:

[Երևի, նրանք չեն էլ լսած Բդե ամու և տերտերի անուններըը — այն օրերից հետո մեծ հեղեղներ անցան այս

նահապետական [գյուղերի և միամիտ խրճիթ] [միամիտ] երիվկների վրայից... և սրբեցին տարան հինավուրց դեռի հետ այդ միամիտ մարդկանց հիշատակները, անուննները ու խոսքերը:]

11. <ԱՆՋԱՏԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ...>

<...>[1] անջատել հայկական միջավայրից, հեռանալ Կովկասյան Հայաստանից, կնշանակեր սուզվել ռուսական ծովածավալ տարերքի մեջ, կորցնել ազգային անհատականությունը, հալվել, վերջանալ...

Իսկ հնարավո՞ր էր Թուրքիա վերադառնալ, [և եթե սուլթան Համիդը դռները դոցեր — ո՞ւր կարելի էր ապաստանել] այն ժամանակ հայկական քաղաքական մտածումը հակամետ էր Թյուրքիա վերադառնալու, հայրենաբաղձ գաղթականները ջերմագին փափագում [էին] էր տուն դառնալ, եթե միայն սուլթան Համիդը համաձայներ: Միամիտ ժամի հավատ, և [բոլորը] գաղթականը հավատում էր, որ սուլթանը <1 անընթ. տող>

12. <ՃԱՃԱՆՋՆԵՐԻ ՄԵՋ...>

<...>[2] ճաճանչների մեջ ոսկի էին դառնում:

Վեհանիստ Արագածի անբիծորեն սպիտակ դագաթները՝ կարծես, իրականությունից դուրս պրծած, բնազանցական երևույթներ էին: Իսկ հանդիպակաց Հարսնաքար

---

[1] Սկիզբը պակաս է:
[2] Սկիզբը պակաս է:

նագելի լեռը՝ կանաչագույն թավիշյա զգեստ հագած, հրապուրում էր դեպ իրեն, և չոգեկառքը թռչում էր դեպի նա:

Շիրակի դաշտե՛ր, իմ նվիրական ցորենի արտե՛ր, իմ պատանեկյան անուրջների լուսեղեն աշխա՛րհ, ո՛րքան սիրում եմ ձեզ:

13. <ՆՐԱՆ ՔԱՀԱՆԱ...>

<...>[1] նրան քահանա՝ գյուղացիների համար արտասովոր, արտառոց Մլեհ անունը դնելով:

Պատմում են Տեր-Մլեհի քարոզներից: Հիշատակեմ խաչելության մասին քարոզը:

— «Անօրեն Ղհուդները և Փարմասոն Հոռոմացիները բռնեցին Հիսուս Քրիստոսին, թքեցին, ծեծեցին, ի խաչ հանեցին, ձեռքերի ու ոտների վրա մեծ-մեծ մեխեր զարկեցին, արուն ելավ գնաց: Ասա՛, Աստծու տղա, իսկի ձենդ ելա՞վ: Օրհնեց մենակ իրա դահիճներին: Ա՛յ ժողովուրդ, վայթե մեկը ձեզի դիպնի, հեռվաց ձեներդ աշխարք կբռնե»:

Ս<ուրբ> Ավետարանն ասում է թե՝ ողորմություն արեք, ձեղի համար երկնքում քսակներ չինեցեք, որ ո՛չ ժանգը կուտի, ո՛չ գողերը կտանեն:

Էս աշխարհը անցավոր է, և էլ, ով գոռոզ [ագահ] մարդ, ինչ որ չինես էս երկրի վրա, հիմքը ավազի վրա է: Ամեն բան պիտի կործանվի ու հող դառնա, ձեր հավի բներից բռնած մինչև ի ամենեն ամուր բերդերը:

---

[1] Սկիզբը պակաս է:

Էդ պատճառով էլ ադահ մի եղեք, աչքերդ գանձ դիզելու մի քցեք:

[Բարություն արեք, որ երկնքում քսակներ ունենաք:]

14. <ԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ...>

<...>[1] *անկյունները: Հայ դյուղացու սիրտը մղկտում էր իր հեռավոր, [դժբախտ] թչվառ եղբայրների աղետների համար:*

«Գազան սուլթանը ջարդեց Հայերին: Ռուսը թուրքի կողմը բռնեց, ապրե՛ս, ասավ: Աչխարհը մատը մատին չդարկեց...»:

— Բա՛ էս Աստված կընդունի՞,— խորին ցավով և զարմանքով [ասաց] բացականչեց Բդե-ամին:— Էս ի՞նչ աշխարք է. մեղի մեր չի՞ բերել, մենք քա՞ր ենք, թե հոդի չունենք... Աստված ինչպե՞ս է համբերում...

Բոլորը տխրությամբ գլուխները կախեցին:

Բդե-ամին նայում էր ինձ.

15. <ԹՈՒՐՔԸ ՄԵԶԻ ՋԱՐԴՈՒՄ Է...>

<...> [Թուրքը մեզի ջարդում է, թե դուք թագավորություն կուզեք: Մենք էլ ուժ չունենք թուրքի հետ գլուխ ելնելու: Մեր կռնակի հետևն էլ ինդիլիզ կամ թե ռուս չունենք: Թե որ էնոնցեն մեկն ու մեկն ուզենար, մենք ազատված կէղնեինք հիմի: Քանի որ էդպես է բանը, նորեն առաջվա պես թուրքի ձեռքի տակը պիտի

---

[1] Սկիզբը պակաս է:

մնանք: Մեր պապերը մեզի խրատել են թե, էն ձեռքը որ չես կրնա կտրե, համբուրե, ճակտիդ դիր:

Ուրիշ ի՞նչ հնար ունենք: Աչխարքի մեջ մենք անտեր, անտիրական որբ ենք: Որբը ինքը իրեն ձեռքով իրեն պորտը պիտի կապե: Մենք պիտի մեր գլխու] մեր գլխու ճարը տեսնենք:

– Ի՞նչ ճար ցուց կուտաս մեզի,– ջղայնացած հարցրեց Բդե ամին:

– Թուրքի հետ յոլա երթալ,– յուրաքանչյուր բառը չեչտելով ասաց տերտերը:*

Աչխարքս յոլա երթալ է: Յոլա պիտի երթաս կնկանդ հետ, որդիներիդ հետ, դրկիցներիդ հետ, բարեկամներիդ ու թշնամիներիդ հետ:

Ամենեն իմաստուն բանը յոլա երթալն է:

– Թուրքի հետ յոլա չի երթցվի,– լսվեց մեկի ձայնը, ուրիշ <...>[1]

16. <ԴԱՎԹԱՐԻ ՄԵՋ ԳՐԱԾ...>

<...>[2] *դավթարի մեջ գրած:*

Թե էս աչխարքի մեջ աղքատին հաց ես տվել, տկլորին՝ հագուստ, տնանկին՝ տեղ, թե չարը խափանել ես, բարի ես արել դեմդ եղողին – էդ ամենքը էն աչխարհում Աստծուն պարտք տված պես կհաչվեն [էնտեղ] հազարապատիկ չահով [հետ կստանաս] վրան, ու նրա դիմաց կվայելես անմահական դրախտ հուր հավիտյան: Ամեն:

---

* *յոլա երթալ = վարվել գիտնալ, մի կերպով, զիջելով, քաղաքագիտորեն ընթանալ* (ծանոթ.՝ հեղինակի):

1 Վերջը պակաս է:

2 Սկիզբը պակաս է:

17. ՏԵՐ-ՄԼԵՀ

Զանազան դյուղական դեպքեր պատմել:

Օրինակ, մեր Պոտոս տացուի երկրորդ անգամ ամուսնանալը. որ կինը 7 ամսից հետո զույդ բերից. դյուղացիք ծաղրում էին նրան, թե հարսը դյուղից լցված, բեռցած եկավ, դյուղի ջահելները ծեր Պոտոսի հոգսը քաշել էին... եկավ տերտերի մոտ:

Տերտերը նրան միամտցրեց ասելով թե՝ երեխաները ճիշտ որ 7 ամսական էին, մկրտուԹյանը տեսա, 100-ավոր երեխաներ եմ մկրտել, աչքս գիտե ինչ ամսական լինելը: Բայց հարսի համար ծանր է եղել փորում 2 երեխա պահելը, չի կարողացել մինչև 9 ամիս հասցնել, դուրս է ճամբել. օրենքն էդպես է. Փիլանի կնիկն էլ էդպես արավ, էս դյուղի, էն մեկել՝ դյուղի:

— Թե մեր զրկանքը ձեզի պիտի մնա. ո՛չ վերևը Աստված կա, ո՛չ ներքևը Թագավոր.

— Ղուրղուշունը ափսոս է:*

— Աքսորում էին, քշում ամենեն գեշ օր, Թաց, ցուրտ, անձրև:

— Փետ է կուլ տվել = ուղիղ նստել:

— ԵրկաԹ ծամող, փուշ կուլ տվող:

18. ՄԼԵՀԻ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Երբ Ադամ — Հային Աստծու հրամանով դրախտից դուրս քշեց, Գաբրիել հրեշտակապետը ասաց — Ադամ,

---

* *արճիճ* (ծանոԹ.՝ հեղինակի):

երկիրը քեզի: Ահա էս քարը նշան եմ դնում, էս քարից էն կողմը չանցնես, էս մեր սահմանն է: Անցնես, կպատժվես:

Ադամը նայեց քարին, ասաց.

— Էս քարը մեկ քիչ հեռու տար. արտիս կեսը բռնել էր:

Հրեշտակը թե՝ նշանը նշան է. քարը դրել եմ, էլ խոսք չի վերցնե: Ադամը թե, արտս կխսել եք, անարդարություն է, զոռ եք բանեցնում:

Գաբրիելը չէ ասավ,

Ադամը չէ ասավ,

[Գաբրիելը Ադամին հրեց մի կողմ]

Ադամը մոտիկցավ քարին, ձեռք տվեց, որ հրե մի կողմ:

Հրեշտակը բարկացավ.

Ադամը հայհոյեց:

[Հրեշտակը բռնեց Ադամի վզից]

Ու կպան իրար, հրեշտակը Ադամին քցեց գետին, ծունկը դրեց Ադամին մեջքին, սղմեց:

Բայց մարդուս ագահությունը տես, թե ուր է տանում,— էդ տուր ու տապի մեջ՝ [Ադամը] էդ դժար նեղության մեջ, Ադամը [ոտքով քչում էր] աչխատում էր ոտքով քարը հեռու քշել, հոգին բերանն էր հասել, էլի [ոտքով] ոտքին զոռ էր տալիս...

19. ՏԵՐ ՄԼԵՀԻ ՔԱՐՈԶՆԵՐԻՑ

Ս. Գիրքն ասում է, [թե] անզգամն ասաց ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած:—

Իմաստը սա պիտի լինի.— ինչպե՞ս թե Աստված չկա. հապա ո՞վ ստեղծեց աշխարհը, ով է դարձնում էս մեծ

ջաղացքը, ինչպե՞ս ենք տեսնում, խոսում: Ճանճը ինչպե՞ս է թռնում, ցորենը բուսնում, ո՞վ ցանեց, ո՞վ չինեց սերմը...

ՏԵՐ ՄԼԵՀԻ ՀՐԱՇ-ՔՆԵՐԻՑ

Անձրև բերելը և կարկուտ դադարեցնելը: Կարկուտը գնաց ուրիշ գյուղի վրա: Էդ օրվանից էլ կարկուտի համար չաղոթեց Թե... Հարևանիդ վնաս դիպած Թե քեզ՝ մխևնույն է: Թողննենք բանը Աստծուն: Ինքը որոշե:

20. ՏԵՐ-ՄՐԵՄԸ

Հենց սրճարանում նա ասում է իր քարոզները, Թե ձեր մեղքերը օխտն աղբուրի պես [կբ<խեն>] կթալե:

Թե ի՛նչ սիրուն բան է դրախտը, Աղան-ախբոր դրախտից հազար անգամ լավ. ձրի չայ ու խորոված, անմահական արաղով: Իր քարոզները՝ Քրիստոսի խաչելությունը. ձենը իսկի դուրս չեկավ, բայց ձեզի որ մեկը դիպնի, ձեռաց գարադով, պրիստավ կկանչեք:

Քացախ տվին, օրհնեց Աստծու տղան, կողքը ծակեցին՝ օրհնեց...

21. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԵՎ ՄՑՈՒՍ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Տեր-Մլեմ: Գնաց Ուստան հատկապես նրան տեսնելու հոգևոր կառավարության մոտի սրճարանը: Լսեց նրա

պատմուԹյունները, քարոզները. ռուսի ծագման մասին, պասպորտը: Տերտերը պատմեց իր մեռել Թաղելը՝ մեծ ու պստիկ իրար հետ. Մաշտոցից լինչ որ աչքի տակն է ընկել:

Իր քարոզների մասին լսեց:

Իր բամբառակ խոսքերը:

[Բարեկենդանին իր դրախտ գնալը, հարուստների խաչը:]

Հիմա նա 70 տարեկան զվարԹ ծերունի էր: Զհաս պսակիչները: Եվ հեղինակը պատմում է նրա քահանա դառնալը: Եվ քարոզներից նմուշներ. կարծիքները հասի ու չհասի, ապահարզանի:

Ադամ-Եվայի դրախտից դուրս գալը՝ ու ծառի տակ իրար գրկելը՝ աշխարքում, և դրախտը իրար գրկի մեջ գտնելը:

Եվ այլն, և այլն:

ԶվարԹ-[միամիտ] բամբառակ, բայց ոչ միամիտ տիպ:

Միամիտ քահանայի տիպ. Տեր Սարգիսը, որ 80 տարեկան ծերուկ էր, Թևեն ընկած բերում էին, կիրակի օրը եկեղեցի: Ուստան լսեց նրա պատմուԹյունը և գնաց հատկապես նրան տեսավ, և աչքը համբուրեց:

Տեր Սարգիսի կռիվը գյումրեցիների հետ և դրսում վրան զարկելը:

Դրանից առաջ հարուստների խաչը նրա հետ բարեկենդանի օրերին:

Տանում են փաթաթած դորգի մեջ և [դնում] պառկեցնում սեղանի վրա:

Հետո նա հասկանում է ու նզովում նրանց:

Ուստան խոստացավ տիրացու Բաղդասարի համար մի խոր հոր փորել, քարաշեն, կրով, և (սանդղտամատներով, որ ելներ ու իջներ, կամ) փայտե սանդուղք դնելով:

Խոստումը չկարողացավ կատարել, որովհետև ապագայում այլ արգելառիթ հանգամանքներ եկան. և Ուստան՝ հակառակ իր բնույթին՝ մոռացավ խոստումը՝ ձրի չինել հորը:

<ԽԵԼԱՌ ՏԻԳՐԱՆԸ>

1. ԽԵԼԱՌ ՏԻԳՐԱՆԸ

Գիշերը եկավ Վռամի սրճարանը. մարդ չկար. Ուստան էր, Ջավուշը, Ուստա Գաբրիելը: Տխուր էին, ինքնասպանության դեպքի առթիվ:

Եկավ, բարևեց, գինի ուզեց, կանգնեց դախլի առաջ, գինի և սառը գառի գլուխը: Խմում էր, խմցնում Վռամին ու խոսում անկապ, տակից-վրայից:

– Սուրենը սպանեց իրան. խելացություն էրավ. ինչ կար էս հիմար, խառնափնթոր աշխարհում: Գողություն, սպանություն, բռնություն, բռնություն, ստություն, բարբարոսություն, վերջն էլ նորից մահ, կամ պիտի խլզախ մեռնես, կամ անդամալույծ լինես, կամ ռակով տառապես, լավ էրավ, կեցցե՛...

– Էդպես է...– հաստատեց Վռամը, ուռքի վրա կանգնած, կիսաքուն աչքերով:

– Լավ չէրավ, Վռամ ախբեր, երբեք լավ չէրավ, հիմարություն էրավ. վախկոտ էր, փախավ կյանքի կռվից: Փոքրոգի էր Սուրենը. խեղճ տղա, ափսոս... աղջկա համար մեռավ... արժե՞ աղջկա համար մեռնել, երբ ժողովրդի համար գործունեություն կա, գիրք կա, գրել կա, մտածել, խորհել, ստեղծել, գաղափարների բարձր աշխարհ, դյուտեր, երաժշտություն... հիմար Սուրեն...

— Էդպես է, չարժե աղջկա համար մեռնել, ազգի համար արժե...

— Չէ, սխալ ես. ա՛զգ — դարտակ ղոհ, անմտություն: Դաշնակցական անմտություն, դյուլլագյոզություն... Աղջկա համար արժե. ես աղջկա հոգուն մեռնեմ, վռամ ախբեր... աղջկա... Գիտե՞ս, քո սիրած աղջիկդ երբ դաշտում, ծաղիկների մեջ կանգնած՝ քեզ քնքուշ, ճերմակ ձեռքով կանչում է... ամբողջ տիեզերքը արժե, տիեզերքը կզոհես նրա համար. արդեն տիեզերքի մեջ միայն մի բան կա — սերը, սերը... պլատոնական սերը, բանաստեղծական, միստիկական, պաշտամունքի, երաժշտական սերը...

— Էդպես է, անուշ բան է սերը:

— Ով ասաց քեզ... սերը — սուտ բան է: Սեր չկա — կա կիրք, բնազդ, տուփանք, արյան հորձանք: Մարդն էլ սիրում է իշու պես, շան պես, մնացած խոսքերը բանաստեղծների խաբեբայություններն են... Ես սիրեցի, ճիվ դուրս եկավ. պլատոնական սիրեցի, իսկ սիրածս աղջիկը դժգոհ էր, կուզեր ծնկներիս նստել, ես չուզեցի, գնաց Հովհաննեսի ծոցը մտավ, թյո՛ւ, թյո՛ւ, յախկ...

Ամեն բան սուտ է, կեղծ... փողն է բանը, դա է աշխարհի տերը... Դաշնակցականները կուզեին Հայաստան ազատել, գնում էին՝ մեռնում էին, հիմարություն: Փող տվեք եվրոպացուն, միլիոններ՝ ձեզ կազատեն: Հույսերդ դրել եք սոցիալիստների վրա, դրանք ավելի սրիկա են, քան դիպլոմատները, որոնք անոթի սրիկաներ են, փող տվեք, փող, սոցիալիստներին, միտինկ կկազմեն, կբողոքեն... եվրոպական բանդ, պրոլետարիատ՝ քրդի պես մարդիկ են դրանք, ես դրանց լավ եմ ճանաչում, թե Բերլին, թե Փարիզ... Մամուլ — պոռնիկների լեզու, իրենց հայրենիքն էլ կծախեն էդ սոցիալիստները, մամուլը, հայասերները: Ես դրանց լավ գիտեմ. թուրքից դեշ են. թուրքը

հայերին ջարդում է իրան պետութեան համար, եվրոպացիք, ռուսները փողի համար...

– Էդպես է, Տիգրան ջան, էդպես է, գնա, ուշ է, հոգուդ մատաղ:

– Ո՞ւր երթամ, տուն – զզվել եմ տնից, դրքից, կարդալուց. ո՞ւր գնամ, ընկերներիս մոտ – թքել եմ դրանց գնացած ճամբաների վրա, թքել եմ ամեն մարդու գնացած ճամբաների վրա...

Մարդիկ... գազաններ, գայլեր, բացիլներ, գեչ. գեչ, հազար անգամ գեչ:

Թքել եմ դրքերի վրա, սուտ են խոսում, խաբում են դրքերը, հիմարութեան կենտրոններ են դրքերը... Ես որ Փարիզ էի, ազգային դրադարանում 3,000,000 դիրք կար, սուտ խոսողների գրած: Օրական աշխարհում 200 դիրք է տպվում, սուտ տարածող, սուտի ջաղացներ. և ինչքան պրոֆեսորներ՝ ստախոս... և մարդ պետք է այդ դրքերը կարդա... իմանո՞ւմ ես, այդ միլիոնավոր դրքերը մի մարդու համար են գրված, մի մարդու համար միայն. այսինքն՝ կարդացող մարդը՝ եթե ժամանակ ունենա՝ գուցե բոլորը կարդա. ես կուզեմ կարդալ բոլորը, աշխարքի վրա գրված բոլոր դրքերը, Չինաստանի հազարավոր հատորներ կազմող բառարանները, կուզեմ կարդալ, չեմ կարող, տանջվում եմ դրա համար, կարդամ, որ բարձրաձայն ասեմ – զուր են գրված. վառեցնք, բաղնիքների ջրերը տաքացրնք: Ի՞նչ են ասում դրանք. ասում են թե մինչև այն կետը գիտենք՝ երբ սկսվում է անհունութիւնը՝ մեծ կամ փոքրի՝ անսահմանութիւնը. որտեղից է նյութը, ուժը, եթերը, և ուր է նրա վերջը, ծայրը, խորքը, էութիւնը, ժամանակի և տարածութեան սկիզբը-վերջը: Անհունութիւն – ահա այդ է խնդիրը, խենթացնող, ահավոր հարցը. գլուխս պայթում է, ուղեղս ցրվում է, տարտնղում, չեմ հասկանում, չեմ ըմբռնում...

Մեռնել կուզեմ, ջնջվել, խառնվել այդ անհունության հետ, ձուլվել, կորչել. չարժե այս անհունության մեջ մի հյուլե լինես՝ զգաս — սարսափես, մի զարհուրանքի վայրկյան ապրես, ինչպես մահապարտը կախաղանի առաջ — և սրա անունը կյանք է, աստվածային բարիք, որ հայրդ ու մայրդ չնորհում են քեզ, որին սիրում են իրենց կյանքից ավելի: Աստված ո՞ւր է, չկա, մարդն է ստեղծել նրան՝ իրեն պատկերի պես ողորմելի, դարչելի, մազոտ, թքոտ, խնկոտ...

Եվ այլն ցնդաբանություններ. ապա Վռամը անցնող ֆայտոնը կանգնեցրեց, դրկեց Տիգրանին, դրեց մեջը, և ծառայի հետ տուն ղրկեց:

Ուստան, որ լուռ լսում էր, ասաց հետո՝ ամեն տեղ խելառներ կան, մեր Հարությն էլ էսոր կտորն է, մենակ սա ավելի խելառ է, [դիտուն խելառ է]: Հարությը նստած տեղն է խելառել, էս մարդը աշխարք է տեսել, ուսում է առել, խելառվել: Բան չհասկացա, կենդանի Գազեթի պես էս էլ համ նալին կուտար, համ մխին, դավուլի երկու երեսն էլ կզարկեր՝ քաղքցու խելառը էվելի թունդ կէղնի:

Խելառ Տիգրանը ասաց.

— Բան դուրս չի դա մարդկությունից. նա գազանից է սերվել, և գազան էլ պիտի մնա, ո՛չ միայն գազան պիտի մնա՝ մյուսների պես հասարակ, այլ քաղաքակրթությամբ, դյուտերով զինված, հազարապատկված գազան, մարդ-գազան: Օրինակ, հենց պատերազմը, ուր կատարելագործված զենքերով մարդիկ ջարդում են իրար: Եվ ո՞ւմ կրթես, ինչպես կրթես: Մինչև մի սերունդ ես հասցնում, կրթում, մեռնում է սա, և գալիս է նոր սերունդ՝ անուս, անկիրթ, սրան էլ պիտի կրթես: Եվ կրթությունից ի՛նչ պիտի ծագի — եվրոպացի. իր չահերին գիտակից մի եսական սրիկա:

Ի՞նչ է բարոյականությունը, բարին, խիղճը — երևակայական տեսիլներ. անզոր, անուժ՝ որ կռիվ են մտնում, անհավասար կռիվ բնության դեմ, մարդու գազանային բնազդների դեմ... Բնազդներ՝ որ ամենահզոր բնությունն է ստեղծել, այն բնությունը՝ որ կայծակ ու երկրաշարժ է ստեղծել, հեղեղ ու հրդեհ, ժանտախտ ու բացիլները, գայլ և սարդ... Մի՛ծաղելի, ողբալի բան է՝ բարոյականությունը կռիվ է հայտարարել բնության օրենքների դեմ: Սկզբից կարելի է գուշակել, թե ո՞վ է հաղթողը:

Թշվառ է մարդը, ոչ միայն հայը, այլ ողջ մարդկությունը, նա, որ ապրելու չար կամքն ունի... մտեք հիվանդանոցները, գժատունները, պոռնկատուները, աղքատների նկուղները, և ամեն մարդու վրա կտեսնեք տիեզերական թշվառություն, ամեն մարդ թշվառության արձան է...

Ուզում եմ լալ մարդկանց վրա, բայց ատում եմ նրանց, և լացս թույն է դառնում, ինձ մեռցնում:

2. ԽԵԼԱՌ ՏԻԳՐԱՆԸ

— Գիտությունը, գիտնալը վիշտ է բերում, մահ է բերում, հանուն գիտության կորցրինք մեր կենսուրախությունը, մեր անաստնական աստվածությունը, մեր սերտ կապը բնության, մեծ հզոր առողջ բնության հետ, և ոչինչ ձեռք չբերեցինք: Ի՞նչ գիտենք վերջապես... որ ժամանակ և տարածություն գոյություն չունի, այլ նյութ... որ նյութ գոյություն չունի, այլ եթեր, որ եթեր գոյություն չունի, այլ էներգիա, որ էներգիա գոյություն չունի. և... ունայն բարբաջանքներ...

Մի՞թե իմացանք կյանքի ծագումը. գտանք բճիճը, ինչ պարզեց նա. ոչինչ — փիղ թե՞ բճիճ, հաշիվը մեկ է, մեծը

պզտիկցրինք, բայց ի՞նչ հասկացանք. նույն հարցը, նույն հանելուկը: Միևնույն է, եզրակացության չենք հասնի, որովհետև եզր չունենք, եզրի, վերջի չենք հասնում, անհուն է ամեն բան, բայց մաշող ցավն այն է, որ դիտնալով թե չպիտի հասնենք ծայրի, ելքի, նորից մտածում ենք, նորից քրքրում, բայց իրապես մեր հոգին է, որ քրքրում ենք ու զզդզում, կռծում ու ձևատում...

Ինչո՞ւ համար եղավ մեր այս գիտակցությունը, գիտնալու, հետաքրքրվելու այս ցավոտ տենչը, քրքրելու տիեզերքը, մեր հոգին, և ամեն բանի էությունը գտնել, մեր զգայարանների մյուս կողմ<ը> ուզենալ զգալ, մեր գիտակցությունից գերազանց սահմանները թևակոխել: Զուր ջանք: Ինչու չենք ընդունում առարկան այնպես, ինչպես որ նա կա, այլ ուզում ենք նրա իմաստը, հոգին տեսնել, առարկան ինքնին, որ զառանցանք է:

Այսպիսով խորտակում ենք մեր կամեցողությունը, մեր բնազդը թյուրում, մեր հոգին մասնատում, քրքրում, ջլատում ենք մեր կամքը, մեր կազմը, մեր ուժերը, և դառնում հիվանդ, թուլլ, խեղանդամ:

Ինչո՞ւ չապրել նախամարդու պես, առողջ, ամբողջ, մեզ համար, մեր վայելքի, մեր բնազդի համար, նրա ցուցմունքով. մեր կեդրոնը դառնալով, և դառնալով կեդրոնն ու լիսեռը տիեզերքի, առանց տիեզերքից բաժանվելու, իրերը որակելու, չար ու բարի, բարոյական ու անբարո, ապա ինչ որ ուզում ես, ինչ որ կարող ես, առանց խորհելու, առանց քննելու, առանց վերլուծելու...

Անիծվի այն մարդը, որ ջուրը լուծեց, որ անհունի մասին խոսեց, որ հյուլեն գտավ ու չբավականացավ, տանջվելով հյուլեն նորից վերլուծել:

Անիծվի, որ ասաց թե գույներ գոյություն չունեն, որ ձայնը եթերի թրթռումն է, իսկ եթերը — չգիտենք...

3. ԽԵԼԱՌ ՏԻԳՐԱՆԸ

Նրա հագուստը կազմված էր երկայն մազերից, լայնեզր գլխարկից, ակնոցներից, սուր մորուքից և երկայն, լայն փողկապից, վերից վար մի դորշ վերարկու...

4. ԽԵԼԱՌ ՏԻԳՐԱՆԸ

– Մարդը... միայն թե նա քաղց չտեսնի, այլապես նա բարի է, ազնիվ է:

Փորձության չի դիմանա մարդը:

Մարդը – գլուխը աստղերի մեջ, տիեզերքն է զգում ու խորհում, իսկ... նստած է արտաքնոցում, հանճար թե չքնաղ թագուհի, գարշահոտության կարաս է նա. և անկողին, խոզություն, կիրք, աղբ, ցեխ... ահա մարդը. բայց գլուխը աստղերի մեջն է՝ հյուլեներն է նա մանրում:

Մեծ բան է նա մարդը՝ աղբի վրա նստած: Միտք է ստեղծում նա և աղբ...

5. ԽԵՆԹ ՏԻԳՐԱՆԸ

– Ես ատում եմ մամուլը, լրագրները, [ստոր] ստի աղբյուրներն են նրանք, իրար հերքում են, իրար բամբասում, իրար միս ուտում:

Կուսակցությունների բերաններն են նրանք – չար, ատող, կեղծող բերաններ. թույն ունի նրանց լեզուն: Իրար մեջ լավը երբեք չեն տեսնում ու երբեք չեն խոստովանում: Նրանց աստծին հավատաս, պիտի տեսնես, որ եր-

կուան էլ սրիկաներ են, շահի համար գործողներ և ազդի կամ ժողովրդի անունը չահագործողներ:

Զզվում եմ դրանցից:

Գարշում եմ դրանցից:

6. ԽԵԼԱՌ ՏԻԳՐԱՆԸ

— Մարդը ամենեն թշվառ արարածն է, որովհետև զգում է և մտածում, գիտե, որ մահ կա և ոչնչություն, գիտե, որ աշխարհը անհուն է, անսահման, և աննպատակ, իսկ ինքը ժամանակավոր է, վայրկենական, և մինուչն ժամանակ նպատակներ է հետապնդում կյանքում, աշխարհի մեջ: Ի՜նչ ծաղր, ի՜նչ հակասություն, աննպատակ հավերժության մեջ մի նպատակի [ձգ<տող>] հետապնդող վայրկյան...

Բնությունը... Թո՛ղ կորչի բնությունը, որ ստեղծելով մարդուն՝ նստել է նրա ուսերին ու ճնշում է, խեղդում: Տիեզերքը մարդու խեղճ ուսերի վրա է: Կյա՛նք, դու տառապանք ես, զարհուրանք, տրվել ես մարդուն, որ նա զգա ցավն ու կսկիծը և անճար մեռնի...

— Հայ ժողովուրդ, աշխարհում ինչ լավ բան որ կատարվի, եթե վնաս չունենա, օգուտ չի տա հային: Ոչ մի լավ բան չի վերաբերում հային: Հեղափոխություն լինի, սոցիալիզմ գա, ազգերի եղբայրություն... հային չի վերաբերվի դա, որովհետև նա դռնվում է թշնամիների օղակի մեջ, որոնք ամեն օր ձգտում են նեղացնել այդ օղակը, վերջնականապես խեղդելու նրան:

Քանի թուրքը թուրք է, հային փրկություն չկա. իսկ թուրքը թուրք է, և այդ միշտ ճշմարտություն կմնա:

Թուրքը կփոխվի, դուցե, ուրիշների հանդեպ, բայց հայի — երբեք: Որովհետև հայը մի փոքր կղզի է Թշնամի ծովի մեջ: Ջրերը իրար կուզեն միանալ: Հայը ոչ մի բարեկամ չունի, ո՛չ ռուսը, ո՛չ Եվրոպան, ո՛չ Ամերիկան, ո՛չ քրիստոնեությունը, ո՛չ քաղաքակրթությունը, ո՛չ սոցիալիզմը, որովհետև դրանք — կեղծ են, սուտ են, չահասեր են և գազան:

— Քանի որ հայկական ջարդերը կան աշխարհի աչքի առջև կատարվող, և աշխարհը աչք է դոցում, կնշանակե այդ աշխարհը անհոգի է, անխիղճ, անբարոյական, չար, կնշանակե մարդը մարդ չէ, այլ անասուն ու չահամոլ, եսամոլ ու ոճրագործ, և նրա բարոյական ձգտումները — քաղաքակրթություն, սոցիալիզմ... կեղծիք, սուտություն, խաբկանք...

7. ԽԵԼ<ԱՌ> ՏԻԳՐԱՆԸ

Նախանյութը մեկ է, միատարը, տիեզերքի նախանյութը: Բայց այդ նյութը՝ նիթեր է թե անկշռելի մի ուժ, ինչ անհուն անհունավոր հանճար ունի և իմացականություն, տիեզերաստեղծ հանճար, որ միասեռ մի տարրից հառաջ է բերել բազմաթիվ տարրեր, նյութեր, իրար հետ չաղկապելով ու ճուլելով, խառնելով ու հյուսելով, որ կաղապարել է այս աշխարհը — արևներ, մոլորակներ, լույս, ջերմություն, շարժում, ջուր, օդ, հող, բույս, արյուն, միս, ուղեղ և մարդուն:

Մարդը՝ հրաշքների հրաշքը, տիեզերքի պսակը, այս վաղանցուկ, խարխուլ, փխրուն պսակը, բայց իրոք որ պսակ:

— Հինգ զգայարանքներս՝ հոգիս ամբողջ, իմ Եսիս այն հինգ պատուհանները, որ բացված են տիեզերքի գաղտնիքների, խորհուրդների, անլույծ հրաշքների վրա...

— Նյութի, ույժի, հյուլեի անհունությունը, որ տիեզերքը ինքն է,— այս ահարկու, մեծասարսափ, մեծահանճար տիեզերքը փչրում է ուսերս դեպի վար, դեպի խեղթացում և ոչնչացում:

8. <ԱՇԽԱՐՀԸ ԵՍ ԵՄ ՍՏԵՂԾԵԼ...>

— Աշխարհը ես եմ ստեղծել (Խելառ Տիգրանը):

— Ծո, խելառ,— ասաց Կ. Գազեթը,— քեզի ո՞վ է ստեղծել:

— Ես, ես եմ ինձի ստեղծել...

Կ. Գազեթը զարմացավ պատասխանի վրա, չկարողացավ խոսք գտնել, լռեց:

9. [ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ՏՂԱՆ,] ԽԵՆԹ ՏԻԳՐԱՆԸ

— Ես տիեզերքն եմ. անհունորեն սփռված-փռված եմ ես. ամեն հյուլե ինձնով է լցված՝ իմ էությամբ...

Աստղերը մտքերս են, արևը — սիրտս է:

<ԿԵՆԴԱՆԻ ԳԱՋԵԹ, ԲՈՒԼՈՒԼ ՄԱՐԳԱՐԵՆ>

1. ԲՈՒԼՈՒԼ ՄԱՐԳԱՐԵԻ ՍՐՃԱՐԱՆԸ

Ինքը խոշոր և խոժոռ մարդ: Մոտ 54 տարեկան, տեղ-տեղ սպիտակած: Մանր, դանդաղաշարժ, պարարտ, [քնհատ] քնատ[1] աչքերով: [Առավոտ կանուխ գալիս էր սրճար<ան>]

Տունը[2] չէր քնում, թեև կին ուներ և որդիներ: Առավոտ[3] զարթնում էր, խանութը բանում. ծառան վառել էր կուպրը[4] արդեն: Ինքը երեսը խաչակնքելով, առանձին, մենակ, մոտենում էր դախլին և ասում.

— Բարի լուս, Մարգար ախպեր:

Որպես թե ուրիշն է ասողը՝ հաճախորդը[5]: Ինքը պատասխանում էր.

— Աստծու բարին, բարով եկար,— անցնելով դախլի առաջը.— Մարգար աղբեր, չահանոց[6] մենձը լից,— և հինգ կոպեկանոցը աղմուկով զարկում էր դախլին:

Մարգարը անցնում էր դախլի ետևը, լցնում էր օղին, և դրամը ճգում արկղը: Ապա կանգնում էր դախլի առաջ և բարեմաղթելով.

---

1 ՍԳ — քնոտ
2 ՍԳ — Տանը
3 ՍԳ — Առավոտը
4 ՍԳ — կուբը
5 ՍԳ — հաճախորդը
6 ՍԳ — չապանոց

— Աստված գործիդ հաջողություն տա, Մարդար ախբեր, լուս աչքով, ձեռք ու ոտքով մնաս, նամարդին էյթաճ չեղնիս.— և խմում էր օղին:

Սրանով ինքը սկսում էր առուտուրը, խանութը բացված էր և սպասում էր սովորական առավոտյան[1] հաճախորդներին՝ արհեստավորներին ու մանր խանութպաններին և քաղաք եկող գյուղացիներին, որոնք գործերը սկսելուց առաջ մտնում էին Բուլուլի սրճարանը, «սիփթան» անում, դիշերվա՝ քաղաքում և գյուղերում պատահած դեպքերն ու լուրերը իրար հայտնում:

Գալիս էր Բուլուլի որդին, հայրը առուտուրը հանձնում էր նրան, և գնում նստում դախլի մոտ, թախտի վրա իր տեղը, սուրճը խմում, ծխում, և յուղոտ կարտով յուղոտ սեղանի վրա սկսում բանալ իր սովորական «վիճակը»: Գալիս էին հաջորդները ու գնում: Օրվա լուրերի մասին խոսում, կարծիքներ հայտնում ու Բուլուլի կարծիքը հարցնում: Բուլուլը[2] մի երկու խոսք էր նետում, և «վիճակը» բաց անում:

Մտնում էին գյուղացիներ ու քաղաքացիներ, իրենց կատարած առուտուրի առթիվ մի-երկու օղի ձգում, կամ հենց խմելով՝ առուտուրը, աղմկելով[3], այդտեղ դլուխ բերում. Բուլուլը[4] անտարբեր անցուդարձին, «վիճակ» էր բաց անում, խորասուզ:

Գալիս էր Կեն<դանի> Գազեթը, չատախոսում, սրախոսում, խմում, հայհոյում, իսկ Բուլուլը մի ականջը նրան տված՝ «վիճակ» էր բաց անում:

---

1 ՍԳ — առօրյա
2 ՍԳ — Բոլորը
3 ՍԳ — չխք
4 ՍԳ — Բոլորովին

[երեկոյան մոտ] Ճաշից անց նա նստած տեղը, վերարկուն գլխին քաշած քնում էր մի քիչ, ապա զարթնելով, սուրճ էր խմում, գալիս էին «փաստոնի» ընկերները, հասակակից մարդիկ, վարպետներ, գործը հանձնած աշկերտներին[1], կաշե[2] կամ կտավի գոգնոցներով, հյուսն, դարբին, որմնադիր, կոշկակար, մի-երկու ժամ հանգստանալու: Սկսում էր փաստոնը մինչև ճրագվառոց[3]. խաղացողները փոխվում էին, իսկ Բուլուլը միշտ մնում էր խաղի սյունը, անփոփոխ, խաղի առանցքը, նրա շուրջն էին փաթաթվում եկողները:

– Կ<ենդանի> գազեթը նստել էր, մուշտուկը ձեռքն առած՝ դատարկ, անծուխ, ծայրերը զարկում էր սեղանին:

– Մեկը թյութունը[4] հանեց, նա էլ մուշտուկը: Ով որ թյութունը[5] հաներ[6], նա էլ իսկույն մուշտուկը կհաներ, և զուռնաչու պես, որ ածելուց առաջ զուռնան կմաքրե, մուշտուկը մաքրեց, և ծխեց նրա թութունով: Թութուն[7] պահում էր, գրպանի խորքում, նեղ ընկած դեպքում ծխելու համար, երբ չի ճարվի:

2. ԳՅՈՒՄՐԻ

Բուլուլ Մարգարեի սրճարանում խոսում են դիպլոմատիայից. Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, [Ռուսիա] Ռուս<աստան>:

---

1 ՍԳ – աշակերտներին
2 ՍԳ – կաշվե
3 ՍԳ – ճրագավառոց
4 ՍԳ – թութունը
5 ՍԳ – թութունը
6 ՍԳ – Հանում էր
7 ՍԳ – Թութունը

[Մի ժանդարմ անցավ, նայեց ներս, մի ակնարկ ու դնաց, խոսողները լռեցին:]

Մեկը նրանցից ասաց.

— Ջեններդ կտրեք, քեռին կուգա:

Բոլորը լռեցին. մի ժանդարմ անցավ աչքը սրճարանից ներս ձգելով:

— Ո՞վ է քեռին,— հարցրեց Ուստան,— ընչի՞ վախցաք:

— Ըպա, քեռին է, ճիճիդ կհանե, ինչդ չվախնանք:

Ուստան նորից չհասկացավ, կրկնեց հարցը:

— Տո, կապուտ քեռին, չիտե՞ս վով է, ուռուսն է, ժանդարմը:

Ուստան հասկացավ, լսել էր նրանց մասին:

3. ԲՈՒՐԺՎԱՆ

Ուստան հնչակյանների ժողովում լսում է.

«Ինայտառակ, կեղտոտ բուրժվաները, որ ծծում են մեր արյունը:

Մի հավատաք նրանց, ազգասեր են ձևանում նրանք, հայ եկեղեցու և ազգի պաշտպան, հայ ժողովուրդը սիրող, աղքատներին խնամող, բայց նրանք գառի մորթ հագած գայլեր են: Դուք չեք տեսնում այն շղթաները, որոնցով կապել է նա մեզ, այն օղակը, որով խեղդում է մեզ... Եվ մենք, հիմարներս, կարծում ենք թե՝ նրանք են մեզ պահում, առանց նրանց մենք քաղցած կմեռնենք:

Բոլոր մեր ազգային աղետները, ցավերը նրանց ձեռքից են՝ այդ զզվելի, գազան, դահիճ բուրժվաների ձեռքից:

Ընկերներ, գոչենք միասին, կորչեն բուրժվաները, կեցցե բանվորը, կեցցե զրկվածը:

Կորչեն ցարն ու բուրժվան...»

(Ծափեր)

Ուստան չհասկացավ բուրժվա բառը, բայց իմաստից նրան այնպես թվաց՝ թե թուրքի պես բան է, եթե ոչ նրանից գեչ: Ո՞վ են, ինչ են նրանք – կարելի է ազգի վասակներն են:

Մյուս օրը հարցրեց [Կենդանի Գազեթին] Բուլուլ Մարգարեին.

– [Մելիքսես... վատ] Մարգար աղբեր, [(Աբիսողոմ)] ինչ խոսք է բուրժվա... ինչ ըսել կուզի, ով են:

– Էդոնք, էդոնց հերն անիծած, էդոնք իշու մեջքեն ընկած հայերն են:

– Էդոնցեն կա՞ն Գյումրի և էլ գյուղերը:

– Կան, կան, բայց կոմիտեն էդոնց բռնե կը, զարկե կը, հում-հում կուտե կը ճեռքն ընկածը. էդոնք... ջանըմ, թող, է, էս կլիրակի օրով մի արուն պղտորե, արի հատմ խմենք:

Ուստայի համար նորից անհասկանալի մնաց: Հարմար պահ գտավ, հարցրեց Կենդանի Գազեթին:

– Աբիսողոմ Ավետարանիչ, ի՞նչ է բուրժվան:

– Բուրժվան... Ուստա ջան, հարուստ, փողատեր մարդիկ են. անգութ, անաստված, փող պաչտող, իրանք աղքատին ղրկող, փող չահով տվող, արուն քամող, իրանց փողի զորությունով հեծել են ժողովրդի վրեն ու քշեն, կերթան: Ո՛չ ազգ կսիրեն, ո՛չ ժամ ու Աստված... Էդոնք աղքատի, ժողովրդի հացով [ապրողներն են] կապրին. կաշխատեցնեն՝ փողը կկտրեն, կամ քիչ կուտան, կամ հեչ չեն տա. էդոնք ազգի ցեցերն են...

– Հասկցա,– ասաց Ուստան,– հասկցա. մեր պարոն Կայծակն էլ էդ կըսեր, ուրիշ խոսքերով. իրանց դեմ էլ դաշնակի ծրագիրը կռիվ ունի, բայց էնքան ուժով չէ, ինչքան սուլթանի դեմ:

Եվ Ուստան որոշեց. Ղուկաս աղան բուրժվա է: Եվ երբ դատեց նրան, ասաց. կեղտոտ, խայտառակ, արուն ծծող բուրժվա Ղուկաս:

4. ԻՆՔՆԱՍՊԱՆԸ

Սպանել է իրեն սիրո մերժման պատճառով: Աղջիկը մերժել է թե՝ դու հասարակ տղա ես:

Ուստան էլ թե՝ թո՛ղ տղան մեծ գործեր աներ, անուն հաներ, ինչ որ աղջիկը կուզեր աներ, արժանանար աղջկան:

Կենդանի կազեթեն ասում է թե՝ ի՛նչ մեծ գործեր աներ, հեչ էլ պետք չէր, թո՛ղ փող ունենար՝ աղջիկն իրեն կէզներ: Կնկա համար փողն է ամենեն մեծ բանը. փող ունես, թաղավորի աղջիկն էլ կառնես. հեչ մի կնիկ փողի առաջ չի դիմանա, կնիկները փող կուզեն, որ հագնին, փող կուզեն, որ մերկանան...

Առհասարակ կենդանի կազեթի բերանում դնել ամենաչնչական առածները.

Իմ մորես ջոկ՝ ամեն կնիկ բարձ-փոխող է,

Աչխարհում մե կուչս կնիկ է էղեր, էն էլ տղա է բերեր — Աստվածածինը... և այլն, և այլն:

Ուստայի բերանն այնքան վայել չէին այդ մտքերը. միայն երբեմն, երբեմն, ապացուցելու համար, թե նա թեև ռոմանտիկ էր, հերոսական ու աստվետական, բայց և այնպես զորեղ ներհայեցողություն ուներ:

— Կենդանի կազեթը պատմում է Ուստային նորելուկների մասին (սոցիալիստ) թե՝ կնիկ առնել թողնելը չապիկ փոխելու պես բան է. էսօր՝ սրա հետ, վաղը՝ մյուսի հետ. ում բռնե՝ հեծի: Ժամ, պսակ դարտակ բաներ են:

— Իսկ եթե երեխա լինի,— հարցնում է Ուստան:

— Վեր կվարեն, ինչ կլինի, թող լինի, պապոնց տունը կղրկեն:

— Լսա, անասունի պես բաներ են, ու պրծի,— ասաց Ուստան:

— Ինքնասպանության առթիվ. (տղան սպանվել է, որովհետև աղջիկը ուրիշին է գնացել) խոսում են Կազեթը, Բուլուլը և Ուստան կնոջ դավաճանության մասին...

Գյումրվա քեֆին երգում են. «Էրեկ լավ էր, քանց որ էսօր». մեկը դոչեց.

— Սուտ է, էսօր լավ է, քեֆ անենք, երեկ կերածս լոբի էր, խմածս անպակ չայ (ամպակ):

Քեֆին, երբ գնում են փողոցով, ճամբան մեկը հարցնում է մի սեթևեթ քայլերով գնացող կնոջ.

— Բուրիկ ջան, բոզ ես:

— Գրո՛ղ, գրո՛ղ, [ճամբեդ գնա],— ասաց կինը:

5. ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խոսում են իրար մեջ: Մեկն ասում է.

— Հիմար էր, որ իրեն սպանեց:

— Բոլոր ինքնասպանները հիմարներ են, կարծում են, թե իրենց վիճակի պես քիչ մարդ կա կամ չկա: Իրենցից ավելի թշվառներ կան, խեղճեր, հիվանդներ, բայց իրեն-

ցից խելոք են, հույսերը բոլորովին չեն կտրում, հույս ունեն, կհուսան, և մի օր էլ, տեսնես լավ կլինի:

– Պետք չէ երբեք հուսահատվել. դրությունը կփոխվի, «Ձախորդ օրերը» և վերջապես, գեշն ու լավը, հաջողություն, ձախողություն (հակադրություն) քուր-աղբեր են:

6. ՔԵՖ ԲՈՒԼՈՒԼ ՄԱՐԳԱՐԵԻ ՄՈՏ

Այստեղ ընկերության տղերքը չէին, և ավելի հասակով մարդիկ էին, հիշում էին իրենց անցյալը և նույնպես նահատակված երիտասարդներին. լաց, համբույր, ճառեր: Հայհոյանքներ թուրքի և ռուսի հասցեին:

Այստեղ էր, որ Բուլուլն ասաց. մեկ քուրդ, մեկ թուրք չկա, բերեք ծեծեմ, ջնջեմ գլուխը, սիրտս հովնա:

– Վերի քեֆին, մի երիտասարդ տղա, պառկեց գետնին և ասաց, ես զարկվեցա, կեցցե Հայաստան... ա՜խ, երբ պիտի [չիտակը] հաստատ մեռնեմ...

7. ԿԵՆԴԱՆԻ ԳԱՋԵԹԸ

Սա մի ցինիկ, չատախոս, պոռոտախոս, զավզակ մարդ էր. փորը դուրս քցող, միևնույն ժամանակ չողոքորթող և ճշմարտախոս: Ուստայի հետ բարեկամացավ՝ ուտել-խմելու համար: Նա տարավ Ուստային այս ու այնտեղ՝ բաղնիք, յաղլի ուտելու, ղայֆեքն ու միկիտաններըը:

Սրախոս էր, պատրաստաբան, առակախոս և կարդացող, բամբասող այս ու այնտեղ, ամեն տեղ մտնող-ելնող:

Նա է ասում.

Ամեն կնիկ բոզ է, իմ մորից ջոկ:
Մե կույս է եղել, էն էլ տլա է բերել:
Ուրիշի համար ծառ չեն տնկե,
Տղա՝ ինչքան կուզես:
Կնիկ առնելուս՝ բանն Աստծուն քցել պետք է:

Բուլուլ Մարգարեն՝ մախմուր եղած՝ քնքից հետո՝ բերանը անհամ ու դառն, մի օղի է խմում ասելով՝ է՛հ ըշտե, կյանքն որ կա՝ քաք է:

Կ<ենդանի> Գազեթը վրա է բերում՝ բայց անուշ քաք է:

Հա՛մ դաշնակ է, հա՛մ հնչակ, երեսներին գովող, հետևներից՝ բամբասող, զրպարտող, հայհոյող:

Ուստան միամիտ էր, չճանաչեց նրան և 15 մանեթ «ձեռաց պարտք» տվեց, նրա խնդիրքի վրա: Նրա համար կոշիկ առավ:

8. Կ<ԵՆԴԱՆԻ> ԳԱԶԵԹԸ

– Կ<ենդանի> Գազեթը ներս մտավ սրճարան, նստեց Ուստի մոտ:

– Պատվական Ուստա ջան, գազեթ կարդամ, լսե ազգի ցավերու մասին: «Մշակ» է ձեռքիս, աննման գազեթ է, «Մշակ» լսած կա՞ս:

– «Դրոշակ» կուզես ըսել:

– Չէ, «Մշակ», «Դրոշակը» էնոր անառակ[1], խելառ ձագն է:

Եվ կարդաց հառաջնորդողների վերնագիրը. «Մշակը և հայ գյուղացին»:

---

[1] *Բնագրում՝ առնառակ:*

«Նրանք որոնք որ գյուղերումն են ապրում, կոչվում են գյուղացի. և այն գյուղացին է հարուստ, այսինքն՝ ոչ աղքատ, որոնք որ չա՛տ հող ունին, մանավանդ որ ջրովի, և շա՛տ եզ ու կով ունին»:

[«Մշակը» 30 տարուց ի վեր յուրյան ակտիվ գ...]

Ուստան ընդհատեց.

– Էդ մորքուրիս տալն էլ գիտե, ուրիշ բան կարդա:

Կ<ենդանի> Գազեթը շարունակեց.

– 30 տարուց ի վեր «Մշակը» յուրյան ակտիվ գործունեուրթյան օբիեկտներն է դարձրել գյուղի ինտենսիվ կուլտուրան...

Ուստան խլեց Կ<ենդանի> Գազեթի ձեռքից թերթը, ասելով.

– Զայ խմենք, երթանք քիչմ ման գանք, սիրտս կնեղվի:

Կ<ենդանի> Գազեթի դեմքը փայլեց, և լիմոնով չայ ուզեց, հետո էլ պանիր-հաց:

– Գազեթի և Բուլուլի հետ էր և քեֆչի խաչոն, օր ու գիշեր գլուխը քեֆի մեջ, լոթի տղա, սրախոս, ծախսող, և ոչ թե Գազեթի պես պոչ խուզող. խումար խաղցող էր, ձեռն ընկած փողը կուտեր, չուներնար՝ ընկերներըը պահում էին. եղբայրը ֆայթոն էր բանեցնում. դրանով տուն էր պահում եղբայրը, ինքն էլ մեկ-մեկ գնում էր տուն, վրա-գլուխը լվանում: Լավ ձի ճանաչող էր. հաճախ դիմում էին ձի գնողները նրա խորհրդին: Մոտենում էր ձիուն, նայում էր գնողը աչքերով, ձեռքը դնում էր մեջքին՝ սեղմում, [պոչն էր] ադին[1] էր քաշում, ձիու ծնկներին էր նայում, [ձեռքը] ավը գոգավորած դնում էր ձիու աչքերին՝ ստվեր տալով. բերանն էր նայում, ակռաներին, քայլեցնել էր տալիս, ապա ա-

---

[1] Բնագրում՝ *այգին:*

սում էր. «Լավ ձի է կամ գեչ», և գնահատում էր: Երբեք չէր վրիպում նրա ճանաչողությունը. մեկ-մեկ ասում էր ձիու բնույթի դծերը:

Վարձատրում էին նրան առնողն էլ, ծախողն էլ: Այնքան աղնիվ էր, որ չէր կաշառվում, սուտ չէր խոսում:

Սրա և մյուսների հետ Ուստան մի օր ու դիշեր լավ քեֆ արեց:

– Կ<ենդանի> Գազելին կոչում էին և Արշակ Ավետարանիչ, որովհետև մտքեր էր ասում դրաբար լեզվով, այդ անունը ծագեցնելով նրա հոր անունից – Ավետովիչ, Արշակ Ավետովիչ:

Մի կին ցույց տվին, եղսոն. այս կինը Աստվածաչունչ է, մեր քաղաք մարդ չկա, որ նրան կարդացած չլինի. հայրն էլ, տղան էլ, տերտերն էլ, տիրացուներն էլ, հարուստներն էլ, աղքատներն էլ:

Քեֆչի Խաչոն է՝ քեֆի դիշերը, դուրսը մի կին պատահելիս՝ մոտեցավ ըսավ, քուրիկ չան, բո՞զ ես...

Կինը – Գրո՛ղ, գրո՛ղ, հարբած չուն,– ասաց հեռացավ:

– Քուրիկ չան, ինչի նեղացար, ես դիտեմ թե ինձի պես ես – քուր-ախբեր ենք:

9. Կ<ԵՆԴԱՆԻ> ԳԱԶԵԹԸ

Ցինիկ մարդ էր:

Ասում է, հացն է բանը, կնիկը չէղնի էլ՝ կէղնի: Ամեն կնիկ իրար նման են, ուսումովն էլ, անուսումն էլ, գեղացին էլ, քաղքցին էլ, թաղավորի աղջիկն էլ, իշապանի աղջիկն էլ... սուտ խոսող, ջուր ծեծող, հոգի հանող: Օրվա 23 ժամը կնիկը ցավ ու տանջանք է մարդու համար, մեկ ժամ ուրախություն է:

Կնկանից օխթը չաբթով, օխթը սարով հեռու կեցի՛ր, մեկ-մեկ [կես ժամ] օխթը չաբթու գլուխ, կես-ժամով կողքեն անցիր:

— Ուստա Կարոն այն ինքնասպան երիտասարդի մասին հիշելով Կայծակի խոսքերը ասաց,— ափսո՛ս կտրիճ, որ աղջկա կեր գնացիր. մեռնել-մեռնել, ազգի համար մեռնեիր...

Ցինիկ Կ<ենդանի> Գազեթն ասում է.— Հաշիվը մեկ է, երկուսն էլ կորած է, մարդ պտի ապրի իր անձի համար: Ինչի մեռնիմ ազգի համար, ճեռս ի՞նչ պիտի ընկնի. ազգն ազատի, պտի ուտե-խմե քեֆ անե, ինձի էլ մոռնա. զարմանք բան է, մարդիկ կուզեն, որ իրան համար մեռնիս, որ լավ էղնիս:

Ուստան հակառակեց, չթողեց շարունակել:

Այս գլխի վերնագիրը կլինի.

«Կ<ենդանի> Գազեթը կամ Արշակ Ավետարանիչը»:

Նա ցինիկ մարդ է, բայց բնատուր խելքի տեր:

10. Կ<ԵՆԴԱՆԻ> ԳԱԶԵԹԸ

Նա ռուսերեն գիտցող մարդ էր. գյուղացիներին խնդիրք գրողն է կառավարության դիմումների մեջ: Թնճուկ, խառն բաներ հասկացող ու կազմող: Գանգատներ գրող վեճերի մեջ: Օրենք հասկացող էր, բայց քաղաքում չսիրված, խարդախ մարդու համբավ ուներ. սուտ վկա էր լինում առաջ: Բայց դատարանը ճանաչելով նրան՝ ոտը կտրեց դատարանից: Գաղտնի խորհրդատու էր գյուղացիներին, տուն տվող:

Երիտասարդ ժամանակ մոտ<ը> կեղծ թղթադրամ էին գտել և 2 տարի բանդ նստացրել: Գազազած էր հասարա-

կության դեմ, կնիկ չուներ: Խելացի մարդ էր, չար-խելք: Ձախ աչքի վրա ճերմակ հատիկ կար, այդ աչքով լավ չէր տեսնում, չա՜տ խավար:

Նրա խոսքերը.— Ի՞նչ է որ մարդը. էն մեծ մարդը, որ չորս թաթ ձև առնի, մեկ տարեկան հորթից մեծ չի լինի:

Այդ օրերը քաղաքը խոսում էր մի արկածի մասին. մի երիտասարդ ատրճանակը դրպանից (բրաունինկը) հանելիս սեղանի վրա դնելիս հանկարծ պայթում է՝ [կոկորդին] ճակատին դիպնում և մեռցնում: Դրա առթիվ Կ<ենդանի> Գազեթն ասաց.— Մարդն ինչ է որ, խաչկընկիք. փորձանքով ծնվել է, փորձանքով էլ կմեռնի. փորձանքն է աշխարհի տերը, պատահմունքը, դեպքը: Էս աչքս կուրցավ սուտ տեղը. մեկը լուցկին (սպիչկան) վառելուս, պնծը թռավ, աչքս փչացրեց: Մեկ մատ հեռու թռներ, բան չէր էղնի. էդ մեկ մատի մասին ես էս 20 տարի կխոսիմ, ու հերսս կուտեմ. մեկ մատ... էդ մեկ մատն է տուն քանդողը. թե որ էդ տղին էլ պատրոնը մեկ մատ հեռու թռներ՝ չէր մեռնի... Մեկ մատեն, մեկ մազեն է կախված մարդու բախտն ու կյանքը...

— Մարդն ուսում առած կամ խոսող անասուն է:

11. ԿԵՆԴԱՆԻ ԳԱԶԵԹԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Բերեք գայնուիկը (արագը):

Երբ մեկը նրան բաժակ է մաղթում, նա պատասխանում է — և ընդ հոգւոյդ քում:

Երկու բուդիլ արաղ խմեց — թող գկանայս և զմանկտիս (մանր-մունր բաժակները):

«Ա՛ռ յիս ծագեցաւ» — արաղն ինձ եկավ, իրեն հերթն եկավ:

«Իսկ մեք փառաւորեսցուք զՈւստա Կարօն...»

Երբ Ուստան պարծենում էր, կենդանի Գազելը չչնջաց Բուլուլ Մարգարեին. «Փայլեցուցեր փչմամբ» Գրիգոր Նարեկացու խոսքը:

— Տո՛, Բուլուլ Մարգարե, ինչ ես նստել, լցնում ու դարտկում ես... աչխարքի բանը ո՛չ կլցվի, ո՛չ կդարտկվի· դու արաղ՛ը լից, ես դարտկեմ...

= Է՛հ, խելառ Արշակ, էս ապրելը հիչ բան է եղել, տո՛, կյանք ըսածդ... աղբ է, [քա...]:

— Գիտեմ, բայց անուշ աղբ է, անո՛ւշ, կուտվի, ամենքը կուտեն:

— Տո, Բուլուլ Մարգարե, նստել ի՞նչ կենես:

= Հիչ. աչխարքի բանը կլցնեմ ու կդարտկեմ:

— Տո, դու արաղը լից, ես կդարտկեմ:

= Գնղեցիկ, լավ հագնված կանանց մասին. փառակազմ է:

— և այլնի փոխարեն՝ և մասամբ նորին:

— միով բանիւ:

— Ճեպընթաց = թուրքահայ:

— Ճեմարանցի = անգործ մարդ, ճեմող և զրուցող:

12. ԿԵՆԴԱՆԻ ԳԱԶԵԹԸ

Ուստան նրա հետ ծանոթացավ, որի բնակատեղի էր Բուլուլ Մարգարեի սրճարանը:

Այս երկուսի մասին. նրա Հայաստան դնալը, և Հուսահատ կարծիքները թյուրքահայերի մասին. վախկոտ են, թուրքը շատ է. թուրքն էլ է վախկոտ, քուրդն էլ՝ ռուսի հայը քաչ է...

Բայց երբ հարբում էր, ասում էր՝

— Թուրքըմ կամ քուրդըմ չկա, բերեք մեկ լավըմ ծեծեմ:

Այդ սրճարանում ճաշ ավեց՝ ի պատիվ Կենդանի Գազելթին, Մելքոն վարժապետին: Ջհրավիրեց Կապիտան Ղազարին՝ դիտնալով որ, ասացին նրան, թե նա ծեր է, հյուր չի գնում:

Բուլուլ Մարգարեի գողութիւնները՝ քաջագործ, ճարպիկ. ճմեռը սառույցը կոտրել է, մեջը լողացել:

Կենդանի Գազելթը՝ լրագիր ծախող. բայց ինքը ավելի բան գիտեր, ավելի տեղեկութիւններ Լոնդոնից, Փարիզից, Բրյուսելից, Պետերբուրգ ու Կ.Պոլսից, քան իր կարդացած ու ծախած լրագիրները:

Բուլուլը բանդից փախել է. հետո ներվել է: Հերոս է: Հին հերոս: Սիբիր է եղել, կարճ ժամանակով, ներվել, եկել է, հիմա խաղաղ է, բայց երբ խմում է՝ թուրք ծեծել է ուզում:

13. ԿԵՆԴԱՆԻ ԳԱԶԵԹ, ԲՈՒԼՈՒԼ ՄԱՐԳԱՐԵ

Ուստայի մոտ փոխասաց տիրացուների պես իրար բերնից խոսքը խլելով վրա էին տալիս:

— Ծո, հարուստ մարդը աղքատի մոտ էնպես կուլա, որ կուզես չապիկդ հանես, էնոր տաս:

= Որպեսզի իրանից փող չուզես. բայց հարուստը հարուստի մոտ գլուխ կգովե՛, ունեցածը տասնապատիկ կմեծացնե...

— Ուրիշ մարդու քով, խոսքս աղբոր-ագի մասին չէ, քու մասիդ ո՛չ լավ խոսե, ո՛չ գեշ. լավիդ չեն հավտա, գեշիդ կհավտան:

= Ու ամեն տեղ լավդ կըսեն, վրադ կխնդան, գեշդ կըսեն՝ կուրախանան:

14. ԳՑՈՒՄՐԻ

Մեկն ասաց. (կենդանի Գազեթ ?)

— 100 տարի կյանք... հեչ բան է. ձմռան կարճ օր է, 500 տարի... էդ էլ հեչ. մարդ պիտի ապրի 2000, 10000 տարի, որ աչքը բան տեսնի, լիանա...

100 տարի. մեկ սիրուն աղջկա պաչելով 100 տարի չես կշտանա, 100 տարին քիչ է մենակ մեկ սիրուն աղջկանից կշտանալու համար... Հապա — գուռնան, թառը, գինին, ձին, քեֆ...

15. ԳՑՈՒՄՐԻ

Արշակ Ավետարանիչը ասում է, որ երբ Նոյը ամեն մի արարածից էգ-որձ էր վեր առնում տապանի մեջ դնելու, ոճիլից և լվից չառավ, երբ որդին նկատեց, Նոյն ասաց.

— Էդոնցից մեր վրեն չա՛տ կա, ավելնորդ է:

Թե որ ամեն օր գաթա ունենամ, Աստված է վկա, լավաչ հացի անունը բերանս չեմ առնի:

16. ԳՑՈՒՄՐԻ.
ԽՈՍԱԿՑՈՒԹՑՈՒՆ ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մեկն ասում էր,— գուր եք հույս կապում, թե Եվրոպան թուրքին պիտի ուտե, իմ գիտցածս էն է, որ Եվրոպան՝ լինի Անգլիա թե Ֆրանսիա, Գերմանիա թե Ռու-

սաստան, լիզում են թուրքին, լիզում են, հասկանում եք...

Մեկն պատասխանեց – Վայրի գազանները որսին ուտելուց առաջ լիզում են...

– Բա, երբ պիտի ուտեն ինձ, ես ինչ գիտեմ, նրանց լիզելն եմ տեսել. ինչ ասիր, [Ուստա Կարո] պարոն Արշակ Ավետարանիչ...

– Ես էն եմ լսած,– ասաց [Ուստան] Ավետարանիչը,– որ [գազանները կան] եվրոպացիք միսը հոտեցնեն, նոր կուտեն, [կարելի է] էդ տեսակ գազաններից է Եվրոպան...

Ուստային չա՛տ հաճելի եկան այս երկու պատասխանները, և պատվիրեց նոր արաղ բերեն:

Ուստայի համար պարզվեց, որ թյուրքին ուտելու են, ուրեմն, հայերս էլ պատրաստ լինենք ուտելու...

17. ՏԻՊԵՐԸ

Կենդանի Գազեթը. հասարակ պեսիմիստ է, նյութի, ուժի, տիեզերքի, վերջի, նպատակի մասին չէ նրա խոսքը, այլ մարդու, մարդկային աչխարքի: Մարդը գեշ է, անօթի մարդը գազանից գազան է, որովհետև խելք ունի, թվանք ունի, թուր ունի, կսպանե, ուտելիք կառնե:

<ՏԵՌՈՐԸ>

1. ՏԵՌՈՐԸ

Գավառապետին սպանող երկու ահաբեկիչներից մեկը ծանր վիրավորվեց ղազախից (թիկնապահ), բայց ձեռք չընկավ. իրան ձգեց մի խանութ, այնտեղից էլ հայերը երթիկե երթիկ փախցրին նրան, որ ճամբուն մեռել էր արդեն: Դիակը պահեցին և մի երկու օր հետո չքեղ թաղեցին:

Յուղարկավորություն. Ուստան գնաց գերեզմանատուն. ճառ չեղավ. լռությամբ թաղեցին: Էկան քաղաք, ժողվեցին «Արաուլ» և հոգու թասը խմեցին: Այստեղ խոսքեր:

2. <ՈՒՍՏԱՆ ՆԱՅՈՒՄ ԷՐ...>

— Ուստան նայում էր Գյումրի տերրորիստի հարձակմանը, գործին, գործողությանը... Երբ կազակի գնդակը դիպավ ահաբեկիչի փորին, Ուստան ո՛ւֆ արձակեց, որպես թե գնդակը իրեն խոցեց:

— Ամառը Շիրակում: Երկինքը աստղերի անհամար թիվ, ճոխություն ու պայծառություն:

— Նկարներով առատ երկիրը: Դաշտերում ծաղիկների և գույների առատություն: Վտակների աղմուկ, և լեռներում լռություն, լռություն, անծայր լռություն:

— Գյուղացիք ներս եկան հետները բերելով դաշտերի և հոտերի հոտն ու խաղաղությունը, օրհնությունը:

— Աղջիկը լուսեղեն հասակով:

— Դեմքը լույսով և կրակով չաղված:

— Նստած դիրքը փոխելով:

— Տխուր էր. նկատեց, որ նրա ձայնի մեջ մի ուրիշ մարդու չունչ կար. ո՛չ Ուստայինը:

— Նրա շարժումների իմաստը ուզեց գտնել:

3. ՏԵՌՈՐԻՍՏԻ ՄԱՀԸ

Գավառապետին սպանողի հետ Ուստան մի-երկու օր առաջ Վռամի սրճարանում քեֆ էր արել ուրիշների հետ միասին:

Երբ տեռորից հետո ծանր վիրավորվեց ու խանութից խանութ փախցրին նրան, վերջը հասցրին մի տուն: Ուստան մի ուրիշի հետ գնաց նրան այցելելու: Պառկեցրած էին մի սենյակի մեջ, բժիշկը վերքը լվանում էր, տղան ցավագին հառաչում էր: Շատ արյուն էր հոսել, քամվել էր խեղճը, և նորից արյուն էր հոսում կողքի վերքից և բերնից:

Ուստան ներս մտավ, նայեց, մղկտաց սիրտը: Երիտասարդը՝ աչքերը խուփ՝ ընկած էր՝ ցավից դիտակցությունը կորցրած... Ներկանները լուռ էին. [արդեն շատ չէին, մի քանի հոգի, գաղտնի էր տեղը, որ ոստիկանությունը չգտնի]: Բժիշկը հեռացրեց նրանց սենյակից: Ուշ երեկոյան բժիշկը հայտնեց հիվանդի անհույս դրությունը. կմեռնի: Եվ գնաց ինքը: Հիվանդը զառանցում էր. «Զարկի, զարկի, մերիկ ջան, ջուր, ջուր, [մեռնում եմ] մեռա, մեռա...»: Ջուր էին լցնում բերանը, բայց արյունի հետ

միասին հետ էր դառնում: Սառույց էին դնում ճակատին, գլխին, և բերանի մեջ կտորներ:

Ջառանցանքը դարձավ միայն բլբլոց, ապա խռռաց, խորդեց. մեկը բռնեց ոտքը և խոսուն հայացքով նայեց Ուստային, սա էլ բռնեց — սառն էին ոտքերը, զարհուրելի ցուրտ. սարսափեց Ուստան... (հոգեվարք էր, ճգնաժամը, առողջ երիտասարդ մարմնի կռիվը մահի հետ... քիթը սրվեց ու սևացավ... արյունը հոսում էր բերանից և կրծքի վրա լերդանում. քիչ հետո՝ հանկարծ աչքերը բացեց մեռնողը, վերջին խռ, մի ուժեղ խորդոց, և լռություն, մահվան լռություն. երիտասարդի աչքերը մնացին բաց՝ սառն, ապակու նման, վարի շրթունքը ձախ անկյունից կախվեց:

Մեռավ. հասկացան ներկաները:

Ուստան լալով գնաց մյուս սենյակը. ավելի սրտապինդները ննջեցյալի ձեռները կրծքին խաչեցին, աչքերը գոցեցին, բերանի մեջ բամբակ դրին, մինչև արյունի ցամաքումը:

Ուստան նորից ներս եկավ, «Հայր մերը» ասաց, համբուրեց ճակատը, անվերջ կրկնելով վերև ասածը. «Ադիզ տղա, լուսս քոռնար, ազդի մատաղ, վայ քու մորը, երնեկ քու մորը...»:

Սնարին վառած մոմ դրին, ապա հավաքվեցին լուռ մյուս սենյակում. անխոս ծերունիներ ու ամեն մեկը իր ներսը խորհում <էր>. Ուստայի վրա խորունկ ազդեցություն թողեց. մտածում էր աշխարհի ունայնության մասին. «Երեկ կտրիճ, քաջ, էսօր...»:

Ոստիկանությունից խուսափելու համար դիշերով մարմինը տեղափոխեցին մոտիկ Խլի-Ղարաքիլիսա գյուղը. այնտեղ թաղեցին: Ուստան էլ գնաց թաղմանը, ծախսեր արավ, տերտերին, տիրացուներին տվավ: Վերադար-

ձին՝ թաղումից հետո, իրեն թեթևացած զգաց. հավաքվեցին Վռամի սրճարանում, խմեցին նրա հոգու թասը, հետո երաժշտություն հնչեց, տխուր երգեր, ննջեցյալի սիրած երգերը նվագեցին: Նրա տեղը բաց թողին՝ մի աթոռ, հացի վրա, իբրու թե նա է, գինի լցրին...

— Թումանի խմբի կոտորածի պատկերը... զարհուրանք, դժոխք, ուսւսի և թուրքի դեմ հայհոյանք, սպառնալիք: Վաղոյի մասին. նրա գործերը՝ բերդի պահեստը կողոպտելը, ինքը գիշերը այնտեղ էր քնել, վրան կողպ: Երգեր, քեֆ:

— Ռումբի գործարանը պայթեց, երկու տղա կտոր-կտոր եղան: Թաղում՝ լուռ ու մունջ. հետո սրճարանում: Սուգ. խորհրդածություններ. հայ ազգի վիճակը: Ռուս-թուրք եղբայրակցությունը...

4. ԵՐԲ ԹԱՂՈՒՄ ԵՆ ԱՀԱԲԵԿԻՋԻՆ

Գերեզմանը՝ դագաղը իջեցնելիս, [մեռելի] դագաղը [ծռվեց] թեքվեց, մեռելի մոմի պես դեղնած [գլուխը ծռվեց բարձերի բարձի վրա] ճակատը [մի չոր աղմուկով դիպավ] ուժով առավ տախտակին, մի չոր աղմուկով. այդ չոր աղմուկը ծակեց Ուստայի սիրտը, մղկատաց, և աչքերը լցվեցին նորից. խորունկ ցավ զգաց [որ այսպիսի մի կտրիճ տղա այնքան անզոր է, որ] այս կտրիճ տղայի կսկծալի անզորության վրա:

Խորունկ ցավ զգաց տեսնելով կտրիճ տղայի այս կսկծալի անզորությունը...

<ՈՒՍՏԱ ՍՀԱԿԸ>

1. ՈՒՍՏԱ ՍՀԱԿԸ

— Ուստա Սհակը, նշանավոր վարպետ, ոսկերիչ, արդեն չա՛տ ծերացած, բայց զվարթ, կենսուրախ մարդ. խմող, հարբեցող: Նա ասում է, որ՝ լավ աշուղը խմող կլինի (ժողովրդի խոսք) և էլ լավ վարպետը:

2. ԳՑՈՒՄՐԻ. ԾԵՐՈՒՆԻՆ. ՍՀԱԿԸ

— Երբ ծերանաս, բարով, ուրիշները քեզի պիտի նայեն. վրադ պիտի խղճան, թե մեռնելու դուռն է հասել, բայց դու հեչ մտքովդ մեռնել չի անցնի: Էդպես է մեր սիրտը. մահ չի ուզենա ու չի տեսնի:

3. ԾԵՐՈՒԹՑԱՆ ՀԱՐՑԸ

Նպատակս է ցույց տալ, թե ծերությունը այնքան սարսափելի չի զգացվում ծերերի կողմից. նրանց կողմից, որոնք արդեն ծերության մեջ են, քան թե նրանցից հեռու կանգնածներին, երիտասարդներին: Մարդ օրեցօր է, վայրկյանե վայրկյան, կաթիլ-կաթիլ է ծերանում, և ծերացողը չի զգում, չի տեսնում, որ ծերանում է և անզգալիորեն վարժվում է:

Մերերը տեսնում են ուրիշի ծերությունը և վախենում են, բայց իրենցը չեն տեսնում:

Մարդ քանի դեռ բաղձանքներ ունի, հույսեր, կրքեր և երազներ, տակավին ծերացած չէ, իսկ միայն զառամած, նորից երեխայացած հասակում զուրկ է ցանկություններից, երազից, բաղձանքներից:

Ծերը չի տեսնում, չի կարող տեսնել իրականությունը, իր ապրելու բաղձանքը ստեղծում է պատրանքային, երազային իրականություն – պատրանք, երևակայություն, այնտեղ է ապաստանում ծերի հոգին և ինքնախաբվում, մխիթարվում: Մերերը թեև գիտնալով, որ ծերացել են, մոտեցել են գերեզմանին, բայց զգացումով չեն հավատում, չեն զգում: Եվ զարմանալին այն է, որ օրեցօր ներքուստ, ներքին հավատով, ավելի [են հեռանում] հեռու են զգում իրենց՝ մահից: Խուսափում են խոսել մահի, մտածել մահի մասին: Ապրելու անպարտելի տենչից վախենում են երևակայել մահը: Վիրավորվում են, որ իրենց ուրիշները ծեր են ասում, որովհետև դա վկայություն է, եթե իրենք ասում են, խոստովանում են իրենց ծերությունը, այդ անկեղծ չէ. ձև է ասելու. «Մի ոտքս գերեզմանի մեջն է» լոկ դարձվածք է խոսքի. [չհավատալ] չի հավատում իրականությանը, բովանդակություն չունի այդ խոսքը: Որովհետև ծերի հավատալը չի գալիս, թե այդպես է: Մահի հանդեպ մարդ անկեղծ չէ:

Ապրելու բաղձանքը այնքան ուժեղ է, որ մոռացնել է տալիս մահի իրողությունը, հնարավորությունը:

Մարդու մեջ ապրելու անհաղթելի բնազդը, տենչը անդադար ստեղծում է մեր մեջ զվարթ, ապրող տրամադրություն, հուսալից: Ստեղծում է մեր չուրջը ապրեցնող մթնոլորտ, չարունակ հեռացնում է մահի ուրվականը,

աքողում է մեր տեսությունից, խաբում է մեզ, ստում է, ներքնապես համոզելով, որ դեռ չա՛տ մեծ չես, քեզնից մեծերը ապրում են, դեռ դու առողջ ես, դու ուշ կծերանաս, կամ չես ծերանա, դու՝ բացառություն ես, եթե ծերանաս էլ, ծերերի պես չես ծերանա:

Առհասարակ թե հիվանդների թե ծերերի մեջ հույսը չա՛տ է, և չա՛տ ուժեղ է, առատ է, բնազդն է ստեղծում ապրելու կամքը, lushgefühlը, *վախը...*

Այս մտքերը դնել ծերերի բերանը: Գյումրի, Ուստա Սհակը խոսում է Ուստայի հետ սրճարանում, ինքնասպանության դեպի առիթով:

«Զվախենաս ծերությունից, ծերանաս էլ, ծերացած վախտ էլ քեզ ծեր չես հաշվի. քեզ ջահել կտեսնես, որովհետև սիրտը չի ծերանում: Երիտասարդներն են կարծում թե՝ ծերերը ծերացած են, հալա մեկ ծերերին հարցրու, նրանց սրտի խորքը մտիր, ուրիշ բան կտեսնես: Եթե մարմնի ցավեր չունենաս, ծերությունը հեչ բան է: Մեր մարդը պիտի հարուստ լինի. ես որ լավ փող ունենամ, հանգիստ ապրեմ, կերս, խումս տեղը լինի, հեչ չեմ մեռնի: Մեռնելու մասին հեչ չեմ մտածի, հեչ էդ տեղերը չեմ, իսկի անուն էլ չեմ ուզե լսե: Պիտի լավ ապրել, քեֆով, տղամարդու պես, և երբ օրը գա մեռնելու, նորեն տղամարդու պես, սուս ու փուս մեռնինք: Ես իմ չարած բաներիցս եմ փոշմանել, արածներիցս չեմ փոշմանել: Ինչնից քեզի խրատ: Մահվան մասին պլուստալով անցնելու, հեչ մտածելու չէ: Տո՛, ինչ մտածենք. քանի ողջ եմ, մեռնելու հերն անիծած, երբ որ մեռա, ողջերի հերն անիծած:

Ուստա Կարոն.— Ես էլ էդ մտքին եմ:

Սհակը.— Ապրիս, էդպես էլ գիտեի: Մեկ-մեկ հատ խմենք:

4. ԾԵՐԵՐԻ ՀԱՐՑԸ

Նպատակս այս է. ցույց տալ, որ ծերությունը այնքան սարսափելի չէ ծերերի համար, նրանց համար, որոնք ծերության մեջն են, քան դեռ նրանից հեռուներին, երիտասարդներին: [Երեկվա տղեն եմ]:

Մարդ օրեցօր, վայրկյանե վայրկյան, կաթիլ-կաթիլ է ծերանում, և չի զգում, չի տեսնում, և վերջիվերջո վարժվում է:

Ծերը տեսնում է ուրիշի ծերությունը և վախենում, իրենը չի տեսնում:

Մարդ քանի դեռ բաղձանքներ ունի, հույսեր, կրքեր, ուրեմն և երազներ, տակավին ծերացած չէ. իսկ միայն զառամյալ, երեխայացած հասակում զուրկ է ցանկությունից, երազից, բաղձանքներից:

Ծերը չի տեսնում, չի կարող տեսնել իրականությունը. իր ապրելու բաղձանքը ստեղծում է պատրանքային, երազական իրականություն — պատրանք, իրականություն, մխիթարություն:

Ծերերը գիտնալով, որ ծերացել են, մոտեցել են գերեզմանին, բայց զգացումով չեն հավատում և օրեցօր ավելի հեռու են զգում իրենց մահից. խուսափում են խոսել, մտածել մահի մասին: Ապրելու տենչից վախենում են մտածել մահի մասին:

Ապրելու բաղձանքը ուժեղ է, մոռացնել է տալիս մահը:

Խոսում են երբեմն, թե մի ոտքս գերեզմանն է, բայց այդ անկեղծ չէ: Չհավատաս:

Մահի հանդեպ մարդ անկեղծ չէ:

Մարդու մեջ ապրելու անհաղթելի բնազդը, տենչը անդադար ստեղծում է մեր մեջ զվարթ, ապրող տրամադրու-

թյուն, հուսալից, ստեղծում է մեր շուրջը ապրեցնող մթնոլորտ, չարունակ հեռացնում է մահի ուրվականը, աքողում է մեր տեսությունից, խաբում է մեզ, ստում է, ներքնապես համոզելով, որ դեռ չա՛տ մեծ չես, քեզնից մեծերը ապրում են, դու առողջ ես, դու ուշ կծերանաս, չես ծերանա, դու բացառություն ես, ծերանաս էլ, ծերերի պես չես ծերանա:

Այս մտքերը դնել ծերերի բերանը, և Գյումրի մի ծեր վարպետ խոսում է Ուստայի հետ:

«Զվախենաս ծերությունից. ծերանաս էլ, քեզ ծեր չես հաչվի. սիրտդ չահելության պես է: Եթե ցավեր չունենաս մարմնի, ծերությունը հեչ, հեչ բան է:

Ես վող ունենամ, լավ վող, հանգիստ ապրեմ, կերս, խումս տեղը, չեմ մեռնի: Մեռնելու մասին հեչ չեմ մտածե. հեչ էդ տեղերը չեմ. ի՛նչ մտածես, քանի ողջ եմ, մեռնելների հերն անիծած, երբոր մեռա, ողջերի հերն անիծած»:

Այս զրույցը տեղի է ունենում ինքնասպանության առիթով: Ցիմար էր, որ իրեն սպանեց, իրեն պես, իրեն վիճակի պես, քիչ մարդ կա: Էնքան թշվառներ կան, հույսը չպիտի կորցնել, թեև նա <անընթ.>ությամբ սպանեց իրեն (<անընթ.> նրանց համար). բայց խոսում են առհասարակ ինքնասպանության պատճառների մասին:

Պետք չէ հուսահատվել, միշտ կփոխվի մարդու վիճակը, գեչն ու լավը քույր-աղբերներ են:

5. <ՄԻ ԾԵՐՈՒՆԻ...>

Մի ծերունի, Գյումրի, ասում էր.

— Ես իսկի չեմ ուզում մտածի մեռնելու վրա. չեմ ուզի մտքովս անցնիլ. անունը չեմ ուզում լսի: Ուրիշ բան խոսեք, ուրիշ բան ըսեք:

6. <ՄԻ ԾԵՐ ԱՍՈՒՄ Է...>

Մի ծեր ասում էր — Գիտեմ, որ մեկ ոտքս գերեզմանում է, բայց հավաստս չի գա. գիտես թե — սուտ է: Ու իսկի չեմ էլ ուզե դրա վրա մտածե. երբ կմտածեմ, մի վայրկյան, մեկ էլ ինձ կտեսնեմ ուրիշ մտքի վրա, մեկ ուրախ, պայծառ մտքի վրա:

<ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ>

1. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Տեսավ մի երեկո մի կատվի ձագ անտեր մլավում էր, անվերջ. աղիողորմ մլավում էր փողոցում. փոքրիկ մի ձագ. նայեց. խղճաց. ուզեց վերցնել հետը, գեղ տանել: Բայց դժվար էր: Մի երկու ժամ — երեք ժամ թափառեցավ, հետո եկավ տեսավ, ձագը նորից մլավում էր: Ժամերով կատվի ձագը ականջումն էր: Վերցրեց տարավ տվեց Վռամ աղբորը, թե պահիր, մեծացրո՛ւ, Աստծու սիրուն:

2. ԱՆԻԾ ՀԵՏՈ

Գյումրի գնալուս ձիերը հանձնում է Թաթոսին՝ պատվիրելով, որ մի շաբաթ հետո այսինչ օրը ձիերը մարդու հետ ղրկել Արագած կայարանը:

Գյումրի չի գնում հնչակյանների ժողովին:

Ջուր խմեց խոսավ, կլինի դաշնակցական Բյուրոյի մարդու ժամանակ, Ուստան մի մասը ճառի լսեց, չատ բան չհասկացավ, աչքը ընկավ մի պատկերի վրա, հարցուց, Մայր Հայաստանը. նստած տխուր, ձեռքը ծնոտին՝ ավերակների մեջ. այդ մտագրավ դրությունից հանեց նրան որոտալի ծափահարությունը:

3. ԳՑՈՒՄՐԻ

Երբ նվագում են փողերի վրա, փողերով (դյուդուկները) արևելյան եղանակներ, մի երիտասարդ, հարբած, ձեռքը զարկեց սեղանին և բարձր ասաց.

— Հոգուցս ավելի սիրում եմ մեր դյուդուկը — երգը. ատում եմ եվրոպական եղանակները և գործիքները. ձեռքես գա՝ աչխարքիս երեսից կջնջեմ էդ գործիքներն ու եղանակները:

4. ԳՑՈՒՄՐԻ

Ուստան Գյումրի, մի սրճարանում կամ Վռամի ճաշարանում պատահեց մի հարբած մարդու, որ խմում էր և խոսում և ուղղակի լաց լինում: Նա ասում էր.

— Կորած է հայ ազգը, թագավոր չունի, զորավար չունի, բերդ չունի, ռուս է դառնում, թուրք է դառնում, լեզուն մեռնում է. վայ մեզ, վայ մեզ... վա՛յ մեր բախտին...

Ուր է մեր շքեղ Անին, ուր են մեր Դվինը, Արտաշատը, Արմավիրը...

Վայրենի թուրքերը՝ ճիպոտներով եկան, անգրագետ, գազան, եկան ավերեցին մեր լույսի տաճարները, քաղաքները, կուլտուրան, անտառները, ջրանցքները, հավիտենական գեղեցկության կոթողները...

Վա՛յ մեզ, վա՛յ մեզ...

Թուրքը սպանում է, ռուսը խեղդում է, քուրդը մորթում է, գերմանացին, անգլիացին, ֆրանսիացին զենք են տալիս թուրքին... փող են տալիս... վա՛յ, վա՛յ, վա՛յ, լա՛ց, լա՛ց, այ իմ սև գլուխ...

5. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԳՅՈՒՄՐԻ

— Ռուս բանվոր, մուզիկան:

Ուստայի փափագը:

— Ուստան և բանվորական դործը, պայքարը, սոցիալիզմը:

— Գյումրեցի ծերերի խոսքեր —

Ռուսի հոգին մեունիմ,
Թուրը կտրուկ պահե,
Թուրքի գլխից անպակաս պահե:

— Թե մարդը կարողացավ լու չինել, մարդ էլ կչինե:
Թե կարողացավ մի պստիկ տերև չինել, ֆիլ էլ կչինե:

— Անի: Ինչ ռուսական ռեժիմ էլ որ լինի, հայը նրա ամենահավատարիմ հպատակն է լինելու, անկեղծ հպատակը:

— Գյումրի: Մեկը լոթիներից ասում է Ուստային.
— Ուստա ջան, քանի ես սաղ եմ, դու դարդ մի արա:

— Ծայտոնները, ձիերը ծաղիկներով և գույնզգույն թաշկինակներով, ժապավեններով զարդարված, քեֆերին: Ուստային չատ և չատ հաճելի թվաց:

– Բեռ տանելու գրազը Ուստայի հետ:

– Բլուրի վրա էր նստում և հյուր կանչում:

6. ԳՑՈՒՄՐԻ՝ ՔԵՖԻՆ

– Բուտիլկաների բերանը ծաղիկներ, կանաչիներ դրին քեֆ անող լոթիները:

– Բաժակը (գինու) պարպում էին, շուռ էին տալիս, և տակը համբուրում, դնում վար:

– Լցրած բաժակները գլխի վրա դնում, ճակատներին դնում, տակը համբուրում և խմում:

– Քեֆի առավոտին, լուսաբացին փողերով «Առավոտ լուսին» երգեցին:

– Տո, շուտ արա խմե, կամ խոսի, ես պառվցա:

– Տո, արի է՛, հոգուդ մեռնիմ, արի՛, ես պառվցա:

– Երգում էին Գյումրիում.

Ա՛խ, մատը քեզնից, մատնիքը ինձնից,
Ա՛խ, թուշը քեզնից, պաչերը ինձնից:

7. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԳՑՈՒՄՐՈՒՄ

– Վռամի եղբոր՝ Համբիկի մահը.

Վռամը վշտից սկսեց խմել պարտեզում, ուր Համբիկի համար վրան էր զարկել, որպեսզի նա ապրի և մաքուր օդում բուժվի, խմում էր, հարբում, բավական երկար ժամանակ, և հայհոյում էր Աստծուն, Աստծու անարդար, անգութ վարմունքի համար:

— Մկրտումովենց տղան, որ (18-19 տարեկան) ուզում էր Հայաստան գնալ, խմբին միանալ, հորից ու մորից ծածուկ, փախչում է: Այսպես է լինում. մի խանութի առաջ կապած մի դյուղացու ձին (ծածուկ տեղ, բակում կապած) հեծնում է ու քշում, գնում է Կարս: Այդ մասին խոսում են քաղաքում, ոմանք մեղադրելով, ոմանք գովելով. Ուստան հիացած էր, և ցավում էր, որ իր խմբի մեջ չպիտի լինի: Ա՛յ, էդպես տղեք են պետք ինձի:

8. ԳՑՈՒՄՐԻ

Փուռի հոտը՝ հացի, լոբու, չանախի: Հացերի տեսակը — յավան, չյորեք, մատնքաչ: Յաղլի, թավա, քյալլա՝ ոչխարի գլուխ, չանախ:

Միկիտաններից՝ արաղի հոտ, գինու հոտ, տկի հոտ:

Ղայֆա, սրճարան: Սուրճի հոտ, ծխախոտի հոտ, նարդիլեի կկլոց: Ծանրախոհ ծերեր, թազբեքը ձեռքին՝ չխկչխկ:

Արհեստավորների շարքը — փողոցները՝ դյուրկրնոց՝ փայտի, տաշեղի հոտ. դեմիրչնոց, կրակ, փուքս, կայծեր, դարբինների հևոց:

Մասչի — կաշիի հոտ:

Ղամենքի տակը — կանաչեղեննները, յուղ, պանիր, ալյուր: Միրգ: Ընդեղեններ:

Բանջարեղեններ — սոխ, գազար, կաղամբ:

Ծուրղուններ, արաբաներ, ձի, էշ, եզ, գոմեշ, ոչխար, այծ:

— Այծերը միշտ բարձրերում, քարերի վրա, ժայռերի վրա...

– Ավերակ տան կմախքները:

– Եզները լարել են իրենց մկանները՝ ծանր սայլերը գառիվերով տանելու, գյուղացիների հայհոյանքների և ճիպոտների հարվածների տակ:

Կանգ առավ սայլը, եզները չեն կարող շարժել: Գյուղացիները սկսեցին սայլի հետևից քշել, հրել...

Եզները հնազանդվել են իրենց ճակատագրին, դարեդարով հարմարվել են, երևի բողոքել են և լռել, մի կտոր խոտի և գոմի համար:

9. <ՊԱՅԾԱՌ ՃԱԿԱՏՈՎ...>

– Պայծառ ճակատով քայլիր քո ուղին, որ և մեր ուղին է լինելու:

– Այդ փորձից, գործից, սիրուց, կռվից – մենք դուրս եկանք արյունաթաթախ:

– Ուստան և Ջավուշը Գյումրի.

Ջավուշը տեսնելով, որ փողոցներում անվերջ կիներ գնում են, գալիս են, շտապ, շտապ.

– Ուստա, տեսնես էս հարսները էսպես վռազ ուր կերթան, ուրտից կուգան:

– Պարզ բան է. մարդու գրկե կուգան, մարդու գիրկ կերթան. կնկա գործն էդ է:

10. <ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉԸ...>

Ս. Փրկիչը շինել են Ուստա Պապոն և Ուստա Թաթոս Անտիկյանը:

11. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ

Երբ նրա մոտ լոպպազ մարդ պատմություններ է անում, հիբերբոլիկ, (օրինակ՝ Ղազար աղան կամ Խաչավոր Ադամը...) գյուղացիք նրա հետևից ասում են, թե «Փչան է, լավ փչեց»: Ուստան այդպիսիներին պաշտպանելով ասում է.

— Ինչի՞ է փչում, դուք չեք կրնա քաջություն անել, գիտեք թե ուրիշնե՞րն էլ չեն կարող անել. ձեր վրա եք հաշվում, ձեզնով եք չափում ուրիշին, թե փչում է:

— Այս գործի գեղարվեստական կշիռքը քիչ է,
— Նա կշռում է, թե ո՞ր կողմն անցնի:

12. <ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԲԱՑԻ...>

— Գյումրիում բացի քեֆերից, հարգանքներից, առաջ բերել մի-երկու ժուլիկ, խաբեբա, հացկատակ մարդիկ, որոնք խաբում են Ուստային, փող շորթելու համար, գովում են, կեղծավորվում՝ ուտելու հետը: Կեղծ 10-նոց ռուբլի են տալիս, մի հատ և այլն:

— Ուստան. մարդը մարդու համար եղբայր պիտի լինի, քույր, ընկեր, Աստված պիտի լինի, իրար սիրեն, օգնեն, ձեռք բռնեն, ծաղկեցնեն:

— Ամեն ազգի մեջ գեշ մարդ էլ կա, լավ մարդ էլ կա, բարի մարդ էլ կա, չար մարդ էլ կա, կեղծ, խորամանկ էլ կա, ազնիվ էլ կա. բայց Թուրքի մեջ չար մարդը շատ է, Ջհուդի մեջ՝ կեղծ, խորամանկը շատ է:

13. ՄԵՌԵԼԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Ուստա Կարոն նստել էր սրճարանում, ներս մտան երկու արհեստավոր երիտասարդներ՝ մեկի ձեռին մի մեծ թաշկինակ էր, որի մեջ դրամներ կային լցված, թուղթ ու արծաթ: Մոտացան Ուստային և մյուսներին.

— Ղարիբ մեռել ենք վերցնում. Աստված սիրողը թող տա:

Եվ ներկանները փող ձգեցին թաշկինակի մեջ. Ուստան երկու արծաթ ռուբլի ձգեց: Դագաղի, քահանաների և թաղման այլ ծախքերի համար:

Մյուս օրը գրեթե նույն ժամին փողոցով անցնում էին երիտասարդ արհեստավորներ և ձայնում.

— Խանութները փակեք, չափանակները իջեցրեք, ննջեցյալ են բերում:

Մի վայրկյանի մեջ սկսեցին արագությամբ խանութները փակել և դռների առաջ կանգնել: Բերին ննջեցյալը, ղարիբ մեռելը, բոլորը գլուխները բացին: Թափորը առաջ էր գնում ծանրաքայլ, քահանաները երգում էին, հետզհետե թափորի ընթացքին խանութները փակվում էին, և հուղարկավորների թիվը բազմապատկվում էր: Մեռելին տանում էին ուսերի վրա դրած:

Ուստան, Ջավուշը միացան հուղարկավորներին:

Ուստան հարցրեց իր կողքից գնացողներին.

— Ի՞նչ մարդ է ննջեցյալը, ո՞վ է:

Պատասխանեցին.— Ջգիտենք, ղարիբ մարդ էր, եկել էր մեր քաղաքը, հիվանդացել էր, ու խանի մի անկյունում մեռել, ճանչողներ չունի: Մեր քաղաքի հին սովորությունն է — ղարիբին, աղքատին պատվով թաղել: Մենք աղքատին ավելի հանդիսավոր ենք թաղում, քան քաղա-

քի հարուստ, երևելի մարդկանց: Աստծու ընդունակ գործ է:

Մեկն ավելացրեց.— Աղքատ մարդը կյանքում, աշխարքի մեջ շատ է տանջվել. մեկ օր ունի, որ իրենն է — իր մեռած օրը. թող աշխարքը նրան լավ թաղելով՝ իր մեղքերը քավե, թող էնոր հոգին մի օր էս աշխարքում ուրախանա, խնդա: Թող մի օր ամեն մարդ՝ հարուստ թե հասարակ՝ գլուխը բանա էնոր առաջ. մարդ էր, եկավ գնաց, մենք մեր պարտքը կատարեցինք. խնդրեցինք՝ Աստված լուսավորե էնոր հոգին. բարեխոսեցինք: Մեղավոր է, անմեղ է, մեր գործը չէ — ղարիբ մարդ է. թող Աստված էնոր հաշիվը տեսնի: Ասենք՝ Աստված լուսավորե հոգին:

Ուստան կրկնեց — Աստված լուսավորե հոգին:

Ուստան գնաց մինչև գերեզմանատուն: Ճանապարհին մարդիկ փիլիսոփայություն էին անում, խոսում անցավոր աշխարքի մասին, էսօր կաս, էգուց չկաս, երեկ կար, էսօր չկա, բարությունն է մնում, լավություն արա:

Մեռելին իջեցրին գերեզման. ամեն մարդ մի բուռն օրհնած հող լցրեց նրա երեսին. ծածկեցին գերեզմանը: Ոչ ոք չկար մեռելի գլխի վերևը իբրև տեր, սգավոր: Ամեն մարդ էր տեր ու սգավոր. ամեն մարդ իրար ձեռք տվեց ասելով — Աստուծով մխիթարվիս, Աստված ողորմած էղնի ննջեցյալի հոգուն: Եվ ետ դարձան:

14. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ

— Արդար դատաստան պիտի էնեմ, կտրեմ,— ասում է Ուստան:

— Վարպետ, արդարությամբ մի դատի, այլ գթությամբ,— ասում է տիրացու Հովակը:

Մեկը մեռնում է, թաղումն է: Սրճարանում մեկը ասում է.

— Ծնվավ, ապրեց/ապրավ, մեռավ. ընչի՞ եկավ, ընչի՞ գնաց. էսօր կհիշենք. ծանոթները քանի կան՝ կհիշեն. էսոնք էլ որ մեռնին, էլ մարդ չի մնա, որ հիշե. գերեզմանն էլ հողին կհավասարվի, անունն էլ հետը: Ենպես կըլնի, որ աչխարքի մեջ ասես թե էս մարդը ո՛չ եղել է, ո՛չ էլ բան. ինչպես որ մի ճանճ, մի մժեղ, միլիոն, միլիոնների մեջ. բայց ինքը որ ողջ էր, մեր ամենքի պես, էնպես գիտեր, որ ինքն է որ կա, աչխարքը իրեն համար է... Արի մի խնդա, ծիծաղի մարդու վրա...

Ուստան ասաց.

— Էդպես է. չիտակ է. բայց մարդ պիտի գործ տեսնի, անմահ անուն թողնե, որ միչտ հիչվի...

Ասող գյումրեցին ասաց.

— Էդ էլ վրես գրե. դարտակ բան է աչխարքը, անունն էլ, գործն էլ. քեֆ արա, քանի ողջ ես:

15. <ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԻՐ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ...>

— Ուստա կարոն իր ժամացույցի վրա ունեցած հավատը իրապես բղխում է նրանից, որ տարիներ առաջ լինում է էջմիածին...

— Բագրան կամ Գյումրի. մեկը ասում է — եթե հայ ժողովուրդը պիտի վերանա, սպանվի, ջնջվի թուրքի ու ռու-

սի կողմից, եվրոպական քաղաքակրթության մարդկության <անընթ.>, կամ անտարբերությամբ — թող ամբողջ աշխարքն էլ, ողջ մարդկությունն էլ — ոչնչանա. թքել եմ աշխարքի վրա, մարդկության վրան. ասել է, որ Աստված, փրկություն չկա և եթե կա Աստված — փրկություն և սոցիալիզմ՝ ու մեզ ջնջում են — թքել եմ նրանց վրա էլ:

16. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ

Գյումրի տեսավ մի լավ հագնված մարդ, գլուխը վեր բռնած, աչքերը կիսափակ, քիթը ցցած, հանդարտ գնում էր՝ առանց չուրջը նայելու, առանց մարդկանց նայելու, կարծես, չէր տեսնում: Խանութների դռների առջև նստած մարդկանցից ոմանք ոտի էին կանգնում, խոնարհ բարևում, հազիվ բարև էր առնում նա, հանդիպող անցորդները թեքվում, ճամբա էին տալիս նրան, դեպի պատերը քշվում...

— Ով է էս մարդը,— հարցրեց Ուստան:

— Մեր քաղաքի հարուստ մարդկանցից, աղաներից մեկն է,— պատասխանեցին:

— Ես դիտեի, թե քաղքի ստեղծողն է, տո, [ինչ] էս ինչ փառք ի բարձում է:

— Գռուփ-գրփողի մեկն է,— ասաց մեկ ուրիշը...

17. ՎՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(վեպի մեջ)

Վրացիները ճրիակեր մարդիկ են. խորունկ չեն, բայց մեծամիտ են և ամբարտավան, հանդուգն, բայց ոչ քաջ,

թեթևամիտ են (..... տուր գինի, կնիկն առ, հետը քնի):

Հայն է չինել նրա տունը:

Վրացին ապրում է հայի, ռուսի [ճաշ] հացով: Թուրքը թշնամի է, որ գիտենք, հայտնի է. վրացին էլ թուրքի հետ հայի թշնամին է:

[Ամեն թուրք էլ վրա...]

Վրացին էլ թուրքի պես կարծում է՝ թե ամեն մարդ իրեն համար պիտի աշխատե:

Վրացու համար է ասած՝ թե ավելի լավ է մի մատ [խելք] բախտ ունենաս, քան մի կարաս խելք:

— Վրացին քաջ է կռվից առաջ և կռվից հետո:

Այս մտքերը դնել Գյումրվա գլխում, և այլուր:

18. <ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՄԱՆՍՈՒՐ ԱՂԱՑԻ...>

Ամեն անգամ Մանսուր աղայի անունը տալուս ասում է՝ Աստված բանն աչողե, ականջը խոսի, լավ մարդ էր:

— Երբ Գյումրի լսեց թե, ժողովը ժամը 7-ին է, ուրեմն ժամը 9-ին, երբ 9-ը եկավ՝ նայեց ժամացույցին... այս անգամ միայն տարիների մեջ առաջին անգամ պետք եկավ ժամացույցը:

19. <ՀԻՆ ՄՈՒՍԱ ԲԵԿԸ...>

— Հին Մուսա բեկը (բեգը) 1915 թվին ասել է՝ Մուշի դաշտում ոչ մի հայ չպիտի թողնեմ ոտքի վրա կանգնած:

— Իսկ նույն տարին Մուշում Ըռզակը դավուլ-զուռնայի նվագի տակ ջարդում էր հայերին:

20. ՈՒՏԱՆ ԳՑՈՒՄՐԻ

Պարտեզում կամ այլուր լսում է.
«Դաշնակցության սոցիալիզմը վրաս գրե» —

21. ԳՑՈՒՄՐԻ

Ես էս տղոց հետ (քեֆին) 10 հատ Հայաստան լինի էլ կազատեմ:

Ինչդ կծռվի, թե որ ինձ էս լավությունն անես:

Կերկոխ եղավ:
Խոսքակոխ արի:
Նշմարով բան հասկացրի:
Պահած պաղտած ձիս:

22. <ԵՐԲ ԳՑՈՒՄՐԻ...>

Երբ Գյումրի, Ուստան և Ջավուշը նկատեցին, որ իրենց սհաթը 2 ժամ առաջ է, Ջավուշն ասաց.

— Յա՛, էս ինչո՞ւ սխալ է. (սպասում էր, որ քաղաքի սհաթը Ուստայինի հետ խոսեր). Ուստան թե՝ քաղքցոց ո՞ր բանն է չիտակ, որ սհաթները չիտակ, ճշմարիտ լինեն:

23. ԳՅՈՒՄՐԻ

— Եթե կուզես համոզվել, որ աշխարքում սատանա կա, թուղթ խաղա՛:

24. <ԿԱՐՈՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ...>

Կարոն Գյումրի քաղաքում, փառքով օրորված, կենացների տակ, հանկարծ, ինքն էլ չիմացած ինչպես, միտքն ընկավ և զգաց, որ իրեն համար էլ անպատճառ մահ կա, և անպատճառ մի օր պիտի մեռնի: Սուր ցավ զգաց: Մի վայրկյան, միայն: Ապա նորից հոգին պայթեց ուրախությամբ:

25. ԳՅՈՒՄՐԻ

Ուստան լսեց գիշերաշրջիկից.—

— Մարդ արարածն այնքան եսական անասուն է, որ եթե [նրան հարցնեն] պետք եղավ, որ կամ նա պիտի մեռնի, կամ ամբողջ մարդկությունը, նա կասե՝ թող մարդկությունը մեռնի:

— Մարդն այնքան գեչ սիրտ ունի, որ, երբ լսում է մեկի մահը, դա լինի թշնամի թե ամենից սիրած մարդը, ա-

ռաջին վայրկյանին կուրախանա. ակամա, իհարկե, սիրտը կուրախանա. այդպես է սրտի հատկությունը:

Ուստան չհավատաց, բայց վրան գեշ ազդեց: Եվ որոշեց Հարությին չասել:

26. <ՈՒՍՏԱՆ ՀԱՐՑՐԵՑ ԳՅՈՒՄՐԻ...>

Ուստան հարցրեց Գյումրի, թե հնչակյանների ծրագիրն էլ մեր Ս. Ծրագրի պես սուրբ չէ, նրան պատասխանեցին, որ նրանց ծրագիրը թարգմանություն է, սրբությունից շա՛տ հեռու է: Հե՛չ խոսք է: Քամի, դյուդյուկ, դըռ-դըռ: Էնքան պետք է էն, որ ազգից խռովվողները էլ ռուս չեն դառնում, գնում հնչակ են դառնում. ազգի պահպանության համար պետք է:

27. ԳՅՈՒՄՐԻ

Մի հարբած մարդ, իրեն ձի էր կարծում, ու խրխնջում էր, մոտեցողին՝ խածում, զարկում:

Կին ու տղաներն եկան՝ զոռով տարան տուն:

(Նկարագրել):

— Հարբած սալդատներ, գարմոնով ման էին գալիս, և պարում, [չապիկները հանած] հագուստները հանած՝ չապկանց, կրծքերը՝ բաց:

— Մի ռուս եկավ օղի ուզեց և պահանջեց բաժակի հետի կողմն էլ լցնել:

— Ուստան յաղլի կերավ:

28. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻՑ ԳԱԼՈՒՍ

— Քերոբ ջան, ես կըսեմ, թե երկաթե ճամբան, որ եղավ, աչխարքը պզտիկցավ. քարվանն է լավ. քարվանի կտրած յոթն օրը, երկաթե ճամբան մի օրվա մեջ կանցնի, աչքեդ կթռնին սար ու ձոր չեղածի պես, պատկերի պես. լավ չտեսած կչքվին. էնպես կերևա, որ մարդ բան չի տեսել. քարվանով մի տարի ման գաս, ավելի չատ բան կտեսնիս ու կսորվիս, քան երկաթե ճամբով 7 տարի ման գաս. երկաթի ճամբան պետք է վռազ գործի համար. ման գալու համար էշն ավելի հարմար է...

29. <ՋԱՎՈՒՇ ՋԱՆ...>

— Ջավուշ ջան, փառավորվեցինք, փառավորվեցին.— Ուստան ասում է Գյումրի իրենց ցույց տված պատիվների համար:

— Գլուխը կորցրել ես, մազերի համար լաց կուլաս:

30. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԵՑՈՑ ՄԱՍԻՆ

Էնոնց կտրիճները զարմանք բան են,
Բերանները արաղով կօղվեին,
Խորովածը խանչալով կուտեին,
Բեխերը ատրճանակով կչիտկեին:

31. ՈՒՍՏԵՆ ԳՅՈՒՄՐԻ

Գեղացիք սև ու պինդ կըլնին.

Քաղքցիք ճերմակ ու ջրի:

Գեղացի կինը գարե հաց է, բոլ ու դիմա<ց>կուն.

Քաղքցին – ցորնի հաց է, թանգ ու նազուկ:

– Ջավուշը: Ուստա, ինչ տնկոզ են հագնված էս հարսները, էսոնց մարդիկ ինչքան ծախս պիտի տեսնին, որ էսպես հագցնեն:

– Էտոնց հանվեցնելը ավելի թանգ կնստի, քան հագցնելը...

32. ԳՅՈՒՄՐԻ

Մեկն ասում է՝ Սուի-քեզան ուննենայի, ամեն անգլիացու, գերմանացու փորը թափեի, և մեծ ազգերի առհասարակ, որոնք մորթում են փոքր ազգերին:

Ամերիկան ի՞նչ մարդասեր է. նա մարդասիրությյան ռեկլամ է անում, իբրև վաղեմի, հին փորձված ռեկլամիստ:

Գրեթե ոչ մի ազգ զերծ չմնաց հայի արյունը թափելուց – ռուս, գերման, Ավստրիա, մաճառ, ռումեն, բուլգար, հույն, իտալացի, ֆրանսիացի, անգլիացի, ճափոն, Եգիպտոս, Սիրիա:

Վրացի, քուրդ, չերքեզ, չեչեն, ինգուշ, լազ, ավչար, առնավուտ, լազգի, և այլն, և այլն:

33. <ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ ԵՂԱՎ...>

Ուստան Գյումրի եղավ «Ասլան-Բալասի» ներկայացման. ոգևորված էր Աղասիով, տեղից գովքի բառեր էր գոռում, գոռգոռում:

Հասան խանի վրա բարկացավ, հայհոյեց, ուզեց աթոռը նետել դեպի նա: Ջավուշը և մի ուրիշ մարդ (որ հետը տարել էր Ուստային) բռնեցին թևեն:

Ներկայացրած պատկերը նրան իրականի պատրանքը տվեց. նրա երևակայությունը անիրականը դարձրեց իրական...

(Այս դեպքը կպարզե նրա հայրենասիրությունը):

34. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ

Տեսնվեց Մելքոն վարժապետի և կենդանի կազեթի հետ:

Ուզեցավ տեսնել, գնալ Ջաջուռ Տեր-Մրեհին (Մլեհին), իմացավ, որ նա վերջերս մեռել է, չա՛տ ցավեց:

Ջավուշը հիվանդացել էր, փորը: Կանչեցին վարպետ Սիմոնին, որ գիտնակ մարդ է, բժշկություն է անում գյուղերում ու քաղաքում խոնարհ խավերի մեջ: Եկավ, լուրջ մարդ էր, քչախոս, դեղ արեց և գնաց, խոստանալով Ուստային, որ մտադիր է Անի, Տիկոռ, Մրեն, Բագրան գալու, այդ նշանավոր, մեր փառքի կոթողները տեսնելու և հյուր լինելու Ուստայի մոտ:

Բայց չեկավ:

35. ԳՅՈՒՄՐԻ

— Էս մարդը քանի տարեկան կէղնի:

— 50 տարին գտած կէղնի:

— Էղ գտածով չա՛տ բան էլ կորցրած կէղնի,— մեջ մտավ կենդանի Գազեթը:

— Էս աղջիկը չա՛տ է դանդաղ, չեմ առնի:

— Լսել է, մեծ առողջություն ունի, որ էդ տարիքին հասել է:

Տացու-տիրացուի և Ուստայի և վարժապետի խոսքերին՝ ստի մասին, Զավուշը ևս խառնվեց, թե հայրս Ստամբոլից էնպես բաներ կպատմեր, որ մեր գեղացիք չէին հավատա, բայց հաստատ բաներ էին, Ստամբոլեն եկողները կհաստատեին. ինչ որ մեկ մարդ չի տեսել, չի նշանակում, թե ուրիշն էլ չի տեսել. մեր երկրի քուրդի համար, որ սարերի գլուխը կապրի՝ երկաթե ճամբա, թելեգրաֆ, կարի մեքենա... սուտ բաներ են:

36. ԳՅՈՒՄՐԻ

Ուստան Գյումրի եղած ժամանակ նայեց հյուսիս, իրենց գյուղի լեռներն երևում էին. աչքերը լցվեց արցունքով. առաջին ցանկությունը եղավ, գնալ գյուղ, ծնողների գերեզմանը տեսնել, օրհնել, համբուրել... բայց երկրորդ միտքը եկավ, փոխեց. ուխտել էր գյուղը չերթալ այնքան ժամանակ, որ մեծ մարդ չի դարձել, անունը աշխարքով չի եղել և իրեն գյուղն էլ չի արժանացնել. ուխտել էր երևալ գյուղում անունով, լուսապսակով, երևալ մի քանի օր և իրեն ցույց տալ և հեռանալ: Հիմա ինչպես գնա, ինչ եղավ, որ գնա, դրամ չունի, հարստություն <չ>ունի, աշխարքի մեջ մեծ անուն չունի. հիմա նա լոկ արհեստավոր է և աշխարհ տեսած մարդ,— ուրիշ ոչինչ: Այ, եթե Հայաստան գնա, մեծ գործեր տեսնի, անունը

կհռչակվի, ավելի մեծ, քան Սերոբ փաշայի և Անդրանիկի, հետո երթա առուվ-փառուվ իր ծնած գյուղը:

Եվ աչքերը սրբեց. գնաց Ս. Աստվածածին ժամը, երկու մեծ մոմ վառեց մոր և հոր հիշատակին, և առատ խաչհամբույր նետեց գանձանակի մեջ:

(Թող որ նա գյուղում, ամեն մեռելոցին անտեր գերեզմանների վրա հոգեհանդիստ էր կատարել տալիս տերտերին իր տղաների հիշատակին, հաճախ մատաղ էր անում հանուն նպատակի և տարին մի անգամ պատարագ ու սեղան նրանց հիշատակին):

37. ԳՑՈՒՄՐԻ

Սրճարանի առջև նստել խոսում էին, կարևոր, քաղաքական հարցեր, մի կին անցավ: Կենդանի Գազեթը, խոսքը կտրեց, ասելով.

— Ի՞նչ սիրուն, համով կնիկ է, տո՛:

— Տեսնենք մեկ, թյութունդ լա՞վն է:

— Ուստան չա՛տ հաճախ, մենակ չճաչելու համար, մարդ է ղրկում մի որևէ բարեկամի, սանահոր հացի, խոսքընկեր կանչում:

— Ուստան ասում է թե, ճամբան խոսքի պես բան է: Ինչպես որ խոսքը խոսք կբերե, ու չի գիտնա թե ուրտե-

ղեն ուր ելար. Թագավորի խոսքը կենես, վերջը Զուղուլենց կաղ հավի վրա կկայնիս, էնպես էլ, գեղեդ ելնելով, մեկ էլ տեսար, Բաղդադ ես...

Խոսքն ու ճամբան, ջրի պես բան են, կերթան ու կերթան...

— «Ազգն նետողաց» — խմողների կամ լոպլազների խումբ, ցեղ, տուն: Կենդանի Գազեթի ժարգոնը:

— Էշը իշուն Ղարաբաղի մեջ կհանդիպին: Գողը գողին՝ Ախալցխում, բոզը բոզին՝ Թիֆլիզում:

Երբ երկու նմաններ իրար հայրենակից են, կամ իրար հետ ընկերակցում են. դավադրություն: Իրար գտնել [լավ կամ դեշ իմաստով, բայց ավելի] դեշ իմաստով: Քաքը քաքին Սվազի մեջ կհանդիպին կամ, ուղղակի զարմացք է հայտնում, թե բոզը բոզին Թիֆլիզ կհանդիպին, ապա Գյումրի ինչ գործ ունին:

— Լավ մարմնակազմ ունի: Հզոր իմացական կարողություններ ունի:

— Այս զրույցն էր չրջան առնում, այս բամբասը, զրպարտությունը:

38. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ

Արաուլի ճաշարանը. ուզում են ճաշել Ուստան և Զավուշը: Սպասավորը ճերմակ աղտոտված գոգնոց հագած, ուսին գունավոր սրբիչ ձգած՝ մոտեցավ սեղանին և [առանց] մի չունչով ասաց.

— Ունինք լավ բորչ, մենճ գլուխ քյուֆթա, ուտես [քեֆդ գա] բերանդ համ տա. հավով փլավ, չուտողի

տուն՝ը գլխին բլավ, գառի խորոված [վայ չուտողաց] հոտն աշխարք բռնած, վա՛յ չուտողաց, վա՛յ չուտողաց... չուտողաց:

39. ԳՅՈՒՄՐԻ

— Մեկ գեչ կնիկ կա աշխարքի վրա.— էդ իրեն կնիկն է:

— Կնիկները մնաս բարև ասելուց ետև է, որ խոսքի կնստին:

— Կնկա լացի տակ ծիծաղ կա:

40. ԳՅՈՒՄՐԻ

— Վարպետ,— ասում է Ջավուշը ի տես ռուս զորքին, որ գնում է կռիվ Ճապոնի դեմ,— դու չե՞ս եղել Հոպպոն-ների հողը:

— Ջէ, Ջավուշ ջան, էն բոլորովին դրսի աշխարքի մեջն է, կամ ներսի աշխարքի չա՛տ խորը:

Դրուստ ասած՝ տեղն չգիտեմ, և երթացող ճամբեն էլ:

41. <ԳՅՈՒՄՐԻ, ՈՒԽՏԱՎՈՐ ԿԱՆԱՑՔ...>

— Գյումրի, ուխտավոր կանայք. բերում են իրենց հի-վանդ տղաները Աստվածածնա պատկերի առաջ. հետները մի զույգ ճերմակ աղավնի կամ մի հատ, աղոթում են. ե-րեխային առողջություն աղերսում և աղավնի բաց թող-նում, ասելով. այսպես էլ երեխես ցավը թռնի, երթա, հե-ռանա:

42. ՈՒՏԱ ԿԱՐՈ

Գյումրի:

Լսում էին հայ-գուսանի վիպասքը: Նստել էին մարդիկ, սրճարանում, կամ մի տան մեջ, լսում էին և ծխում, ծխում անվերջ. հետո, կամաց-կամաց, քարացան, անշարժացան, ծուխից կապուտ դարձած օդում ձայն չկար, ուրվհետև շունչերը բռնել էին, միայն գուսանի ձայնն էր հնչում: Եվ այլևս չէին ծխում, ծխախոտները մատների և շրթների վրա հանդչել էր, էլի չէին նորոգում:

43. ԳՅՈՒՄՐԻ

Ջավուշը տեսավ քաղաքում ահագին բազմություն մարդկանց. դարձավ ասաց Ուստային.

— Էս ի՛նչքան մարդ կա աշխարքիս վրա:

— Ու ամեն մեկն էլ մեզի նման են քչեն-շատեն: Ամեն մեկն էլ իրան ավելի արժեք կուտա, քան ուրիշներին.—

Գյումրի, նստել էր սրճարանի առաջ և նայում էր անցուդարձողներին, նկատեց պատահական մի մարդու [Ուստան], բոլորովին անծանոթ, տեսավ, մտածեց.

— Հնչ մաքովս չէր անցնի, թե [էստեսակ] էս մարդը կա — աշխարքիս մեջ:

44. <ԳՅՈՒՄՐԻ. ՄԻ ՄԱՐԴ...>

— Գյումրի. մի մարդ գոտակը դրավ սեղանին ասաց. դու գոտակիս համոզիր, իմ դլխիս հետ հանաք մի արա:

45. ԳՑՈՒՄՐԻ

Երգում էին.

«Ազգուրաց, Աստվածուրաց,
Երկուսը մի խորհուրդ է»:

Դուրս բերել մեր քաղաքացոց գծերից մի-երկուսը կարճ, համառոտված:

Հայհոյող, լոպազ, շռայլ և խաբող:

Ուստան լսեց մի հայհոյանք, որ չնկ գնդակի պես ծակեց նրա ականջը և հոգին [կիզեց], զզված նայեց նրանց՝ հայհոյողներին:

— <անընթ.> Սանոյինը...

— ՊարծենկոտուԹյուն:

— Խաբեցին Ուստային՝ գովելով նրան:

46. ԳՑՈՒՄՐԻ

Ուստան Գյումրի, լոթինների հետ քեֆ անելիս, նկատեց (գիտեր արդեն) որ սեղանի շուրջը նստած տղերքը մի տեղ բաց Թողեցին. բաց անտեր տեղի առաջ սեղանի վրա դրին մի բաժակ և մի կտոր հաց: Հարցրեց՝ ո՞ւմ տեղն է. ասացին.— Մեր նոր մեռած ազիզ ընկերոջ՝ Համբիկի տեղն է...

Ամեն բաժակ լցնելիս, լցնում էին նրա բաժակը և խմելիս մի քանի կաթիլ ծորում էին հացի վրա...

Խմեցին ոտքի վրա Համբիկի կենացը. արցունքներ Թափեցին և լիքը բաժակը մեռած, բայց նրանց համար ներկա և կենդանի Համբիկի բաժակը Թափեցին հացի վրա...

Ուստայի աչքերը լցվեցին. հիշեց իր հորն ու մորը, և երևակայեց իր մահը, կռվի դաշտում, և իր դարդակ տեղը և իր դարդակ բաժակը...

— Անմահ Համբիկը հիմի հոգով մեզի հետ է. էնոր կենացը. էնոր հոգուն մեռնինք... ի՛նչ ազիզ տղա էր, ընկերի համար հոգի չխնայող... մեռավ ազգի համար. մեռավ, չմեռավ...

47. ԳՅՈՒՄՐԻ

— Երկու լոթի. քեֆ են անում, դեմ առ դեմ նստած. խմում են, քնում են նստած տեղերը, նորից զարթնում, խմում, քնում, զարթնում, խմում:

— Իշխանի, Թաթոսի դեպքը. առավոտ դառնում է տուն. հացերը թևերի վրա, խումարից... բոբիկ կնիկները... զնկզնկան սուրբ ժամեր, [խիղճ է], մարդա մի կտոր խիղճ, խղճմտանք առեք, տվեք իմ մարդուս, որ երկու օր է՝ տուն չի գալիս. երեխաները անոթի են...

— Մեկը հարբած. էս Գյումրին տեղեն պիտի փոխեմ:

Երկու ընկերներ խմում են, անուշ-անուշ խոսում: Այս խոսքի հակառակության վրա՝ կըսե. ծեծ...

— Ես ղըզլ մարդ չեմ սիրե:

— Ես ղըզլ մարդ կսիրեմ:

48. ԳՅՈՒՄՐԻ. ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ուստան լսում է պատահական խոսակիցներից կամ ոչ իրեն հետ խոսողներից...

X գյուղում Ֆլանի հարսը իրան հորը քցեց, կեսրարի ձեռքեն ազատվելու համար:

X գյուղում Փլանի (Մանուկի) 15 դեզը վառին, ցորեն: Ողջ գեղը լուս կուտար. անաստվածություն էր...

Կովի, գոմեշի, հորթի... մասին զրույցներ, քաղաքում: Բամբասանքներ:

Մի քանի գյուղացի խուրջինները բացին, հաց ու պանիր, արաղ հանեցին. Ուստային հրավիրեցին (անծանոթ էին նրան, բայց նահապետական սովորույթի համաձայն) հացին մասնակցելու:

Ուստան Գյումրիից դառնալիս պաչար ուներ ճամբու — օղի, սոխ, լոբի, գառի գլուխ, հաց, պանիր, կանանչ: Կերան իջած կայարանում, մինչև ձի նստելները:

— Ուստան ձիու վրա կամ երկաթուղում կամ առանձին պահերին, քնելիս և այլն... Սինեմայի պես միտքն էին գալիս զանազան ընդհատ-ընդհատ մտքեր, դեպքեր, խոսքեր [անկարգ], ժամանակի և տեղի հետ կապ չունեցող դեպքեր, մարդիկ և այլն, և այլն: Բնականը այս է — մարդու գլուխը միշտ գործում է՝ թռիչքներով, ոստոստելով, կցկտուր. ճիշտ ոնց որ մարդ երազների մեջ լինի, [քնի] քնած ժամանակ: Մտածելիս, լուրջ, լարված, երբեք միտքը երկար չի կարող կանգ առնել մի մտածումի վրա, թռչում է բոլորովին այլ խնդրի վրա, հաճախ անօգուտ, դատարկ. երևի միտքը հոգնում է լարումից. կամ մտքերի ասոցիացիաներով է ընթանում:

49. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԳՑՈՒՄՐԻ

— Սրճարանում մի մարդ արաղը դրել էր առաջը և ինքնիրեն խոսում, ճառում էր, իր գլուխը գովում, ուրիշին ծաղրում, հայհոյում:

— Մի երկու հոգի էլ իրար բերնի մեջ նայելով՝ բարձր երգում էին:

— Մի ուրիշ մարդ մենակ նստել ծխում էր, մի արաղի առջև, և դիտում էր մարդկանց: Ուստան հարցրեց քովի նստողներին, թե ով է սա, դաշնակ է, թե հնչակ:

— Իշու ձագ է,— պատասխանեցին նրանք միաձայն:

Ուստան վիրավորվեց այս անքաղաքավար ձևից:

— Ես ձեզի բան եմ հարցնում:

— Յա, մենք էլ քեզի ճշմարիտ կըսենք. իշու ձագի մեկն է:

Ուստան զարմացած հայացք ունեցավ:

— Չեղք է, կհասկնաս:

Ուստան չհասկացավ:

— Չեղք. մենք էնոնց որ ոչ հնչակ է, ոչ դաշնակ, իշու ձագ կըսենք, իշու ձագ ըսել է չեղանք, ո՛չ էս, ո՛չ էն:

Ուստան մտածեց. «Հարուքը օրթե էստեղ լիներ, դաշնակին-հնչակին էլ էշեր անունը պիտի տար, էշեր, որ տեղի համար կհոգան»:

50. ԳՅՈՒՄՐԻ

Արշակ Ավետարանիչը պարում է.

— Չեմ, չեմ, չեմ կրնա խաղա...

Մի զինվոր խանչալներով է պարում:

— Տիգրանն ասում է, որ ղարաբաղցիք նենգ են, խորամանկ, լավ ընկերներ չեն, և լավ հայեր չեն:

Մեզ ռուսացնողները նրանք են:

Ուստան զարմանում է այս կարծիքի վրա, որ իր կարծիքի հակադրությունն է:

51. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ

— Այնտեղ կատարում է տեռոր, գավառապետի վրա:

— Հալածանք ռուսախոսների դեմ:

— Կալվածների գրավման առթիվ:

— Ռուս-ճապոնական պատերազմի վրա:

— Հնչակյանների և Սոցիալ-դեմոկրատների ճառերը (մարքսիզմ, բուրժուազիա, պրոլետարիա, և այլն):

— Լինում են բաղնիք՝ քիսաչին. քրտինքով հաց վաստակել ու սոված մնալ:

— Լինում են թատրոն. սինեմա (կինոմատոգրաֆների). տեսնում են ավտոմոբիլ, տելեֆոն, ֆոնոգրաֆ. զարմանում են չափազանց: Ուստան ասում է, որ իր ման եկած տեղերում էսպես բաներ չի տեսել. իր տեսածները գլխից անցավ: Իմ տեսածները էսոնց քով [տղայա<կան>] երեխայի խաղկնելիք են:

— Գյումրի. մի ինքնասպանության դեպք. սիրո գետնի վրա: Վելոսիպետ. ցիրկ. հիպնոզող:

— Ուստան մնում է այնտեղ երկու չաբաթ. ատրճանակ է առնում 30 րուբլու, Սոնային և մյուսներին նվերներ. հլունք, փուլ, մատնիքներ, շալ, բաղդատի... հայելի, սանր. ծախսում է մոտ 150 րուբլի:

— Կարոն ասում է Ջավուշին. Հարութը կըսե թե հրաշք չկա. բա էսոնք հրաշք չեն, ի՞նչ են. ինձի համար ողջ աշխարհ հրաշք է. հրաշքն էլ էսպես կլինի, հո՞, պոչով-ականջով չըլնի:

52. <ՆԱՊՈԼԵՈՆԻ ՀԱՄԱՐ...>

Նապոլեոնի համար «չէ» խոսքը չի եղել: Այսինքն՝ չկա, կարելի չէ, անկարելի է, գոյություն չի եղել:

Ասել և անել:
Կամք, վճռականություն, տոկունություն:

Ուստան Գյումրիում հիացած նայում էր սրբատաշ տների մեծ դռներին, նրանց կամարներին, եզերքների քանդակներին, ճակատների՝ քարե զարդերին, ոճավորված վարդերին, ծաղիկներին: Եվ խոսում էր իրեն հետ. «Ի՜նչ հնճարով վարպետներ են...»: Հիացած էր նաև Փրկիչի կարմիր եկեղեցիով, նրա քանդակներով:

53. <ՈՒՍՏԱՆ ՔՆԵԼԻՍ...>

Ուստան քնելիս, անքուն, զարթնելիս:

— Քիրս գնալիս, որոտ, կայծակ, սարերը գոռում էին, գետինը որոտում:

— Գյումրի. մարդիկ գնում են ու անցնում. փողոցներում խռնված՝ իրար խաչակնքում են. Կարոն ասում է Զավուշին. Հարուրթը լիներ էստեղ, պիտի ասեր, թե ուր են գնում-գալիս, ինչո՞ւ համար, նպատակը ինչ է:

— Ծերացա, կյանքը ունայնանցավ ինձ համար. սերը վերջացավ — կյանքը ունայնացավ:

54. ԳՅՈՒՄՐԻ

— Աղետից առաջ մարդիկ ընկնում են մեծ վայելքների մեջ. այսինքն՝ աղետը տեսնելով:

— Պետք է իրեն ասել այս բանը՝ չեմ սիրում, չեմ, չեմ... ասաց ինքնիրեն, և այս հարյուրերորդ անգամը լինելով:

— Ամեն գործի հոգին է, ամեն բանի հոգին է սերը, այս մարդը, փողը...

— Ֆիդայիները ասում էին, կռվի ժամանակ մահի մասին իսկի չենք մտածե. կռիվ գնալուս էլ ուրիշ բանի վրա կմտածենք. մահի՞ — իսկի:

— Նա կհաղթե, ով որոշել է, վճռել է հաղթել:

— Նա պատմում էր դեպքը. իսկ սա նրա ձայնին, ձայնի արտահայտությանը, դեմքի փոփոխություններին ավելի իմաստ էր տալիս, ուշք էր դարձնում, քան պատմածին:

— Համակեդրոն ուշադրությամբ նայում էր:

[Մարդը]

55. <ՄՈՏՍ ԿԱՐ...>

Մոտս կար դուրս գալուս ժընևից 175 կամ 179 ֆր<անկ>:

Վերացամիտ = վերացական մտածող:

— Ուստա, քաղքցու կնիկները էսման հագցնելու համար ի՛նչքան փող կնայի, հեչ հաշվել ես:

— Ջավուշ ջան, հանվցնելու համար հազար անգամ ավելի շա՛տ փող է պետք:

— Փող ուտող մարդ, լավ փող է ուտում:

— Ուտեմ ես ձեզի, ծաղիկներ,— ասում է Կարոն, դաշտերին նայելով:

Ուստային Գյումրի փայտոնչինները ասում են.
— Համեցեք, նստեք:

56. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻՑ ԳԱԼՈՒՍ

ՍԱԼԱԾ ՃԱՄԲԵՔԻ ՎՐԱ

Կանգնեց, ձիու սանձը քաշեց, սալած ճամբեքի վրայով աչքերը սահեցրեց մինչև հեռու, կապույտ հորիզոնը՝ Բարդոզ լեռների վրա՝ կամարված... Սուրը մերկացրած՝ նրա բոցերի տակ, ձին վրնջելով, թռչում է, հետևից թռչում են զինվոր ձիավորները, ոսկեզօծ բաշլուղներով, զինված, վազում են կռվի դաշտ, դաշտում ձիու ոտների տակ հողը եռում է, մխրճվել են թշնամու մեջ, կռիվ է, արյուն, հրդեհ, թշնամու պարտված մարմինները ընկնում են ձիու ոտների տակ, Ուստայի սուրը արյունի մեջ կարմրած, կրակված է, շեկ երկաթ է դարձել... Հնչում են փողերը, հաղթանակով հետ են դառնում, զարկում են զանգերը, կին, երեխա համբուրում են նրա փեշերը, ձեռքերը. անցնում է Անի «հաղթական կամարի» տակով: (Հռոմոսում Կայծակը ցույց տվեց կամարը և պատմեց նրա դերի մասին. Ուստան գիտեր ուրեմն այս):

Խաչով-խաչվառով, երգով, աղուհացով դիմավորում են...

Հայաստան ազատված է:

Աստճանակը որոտաց:

Մինչ այդ Զավուշը կանգնել, բերանը բաց դիտում էր հոգով բացակայած Ուստային:

57. <ԿԵՐԹԱՑԻՐ, ԾԵԾԵԼՈՎ...>

— Կերթայիր, ծեծելով ճամբու կդնեին... տեսա՞ր, որ խելք ունիս, չես [երթա] գնացել:

Ուստան պատմում է.

Գյումրի «Արաուլի» դյուքանում լավ քեֆ արինք, դռան առաջ տղերքը պարեցին, տրնկի-տրընկիի վրա, գդակները վերև էին քցում, մեկը գդակը էնպես վերև ձգեց, որ գնաց Ամենափրկիչի մեծ գմբեթի խաչի գլխին թառեց, մնաց: Էդպես տղերքով պիտի երթամ Հայաստան:

— Նրա սրտի մեջ տեսա նրա դեմքը: (Դեմքը սիրուն չէ, բայց հոգին սիրուն է):

— Անկեղծ մարդ է. զգացմունքը չառագունում է երեսի վրա:

— Գերանը, որ ջուրն են ձգում (կամ — ջուրն ընկած գերանի բոլորքը) նրա բոլորքը հավաքվում են մանրմունր տաչեղները, չոփ, խոտեր, և այլն. էնպես էլ ուժեղ մեծ մարդու բոլորքը — փոքր մարդիկ:

— [Տերտերի տունը էն օրը քանդվեց, որ երկու տեղից հացի կանչեցին:]

— Էնքան հաստ ու ճարպոտ, [որ մեկ անգամ] ու ծուլլ, վերընկած գիշեր-ցերեկ, որ մեկ անգամ մկները տակը կերել էին,— չէր իմացել:

— Ծովն իր սնդուսե գգվանքները դեպի ափը:

58. ԳՅՈՒՄՐԻ

— Շիշը քաշեց [զարկեց] վրաս նետեց, գլխիս վրայով անցավ, ես էլ շիշը ձեռք առա, ասի, էդպես չեն զարկե,

ա՛յ, էսպես կզարկեն, ասելն ու գլխի մեջտեղ իջնելը մեկ եղավ:

Լամբը զարկեցի մարեցի ու փախա:

Այս պատմելիս ձայնը բարկացած բարձրացրեց, խոժոռեց ճակատը, որպես թե հիմա, հենց հիմա կատարվելիս լիներ այդ տեսարանը:

59. ԴԱՍԱԽՈՍԸ. ԳՅՈՒՄՐԻ

Մեր երազը, մեր երևակայությունը, մեր փափագները այնքան գեղեցիկ են, այնքան հաճելի մեզ, որ շլացնում են մեզ, մեր [ոչ մի մարմնական աչքերը չենք] ոչ միայն հոգեկան աչքերն են կուրացնում, որ չենք կարող մեզ շրջապատող անախորժ իրականությունը տեսնել, ճշմարիտ տեսնել, այլև շլացնում են մեր մարմնական աչքերը. և մենք տեսիլ ենք տեսնում. մեր սիրածը մեր մոտ, մենք ազատած ենք բանդից, մենք հայրենիքումն ենք, տեսնում ենք մեր տունը, մեր կարոտցած մորը, մեր մեռած հորը, ուղղակի երազի մեջ: Այսպիսով, մեր զգացմունքը, մեր փափագը մեզ համար դառնում է իրականը, ճշմարիտը:

60. ՄԱՀԸ

Ջահելները խոսում են մահի մասին. ասում են թե՝ մահն ի՞նչ է որ. մարդ էլ մահից վախենա. ես միշտ պատրաստ եմ մեռնելու: Բայց չհավատաք:

Նրանք մահը չեն զգում. այնքան հեռու է նա, որ անգո է թվում:

Ջահելներին ամեն բան զվարճություն է տալիս. զվարճություն են սիրում, զվարճանում են և մահով:

Գյումրիում

61. <ԲԵՐԱՆՆ ՄԱԶ ԲՈՒՍԱՎ...>

— Բերանս մազ բուսավ խնդրելեն:

— Թագավորություններն եղել են մարդ վախեցնելու համար:

Ուստա Կարոն սահմանագլխին քարի տակ խորհում է. նրան թվում է, որ ասկյարը՝ կարմիր ֆեսով սուլթանի, սոլդաթը՝ չաբղայով՝ ցարն է...— Ահա, ահա՝ իմ թշնամիները, հայի թշնամիները, բարով տեսանք, ես ձեզ կուզեի, լավ տեղն է. ես էդ օրի էի մնում. ես տղամարդ եմ, քարի տակ չեմ մնա. կամ ես, կամ դուք. ես չեմ թողնի մեր աշխարքը քանդեք... ու դուրս ելավ...

— Ուստեն մտածում է՝ հիմի անունս կգրեն «Դրոշակի» մեջ, ու աչխարհով մեկ չավ կլինի անունս... էս չեղավ, գեշ բան եղավ... ոտքս մեկ Թիֆլիզ քցեմ, Բյուրոյին տեսնեմ, բանը կշիտկեմ...

— Յա հրռո, յա մրռո = կամ կլինի, կամ չլինի. կամ տակը, կամ վրեն. կամ փաչա, կամ բոշա:

— Ազգաթքանք է = անպատվություն է:

[— Հռե կոպալե, դաստա]

— Դաստա կոպալե, հռե ջաննաթե = ձեռքդ մահակ է, կերթաս դրախտ:

— Ջավուշն ասում է. Ուստա, լավ կըսես. դուք ձեզի համար, մենք մեզի համար. երկու դրկից աղբոր պես, չէ՞ որ բաժանված ախպրտիք չա՜տ կան. երկու ախպեր մեկ տան մեջ՝ հիմիկվա դարում չա՜տ քիչ կա. էս է հարսներին ճիժ ու պիժ է՝ հա, էն կըսեմ — երկու ախբեր, սիրով կապրինք, մենք մեզի հետ, դուք ձեզի հետ, երկուսով մեր դյուշմնի հետ. խելքի բան կըսես, իմ սիրտս էլ էդ կուզե, և թուրքերին էլ խոսք <...>[2]

62. ԳՅՈՒՄՐԻ ԳՆԱԼԻՍ ԿԱՄ ԴԱՐՁԻՆ

— Երկաթուղին: Դաշտեր, սարեր միակտուր, անընդհատ հոսում էին, դետի պես: Բլուրները թավալգլոր արշավում էին, ծառերը (ներս) էին մտնում վագոնի պատուհանից ներս:

Ճամբու եզրներին մարդիկ, արագությամբ, վազում իրար հետ խառնվում և գույգ-գույգ վազում ուրիշների հետ ճուլվում: Ու փախչում:

Եկավ մի ուրիշ գնացք, նայեց, տեսավ միայն իրար խառնված լուսամուտներ, իրար մեջ խառնափնթոր եղած մարդիկ, և վագոնները:

Վախով գլուխը հետ քաշեց, թեև բնավ դուրս չէր հանած:

---

[1] Գրված է կարմիր մատիտով, ինքնագրի վրա՝ թեքությամբ:

[2] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է: Շարունակությունը չի պահպանվել:

63. <ԳՅՈՒՄՐԻ. ԴՈՒԽԱՆՈՒՄ...>

Գյումրի. դուխանում Ուստան լսում է գյումրեցոց խոսքը. մեկն ասում է — Տո, կյանքն որ կա, աղբ է:

Մյուսը — Բայց համով է, ջանիկս:

Ուստան մտքով խոսեց, խոսքի տակ մնացող չունեն էս գյումրեցիք. լավ խոսքեր ունեն, միտքս մնա Հարությին ասեմ: Էս խոսքը լավն էր:

— Պիտի պահանջել, որ Լազարյան ճեմարանը դառնա գուտ հայկական համալսարան:

— Սոցիալիստական պատգամավոր. մեզ ներկայացնում են ազգային ժողովին վրացիք որ գուտ չովեններ են:

— Երկիրը արևի ճաճանչների դուշի տակ լողանում էր. ոսկեղեն դուշ:

64. ԳՅՈՒՄՐԻ

Մեկը այլևս լրագիր չի կարդում: Ասում է, երբ թերթը ձեռք էի առնում, զվարթ տրամադրությունս իսկույն մռայլվում էր, հուսահատվում էի. մի տեղ մարդ են սպանել փողի համար, կին են բռնաբարել, երեխա են մորթել: Ավար, գողություն, արյուն: Կարկուտ, հեղեղ, հիվանդություն, սով, մահ, ջարդ: Իսկ երբ հայերի մասին ես կարդում — սիրտդ կտոր-կտոր է լինում: Թուրքն ու քուրդը խորովում-խաշում են հայերին.— և աշխարհը անտարբեր, Աստված անգործ, պետությունները — անգութ ու խաբեբա — պոռնիկ...

Ուզում եմ ձեռքդ ընկած թուրքի ու քրդի կոկորդը խածել՝ դեն ձգել... Ձեռքիցդ չի գա... գոնե մի կարդա, դու էլ մի խորովվիր ու խաշվիր:

65. ԳՅՈՒՄՐԻ

Մի տեռոր. մի հույն լրտես էին սպանել. դրա մասին էին խոսում:

Տեռորիստի քաջության մասին:

— Ժանդարմը անցավ, ցույց տվին:

66. ԳՅՈՒՄՐԻ

Ուստան և Ջավուշը նայում էին ռուս զինվորներին, որ ճակատ էին գնում:

Նայեցին, նայեցին, անխոս նայեցին բոլոր դեմքերը, որ գետի պես Հոսեցին նրանց աչքերի առջևից:

Երբ վերջացավ, Ուստան ասաց... Ջավուշ ջան, սալդատի երեսը երեսի վրա տեսա, գումարը եղավ մտքիս մեջ հորթի երես, անլի աչքերով, չեկ մազերով...

— Ուստա ջան, ինձ էլ թվաց խոզի երեսով, քերթած խոզ երես, էն որ քաղքցիք փուռը կուտան...

— Քու ըսածն էվելի չիտակ էր. դու պսբոր մարդ ես <...>[1]

---

[1] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է: Շարունակությունը չի պահպանվել:

67. ԳՑՈՒՄՐԻ

— Մեկը լվացվելիս, բերանը ջուր էր առնում, ապա ջուրը բարակ աղբյուրի պես ծորեցնում էր ափերի մեջ, և երեսին տալիս:

68. ԳՑՈՒՄՐԻ

«Արաուլ» մարդիկ տամա կամ նարդի էին խաղում, տարվողը իր հաշվով կամ պիտի գինիով ճաշ տար, կամ բաղնիք տաներ. սա ասվում է թեթևակի կերպով, իբրև մթնոլորտի նկարչություն:

69. ԳՑՈՒՄՐԻ

Ջավուշն ասում է.

— Ուստա, տես ի՛նչ տնկոզ դուռ է... ի՛նչ լավ տուն է:, Հորս տունը էսպես մի խալի կար: Ուստա, ով է էս մարդը: Ի՛նչ մեծ բեխեր ունի: Փքված աչքեր: Ուստա, էս մարդը չատ կնմանի Սերոբենց Մանուկին, դրուստ չէ՞:

— Հա՛, Ջավուշ ջան:

[— Էս մարդը]

Պտտվում են քաղաքում, դիտում, լսում, խոսում:

Բաղնիք, սափրիչի մոտ, խանութներում:

Մեռել են տանում թաղելու, ուսերի վրա դրած, խանութի փեղկերը ծածկում են, գլխարկները հանում...

Քեֆ անողներ: Մենակ քեֆ անող...

70. <ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՇԱՏ ԾԻԾԱՂԵԼԻ...>

Գյումրիում շատ ծիծաղելի խոսքեր լսեց Ուստան դուխանի մթնոլորտից:

Օրինակ: Երկու հոգի խոսում էին.

— Կյանքը քաք է...

— Պսակվեց դարձավ չորքոտանի անասուն, կենդանի:

Եվ այլն:

Ուստան ասեց.

— Գյումրեցիք չա՜տ բամբառակ մարդիկ են. Հարուքի սրտովը տեղ է:

71. ՆԱՐԴԻ ԽԱՂԱԼԻՍ (ՏԱՄԱ ՆՈՒՅՆՊԵՍ)

— Մարդ վրա եկավ, թե չէ մարս էի: (Ծաղր):

— Դու բարա. դու բարով եկար:

— Ի՛նչ ըլնի, չըլնի, էս դուռն առնենք, էս զարկենք, էս տանք:

— Գիտեմ, դուրդ չեկավ:

— Տխրեցի՛ր, վնաս չունի:

— Էս որբևայրի դուռն առնենք: (Անհաջող դուռ, որբևայրու դուռ):

— Էսպես արի, տեսնենք՝ ինչ դուրս կուգա:

— Ջսիրեցի էս զարը, էս դուռը:

— Ես չառնեմ, քեզի պիտի տամ:

— Քեզի չա՜տ սիրեցի, ապրիս, ուզածս կատարեցիր. մեկ էլ, մեկ էլ:

72. ԺԱՄԱՑՈՒՅՑ

Երբ Ջավուշն ասաց՝ թե՝ Ուստա ջան, ինչու սհաթդ հարմարցրիր Բյուրոյի սհաթի հետ:

Ուստան թե՝ քանի որ մեր ճամբեն, մեր միտքը, մեր դործը էնոնց հետ մեկ եղավ, մեր սհաթն էլ էնոնց սխալ թե ուղիղ սհաթի հետ պտի մեկ սիրտ անել, մեկ խոսք անել:

73. <ՔԵՖՉԻ ԽԱՉՈՆ...>

— Քեֆչի խաչոն:

— Փափանենց Մարգարը:

— Կռունկ, կտուց:

Յուրաքանչյուրը իր քաղության և արկածների մասին էր ներշնչված խոսում, որոնց վկաները միայն իրենք էին եղած. յուրաքանչյուրը իր արկածի վկան էր: (Որպեսզի չասել պարծենկոտություն):

— Գոտեմարտ. ռուսը՝ չեկ, բարակ սրունքներով, տրիկո հագած. հայը՝ սև, հաստ սրունքներով, վարտիկը վեր քշտած, չապիկով, կուրծքը բաց...

Ռուսը արվեստ ուներ, գիտություն, ձևեր, գաղտնիքներ. հայը — միայն վայրենի ուժ և բնազդական ճկունություն. երբ ռուսը ձևերով քաշքշում էր նրան, խաբս տալով, հայը գլուխը կոխեց նրա սրունքների մեջ և վեր ցատկելով քցեց վար, վեր նետելով՝ մեջքի վրա ձգեց գետնին, և շուռ գալով չոքեց կրծքին...

Ռուսները բղավեցին, подлец, мошенник, *չեղավ, էդ արվեստ չունի, վայրենի, էշակ... Ոտքի ելան:*

Հայերը բղավում էին, կեցցես, հոգուդ սատկեմ, ուտեմ քեզի, ազգի պարծանք, զարկ, զարկ, սատկցու:

Ոտքի ելան:

Ռուսն ու հայը իրար բռունցք ցույց տվին:

Մի քանի զինվորականներ, ոստիկաններ վազեցին ասպարեզի մեջ, մեկը սուրը բացած: Հայերը թռան ամեն կողմից, և վայրկենի մեջ գրկեցին հային, փաթաթեցին չուխայի մեջ և թռցրին...

Ծափ, ծիծաղ, հարայ-հուռռա ամբոխի կողմից...

Ռուսները խայտառակված տարան իրենց հերոսին՝ чемпион мира:

Հայերը մինչև լույս քեֆ արին, դավուլ-զուռնայով: Ուստան հետներն էր... ճառեր, կենացներ...

Մանրամասն կանգ առնել դետայլների վրա, հանդիսականների ապրումների, և այլն, և այլն:

74. <ՀԱՄՐԻՉ...>

Համրիչ – թագըեհ:

– Հոգին կոկորդեն ներս կմտնի: (Պետք է լավ ուտել, խմել):

(Ուստան Գյումրի Քերոբին, երբ հետն էր, ուզում էր իր հոգին հանել՝ նրան տար):

75. ՀԱՍԱՆ ԱՂԱՆ

Ասում է թե, Գյումրի ասին, թե՝ սոցալին էնպես հավատացողներ կան, [խոսքի օրինակ] էնպես, թե էգուց լինելու է, գալու. խոսքի օրինակ, Գյուրջիստան, գյուրջի գեղացիք էս տարի արտ չեն ցանել, թե աչնանը հավասարականը գալու է, ունևորաց չունևորաց է լինե-

լու, էլ ինչո՞ւ զուր դատինք, աշունը հարուստների ամբարները բանանք ու կուշտ կապրինք, մինչի պարպի, ետև հարուստ-աղքատ հավսար կաշխատին ու կուտեն...

76. ԳՅՈՒՄՐԻ

Երկու քեֆ անողներ (Ուստայի հետ) տեսան մի սիրուն կին անցնելիս, իրար համբուրեցին:

———

— Էս տղան դաշնակցականի մեկն է, և թունդ դաշնակցական է:

— Տղերք, քեֆ արեք, ռուսի գլուխը խառն է:

77. <ՈՎ Է ԷՍ ՄԱՐԴԸ...>

— Ով է էս մարդը:

— Խելառի մեկն է, ցերեկը կքնի, գիշերը կպտտի, բաց դուռ կտեսնի, կմտնի, չաբաթը մեկ-երկու անգամ կուգա, գլուխս կաղա:

— Կհասկնաս, ինչ կըսե:

— Ջէ: Դուն հասկցար:

— Կիսատ-պռատ, մեր Հարուքի ջրեն է:

— Ով է Հարուքը:

— Ընկեր-ախբեր տղա, աշխարհը կքնե, տափն է մտել, դուրս չի կրնա գա, խճճվել է միտք ու <անընթ.>:

78. <ՔՈՒՐԴ ՀԱՍԱՆ...>

Քուրդ Հասան ասաև.

— Մեծի խոսքը դետին ընկավ. էլ ես աչխարքի տերը չեմ:

79. <ՀԱՅ ԿԱՆԱՑՔ...>

— Հայ կանայք պիտի մեզ տան տղամարդ սերունդ. տղաները, որ դառնանք տղամարդ ժողովուրդ:

— Ֆիդահիները պատմում են իրենց ըմբոստական կյանքից վիպական դրվագներ: Որսում են վայրի երեներ. հրացանների սվիննները շամփուր չինած՝ խորովում են մսերը:

Ֆիդահու սիրած աղջիկը փախցնում են, ավերակ վանքերի մեջ պահակում սուրերը խաչ կապած, և հարսը ֆիդահու հագուստով, զինված, պտըտում է իրենց խմբի հետ. կռվում, զարկում ու զարկվում:

— Մեկը, Ուստան, մտամոլոր, ջղայնացած խաղում էր դորդի նախշերի հետ:

— Ուստան վախեցավ Գյումրի կատարված տերրորի ժամանակ...

— Ասում էր մի փչան-պարծենկոտ. դու կարո՞ղ ես երևակայել այս բանը. ե՛ս միայնակ, 100 թշնամու առաջ, մեկ ձեռքս վիրավոր, մյուսում մի հաստ փայտ... և հաղթեցի...

Պատասխանը.— Ես քո երևակայությունը չունեմ. քո ստեղծագործ հանճարը, որ մեկին 100 մարդ ես ստեղծել՝ զինված, իսկ քո ձեռքում — փայտի կտոր...

80. <ԳՅՈՒՄՐԻ ՄԵՌԵԼ ԵՆ ԹԱՂՈՒՄ...>

– Գյումրի մեռել են թաղում դագաղը բարձր ուսերի վրա դրած: Կենդանի Գազեթը ասաց, թե ես ամոթու գեաինը կմտնեմ, թե որ ինձի էսպես թաղեն: Մեռնողը Մազման Սիմոնն էր:

– Բաղնիքից կանայք դառնում էին կարմրած թշերով:

– Ռուս զորքը մուզիկայով կազակներով կռիվ էին գնում յապոնների դեմ:

– Տխուր զանգեր էին տալիս՝ Մազմանի թաղմանը. Ուստայի լացը գալիս էր: Սրճարանում նստած:

– Ուստան հիշում է զարաբաղցի Պըլի Պողին՝ նրա խոսքերից:

– Մտածել «հողեղեն են մարդ ու կնիկ» այս հատվածի մասին: Ո՞ւր դնել, ո՞ւմ բերանը դնել:

81. <ՔԵՐՈԲԸ ԳՅՈՒՄՐԻ...>

Քերոբը Գյումրի մի օր հիվանդանում է, ուզում է բժիշկ կանչել Ուստան. Քերոբը չի համաձայնում. Ուստան ամբողջ օրը նստում է նրա գլխի վերև ու միրգ է դնում բերանը.

– կո՛ր, կե՛ր:

82. <ՋՄՈՌԱՆԱԼ ԱՇՈՒՂ ՖԱՐՀԱԴԻՆ...>

– Ջմռռանալ աչուղ Ֆարհադին, որ երեկույթին երգում էր. դաչնակցական երեկույթին:

— Հիշել զանազան խմբապետներին. օրինակ՝ Կարսում, Փալաբեխ Կարապետին (օգտվել Ռուբենի հիշողություններից. կարմիր բաճկոնակ. թուրք մահուդից. սակվոյաժը, բանալիքը և գիրքը:)

— Հիշել Ուստա Գաբրիելին, որ չմասնակցեց քեֆին: Վռամի սրճարանում սարքված:

— Ֆայտոնչիներ. քե՛ռդ...

— Ուստան նկարվեց: Ուստան սափրվեց:

— Տեսավ մի լոթի, Սանոյենց խելառը. 4 ֆայտոն բռնած՝ մեկի մեջ՝ դավուլ-զուռնան, մյուսի մեջ՝ գինի-օղի. երրորդի մեջ՝ իր գլխարկը և չուխան, չորրորդի մեջ՝ ինքը. երեսը քաղաքին, կռնակը ձիերին, հայհոյելով կամաց-կամաց գնում է:

— Իրենց քեֆին, մոտենում է գարադավոյը թե. «Ջեններդ կորեք, նե պալագայեցա, զակոն է. ես թագավորի աչքն եմ, թագավորը հեռու է, ես եմ էստեղ տիչան պահողը, ի՛նչ միչայն կենենք օբչեստվի սպակոյստվան. դավուլը զարկեցին գլխին՝ պատռեց փոստը, գլուխը ներսը մտավ, քիթը լոպկվեց. փող տվին (տվեցին), խմցրին, ձայնը կտրեց, գնաց:

— Սրճարան կանչեցին խելառ Պոտոյին. սա ներկայացրեց հարուստի-աղքատի մեռել թաղելը: Նրա մասին միերկու խոսք: Անցյալից:

— Ջմռռնալ այն խենթը (նախճվանցի), որ կանանչ արտերը քաղել է. Ուստան նրան միչտ հաց էր տալիս և խղճում:

— Ղարսում լսեց, որ եղբայրները կռվել են հոր դագաղի չուրջը, և հոր դիակը գետին են գցել:

— Ռուս-ճապոն պատերազմի մասին: Հարուֆին էլ գիտեր, գյուղից զինվորներ կային այնտեղ կռվող: Այդ գիտնալը պետք է՝ վերջին տեսիլի համար, Հարուֆի տեսիլի համար:

— Գյումրեցիք դարտակել էին Բյուրոյի պահեստը. դրա մասին էին խոսում, որ Վաղոն այնտեղ է քնել երկու գիշեր, հիշում են Վաղոյի մահվան առիթով:

Ստուգել թե Վաղոն այդ ժամանակ էր զարկվել:

— Խոսքեր կալվածքների գրավման մասին: Կեցցեն հնչակները՝ Գալիցինին փախցուցին:

— Գյումրեցիք երկու դեպքումն էլ խմում են՝ թե վշտի, թե ուրախության:

83. <ԳԵՂԵՑԻԿ ԱՂՋԻԿ ՉԷՐ...>

— Գեղեցիկ աղջիկ չէր, բայց ձև ուներ:

84. <ԳՅՈՒՄՐԻ, ՄԻ ՄԱՐԴՈՒ...>

— Գյումրի, մի մարդու ականջը ցավում էր. խորհուրդ տվին բժիշկի մոտ գնալ, եթե ոչ, թողնելով կխլանա:

Նա էլ ասաց. խլանա, թո՛ղ խլանա, չա՛տ հարկավոր է. աշխարհը ժամանակավոր, անցավոր բան է. էսօր հողի վրա, վաղը հողի տակը: Ուրիշ բան, թե որ մահ չլիներ, էն ժամանակ ականջս միշտ պետք կլիներ ինձ: Հիմի արժե մի քանի ժամանակվա համար հոգս քաշել, բժիշկ, էս-էն:

85. ԳՅՈՒՄՐԻ

Գնացին թատրոն. «Ասլան Բալասի»: Երբ Աղասին ոտքի տակ էր դրել Հասան խանին, և ճառում էր ու չէր սպանում, Ուստան, որ ողջ հոգով ապրում էր այս տեսիլը

և պատրանքի մեջ էր, բղավեց. պա՛րկ, պա՛րկ էդ գազանին:

Եվ երբ Աղասին բաց էր թողնում նրան, Ուստան ձեռքը տարավ աորճանակին, սակայն Զավուշը բռնեց ձեռքը:

86. ԵՐԿԱԹՈՒՂԻՆ. ՃԱՆԱՊԱՐՀԸ

— Լոկոմոտիվը հսկա դութանի պես ճեղքում է դաշտն ու բլուրները և ակոսները չեղջում աչ ու ձախ:

— Բլուրներն ու արտերը վազելազ ընդառաջ են գալիս, [թափում ու ջրերի պես փախչում:] Թափվում Ուստայի երեսին, մացառները քիչ մնում խրվում են աչքերի մեջ. Ուստան վախեցած գլուխը հետ քաշեց:

Հեռավոր լեռները պար բռնած թռչում են:

Երկաթուղին վինչալով, թնչալով դղրդում է:

Եզները փախչում են:

— Տխուր գույնով ծածկված էր դեմքը, աչքերը:

— Ինչ գույնի մարդ ըսես կա Գյումրի. ազգերս պստիկ է, բայց տեսակը շատ է:

— Ախ ու վախով սրտի վիշտը շնչեց դուրս, մեղմացավ, ամոքվեց:

— Հայհոյելով, գոռգոռալով արտաշնչեց բարկությունը և անդորրացած նստեց:

— Անասուննների պես բնազդից դուրս ուրիշ առաջնորդ չուներ նա:

— Սիրո մեջ (փոխադարձ) այլևս երջանկության երկինքն էր նշմարել, կամ երջանկության իմաստն էր [նշմարել, զգացել] գտել: Կամ տեսել:

87. <ԱՆԻ ԿԱՄ ԳՅՈՒՄՐԻ...>

Անի կամ Գյումրի. խոսացին Շիրակի ժողովրդի մասին: Իրենց Գյումրիով:

Փոչի է այս ժողովուրդը, գուցե աղամանդի փոշի, բայց անպետք. ստախոս է, մեծխոսիկ, պարծենկոտ, վախկոտ՝ թշնամու առջև, բայց առյուծ՝ եղբոր և յուրայիննեբի առջև:

Շատախոս, ծուլլ, երևակայող, միայն ստախոս, կատակաբան, ուտող-խմող, գինեմոլ, խաղամոլ, հայհոյող, անկամ, կամազուրկ, ոչ տոկուն, փոփոխամիտ, անկայուն:

Մի ձեռք պետք է, որ այդ փոշին զանգե, միացնե, կամքով ներշնչե, բնույթ ու ոճ տա նրան...

88. <ԷՍ ՄԱՐԴԸ ԸԼՆԻ, ԸԼՆԻ...>

— Էս մարդը ըլնի, ըլնի, 35 տարեկան կըլնի:

— Էս մարդը չըլնի, չէղնի, 40 տարեկան կլինի:

— Բայց իրեն 30 տարեկան է հաշվում. ամեն տարի ասելով, թե 30 եմ ասել. թքածս չեմ լիզի:

(Գյումրի)

89. ԳՅՈՒՄՐԻ

Ալեքսանդրոպոլից գնացքը մեկնում է Երևան ճաշին, Ջավուշը կանուխ զարթնեց՝ պատրաստվեց, և Ուստին էլ շտապեցրեց. Ուստան թե՝ դեռ ժամանակ կա. Ջավուշը թե՝ շուտ երթանք, հանգիստ տեղ բռնենք. ռուսի բան է, ով գիտե, երբ երթա, չերթա. ռուսի խոսքին հավտալու չէ:

Գնացին 3 ժամ առաջ. նստեցին, սպասեցին. մինչև տոմսակ առնելը, Զավուշը կասկածում էր թե՝ «Ռուսի բան է, կարելի է փողն առած և մոտիկ տեղի բիլետ տվին». տոմսակը տարավ մի երիտասարդի ցույց տվեց, խնդրելով թե — պարոն ջան, մի կարդա տես, էս մինչև ուր պիտի երթա:

Կարդաց — կայարան Արագած:

Ճիշտ է. գինն էլ իմացավ, և հանգստացավ:

Ուստան Գյումրի. որ խմող են. մի խմողից լսեց այն ռուսի պատմությունը, որ ձմեռը հաց է մուրում, օղի են տալիս, խմում է...

Միտքս պահեմ, Հարությին ասեմ:

Աչքերը ծածկեց և գլուխը քորեց:

90. ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԸ ԵՐԲ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒՄ ԵՆ

— Կեր, հոգուդ սատկիմ. էս կտորը խաթերս համար կեր. ոտացդ տակի հողն էղնիմ. էս բրդուճը, հորդ հոգու սիրուն, կեր, դեղին թերմաչս, կե՛ր. տե՛ս, թե չէ կխռովիմ, էլ հետդ հեչ չեմ խոսա... ինձի թաղես, թե չուտես...

91. ԳՅՈՒՄՐԻ

— Նախագահի զանգակը:

Ճառախոսի ջուր խմելը:

— Դաշնակցականները դուրս վռնդեցին մի սոցիալիստի, որ նրանց հակաճառում էր, խոսքեր էր նետում...

Ժողովի մեջ մեկը մյուսին աչքով արեց՝ իր ծաղրը հասկացնելու համար, իր անհամաձայնությունը:

92. ԳՅՈՒՄՐԻ

Ուստան Զավուշի հետ առաջին անգամ տեսավ սինեմա, կինո: Տեսավ ծով, չոգենավ, հեռավոր երկրներ, փիղ, առյուծ, վագր, մեծ-մեծ ծառեր, տարօրինակ բույսեր, կենդանիներ, մարդիկ, չենքեր...

Զարմացավ. և ասաց Զավուշին. եթե ես այս աշխարհները լինեի և մեր գյուղացոց պատմեի տեսածներս, ինձի իբրև ստախոսի, պիտի քարկոծեին, ցցի հանեին:

Իմ տեսածներս ու պատմածներս սրանց մոտ հասարակ բաներ են: Սրանք՝ ինձի երազի մեջ, հիվանդության ժամանակ, տաքության ժամանակ էլ չես կարող տեսնել: Հեքիաթ, հեքիաթ, հրաշք, հրաշք:

93. ԳՅՈՒՄՐԻ

Զինվորների քեֆին. մի զինվոր սկսեց պարել, դաշույններով. երկու դաշույն, ճարպիկորեն խաղում էր դաշույնների հետ, ոլորում էր ձեռքերի մեջ, երբ կուզ էր անում, դաշույնները անցկացնում էր սրունքների միջով: Ձգում էր վեր և բռնում, առնում էր ակռաների մեջ և գլխի վրա կանգնում: Զարկում էր հատակին և գլխիվայր ձեռքերը դաշույններին հենած՝ կանգնում...

— Մեկը չիշը (գինի) դրեց հատակին, և չիշի վրա գլխիվայր կանգնեց. ձեռները երբեմն հատակին, երբեմն օդի մեջ փարատելով:

94. ԳՅՈՒՄՐԻ

— Վայ, վա՛յ, վա՛յ. գինին թափավ:

— Տո, այ օղուլ, թող մի օր էլ մերը վայ-վայ էղնի: Ամեն օր քուկդ վայ-վայ կէղնի:

95. ԳՅՈՒՄՐԻ

Երկու չատակերների միջև մրցում. մեկը կերավ 10/5 հավկթից ձվածեղ. 10/5 յաղլի. երեք/1 մեծ քյուֆթա, 3-5/2 չամբուր խորոված, մի գառի գլուխ, մի / ½ հավ, մի պնակ փլավ, և 10/5 բաժակ չայ, 2 գավաթ սուրճ:

96. ԳՅՈՒՄՐԵՑԻ ՓԻԼԻՍՈՓԱՆ

— Ի՞նչ է մարդը, ոչինչ: Նրա միակ գործն է, կարելիությունը, իրեն գլուխը պահել բնության չար ուժերի դեմ, և եթե կարող է ուրիշին էլ ապրեցնել: Մնացածը նրա լոպպազությունն է. մեծախոսիկությունը:

Բնության մեջ նա ծուխ է: Մարդու կյանքը ծուխ է, ոմանցը՝ կծու ծուխ, ոմանցը՝ տանելի:

Նա գործիք է բնության ձեռքին. բնության անճանաչի կամքով է նա մղումներ ստանում, բայց իր անձնագովությամբ կարծում է, թե ինքն է շարժողը իրեն, իր կամքն է գործողը:

97. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ

Գյումրի տեսավ կարոն գրամաֆոն, տելեֆոն, կինո և ավտոմոբիլ (որ գործում էր կայարանից բերդը, [օթթո-կար] որի վրա նստում էին զինվորներ, երկար բեռնակիր օթթո:

98. <ԳՆԱՑ ԷԴ ՀԱՅ...>

— Գնաց էդ հայ մարդկանց մոտ, հոգի առավ: Գնաց մի քիչ հայկական հոգի առնելու, ներշնչվելու: Օտա-րուքթյան մեջ:

ԳՅՈՒՄՐԻ

Մի խանութից դուրս գալիս:
— Ջավուշ, էս վաճառականը, ես կըսեմ, մեզի խաբեց:
— Էլ [ինչ] ո՞ր տեղի վաճառականն է, որ չխաբե:

99. ԳՅՈՒՄՐԻ

Մի գինետան մեջ, մի երիտասարդ ընկել է գետին, և բղավում է. վեր հանեք ինձի, բարձրացրեք...

Ոչ ոք չի մոտենում վերցնելու, օգնելու, մինչդեռ մո-ւը կային շատ տղաներ, անտարբեր կանգնած: Ուստան մոտեցավ վերցնելու, թևերի տակն անցնելու փորձ արավ, բայց ընկնողը տեղից բնավ ձիգ չէր անում վեր կենալու:

Կանգնածներից ասացին. «Էդպիսի ձևով չի ելնի. ա-րաղ խմցրու կելնի»: Ուստան ասաց, որ իր հաշվին արաղ

տան. տվին մի հատ, խմեց նստելով. տվին երկրորդը. խմեց ու ելավ...

Ուստան հասկացավ խաղը. և ասաց մտքում – «Էս գյումրեցիք, բամբառակ է էդոնց բանը...»...

Առհասարակ, նկարագրել գյումրեցոց քեֆի ձևերը, սովորույթները:

100. ԳՅՈՒՄՐԻ

Մի ցինիկ գյումրեցի.

– Տո, ինչ բան է ամուսնանալը, կարգվիլը, կնիկ առնելը:

Ցորեկը կռվշտել, իրար գեշ-գեշ խոսքեր. գիշերը՝ խռմբոց, գեշ-գեշ հոտեր... Վազն անցեք կնիկ առնելուց: Ողջ գլուխը ավետարանի տակ դնելուց:

101. ԳՅՈՒՄՐԻ

– Քեֆի ժամանակ, մի հարբած երկու ձեռքի մատները իրար միացրած, բթամատները իրար էր զարկում, անվերջ կրկնելով. «Մեր ջաղացը բանի կը, ձեր ջաղացը չի բանի»:

(Այսինքն՝ մեր քեֆը տեղն է):

– Սրճարանում, մեկը երգում էր.

«Ազգուրաց, աստվածուրաց,
Երկուսը մեկ խորհուրդ է»:

102. ԳՅՈՒՄՐԻ

Ուստան երբ լսեց սոցիալ-դեմոկրատների ճառը, ապագա աշխարհը, կռիվը հարուստի և աղքատի միջև, և հավասարության մասին, մտածելուց հետո ասաց –

«Առաջ-առաջ մեկ Հայաստանը ազատենք, մերն էնենք, ետև կռվենք էդ հավասարականի համար: Թե չէ հիմի ո՞ւմ գրպանի վրա կկռվենք, ինչ ունենք, չունենք թուրքինն է...»:

103. ԳՅՈՒՄՐԻ

Երգում էին.

Թշերդ ծիրան,
Վարդի պես բերան,
Համբույրս վրան:

Ծիծերդ՝ չամամ,
Շամամդ՝ մամամ,
Բաղումդ նանամ...

104. <ՀԱՑ ԵՎ ԹՈՒՐՔ ՏԱՐԵՐՔԸ...>

– Հայ և թուրք տարերքը դեմ դեմի:

– Իրար կչալկեն = իրար կպաչտպանեն, շահերը մեկ են, իրար կբռնեն:

– Հա՛յ ազգի ցավը... Հերս էլ էդ վշտով մեռավ, պապս էլ էդ դարդով մեռավ...

– Աղջիկ, սեր, փող... Հերս էլ էդ դարդով մեռավ...

– Դինամիկ ոճով նկարագրել, հանել գյուղի և քաղաքի պատկերը, պատկերը քաշել:

Գյուղական խավարը, կարիքներն ու չարիքները, աղքատությունը, տգիտությունը, վաշ<խ>առությունը, ռուս պետության հալածանքները, չինովնիկները:

– Տեր Թաթոսենց Հայկոն, որ կենդանի օրով իր հոգու հացը տվեց՝ ասելով որ կին, զավակ չունիմ, մահիցս հետո՝ ո՞վ պիտի հոգուհացի մասին մտածե. հարսնե՞րը, թե՞ եղբոր տղերքը: Ոչ ոք: Եվ ես պարտական կմնամ իմ համաքաղաքացիների առաջ, որոնց ազգականների հոգեհացը կերել եմ ես:

– Բեգավա Օհանը, ջուր բերող ձրի. կանֆետի թղթեր էին տալիս, թե մանեթ է՝ վարձի փոխարեն, բայց կերակրում էին:

– Խելառ Պոտոն. մեռել թաղելը՝ հարուստի և աղքատի, զանգերի, ձայնավոր, ծանր, հանդիսավոր, երթ. իսկ աղքատներինը՝ ափալ-թափալ, կլիսատ, վռազ, վազք դեպի գերեզման...

– Սա երազ է, ասում է մեկը աչքերը տրորելով՝ երբ տեսնում է մի անհավատալի երևույթ, իր, դեպք: Հանկարծ տեսնում է փողոցում մի ընկերի, որին երկար տարիներ չէր տեսել և չէր սպասում նրա գալը, և կորցրել էր նրա հետքը... կամ մի հոյակապ շենք իր չսպասած տեղում, իր քաղաքում: Կամ այնքան գեղեցիկ, կատարյալ, որ թվում է սուտ, անիրական: Օրինակ: Մասիսը երազ է, սուտ , անիրական...

– Մեր կանայք գնում էին գերեզմանատուն և խոսում էին իրենց մեռելների գերեզմանների հետ, գանգատվում տան դրության մասին... Օրինակ, Գարեգին Լևոնյանի

մայրը, գնում էր և մեկուսանում Ջիվանու գերեզմանին, աստւմ. (իր ուղեկցողից մեկուսանում) Գարեգինդ ինձի լավ է պահում. Պարույրդ կնիկ առավ, յոլա չեն գնում. աղջիկդ դեռ մարդու չի գնացել... Լևոնդ ուսում է առնում, այնինչի հարսը հետս լավ չի...

Հավատացած է, որ մեռելի հոգին ներկա է, և հաչիվ է սպասում, որ հանգստանա: Եվ հատկապես մեռելների հոգիները սպասում են «Մեռելոցի օրին». այդ օրը պիտի անպատճառ այցելել մեռելներին, որովհետև հատկապես այդ օրն են մեռելները սպասողական վիճակում: Մի անգամ, Թիֆլիզում, ինչ-որ պատճառով, մեռելոցի օրը հետաձգել էին, մայրը գայթակղվել էր, զայրացել, զարմացել, թե ի՞նչպես կարելի է, չէ՞ որ մեռելների հոգիները սպասում են... կվիրավորվեն, թե իրենց մոռացել են...

106. <ԷՍ ՖԱՅԹՈՆԸ...>

Էս ֆայթոնը մերն էղներ,
Ակները կարմիր էղներ,
Թռնեի յարիս քովը,
Կարճ գիշերն երկեն էղներ:
(Գիշերը տարի էղներ).
(Թռնեի, երթայի յարիս մոտ):

107. ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ

Անտիկենց Թաթոսը – քարտաշ, որմնադիր:
Ուստա Պապո – իսկյուլան է կապել:
Ուստա Մանուկ, հյուսն, խաչը դնելու իսկյուլան:

Ս. Հռիփսիմեի նորոգությունը և թանգարանը չինեց Ուստա Թաթոսը յուրայիններով:

Ջիդյարչօղլոնց Ուստա Օհաննեսը Փրկիչէ լուսամուտների, դռների վայտեղեն գործերը:

Ուստա Մանուկի նախագծով է շինված Աստվածածնա տաճարը, բարակ սյուներով է շինել, որ չա՛տ կայուն է:

Աստվածածնա խաչկալը շինել է:

Ուստա Պապոն է շինել Ս. Փրկիչը, նա է գլխավոր վարպետը, Անտիկենց Թաթոսը օգնական է եղել: Ըստ Լինչի՝ Մարմաշենի եկեղեցին եղել է Ս. Փրկիչի նախատիպարը:

1876 թվին Ս. Փրկիչի օծումը:

– Հրեշտակակոխ – մահի երկյուղ:

Հիվանդկոխ – ծննդկանին այցելող հիվանդը:

Վերնուց = դալկանալ երեխայի, լուսնի ազդեցությունը:

– Մոտավորապես 150 գիրք:

108. <ԵՐԲ ԾՆՆԴԿԱՆԻՆ...>

*– Երբ ծննդկանին այցելում է մի հիվանդ, այն ժամանակ երեխան **հիվանդկոխ** է լինում, տանում են սրբի դուռ, կամ Զախալօղլու, կամ Սահակ քահանա Սահառունու գերեզմանը, շիշը կոտրում գերեզմանի վրա...*

– Երբ մի դրացի մեռնում է, և ողջ դրացին վախենում է և վախից հիվանդանում, կոչվում է հրեշտակակոխ:

– Վախից կամ այլ բանից, երեխան վերնոց է լինում, դալկության հիվանդություն ստանում: Դա վերագրվում է նաև լուսնի հիվանդությանը:

– Տպղա, տպղի հիվանդություն: Տպղան – չար ոգին մտնում է մոր արգանդի մեջ, ծծում է երեխայի արյունը, աչքերի լույսը նվազեցնում:

– Չար ոգիներ, ուղղակի վարակիչ հիվանդություններ են, բացիլների մասին գաղափար չունեին, և արյան վարակվելը, հիվանդանալը չար ոգիներից էր: Եվ չա՜տ ճիշտ պատկերացում է:

109. <ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ>

Ժողովուրդն այնպես էր հավատացած, որ Ավետարանները, ուր էլ որ տաներին, նրանց զորությունը մնում էր դարձյալ իր տեղում, օթևանում: Ժողովրդի վառ երևակայությունը Ավետարաններն անձնավորում էր, իբր թե նրանք գիշերները թև էին առնում, թռչում: Նրանք ինչպես աղավնի դուրս էին գալիս տոլապից (դարակ, պահարան), բաց էին անում միակ դռները և թռչում հասնում էին իրանց կանչող նեղված հիվանդներին, նրանց ցավեն ամոքում ու կրկին դառնում իրանց օթևանը: Այսպես, օրինակ. Յոթ վերքը բեմի վրա ոսկի աթոռին նստած երկու ճերմակ միրուքով հալևորներ թևերն ընկած, կողքին կանգնած: Փադիշահ Ավետարանը (Ս.Նշանի) սիրուն աղունակ էր դարձած: Ամենափրկիչը թռչունի պես թռչում գնում էր իր օթևանը (Դահառլի): Բասենից բերած Աղա-թուխ Մանուկ Ավետարանը ջահել, բարձրահա-

սակ տղայի պես իր օթևանն էր գնում և նորից հետ դառնում: Օճախուլու Հալիվոր Ավետարանը՝ մահակը ձեռին, գլգլած, կուզը դուրս ընկած, դողդողալով չենլիքի (չենլիք, ընտանիք) միջից անցնում գնում է իր խորանը: Շեկ Ավետարանը՝ միջահասակ տղամարդ, վրան-գլուխը խոտակ, սիրուն դեմքով, շեկ խոպոպներով սպառնում է իր տանտիրոջ երազում, օթևանը մաքուր պահել, եթե ոչ իր գլուցածը կանկ: Զրախլի գյուղի Պապ (Եպապ) Ավետարանը Իլլըվա Կարմիր Ավետարանը նույն չափ գորավոր, նույն չափ հրաշագործ: Նրանց գրողները գոր ու գիշեր մեկ ոսպ են կերել ու նստել, աչքի լույս թափելով, աղի արցունք լալով, անքուն մնալով են գրել: Դրա համար էլ հիվանդները նրանց ոտն են գնում, խնկով, մատաղով, գիշերն օթևանում քնում, որ բժշկվեին: Նրանք հետները բերում են մետաղից շինած սիրտ, աչք, ձեռք կամ ոտք, կախում սրբի վրան, որ բժշկվեն համապատասխան ցավից: Յոթվերքին բերում էին ընծա ոսկիներ, մետաքսե թաշկինակներ, մատանի, ապարանջան: Զանազան սրբեր երազում հայտնվում էին հիվանդներին, որ իրենց գերեզմաններին ուխտ գնան. գնում էին, գերեզմանի հողից (ջուհար) ջուր անում, խմում են, որ ցավերը փարատին:

Երեխան կոխ է լինում, չի կարող քայլել, գնում էին սրբի դուռը, ավետարանի ոտը:

Զբերք կանայք անցնում էին սրբերի մասունքների կամ պատկերների տակից, որ երեխա ունենան: Լենինականում եղել է մի շատ հաստ բարդի ծառ. կանայք նրա շուրջը երեք անգամ պտույտ էին անում, գույնզգույն թելեր, շորեր էին կապում ծառից, որ երեխա ունենան:

— Դևերը սատանաներից մեծ են, զարհուրելի, օխթը գլխանի են, պուռշները՝ հաստ, օխթը թիզ կախ ընկած, այնպես որ մինչև ծնկները կհասնին. ամեն մի ոտքը (ո-

տը) հաստ գերանի չափ, երբեմն մի աչքանի, բայց շատ մեծ աչք: Դևերի գույնը զանազան է — սև, ճերմակ և կարմիր: Նրանք նորածին երեխային փախցնում են ու տեղը հրեշ դնում: Նրանց ձեռն ընկնողը էլ ազատում չունի:

— Հիվանդությունները համարվում էր «չարոց» գործ, դիմում էին գրբացների, համայիլ գրողների, Սողոմոնի և վեցհազարյան կարդացողների:

— Ամեն տուն ուներ իր տանտերը: Մի պառավ ասում է, որ իրենցը մի օձ էր (տան պահապանները եղել են — օձ, կարիճ, մողես, աքիս). գիշերները, երբ բոլոր քնել են, նա շրջում էր տան մեջ և քաշվում թոնրի գլխին, գալարվում, քնում, մինչև լույս, երբ տունը զարթնում էր, ապա մտնում իր բույնը, պատի ծակը: Նա տնեցիներին անվնաս էր. նրան չպիտի դիպչել. եթե ոչ՝ կխռովի, կգնա և իր հետ կտանի տան խերն ու բարաքյաթը:

— Եղունգի աչել, թիակի աչել:

Գարի քցել, նետ դնել, թիզ չափել.— դրանց անում էին գուշակները, սրանց ցուցմունքով հիվանդները գնում էին այս կամ այն սրբի դուռը:

— Ընկնավորները: Ուխտատեղիներում հանկարծ ընկնում է մի կին, թավալվում է գետնի երեսին, բերանը փրփրում է, աչքերը վառվում և կատաղի կերպարանք է ստանում, որպես թե տանջվում է աներևույթ զորությունից: Դողդոջուն շրթներով արձակում է խուլ, մթին և անկապ խոսքեր. պատգամներ է տալիս սրբի կամ խաչի անունից, նրանց կողմից: Ոմանց գեղեցիկ ապագա խոստանալով, ոմանց սպառնալիք տալով. ամուլ կանանց զավակ խոստանալով, պարտավորեցնում է զոհեր անել աղայի (սրբի, խաչի, ավետարանի) համար. մի քանի տարի ոտքով ուխտի գնալ, առատ նվերներով:

— Պոռնիկներին, ապօրինի կենակցողներին մեռնելիս թաղում էին հասարակաց գերեզմանոցից յոթը քայլ հեռու, որպեսզի նրանց հողը չխառնվի մյուսների օրհնած հողին:

— Թպղի: Չար ոգի, որ մտնում է կնոջ արգանդի մեջ, խմում էր նրա արյունը և աչքերի լույսը նվաղեցնում. ծնվող երեխան թուլանում է, նվազում, մեռնում: Թպղի հիվանդությունից ազատվելու համար կիրակի էին պահում, երեխայի վզից կախում էին գույնզգույն հլուներ: Հլուները զանազան անուններ ունեին — աչքի հլուն, ծմրահլուն, թպղահլուն, դեղնահլուն: Սրանք պաշտպանում էին երեխային չար աչքից և այլ ցավերից:

— Երեխան դպրոցում լավ սովորելու համար երեկոյին մի կտոր հաց են աղոթում, դնում նրա բարձի տակ. առավոտ, երեխան հացը պետք է տա շան և ասե — «Բրդուջս քեզ, իզանդ տուր ինձ»:

— Երբ գարնանը արագիլը գար, և նկատեին կտուցում կանաչ խոտ, նշան էր տարվա առատության. չորցած խոտ, ցախի կտոր — երաշտի նշան. իսկ եթե՝ օձ կամ մողես — պատերազմի, արյան, նեղության նշան:

— Լենինականում մի տարեկան երեխա տեսա, անունը Թելման էր: Ի՛նչպիսի միջազգային զգացում է գիտակցության:

— Օրհնեք (Օրհնանք), Տիգո ջան, անունիդ հետ մնաս:

Լենինականի սովորություն, ավանդություններ:

— Ծննդականի բարձի տակ դնում էին համայիլ, կամ Նարեկ, և կամ երկաթի կտորներ, որ նրան չարքերը չմոտենան:

– Աստվածածնա պատկերը (որ հին խաչվառի մնացորդ է, հետևը Քրիստոսի հարությունն է նկարված). Աստվածածինը գրկել է խաչին իջեցրած Քրիստոսի մարմինը, գրկել է մեռած Վարդան և լաց է լինում: Մոր սրտի վրա (մեջ) խրված կան 7 սուր, չորսը աջ կողմը, երեքը ձախ կողմը: Այդ յոթը վերքը, ինչպես բացատրում են, Հիսուսի խաչի վրա արտասանած յոթը խոսքերն են, որ խոցեր են պատճառել մոր սրտին.–

1. Հայր, թող դրանց մեղքերը, որովհետև չգիտեն ինչ են անում:

2. Այսօր ինձ հետ կլինես դրախտում:

3. Աստված իմ, Աստված, ինչո՞ւ թողիր ինձ:

4. Ահա քո մայրը, ահա քո որդին:

5. Ծարավ եմ:

6. Ամեն ինչ կատարվեց (կատարեալ է):

7. Հայր, քո ձեռն եմ ավանդում իմ հոգին:

Սատանան սև է, երկու կեռ պոզերով ու մանր ականջներով: Նա ունի բարակ ու ծուռ պոչ, կոշտ և սև մազերով ծածկված, աչքերը մանր են և փայլուն. ոտները թարս են, երկար եղունգներով:

– Հոթոթները սատանի պես են, ապրում են ճահիճների մեջ, թավալվում են տղմերում, ոտքից գլուխ սև տղմի մեջ կորած. դուրս են գալիս օրը-ցերեկով հանաքներ անում, տեսակ-տեսակ պար խաղալով միամիտ մարդկանց դրավում մոտեցնում են տղմին և հրհրելով նրանց ճահճի մեջ, անհայտացնում են:

Ոճիր. հոթոթ ելավ:

— Ճոճի պառավներ. նրանք ապրում են ճահիճներում, նրանք մերկ են, հաստ ու պարարտ, նրանց ծծերը ինչպես կուրծքին դրած մի-մի գառ լինին: Լճերի ափին՝ ձի, եզ, դոմեշ, մարդ, երեխա պատահելիս՝ ներս են քաշում ու խեղդում:

— Գրողը ունի և իր դղիրը. գրողը ունի ձեռքում երեք տեսակ ճիպոտներ՝ սև, կանաչ, կարմիր. եթե ձախ ձեռքով սև ճիպոտով խփե, մարդն անմիջապես կմեռնի. նույն ձեռքով եթե կանաչ ճիպոտով խփե, ծանր կհիվանդանա, բայց չի մեռնի. իսկ եթե աջ ձեռքով կարմիր ճիպոտով խփե, թեթև հիվանդությունից հետո կառողջանա:

Գրողի գարկած կսևանա: Որ թաղում շները պիշերը օռնան, գրողն այդ թաղումն է, կնշանակի:

Շվոտը ան-վնաս ոգի է. բարձրահասակ, բարակ սպիտակ չապիկ հագած: Շվոտը մարդկանց պես ծնվում, բազմանում է, իսկ գարնանը կենում է հանդերում. շվոտները ծեծում են տավարին, մարդկանց ամաններին մեջ քար են ձգում. վեսպվար ամսին տներից թանգագին չորեր տանում-հագնում են և կեղտոտելուց հետո կրկին վերադարձնում են տիրոջը: Մարտի 1-ին պառավները մի կտոր փալաս կամ թոնրի ծածկոցը դուրս էին տանում պատերին գարկելով կրկնում. «Մարդը ներս, Շվոտը դուրս»:

— Աչագնդակիս հետ միասին թռավ մանկությունս:

— Փայտե ձիս հեծած՝ արշավում էի մեր տանիքների վրա երևակայական թշնամու դեմ, հեռավոր հորիզոններին, կախարդական աշխարհներին հասնելու:

— Երեխան գտալ ձեռին, թանապրոտ կրծքով:

— Ուղտերի շատ քարավաններ չունին առաջնորդող էշ կամ ջորի, այլ միայն նառ դևական, ուղտը:

ԳՅՈՒՄՐԻ

Գյումրին ուներ առաջ հետևյալ անուններով խանութներ.

Ճիճվի պիվնոյ
Ճերմակ Համոյի խանութ
Տացոնց փուռը (ֆուռը)
Զուճղուլի ղայֆեն, և նրան կից Զար-հոգու փուռը:
Սենոյի պիվնոյ
Հարոյի, Հարթենի միկիտանը
Աղան-աղբոր տպախտիրը:

– Մեր լոթինները մեռելոցներին իրենց մեռած ընկերների գերեզմանների վրա սեղան են բանում (հաց, միս, պանիր, գինի) տերտերի օրհնենքի – հոգոցի հետ, զուռնա (փող) են փչել տալիս, նվագում, խմում են [մեռելն<երի>] հանգուցյալների հոգու հանգստության և արքայության [արժանացնելու] արժանանալու համար, և [նրա մեռածի վրա] գերեզմանի վրա գինի են թափում, բաժակով, իբրև նրա մասը, բաժինը:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հորսելի
Եղան
Սամի, սամոտի, սամոտիք
Սանդերք
Ճախարակ
Ճահրա, ճամերք:

110. <ԿԱՐՈՆ ՆՍՏԵԼ ԷՐ ՍՐՃԱՐԱՆԻ...>

— Կարոն նստել էր սրճարանի դռան առաջ և նայում էր անցորդներին... ո՞վքեր էին այս մարդիկ, ո՞ւր էին գնում, ինչո՞ւ էին գնում. մեկը գնում էր, մեկը գալիս էր, ամենքը մտաղբաղ... ի՞նչ էին մտածում, ի՞նչ էին ուզում... և բոլորն էլ անծանոթ էին, անճանաչ, առաջին անգամն էր տեսնում նրանց. «Տեսնես ի՞նչ մարդիկ են, ի՞նչ կուզեն... տո՛, խոսքի [օրինակ] համար, էս մարդը, հեչ մտքովս չի անցնե, թե էսպես մարդ կա աշխարքի մեջ, ես էլ իրան համար չեմ էղեր, ի՞նչ կասկած, զարմանք բան է... Էս մարդն էլ իրան մարդու տեղ կդնե, ինչդ ես ինձ: Կարելի է մարդու էլ չի հավնի, կարելի է չա՛տ էլ շնորհքով մարդ է, ինչ իմանաս, կարելի է վրան մեկ-երկու կնիկ կա աչք քցած, և ես էս մարդուն չդիտեմ, ինքն էլ ինձ...»

Ուզեցավ նույնիսկ նրան խոսքի բռնել, տեսնելու թե իրան պես մարդ են, նստել հետը. չեղավ, գնաց: Մեկ ուրիշն եկավ, Ուստան կանգնեց առաջը, հարցրեց.

— Ախբեր, ներող էղիր, ինձի ճանանչ կերևաս, դու խո, խառաթ Ուստա Սարգիսը չես, որ էջմիածին կբաներ,— (դիտմամբ հարցրեց Ուստան հետը խոսելու համար):

— Չէ, աղբեր չան, ես [թարչկի] սաբոկչի եմ, անունս Հակոբ է:

— Աստված կյանք տա քեզի, Ուստա Հակոբ, ճանանչ թե անճանանչ, հայ քրիստոնե աղբեր ենք, մեկ ավազանի մեջ սուրբ մեռոնի տղա, կրնամ իմանա, խանութդ ո՞ւր է, ինձի ու ընկերոջս համար չուխտմ՝ լավ երկեն բկով սաբոկներ կրնաս կարե, ժամանակ կունենա՞ս:

— Գլխուս վրա, բաներուս անունն ինչ է. էգվան համեցեք դուքանը, չափը առնիմ:— Եվ հարեց,— Քու ազիզ անուն ինչ է, աղբեր չան:

– Ուստա Կարո, ես էլ տան չինող եմ:

– Ուստա Կարո, Աստված քեզ էլ կյանք տա, քու ընկերոջդ էլ, ես կըսեմ դուք ղարիբ եք, մեր քաղքեն չեք:

– Էդպես է, Ուստա Հակոբ, ձեր քաղքեն չենք, հմա ղարիբ չենք, փառք Աստուծո, ինչքան աղբեր տղա ունինք, քեզնեն լավ չէղնին, ըսկի ղարբություն չենք քաշե. համեցեք նստենք, քիչմ' խոսինք, ի՛նչ կուզե սիրտդ, տո՛, տղա,– կանչեց սրճարանից ներս,– էստեղ աթոռք բեր, տես Ուստան ի՞նչ կուզե:

Սպասավորն եկավ, աթոռ բերեց: Հակոն չայ ուզեց:

Երկու վարպետները իրար հետ խոսքի սկսեցին. էստեղից-էնտեղից, օրվա դեպքի մասին, երիտասարդի ինքնասպանության... Եվ երբ մի ժամից հետո Հակոբը գնաց, նրանք արդեն բարեկամներ էին, ասես, վաղեմի ծանոթներ:

Գնալուց հետո՝ Ուստան իրեն հետ խոսեց – «Դեմդ ելնող մարդուն որ խոսցնես, կիմանաս, որ քեզ պես մարդ է, խելք էլ ունի, ցավ էլ, դարդ էլ, ուրախություն էլ: Տո՛, մարդ ինչպես գիտե, թե մենակ ինքն է մարդ կամ իրան ճանանչները: Փառքիդ մեռնիմ, Աստված, ամենքին էլ մարդ ես չինե, աչխարքին էլ խելք ու խոսք ես տվե, ամենքն էլ կրնան մարդու համար ընկեր և էլ ախպեր դառնա, նորեն փառքիդ մեռնիմ, որ մարդուն մենակ չես թողե, որ ուզենաս, ամեն մարդ էլ քեզի ընկեր-բարեկամ է...»

Ուստա Հակոբի հետ խոսակցությունը օրվա այն դեպքն էր, որ մի մարդ սպանել էր մի ուրիշին՝ նրա պաշտոնը ինքը ունենալու համար: Կ.Կոմիտեն բռնել էր նրան, և ծեծի տակ սպանել: Քաղաքը ծափահարում էր այդ քայլը. «Պետք է կտոր-կտոր էնեիք էդ գազանին, մարդ էլ հացի համար ուրիշին սպանե: Մյուս օրը Ուս-

տան կոշիկ կարել տվեց, հետը բարեկամացավ, չանախ կերավ: Խմբի անդամ էր, դաշնակ, լավ ազգասեր:

111. ՎՌԱՄԸ

Եղբայրը մեռել էր: Նա թողել էր խանութը և քաղաքից դուրս բոստաններում, ծառերի տակ վրան էր զարկել և վշտից քեֆ էր անում, փչում էր զուռնան, մանավանդ վողը: Վռամը խմում էր ու գլխին, կրծքին տալով լալիս, գոռում: Ընկերները խմելով մխիթարում էին նրան, և տխուր, սրտամաշ եղանակներ նվագել տալիս: Ուստան գնաց նրան տես, և զարմացմամբ հեռացավ: Այդպիսի բան նա չէր տեսել իր շրջած աշխարհներում, ոչ մի ճամբու վրա, ոչ մի քաղաքում՝ թե մահմեդականի, թե կռապաշտի, թե քրիստոնյաների:

112. ՔԵՖ (ՎՌԱՄԻ ՄՈՏ)

Նվագում էին երգեր, ազգային, քաջության, սիրո, կռվի. նվագեցին ջեզայիրը... Բոլորը ոգևորված էին և հուզված, հիշելով իրենց մեռած ընկերներին կամ կռվի գնացած, Սասունում կռվող — հիշում էին Թումանին, Վռամին, Մարտիրոսին, Հարոյին... իրար գրկում ու լալիս էին, և իրար համբուրում. Ուստային էլ համբուրեցին բոլորը, Ուստան էլ նրանց:

Կենացներ՝ կարճ, սրտառուչ խոսքեր:

Մեկը մյուսից անկախ, ինքն իրեն համար, խոսում էր — ախ, Վաղո ջան, անունիդ մեռնիմ, նպատակիդ մեռնիմ, անուշ ջան, ես էղնեի տեղդ, և լալիս էր:

113. ՍԱԼԴԱԹՆԵՐ ՌՈՒՍ

Գարմոն էին ածում, ոտները փարթ քցելով. մերկ՝ կարմիր չիթե շապիկներով: Մեկ սալդաթ ընկավ ցեխի մեջ, պառկեց ու քնավ:

Լսեցին, որ մի ջահել տղա, աղքատ, խանութի առջևից մի կապած ձի քանդել է, հեծել, փախել Ղարս՝ Հայաստան գնալու համար:

– Խոյ էին կռվեցնում, ժողովուրդը լարված, ջղաձգված՝ խրախուսում էր խոյերին.– Տո՛, զարկե,– ինչ տվեց գլխուն, կոտոշներեն պեծեր ելան. ապրիս, ոսկի է, ոսկի է, խո, ղոչ չէ:

– Մի հայ և մի վրացի՝ գոտեմարտ, հոգով մասնակցում էին, կոչեր, ձայներ, ձեռների շարժումներ՝ նման գոտեմարտողների շարժումներին: Հայը հաղթեց՝ առան լոթինները, գրկեցին, փաթեցին իրենց չուխաների մեջ, դրին ֆայտոնը տարան. վրացի զինվորականներ, սպաներ գրգռվեցան, խորամանկություն գտան հայի կռվի եղանակների մեջ. հայ սպաներն էլ տաքացան, մազ մնաց կռիվ ծագեր, ոստիկանությունը արգելեց: Ուստան թևերը քշտել էր՝ կռվի պատրաստ:

114. <ԱՆՑՅԱԼԸ ՄԵՌԱԾ...>

– Անցյալը մեռած ու թաղված չէ. նա միշտ կենդանի է մեր մեջ, հաճախ քնած, հաճախ արթուն, և հրամայում է:

— Մահի վրայեն պլստալով պիտի անցնենք, չմտածենք: Պիտի լավ ապրենք, քեֆով, տղամարդու պես, կրակի պես, և որ օրը գա մեռնելու, նորեն տղամարդու պես սուս ու փուս մեռնենք:

Ես իմ չէրած բաներեն եմ փոշմանել, էրածներեն չեմ փոշմանել: — Ծերունին Գյումրի:

115. <ԳՅՈՒՄՐԻՑ ԴԱՐՁԻՆ...>

— Գյումրիից դարձին, երբ իջան Արագած կայարանը, [Ուստան ասաց] Զավուշն ասաց.— Ի՛նչդ չուտ հասանք:

Ուստան պատասխանեց.— Թվանքն հնարավ, կտրիճուԹյունը վերացավ, երկաԹե մաքենան հնարավ, ճամբեն կարճոտցավ... Քարվանով էս ճամբեն երկու օրվա բան էր, չորս սհաԹվա մեջ եկանք...

116. <ՍՈՒՏ ՄՆԱ...>

— Սուտ մնա, ղորԹ մնա:

— Գնացին բաղնիք, ձմերուկը դրին տաք ջրի մեջ՝ սառի:

— Քեֆին, մեկը կոտրեց չիչերը, պատուհանի ապակիները, մյուսը բաժակը ձգեց և լամբարի ապակին (գլանակը, սրվակը, չիչը) կոտրեց, խավար եղավ:

— Քեֆ արին, բղավեցին, գոռացին, կանչեցին, աղմուկ, աղաղակ:

— Գյումրվա փողոցներում:

Դարբնոց, Ղազանչոց, Ոսկերչոց և այլն փողոցներ: Դյուրգյարնոցով անցնելիս քերած՝ ռնգած փայտերի,

տաշեղների, տախտակների անուշ հոտը, անտառների հոտն է քաղաք լցված:

– Բովտած սուրճի հոտ:

– Զարդարված կանայք, ֆայտոններ:

117. ԳՅՈՒՄՐՎԱ ԳԼՈՒԽՆԵՐԸ

= ՈՒՍՏԱՆ ԵՎ ԶԱՎՈՒՇԸ ԳՅՈՒՄՐՎԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ, մթնոլորտը ներկայացնել, երկաթուղին, խանութներ, բազարներ...

= ՈՒՍՏԱՆ ԲԱՂՆԻՔ, ՍԱՓՐՎԵԼ, ՆԿԱՐՎԵԼ, ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱ, ԹԱՏՐՈՆ, ՅԻՐԿ:

= ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ:

= ՏԵՌՈՐ:

= ԿԵՆԴԱՆԻ ԳԱԶԵԹ, ԲՈՒԼՈՒԼ ՄԱՐԳԱՐԵՆ:

= ՔԵՖ:

= ՀՆԶԱԿՅԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ:

= ԿԱՊՒՏԱՆ ՂԱԶԱՐԸ:

= ՄԱՍԸՍԱ ՔԱՋԵՐՆ ՈՒ ԴԵՎ ՍՈՒԼԹԱՆԸ:

= ՏԵՐ ՄԼԵ:

= ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏ:

118. ԳՅՈՒՄՐԻ

– Ուստային Զավուշը ցույց տվեց գերեզմանոցները, ընդարձակ դաշտ, լեցուն գերեզմաններով:

– Փուչ աշխարհ. էնքան տանջվելուց, աշխատելուց հետո վերջերս էս է:

– Էս մեզի համար չէ, Զավուշ ջան, մեզի մեռնել չկա:

— Մեռնելուս չեմ հավատա. իմ մահին չեմ հավատա: Ինպես կերևա ինձի, թե ուրիշներն են մեռնելու, մեռնողը նրանք են, մեռնելու համար ծնված:

— Մարդ էլ իրեն մահին հավատա. հնչ նղած բան չէ: Ես քանի կծերանամ, լսել է, մահին կմոտենամ, էնքան ավելի ինձի կերևա, կզգամ, որ մահեն օրեցօր ավելի կհեռանամ. մահը մաքես կելնի օրեցօր... ասում էր մի ծեր մարդ:

119. <ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ Է ՏԵՍՆՈՒՄ...>

26 մարտի, ժընև, 1920

Ուստան Գյումրի է տեսնում Բյուրոյի մարդուն, որի հետ է լինում և Ղարսա Պող-Թագավորը. խոսում է նրանց հետ, հայտնում է իր նպատակը Հայաստան գնալը, առաջարկում է մեծ գործի քանակ, գենք, ձիեր, թնդանոթ. նրան պատասխանում են թե՝ որովհետև չա՜տ բան ես ուզում, Թիֆլիզ պիտի խորհրդակցեն, և Պլոն Ղարսից կհայտնի քեզ: Ուստան այս ասում է Քերոբին, և հանդիպում վերադառնում է Նախճվան, սպասելով Պլոյի նամակին: (Գյումրի է երևում, մուխլ գյուղում, Ավագ-Սարկավագը կամ գաղթական վարդապետը):

Դասեր է տեսնում. Բագրանի ուխտը. Թորոն նկատում է և Օսկանին ասում՝ թե Ուստան թող ոտքը կտրե մեր տնից: Ուստան պոռով Օսկանին ուղարկում է խնդրակ. Օսկանը գալիս հայտնում է Կարոյին, թե անկարելի է, չի տա, և արդեն խոսք է տվել կողբացուն. Ալմաստից հետո՝

Սանամի պսակն է. և թե՝ Թորոն պահանջում է, որ Կարոն չպետք է քավոր լինի իր աղջկա պսակին, որովհետև նա մաքուր սրտով չի մտել մեր տունը: Կարոն գնում է Քիրս, Լորիկի միջոցով իմանում է հետևյալը – Սանամը ասում է թե՝ ես Ուստային չեմ առնի. նա հարուստ մարդ չէ, արհեստավորի մեկն է, տուն-տեղ չունի. և Հայաստան կուզե երթա. ես ինչո՞ւ պիտի որբևայրի նորից տունը մնամ. թե որ ինձի կուզե, թող տանի իր գոված հեռու աշխարհները և Քյոշք-սարայի մեջ պահե, իր խոսքերի համաձայն:

Ուստան վիրավորված վերադառնում է Նախճվան, լուրջ մտածելով, որ նրան փախցնե, մուրազատու Տերտերի միջոցով պսակվի, հետո կնայե իր գործին. կնիկ ասած բանը ձի է, որ հեծավ, խոսքը նրանն է. Օսկանին ասում է իր միտքը. Օսկանը չի համաձայնում, թե՝ Թորոն սարսափելի մարդ է, մեր տան հետ կկռվի, աղջիկը տղայիցս հետ կանե, արած ծախսերս ջուրը կընկնին, տղաս կխայտառակվի. Ուստան պնդում է իր ասածի վրա. ապա Օսկանն ասում է թե. դու գիտես, արա ի՛նչ որ քեֆդ ուզում է, բայց հարսը իմ տունս մի բեր. Կարոն ասում է...– Քո՞ւ տունդ. չէ՞ որ քու տունդ իմ տունս ասել է, մենք աղբեր ենք, չէ՞. Օսկանը թե, աղբեր ենք, բայց հարսը տունս մի բեր, աչխարհ վրաս կխնդա:

– Օսկան, էդպե՞ս, հա:

Օսկանը լուռ է:

Կարոն – Օսկա՛ն, բան էդպես եղավ:

Օսկանը լուռ է:

– Ե՛լ (Քերոբին):–

և գնում է ինքը:

Գիշերը դուրսը:

Մյուս օրը՝ Մրեն:

Մոածում է. փախցնել. դյուղերում պահել. երթալ հեռո՛ւ տեղեր. բա, Հայաստա՞նը. գուցե, էգուց մեկէլ օր՝ Պլոյից նամակ գա: (Այս ժամանակներն է նա ասում Սարի գլխի կամուրջի մասին): Ի՛նչ անել. եկողը ձմեռ է. ո՞ւր գնալ. Սանամ և Հայաստան. Սանամ կամ Հայաստան...

Գալիս է Հարուքը՝ իր մոտը տանելու. Հարուքը Հայհոյում է Օսկանին, Թորոյին, Սանամին, Հայաստանին. և «Ոչինչը»:

Ուստան գնում է Հայաստան...

Վերջը:— Բոլորին բարև է ղրկում, մոռացել է իր վրեժը... և Վանա ծովափին՝ ուրախ և պայծառ արևի տակ...

Երբ Քերոբին ասում է. «Ե՛լ»,— ու ինքը դուրս է նետում իրեն, Օսկանը վազում է, որ նրան բռնե. Կարոն [դուռը ամուր խփում է նրա երեսին] ձեռքը տանելով ատրճանակին՝ դուռը ամուր խփելով նրա երեսին, Օսկանը վախենում է. Քերոբը վազում է Ուստայի եռևից, խնդրելով, որ ետ դառնա. Կարոն ասում է թե՝ անկարելի է. թքածս չեմ լիզի, գնա, ավանակին առ, ևկ եռևիցս, [ես գետի վերևն եմ] ես Ս.Ղևոնդա գերեզմանի վրեն եմ: Օսկանը խնդրում է Քերոբին, որ Ուստային ետ բերե, ասելով թե՝ մի քածի համար՝ երկու աղբեր չպիտի [բաժնվին] բաժանվին. սակայն Քերոբն էլ վիրավորված է Օսկանից, ասում է, թե Ուստիս խոսքը դետին չպիտի առնի: Եվ չտապով հավաքում է ձեռքն ընկած բանը: Օսկանն ասում է, թե դիշերով ո՞ւր, գոնե Տացուի կամ Տիրացուի մոտն [եղեք] մնացեք, մինչև Ուստին խոսք հասկացնենք:

Քերոբը խնդրում է Ուստային, որ գնան Տացուի մոտ. Կարոն թե՝ ուրտեղ որ Օսկանն է, ինձի համար մեռավ. Նախչևանեն հեռո՜ւ: Աչքս էլ չպիտի նրա ծուխը տեսնի: Նախչվանեն հեռու:

Ուստան անհունորեն զայրացած էր. նա սպասում էր, որ Օսկանը պիտի ասեր. քեզի համար ամեն բան կանեմ, տունս-տեղս կավիրեմ, քեզի հետ կլինեմ. թող Թորոն նույնիսկ աղջիկն էլ հետ անե. բայց Ուստային՝ ախբորս, գետին չեմ զարկե: Օսկանը նույնիսկ ուզում է, որ քավոր էլ չլինեմ. Թորոյի բարեկամությունը ինձեն բանձր կդասե: Ախբերը աղբոր համար պիտի գլուխը տուրը տա: Նա (Օսկանն) կտեսնի, որ կյանքս ազգի համար եմ դրել. էգուց-մեկէլ օր պիտի երթամ, տունս-տեղս իրան եմ թողնում. մի՞թե իմ սուրբ նպատակի համար, նա չպիտի պահեր իմ կնիկս ու երեխաս՝ իմ հիշատակը:

Հարութ, Հարութ, իմաստուն տղա. հաստա՜տ կասես, որ աղբերություն սուտ բան է... իրեն օգտի համար ճամբան առջևս կդնե:

Պետք է հասկանալ, որ Ուստայի հոգեբանությունը փոխված էր, ու վերջին ժամանակները շա՜տ հուզված: Հայաստան գնալու վճիռը և նրա մոտալուտ կատարվիլը (գարնան), Սանամի դավաճանությունը, որ մի շաբաթ առաջ Բագրանում իր գրկի մեջ՝ երդում կուտար Հավիտյան սիրելու... Այս ամենը նրան չափազանց վրդովել էին, ու հավասարակշռությունը կորցրել: Դատերն էլ նրան բավական գրգռել էին: Եվ վերջապես նա շա՜տ դյուրագաց, փափուկ սիրտ ուներ:

Այնպես որ նա խորին վիրավորված՝ ընկավ դուրս, և չէր ուզում ո՛չ մեկի դուռը ծեծել գիշերին. ո՞ւմ դուռը. ո՞վ է ընկեր, ախբեր. չէ՞ որ ամենից լավ ախբերը նրան դուրս է անում. էլ ուրեմն ի՜նչ ախբեր. ախբեր չկա աշխարքի երեսին:

Եվ վերջապես ի՞նչ ասել. ասել, որ Օսկանը դուրս արավ, տուն չունի՞ նա այլևս, իր պյուղում, իր տանը հանդեպ-դիմաց՝ նա անտուն աղքատի պես պիտի ապաստարան որոնե. ինքը որ ուրիշների համար ինչքա՜ն տուն է չինել, ինքը հիմա — [աշնան] ձմեռվա բերան՝ անտուն. և վերջապես ում տուն որ գնաց, վրեն կխնդան. կասեն՝ Ուստան վռնդված, իր սիրածը ծաղրում է, Թորոն չի ուզում քավոր դարձնել. ապա Ղուկասը... ինչպե՞ս նա պիտի ուրախանա... ո՛չ, Ուստան չոլերում կապրի, ուրիշի դուռը չի ծեծե. Նախչևանի [ժողովրդին] ժողովրդի աչքին չպիտի երևա... Ուր գնալ — երկու լավ բարեկամ ունի — Մարուքն ու Հարուքը: Մարուքը Քիրս է. անկարելի է այնտեղ: Իսկ Հարուքը գնաց Բագրանից՝ առանց Ուստային մնաս բարև ասելու...

Ո՛չ, նա ուզում էր մենակ լինել, որ անելիքը որոշեր. տղամարդու պես, և ոչ թե ընկերի խղճահարությանը ենթարկվեր. նա կանե՝ ինչ որ ուզում է. Սանամին կփախցնե: Հարուքը իր բանի համար անպետք է, իսկ Մարուքը քիրսեցի է, Թորոյից կվախենա, երեխա ունի, տուն-տեղ: Կդիմե թերևս Հղլաթին ու Նշանին, կամ մենակ: Փախցնե, կտանի ուրիշ տեղ, հետո Հայաստան կերթա. իսկ եթե փախցնել չեղավ, օ, էն ժամանակ՝ թուրը կքաշե, և ուղիղ Հայաստան կերթա (Բյուրոյի օգնությամբ) և էն խելագարի պես, որ կանանչ արտերը քաղել է, նրա պես՝ բայց քուրդ ու թուրքի ղլուխները կհնձե:

Եվ դիշերը, նա զգաց, որ Օսկանը նրան չահագործել է տարիներ, որ նա օտար է այս կողմերը, ախբեր չունի, խորթ է, որ ինքը խաբված է եղել, Օսկանը և բոլորը լայն, հացի օրերի ընկերներ են:

Օսկանը զոռով գնում է Թորոյի մոտ. Թորոն ասում է, թե ես Ուստային հարս չեմ տա. Հայաստան երթա-չերթա

միևնույն է. կողբեցու պես մարդը կուզե. հարուստ, տնով-տեղով. ես խիղճ ունեմ, հարսիս, որ աղջիկս ասել է, չեմ կրնա կորցնե. էնոր բախտին քարով տա. կողբեցուն խոսք եմ տվել, որ Ալմասին պսակելուց հետո, նրան հարսնիք անեմ:

Եվ պահանջում է, որ Ուստան քավոր չլինի: Այս ամենը Օսկանը հայտնում է Ուստային. Ուստան չի լսում, գնում է Քիրս: Մինչ այդ — Օսկանը խնդրում է Տացուին և տիրացուին, որ նրանք Ուստային խորհուրդ տան՝ էդ կնոջից ձեռք քաշե, ուրիշը գտնեն. և Օսկանը խոստանում է կարոյի կնոջը քրոջ պես պահե, երբ Ուստան, բան է, Հայաստան գնա: Տացուն և տիրացուն Ուստային խրատում են և հասկացնում, թե Օսկանի վիճակը փափուկ է. ի՞նչ անե խեղճը. եթե փախցնես կամ փորձես փախցնել, Թորոն աղջիկը հետ կանե, Օսկանի հետ բարեկամությունը կվերջացնե, որովհետև, չի կարելի, որ Թորոն իր աղջիկը տա էն տունը, որտեղ և իր հարսն է փախցրած:

Այս խոսակցությունից հետո տեղի է ունենում գիշերը Օսկանի հետ խոսակցությունը, և բաժանումը:

Դրա համար էլ Ուստան ասում է, որ ինքը բարեկամ, ընկեր չունի. ո՛չ Տացուն, ո՛չ տիրացուն: Ուրեմն խաբված է եղել. բոլորն էլ հացի սեղանի բարեկամներ են եղած: Ահա իր հիասթափման աղբյուրը:

Ղարս գնալու գիշերվա մեծխոսիկ պարծենկոտությունից մասեր դնել նախընթաց գլուխներում, երբ Ուստան իր ծրագիրներն է հյուսում ու պատմում Ռեսին, Քերոբին և այլն:

120. <ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԱՐԴՈՒՆ...>

Ուստան Գյումրի Բյուրոյի մարդուն, երբ սա ժամացույցը հանեց նայեց և ասավ, ժամի 11-ն է, ես կուզեմ երթալ, ասաց՝ պարոն, սահաթդ առաջ չէ՞... Բյուրոն ասաց՝ ոչ, իմ ժամացույցս չա՛տ ճիշտ է ցույց տալիս: Ուրիշները հանեցին իրենցը և հաստատեցին Բյուրոյի ասածը:

Ուստան լռեց և ինքն իր մեջ խոսեց. «Քանի որ մեր մեծի ժամացույցը առաջ է իմի վրա 2 ժամ, և բոլոր դաշնակներինն էլ նույնն է, ու քանի որ ես էլ դաշնակ եմ դառել, պիտի մեկ խոսք, մեկ բերան լինենք»:

Այս [մտքերով] համերաշխական մտքերի տակ Ուստան որոշեց գիջել, և [հետո] իր ժամացույցը ուղղեց. այս մեծ զոհ էր Ուստայի կողմից, մեծ գիջում:

121. ԳՅՈՒՄՐԻ

Ուստայի այնտեղ եղած ժամանակ: Ջինվոր, խմբապետ Արամը քեֆ արեց, արեց և քեֆի ժամանակ, ատրճանակը դրեց քունքին կրակեց՝ ասելով՝ «կյանքից կշտանալիք չկա. մեռնել կուզեմ...»: Եվ դյուդուկների նվագի տակ ընկավ մեռած...

Թաղեցին չքով. Ուստան ներկա էր: Նկարագրել:

122. ԳՅՈՒՄՐԻ

Սրճարանում, դյումրեցիք խոսում են հնչակյանների մասին. թե, էդոնք էլ պետք են ազգին, քանի որ առաջ,

ով որ կխոռովեր հայութիւնից, կերթար ռուս կդառնար. հիմա – հնչակ, որ, ինչ խոսք, ռուս լինելուց գեշ չէ: Ազգի համար կորած չեն. մանավանդ որ տղերքը էդոնց կրնան նորեն դաշնակ մկրտվել:

123. ԳՅՈՒՄՐԻ ԲՈՋ ԵՂՍԱԲԵՐԴԸ

Նրան տարիները, տարիները լլկեցին, տանջեցին, չարչարեցին կոպիտ տղամարդիկ, տուփուռ, վավաշոտ, անասնական կրքերով – հարվածեցին, խոշտանգեցին, տարիներով և հազար մարդ. հազարներ...

Բայց նրա հոգին մնաց կույս, մաքուր թևերով մի աղավնի, ողջախոհ, միամիտ, սուրբ:

Եվ երբ վերադարձավ Երուսաղեմից՝ արդեն երևում էր նա մի հոյակապ մոր նման, սրբազան մոր նման, մաքուր, գթառատ, համեստ, կուսական: Երբ ամոթխած աչքերը ձգած գետին, գնում էր եկեղեցի կամ դառնում էր տուն, բոլոր այն այրերը, որոնք եղել էին նրա մոտ՝ ծարավ նրա մարմնին, իրենց կրքերին հագուրդ էին տվել – հիմա կամ խոնարհում էին գլուխները ամաչելով կամ խղճահարվելով, կամ խոնարհ բարևում էին՝ գլխարկները հանելով...

124. ԳՅՈՒՄՐԻ

Ուստան լսում էր սրճարանից, ճաշարանից...
Երգի ձայներ. հարբած մարդիկ.

...Թող ինձ հանեն կախաղան,
Կախաղանից խղճուկ ձայնով

Պիտի գոչեմ, ախ, Հայաստան.
Ա՛խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
Քեզ նվիրեմ, ընդունիր...

Քեֆին, երևտասարդները, չափահաս մարդիկ, արհեստավորները, մանր վաճառականները...

Ուտում են, խմում են, երգում են:

Նվագում են, երգում են — «Որսկան աղբեր»:

Երբ լսեցին (թեև դամ էին բռնում) «Ո՞վ է գրկում չոր գլուխը» — «Քարն էր դրել բարձի տեղ...» գժվեցին խմողները, ատամներ էին կրճատացնում, բռունցքներ բարձրանում, սպառնում թուրքերին, հայհոյում, իրենց ճակատներին հարվածում... հուզված, գրգռված վիճակ...

125. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ

Ուստան Գյումրի է լսում, սրճարանը, որ երկու-երեք գյումրեցի խոսում էին.

— Կույս կնիկ, դրե վրես... մենակ մի կույս կնիկ է եղել, Մարիամ Աստվածածինը, էնիկ էլ տղա է բերել, մնացածները ո՞ւր կմնան:

Ուստան լսեց ու ինքն իր հետ խոսեց.— Էս գյումրեցիք օյին են, օյին:

— Ապա խոսում էին հնչակյանները դաշնակցականների մասին.

— Թե՝ կերան, կերան, պատռվեցան, հերիք է էլի, Թող հեռանան:

Ուստան.— Թե տեղը ձեզի տան ու ճանճի պատմությունը:

Մի դյումբեցի.

– Է՛հ, կյա՛նք, ի՛նչ բան է կյանքը:

– Կյանքը՝ աղբ է:

– Բայց անուշ աղբ:

Ուստան լսեց, և մտածեց. «Միտքս պահեմ, Հարութին ասեմ, լավ խոսք էր»:

126. ԳՅՈՒՄՐԻ

Գնացինք Արաուլի դրա<խ>տիրը. քաղքցոց լեզվով յանի թե դրախտ... Հա՛խ, դրախտ. էնտեղ կայինն լավ տղերք – քուլի ազգասեր, ղաչինք, տնկոզ, ընկած-ելած, սրբած թրեր – [խոսքի] Դալչոն մեկ, Սենիկը, Ուսուլը, Երկեն Ալեքը, Պոլոզը, Հրաչը, Ծռիկ Մտոն, և էլ շատերը, քուլեկի անունը դրել տվեցի, որ զինվոր տանեմ հետս, օրթե գան՝ լավ կլինի:

127. ԳՅՈՒՄՐԻՒՑ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

Երբ հնձվորները մի խորձ (խուրձ) ցորենահասկ բերին նրան նվեր, Ուստան փող տվեց և ասաց.

– Աստված պահե՛ ձեր արտն ու այգին, ձեր մեջքին ուժ տա, ձեր բազկին զորություն. աչխարքը սովեն դուք եք փրկողը. առանց [ձեզի] ձեր աչխատանքի ոչ թագ կդնե, ոչ թագավոր, ոչ ժամ ու պատարագ, ոչ ուսում ու հարստություն: Ձեր էդ ցեխոտ [ձեռքով դուք] ձեռների հացն է, որ թագավորը կուտե իր ոսկե սեղանի վրա: Աչ-

խարքը ողջ ճեղի վրա է չինած, էդոր պատճառով էլ դուք աշխարքի տակն եք, տան հիմքի պես մթի ու ցեխի, ցրի ու ջրի մեջ, ճնշված ու [արևի տակ] զուրկ-զրկված:

(Տեսավ նրանց քրտնած, սևցած, հոդնած...)

Գյումրի... կաֆեում երգ.

Ազգուրացց, աստվածուրացց
Երկուսը մեկ խորհուրդ է:

128. ԳՅՈՒՄՐԻ

Սենյակում. պատին մի խալի՝ վրան աղջիկ՝ կլողանար ջրում: Պատի վրա հայելի՝ ճանճի ծեռտով սևցած. առջևը կոտրած մատներով սանտր՝ ատևները թափած խոզանակի մեջ դրած: Մի լամբ, որ հիս էր տալիս: Բայց Ուստայի պահանջով փոխեցին նորով:

Ծառան (գյուղացի տղա) միշտ քնած՝ սամովարը բերում էր քունը աչքերը, առավոտ-իրիկուն: Պատին թիկնած քնում էր միշտ:

Կերակուրի ժամանակ բզզում էին ու տզում անթիվ ճանճեր:

— Հարբած մարդիկ, որոնց լեզուն չէր դառնում, կամ ցնդաբանում էին, ցնորում:

— Մի կառք նստեցին, որի ամեն մասը ճայն էր հանում, ճչում ու խզզում. ամեն մեխ դողում էր ու թրթռում:

— Դռների ճայնը. ճռռում էին, չան պես վնգստում, կատվի պես մլավում, զռում, բառաչում. ամեն դուռ ա-

ռանճին նշանակել և զանազան տեղերում: Թորոյի դուռը և այլն:

129. <ԳՅՈՒՄՐԻ. ՔԵՖ ԱՆՈՂՆԵՐԸ...>

– Գյումրի. քեֆ անողները (զինվորներ, դաշնակներ) իրենց մեռած ընկերների հիշատակին, կենացը, գինին կաթեցրին հացի վրա: Հացը ընկերներն են:

– Ընկերների անունը տալիս՝ քեֆ անողները գլխարկները հանում էին:

– Անցյալը ներկայի գրպանումն է, ապագան նրա արգանդում:

– Գյումրի. երբ գարադավոյները եկան քեֆը խանգարելու, գարադավոյի մեկն ասում էր – «Ես թագավորի աչքն եմ» այն հարցին պատասխան, երբ ասացին – «Տո, վով ես, չես թողնի քեֆ էնենք»:

Երկու գարադավոյի գլխարկները առան և երթիկ նետեցին. գավուլը պրիստավի օգնականի գլուխն անցրին... փող տվին և բանդ չգնացին: Բայց քեֆն էլ ընդհատեցին:

130. <ԳՅՈՒՄՐԻ. ԸՄԲՇԱՄԱՐՏ...>

Գյումրի. ըմբշամարտ. մի ռուս ըմբիշի և հայի միջև. երկուսն էլ հսկաներ: Մրցում են. չղթա են կազմել ռուսներ և հայեր: Ռուս զինվորներ, վարչական մարդիկ. բայց հայերը չատ են: Ազգային պատվի, արժանապատվության հարց է: Մրցում են. ռուսը ձևեր գիտե, ֆինտեր, խորամանկություններ. փորձված ըմբիշ է. իսկ հայը չգիտե, միամիտ գյուղացի է, բայց ուժով է: Դիտող հայերը

վախենում են՝ տեսնելով ռուսի ճկունությունը, խաչելը, ճարպիկությունը, ճապուկ. վախենում են՝ թե ահա՝ հայի թուլ տեղին կդիպնի և կդետնե. ռուսները հրճվանքի մեջ են: Մթնոլորտը լարված է: Հայ ըմբիշն էլ է տեսնում, որ ախոյանի ձևերը վտանգավոր են, հնարներ ունի, իսկ ինքը չունի. իր ապաստանը բուռ ուժն է. բռնել իրար կող և ուժով, ջանալ, ձգել: Դիմում է իր ուժին, մի թափով վրա է տալիս, խոյանում, և հզոր թափով բռնում է ռուսի մեջքից, գրկում, բարձրացնում է գլխից վեր, և ապա թափը մեղմացած ձգում է գետնին, վիզը սեղմում հողին, և շուռ տալով մեջքի վրա, նստում է վրան: Հաղթել է: Հայերը ցնծության մեջ են, ռուսները ասում են թե՝ չեղավ, դա խաղ չէ, դա վայրագ ուժ է, ոչ մի արվեստ կա... Բայց ոստիկանը տեսնելով, որ վեճը տաքանում է, հրամայում է խաղը վերջացած և հրամայում է ամբոխին ցրվել:

Հայերը ձեռքերի վրա տանում են հայ-ըմբիշին, նստեցնում են ֆայտոն և քաղաքի միջով աղմուկ-աղաղակով անցնելով՝ հանդիսավոր անցք, չքերթ, մտնում են մի գինետուն, և սկսվում է քեֆ:

Գալիս են մարդիկ. զարմանում են նրա ուժի վրա, բռնում են ձեռքերը, հաստ, սինդ. չեն կարող ոլորել... Ասում են ո՞րտեղից է ուժդ, տվածուրի՞կ է...

Միամտաբար պատասխանում է.

— [Հնչ որտեղից] Օրը իրեք գրվանքա սոխ եմ ուտըմ...

131. <ԳՅՈՒՄՐԻ. ԸՄԲՇԱՄԱՐՏԻՆ...>

— Գյումրի. ըմբշամարտին. դիտողները գրգռված, ապրում էին ըմբիշների հետ, ամեն չղերով, արյունով: Նրանց հետ ներդաշնակ շարժումներ անելով:

Մի տարիքոտ մարդ, հանդիսատես, փայտով խփեց մի մանկան, որը կանգնել էր – խանգարում էր տեսնել խաղը...

Երբ հայը հաղթեց ռուսին, իրար գրկում-համբուրում էին մարդիկ: – Հա՛յ-վա՛յ, հլա մեկ ասա – հա՛յ... քչվոր ենք, թե չէ, մեր առաջ մարդ չէր կայնի, ի՛նչ ռուս, ի՛նչ թուրք:

132. ԳՅՈՒՄՐԻ ԿԱՄ ՈՒՐԵՔ

Ներս են մտնում սրճարան-գինետուն գյումրեցի վարպետները, գլխներին թաշկինակ կապած, կաշե գոգնոցներով: Առաջին եկողը ներս է մտնում, լուռ առաջանում սեղանի մոտ, նստում, ակնարկով հրամայում: Բերում են մի փոքրիկ չիշ արաղ (տրիցատկա). լուռ լցնում, լուռ խմում. գալիս է երկրորդը, նույնպես լուռ նստում – առաջինի մոտ, այսպես մինչև 4-5 վարպետներ: Լուռ խմում, իրար խոսուն աչքերով նայում, վճարում կամ չվճարած (ապառիկ), լուռ հեռանում: Սրանք Ուստա-բաշիներն են. պատկառելի, ներհուն, լռախոս:

Անգործ մարդիկ: Մեկը, մի անգործ, մշտական հաճախորդ (մուշտարի = միշտ արի), նստել է մի անկյունը, լուռ, խոհուն հայացքով նայում է դռնից դուրս փողոց, անցուդարձի. և անորոշ մտածում: Ներս են մտնում մի անգործ ընկեր և հետո ուրիշները: Լռիկ նստում են նախկինի մոտ, հանդեպ, հազիվ իրար նայելով, մտքերի մեջ իրար ողջունելով: Այսպես նստում են ժամեր: Երբ մի ուշագրավ խոսք են լսում շրջապատից կամ մի դեպք տեսնում, իրար բազմախոս, նշանակալից հայացքներով նայում են, իրար հասկանում, երբեմն էլ մեղմ, աչքերով ծիծաղում, ու նորից լռում:

Նրանք իրար անխոս ներկայությամբ գոհ են, բախտավոր: Հին, լավ, փորձված ընկերներ են. խոսքը ավելնորդ է. իրար ճանաչում են, իրար զգում:

Երբ մեկը հեռանում է, մյուսը կամ մյուսները — քնից զարթնած՝ հարցնում են կամ փաստը ճշտում.—

— Գնացի՞ր:

— Գնացի:

Եվ նորից լռություն:

Երբեմն միմիկայով են իրար բան հասկացնում կամ ձեռների, մատների մի թեթև շարժումով:

133. <ՀԱՅԿՈՆ ՍՊԱՆԵՑ...>

Հայկոն սպանեց իրեն խանգոտության պատճառով. իր ընկերն առավ իր սիրած աղջիկը, որն անտարբեր էր Հայկոյի հանդեպ:

Հայկոն ասում էր. գոմեշների պես իրար պիտի զարկենք՝ ճակատ ճակատի: Մեկն ու մեկիս գլուխը պտի պատառ-պատառ էղնի, ջնջի:

— Ամուսնացավ, նամուսնացավ:

Համ ամուսնացած է, համ աննամուս:

— Հայկոն ընկերի հետ գնում են կաճկա նատած, սամովարը գինով լիքը: Գիշերը Ղարա-ղունում չրջում է սայլը, ընկնում են դետին, ջրի մեջ, Հայկոն գրկում է սամովարը, և ցամաք ելնելով պառկում է ծորակի տակ, խմում է ու քնում (թեև հարբած էին երկուսով). առավոտ լուսաբացին, ընկերը գտնում է նրան քնած:

— Լոթի Աստված, մենք քեզի ի՞նչ ենք արել, որ մեզի էսպես կվնասես: Մենք քու ձեռքին պատի ծեփ ենք. ուր կուզես կզարկես. էլ մեզնեն ի՞նչ կուզես, հոգուդ սատկին, հորդ հոգին...

– Հարբած ժամանակվա խոսակցություն ընկերների հետ. կցկտուր, անկապ խոսակցություն: Վերջն էլ կռիվ: Ղարսեցիներին հայհոյող. էստեղ ինչքան ղարսեցի կան, էնոնց հոր հոգին:

– Հայկոն:

– Վարժապետի (տերտերի կրոնուսույց) կալոչները մեխեց հատակին: Դրա համար դուրս արին նրան դպրոցից:

Գյումրեցիների զրույցը երկու հարբած ընկերների միջև:

– Սեթո ջան, հոգուդ սատկիմ, ինձի աչե:

– Կարո ջան, հոգուդ սատկիմ, ըսե, աչեմ:

– Սեթո ջան, էս մեր Գյումրին էր, չէ՞:

– Հա, մեր Գյումրին էր, Կարո ջան:

– Սեթո ջան, մեր Գյումրին էր, մեզի համար մեր նամուսով կապրեինք:

– Էդպես, Կարո ջան, հոգուդ սատկիմ:

– Լա՛վ, էլ Լենինականս որն էր, որ փճ<անընթ.> էղավ:

134. ՀՈՐԵՂԲՐԱՆՑ ՀԱՑԿԸ

Հուրջ ժամանակ՝ ամաչկոտ, համեստ, բարեկամներին նույնիսկ քաշվում է բարև տալ: Իսկ որ հարբում է, փողոցի մի ծայրից բռնում է, բոլոր բարեկամների և ծանոթների տներն է մտնում, տնօրհնենք է անում: Նստում հնություններից է խոսում, անցյալը վերհիշում, փիլիսոփայություններ անում, հյուրընկալին գովաբանում կամ դսրովում, լալիս, ողբում:

Գրպանում ունի միշտ հարբած ժամանակը միրգեր՝ չամիչ, չիր, փչատ, լաբլաբու...

Հայկոյի քեֆը: Պրխտավի գլխին դավուլը գարկեց, պատռեց: Մեր Բագվի քեֆը: Համբը [կոտրեց] փշրելը քարով. գարադավոյի գլխարկը փախցնելը:

Գավառապետի պատուհանից քար է քցում ներս ու փախչում՝ վրեժխնդրության համար, կալվածական կռիվներին:

Գյուլլա պաչըցնելը. մենամարտ:

Բուտիլկան քաշեց վիրավորված ամուսինը:

Սիրած աղջկան սպանեցին. ինքը գնում էր լալիս գերեզմանին. մի օր էլ գնաց, խմեց, բուտիլկան վեր նետեց գլուխը դրեց տակը: Ջարդվեց, մեռավ:

135. <ԼԻՆԵԼԱԿԱՆ...>

Լիներլական = Լենինական:

— Վով իրա բերնի համը չգիտե — կին չի սիրե:

— Եաև տակը = հետո, շարունակությունը:

— Ջուխ-Արչակ:

— Գառ-Գալոյենց տղեն:

— Եղբայրությունդ վկա, սուտ չեմ ասում:

— Ուստայի սհաթի չղթան, ըստ գյուղացիների, գութանի զնջիլ էր:

136. <ՇՈՒՆ ՏԱՃԻԿԸ...>

— Շուն տաճիկը Արփաչայը անցկացավ.
Ջարդեց, փշրեց, մարդ չմնաց Շյորագյալ:
Եկավ գարուն, վարին ցանին արտերը,
Մեղի մնաց թուրքի տված դարդերը:

Ավրեց, ջարդեց, մարդ չմնաց Շյորադյալ:

Գյումրեցին գնաց ճաշի,
Ախ քաշեց քիչըմ լոշի:
Գյումրեցի ջան, բոյիդ մեռնիմ,
Լոթի ջան, սոյիդ մեռնիմ,
Գաղթական ջանիդ մեռնիմ:

Ամերիկու ճամբեն երկար ու դյուզ էր,
Ամերիկան կայներ, մայրիկ ջան, որբերը կուզեր:
Տեղս քաղաք էր, ծովի արանք էր,
Էրթալ ու գալս, մայրիկ ջան, զուլում կրակ էր:
Ահա նոր ծագեց կարմիր արևը,
Ղչի թևով, մամա, ղրկե որբի բարևը:
Ամերիկու ճամբեն ոլոր-մոլոր,
Որբերի սիրտը, մայրիկ ջան, տխուր մոլոր էր:

Մաչինան գալում էր, բերում էր եղը,
Որբերը ճվում են յարեքիս դեղը:

Երկու ծառի արանք, յար ջան, իմ օթևանը,
Ծաղիկով զարդարված քո մարմար ջանը:

Տավարնի վակոն, նանիկ բալա ջան,
Յարս էր դրակոն:
Վակոն ջան վակոն, մարալ յար ջան,
Ընկար դրակոն:

Անբախտ յարս ջան
Ընկար դրակոն:

Գերի բռնեց, մարդ չմնաց Շյորագյալ.
Կավկազու հետ ընճի բերավ քու սերըդ,
Եկա տեսա ողջ ավերակ տներդ:
Այգիդ՝ ավեր, պատերդ՝ չուռ, Շյորագյալ,
Ավերակդ Աստված չինե, Շյորագյալ:
Թուրքը եկավ Արփաչայի լեռները,
Կոտորեց վախ աշխատավորի ձեռները:
Թուրքը եկավ, ստանցին ետ դառավ,
Բոմբը ձգեց, ամբողջ Հայաստան վառավ:
15 նոմեր դուշմանը քեզ վար կաներ
Բոլեական քու ցավերիդ ճար կաներ:
Գարուն եկավ ծիլ ու ծաղիկ բացվեցան
Գովքդ ասող մարդ չմնաց, Շյորագյալ:

Ծառը դուն ես, բարը մենք ենք, Լենին ջան,
Քու հարազատ գառը մենք ենք, Լենին ջան:
Ջիբիս միջին նագանը
Փչացավ դաշնակցականը:
Վրացյան, Խատիսյան
Ծախին կերան Հայաստան:

– Քաղաք քցին դինամիտ,

Ես ու յարս միամիտ:

Կամաց քշե սելերը,
Կապես չարխիս թելերը:

Ղարաբուռուն ստանցի,
Աչքով կենեմ հասկացի:

137. ԳՅՈՒՄՐԻ

Հը՛լը հը՛լը, իդոր աչե,
Կերթա, կերթա, ընձի կաչե,
Քելե, քելե, գործիդ աչե.
(Ոտից գլուխ չահի՛մ չաժե,)
Մերս քեզնեն լավին կաչե:

— Մի գյումրեցի ծերունի ինձ ասաց — «Երնեկ էն օրը որ պտի մեռնիս. աչխարք սուգ պտի կապե, թռչունները երկնքի մեջ պտի լան վրադ»:

— Էս մենծ հայ է. իսորից հոտ պտի էնեք, հոտոտաք, հոտ քաշեք. էլ էսպես հայ մենծ մարդ աչխարք չի գա, վերջինն է...

— Եթե ուզում ես մարդկանց սրիկայացնել, ծախու դարձնել, ստոր, քծնի դարձնել, գաղափարազուրկ, մորթասպաշա — մի խոսքով ստրկացնել, հայվան չինել, իշացնել՝ նրանց հարստությունը առ ձեռքից, տունը-տեղը, հողը, գործը. փող առ ձեռքից...

— Թափված էր, եկան հավաքելու: (Դրսից եկողների մասին են ասում, փողը, հացը, գործը թափված էր փողոցում, եկան հավաքելու: Խնելքի աչեցեք:)

— Սա ինչ բարբառ է — օրինակի համար.

Աչքսի ցավում է:
Գլուխսի տարավ:
Փորսի, փորըսի անոթի է:
Հերսի գնաց...

Նայել Ա.Ղարիբյանի բարբառագիտության մեջ:

— Զայխանա — Նախճավանի սեսպուպլիեն:

Ստեղծեցին Զայխանան:

— Դու մեծ մարդ ես, քո ձայնը հեռու տեղեր է հասնում, հեռուները ես գնում:

— Կուզեմ քեզի հոգուս մեջ գնել:

— Քեզի որ կտեսնեմ, կլցվեմ:

— Քեզնով լցվում եմ:

— Քուրո = քույրիկ:

— Մարդիկ ավելի շատ հավատում են իրենց երազներին, իլյուզիաներին, քան իրենց իրականությանը: Եվ դրա համար էլ հավատում են խոստումներին, որոնք, իհարկե, իրենց ուզածի համաձայն են:

— Որակ, քանակ:

Երբ, զորօրինակ, մարդու ջերմությունը 36-37 աստիճան է և ասում են նորմալ է: Եվ սա քանակ է, թիվ: Բայց

երբ մի 2 աստիճան բարձրանում է, դառնում է որակ, բայց երբ 1 աստիճան էլ է բարձրանում, դա արդեն նորմալ քանակ չէ. քանի՞ աստիճան, այլ – մահացնող որակ, վտանգավոր տեսակ: Դառնում է ջերմութիւնը «թուլն, մահացնող որակ» –

– Դերենիկի «Վարդանանքը» վեպ չէ, կրակ է, կրակ: Հայ ժողովրդի պատմութեան փիլիսոփայութիւնն է:

– Աստվածածնա Տոնին ահագին քանակով ժողովուրդ է գալիս Ախալցխայից, ոտքով, մոտ 200 կիլոմետր: Քնում են դաշտերում, խոտերի վրա: Կնոջս հարցին, թե չեն մրսում, երկու ախալցխացի պատասխանեցին. «Ինչի՞ պիտի մրսին, Աստվածածինը հետները չէ՞»: Ի՜նչ հավատ – ի՞նչ հավատ: Այս ժողովուրդը կապրի:

Լենինական Աստվածածնա քաղաքն է:

Ուստա Կարոյի մեջն էլ կա – «Աստվածածինը իր գոգնոցը փռել է քաղաքի վրա. գյուլլեքը թափվում են գոգնոցի վրա և ոչ մի գյուլլա չի ընկնում ժողովրդի վրա, Մարիամ Աստվածածնա:

138. ԳՅՈՒՄՐԻ

– Վեսյոլի Վարդանը՝ խմեց մեկի կենացը՝ լիքը բաժակով մինչև տակը, ապա պարպած բաժակը ցույց տվեց տանտիրոջը ասելով,– տո՛, դարտակ ստականն ես ինձի տալիս, ձեռքս ես առել, ի՞նչ է, հաստատ լից:

– Պատերազմի ժամանակվա երգերից, կուպլետներից –

«Էս տարի, ամեն տարի,
Աղջիկներով լիքը տարի,
Տասնըհինգը մի շայի:

Տղաները տալոնով,
Աղջիկները էշալոնով»:

139. <ՄԻ ԼԵՆԻՆԱԿԱՆՑԻ...>

Մի լենինականցի (Դաֆչչի Թաթոսը), ում մասին որ խոսում է, ստացական հոդով է խոսում, օրինակի համար՝ Բազրատս, Ապլաս (իմ մոր մասին), Գրիշաս, Թառչի Ուստա Գոգորս, Անդոյենց Արամս, (դյուդյուկչի) Փանջոս դյուդյուկչի: Բոլորին, բոլոր մոտիկ ընկեր, հեռավոր ծանոթ...

— Էնպես քեֆ արինք, հին, Գյումրվա քեֆ, էնպես որ հրեշտակները ծափ կուտային:

— Էնպես դյուդյուկ կփչեր, որ մարդ քրքրեր կը (կքրքրեր):

Ի՛նչ արտահայտիչ խոսք է — քրքրել: Սիրտը, հոգին տրորել, ճմլել, քրքրել:

— Երեկ մեռելոց էր, շատ մարդ կա էղե = որպես թե շատ մարդ է եղել:

— Ո՞ւմենց տնից ես:

— Կարո Պետրոսյանը բանտից դուրս եկավ, տեսա, հարցրի, ի՞նչպես է, ի՞նչպես անցրիր չորս տարին. պատասխանեց թե՝ շա՛տ լավ, թեթև անցրի, իմ դժվարությունը հիմա է սկսվում — գործ գտնել, հաշիվ խտակել...

Կիսատ մարդիկ բանտում կոչնչանան, լրիվ / թամամ մարդկանց բան չի լինում: Ես լրիվ մարդ էի: (Ուզում է ասել՝ կամքով, դիմացկուն, մորալի տեր...) Ես վճռել էի

ապրել, չմեռնել: Ապրա, չմեռա, հաղթեցի: (Այսինքն՝ համբերություն, քաջություն, տոկունություն):

— Քանի տարի է էստեղ իշություն ես անում. գյումրեցիք հարցնում են էն մարդկանց, որոնք չարաչար աշխատում են՝ չնչին վարձատրությամբ. ծանր կամ հիմար աշխատանք...

— Մեկն ասում էր, թե բանտի մեջ ամբողջ տարի երազում էի սիրածս աղջիկը տեսնել. դա պահում էր ինձ. երբ ազատվեցի, գնացի այցի տեսա, որ ես ապրել էի միայն այս օրվա համար: [Զարուհի]

— Մեխլու հայ (Ուդիացի, Ուտիեցի):

Աղանդավոր 17 դարում:

(Գրիգոր Դարանաղցի, Սարկավագ, պատմիչների մոտ):

140. ՊՈԼՈՋ ՄՈՒԿՈՒՉԸ

Մեռել է 1931 թ. Լենինականում: Շատ չքեղ հուղարկավորություն է եղել. Բագվից, Թիֆլիսից պատգամավորություն է եկել իր ընկերներից, ծանոթներից, համակրողներից, կինտո-լոթիներից: Հայտարարություն է եղել «Սովետական Հայաստան» («Խորհրդային Հայաստան» թերթի մեջ: Պետք է նայել): Վկայում են, որ հանգուցյալի աչ ձեռքը դագաղից դուրս է հանած, դագաղից կախված, այնպես որ թափորի ընթացքին ձեռքը տարուբերվել է, ճոճվել, իբրև սիմբոլ, թե աշխարքը ունայն բան է, անցավոր է, և մնացեք բարով:

Պոլոզ Մուկուչը արդեն դառել է հավերժական տիպ, ֆոկուս, կեդրոնական դեմք, մյուս առակախոսների նման — Եզովբոս, Մոլլա-Նասրեդին, Պլը-Պուղի, Գոյա.— Լենի-

նականի ժողովուրդը և Երևանի, հիմա ինչ առակ և սրա-խոսություն լինի, նրան են վերագրում, իբրև նրա ասած-ները: Նրա ընկերները, ժամանակակիցները ասում են, որ նա կենցաղի մեջ, չհարթած ժամանակ չա՜տ սովորական մարդ էր, հանգիստ, և քնավ սրամիտ, բայց որ խմում էր՝ բացվում էր, ուրիշ տեսակ էր դառնում: Արդեն նրան եղ-բայր Մուկուչ, ընկեր Մուկուչ կամ Պոլոզ Մուկուչ չեն ասում, այլ կարճ՝ «Պոլոզ»: Պոլոզը ասում էր: Մի անգամ Պոլոզը Թիֆլիս կերթար կը...

Պոլոզը ամուրի էր, չամուսնացավ: Մեռավ մոտ 44-45 տարեկան հասակում. վիրահատվեց Թիֆլիսում, բերեցին շատ շքեղ թաղեցին Լենինականում իր պապի կողքին: Եր-բեմն Թիֆլիսից, Բագվից գալիս էին նրա գերեզմանին այ-ցի, ուտում, խմում, հոգեթաս են խմում, նրա անվանը հո-գեթասի ճառեր ասում, ոսկորներին հանգիստ մաղթում:

Նա մրգավաճառ էր, մեծ չափի. բերում էր մրգեր, խնձոր, տանձ, ձմերուկ... Երևանից, Կախեթիայից... և ծա-խում էր մանր խանութների վրա: Մանրավաճառ չէր սարկպի էր, իր տոհմը նույն գործը ունեին:

Գիննգև ուներ, կաուտաղի, խենթ, գիժ հարբեցող էր, հարբած: Ոստիկանների հետ միշտ կռվի բռնվող: Դյում-բեցի լոթինների բոլոր հատկությունները, ձևերը, ոճը ու-նեցող: Ուներ իր ընկերները — Ծխթրո Ալեք, Նաչըն Կա-րո, Վեսյոլի Վարդան:

Արդեն լեգենդար է դարձել: Դադաղից դուրս հանած ձեռքը՝ լենինականցիք են ստեղծել, իրական չէ: Լեգենդ դառնալը արդեն մեծության, անմահության, լայն ժո-ղովրդականացման ամուր հիմք է, միավոր: Հաստատում: Ընկալում: Պատմականացում:

— Ինձ վաղուց ծանոթ սրախոսություններ, առակներ արդեն նրա վրա է տեղափոխված: Մոլլա Նասրեդինի, ժո-

ղովրդի առակներից հետզհետե շատ բաներ նրան են վերագրում:

Մուկուչը հայերիս 20-դարի առաջին կիսի առակավոր, առակաստեղծ արտահայտիչն է, մի նոր միջ է: Հիմա փոքր է, ժամանակի մեջ կմեծանա...

Դրական երևույթ է:

Ուստա Սեդրակն ասում է, որ Պոլոզը սուտ շատ կխոսեր, մենակ նրա սուտը կքեյեր, ուրիշներն էլ սուտ կխոսեին, մենակ նրանց սուտը չի քեյե:

– Պոլոզի ձեռքը դագաղից դուրս հանած լինելը՝ տեսնողը տեսել է և վկայում է, չտեսնողը չի տեսել – և չի հաստատում:

ՊՈԼՈԶԻ ԽՈՍՔԵՐԸ

– Պլեն կընկնես, թևդ պլեն կընկնի:
– Յա կէղնի, յա չի էղնի:
– Մենք ինչքան պիտի:
– Լենինականը ինչքան մարդ կէղնի:
= 3, 000, 000:
– Տեքստիլը ..., Ղարսը առեք:

– Էստեղ գյուղացու տունը ո՞րն է (ո՞րտեղ է):
= Էստեղ, ախբեր ջան, ամեն տուն գյուղացու տուն է, դու ո՞ր գյուղացու տունը կհարցնես:

– Արի քիչըմ հայերեն խոսինք: (Երկեն Ալեքը, Սև Ալեքը):

— Ծո, վո՞ւրտեղ իշուԹյուն կենես = որտեղ ես աշխատում, պաշտոնավարում:

ՊՈԼՈՋ ՄՈՒԿՈՒՋԻ ՄԱՀԱՁԴԸ

— «Լենինականի քաղաքացիները՝ Ցլջոնց Գարեգինը և ուրիշ յոթն ընկերներ (անուններով) խորին վշտով հայտնում են սիրելի համաքաղաքացի

ՄԿՐՏԻՉԻ
(ՊՈԼՈՋ ՄՈՒԿՈՒՋԻ)

վաղաժամ մահվան մասին, որը տեղի ունեցավ երկարատև հիվանդությունից հետո:

Թաղումը տեղի կունենա Լենինականում»:

(«Խորհրդային Հայաստան», 1931 թիվ, 19 փետրվարի, վարի ս<յունակ>):

141. ՈՒՏԱ ԿԱՐՈՑԻ ՄԵՋ: ԳՑՈՒՄՐՎԱ ՔԵՖԵՐԸ

Օրինակ. մի խմոզ մարդ կար, որ տները ման էր գալիս, մի հին վարժապետ կամ դիրքով մարդ, նախկին հարուստ, և այլն — սրան պատվելու համար մի շիշ օղի էին դնում առաջը: Գավաթ-գավաթ կենացներ էր խմում, տան մեծից մինչև փոքր. հետո երբ կենացները վերջանում էր, սկսում էր Հայոց Հայրիկի, Էջմիածնի, Թագավորի... և երբ էլ չգիտեր ինչ ասել, զանազան բաներ, ինչ որ միտքն էր ընկնում, ասում էր. օրինակ — եղբայրք Յուզ-

բաշյաննե՛րի կենացը, մորքուրիս հարսի կենացը: Բարի կնիկ է...

142. ԳՅՈՒՄՐՎԱ ԳԻՇԵՐԱՇՐՋԻԿԸ

Այսօր լրացավ 30 տարիս. կյանքիս կեսը անցրի: Ի՞նչ կարելի է – մեծ մասը անցրի. կարելի է բոլորը անցրի... բայց պարզ է՝ որ գերեզմանին մոտեցա: Մերության ճամբեն ընկա: Անցավ երիտասարդությունը:

– Գյումրվա գիշերաշրջիկը ասում է – Այսօր լրացրի 30 տարիս: Ուրեմն ապրել եմ այսքան օր (365×30), օր ու գիշեր: Այս է կյանքը: Միլիոն տարիներ են անցել այս երկրի վրայից, որ մարդը երևակայել է. և ի՞նչ է տեսել, ի՞նչ է հասկացել...

143. <ԳՅՈՒՄՐՎԱ ԳԻՇԵՐԱՇՐՋԻԿԸ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ...>

Գյումրեցի գիշերաշրջիկը սիրահարված է եղել, անհույս, և ինքնասպանության հասած:

Ասում էր – Ես գերմաներեն եմ սովորել, փիլիսոփայություն, ուզեցի հասկանալ աշխարհը, մարդը, էությունը, առարկան ինքնին... հիմարություն: Անհասանելի են: Ամեն բան հարաբերական է, գեղեցկությունը և բարությունը, բարոյականությունը...

Դժբախտ է մարդը: Երբեք պետք չէր նրան բանականություն: Մնված օրից դատապարտված է մահվան: Միկրոպներ, թուլներ, տիֆ, թոքախտ, սիֆիլիս, ռակ...

Մի բան ունենք մենք միայն, որը մերը պիտի լինի անպայման,– կյանքը, բայց նրա տերը մենք չենք:

(Դարձավ նայեց պատի ժամացույցին, որ չխկչխկում էր՝ կարծես, քայլում էր ժամանակը) – Ահա մեր տերը, ահա ամենազորեղ բանը աշխարհում – ժամանակը կուլ է տալիս մեզ, բոլորիս, բոլորին, ամեն ինչ: Ամեն րոպեն դիվական հայացքով ցույց է տալիս մեզ – մահը: Ես չեմ սիրում ժամացույցը – մահացույցը...

Բայց այս աշխարհը փող ունեցողների համար է միայն: Նրանք չեն զգում հարվածները:

144. ԳՅՈՒՄՐԵՑԻ ԳԻՇԵՐԱՇՐՋԻԿԸ

Ի՞նչ է բնությունը – մեր երևակայությունը, մեր ներվերի խաղը, անդրադաձումը: Բնության մեջ չկա ո՛չ ձայն, ո՛չ գույն, ո՛չ հոտ... դրանք մեր նյարդերի զգայումներն են, նրա առանձնահատուկ գործը...

145. <ԳՅՈՒՄՐՎԱ ՍՐՃԱՐԱՆՆԵՐՈՒՄ>

Գյումրվա սրճարաններում զանազան փիլիսոփա մարդիկ: Նրանք խոսում են փողի, կնոջ, մահի մասին, չարի և բարիի մասին: Ադամը ողջ լիներ՝ կայենին կսպաշտեր...

146. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ

– Նստել էր Բագրանու բաղերը, ծառերի տակ, թևերը-ձեռները քցել էր ընկերների վզովը, ջան էր ասում, ջան լսում ու մաճառը կոնծում ու բոլ-բոլ խոսում:

Քեֆի ընկերներն էին – Կարճոտենց Ղուկասը, Սևդոյի Ավագը, Ճալեցոնց Պողոսը, Դավոլչոնց Հարությը...

– Մի գյուղի տերտեր – Տեր-Մլեհի և Տեր Խաչատուրի դեպքերը նրա հետ կապել –

– Տեսեր եք Գյումրվա կարմիր աղբուրը...

– Քրիստոսի խաչելությունը...

– Ուստա Կարոն գալիս է Գյումրի. լսում է մի շրջիկի, որ Թիֆլիզից է եկել և սոցիալ է քարոզում – մարդիկ հավասար են, միացեք, կհաղթենք, և էլ հարուստ ու աղքատ չի լինի. Ուստա Կարոն լսում է ու ասում.

– Տո, այ քեզ Ուստա-Կարոյի մեծը. մեր գեղացիք ինճի Ուստա-Կարո կըսեն, քարափ տրաքեցնող կըսեն. դու մի ասա՝ մեծ Ուստա Կարոները Թիֆլիզու քաղաքն են նստեր. Գյումրվա քաղաքն էլ որ, տեղը փոս է, ինչքան Ուստա Կարո կա՝ հոս է:

– Դաշնակցական շրջիկն է գնում գյուղերը և խոսակցում Կարոյի, Ջավուշի մասին՝ նրա հավատարմության մասին – նա էլ Անիի դեպքն է բերում ապացույց Ջավուշի հայ սիրտ ունենալու մասին:

«Ուստա Կարո» վեպը այսպես վերջացնել. Ջավուշի եղբոր որդին, որ գալիս է Ջավուշին տանելու, համոզելով, որ իրանք հարուստ են ու տան մեծ չունեն, եկ, մեծությունն ու հերությունն արա, նա համոզվում է և Կարոյի հետ գնում են Ալեքսանդրապոլի վրայով, վերջին անգամ քեֆ անելով ու ման գալով Ղարս. մի քանի օր էլ

էդտեղ քեֆ անելուց հետո, երբ բաժանման րոպեն հասնում է, չենք կարող իրարուց բաժանվել. վերջը վճռում են, որ իրարուց անկարող են անջատվել. 10-15 տարի միասին են ապրել ու տանջվել, հիմի էլ էդպես ապրեն ու մեռնեն, իրար կողքի թաղվեն, քանի որ աչխարհում իրար գտան, իրար մերվեցին ու <...>[1]

147. ԳՅՈՒՄՐԻ

Լոթինները քեֆ էին անում. փողերը նվագում էին «Կալյոսի պռկենը», լոթինները պարում էին — տաչի, տուչի.

— Քեֆ արա, մեռնել կա,

— Էսօր կանք, էգուց չկանք:

(«Կալյոսի պռկեն», փողերով լավ կլինի, թե զուռնայով: Եվ առհասարակ եղանակները երկու գործիքով էլ կարելի է նվագել: Թե՞ յուրաքանչյուր եղանակ իր գործիքը ունի):

— Հիմարաբար ասում են, թե ֆաչիզմ է սոցիալիզմը սեմիականության հետ միասին:

148. ԸՄԲԻՇԸ

Երբ հայ ըմբիշը հաղթեց ռուսին, նրա պատվին Բուլուլ Մարգարեի սրճարանում լավ քեֆ տվեց:

---

[1] Շարունակությունը չի պահպանվել:

149. ԳՑՈՒՄՐՎԱ ԼՈԹԻՆԵՐԻ ԿՑԱՆՔԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐ

Նրանց սրախոսություններից, արկածներից, լոպպազուրթյուններից:

– Կառքով, կառքի մեջ՝ նստած այր ու կին սլանում են.

Լոթինները իրար ձայնեցին – Տարա՜ն, տարա՜ն, տարա՜ն...

– Մի կնիկ հաց ուտելիս՝ կերածը կատիկն է ընկել խեղդվել, որովհետև խոսում էր: Պատմում է մեկը:

Մյուսն ասում է – Կնկա իսկ մահը էդ է:

– Էն աղջիկը կուզե որ նշանածը էղնի գիտուն, սիրուն, չնորհքով, առողջ, ջահել, հարուստ... Էդպեսն էղնի, ես էլ կառնիմ. ասողը այր-մարդ էր:

– Էսօր էրթանք Արփաչայը լողնալու:

= Հլա մեկ, Շիրակ օրացույցը տեսեք ի՞նչ ցուց կուտա:

– Մրրկախառն օդք, կարկուտ:

= Փչե՛:

– Ամեն բան խոշոր կտեսնի, մեծ-մեծ կբրդե. երեք սուտը մեկեն կթսպլե:

– Աստվածախուչգ, Աստվածախնդիր մոգերը:

– Ամենուրեք ցուրտ է. ծերպերում, փչակներում, թռչնաբույներում:

– Քանի սեր կա սրտումդ,

Աստղ կա երկնքում, գլխիդ վրա:

— Նետեց իր դեղեցիկ հայացքներից մեկը, մեղրոտ հայացքը: Մեղրանուշ հայացքը, սև հայացքը, կապույտ, լուսե հայացքը:

— Մասնատիրություն = անձնական սեփականություն:

— Անստույգ վիճակ:

— Տգեղ կովը լավ կաթ կուտա: Տգեղ կնիկը լավ տղա կբերե:

— Դարդս ո՞րն է. կնիկդ մեռավ, նորը կառնես:

150. ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐԸ

Ուստայի Գյումրի գնած երկու ատրճանակները՝ փորձված ատրճանակներ էին, նրանցով գինվորները տեռորներ կատարել էին:

Ուստան կյանքի մեջ մի քանի անգամ փորձի համար հրազեն արձակել էր, բայց նշան առնել չգիտեր, իսկ Ջավուշը երբեք, բնավ չէր արձակել:

Այնպես որ Գյումրիից վերադարձին՝ երբ սալած ճանապարհների վրա փորձեցին, Ուստան անվախ արձակեց, իսկ Ջավուշը աչքերը գոցելով և երեսը մի կողմ թեքելով ատրճանակը արձակեց, և կայծից չատ վախեցավ: Իսկ Ուստան ընդհակառակը չա՜տ ոգևորվեց: Այդ ռազմագոռ ձայնը նրան գրգռեց...

151. ԳՅՈՒՄՐԻ

— Զինվորները՝ սև կամ ճերմակ մորթյա ծոպավոր փափախներ:

— Աքլոր չատ ենք տեսեր, ճերմակ ու սև կակարդով չէինք տեսեր:

152. ՈՒՏԱ ԿԱՐՈՆ

— Գյումրի տեսնում են Ջավուշի հետ, ռուս զորքը մուզիկայով, մարշի տակ, ներդաշնակ քայլում են, երբեմն էլ, մեջեմեջ, մեջընդմեջ ուռա՜հ գոչում:

Փոքրիկ տղաները, փողոցի տղաները, զորքի հետևից և կողքերից, նրանց նման, զորքի նման համաքայլ գնում էին:

Ուստան ասաց.— Մարդ էս մուզիկայով, էս ջահել զինվորների հետ, ուր ասես սրտով կերթա, կռիվ էլ, մահ էլ...

Եվ մտքում ավելացրեց — «Էսպես զորք պիտի կազմեմ, որ սուլթանի հախից գամ»:

153. ԳՅՈՒՄՐԻ. ՄԵԾ ՇՐՋԻԿԻ ՃԱՌԸ

Սխալ է, թե բանվորը և գյուղացին հայրենիք չունի, հայրենիքը հարուստինն է. ո՛չ, հազար ոչ, հայրենիքը հարուստի համար միայն չուկա է, հարստանալու վայր, իսկ բանվորի ամեն ինչն է, նրա օրորոցը, տունը և ստեղծածը:

Հարուստը իր փողի ուժով ամեն տեղ հայրենիք ունի, ամեն տեղ նա իրան լավ է զգում ու վայելում. նրա համար Փարիզ թե Նիցցա, Հռոմ թե Լյուցերն — ամենուրեք տուն ունի, հայրենիք, հանգիստ, հաճույք, և օտար չէ:

Իսկ բանվորը և գյուղացին իր հայրենիքից դուրս ջրից հանած ձուկ, և այլն: Եվ դրա համար է, որ նա ամե-

նից չա՛տ պիտի սիրե հայրենիքը, և զոհաբերվի նրա համար:

Հարուստն է համաքաղաքացի, որովհետև փողը թույլ է տալիս նրան ամեն տեղ քաղաքացի լինել և վայելել, իսկ աղքատը ամեն տեղ ավելի իրավազուրկ է ու արհամարհված, քան իր հայրենիքում, ուր այսպես կամ այնպես ընկերներ ուներ, բարեկամներ, ազգականներ, համազգիներ. իր տունն է վերջապես, իր լեզվի երկրում — իր հայրենիքում:

— Հայը քաղաքակրթության զինվորն է Ասիայում:

— Թուրքիան մի ջարդարար և հարկահան կառավարություն է, կամ ավելի ճիշտն անվանած՝ մի ավազակապետություն է:

154. ԳՅՈՒՄՐԻ

Սոցիալ-դեմոկրատը իր ճառի մեջ ասաց,— Թող դաշնակները իմանան, որ ցարն է կոտորում հայերին սուլթանի ձեռքով. մինչև ցարը չխորտակվի, Հայաստանը չի ազատվի:

Պետք է կռվենք ցարի դեմ, և ցարի դեմ կռիվը ավելի դյուրին է, որովհետև մենակ չենք. ամբողջ Ռուսաստանը և բազմաթիվ ազգեր կռվում են ցարի դեմ, ֆիններ, լեհեր, մալառուսներ, վրացիներ, և այլն, և այլն... իսկ սուլթանի դեմ հայը մենակ է.— և դեմն ունի թուրք, քուրդ, չերքեզ, հրեա, գերմանացի, ֆրանսիացի, անգլիացի, ռուս... և այլն, և այլն:

Դաշնակցությունը պարծենում է, թե կարող է բոլորին հաղթել. հայ ժողովրդի պոռոտախոսությունը/լպպաղությունը ամփոփված է դաշնակցության մեջ...

155. <ԳՅՈՒՄՐԻ. ՔԱՂԱՔԱՅԻՆ...>

Գյումրի, քաղաքային պարտեզում մի նորաբեխ տղա ոգևորված, ուժով խոսում էր մի աղջկա հետ: Համոզում էր, երևի:

Ուստան Թե՝

– Ինչ կհամոզե. կնիկները համոզված կծնին (սիրո մեջ):

Թերևս Բագրանում:

156. ԳՅՈՒՄՐԻ

Քեֆ: Գնում են գերեզմանոցը մի մեռած հեղափոխականի գերեզմանի վրա, թարմ մեռածի փողը երգում է. ընկերները հարբած են և ծանր, լուռ (օրինակ Վռամ<ի> եղբոր՝ Համբոյի գերեզմանը): Նվագողը երգում է.

«Քուրդը հային հավի լման մորթում է.
Հայի արյունը գետի լման գնում է»:

Տղաները ոգևորված (թեև վչտահար) կրակում են ատրճանակները:

Մի պատանու, որ լավ ձայն ունի, հրամայում են երգե.– երգում է՝

«Սաբաղդան գետըմ բաղա
Ֆյասմ դեսդղի յափրաղա...»

Թուրքերեն ե՞րգ:
Մեկը կրակում է ատրճանակը ուղիղ նրա ճակատի առջևով. տղան վախից քիչ է մնում մարի... Հետո հայերեն է երգում.

«Սասնա գավառում ծնվեց մի մանուկ,
Ինքն էր քաջ կտրիճ, անունը Լևոն...»

Ներում են:
Թուրք երգը —

«Առավոտյան այգին գնացի.
Ֆասըս դիպավ տերևին...»

157. ԳՅՈՒՄՐԻ

Ֆուռը՝ տախտակի վրա փռած զանազան տեսակ հացեր, մատնքաշ, սումին, չորեք:
Եփած լոբի, ոչխարի գլուխ: Մրգերի խանութներ:
Խաբանի տակը. ալյուր, յուղ:
Ջմերուկ, կանաչի, արևածաղիկ...

ՔԵՖ

Խանութում. ճանճերի ծերտով ծածկված լուսամուտի ապակիներ, լամբի շուշա:

Սեղանները փոշով ծածկված. ձեռի ափով, արմունկով, թևով սրբեց սեղանի թացը, կեղտը:

– Ավագ, ինձ հե՞տ ես:

(Ուտեմ քեզի, է՛, ուտե՛մ, ուտե՛մ):

– Տո, դու թագավորի հետ խոսք մեկ ես արել: Թագավորի ամեն հրամանը կգովես, ամեն օրենք կպահպանես, կփառաբանես:

Տո, գիտե՞ս թե Ղուկաս չեղածը, թագավորի հետ խոսք մեկ է արել: Հերու ժամի կալվածքները առան, կասեր, լավ բան է, տվեք, մի բան էլ վրեն:

158. <ԳՅՈՒՄՐԻ. ՄԻ ՎԱՐՊԵՏ...>

– Գյումրի մի վարպետ գործը կիսատ է թողնում ասելով.– Երթամ, հատմ քցեմ գամ (խմեմ). երթամ, մե հատ թապչեմ գամ: Հայմե (հայմն, հիմա) կգամ:

159. <ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԻՍ...>

Ուստան Գյումրիից վերադառնալիս, երբ Ախուրյանն անցավ, ընկավ Սալած ճամբեքը.– այդտեղ մեջբերել «Սալած ճանապարհների» զեղումը:

160. <ԳՅՈՒՄՐԻԻՑ ԳԱԼՈՒՍ...>

Գյումրիից գալուս չա՛տ սաստիկ չոգ էր կայարանից (Արագած):

Ուստան ճակատը սրբելով ասաց. Քերոբ չան, էս տաքը պիտի ձմեռը ըլներ, որ մարդ օր տեսներ: (Գյումրի մի լոթի է ասողը:)

— Անունդ ինձի բաշխե՛:

— Ավագ:

— Ավագ չան, ախբերս որ դուն ես, քեզի չըսեմ, ո՞ւմ ըսեմ. Աստծուն հայտնի է, քեզնեն ինչ ծածկեմ:

161. <ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՇԱՏ ԲԱՆ ԼՍԵՑ...>

— Ուստան Գյումրի չա՛տ բան լսեց ու տեսավ՝ աղքատներ, հիվանդներ, խելագարներ. ինքնասպանության (մի մարդու) մասին խոսեցին...

162. <ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ...>

— Ուստան Գյումրի սրճարանի դռան առաջ կանգնած տեսնում է — ֆայտոն անցավ քեֆ անող երիտասարդներով, մի կնունք տարան, զինված զինվորներ անցան, մի մարդ ձեռքից բռնած միս ու կանաչեղեն էր տանում, սայլ անցավ ալյուրի պարկերով բեռնված, մեկը մի նշխուն անդուկ տարավ... և մի մշակ մի դագաղ չալակած տարավ...

Ուստան տխրեց — մահ... Հետո իրեն մեջ այնպես զգաց, թե իրեն համար մահ չկա, իրենից միշտ հեռու է մահը... Այդպիսի մի կենսարար զգացմունք վառվեց մեջը: Զհավատաց, թե պիտի մեռնի... վա՛յ նրան, ով կհավատա իր մահին...

163. ԿԱՐՈՆ ԳՅՈՒՄՐԵՑՈՑ ՀԱՆԴԻՊԵԼԻՍ

– Կարոն գյումրեցոց հանդիպելիս.

Տո, պարապ՝ չներին ա՛ղ կուտաք. ֆռների երթիկը կպառկիք, գերեզմանների քարերի վրա անոթի-ծարավ Աստծու օրը տամա կխաղաք...

164. <ԳՅՈՒՄՐԻ...>

– Աչխարհ էչերով լիքն է, մենք ոտքով ենք ման գա-լիս. հիմի էչը ո՞վ է: (Գյումրի):

165. <ԾՈՒԼԱԽՈՍ...>

– Ծուլախոս:

– Նրանք հայացքներով իրար հաղորդեցին իրենց մտածումը:

– Նրան ընդունեցին արտաքին հարգանքով, ներքին ատելությամբ:

– Երկդիմի հայացքներ, խոսքեր:

– Կյանքը անցողիկ է:

– Դառնության հետ (կյանքի) քաղցրություն ևս խառնել:

– Գինին կրկնապատկել էր նրանց ուրախությունը:

– Նայեցին իրար. նրանց հայացքների մեջ վառվում էր փոխադարձ սեր:

– Ջկրցավ քնել. ջղերը գրգռված էին:

– Միմիայն մեծ ազգերը չեն ծնում հանճար: Փոքր ազգերը ևս. և մեր հին, փորձված, տեսած ազգը ավելի

կարելիություն ունի ծնելու մի աստղ՝ լուսավորելու դաբը և իդեալ տալու:

— Նա զբաղված էր ներքին աշխարհով:

— Էհ լա՛վ, հասկցանք, հասկցանք:

— Ամբողջ մարմնով բողոքում էր, զգում էր, տենչում էր, այրվում էր, տուփում էր, ցավում էր, նախանձում էր:

— Ոտով-գլխով հակառակվել:

— Այստեղ (Հայաստանում ավեր) ամեն բանի վրա իշխում էր թուրքի ստվերը — ներկայությունը:

— Ցիրկում էշը պարում է, բաներ է անում. Ուստան ասաց, թե այս էշը մեր տիրացուի վրա ուսումնական է, բայց մեր տիրացուին իրան խելքով և էլ ազնվությամբ չի հասնի:

— Կենդանի Գազեթը և Բուլուլ Մարգարեն ասում են Ուստային.— «Տո, ինչ գործ ունիս էշ գեղացոց մոտ կենալու, քաղաք արի, մարդամեջ, էստեղ աշխատե, էստեղ ապրի. հացդ ամեն տեղ կհանես. քեզ պես Ուստան էլ գեղը մնա»: Ուստան ասում է, որ ինքը գեղը տուն-տեղ ունի, քուր-աղբեր և վերջապես գեղացի մարդ է ինքը:

— Հեռու տեղերը ավելի մոտիկ էին Ուստայի սրտին, քան մոտիկ տեղերը:

Հեռու տեղերը իր երևակայությամբ մոտեցրել էր իրեն:

— Բարկությունից բիբերը դարձան — չրջանակի մեջ:

— Հեղինակը պատմելով խոսակցությունների նյութը.

Վաճառականները լիրբ են:

Կանայք պոռնիկ:

Երիտասարդները անպետք:

Իդեալ չկա, ձգտում չկա:

Ամեն տեղ փողապաշտություն:

Այսպես՝ երբ Հարությի տեսիլը.

Իրար ուտում էին:
Մորթեցին մի երեխայի:
Մայրը ծախեց աղջկան:

166. <ԳՅՈՒՄՐԻ – ՄԵՌԵԼՈՑԻՆ...>

Գյումրի – Մեռելոցին գերեզմանի վրա զուռնա փչել՝ հանգուցյալի սիրած եղանակներից, գինին թափեցին գերեզմանի վրա, նրա մասը, և կոտրեցին բուտիլկանները:

Գյումրի, մի հարբած տղա՝ քեֆին, կատաղեց, օճիքը պատռեց, համբուրում էր սրան-նրան, բուտիլկան վերև նետեց՝ գլուխը տակը բռնեց՝ որ իջնի և փշրե, ջնջխե: Բայց ընկերները հեռացրին զոռով նրան: Ուզում էր կյանքի լիությունից, զգացմունքների զեղումից՝ իրեն սպանել...

Բոլոր թուրքերին սպանել, ցարին, սուլթանին, Վիլհելմ կայսրին:

167. ՍՈՒԼԹԱՆԻ ՈՒԺԸ

Ուստան Գյումրի, այլուր, ժողովներում, կայծակից լսեց չատ փքուն, սնապարծ, պարծենկոտ ճառեր, որոնցով այն համոզմունքը կազմեց իր մեջ, թե սուլթանի ուժը ոչինչ է: (Դրան նպաստեց և Ռես-Հոսեի զրույցները):

Գյումրի լսեց (Գամառ-Քաթիպայի ոտանավորները).

«Մասըսա ճակտին ամպրոպ պայթեցավ,
<Հայերու սրտեն վախս փարատեցավ,
Նժույդ է տակըս>, ձեռքիս այնալու,
Սուլթան, ուժ ունիս դեմս կայնելու...

<Թըշվառ>, քու հույսն է <չերքեզն ու> քուրդը,
Տես ոնց տամ քամուն նրանց բուրդը»...

... մեր բահերն ալ կանեն անոնց չանսատակ...

Անի դնալիս Ուստան, ճամբում, հարցրեց չրջիկ կայծակին, թե ինչքան ուժ ունի սուլթանը...

Կայծակն ասաց.

— Ուժ չունի, առաջ չա՜տ ուներ, բայց կորցրեց. նրան հաղթեցին, ով որ կռիվ եկավ — հույները հաղթեցին, սերբերը, բուլղարները. բոլորը ազատություն ստացան, մնացինք մենք:

Սուլթանը ուժ չունի. գանձարանը դատարկ է, պարտքերու մեջ խեղդված: Եվրոպան նրան հիվանդ մարդ է ասում, մեռնելու վրա:

Մնում է որ մենք վերջին հարվածը տանք: Եթե հայերս միաբանվենք, բոլորը դաշնակցական դառնան, բոլոր կտրիճ տղերքը զինվոր-ֆետահի դառնան — հայ հարուստը իր փողը տա, կաթողիկոսը՝ կոնդակ, տերտերը՝ թուղթ... (Գ. Քաթիպայի ոտանավորն է ասում այդ առթիվ...)

— Ինչքան զորք ունենանք, որ հաղթենք:

— Մի 10000 մարդ բավական է: Էնտեղի հայերն էլ կմիանան, կարելի է քրդերն էլ միանան... և վերջապես Եվրոպան կա, որ վրա կհասնի, կօգնե...

Առհասարակ, վեպի մեջ դնել նախապատրաստական տարրեր այն մտքի համար, թե սուլթանը, թուրքը վերջացած բաներ են, հայը զորեղ է, քաջ է, միայն կազմակերպված չէ, գլուխ չունի, զորք չունի, անմիաբան է... և այլն, և այլն:

ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ

Բագրանի սուրբ Գեորգի ուխտին [ահագին ժողով<ուրդ>] սովար ուխտավոր ժողովուրդ էր հավաքվում, ոչ միայն Շիրակի հեռավոր գյուղերից [նույնպես] ու երասխաձորից, [նույնպես] նաև Սուրմալվից, Կարսի քաղաքից ու գյուղերից, նույնիսկ Ալեքսանդրապոլից: Կարսից գալիս էր գավառի հառաջնորդ վարդապետը և [գավառի ոստի...] գավառամասի պրիստավը, առաջինը նշանավոր [ուխտին] տոնին փայլ տալու, իսկ երկրորդը՝ [այդ] հոծ բազմության վրա հսկելու, որ կռիվներ չծագեն, մի բան, որ ստեպ պատահում է հարբած գյուղացիների միջև:

Օսկանի ընտանիքը հինգշաբթի օրվանից պատրաստության մեջ էր. նորահարսի տեր էին: Խնամիների մոտ չքեղ պիտի երևալ, իրենց պատվին վայել: Գաթա էին թխում, հավ մորթում և այլն: Ուստա Կարոն ու Զավուշը նույնպես [պատրաստություն] եռուզեռի մեջ էին:

— Զավուշ ջան, հոգիս որ դուն ես [գիտես],— ասաց Ուստան, [գիտես] բազմախորհուրդ հայացքը հառելով ընկերի վրա,— գիտես որ Սոնան լինելու է, կհասկնաս, ինչ ասել է — վախնամ խելոքիմ էս ուրախությունից. Հարութթս, Մարուքս էնտեղ են լինելու, [էնպես քեֆ պիտի անեմ որ սրբերը] սրբերը պիտի թուրքացնեմ, էնպես քեֆ պիտի անեմ — դու էլ, քեզ տեսնեմ, մեկ էլ որ, Զավուշ ջան, դե՛հ, երթալու ենք՝ սուրբ գործի ճամբով...

Զավուշը [ախ քաշեց] աննշմարելի ախ քաշեց այս խոսքի վրա, Ուստան նկատեց և իսկույն վրա բերեց.

– Ա՛խդ ինչացու էր, թող մնացողները մեր ետևից ա՛խ քաշեն, ինձ նայե:

– Չէ, Ուստա Ջան, գլխիդ մատաղ, էնպես, առանց պատճառի, սրտիցս ելավ – կուզեի ասել թե՝ մեկէլ տարի էս օրս, ո՞ւրտեղ ենք, ուրտեղ չենք,– խոսքը բերնից խլելով ասաց Ջավուշը[1]:

– Դրա համար էլ, լավ, լավ քեֆ անենք, բերանս չի զորի, թե ասեմ վերջին քեֆն է Բագրան, մենակ, դեհ, աշխարհ է՝ եղավ-եղավ, կռվի մեջ տանձ ու խնձոր չեն բաժնի, դրա մասին չխոսինք, դու գնա, էս [20] 25 մանեթը սև ու ճերմակ փող դարձու՝ աղքատների ու մոմի, ժամի, աշուղի, առակ-պառակի համար:

Ուրբաթ ճաշից հետո Նախճվանի ուխտավորների [քարվանը] մի մասը գյուղից ելավ, կարոն, իր դրանավուր հագուստները հագած, սափրված, ուրախ-զվարթ գնում էր՝ քարվանի գլուխն անցած՝ Օսկանի ձին նստած, Ջավուշը տանեցոց հետ էր, սայլով կամ ոտքով:

Երեկոյան դեմ հասան Բագրան, ուր ձիերով, էշերով, սայլերով, հետիոտն գալիս էին ամեն կողմերից ամեն տեսակի ուխտավորներ:

Օսկանի ընտանիքը Կարոյի հետ իջան իրենց վաղածանոթ հյուրընկալ ընտանիքի մոտ: [Բարևելուց հետո] Տեղավորվելուց հետո, մի թեթև ընթրիք արին, և վաղ քուն մտան, որ առավոտ կանուխ սկսեին ուխտն ու տոնը: Ուստան մի աչքով քնեց, անհամբեր հոգով, ընդհատ երազներով, մյուս աչքը բաց՝ թե երբ պիտի օրը նշուլլի, որ գյուղամեջ ընկնի, գտնելու իր ընկերներին [սանահայրսանամայրերին], մի կերպ տեսնելու Սոնային:

---

[1] Ինքնագրում՝ *Ուսաան:*

Տարի գիշերն անցավ, և վերջապես չաբաթ օրվա աղոթրանը ճերմակցավ: Ուստայի հետ բոլորը ոտքի էին: Ուստան Զավուշի հետ գնաց դեղամեջ. ամբողջ գյուղը ևռուզեռի մեջ էր, անընդհատ նոր-նոր ուխտավորներ էին գալիս. գյուղական փողոցները վխտում էին տոնական հագուստ հագած մարդկանցով. ամեն տնից մի քանի ծուխ էր ելնում, թոնիր, օճախ, դրսի օճախ, բոլորը վառված էին, մատաղի համար. հարյուրավոր մատաղ է լինում այս տոնին:

Սեպտեմբերի վերջին անուշ ու անդորը օր էր, այգինները լի ոսկի տերևով ու բարուբյամբ, [կարասները լցված] կարասները հետզհետե լցվում էր [մաճառ] նոր գինով:

Ուստային չատերը ճանաչում էին ուխտավորներից, բարև էին տալիս ու իրենց մոտ հրավիրում [մի պատառ] մի օղի խմելու, բայց Ուստան ժամանակ չուներ, շտապ էր, [ներողություն] չնորհակալություն [հայտ<նելով>] տալով, հառաջանում էր. նրա միտքն էր՝ իրեն ձգել Քիրսի ուխտավորների տեղը՝ թե Մարուքին գտնելու, թե Սոնայի գոնե հոտն առնելու, չուքը տեսնելու[1]: Մարուքին գտավ, կսկուծ համբուրեցին իրար, չան ասին ու չան լսեցին. հեռվից տեսավ Սուդյա Թորոյին, սիրտը դողաց Ուստայի, բայց չտեսնելի տվեց, և Մարուքի ձեռքը բռնած՝ [գնացին Հարութին գտնելու] գնացին առաջ Մացակին [գտնելու] տեսնելու՝ Բագրանի իրենց հին ընկեր, [քեֆի պատրաստությունների համար: Մացակին գտան իր տանը, իրար ջերմ գրկելուց հետո, պատվիրեցին, որ օղի, գինի, ոչխար առնի, և մի ձեռք գուռնչի բռնե 2 օրով,] իմանալու թե քեֆի պատրաստությունները բոլոր [տեսած

---

[1] Լուսանցքում՝ առանց տեղը նշելու. «*Ուստան առաջ գնաց. ենթակոմիտեի մարդկանց անուններ, այցելեց*»:

ունի] հոգացել է արդյոք և երբ սկսեն: Մացակին գտան իր տանը, իրար ջերմ գրկելուց հետո, Մացակը հայտնեց՝ որ գինի, օղի, մաճառ, ոչխար, միրգ, և այլն, ամենը պատրաստ է, և կողբեցի նշանավոր զուռնչի [Ավագին] Զուրաբին էլ 2 օրով վարձել է, Զուրաբը չա՜տ քաղցր մատ ունի: Քեֆը կսկսվի կեսօրին, Երիցախեղդի [մոտ] կանաչ ափին՝ ուռի ծառների տակ: Ապա գնացին Հարությին գտնելու և ուրիշ ընկեր տղաներ, մի քանի սիրված սանահայրները Ուստայի, որ նրա անբաժան բաժակակիցներն էին:

Ջավուշին ուղարկեցին սանահայրների հետևից՝ Տեփոյի, Վարդանի, Մեսրոբի, Սմբատի: Ջավուշը գնաց, Կարոն ու Մարուքը մտան գյուղական մի օղետուն, մի-երկու բաժակ օղի «նախատոնակ» անելու: Իրար կենաց խմելուց հետո՝ հարցուփորձով իմացան Հարությի իջևանած տունը: Հարությը նրանց տեսավ թե ոչ՝ երեխայի պես ուրախ-զվարթ վազեց եկավ և փաթաթվեց երկուսի ճիտովը միաժամանակ: Հարությը նույնպես տոնական հագուստներ էր հագել, սափրված, նոր կոշիկներով:

— Հարութ ջան,— ասաց Մարուքը,— մեկ տարի կլինի անուշ երեսդ չեմ տեսել, արի մի հեղ[1] էլ պաչեմ, տո իմ խելոք խելառս, ես իմ բոստանից դուրս չեմ գալիս, դու էլ քո ջաղացից, որ իրար տեսնենք, [Կարոն որ չլիներ] կարոյին ենք պարտական, որ [մեզ] մեր բարևներն ու պաչերը իրար տանի ու կբերե:

— Հա, Մարուք ջան, ես էլ քեզ չա՜տ էի կարոտցել[2], ես ջաղացից դուրս՝ թրջած մուկ եմ, դու կրնաս գա, խոսք

---

[1] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *հատ:*

[2] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *կարոտել:*

տուր, որ հիմի դաս՝ օրթէ բոստանդ պրծնես, [խոր աշ...] աչնանը, ամեռը:

Մարուքը խոստացավ:

— Հարութ ջան, լեզուդ կկտրեմ, ա՛յ Մարուքիս մոտ կասեմ, վկա լինի, թե օրթեութիւնդ էստեղ բանեցնես: [Սատանի մեռած օրն է քո ծնած օրը] Անուշ ընկեր ու ախպերով ժողված ենք, [թագավորի քեֆ իշխանական իշխանաց քեֆ] չտեսնված քեֆ պիտի անենք, դիտես էլի, [ով] մեկէլ տարի էս օրս ուր եմ, հողի վրա, թե հողի տակը...

Այս հուզիչ խոսքի վրա Մարուքը զարմացած նայեց Կարոյի երեսին, նրան Ուստան չէր հայտնել իր դիտավորութիւնը՝ Հայաստան գնալու[1]:

Երկու մարդ դիտեր միայն՝ Օսկանն ու Հարութը, չէր ասել դեռ, վախնալով, թե բերնեն բերան [տար<ածվի>] ձենձենվի լուրը, ու հասնի Սոնայի ականջը. մի գուցե Սոնան թե՛ չատ վշտանա, և թե՝ հրաժարի Ուստային առնելուց՝ ո՞ր հարսը կուզե իր սիրածից, նորապսակից զրկվի. գուցե և նորից այրի նստի. Ուստան որոշել էր իր մեծ նպատակի հաջողութեան համար ատել, ծածկել իր խորհուրդը, թե ոչ՝ Սոնան [պայմանի] հարց կդներ ամուսնանալ՝ Հայաստան չգնալու պայմանով, [ամուս<նութենից>] պսակից հետո դյուրին էր:

Կարոն չնկատեց նրա հայացքը և շարունակեց իր խոսքը, իսկ Մարուքը անմիջապես մտածեց, թե դա՝ խոսքի ձև է, որ մարդ ասում է սովորաբար: [անծանոթ]

— Էսօր, տղերք ջան, մունեթաթող է. ջահելութիւններս հետ պիտի բերենք, ուտենք, խմենք, պար դանք, հարսնե-

---

[1] Պարբերութեան այլ լուսանցքում. «Դատից հետո գլխում, երբ Ուստան առանձին է խորհում, ծրագրում»:

րին աչքով անենք, տնազ գանք, [ձեռքեր ընկածները] հա՞, ի՞նչ կասեք:

— Իմ ուզածն էլ էդ է,— ասաց Հարությը:

— Ես էլ իմ բոստանից,— կցեց Մարուքը:

— Դե՛հ, հիմի [երթանք] պտտվենք գեղը, [լուս աչքով] քանի հարբած չենք, տեսնենք ո՞վ կա, ո՞վ չկա, ու մի լուս աչքով էլ երթանք Սուրբ Գեորգ ուխտեր անենք, հետո աքլորը երդիկը հանենք[1]:

Ուստային մեջերն առած պտտվեցին նրանք փողոցե փողոց, իրար ցույց էին տալիս իրենց ճանանչները, սիրուն հարսները, մինչև որ հասան Սուրբ Գեորգի մատուռը տանող [բլրաքարափ] քարաբլուրի տակը: Այդ զառիվերի ոլորման, երբեմն սանդուղներով չինված ճանապարհի (որ Ուստան նորոգել էր) աջ ու ձախ կողմը շարված էին մանրավաճառների սեղանները և մեջեմեջ էլ աղքատները, աշուղներ կույր, կույրեր, հաշմեր, բախտահար, թշվառ մարդիկ, նստած կամ կանգնած, հազար ձևով ու խոսքով[2] ողորմություն էին խնդրում, գութ հայցում[3]:

---

[1] *Աչ լուսանցքում.* «Այդ ժայռեղեն բարձունքը՝ պատմական Բագարանի միջնաբերդն է եղած,— ներկայումս ավեր, թուխ պարիսպով, իսկ Ս. գետը՝ Եփրատ. ավանդաբար Արամազդի [և Անահտի] և իր աստվածային ընտանիքի մեհյանի տեղն է, և մեհյանի կրկնակի նվիրական քարևրով շինված»:

[2] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *խոսքերով:*

[3] Աչ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. *«Մի երկու նկատողություններ. սիրուն հարսները, համեստ: Խոսքեր», «Այստեղ բռնեց Հարությը չուխան մի հարսի չղարչի հետ. սրտից մի գդալ եղ գնաց. ինչ հարս էր, վիզը՝ սարի ծխան, թշերը կարմիր, աչքերը՝ մեղր, պռունկները՝ կրակ. օրթե պաչեմ, բերանս պիտի վառվի. սիրտս էլ հեռը»:*

Հարուքը առհասարակ չէր կարող թշվառություն տեսնել, մի-երկու սրտաճմլիկ պատկեր տեսնելուց հետո, աչքերը գոցեց, և չէր ուզում ոչ լսել, ոչ տեսնել:

Ուստան աջ ու ձախ սև դրամ էր տալիս խեղճերին, և օրհնություններ ընդունելով/հնձելով՝ լուռ, ընկճված շարունակում էր վերելքը:

[Երբ] Հասան մատուռի բակը, [Ուստան դիմեց ընկերներին՝ ժողովուրդ] ուխտավորները խռնված[1] էին այնտեղ, շարժվելու տեղ չկար, շատերը նստել էին ցածլիկ պարիսպների վրա, որոնց ներքև անդունդ էր խորանում:

Հարուքի ականջին դիպավ մի ցավագին ձայն.

— Ողորմեցեք անճարիս, ողորմությունը աչխարքիս սյունն է...

Նայեց և տեսավ մի ծեր մարդ՝ անդամալույծ, գլուխը անընդհատ [դողդող...] ժաժուն. հայրը միտն ընկավ, սիրտը կծկվեց, գրպանից մի [20 կոպ<եկ>] արծաթ դրամ տվեց, և մտքի մեջ ասավ, որ Ուստային չտխրեցնե. «Թող կոտրվի էդ սյունը, թող բլի աչխարհը, ի՞նչ ունիս կորցնելու»[2]:

Երբ Ուստային [տեսան] նկատեցին ճանանչ ուխտավորները, ճամբա բացին, բարև տալով. [ու] նա մոտեցավ դռան առջև դրած մոմավաճառի սեղանին և մի [դաշտակ] դաստ մոմ գնեց, Մարուքն էլ հետևեց նրան, Հարուքը չգնեց և չմոտեցավ: Ուստան տեսավ նրա այս

---

1 Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *խառնված:*

2 Ձախ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. «*Ուստան գտավ Լորիկին, խնդրեց, որ Սոնայի տեսակցություն հարմարցնե. ինքը չի կարող շատ երևալ. վայել չէ, հարմար չէ... և ընկերով է, ու վերջապես չի կարող Թորոյի մոտ լինել միշտ, հարսի վրա 1000 աչք կա հսկող. Լորիկը խոստացավ*»:

վարմունքը, գունատվեց[1] և մոտեցավ ու չչնջաց. «Տունդ չքանդվի, խեղճ ես, դու էլ մոմ առ, ուխտ արա, քեզ համար, տղիդ համար»: Հարուքը լուռ էր: Ուստան ձեռքից բռնեց և քաշեց հետը. Մարուքը մոտեցավ և հարցական նայեց, Կարոն չչնջաց նրան. «Զգիտես, որ էս կապելուն խռով է վերևինի հետ»:— «Վերևինը ի՞նչ, էնոր հաշտ լինելն է պետք:— [Հարուքը առանց մոմ առնելու ներս մտավ՝ ասելով. «Դու ունիս, հերիք է», և նրա հետ մատուռ մտավ, [գլուխ] գլխարկը բացեց, մնաց][2]: Կարոն ու Մարուքը մոմերի մի մասը վառեցին Զորավոր Սուրբ Գևորգի գերեզմանի վրա, մնացածները դրին ուխտավորներից բերած մոմերի դեզի վրա: Կարոն երկար աղոթում էր մտքի մեջ, աչքերը մեկ վերև, մեկ գետին, ծնկաչոք: [Երբ] Նա աղոթում էր ու հաչողություն խնդրում իր գնալիք ճամբու համար, իր սրտի փափագների համար, նույնիսկ Հարուքի համար: Աղոթքից հետո երբ Մարուքի հետ դուրս եկան, տեսան Հարուքը նստել է պարիսպի վրա, ծխում է ու անդամալույծ ծերին նայում մռայլ աչքով[3]:

Կարոն մոտեցավ նրան, [լուռ, բայց ցասկոտ աչքերին] նայեց, բայց չխոսեց. խորունկ հանդիմանություն կար նրա հայացքի մեջ:

— Կարո, գոգդ բռնե, երկնքից հիմա կթափվին [ուզածներդ] խնդրածներդ. ես [նրան] էդ կատարողին վաղուց

---

1 Ա. Ինճիկյանը կարդացել է՝ գանգատվեց:

2 Ձախ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. «Օսկանն իջել էր իր աներանց տուն»:

3 Ձախ լուսանցքում. «Ուխտավորների աղոթքը: Քարեր համբուրելը, լալ. աղաչել: Սրտաբուխ աղոթքները»:

դիտեմ, ականթոթափելի կատարողն է[1],— *ասաց Հարուքը հեգնական ծիծաղը չըթունքների անկյունում*[2]:

Կարոն նորից լուռ էր:

— *Տո, մեկ ջուխտ մոմով ուզում ես խնդիրներդ երկի՞նք հասնեն, 7 լուծ գոմեշ պետք է, օրթե տեղից չարժեն քո նպատակները...*

Կարոն հազիվ էր զսպում իրեն, Հարուքը վրդովված էր. [դիտմամբ ուզում էր Ուստային խայթել, վշտացնել]. Հոր տանջանքի հիշողությունը հոգին խառնել էր կամ հուզել, մի տեսակ հեշտանք էր ղդում, մի չար պահանջ Ուստային խայթելու, վիրավորելու:

— *Հա, մոռացա ասել, Ուստա ջան, ուխտդ ընդունական լինի*[3]:

— *Հերիք [կարկուտ ծեծես] կարկուտի տաս, տո խելառ, քեզ համար էլ խնդրեցի, որ ինքը խելք տա: Մեկէլ ես քեզ [չըսի] չասի՞ օրթեուրթյունդ ծալես:*

[— Ինձ որ մնա, Հարուքի խելքը Աստված առնի, ավելի լավ է,— ձայնը բարձրացնելով[4] *մեջ մտավ Մարուքը,— շատ խելոք խելքից է:]*

— *Լավ, լավ, հերիք է, տեղը չէ. ելեք երթանք, [տեսնենք] ելեք,— մեջ մտավ Մարուքը և Հարուքի ձեռքից քաշեց, իջեցրեց վար:*

---

1 Ա. Ինճիկյանը բաց է թողել «*ես [նրան] էդ կատարողին վաղուց գիտեմ. ականթոթափելի կատարողն է*» հատվածը:

2 Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *արանքում:*

3 Ա. Ինճիկյանը բաց է թողել «*կարոն հազիվ էր զսպում իրեն ... ուխտդ ընդունական լինի*» հատվածը:

4 Ա. Ինճիկյանը «*ձայնը բարձրացնելով*» արտահայտությունը դարձրել է «*ձայնդ չբարձրացնես*» և կցել Կարոյի խոսքին, այնինչ ընագրում այն զետեղված է Մարուքի խոսքի վերևում:

Մի պահ լուռ գնում էին, Հարութը առջևից, նրանք հետևից: Մտան գյուղ, [կես գի<չերի> մոտ էր.] մի-երկու տեղից սկսվել էր զուռնայի ձայներ, ավելի ճիշտ, զուռնայի անկարգ ճիչեր, դաշնավորելու փորձեր, սակայն այս անդաշն ձայները նույնիսկ բավական եղան Հարութին ցնցելու, և եռքի բերելու, ու դարձավ Ուստային՝ քաղցր ձայնով ասաց.

— Կարո ջան, մեծ ախբեր, ճակտիդ մեռնեմ, ե՞րբ պիտի զուռնան փչենք, ե՞րբ պիտի արաղը տափկցնենք [երբ պիտի Սոնային տեսենք]:

— Տո, հորդ թյութունը չթափի, տո, խեղճ ես, երեխայի բնութ ունես, մեկ ամպ, մեկ արև,— ասաց Կարոն:

— Կնկա բնութն էլ էդպես է,— կտրեց Մարուքը:

— Վայ Մարուք, դու էլ Ուստայի կողմըն ես տաշում, ինձ կնիկ չինեցիր:

— Ներող եղիր, Հարութ ջան, լեզուս ձեռքս չէ, դու սրտիս նայիր,— և ձեռքը ձգեց Հարութի վզովը:

— Բերանս չորցավ,— ասավ Հարութը,— արաղից, գինուց չկա՞:

Եվ նորից մտան օղետունը:

Երբ օղետնից դուրս եկան, Ջավուշը հանդիպեց նրանց, և հայտնեց, թե մի ժամ հետո հավաքված կլինեն ընկերները, և ճաշը կսկսի: Ուստան նայեց ժամացույցին, ապա ասաց թե, երթանք մի ակը տանք, տեսնենք՝ կարող ենք էն անաստված Հարսին տեսնել, մինչև չտեսնեմ, աչքս-աչքին չառնի, քեֆ չեմ կարող անել, հասկցա՞ք, խոսքի կարճը:

— Վազենք, վազենք,— ասաց Հարութը և առաջ անցավ:

— Էդ խելառի կապը պահիր, Ջավուշ ջան, ինձ խաղք չանե:

Գնացին Թորոյի իջևանը. սուդիան նստած էր ցվիքի տակ, թախտի վրա, կողքին Օսկանը, և մյուս կողքին մի կարճ, լիքը, սև մազերով մարդ, շիլ աչքերով, շա՛տ հարուստ հագուստ-կապուստով, ժամացույց, ոսկեջուր գոտի, մատանիներ, կոշիկներ... [մահուդ չերքես]

Թորոն նրանց առջև [ոտքի չելավ] չկանգնեց, միայն ոտքը, որ մյուս ոտքի վրա էր, ձեռքով [ծանրու<թյամբ>] դանդաղ իջեցրեց, բարևելուց հետո, ծանոթացրեց նոր դեմքի հետ:

— Խնդրեմ, ծանոթ էղեք Մինա[1] աղայի հետ, կողբեցի, անունը լսած կլինեք:

Թորոն հարցրեց Հարութի ընտանիքի մասին, տերտերի և մեծ ու խոշորի մասին, Մարուքը իրենց գյուղից էր արդեն:

— Քավոր Ուստա Կարո,— ասաց Թորոն,— լավ ընկերներ ունես, [ասած է թե նմ... քեֆդ] քեֆներդ միշտ տեղին, շատ տեղին է, ուրախ-զվարթ եք, ասած է թե, նմանը նմանի որ չդտնի, օրը ախ ու վախով կանցնի: Միմի արաղ անուշ էրեք, է՛յ հարս, արաղ բեր էստեղ:

Ուստան հարսի անունը լսելով՝ [գլուխը] լեզուն չաղվեց, չկարողացավ Թորոյին պատասխանել: [Հարսը] Սոնան մանիշակի դույն դերիա հագած, եկավ արաղի չիշը ձեռքը, մատուցարանի վրա էլ [ակրատ աղանդերները] բաժակները ու չամիչ, շաքար: Կողբեցին Սոնային տեսավ թե չէ, իսկույն աչ ձեռքի բութն ու ցուցամատը լեզվի ծայրով թրջեց, և ոլորեց բեխերը, և անթարթ նայում էր նրան՝ հարսին, թեև աչքի մեկը հարավ էր նայում, մյուսը

---

[1] Ա.. Ինճիկյանը կարդացել է՝ *Մինաս:*

Հյուսիս, բայց Ուստան [տեսավ] զգաց, որ երկու ներհակ կողմերն էլ միայն մի կետի վրա են անշուշտ հառած — Սոնայի վրա: Ուստայի աչքից չխուսափեց նրա այս շարժուձևը, և մտքում ցասկոտ ասաց. «Կողբեցի [շուն], ինչ ես ծուռ աչքդ չիտակ քցել ուրիշի հացի վրա. [գլխիդ հետ ես խաղում / սատկելիքդ եկել է] օրդ վերջացե՞լ է»: Եվ հոգում թշնամանք ծայր առավ կողբեցու հանդեպ:

Թորոն իր ձեռքով լցրեց արաղի փոքրիկ բաժակները, [ինքը մեկը առավ] առաջինը ինքը վեր առավ մի կտոր շաքարի հետ, հետո հերթով Սոնան մոտեցավ հյուրերին: Ուստան աչքի ծայրով նայեց նրան, Սոնան [աչքերը] թարթիչները վար էր բերած[1]: Հարուքը նայեց ինչքան որ հնարավոր էր մի երկու վայրկյանի մեջ: Հարսը՝ մի քիչ անց, հեռացավ. միայն Հարուքն ու կողբեցին հետևեցին [նրան] իրենց անկուշտ հայացքով [հեռացող] հարսի քայլերին:

Ուստան ասավ ոտքի կանգնելով.

— Խնամի Թորո, քեզ տեսի եկանք, ներող եղիր, հիմի երթանք, մեզ սպասող կա,— և ձեռք [տալով] մեկնելով Թորոյին ու գլխի թեթև նշան տալով կողբեցուն, մոտեցավ Օսկանին և ցած ձայնով հայտնեց ճաշկերույթի վայրը:

Երբ հեռացան Թորոյի մոտից, Կարոն դարձավ Հարուքին.

— Էդպես փերի տեսած կա՞ս դրախտում կամ երազիդ մեջ:

— Շատ լավն է, ճիշտ որ պագնելու ճակտի դնելու է [բարով վայելես]:

---

[1] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ ձգած:

– Ողջ մարդուն կմեռցնես, մեռելին [կկենդան<ացնես> կողջ<ացնես>] կկենդանացնես, ես գիտեմ դրա գործը,– ասաց Մարուքը:

– Նրա աչքի մեկը արև է, մեկելը – արեգակ, սիրտս վառեց, վառեց:

– Ուստա Ջան, քո սրտիդ բոցը ինձ էլ առավ, գիտես թե ես էլ զարկվա, բարով վայելես:

– Թագավորի վայել հարս է, Ուստի մենակ վայել,– ասաց Ջավուշը:

– Փլավն ում է տված, բերանը՝ ում. տո՛, Կոմիտե Կարո, էլ Հայաստան ուր կերթաս, դրա գրկի մեջ Հնդստանն էլ [քուկդ է] քոնն է, Զինմաչինն էլ ոտքիդ տակը:

– Ի՞նչ, Ուստան Հայաստան կուզե երթալ,– զարմացումով հարցրեց Մարուքը:

– Չէ, Մարուք ջան, Հարութն է, իր ջաղցի պես սուտ կաղա,– իսկույն վրա եկավ Ուստան ծածկելու համար և աչքով նշմար տվեց Հարութին, որ գոյե:

– Չէ, էնպես ասի, խոսքի օրինակ,– խոսեց Հարութը:– Ուստայիս ղորթը սանամերնների, հարսների հետը, սուտը՝ աշխարքի հետ:

– Հը, չըլնի, չիմանամ Հայաստան երթաս, առանց ինձի, ու ես էլ գալողը չեմ:

[Օրը գա ես քեզ կասեմ, տեղդ ծանր նստի:]

– Խոսքի օրինակ, ինչպես Հարութն ասավ, թե որ Հայաստան երթամ, ի՞նչ գեշ բան կանեմ:

– Լավ էլ չես անի,– պատասխանեց Մարուքը,– գնացողներն ի՞նչ շահ տեսան, տեղդ ծանր նստի, օրը գա՝ ես քեզ կասեմ, էն օրը տուն մնացողը մարդ չէ:

Ուստան չուզեց խոսքը երկարացնել, արդեն հասել էին քնքի տեղին, երիցախեղդի ափին. բագրանցիք ավանդաբար այդ անունն են տալիս Ախուրյանի այդ տեղին, ուր

իբրև թե խեղդվել է Արամազդի քրմապետ Երվանդն իր քուրմերով:

Ուռիներն ու բարդիների կանանչ հասակը աննշմար օրորվում էր անդորր ջրերի վրա: Սեղանը փռված էր ծառների տակ, օճախները վառվում էին, վրան կերակուրի կաթսաներ: Մացակը բարձր ձայնով ասաց.

— Դեհ նստեք, գուռնան էլ թող փչե, սկսենք, հիմի կուգան մեկէլները: Սրաբ ջան, Զուրաբ ջան, ձեզ տեսնեմ,— դիմեց դավուլ-գուռնաչուն:

Մի պահ հետո ողջ օդը բռնկվեց դավուլ-գուռնայի տաք շնչով: Ուստան, Հարութը, Մարուքը, Զուրաբը [ոգևորվեցին] վայրկենապես ընկան քեֆի տրամադրութեան մեջ: [Մի երկու] Նստեցին կողք-կողքի, Հարութը [բռնեց Ուստայի ձախ] մտավ Ուստայի ձախ թևի տակ. առաջին երկու օղին խմեցին: Երկու պատանիներ, որ ծառայում էին Մացակի ձեռքի տակ, թարմ խորովածները թափեցին լավաշի վրա:

[— Ուստա ջան, դու սեղանի գլուխ-գլխավոր, կառավարե մեզ:]

Մինչ այդ եկան երեք հոգի (սանահերը և մի ուրիշը),— հազիվ էին նրանք տեղ բռնել, եկավ և Օսկանը, [սեղանը լրիվ խումբ] և երեք հոգի, որով խումբը պատրաստ էր արդեն:

— Ուստա ջան, դու սեղանի գլուխ-գլխավոր, կառավարե մեզ:

— [Կարավան Հապեչցի Կարո] Կարո, մեծ աղբեր, քեզ տեսնեմ, երեցների պես մեզ խեղդես արաղի ու գինու մեջ, հասկացա՞ր, [քիչ խոսենք] ճնճուղ չչրես...

Ուստան սիրով պաշտոն ընդունեց, թևերը վեր ծալեց, փափախը մղեց գագաթի վրա և հանդիսավոր ձայնով ասաց.

– Ախպերտիք ջան, ընկերներ ջան, իմացեք որ էն մեծ բախտը որ ունենք – վաղուցվա սիրով ընկերտինք, ջան ասենք, ջան լսենք. հանաք խոսքից նեղացող թող չլինի. էսօր սատանի մեռած օրն է. ես գիտեմ, էնպես քեֆ նշանց տանք, որ մինչև մահի օրը հիշենք ու գեղ-քաղաք կանգնեն տեսի ու զարմանան: Տեր Աստված, քեզ փառք, քո տված հացն ու գինին ենք վայելում. տղերք, Մացակ ջան, մատաղը բեր մեկ առաջ ու առաջ: Կերեք ու ըսեք, մատաղներս ընդունական լինի:

– Ամեն, ամեն, Ուստա ջան. Աստված, փառքդ շատ լինի, մատաղներս ընդունական լինի, մեզ ամենքիս ողջ պահես ամենքիս համար – քիչ ենք ասում, շատ հասկացիր,– ասաց Օսկանն ու մյուսները հետևեցին նրան:

– Գավաթներդ լցրեք, մեր ամենքիս թանկագին կյանքի համար:

Խմեցին ու սկսան մատաղն ուտել:

[Երբ վերջացավ] Ուստան նորից խոսեց.

– [Հիմի էլ] Աստծունը տվինք Աստծուն[1], հիմի էլ մեր լեզվով օրհնենք սեղանը. [Հարութ ջան, սեղանն օրհնե, տիրա<ցու> մարդ ես] Մարուք ջան, [սեղանը] օրհնե, քո քեռուդ անները տերտերի քրոջ տղան է եղել, չորչոփը դիպած է քեզ, դրոց մարդ ես:

Մարուքը ծունկի եկավ և քահանայական ձայնով և ձևերով սկսեց.

– Հայր մերս վկա,
Ջուրն ընկա սկա,
Ելա մարդ կնկա[2]:

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է՝ *«Անուրը տվինք անցանք»:*

[2] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *դառա:*

— Ապրիս, տիրացու Մարուք, կարգիդ հաստատ մնաս,— ձայնեցին ու ծափեցին սեղանակիցները[1]:

— Սրաբ ջան, Զուրաբ ջան, բուկերդ թրջեցեք, ու զլեցեք, ձեզ տեսնեմ, էնպես որ [մյուսները] մյուս քեֆ անող խմբեր լարել էին իրենց դավուլ-զուռնան:

Արդեն ուրիշ շատ տեղեր, Ախուրյանի երկայնքին, ծառների տակ և ավելի հեռուն ու մոտերը ուրիշ ուխտավոր քեֆ անող խմբեր լարել էին իրենց դավուլ-զուռնան:

Ուխտավոր բազմություններ, այր ու կին, հարս ու աղջիկ, բագրանցի և ուխտավոր երեխաներ, հավաքված զվարճացող խմբերի շուրջը չէին հեռավորությամբ մտիկ էին անում նրանց, և մտիկ անելով ավելի կրակում զվարճացողների հպարտությունը: Սակայն վայրկյանից վայրկյան ավելի հոծ ամբոխ էր ժողովվում Ուստա Կարոյի խմբի շուրջը — ով որ լսել էր թե, Ուստան է այնտեղ, շտապում էին նրա բոլորքը: «Որտեղ Ուստան է, Օրթե Հարությը, Քերոփը, Մարուքն ու բագրանցի Մացակը, քեֆն էլ էնտեղ է»[2]:

Ուստան աչքի տակով նայում էր ժողովրդին, և ավելի ու ավելի թևավորվում ու գոլխրում:

Բագրանի ողջ ձորահովիտը լցված էր դավուլ-զուռնի հզոր ձայնով, և Ախուրյանի հանդիպակաց ժայռոտ ափերն ու խոր ձորերը, ավերակ վանքերը մեկին տասը պատասխանում էին որոտագին արձագանքով.

— Է՛հ հե՛յ, քաջքերն էլ մեզ հետ դավուլ-զուռնա են զարկում,— ասաց Ուստան.— [դեհ մի անուշ երգ ասեք,

---

1 Ալ լուսանցքում. «ծիծաղեցին և հանդիսականները»:

2 Ալ լուսանցքում. «Քեֆի ժամանակ իրար գրկում, պաչում էին, չատերին պարի հանեցին — և Ուստան էլ, Մարուքն էլ»:

փողով] ձեր կենացը, էյ քաջքեր,— և ինքը խմեց, մյուսներն էլ նույնպես:

Աչքին ընկավ Օսկանի ընտանիքը, Սոնան էլ մեջներն առած՝ որ եկել էին իրենց մտերիմների ուրախությունը դիտելու: Ուստան Սոնային չտեսնել կեղծեց, սակայն արյունը թինդ առավ.

— Սրաբ ջան, լեզուդ բլբուլի թառ լինի, «Սիրուններ, միք նեղանա» խաղն ասեք, Զուլաբ ջան, փողն ածա...— և հանեց մի ռուբլի թղթադրամ չաբաշ, դավուլչի Սրաբը ռուբլին առավ, մի ծայրը կոխեց վուփախի տակը՝ ամբողջ ռուբլին ծածկեց ճակատը, որ տեսնեն դիտողները:

— Է՛յ չաբաշ, Ուստա Կարոն մեկ մանեթ չաբաշ, չեն մնա, չեն մնա,— և ապա երգեց — «Սիրուններ, միք նեղանա, որ իմ յարին եմ գովում»:

— Լիքը լցրեք, պռունկե պռունկ, Օսկան ջան, քո կյանքիդ թասն է, քո ապիղ դերդաստանի կենացը, օճախիդ ծուխը հուր հավիտյան թող բղխե Շուշանկա աղբյուրի պես:

— Շնորհակալ եմ, Կարո ջան, Աստված թող քո օրերիդ հետ ուժդ էլ, բախտ էլ շատացնե. ինչ կմտքես, կատար ունենա, ախպրտիք, ողջ ըլնեք:

— Սրաբ ջան, Սրաբ, մեկ տրնկի ածա: Սանահեր Սմբո, ի՞նչ ես թթվել. ես քովդ, լից խմե, մի վախի, խո տերության հարկը բոլորը քեզնից չեն ուզում, էլ խաղա՛:

Եվ կողքի ընկերները բրդելով սանահեր Սմբատին ոտքի կանգնեցրին, որ լավ պարող էր: Կանանչ սեզի վրա պարում էր ու թռչկոտում, իսկ մյուսները բոլորը ծափ էին տալիս:

— Նաղա՛ր ջան, մի թաս ասա, սրտիդ ուզածով:

— Սանահեր Սմբո, կենացդ, թող ըլնի ամենքիդ կենացը:

Նազարը ծնկի եկավ, փափախը ուղղեց, բերանը սրբեց ափով և բարձր ձայնեց[1].

— Ուստա Ջան, քո արևշատության համար, մեկ էլ կուզեմ ասել, լավ մարդու կենացը, ով էլ որ ըլնի, ուր էլ որ ըլնի:

— Ապրիս, Աստված լսող-կատարող ըլնի:

Եվ Ուստան հերթով ընկերների կենացն էր խմում և նրանց խոսք էր տալիս:

— Հարութ ջան, անունիդ մեռնիմ, մի չնորհքդ ցույց տուր էստեղ, մի գիտնակ թաս ասա,— դիմեց Ուստան իր անուրթի տակ նստած Հարութին:

Հարութը չփոթվեց, ապա ցած ձայնով ասաց, հասարակության մեջ վարժ չէր:

— Մարդ իր հոգին սատանի դրախտի մեջ տա,— և [խմեց բա<ժակը>] կորզեց բաժակը:

— Էդ ինչ խրթին բան ասիր, չհասկցանք,— ձայնեցին չորս կողմից:

— Սուսեք,— ձայնեց Ուստան,— գժի լեզուն գժի տերը կհասկնա, Հարութս կուզե ասել, թե Աստված մարդու հոգին կնկա գրկի մեջ առնի:

Հարութը գլխով հաստատեց:

— Կնիկների կենացը,— գոռաց Մարուքը — կնկա ծոցը — սատանի դրախտն է, լավ ասավ:

Օսկանը ցած ձայնով ասավ,— ա՛յ ջահելներ, էստեղ հարս ու աղջիկ կա, հազար օտար, անճանաչ մարդիկ, ա-

---

[1] Այ լուսանցքում առանց տեղը նշելու.

«Սաքոն թասը մի կումով պարպեց. ասելով.

— Դուք էսման ողջ ըլնիք. դուք էլ էդման:

[Հարութը բղավեց.] Քնֆ անողները բղավեցին, էյ, հոյ. հայ, հույ, վա՛յ չուտողին, վայ չխմողին, վայ չոր քարին քացի տվողին, հեյ. հա՛յ:

մոթ է, ծանր կեցնք, խելոտաք, ի՞նչ եղաք: Հարութը արագ ավելացրեց — «Օրթե պետք է խելովել, արժե մենակ կնկա համար խելովել», և Մարուքը ձեռքը երկարեց Հարութին,— «Ձեռքդ տուր, հոգի ջան, հենց կնկա խելքն էլ նրա մեջն է, որ տղամարդուն խելքից հանե»:

Հեռու ու մոտիկ եղողները բոլորը խնդացին: Ուստան [կարծես] ուզենալով վերջ դնել [ամփոփելով] բոլորի խոսքերին, հանդիսավոր ասաց, հատ-հատ, որ Սոնան լավ լսե:

— Կարճ կապենք. Աստծուն ներհակ բան չէ, թե որ կնկա թասը խմենք, ինքը կնիկը տվավ տղամարդուն, ու տղամարդը՝ Ադամ, երկնքի դրախտը [փոխեց] ծախեց, կնկա դրախտն առավ, վարդ ու [ծաղիկ] բալասան, կնիկը էն տղամարդուն է վայել, որ կրակե պատերով բերդի [միջից կերթա իր սրտի սիրածը] վրա կերթա ու կրակի միջից կփախցնե իր սրտի սիրածը:

— Ուստա ջան, Ուստա, լեզուդ ուտեմ, մարգրիտ ես շաղ տալիս...— Եվ Մարուքն ու Հարութը վրա պրծան, համբուրեցին Կարոյին: Մի երկուսն էլ չշնջացին — «Պատից ընկնողը պատից ընկնողի ցավը կհասկնա»:

— Սրաբ ջան, զարկ, ձեզ տեսնեմ:

Հարութն ու Մարուքը շաբաշ տվին, Ուստան էլ իր կողմից: [Նվագածուները] Դավուլչին երգեց. «Քելե՛, յար ջան, քելե՛, սերդ վայելե»:

— Հեյ ջան, ջան, հա ջան,— գոռում էին սեղանակիցները և ավելի ու ավելի բորբոքում էին պարերը, տրնկինները:

Օսկանը, որ զգաստ էր, ջանում էր չափը չկորցնել, իբրև նորահարսի տեր, ելավ Ուստայից [ասաց թե ես երթ...] իրավունք[1] առավ գնալու թե՝ Թորոյին պիտի եր-

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է՝ *հրամանք:*

թամ[1]: Ուստան պատշաճությունը հասկացավ: Օսկանը դնաց, մոտեցավ յուրայիններին և նրանց հետ հեռացավ: Ուստան նկատեց և վայրկենաբար [ցուրտ զգաց] պարապություն զգաց իր շուրջը: Սոնան ամեն բան տարավ հետը, բայց իրեն չմատնելու համար նույն աչխույժով շարունակեց քեֆը:

[Կեսօրը անցել էր: Քեֆ անողները, [բոլորը] ինչպես միշտ անում են ուխտավորները, երբ քեֆն հասնում է ծայր գագաթին, ոտքի ելան, դավուլ-զուռնան առաջները ձգած, հետներն էլ օղի, գինի ու աղանդեր, սկսեցին կամաց-կամաց չրջել գյուղի փողոցները, վեր-վար. սա քեֆի գագաթին հասած ձևն է:]

Կեսօրը վաղուց անցել էր. Ուստայի խումբը, ինչպես միշտ անում են ուխտավորները, դավուլ-զուռնան առջևները ձգած, ելան, կամաց-կամաց քայլերով չրջել փողոցե փողոց, իրենց ցույց տալու համար. սա քեֆի գագաթին հասած ձևն է: Ուխտավորները, որ գույն-գույն գետերի պես, հոսում են վար ու վեր, աջ ու ձախ, կանգ էին առնում, քեֆ անողներին դիտում, գովում, [նկատողու<թյուն>] ոգևորում նրանց: Պատանիները, Մացակի հետ, նրանց հետևից կրում էին գինի-օղի և աղանդեր. Հանդիպող բարեկամին հյուրասիրում էին, երբեմն հետները տանում: Հրապարակներում կանգնում էր խումբը և պար բռնում, ու ապա աղմուկ-աղաղակով առաջ գնում:

Հարուքը, Մարուքը թևերը ձգած Ուստայի ուսով, նրան մեջն առած, շփոթ, երերուն քայլերով, գնում էին[2], ստեպ-ստեպ նրա ուշադրությունը կոչում էին այս ու

---

[1] Աչ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. *«Օսկանը մոտծեց [կարոյին] հեռացնել իր տնեցոց, վախենալով թե...»*

[2] Աչ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. *«ծուխը բերաններին»:*

այն դեղեցիկ կամ շատ տգեղ կնոջ վրա: Ուստան կարմիր թաշկինակը ձգել էր պարանոցով, փափախը մինչև ծոծրակը շուռ տվել:

— Քեֆ արեք, տղերք ջան, քեֆ արեք, աշխարքի գանձը աշխարքին կմնա, քեֆ քաշելը մարդուն կմնա. այ հողածին, ի՞նչ ես շալկել աշխարքի ցավը, զարկ ու պատվի, լակլակի կյանքը լակ-լակ անելով կերթա, քեֆ անողինը՝ քեֆ անելով: Գինի բերեք էստեղ, գինի՛, գինի...

Անթիվ քեֆ անող խմբեր կային, անցան մեկի մոտով, Ուստան լսեց իրեն անունը. «Տո, ի՛նչ անուշ քեֆ անողներ են, Ուստա Կարոն է, հալալ է նրան քեֆը...» և միերկու մարդ լիք բաժակներով վազեցին, մոտեցան նրանց:

— Ձեր խմբի կենացը, շեն ու պայծառ մնաք, համեցեք մեր սեղանին...

Բոլորը շնորհակալ եղան, պատվեցին նրանց և նորից առաջ գնացին:

— Կարո ջա՛ն, ես մեռնեմ, դու ապրես, մեկ տես ի՛նչ անաստված սիրուն հարս է, ծաղիկ ծծերով, հոգին ուտեմ:

— Հարութ ջան, ձեռք քաշե,— ասավ Ուստան,— [Հայրոյի] Ալոյենց [Մարգարի] Ղազարի կնիկն է:

— Քանի ձեռքս բերանս կերթա, ես ձեռք քաշողը չեմ, [Հայրոն] Ղազարի ըլնի, թե Նազարի, թե ուրիշ բան, կնիկ չէ՞ անունը...

— Հարութ ջան,— բոթեց Մարուքը Կարոյին, կարծելով թե Հարութին է բոթում,— էն [կնկան] հարսին նայե, եղն ելել է, մեղրը ծածկել, ա՛խ, ծոցիդ մնջ խեղդեի...

— Ես էլ խեղդեի հեռդ,— ասաց Հարութը:

— Ես էլ մեր ջաղցից,— ասաց Գոգորը:— Ձեզ մենակ չեմ թողնե, ե՛ս էլ [խեղդվեմ]:

— Հալա, ձեր տունը չքանդվի, [գիտեք թե] էդ ինչ մեծ ծով եք դառել:

– Յա՛, Զավուշ ջան, դո՞ւ ես,– ասաց Ուստան,– մեկ արի աչքի առաջը, կարոտցեր էի.– և համբուրեցին իրար:

[Հարութը վրա բերեց, բա, Զավուշ, ծով է, ծով, մեզ խեղդող ծով կասենք:]

Մոտեցան գյումրեցի քեֆ անողներին, նրանցից մեկը բղավում էր:

– Ծո տղերք, էս էլ խմենք էն լամբի կենացը, որ չորս բոլորը լույս կուտա: Ծո Գոգոր, դու ով, գաթան ով. էյ հեյ, ուտողը դիտե, չուտողն ինչ դիտե, հոգուդ մեռնիմ, լաստը թուլցո՛ւ, ես նրա ստեղծողին սատկիմ:

– Էդ խելառների լեզուն մարդ չի հասկնա, երթանք:

Առաջ անցան. մի խումբ [քաղաքից] կիներ իջնում էին դեպի Շուշանա աղբյուրը, որի ջուրը ստերջ կանանց համար հրաշագործ հռչակ ուներ:

– Աղչի, մամս յոթ տարվա չբերք էր, խմեց, պտղեց:

– Ուստա ջան,– փսփսաց Հարութը,– նրանք չգիտեն, որ մենք ավելի զորավոր [աղբ<յուր>] ենք:

– Հարութ, ձենդ կտրե:

– Մեռնիմ արաղի սուրբ զորությանը, բերանս չորցավ, արաղ բեր էստեղ,– բղավեց Մարուքը:

Հասան մի հրապարակի վրա, որի [շուրջը տոնավաճառ էր] զանազան կետերում [մանրավաճառ] փերեզակները իրենց մանրուքները ցուցադրած, գնորդներ էին հրավիրում, հարս ու աղջիկ մեղուների պարսի պես բզզում էին նրանց շուրջը:

– Օսկու պես օղեր, յաղութի պես մատնիքներ, ասեղ, թել, օյա, մերտ, էժան կտամ, փեշքեշի պես կտամ, քաղաք էլ չեք գտնի:

– Մաստակ, գազպեն, կանֆետ, մատներդ հետները կուտեք, էյ, հեյ:

Մարուքի աչքին ընկավ մի կին, ձեռքը ազատեց Ուստայի վզից և ամուր ճակտին զարկելով գոչեց.

– Հողն էս գլխին, Ուստա, էս էն [կռապաշտ Հարսն է] անաստված աղջիկն էր, ջահել ժամանակս, որ երեք տարի հոգիս վառեց ու գնաց. ա՛խ, սատանեն [կաս<ե>] ասում է գնա, փաթթվի հետը...

– Ջէ, Մարուք ջան, չերթաս, թառից մի ընկնիր:

– Գնա, գնա, [Մացակ], դնա Մարուք,– խրախուսում էր Հարուքը,– սատանին լսի՛ր:

[Մարուքն] կարոն բռնեց Մարուքի օձիքից, Մարուքն ուզում էր պոկ գալ ու վազել այն կնոջ մոտ, Ուստան հազիվ էր զսպում, օդնութեան հասան [մյուս ընկերները] Գոգորն ու Սաքոն և հանգստացրին Մարուքին, սակայն Մարուքը ուզեց, որ այստեղ [զուռնան] փողը փչե և ինքը երգե...

Փողը փչեց մելամաղձիկ [ձայնով] նվագով և Մարուքը դրեթե լացակումած երգից՝ հարբած, [արդեն] կես խզված ձայնով.

Երգը

Ես մի խելօ տղա եմ,
Աստծուն ծառա,
Աստված խնդրեցի,
Մուրազս չառա,
Ա՛խ յար ջան, յար ջան,
Ես քեզի վառա,
Ես քեզի վառա,
Կարոտս չառա:

Հարսը նկատեց, [լավ] ճանաչեց և թագնվեց ամբոխի մեջ:

— Հերիք է, հերիք է, էսօր ձեզ կորցրիք, խումերդ ի՞նչ էր, որ բլբուլ դարձաք, երթանք, երթանք:

— Բմբուլ դարձաք, բմբուլ,— լսեցին կողմնակի մի ձայն. մի ուխտավոր էր, որ ասաց ու խառնվեց բազմությանը:

— Կերաք,— ասավ Ուստան,— դեհ, երթանք էստեղից. Սրաբ, Զուրաբ, դավուլը ղլե, ականջներ պատռե...

Որոտաց դավուլն ու զուռնան. մի պահ Մարուքը մոռացավ ցավը, իսկ Հարութը մթագնել էր: Ուստայի վարժ աչքը՝ որ Հարութի հոգու բոլոր ելևէջները անգիր գիտեր, նկատեց և փաղաքշելով Հարութին ասաց.

— Անուշ ջան, հոգիս, ի՞նչ էլի [ներս քցեցիր] ամպոտար, տղամարդ կաց:

— Կարո ջան, [կտեսնես] տեսնո՞ւմ ես. էս երեխան օրթե մոր ծիծն է ծծում, էս եմ մտքում, թե հիմի քեֆով ծծում է, էդուց օրթե մեծնա, աչխարքը ծծած կաթը քթեն պիտի հանե...

— Օֆ, Հարո՛ւթ, վազն արի, էդ քու օրթեուրյունից, աչխարքը քանդում ես մարդու վրա,— և խիստ նայեց նրա աչքերի մեջ՝ խրատով ու ցասումով:

Հարութը լռեց: Հասան աղբյուրի գլուխը, ուր ամենից շատ էր խռնված ուխտավոր ժողովուրդը: Թորոյի իջևանած տանը մոտն էր: Զուռնաչին բռնկված կրակի պես, կարմիր թշերով՝ զուռնան վեր էր [բռնում] փչում, վար էր բռնում, դեպի գետինն էր փչում և ավելի ոգևորված առանց ձեռքով բռնելու [սոսկ շրթունքով] զուռնի փողը, ուղղակի [շրթների] շրթունքների մեջ [խրած] ծայրն առած փչում էր: Դավուլը դղրդում էր (և խումբը դժվարավ էր ճեղքում դիտող բազմությունը, մանավանդ մժեղների[1] մեծաքանակ [ժխորը] խառնիճաղանջը... Հասել

---

[1] Ինքնագրում՝ *ժմեխների:*

էին Թորոյի իջևանած տան մոտերը, որտեղից ապահովաբար դիտելիս կլինեը Սոնան...)

Ուստան նետեց իրեն [ընկերների] բաց տեղի մեջ և սկսեց մի բուռն տրնկի, ապա բոլոր ընկերներով շարվեցին քոչարի [խաղալ] խաղին, ոտները ամուր զարկում էին գետին, օրորվում, թափ տալիս ողջ մարմինը, ծնկի գալիս ու դիք կանգնում, (ուղիղ, չիտակ, ճողի պես) չիփչիտակ կանգնում ճողի պես:

Հարութն ու Մարուքը, բոլորի միջից, այնպես էին իրենց մուսացել՝ և իրենց [անճայն] վայրկենական թախիծը, որ ոչ միայն իրենց գլխարկներն էին օդը նետում, այլև անծանոթ անցորդների, դիտողների — գոռում էին, գոչում, զանազան ճայներ արձակում [և նորից խմում, խմում]:

[Եվ [երբ] երեկոյան դեմ եղավ, ամենքն էլ այնքան էին խմած, որ այլևս իրար լեզու չէին հասկանում, քեֆն այլևս քեֆ չէր, այլ Բաբելոնի [խառնիճաղանջ] ժխոր. ամենից զգաստը Մացակն էր ու Ջավուշը, որոնք էլ նրանց հավաքեցին և տարան Մացակի տունը:]

Երբ դեռ արևը մայր չմտած՝ հնչեց երեկոյան [ժամի] եկեղեցու զանգը, Ուստա Կարոյի ընկերները այլևս իրար լեզու չէին հասկանում: [Ամենից զգաստն էր Մացակը, Ջավուշը և Ուստան, որ] Մացակը, որ ամենից զգաստն էր, ժողովից բոլորին տարավ տուն, որ հանգչեին մի քիչ[1]:

---

[1] *Երբ դեռ արևը մայր չմտած ... որ հանգչեին մի քիչ վիս և նորից խմում, խմում, և [երբ] երեկոյան դեմ եղավ, ամենքն էլ այնքան էին խմած, որ այլևս իրար լեզու չէին հասկանում, քեֆն այլևս քեֆ չէր, այլ Բաբելոնի խառնիճաղանճ. ամենից զգաստը Մացակն էր ու Ջավուշը, որոնք էլ նրանց հավաքեցին և տարան Մացակի տունը:*

Կարոն-Հարութը-Մացակը իրար կողք պառկեցին, մի երկու-երեք ժամ [քնեցին] հանգչեցին. առաջինը Ուստան [զարթնեց] սթափվեց և նրանց էլ [արթնացրեց] ոտքի կանգնեցրեց. սառը ջուրը, որով լվացվեցին, գլխներին ածելով, [և պաղ թուրչին] բավական զգաստացրեց նրանց, մի-երկու բաժակ թեյ խմեցին ախորժակով, մի-մի օղի ևս[1], և ընկան գյուղամեջ, ուխտավորների մեջ, ինչպես հաճախ, նախկին տարիներին արել էին, լսելու, լրտեսելու [այս ու այն հարսի խոսքին] հարսների զրույցները, ընկերուհիների խոստովանությունը, հատ ու կտոր, [պարի մեջ մտնելու,] հարսների ձեռքերից [բռնելու] քաշելու, գաղտագողի կատակներ անելու, [երբեմն, նույնիսկ, եթե բախտը բերում է, մի [մենակ պտտվող] ուղեմոլոր կին [մենակ հարս համբուրելու]], մի խոսքով չարաճճություններ [անելով], ծիծաղել և զվարճանալ և մանավանդ այսօր, այս անգամ որ, մոնթաթող էր:

Գիշերը ծովի պես սև լցվել էր, կանգնել Բագրանի հովիտում. լուսին չկար, բայց վճիտ երկինքը լիքն էր անթիվ վառվռուն աստղերով:

Երբ Ուստան նայեց երկնքին — ուրախությամբ գոչեց:

— Հայ ա՛յ, երկնքումն էլ տոն է, ճրագալույց է, ճրագալույց, կանթեղները ամենքը վառ — ես ձեր ստեղծին մեռնեմ, նորից քիչ է...

Օդը ջերմ էր ու հեչտալի, ամեն տան առաջ լույս կար, կյանք ու շարժում, խոսք ու ծիծաղ, [երգ ու պար] հազար տեղից լսվում էր սրինգի, փողի, [գուռնայի ձայները] երգ ու պարի ձայներ. տեղ-տեղ խարույկներ կային, որի չուրջը [հսկա] կլոր պար էին [բռնած] դառնում:

---

[1] Ալ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. «*Մի քիչ ընթրեցին*»:

— Մի՞տդ է էն տարին, էստեղ էր որ էն Հարսի [մաշիկը գողցար] դիմաց խնձորը խածելով ասիր՝ [ուտեմ քեզ] էսպես ուտեմ քեզ, Հարսն էլ՝ գրող, գրող կեր, ասավ գնաց:

— Երնեկ էն տարին,— ասաց Մարուքը:

— Կարելի է գալող տարի էս օրին էրնեկ տանք,— ասաց Ուստան բազմախորհուրդ շեշտով ու թախծոտ ձայնով, միտքն ընկավ գնալը, ապա ժողովեց իրեն[1]:— Անցած օրվան օր չի հասնի ու մեր քեֆին էլ քեֆ չի հասնի, ելնենք էս դիով, պար կա էնտեղ:

Երեք ընկերներով [անցան] մոտեցան մի պարող խմբի. երիտասարդ տղա և աղջիկ երգում էին ու թռչում իրար ձեռք բռնած:

Շողեր պառկեր երես բաց
Հոպ, հոպ, հոպ լա դմբա հոպ,
Ի՛նչ լավն է, ինչ լավ է, հոպ, հոպ:

Հարուքը մի հարսի ցույց տալով ասաց ընկերներին.

— Տեսեք ի՛նչ Հնդստանու ապրանք է, ամեն բանը տեղն է, ամեն կողմն էլ անուշ է, էդ հարսին հոպ, հոպ, հոպ ինչ լավ կընեն, ինչ լավ կընեն.

Ինչ լավն է, ինչ լավն է,
Հո՛պ, հո՛պ, հոպ լա դմբա...

— Պահ հո, հաստատ որ,— ծոծրակին ամուր զարկելով հաստատեց Մարուքը,— մենք հո կնիկ չենք պահել. մենք մեր քեռոնց սև էշն ենք պահել: [էրնեկ]

---

[1] Ձախ լուսանցքում. «Ուստան մի անգամ հիշեց իր Հայաստան գնալը, տխրություն եկավ վրան, բայց ժողվեց իրեն, և կատակեց կամ ... մի բան»:

Ուստան աչքերը լարեց.

— Հա, է՞դ — Սոնայիս քով՝ [փթած] ասորու պատկեր, մի բան էլ պակաս:

Ընկերները չհակառակեցին, Հարությը ձայնեց.

— Էն կնկան նայեք, [կնմանի] նմանի Վանա տառեխի, չոր-չորուք, [կրծկալը տախտակի պես կրծքին] հագուստը մեռելի պատանք:

— Էդ պատին էդ ծեփն էլ հերիք է...

— Տո, տո նայեք,— ասին իրարու մի հանգով,— Անթառամն էլ է էնտեղ, պարի մեջ նստած, դրուստ որ, էսօր մոնթաթող է... ինչ լավ է մնացել՝ ջահել կանաչ հարս:

— Էս աչխարքում, ես գիտեմ,— ավելացրեց Մարուքը,— մեկ բոզը չի պառավի, մեկ էլ տնփեսու վիզը չի բարակի...

Ծիծաղում են՝ հա, հա, հա:

— Էս կնիկը, տղերք ջան,— ասաց Հարությը,— քթոցի էն հացից է, որ 5000 մարդ է կերել ու կշտացել, էլի մնացել է, ասես, իսկի բերան չի դիպել վրան, Ուստա, աչխարքի քավոր, էդ հացից դու էլ կերար, գիտցածովս:

— Սատանի սաղմոս, հոգուդ մեղք մի արա, զուր մի զրե ու մրե, ես խածած խնճոր ուտող չեմ:

— Լավ, ինձ քարափից մի քցիր. ասենք օրթե խելք չունեմ, հո քթի ծակ ունեմ, հոտ կառնեմ, Ավճոնց Մաքթաղին էլ սուտ է:

— Սուտ, սուտ, ծուխից կորանք, խորովածը չկերանք...

— Վայ ամոթ տղամարդկուբյանդ...[1]

— Երթանք ուրիչ տեղ, համն ելավ էստեղ,— ասաց Մարուքը, և առաջ ընկավ:

---

[1] Ա. Ինճիկյանը բաց է թողել «Էս աչխարքում. ես գիտեմ ... ամոթ տղամարդկուբյանդ...» հատվածը:

Այդ միջոցին մի [Հարս] կին էր վազում դեպի պարը, հանկարծ կնոջ բարակ շալի ծոփը անցնելուս կառչեց Հարուքթի դռոփի արծաթե կեռից. կինը քաշեց չատ կարմրած, Հարուքը ոչ մի չարժում չարավ՝ արձակելուն օգնելուն:

Ուստան միջամտեց և արձակեց, Հարսը դնալուս Հարուքը [բռնեց] մեղմակի բռնեց նրա [փեշից] արմունկից:

— Տո՛, անսպեռ, խեղճը քիչ մնաց ամոթու մեռներ, թևն ինչի՞ բռնեցիր:

— Քեզ ինչ, ինչո՞ւ մեջ մտար, մատաղն իր ոտքով էր եկել... էդքան էլ իրավունք չունինք, դրա [մարդը] տերը ինձնից լա՞վ է, օրթե դումար ինքը կուտե, ես հո՞տ էլ չառնեի...

— Էրթանք, խաղք կանես մեզ, խաղք...

Գնում էին երեք հոգով, անցան մի փողոցով, ուր ուխտավորների մի խումբ Հարքաձ թափվել էին գետին, մեկը դլուխը դրել մյուսի փորին ու քնել, մյուսը դեռ քթի տակ մռմռում էր, մի անկյունում երկու գինով իրար Համքուրում ու լաց էին լինում, մի ուրիշ տեղ մեկը մյուսին քաշում էր՝ չես իմանում ինչ նպատակի համար, մյուսը համառում էր՝ բոլորովին անգիտակից:

Անցան. մի տեղ մատաղի փոքրիկ խարույկի առաջ նստել էին մի քանի ծեր մարդ ու պառավներ, ծխում էին ու քթախոտ էին իրար հրավիրում, և մերթ մատաղի կաթսան խառնում: Անցնելուս նրանց ականջին դիպան խոսքի կտորներ... «Աստված մարդու տանելու չափ ցավ չտա, մարդ ամեն դարդ կտանի, սար ու քարից ամուր է... Բան չեմ խնդրե Աստծուց երեք օրվա ալուլ-բալուլ մահ...»[1]:

---

[1] Ալ լուսանցքում.

«Հարուքը մի հարսի հետևից ասաց.
Աղջի հերիքնազ, պաչեմ, տաքնաս:
Հարսը հետ նայեց —
Հարուքը — Անունի տեր էր, անունիդ մեռնեմ»:

Ուստան ասավ.

— Երթանք, էստեղից մեռելի հոտ կուգա...

Եվ վազեցին դեպի մի խարույկ, որ բոցին էր տալիս, տեսան մի մեծ խումբ կիներ իրար գլուխ կծիկ եղած, խոսում են, աղմկում են, յուրաքանչյուրը խոսում է առանց մյուսի պատասխանն առնելու:

— Այ քեզ չհուդի ժամ,— ասաց Ուստան,— էստեղ պատի տակ նստած մտոց լինենք, տեսնենք ինչ կծլվլան...

Եվ սավերի մեջ լուռ նստեցին՝ ականջները սրած:

— Մարդու մազ ու մորուքը ճերմակ էր, բերած տղեն հրեղեն:

— Ջասավ իրեն գեղից թե պագած է, ասավ քաղաքից, որ կեսը տարած է...

— Հարուստի կնկա փեչն երկեն է, ինչ անե, կպարտկվի տակը...

— Ես էդ ծամ կտրածին լավ գիտեմ, կուտե, կուբանա:

— Օրնի սել է դառել.— մարդ որ ամոթ չունենա, թադավորի պես կապրի:

— (Մինչի Շուշան զարդարվի, ժամը կարճակվի): Նազերը չի քաշվի. վրան օձ քցես, տեղից չի ժաժա: Բախտ ունի, չաքարը չան բերանն է ընկել, հողը մեր գլխին: Մարդ առանք, դարդ առանք, գիտեինք թե մեջը լոխում հալվա կայ. վարդը էշին, փուշը ոսկի փեսին...

— Էդ հարսի լեզուն ինչ երկեն է, տնկոզ էլ հարս է,— ասաց Ուստան:

— Թող անծեղը լինի, բլբուլի պես կխոսա, թող չհոգնի, վառված հարս է: Ինչ անուշ կխոսա՝ հիցի վիցի, վիցի, ճիթի վիթի վիթի. ուտեմ քեզ, չաքար-հարսիկ,— և ավելի բարձր ձայնով, տնազելով ասաց,— վարդը էսին, փուսը ոսկի փեսին...

Կանայք բոլորը դարձան դեպի ձայնը եկող կողմը և լռեցին:

— Վայ կրակ չուտես, Հարութ,— ասաց Ուստան,— փախնեք, փախնեք,— և կռացած փախան, սուզվեցին մթի մեջ[1]:

Անցան մի փողոցով, ուր մի խումբ [սեղան դրած] ցվիքի տակ՝ [քեֆ էին անում] սեղան են նստած, մի աշուղ սազի վրա երգում էր, մեկը նկատեց Ուստային ու ձայն տվեց.

— Ուստա Կարո, [աչքի բարով եկար էդ դուս] հոգուդ մեռնիմ, սիրտդ վկայեց, որ էստեղ եմ, համեցեք, ընկերովդ,— և վազեց դեպի Ուստան:

— Մարդալ չան, դու էստե՞ղ ես, չէի իմացել, անուշ էրնք, մենք պիտի էրթանք:

— Համեցեք, համեցեք,— ձայն տվին սեղանակիցները,— [կնպդիչները] ժամ շատ կա, էլի կերթաք, մերն էլ սեղան է:

Գնացին, բարև տվին և նստան, իսկույն նրանց դինի տվին՝ մեծ-մեծ դավաթներով, և խորոված գառի միս:

— Ծանոթ եղնք, մեր Ուստա Կարոն է: [ամենքին ձեզ պատմել էի] ես Ուստայի խոսքն արել էի:

— Գիտենք, լսել ենք, հիմի էլ ճանաչ եղանք, չա՛տ ուրախ ենք...

Քեֆ անողները կաղզվանցի էին, իսկ Ուստային հրավիրողը՝ խաս գյուղացի:

Աշուղը հյուրերի [համար] պատվին շարժեց լարերը, բորբոքեց և ինքն էլ բորբոքված երգեց.

Հինդ հարյուր տարվան մի քուն քնեցանք,
Ասված ու եղբայր իսպառ մոռացանք.
Օրինակ առնենք բուլղարաց ազգեն,
Այսպես կազատվենք չար թուրքաց ձեռքեն:

---

[1] Ա. Ինճիկյանը բաց է թողել «նվ վազեցին դեպի մի խարույկ ... *փախան, սուզվեցին մթի մեջ»* հատվածը:

Բոլորը, կարծես, մի խոսք արած, գոչեցին.

— Ուղիղ է, ուղիղ է, վայ չհասկցողին, վայ քնածին:

Ուստան էլ ոգևորված, հանեց 2 արծաթ դրամ տվեց աշուղին, և ասաց.

— Էլ քնած հայ չկա, զարթնել ենք ու մեր եղբայրներին էլ չենք մոռանա:

Բոլորը հավանություն տվին Ուստային, իսկ Հարությը թեև ականջը սեղանին կպած էր, բայց աչքի ծայրով դիտում էր մի քաղաքացի կնոջ, որը զարդարուն ու հպարտ նստած էր մի քիչ հեռու:

Երբ Ուստան ընկերներով չնորհակալ եղած հեռացավ, Հարությն ասաց.

— Տո, զարթած Ուստա, տեսա՞ր էն Թիֆլիսի հարսը, օրթե վախնամ նրա մասին քնած էիր, ու Աստված ու եղբայրդ մոռցած,— ասաց Հարությը, ձայնի մեջ հեգնանք դնելով:

Ուստան զգաց, թե Հարությը հեգնում է իրեն, և չկարողանալով պատշաճ հատուցում տալու ասաց.

— Տո, ձենդ կտրի. Տիկոռի կալերից դուրս դու ի՞նչ աշխարհ գիտես, Թիֆլի՛ս, դու որտեղ էիր, որ ես տարին հարյուր անգամ Թիֆլիս ելնում էի ու իջնում, Թիֆլիսի հարսը էդպես կլինի:

— Թիֆլի՞սը,— հա, եղել ես, գիտեմ, Սամսուն էլ եղե՞լ ես:

— Ճամբուս վրա էր:

— Հաբա՞շ:

— [Միտքս չէ, կարելի է եղել եմ] Ճամբուս վրա չէր,— չոր պատասխանեց Ուստան:

— Օրթե մեկէլ կերթաս, ճամբուդ վրա բեր, անպատճառ, լավ հարսներ կան էնտեղ...

Մարուքը գլխի ընկավ, որ իրար հետ ներհակ են խոսում, կարող է կռիվ ծագել, Հարությի վրա պրծավ, բերանը բռնեց և հրամայական ասաց.

– [Ձննդ կարե] Մեծ բրդուճ կեր, մեծ խոսք մի՛ խոսիր, կխեղդեմ, դիտե՞ս:

– Թո՛ղ խոսի,– ասաց Ուստան [նրա քնույթին է] վեհանձնաբար,– իրեն ջաղացի չախչախն է, աղունը պրծել է, պիտի կլափի տա...[1]

Հարուքը, որ հաճախ վիրավորում էր Ուստային, և վայրկյան չանցած՝ զղջում էր ու գառ դարձած՝ ընկնում Ուստայի գիրկը, Մարուքին մի կողմ հրեց և փաթաթվեց Կարոյի վզովը...

– Ուստա ջան, աչքիս նայե. օրթե լավ կլներ, ճանճ [էղնեի] դառնայի, էն Թիֆլիսու էն հարսի ծծի ծերը կծեի...

– Տո, խելառ, խելառ, կապելու խելառ, ճանճին էլ ես նախանձում: [Ելեք երթանք, երթանք տուն, առավոտ վաղ]

– Էդ հարսի համար ինչ ասես կդառնամ:

– Լավ, լավ, [դարձեք] էրթանք տուն, էրթանք քնենք:

Ուրիշ փողոցներով դառնում էին դեպի տուն, ճանապարհը կարճելու համար երբեմն անցնելով կտուրների վրայից, [ամենուրեք, ամեն տուն ու դուռ լիքն էր ուխտավորներով] գյուղը կամաց-կամաց լռում էր, ճրագները նոսրանում, [Հարուքը նայում էր աջ ու ձախ] ուխտավորները հետզհետե քուն էին մտնում:

[– Վա՛յ, մեկ տեղ ծով է, մյուս տեղ սով է, կնիկ, կնիկ]

Մարուքը մենակ էր եկել, ընտանիքը չէր բերել, այնպես որ միացավ ընկերներին, միասին գնացին Հարուքի

---

[1] *Աչ լուսանցքում. «Մոռացա գրել, որ ծիծաղում են, հրհռում են, իրար բոթում, կանանց վրա են ձգում իրար... Շատ սառն է անցնում, խնթություն չկա»:*

իջևանած տունը, և Հարութի մոր օրհնությունները առնելով իրար կողքի պառկեցին քնելու:

Ուստան մի պահ մտածում էր վաղվա անելիքների մասին – վաղն է [բուն ուխտի օրը] մեծ օրը – կիրակին, գլուխ կորցնելու օր է, հնար գտնեինք Սոնային տեսնեինք [Սոնային]... և այս մտքերի մեջ կորսվեց:

Առավոտ [նախաճաշին] Զավուշն եկավ նրանց մոտ, և հայտնեց թե պ. Կայծակը, զինվորներ X.X. հետ և Թաթոս վարժապետը և Ռես Հոսեն արդեն եկել են, և գնացին մատուռը: Ուստան չտապեցրեց ընկերներին, որ չուտ ելնեն, երթան, գոնե մատուռից իջնելիս դիմավորեն պ. Կայծակին, որովհետև անհարմար կլինի նրան միայն ճաշին հանդիպել[1]:

Կիրակի [վաղ առավոտվա] օրը Բագրանի ուխտավորների թիվը գրեթե կրկնապատկվել էր. մերձակա գյուղերը սովորաբար լույս կիրակիի գիշերն են գալիս: Գյուղական նեղ փողոցները, գոհհները ասեղ ձգելու տեղ չկար, աղբյուրների գլուխը, լայն տեղերում, հրապարակներում շեղջերով դիզված էին մրգեր՝ խաղող, նուռ, խնձոր, տանձ, և ուրիշ բարիքներ, [աղմուկ-աղաղակից] վաճառողների ու գնորդների, երեխաների, ձիերի, էշերի աղմուկ-աղաղակից իրար լսել անկարելի էր, տեղ-տեղ ծոր էր տալիս զուռնան այգիների խորքից:

---

[1] *Ալ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. «Ուղարկեցին զուռնու հետից. փողերով քնֆ, ուրախություն, երգ, կեսգիշերը շատ անց էր, քնեցին – մի էջ, ոչ ավելի»:*

Անցան չորսով մի հրապարակով, ուր երկու երիտասարդ ըմբիշներ [մրցում էին] իրար հանդես էին կոչում հոխորտալից խոսքերով, մեկն ասում էր.

— Ես սարդարապատցի Արսենն եմ, երևանցի հայ ու թուրք կոխ պրծող անունս որ կլսեն՝ ուռու պես կդողան:

— Դու քոնը գիտես,— ասում էր մյուսը,— իմ մեջքս դեռ գետին չի առել:

[Ուստան ուշադիր չէր, իսկ] Հարությը քթի տակ մի բան մրմնջաց, իսկ Ուստան չտապում էր վայրկյան առաջ պ. Կայծակին տեսնելու և չթողեց, որ ընկերները հետևեին կոխորդների արդյունքին: Երբ զառիվայրով մի քիչ բարձրացան, մի մարդ մոտեցավ Հարությին և հարցրեց.

— Աղբեր, դու ճալա գեղի Պողոսենց Ալեքը չե՞ս:

— Օրթն Ալեքն ըլնեմ, ի՞նչ պիտի անես:

— Խոսք ունեմ ասելու...

— Չէ՛, աղբեր,— մեջ մտավ Մարությը,— սխալ դուռ ես զարկում, ինչպե՞ս Հարությը Ալեքին կրնա նման ըլնել:

— Ներող եղեք, Ալեքի դրուքն ուներ,— պատասխանեց անծանոթը և գնաց:

— Տո՛, Հարութ, ասել է դու [էլ ես] մարդու նման ես եղել, ես չգիտեի,— խնդալով ասաց Ուստան:

[Հարությը ձայն չհանեց, և ծուխ [խնդրեց Ուս-<տայից>] ուզեց Ուստայից ու նստավ մի քարի վրա և ուշադիր աչքերը պտըտցրեց ներքև խռնվող ժողովրդի վրա, որ գունատ ալիքներով ծփում էին:

— Ես չեմ դա Կայծակի քովը, թող ինքը գա քովս,— ասաց ծուխը բերանից հանելով,— Մարուք, դու էլ մի երթա:

Մարուքը նայեց Ուստայի վրա, ուզելով նրա հայացքը կարդալ, Ուստան ասաց. «Լավ, դուք մնացեք, ես Ջավուշի հետ կերթամ»:

Նրանք գնացին, Հարութը լուռ ծխում էր, անընդհատ նայելով ժողովրդին, որ տոնական հագուստներով, զվարթ սրտով ուրախանում էին ամեն ցավ ու չար մոռացած:

– Ի՞նչ ես մտքում, Հարութ ջան,– ասաց Մարուքը:

– Էն բանն եմ մտքում, օրթե մի քանի տարի հետո, էս ամենքն էլ, մեծ ու պստիկ, մեկ դռնով դուրս են գալու էս աշխարքից, կսկիծ է, կսկիծ, Մարուք ջան...

– Էդ ինչ մտքելու բան է որ, դրանց թոռները կուգան, բան չի պակսի:

– Թոռներն էլ պիտի երթան, թոռների թոռներն էլ:

– Էհ, ինչ անենք, հաշվով է տված:

– Մենք էլ ենք էդ հաշվի մեջը, հավիտյան,– ասաց Հարութը:

– Դրա վրա խելք չեմ փթեցնե, դու էն տես, որ մեկ տեղ ծով է, մեկ տեղ սով:]

Հարութը, որպես թե Ուստային չէր լսում, կանգնած տեղը երկու ձեռքը իրար զարկելով ասաց.

– Պահ օհ, կնիկ, կնիկ, ինչքան կնիկ կա, վեր, վար, տեսեք, քառասուն դի, մեկ տեղ ծով է, մեկել տեղ սով է... [Էնքան]

– Էդպես է, աշխարհ էշով լիքն է, մենք ոտքով ման կուգանք,– ասաց Մարուքը:

Ուստան քահ-քահ ծիծաղեց Մարուքի խոսքի վրա:

– Օրթե բախտ չունեմ, որ մեկն էլ գար գիրկս ընկներ:

– Օրթե բախտ ունենայիր,– ծաղրով ասաց Ուստան,– օրթե վրադ հերթով, տանձի պես բերանդ ընկներ, [ոտներն էլ վերև] <տանձի> պոչի պես ոտներն էլ վերև:

– Թող ոտներն էլ բերանս ընկնեին, ես մաշիկներով կուլ կուտայի:

– Ես առանց կպչելու,– վրա բերեց Մարուքը:

— Կնիկը հավկիթ չէ, որ կպչես,— ասաց Կարոն,— դրախտի խնճոր է, Ադամն էլ կպեչով կերավ...

— Կարո, 40 բայ-թիվով վրադ ժրժրեմ, մեկ այբի կտոր դուրս չի գա, դու դրոց բաներից ի՛նչ ես խոսում, չգիտես, օրթե դրախտի մեջ Եվան կպչած էր պտտում, օրթե ի՛նչ լավ կլինի հիմի էլ հարսները դրախտի հագուստով ման դային, էնպես պիտի իմանայի, թե աչքերս դրախտի մեջ են...

— Էս սիրուն հարսները տեսնելով, իմ աչքերս հիմի էլ դրախտի մեջ են:

— Հերիք խոսեք, երթանք,— ասաց Ուստան[1]*:*

Հարութը մի ծուխ ուղեց Զավուշից, և անխոս նստավ մի քարի վրա, և ուշադիր աչքերը պտտցրեց ներքև խունվող ժողովրդի վրա, որ դունագեղ ալիքով ծփում էր:

— Ել երթանք,— կրկնեց Ուստան:

— Ես չեմ գա Կայծակի քովը [թող ինքը գա քովս],— ասաց ծուխը բերնից հանելով,— Մարուք, դու էլ մի երթա՛, կայծակ է, կզարկե:

Մարուքը նայեց Ուստայի վրա, ուզենալով նրա հայացքը կարդալ: Ուստան խոժոռեց աչքերը, և Զավուշի հետ գնացին:

— Ես էդ Կայծակին չեմ սիրում,— ասաց Հարութը:

— Սուրբ գործի մարդ է, Հարութ:

— Ես էդ սուրբ գործն էլ չեմ սիրում, ուրիշ բան խոսի:

Եվ լուռ ծխելով, հայացքը հառել էր ժողովրդի վրա, որ առնական հագուստով, զվարթ սրտով ուրախանում էր ամեն ցավ ու չար մոռացած: [Հարութի տրամադրությունը առհասարակ վայրկյան-վայրկյան փոխվում

---

[1] Ա. Ինճիկյանը բաց է թողել «*Օրթե բախտ չունեմ, որ մեկն էլ գար ... Հերիք խոսեք, երթանք,— ասաց Ուստան*» հատվածը:

էր, փոփոխական էր, մերթ ուրախ, մերթ տխուր] Հարութը հեգնող, տխուր տեսք ուներ [նրա դեմքը], նրա տրամադրությունը առհասարակ [մշտապես] միշտ հեղհեղուկ վիճակի մեջ էր, մերթ ուրախ, [ու ավելի հաճախ տխուր մանկան] մանկան պես, և հաճախ [տխուր] թախծողի:

[— Էդ ինչ ես մտքում, Հարութ,— ասաց Մարուքը,— էդ ինչ ես տակնուվրա եղել:]

— Էլ ի՞նչ տակնուվրա եղար, Հարութ:

— [Հեչ] Ոչի՛նչ, Մարուք ջան:

— Չէ, ի՞նչ ես մտքում:

— Էն բանն եմ մտքում, օրթե մի քանի տարի [հետո] անց, էս ամենքն էլ մեծ ու պստիկ մեկ դռնով դուրս են գալու էս աշխարքից, կսկիծ է, Մարուք ջան, կսկիծ:

— Էդ ի՞նչ մտքելու բան է, դրանց թոռները կուգան, տեղ կբռնեն:

— Թոռներն էլ պիտի երթան, թոռների թոռներն էլ: [չոր ծիծաղով, խնդալով ասաց]

— [Էհ] Մեզ ի՞նչ, հաչվով է տված:

— Մենք էլ էդ հաչվի մեջն ենք, [ամենքի պես] տուննդ չքանդվի,— [ավելի տխրությամբ ասաց] չոր ծիծաղով ասաց Հարութը:

Մարուքի վրա ազդեցին նրա [տրամադրությունը] խոսքերը մի վայրկյան. ապա, [գրպանից հանեց օղիի շիշը և] ասաց.

— Ես էդ բանի վրա խելք չեմ փթեցնե, ել երթանք [գեղը մի քիչ] Գևոյի խանութը, մի-երկու արաղ խմենք, մինչև Ուստան գա, Գևոյի դռնով պիտի անցնեն:

Եվ գնացին Գևոյի խանութը, մի պահ հետո Ուստան անցավ Զավուշի հետ, Մարուքը [վազեց նրանց հետևից և ներս] ձայնեց նրանց, իսկ Ուստան ուզեց, որ նրանք

գան. երբ միացան նրան, ասաց, թե կայծակը հիմա գնաց վարդապետի մոտ, ճաշին լինելու է մեր [քեֆին] սեղանին, հիմի երթանք [մեր խումբը, գուռնան գտնենք և] լարախաղացին նայենք, Բասենցի[1] նշանավոր լարախաղաց է, նոր մուրազ առած, ողջ ժողովուրդը հոն է ժողոված:

Գետի[2] ափին, ընդարձակ դալար կալի մեջ չինված էր լարախաղը, անհամար ժողովուրդ չորս կողմը նստած, կանգնած մտիկ էր տալիս խաղին:

Մացակը վաղուց տեղ էր դրավել լարախաղին շատ մոտիկ, աչքառու մի տեղ (տաշտի վրա [մի քիչ] սառը ուտելիք էր դրել և գինի ու արաղ): Ուստային նկատեց և [ձեռքով] կանչեց: Ուստան ընկերներով անցնելիս ժողովրդի միջից, որ հարգանքով բացում էին, նկատեց իր սանամայրերին, որոնց աչքը իրենց խորթացած քավորի վրա էր: Ուստան թեթև բարև տվավ և անցավ, սանամայրերը [նշանով] նշան արին՝ Ջավուշին կանչեցին իրենց մոտ, Ջավուշը գնաց նրանց մոտ: Ուստան աչքերով թափառում էր ահագին բազմության վրա, Թորոսենց ընտանիքն էր որոնում, որ Օսկանի ընտանիքի հետ միասին պիտի լիներին, վերջապես գտավ և [չտեսնել կեղծեց] միամտեց, իրենց տեղը նրանցից մոտիկ էր: Նստեցին, Ուստան լուրջ կերպարանք առավ, հանեց [ծխատուփը] պատրաստի ծուխը և ընկերներին հրամցնելով, ծխում էր և դիտում խաղին:

Լարախաղացը երիտասարդ տղա էր, նիհար, ճկուն, [կարմիր չապիկ ուներ հագին] ոսկեթել գդակ, [կիպ] ազդրներին կիպ կպած վարտիկ, սպիտակ գուլպայով,

---

[1] Ա.Ինճիկյանը կարդացել է՝ *Բասինայի:*

[2] Ինքնագրում՝ *գյուղի:* Ուղղել ենք ըստ բովանդակության:

կարմիր չապիկ ուներ հագին՝ կուրծքը [խաչ-կապ լեզուն] զարդարուն համայիլներով, որ խաչ-կապ ձգած էր երկու ուսերից: Կանգնել էր ճոպանի վրա՝ ձեռքին երկար ձողը, և ցնցում էր ողջ իրանը՝ համայիլները ծփում էին կրծքի վրա: Դավուլ-զուռնան որոտում էր[1] և չափ էր տալիս նրա բազմաձև խաղին: Նրա ներքև գետնի վրա առակ-պառակն էր, ծաղրածուն, մի այծամարդ, հին, պատառոտուն [կարկտ...] հագուստներով, դեմքի վրա կաշյա շինած դիմակ ուներ, աչքերի և բերանի տեղը բաց, թաղիքից շինված եղջյուրներ ուներ, որոնց ծայրից [բոժոժներ] զանգակներ կային կախած, մորուքը այծի մազից էր, վարտիկը այծի փոստից էր, մազերից բոժոժներ կախած և առհասարակ հագուստի ամեն քուրջից բոժոժներ կախած: Ահագին սապատ ուներ մեջք ու կրծքի վրա, [միայն] գոտկի մեջ փայտե դաշույն և ատրճանակ: Կրծքի քուրջերի[2] մեջ դատարկ թանաքաման ուներ, գրչի փոխարեն մի բարակ ճիպոտ, ձեռքին՝ փայտե նիզակ:

Ինչ որ լարախաղը ճոպանի վրա էր անում, նա էլ գետնի վրա, նրա տնազ էր անում, [երեսը] հակառակ ուղղությամբ, երեսը նույն երեսին:

Ժողովուրդը լարված դիտում էր մի դժվարին խաղի, լարախաղացը՝ գլխի վրա մի մատուցարան էր դրել, վրան լեցուն բաժակներով գինի և գինու շիշ, ոտների վրա երկու-երկու դաշույն էր կապել, և այդպես պարում էր ճոպանի վրա ու ոստումներ գործում, առակ-պառակը իբրև թե զարմացած դիտում էր և հաճախ հիացումից գլխիվայր կանգնում էր և անիվի պես գլորվում...

---

[1] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *երգում էր:*

[2] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *քարգյահի:*

Երբ խաղն հաջող անցավ, [որոտաց] դղրդաց դավուլ-զուռնան, և անվերջ ծափերը, ու զանազան տեղերից փող էին նետում պարանի տակ՝ կարպետի վրա, իբրև վարձ լարախաղին, իսկ ծաղրածուն, երբ նկատում էր մի աչքի ընկնող հանդիսատեսի, վազում էր նրա մոտ և [դրամ] շաքաշ ուզում:

Երբ տեսավ Ուստա Կարոյին, գլուխ-կոնծի տալով, վա-ղեց դեպի նա [բղավելով] և Ուստան մի րուբլի շաքաշ տվեց:

— Շաքաշ մեկ մանեթ: Ուստա Կարապետ[1], աչխարհա-չեն մեծաց վարպետը չեն մնա, չեն մնա,— և դրիչը թրջեց լեզվով, թաթախեց թանաքամանի մեջ և հաստ թղթի վրա դրեց. «Մեկ մանեթ Ուստա Կարապետից[2]»:

Խաղի ընդմիջումին առակ-պատակը սկսեց իր կատակ-ները: Վերև ձայնեց լարախաղացին՝

Է՛յ, Մչու սուլթան, Սուրբ Կարապետ.
Էյ, փայհլևան ախթեր,
Ասա՝ չվան, չվան:

Լարախաղացը ասաց.— չվան, չվան:

Պատասխան —

Հա՛յ, Նախճվան, Նախճվան,
Հացը չա՛տ կուշտ կերան,
Ջուր չկա, կճվճվան...

---

[1] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *Կարո:*

[2] Ա.Ինճիկյանը կարդացել է՝ *Կարոյից:*

Դառն ակնարկ էր Նախճվանա վրա, որ աղբյուր չունեն, ժողովուրդը ուրախ խնդաց, նախճվանցիները կարմրեցին:

Նորից ձայն տվեց – Ասա – գերան, գերան:

Պատասխան – Գերան, գերան:

Պատասխան –

Է՛յ Բագարան, Բագարան,
Ծում են բռնել տարի բոլոր,
Մատաղ ուտեն ու [լիանան] գիրանան,
Էրնեկ էսօր, էրնեկ էսօր...

Ժողովուրդը ծափ տվեց ու ծիծաղեց, բագրանցիները [նեղացան] վիրավորվեցին, չփոթ ընկավ, բայց ծաղրածուն [գոչեց] արագ գոչեց [որ ուշադրություն] և բոլորը լռեցին:

– Ասա՝ Սպնի, Սպնի:

Ասավ –

Պատասխան –

Այ Ծպնի, Ծպնի
Իշու քացին ձեզի դիպնի,
Ձեր չարմաղ Հարսների սիրուն
Սուրբը ձեզի տա թողություն...

Նորից ծափ-ծիծաղ, որ խեղդվեց դավուլ-զուռնայի մեջ. լարախաղացը «Յա սուրբ Կարապետ, յա Մշու Սուլթան» ասելով, սկսեց նորից իր խաղը, մեկը մյուսից զարմանալի ու ճարպիկ, վտանգավոր և հաջող:

Ուստան ընկերներով խմում էին ու դիտում, ծափ տալիս ու «ապրես, ապրես» բղավում, շաբաշը անպակաս տեղալով:

[Հարուքը Ուստայի կողք] Ուստան աչքը չէր հեռացնում Սոնայի կողմից, մի պահ նրանց հայացքները իրար դիպան[1], իրար աչքերի մեջ իրար հանդիպան, Ուստան, բեխերը ոլորեց, լցրեց լիքը բաժակը, և Մարուքին ու Հարուքին, որ իր աջ ու ձախ կողմն էին նստած՝ ասաց.

— Հենց որ Սոնային[2] տեսնում եմ, մեջս էնքան զորք է լցվում, որ ուզում եմ աշխարհը հունցեմ խմորի պես, առաջս սար ու ձոր դուրան է դառնում, հենց իմանաս ուզում եմ էս ճոպան-խաղացողի պես սարից սար լոկ տամ:

Մարուքը աչքերը զարմացած բացեց, իսկ Հարուքը քմծիծաղ տալով ասաց.

— Սոնայի վրա լոկ տուր, սար ու ձոր քամուն թող, օրթե դու քամի չես:

Ուստի համար նոր չէր Հարուքի [լեզուն] ոճը. ուշք չդարձրեց ու հանելով ժամացույցը մտածում էր, թե երբ պիտի կայծակի հետ [սեղան] ունենալիք՝ [ճաշկեր...] կերուխումը վերջանա, որ սկսեն Օսկանի մոտ հրավերը, ուր նորահարսին պարի պիտի հանեն, և այդ իրարանցումի մեջ հաջողի Լորիկի միջոցով՝ Սոնայի հետ տեսակցելը: [Այդ միջոցին] Ջավուշը [եկել էր] եկավ և բազմիմաստ հայացքով նայեց Ուստային, սա հասկացավ, որ Ջավուշը բան ունի ասելու:

— Տղերք ջան,— դիմեց Մարուք-Հարուքին,— ներող եղեք, ես Ջավուշին էլ նայեմ, բան ունեմ խոսելիք,— և ուզեց ելնել, փեշից բռնեցին՝ թե մենք կելնենք, թող Ջավուշը գա: Նրանք իրենց տեղը տվին Ջավուշին, իրենք նստեցին նրա տեղը, և երկուսով դիտում էին կանանց ու գովում ոմանց, ոմանց ծաղրում:

---

[1] Ա. Ինճիկյանը կարդացել է՝ *միացան:*

[2] Ինքնագրում՝ *Սանամին:*

Ջավուշը Կարոյի ականջին փսփսալով ասաց թե, սանամերները չատ նեղացած են ու խռով Ուստայից, ասում են, որ Ուստան հիմի իսկի իրեն նման չէ, ու իրեն հարցրին թե, որն է Քիրսվա էն հարսը, որ մեր քավորին խելքից հանել է, ինքն էլ ցույց տվեց, սանամերները տեսան ասին... իսկի սիրուն չէ, լսել ենք որ մազ-կտրուկ մեկն է, բնկալ տաքցնող չէ, գլխակեր է...

Ուստան ծիծղուն աչքերով ասաց.

– Ջավուշ ջան, կատվի դունչը մսին չհասավ, ասավ, պաս է, նախանձ են խոսում, կնիկները սիրուն կնկա թշնամի են, կնիկը՝ իր աչքը կույր տեսնել կուզե, ուրիշին սիրուն տեսնել չի ուզե: Սանամերներս կամ թե աշխարքի բոլոր կնիկները աչքիս փթած կեմ են, դու բան ունես, ասա... Ուստա Կարոն թռա՜վ, թը՜ռ, սանամերներս...

Ուստան բավ համարեց և առաջարկեց ընկերներին, որ [մի քիչ պտտելով] վեր կենան և մի քիչ զբոսնելով երթան ճաշկերույթին, ժամանակը հասել է: Երբ հեռացան խաղի տեղից, [Հարուքն ասաց, էն հարսը նրանց...] մտան գյուղը, ուխտավորների ուրախությունները՝ գինարբուքը, լրման մեջ էր, հարբած խմբերը զուռնայով թափառում էին. [և ամեն բերան մյուսից... կոկորդով մեկ... քաղա... կարսեցի մի խումբ տղերք երգում էին] տեսան մի մարդ մեն-մենակ [հազիվ է ոտքի կանգնում] պատեպատ զարկվելով, [երգում է խռրած] խզված ձայնով երգում է միևնույն բառերը անընդհատ և պարում է.

Սելին կասեն արաբա,
Սարոյի կնիկը խարաբա,
Ճոպկե գոտի, ճլկե փափախ,
Սարո ջան, Սարո ջան:

Հարուքը մոտեցավ, ուզում էր նրա ձեռքից բռնել, պարել, Ուստան ցասկոտ քաշեց նրա օձիքից և առաջը ձգելով, տարավ:

Նույն երիցախնդրի դիմաց սեղան էր փռած, Մարուքն էր տնտեսը, այս անգամ ավելի օգնականներով: Արդեն ենթակոմիտեն այնտեղ էր, սպասում էր Հյուրերին[1]: Ուստան իր չորս ընկերներով եկավ, բարևեցին իրար: Ջավուշը միացավ Մարուքին՝ օգնելու համար. քիչ անց եկան պ. Կայծակը, Թաթոս վարժապետը, ենթակոմիտեի մի անդամ և մի երիտասարդ, Կայծակի ընկերը, նրանց հետևում էին երկու գինվոր, Ասլան Բալասին[2] և Հլդաթը, Ռես Հոսեն:

Ենթակոմիտեի ավագ անդամ՝ երեցփոխը X. ընդունեց բոլորին ու տեղավորեց, ինքը նստեց վերևը, աջ ու ձախ կողմը Կայծակի ու Կայծակի ընկերը, պ. Արամը, Կայծակի մոտ Թաթոս վարժապետը, Արամի մոտ Ուստան, Ուստայի մոտ՝ Հարուքը, և այսպես. գինվորները նույնպես:

Իրար հետևից բերում էին կերակուրները և դարսում Հյուրերի առաջ: Սեղանապետը բաժակները լցնել տվեց և հանդարտ ձայնով ասաց.

— Մեր պատվական պարոն Կայծակի և իրեն ընկեր պարոն,— կանգ առավ. Կայծակը ցած ձայնով թելադրեց՝ Արամ,— պարոն Արամի թանգագին կենացների համար: Աստված, Սուրբ Գևորգ ձեր նպատակներին հասցնե, որ մեր [նպատակն է] նպատակը ասել է:

Կենացի տերերը հարգանքով գլուխ տվին, բոլորը իրենց բաժակները զարկեցին նրանց բաժակներին:

---

[1] Ա. Ինճիկյանը լաց է թողել «*Արդեն ենթակոմիտեն այնտեղ էր, սպասում էր Հյուրերին*» նախադասությունը:

[2] Ա. Ինճիկյանը կարդացել է «*Ասլան Բալան*»:

Զուռնաչիները, զուռնաների տեղ փողերն էին փչում նվագում, իսկ դավուլչի Զուրաբը նվագին ներդաշնակ երգում էր:

Այս հարգելի խմբի շուրջը հեռվից հավաքվում էին հետաքրքիր ուխտավորներ, կամենալով տեսնել ու լսել նշանավոր մարդկանց քեֆն ու խոսքերը:

Պարոն Արամը ասաց.

— Ես առաջին անգամն եմ ոտք կոխում հայկական գավառները և իմ կյանքիս ամենաքաղցր օրերն են այս օրերը, որ անցկացնում եմ հեռվից սիրած ու կարոտացած հայ ժողովրդի մեջ՝ իր սրբազան հայրական հին հողերի վրա իսկ: Ես գիտեմ, որ այս նվիրական հողերի վրա դարերով վայրենի, բարբարոս մոնղոլի կարմիր սուվերն է ծածկել, և նրա սև ձեռքը ավերել է ինչ որ գեղեցիկ է եղել և հոգևկան, բայց տեսնում եմ, որ թյուրքի բերած տիղմի տակ անաղարտ է մնացել հայ հոգին, և հայկական հոգու կնիքը անջնջելի փորած է այս երկրի քարի ու ժայռի վրա: Եվ այդպես է, անշուշտ, Թուրքիայում, երեսը թուրքի տիղմը, ներքևը՝ աստառը — հայկական:

— Մենք եղել ենք թուրքից առաջ և [պիտի լինենք] նրանից հետո էլ պիտի լինենք, Հավիտյան,— նրա խոսքերը կրկնեց Թաթոս վարժապետը:

— Այո՛, հայ ժողովուրդը նորից ոտքի պիտի կանգնի, իր բոլոր վեհ հասակով, և պիտի քայլե դեպի լուսավոր ապագան, մի ոտքը հինի, ավանդականի վրա, մյուս ոտքը նորի, ժամանակի, որովհետև մի ազգ ուժեղ է, երբ կապում է իրար անցյալն ու ապագան: [Մենք] Ընկած տեղից մենք [պիտի կանգնենք, որովհետև] ոտի ենք կանգնում, որովհետև...

Ուստան չկարողացավ իրեն զսպել և արագ ավելացրեց.

– Ջուրը ընկնող կտրիճը, նորից կվազե ձին կհեծնե:

– Կեցցե Ուստա Կարոն,– ձայնեց պ. Կայծակը,– Ուստա, ձեր կենացը,– և բաժակը զարկեց Ուստայի բաժակին...

– Այո, որովհետև մենք իղեալ ունենք՝ նոր կյանքի, մարդկության, քաղաքակրթության, և դիտենք զոհվել այդ վեհ իղեալի համար, և քանի մի ազգի իղեալները չեն ջախջախված, նրա մեծ երազները, նա անմահ է, բռնությունն անզոր է...

Եվ լուռ, կայծակը գլխի նշանով հավանություն տվեց:

Ջուրաբը երգեց.

Կանչն կուռնկ, կանչե, [աշխարհին] քանի գարուն է,
[Հայերիս սիրտը դունդ-դունդ արուն է...]
Աշխարհին արև է, մեր օրը սև է,
Հայերիս սիրտը դունդ-դունդ արուն է...

Սեղանապետը բաժակները նորից լցնել տվեց:

– Էս թասը Ս. Ծրագրի հաղթության համար[1]: Մաղթենք, կռնակ տանք, որ հաջողություն ունենա, մեր ազգը ազատե անօրենի չար գերությունից. քանի անօրենը կա մեր գլխին նստած, մենք օր ու արև չունենք, մեր ունեցածն էլ մերը չէ – տեր Աստված, դու դատ արա, արդար կշռե, թե մերն է՝ մեզ տուր, թե նրանցն է՝ նրանց տուր:

Թաթոս վարժապետը նորից ընդհատեց.

– Աստված ինչու ես մեջ մտցնում. մեր հողի իրավունքը մերն է, ու մեր իրավունքից ձեռք քաշող չենք, թուրքը ավազակ է, զորով եկել տիրել է, դատս ո՞րն է:

---

[1] Ա. Ինճիկյանը բաց է թողել «*Էս թասը Ս. Ծրագրի հաղթության համար*» նախադասությունը:

— Ճշմարիտ է, մեր լուսահոգի պապերի ասածի պես՝ սարեցին եկել է տնեցուն դուրս է արել, տեր է դառել մեր տանը, մենք էլ հիմի դուրս պիտի անենք. հապա ինչի համար է ազգ ու կուսակցությունը[1]:

Զինվորները իրենց նստած տեղերից գոչեցին.

— Կեցցե ծակ երկաթը, ով սուրբ կոչ Քրիստոս, ով սուրբ խունկ վառող...

[Կայծակը ուղղվեց, զինվորները լռեցին:]

Զուրաբը երգեց.

Ով որ քաջ է, ի՛նչ կսպասե,
Արդեն ժամանակ է, թող գա,
Մահ-պատերազմի օրհաս է,
Արդեն ժամանակ է, թող գա:

Կայծակը ձեռքով արավ, բոլորը լռեցին:

— Սիրելի հայրենակիցներ, դուք սխալ եք հասկանում դրության ոգին, նա ուզում է Հայաստան ազատել բռնակալ օսմանյան լուծից, թուրք կամ քուրդ ժողովուրդներին չի մտածում երբեք վռնդել դուրս, նրանք իրավունք ունեն մնալ մեր հայրենիքում, ինչպես մենք ուրիշ ազգերի հայրենիքում, բայց երկիրը մեր հոգով պիտի ապրի, մեր շնչով շնչե — իսկ եթե չեն ուզում մեզ հետ մնալ, կարող են երթալ իրենց պետությունների մեջ. մենք աշխատող ժողովուրդների բարեկամ ենք, և մեր դրոշակի վրա գրված է եղբայրություն, ընկերություն... խմենք դրության կենացը:

Բոլորը խմեցին հարգանքով:

Ռեսը խոսք խնդրեց:

---

[1] Այջ լուսանցքում առանց տեղը նշելու. «Հարուրը կամացուկ, բա էն էլ չես իմանում, Ուստա, որ հետո տերը ուժով [զորով] կըլնի. Ուստան ոչինչ չպատասխանեց»:

— Պարոն Կայծակը գիտնակ, ուսումով [քաջ մ...] կարիճ է. մենք էլ աշխարհի հետ ընկել-ելել ենք, աշխարհի լեզուն կհասկնանք. իմ խելքով, թրքի-քրդի հետ կարելի չէ եղբայրություն անել. նրանք նենդ են, կեղծավոր, ստախոս, չար, ոխակալ: Էդ մի կողմից. մյուս կողմանե էլ նրանք ավերող են, ինչ որ մենք կշինենք, նրանք կքանդեն, այլազգը կովը կմորթե, կուտե, կաթը չի կթե ուտե:

Կայծակը այդ միջոցին ծոցից տետրը հանեց, իր մշտական սովորության համաձայն և գրում էր:

Ռեսը չարունակեց:

— Մենք ծառ կտնկենք, այլազգը կուգա գարնանը, չվաքին կպառկի, թուփին ու տերևը ձիուն կկերցնե, պտղի [ժամանակ] ատեն պտուղը կուտե, ճմեռը ծառը կկտրե, կվառե. մինչև երբ, մենք տնկենք, նա վառե, մինչի երբ ջուջան ածե, կուկուն տանե...

— Բայց կփոխվեն, սիրելի Ռես,— ասաց Կածակը, գրելը ընդհատելով,— հինները կմեռնեն, նորերը կգան, կլուսավորվեն...

— Այլազգի հին ու նոր չկա, ամոթ է ասել. մեկ աթար են՝ կես արած՝ կես չոր, կես թաց. չեն փոխվի, կաթնամատը գերեզմանի մեջ կելնի ու օձն իր խորխը կփոխե, բնութքը չի փոխե: Ես կասեմ, որ չխաբվիք այլազգեն:

Սեղանապետը վեճին վերջ տալու համար մի երգ պատվիրեց:

Նվագից հետո տիրացու Դավիթը [Թաոն] բաժակն առավ ձեռքը.

— Մի կենաց էլ իմ կողմանից: Խմենք մեր օրհնված Հայրենիքի <անընթ.> համար, «թեև ածու փոքր, բայց հիւսիսականաց վհհադոյն». ասի, որ մեր երկիրը օրհնված է. օրհնված է, քանի որ Աստված Եդեմի դրախտը մեր հողերի մեջ դրեց, Ադամը օրհնեց մեր հողն ու ջուրը, Արարատ-

Մասիսի վրա իջավ աշխարհաջինջ ջրհեղեղը, Նոյ նահապետը դլուխը դրեց Արարատյան դաշտի վրա քնեց, այնտեղ այգի տնկեց, և դինի չինեց, կերակուրը Կողբա աղից առավ, ու ջուրը Արաքսից խմեց, Աստվածորդին միածին իջավ մեր հողի վրա, Լուսավորիչը այնտեղ դրեց մեր սուրբ եկեղեցու հիմքը, և իրեն անմահ կաթեղը վառեց Արագածի գլխին, որ լուսավորև մեր հուսահատ սրտերը. օրհնված է մեր երկիրը, և միշտ օրհնված էլ պիտի մնա[1]:

— Կեցցե՛ս, տիրացու ջան,— ասաց սեղանապետը,— զուր չէ քո ուսումը, քանի դովեն քեզ քիչ է:

Բոլորը խմեցին բաժակը, Ռեսը քթի տակին մրմնջաց. «Աստված օրհնել է, այլազգը պղծել»:

— Վնաս չունի, Ռես ջան,— ձգած ձայնով նրան պատասխանեց Կարոն,— երբ հայի հողն ազատենք, մեր տերտերներին կասենք օրհնյալ ջրով սրբեն պղծությունը...

Նրա խոսքի վրա ամենքը ծիծաղեցին, մինչդեռ պ. Արամը չրթունքները կրծում էր և գունատվել էր. [պարզ երևում էր, որ հուզվել էր արդյոք] միտքը գործում էր, և հանկարծ ծնկի եկավ, մի-երկու անգամ հազաց և խոսքերը [կրակի կայծերի պես հոսեցին նրա չրթունքներից սրտից] հոսեցին բերանից[2]:

Երբ վերջացան ճառերը, խումբը գոչում էին անվերջ կեցցեն պարոն Կայծակը և պարոն Արամը, շուրջը հա-

---

1 Ա.. Ինճիկյանը բաց է թողել «*Թաթոս վարժապետը նորից ընդհատեց... և միշտ օրհնված էլ կմնա*» հատվածը:

2 Ա.. Ինճիկյանը բաց է թողել «*այլազգը պղծել ... հոսեցին բերանից*» հատվածը:
Աչ լուսանցքում. «*Արամի և Կայծակի ճառերը: (Ճառ պետք չէ, սկզբում, կասվի՝ Անահիտ, Արամազդ, բագիններ...) Իրար ասելով. ի՜նչ շնորհքով, ազնիվ տղերք են, պարծանք են ազգին, պարծանք, լեզու չէ, կրակ է, կրա՜կ է...*»

վաքված ուխտավորներն էլ արձագանք տվին: Դավուլը զուռնաների հետ ականջ խլացնելու չափ դղրդում էր, օդը լցվել էր որոտով, հեռավոր և մոտիկ դավուլ-զուռնաների ձայները մարել-խեղդվել էին[1] *Զուրաբի դավուլ-զուռնայի մեջ:*

Երբ պարոն Կայծակը Արամի և ենթակոմիտեի հետ, բոլորը և [Ռեսո էլ] հետները պիտի հեռանային, զուռնան դադարեց, և փողն սկսեց տխրաձայն երգել:

Մնաք բարով, անգին սեր իմ,*
Ես գնում եմ մեռնելու,
Քաջ ընկերներով միասին
Ազգիս համար զոհվելու...

Գերեզմանիս քարի վրա
Արցունք թափե, իմ մայրիկ,
Թափե արցունք, ցանե ծաղիկ
Երիտասարդ իմ քույրիկ:

Արամն ու Կայծակը նվեր տալով նվագողներին, մնաս բարև ասացին մնացածներին և գնացին:

Փողերը չարունակում էին նվագել, իսկ մնացածները, Ուստա Կարոն, Ջավուշը, Մացակը, Գոգորը, այնպես հուզված էին ու ոգևորված, որ նվագողների հետ անվերջ կրկնում էին այս հանկերգը.

Ես մեռնել կուզեմ,
Ես կռվել կուզեմ[2]:

---

[1] Ինքնագրում՝ *են*:

[2] Ա. Ինճիկյանը բաց է թողել «*Երբ պարոն Կայծակը Արամի ... Ես կռվել կուզեմ*» հատվածը:

Իսկ Հարուքը լուռ, անմասն նրանց զգացմունքներին, ծաղրը չրթունքին, ծխում էր՝ մերթ ընկերներին նայելով, մերթ հանդիպակաց ժայռերին...

[— Բա, ինչ տղերք են]

Մանավանդ Ուստան այնպես էր զգացված՝ թե ճառերից, թե նաև սրտի մեջ վառված Սոնայի սիրուց և Հայաստան գնալու վճռից, որ այլևս տիրել չէր կարող ոչ իր լեզվին, ոչ իր կամքին. լցված աչքերը սրբեց, և համբուրելով, սրտին սեղմելով ընկերներին, գրպանից մի բուռը մանր դրամներ չաղ տալով զուռնաչիներին, [փափախը] բռունցքը մի քանի անգամ զարկեց գետնին, ատամները կրճտացրեց, ինչ որ կար սրտի մեջ լեզվի ծայրից թափեց դուրս...

— Ջան, ջան, Հայաստան ջան, քո հողիդ մեռնեմ, քո ջրիդ, քո ժայռերիդ, քո կռվիդ. երթանք, էս սալած ճամբեքով երթանք, հին թագավորների, հայոց քաջ զորքի ճամբեքով երթանք, [էս փառքի ճամբաներով] թռնենք Հայաստան, քաջ ընկերներով միասին. մեկ աչքիդ առջևը բերեք, հայոց հողի վրա, մեր արնախում թշնամին հազարներ կանգնած է, խոտի լաստի պես պիտի փրթենք նրանց, իրենց հոր վրա, հազարներով, հազարներով, ձիերը կրակ տալով պիտի երթանք Սուլթանի վրա, իրեն պիղծ արունի մեջ խեղդենք, էն սև արունը մեր ոտների տակ ծով դառնա... Դուք չեք գա, ես մենակ կերթամ:

Հարուքը մտքում ասաց.— Մի էշ եղիր, չերթաս, ամուր եղիր, սակայն ոչ ոք չլսեց նրան, բոլորն էլ տարված էին Ուստայի հետ:

— Մենակ կերթամ, թե որ զարկվեմ ազգիս համար, պարտք եմ դնում վրաններդ, որ չմոռանաք ձեր ընկերին, բերեք մարմինս, թաղեք, սալած ճամբեքի վրա՝ էս փառքի

ճամբեքի, դևրևմանիս դրեք՝ որ Ուսուա Կարոն ի սեր ազդի նահատակվեցավ, որ անցնող-դարձողները, քարվանները կարդան, Հանեն դվխարկները, օղորմիս տան ինձ ու երիտասարդները օրինակ առնեն, երթան իմ ճամբով, սուրբ նպատակին:

Ընկերները հուզված ձայնեցին.

— Ուսուա ջան, մենք էլ կուգանք հետդ, մենք էլ ազդի սեր ունենք, քեզ մենակ չենք թողնի, Ուսուա ջան:

Եվ Ուսուային համբուրելով փայփայեցին, և կենացը խմեցին, իսկ Հարուքը լուրջ ձայնով ասաց.

— Հիմի բոլորդ գնացիք կռիվ, ձեր առաջ հիմի արնի ծով է, սար ու քար՝ թուր ու հրացան,— ասպա ձայնի մեջ կսկծանք դնելով դարձավ Ուսուային,— ինչքան եփվեցար, եփվեցար, նորից հում մնացիր:

[— Ինչ նորից դիվոտար, նորից ամեն լավ բանի հակառակ բերան ես բանում, նորից սատանի ձին նստար, ամեն սուրբ դործի ներհակ [ես դն...] կերթաս,— Ուսուան էր ասողը հանդիմանական չնչով:]

— Քո պարոն կայծակն էլ, մյուս կայծակն էլ, դուն էլ, դուք ամենքդ էլ քարվան քշողներ եք, ես ի՞նչ եմ որ,— խեղճ ձայնով ասաց Հարուքը:

Ուսուան ճանաչում էր Հարուքի հոդին, զգաց թե ի՞նչ է ուզում ասել՝ իրեն՝ Ուսուային սիրելուցն է, որ այսպիսի պատն լեզու է բաննցնում, չի ուզում, որ Ուսուան կռիվ երթա, և դառն վեճին վերջ տալու համար ասաց.

— Ղուրանին լսողը պիտի թուրքանա. քեզպեսներին լսեմ, պիտի թքեմ թե մորս կաթի վրա, թե ազդիս վրա:

Հարուքը անմիջապես վրա բերեց.

— Ինչի վրա ուզում ես թքե, արաղիս վրա չթքես,— և ձեռքը մեկնեց արաղի չչին, չհասավ, Մացակի մոտն էր, բաժակը երկարեց՝ խնդրելով.

— Մացակ ջան, լի՛ց, լի՛ց:

Մացակը լցրեց, Հարուքը մի թափով բաժակը կորզեց բերանի վրա, և նկատեց [որ բաժակի տակ բավական] որ շուռ տված բաժակի տակը բավական փոս կա, ինչպես ուենենում են օղիի բաժակները:

— Տո՛, էս ինչ սուտ, խաբեբա [բաժակ է, կեսը տակին է, կեսը վրան] աչխարհ է, չա՛ւ էստեղ էլ լից, չատ...

Բոլորը ծիծաղեցին Հարուքի այս մանկական վարմունքի վրա, Մացակը խնդալով լցրեց մյուսի մեջ...[1]

Կարոն հաչտ ու մեղմ ձայնով ասաց.

— Ելե՛ք, ելե՛ք երթանք Օսկանի մոտը, հարսը պարը պիտի քաչեմ, չէ որ քավորի պարտքն է:

Ընկերները պատճառաբանեցին, թե իրենց համար անհարմար է ներկա լինելը, ընտանեկան բան է այդ, իրենք հեռվից կդիտեն, Ուստան համաձայնեց, և Զավուշի հետ զուռնաչիներին ուղարկեց Օսկանի մոտ, իսկ ինքը՝ Ախուրյանի ջրով մի լավ թրջելով գլուխն ու տաքացած երեսը, թարմացավ, և ծուխի գլանակը բերանը դնելով, Ռեսի հետ, կամաց-կամաց գնաց դեպի Օսկանի հրավերքին:

[Օսկանի] Տունը չհասած, պատահեց սանամեր Լորիկին, որին տեսել էր երեկ, և Սոնայի հետ տեսակցություն սարքելու խոստումն առել էր, հիմա ուզեցավ ավելի ապահովել, որովհետև մնացել էր միայն այս պարի առիթը:

---

[1] Ա. Ինճիկյանը լաց է թողել «*Մանավանդ Ուստան այնպես էր գգացված ... Մացակը խնդալով լցրեց մյուսի մեջ...*» հատվածը:

— Սանամեր չան, հոդիս ձեռքիդ է, դիտես, Թորոյին լավ կխմցնեմ, հավկուր կշինեմ, դու Սոնային գոմը տար, ես հոն կլինեմ, էս էլ իրան ... այնպես ժամանակ հասկացնեմ:

— Ուստա չան, խոսքս խոսք է, մենակ սատանոք է, որ չնկանք, մեզ մի՛ սպասե, Քիրս [կսարքեմ] կեփեմ դործը:

— Վա՛յ, սանամեր չան, չի լինի. էսօր էլ որ Սոնային չտեսնեմ, էլ ի՞նչ սրտով մարդու երես ելնեմ, ես երկու օր նրա չուքով եմ քեֆ արել, ես կսպասեմ, մինչի դաք, դիշերն էլ հոն կմնամ, մեկէլ օրն էլ, մինչի վերջին օրս էլ...

Լորիկը [երդվեց] երդումով խոստացավ:

Ուստան ուրախ-զվարթ գնաց տուն: Տան առջև, բաց տեղում, սեղան էր դրած՝ արաղ-դինիով և աղանդերներով. հարս-աղջիկ, երիտասարդներ, ընտանիքներ, հանդիսատեսներ լցվել էին դուռն ու երթիկ: Օսկանը սեղանի գլուխը նստել, սպասում էր խնամիներին, արդեն նրա կինն ու եղբոր կինը գնացել էին հարսի և խնամոց ետևը:

— Ուստա չան,— ասավ Օսկանը,— լավ չլինի դավուլ-զուռնան առնենք՝ երթանք ետևները:

Ուստայի [սրտիցն էր այս խոսքը] սրտից չուր խմեց Օսկանը. իսկույն ճանապարհ ընկան. Թորոյի իջևանի մոտ հնչեց դավուլ-զուռնան հրավերի մի եղանակ. արդեն պատրաստ էին Թորոյենք. իսկույն դուրս թռան և նվագի ուղեկցությամբ հանդիսավոր քայլում էին դեպի պարտունը:

Օսկանի կինը բռնել էր հարսի թևից, մյուս թևից էլ՝ Սոնան. Թորոյի հետ էր իր հյուրը՝ հարուստ կողբեցին: [Ուստան աչքով աչք չուներ նրան տեսնելու, բայց քաղաքավարությունից համբերում էր:] Հարսին տարան ներս հյուրասիրելու համար. Արտաշը ընդառաջ եկավ և Թորոյի և Թորոյի կնկա ձեռքերը համբուրեց, նրանք էլ նրա երեսը: Նստեցին սեղանի, ուր կային և Օսկանի անե-

բանք, Ռես Հոսեն, Զավուշը և ուրիշ պատվավոր բազ-բանցիները: Հաստափոր Թորոն ծանր ու մեծ նստեց, մեկ ոտքը ձեռքով բռնեց դրեց մյուսի վրա, կողքեցուն աջ կողքին տեղ տալով:

Օսկանը բաժակները լցրեց, խմեց Թորոյի և նրա ընտանիքի կենացը. Թորոն կենացները դարձրեց:

Զուռնան պարի եղանակ էր նվագում, [մանր աղջիկները] հասած ու մանր տղա-աղջիկները կլոր պար էին բռնել, դեռ պարը պաշտոնապես չէր բացվել: Ուստան անընդհատ օղի էր լցնում Թորոյի բաժակը:

— Խմե՛, խնամի Թորո, մեռնել կա, էսօրվա օրը որ չխմենք, բա ե՞րբ խմենք. էս օրը քեզ համար, մեզ համար էլ ազիզ օր է:

— Աստված բոլորիդ էլ բարի տա, Աստված լուսավորե ձեր անցավորաց հոգին. Մինա-աղա կենացդ, թո՛ղ ըլնի ամենքիդ կենացը,— ասում էր Թորոն և խմում:

— Պարոն Մինա, անուշ արեք,— խնդրում էր Օսկանը:

Հարսը դուրս բերին. զուռնան պատշաճ եղանակը նվագեց: Օսկանը մոտեցավ, պաչեց հարսի ճակատից և ոսկի մանյակը ձգեց վիզը, հարսը խոնարհ պաչեց կեսրայրի ձեռքը: Ամենից առաջ նորահարսը պիտի պարեր, նվագում էին [«Ուզուն-դարա»] «Մանուշակի», Ուստա Կարոն, իբրև քավոր, ձեռքերը վերցրեց և սկսեց մի վայրկյան պարել, ապա հարսի ձեռքից բռնեց, և թողեց մենակ. հարսը սկզբում վախվխելով, ապա սիրտ առնելով, [շատ] նազելի [էր] ձևերով պարեց. ամենքը ոգևորված ձայներ էին արձակում:

Օսկանը [ելավ] շաքաշ տվեց [2] 1 մանեթ, որ դավուլչին բարձրաձայն հայտարարեց:

— Էդպես, խնամի Թորո,— ձայնեց Ուստան,— վարդդ քաղեցինք, փուշը կրակին տվինք. ա՛ռ խմե, սիրտդ հովնա:

– Արժեցող տեղ տվինք, [մենք ենք ձեզ խաբել] չենք խաբվել,– ասաց Թորոն բաժակը [վեր առնելով] դարտակելով:

– Արտաշիս պարի հանել հարսի հետ, Արտաշիս,– գոչեց Օսկանը, և Ուստան իսկույն Արտաշին քաշեց բերեց հարսի առջևը. նորափեսան պարելով դառնում էր իր հարսի շուրջը:

Թորոն խռպոտ, բարձր ձայնով ասաց.

– Արտաշ ջան, շատ ապրիս, քաղցր պառավիս ձագուկիս հետ. ծլեք, ծաղկեք, ճուղքեր տաք,– և ջսակը հանելով, դաղտնի բացեց քսակի բերանը ու հանեց [2] 1 րուբլի շաբաշ, որ նուլնպես բարձրաձայն հայտարարեցին. ապա շաբաշի հերթը եկավ քավորին, որ հանեց [3] 2 րուբլի, դավուլչին ավելի բարձր ձայնով հայտարարեց շաբաշը. շաբաշ տվեց և կողբեցին [3] 2 րուբլի:

Պարի եղանակը վոխեցին մի պարզ [եղանակի] տեսակի, և հերթով, [ծիծաղում էին] պլուի հանեին Թորոյին, որ մի պահ օրորվեց, գլորվեց և հևալով եկավ, նստավ իր տեղը՝ ընդհանուրի զվարթ ծափերի տակ. հետո Օսկանը պարեց, հետո Թորոյի և Օսկանի կինները, որոնք իրենց աղջկությունը հիշելով՝ չանք էին անում [նվազ] կոտրտվել-ծեքծքվել, որ միայն անչար ծիծաղ էր գարթեցնում հյուրերի և դիտողների մեջ: Հարսին պար [Հարսը հոգնած, կարմրած] հանելը վերջացավ, սկսվեց ընդհանուր պարը. հարսը հոգնած, կարմրած գնաց ներս հանգստանալու:

Երիտասարդները պարում էին, իսկ սեղանի վրա կեռուխում կար:

– Քավոր Ուստա կարո,– ասաց Թորոն,– ես քեզ չա՛տ եմ սիրում, չնորհքով մարդ ես, ձեռքդ բարի լինի՝ պսակին հաստատ մնան. գլորվող քարը հիմքի քար չլինի. Տեր Աստված, վառքդ չա՛տ:

Ուստան հասկացավ, որ վերջին խոսքն իրեն է ուղղված, չուզեց հասկանալ, որ չվիրավորե Թորոյին, չթշնամացնե հետը. «Աղվես մարդ է, չորս աչք ունի, քնեցնել պետք է, վառեկը ձեռքից խլել»:

— Խնամի Թորո,— ասաց Ուստան,— խմենք էն մարդու կենացը, որ իր գլխի պատիվը կգիտենա. ինչ ես ասում էս խոսքիս:

— Ընդունակ է, ընդունակ, խմենք:

Ուստան աչքի ծայրով որոնում էր Սոնային, երբ լսեց Թորոյի ձայնը.

— Մինա աղա, չե՞ս ուզում մի պար գալ, ջահել, կտրիճ մարդ ես:

Մինա աղան համաձայնեց և կողբեցու մի եղանակ ածել տվավ և սկսեց պարել. բոլորը ծափ էին տալիս, Մինան աչքերը հարավ-հյուսիս ուղղած՝ պարում էր, աջ ձեռքը գլխի վրա բռնած, ուր շողում էին ոսկի մատանիները [գույնզգույն] կարմիր ու կանանչ քարերով. ձախ ձեռքը ոսկե գոտիկի վրա, ժամացույցի ոսկե շղթան ծփում էր ստլաս արխալուխի վրա...

Թորոն ոգևորված, հևալով, փնչալով ծափ էր տալիս ու «կեցցե՛ս, կեցցե՛ս» մրմռում:

Թորոն դարձավ ասաց Օսկանին ու Ուստային.

— Մինա աղան օճախի տղա է. ես վաղուց գիտեմ դրա բունքը. ինքն էլ կտրիճ մարդ է, ձեզնից լավ չլինի, անուշ մարդ է. տո՛, մի տեսեք ի՛նչ տնկոզ պար է խաղում:

Ուստայի սիրտը չկարողացավ տանել այս դովքը:

— Էդպես, խնամի Թորո, հարուստ կաղը լավ պար կխաղա:

— Տո, քավոր Ուստա, ես ինչ եմ ասում, դու ինչ ես ասում:

— Ես էլ էն եմ ասում, թե կույր հարուստի լույս աչքերը միշտ [գովական] կգովեն:

Օսկանը կամացուկ սեղանի տակից Կարոյի ոտքը սեղմեց, Ուստան ուշք չդարձրեց:

— Քավոր Ուստա, չլտակը կուզես, փողն է բանը, մարդու դինը էնքան է, ինչքան փող ունի, հասկացար. խելոք խոսքը քանի՞ դռռոշ արժե, դու ինձի մի կատր հաց տուր, ես էնպես խելոք բաներ ասեմ, որ եպիսկոպոս մարդն էլ պապանձի... լից խմենք, լից խմենք, տղա ես դեռ:

— Էյ Թորո ջան, խելոք ես խոսում, լից խմենք, իմաստուն խոսք է, ոսկին դիր իշու վրա, ամեն մարդ էլ դլուխ կուտա...

Օսկանը նորից սեղմեց, այս անգամ ավելի ամուր, Ուստան հասկացավ, զգաստացավ և արագ լցրեց Թորոյին, ասելով.

— Խնամի Թորո, դու իմ մեծ ախբերն ես, խոսք է՝ ասինք...

[Մինան եկավ] Օսկանը բռթեց Ուստայի կողքը, Ուստան նայեց պարին, ինչ տեսավ, աչքերին չհավատաց աչքերին, Մինա աղան Սոնային պարի է խնդրում: Ուստան նախանձի կրակ լցված աչքերով, անզուսպ նայեց Սոնային, Սոնան՝ Ուստային, Սոնայի սև աչքերի մեջ մի փայլուն ժպիտ խաղաց Ուստայի հանդեպ, իսկ նուրբ շրթների վրա մի քնքուշ ծաղր Մինա աղայի հանդեպ: [Ուստան իրեն չմատնելու][1] Ուստան հանդստացավ, և իրեն չմատնելու համար դարձավ Թորոյին: [որ մեծ ալեխառն մորուքը ափի մեջ առած՝ աչքերը ճակատի տակից՝ դիտում էր Ուստային կասկածանքով] Ուստան [գլուխը չկորցրեց] հանեց պատրաստի սիգարեթները, հրամցրեց Թորոյին, Օսկանին, վառեց նրանց հետ և իրենը, ծխում

---

[1] Ա.Ջ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. «*Սոնայի սիրտը իր դեմքի վրա*»:

էր և հանգիստ, անայլայլ դիտում: Սոնան նայեց սկեսրայրին, Թորոն գլխով համաձայնություն տվավ, և հարսը սկսեց համեստ, աչքերը գետնին հառած, պարել, կողբեցին նրան մի րուբլի չաբաշ տվեց և [ոգևորված] եռանդով պարում էր Սոնայի շուրջը:

Սոնան Ուստայի նվեր տված մանիշակագույն բաղդադին էր կապել գլխին, օձի պես գալար-գալար էր գալիս:

«Կողբեցին գիտե, թե իրեն համար է պարում, տո, իշոտ, դու ով ես որ (փորդ քամուն կուտամ, ում յարի դռանն ես ափ առել, գլխիդ հետ ես խաղում». խոսում էր Ուստան ինքն իրեն:

Պարը վերջացավ, Մինան եկավ սեղանին, Թորոն կանչեց հարսին իրեն մոտ, ճակատը պաչեց, հարսն էլ նրա ձեռքը, ապա Օսկանի. մոտեցավ Ուստայի ձեռքին, Ուստան չթողեց, որ ձեռքը համբուրե, կանգնեց մի պահ, Ուստան անլսելի «ա՛խով» ծուխը հանեց բերնից, իսկ Թորոն օրհնեց. «Ապրիս, հարս, դու իմ անգին [աղջիկ] զավակն ես, իմ սրտիս ցավը. ես քեզնից գանգատ չունիմ, բարի հիշատակ ես, Զինավոր սուրբ Գեորգը քեզ պահապան լինի, ես մեռնիմ, օճախս դու պիտի ծխացնես, զնգզնգան ժամերի բարեխոսությունն եմ խնդրել, ապրիս, գնա, աղջիկս...»:

Սկսվեց կլոր մեծ պարը, որ գրեթե բոլոր հյուրերին մեջն առավ: Ուստան, որ մշտական պարքաշն էր, պարի գլուխը, ելավ, փափախն ուղղեց, կարմիր մեծ թաշկինակն առավ աջ ձեռքը, [և պարի շղթան իր ետևից քաշեց, ձախ ձեռքը սկզբում բռնել էր սանամեր Լորիկը, պարի մեջ Ուստան թաշկինակը հանելով, երգում էր] ձախ ձեռքը բռնեց սանամեր Լորիկը և թաշկինակը ճոճելով քաշ տվեց իր ետևից պարի շղթան, ուր ծաղկավուն, երփներանգ զգեստներ հագած հարս-աղջիկ, եռուն կորիճ

տղերք, օղակ-օղակ, իրար ձեռք բռնած՝ մյուս ծայրը մի քանի քայլ հեռու հասնում էր Ուստա Կարոյին: Բանի դնաց պարն այնքան մեծցավ, որ տան առջևի ողջ բացատանը բռնեց. հնչում էր զուռնան ու դավուլը թնդում, և ծփծփալով պալարվում էր պարը:

Ուստան երգեց.

Դե՛հ, սիրուն կաքավ, բռնե, պարը բոլորի,
Մեր թշնամին, պարի ետքում մոլորի.
Լուսնյակը շող է քցել,
Իմ յարը քող է քցել.
Բարակ քամին գալիս է,
Ալ քողը դող է քցել:
Դե՛հ, սիրուն կաքավ, բռնե, պարը բոլորի,
Մեր թշնամին, պարի ետքում մոլորի:
Յար ջան, էդ ինչ համ ունես,

Ողջ խումբը կրկնեց հարս, տղա, աղջիկ, նույնը.

Աբրեշումե ծամ ունես,
Խունջիկ մունջիկ գալում ես,
Ինձ առնելու կամ ունես:

Խումբը տող-տող կրկնում էր Ուստայի երգածը[1]*:*

Զալարող հյուրերը, ծերերը, պառավները և հանդիսատեսները, կողմնակի չհրավիրված ուխտավորները «ապրի՛ք, ապրի՛ք» գոչելով ոգևորում էին պարը: [Ուստան ոգևորված] Սոնան [էլ պարի մեջն էր մի քանի] դեռ պա-

[1] Ձախ լուսանցքում՝ առանց տեղը նշելու. «Հարրբանը, խնկի-ծառը, վեր-վերին, Աչխենի պարը» չատ գվարթ անցան»:

րի մեջ չէր. Նա [կեսրարի մոտ կանգնած դիտում էր պարը, սպասում էր նրա հրամանքին] դիտմամբ նստել էր կեսուրի մոտ, լուռ դիտում էր, ցույց տալու համար, թե սիրտ չունի պարելու: Ուստան երբեմն-երբեմն նայում էր նրան, նրա աչքերից ուժ ու կրակ առած ավելի եռանդով ոտքը զարկում էր գետին, և սկսում էր մեկը մյուսից հետո նոր եղանակ: «Հաբրբանը» չատ զվարթ անցավ, խումբը ոգևորված գոչեց.

Կլոր պա՛ր, կլոր պա՛ր.
Ոստան գլխին ունի ծառ, ոսկի ծառ:

Կեսուրը հանկարծ դարձավ հարսին.

— Աղջի Սոնա, գնա դու էլ պարի մեջ մտիր, ի՞նչ ա-նենք, գիտեմ, մոռնալ չի լինի, աչխարքի կարգն էս է:

Սոնան չտապ քայլերով մոտեցավ և բռնեց Լորիկի ձեռքը, ամաչեց [բռնել] մտնել նրա և Ուստայի միջև. մի վառ ու վարար զգացումով լցվեց Ուստայի սիրտն ու արյունը և առաջվանից ավելի մեծ թափով ցնցեց իրեն, երկու ոտքը զարկեց գետին, թաչկինակը փաթաթեց թևին, ապա արձակեց ու գլխի վրա բարձր ծածանելով երգեց.

Ծառի վրա նուշ կըլնի,
Պաչ մի տաս, անուշ կըլնի,
Թե պիտի տաս, էսօր տուր,
Թե չէ էգուց ուշ կըլնի...

Խումբը խինդով ու ծիծաղով կրկնեց երգը...

Թորոն ալեխառն մեծ մորուքը ափի մեջ առած, աչքերը ճակտի տակից [հառել] չորսել էր Սոնային և մանավանդ Ուստա Կարոյի վրա, [թերևս գուցե] բնազդական / նախուստ / նախազգական կասկածանքով:

Պարը շարունակվում էր նոր-նոր ձևերով, ավելի գինովցած, ավելի ինքնամոռաց: Մեկ էլ Ուստան նկատեց, որ Թորոն մորուքն ափի մեջ առած, աչքերը խփած՝ նիրհում է, վայրկենի մեջ Լորիկին հասկացրեց, նա պարից ելավ դուրս, բռնեց ձեռքը, Սոնային առավ մեջ: Երբ Ուստան զգաց իր սիրածի պստիկ ձեռքը իր ափի մեջ, աշխարհ իրեն տվին, [կանդնեց, սրբեց] մո՛ռացավ ուր լինելը, ճակատը սրբեց, կանչեց դավուլչին, մի երեքնոց կսկցրեց նրա ճակատից և «Լաչիմ-նանա» պարերգը նվագել պատվիրեց, ասելով որ ինչքան հնճարք ու չնորհք ունեն, թափեն. [իրենց բոլոր վարպետությունը սպաս բերեն] դավուլչին «Ուստա Կարոն չեն մնա, երեք կանանչ մանեթ չաքաչ» դոռալով, իրենց բոլոր վարպետությունը սպաս դրին, զուռնաչիները աչքերը խուփ՝ ինքնամփոփ նվագում էին, և դավուլչին օրորվելով-չորորվելով Ուստայի [հետևից] առջևից, պարի միջով, հետևում էին պարքաչին[1]:

Ուստան փափախը շուռ տված ծոծրակի վրա, ձայնեց «Լաչիմ-նանա», որ խումբն իմանա՝ այս գվարթ պարը մի խմբերգ է, և այս անգամ ամբողջ խումբը միասին, միաբերան երգեցին.

Լաչիմ-նանա, լաչիմ-նանա,
Լաչիմ սարից գլդոլ-մլդոլ:

---

[1] Պարբևլության կոպքին, աջ լուսանցքում, առանց տեղը նշելու.

Հոպին, հոպին, հոպպա, հոպին,
Կողքսյու ճոռթած դապքին,
Ողորմի իշու պապին,
Թորոյի ակռի թափին:

Եվ Ուստան գլուխը մեկ դեպի աջ, մեկ դեպի Սոնայի ականջը [աննկատելի կռանալով] թեքվելով, նրան միայն լսելի՝ երգում էր, փոխելով պարի խոսքերը, պահելով եղանակը և հանկերգը – բարձր ձայնով իր կողմը: Դավուլ-զուռնայի և համերգի աղմուկի տակ չէր լսվում ու չէր նկատվում Ուստայի խորամանկ խաղը, որով Ուստան իր սրտի ուզածը հայտնում էր Սոնային:

Ուստան ծիծաղերես երգում էր ու թև առած թռչում, դոփում <էր> գետինը:

Լաչիմ նանա, լաչիմ նանա,
Լաչիմ նանա <անընթ.>
Սոնա, Սոնա, Սոնա ջան,
Թուշդ պաչեմ, մարդ չիմանա,
Լաչիմ նանա, լաչիմ նանա.
Գոմը կերթամ, դուն էլ արի.
Էնպես էրա, մարդ չտեսնի,
Լաչիմ նանա, մարդ չիմանա,
Լաչիմ նանա, լաչիմ նանա:
Կերել եմ ծոցիդ միջինը.
Էնպես ուտեմ, մարդ չիմանա,
Մարդ չտեսնի, լաչիմ նանա.
Լաչիմ նանա, լաչիմ նանա,
Լաչիմ նանա, գլդոլ, մլդոլ,
Լաչիմ նանա, լաչիմ նանա:
Հոպին, Հոպին, Հոպա, Հոպին,
Ոտքդ ամուր զարկե տափին,
Ծով ծամերու ծուփին մեռնեմ
Թշնամուդ աչքերը քոռնա,
Հոգիդ ուտեմ, Հոպին, Հոպին,
Լաչիմ, լաչիմ, լաչիմ նանա

Ձենը տակը, քարը վրեն,
Էնպես էնենք մարդ չիմանա,
Բան չտեսնի, բան չիմանա,
Լաչիմ նանա, նստի մնա,
Բամբասանքի բան չունենա,
Լաչիմ նանա, լաչիմ նանա:

Այս կատաղի, [երկարատև] թռիչքով և թափով պարից ողջ խումբը քրտնաթոր ու չնչասպառ՝ լուծվեց, օդակնեըով ցրիվ եկան և պարը դադարեց. հանգիստ առնելու համար այս իրարանցումից օգտվեց Լորիկը ու Սոնայի թևից բռնած անհայտացավ: Ուստան [նկատեց այդ] դաղտագողի աչքերը ձգեց Թորոյի վրա, Թորոն զարթնել էր և կողբեցիով էր ղբաղված, վայրկյանի մեջ ինքն էլ ծլկվեց հակառակ ուղղությամբ, մտքի մեջ ծիծաղելով. «Ծնր աղվես, աշխարքն էսպես կուտեն» և կամացուկ մտավ Օսկանի աներոջ դոմը: [Ողջ տունը պարի էր, պարի էին, դոմը դատարկ էր, մի երկու ձի կար կապած մեջը:] Լորիկը դոմի բակումն էր, նա հսկում էր, որ եթե ևկող այր մարդ լինի հետ ուղարկե՝ թե դոմում կին կա...

Լորիկը դլխով նշան արավ, Ուստան իսկույն մտավ դոմը, մի աղոտ լույս կար երթիկի պատուհանից ցաթած, աչք ածեց չորս կողմը — բան չտեսավ, նորից նայեց, Սոնան այուևի եռևը թաքչել էր, դլուխը երկարցրեց և սիրտզեղ ժպտաց — աղոտ դոմը լցվեց [մի ջահավառ] լույս պայծառությամբ, դարձավ Զինմաչինի թագավորի ոսկե պալատ.

— Սոնա ջան, ասա ջան, ջան,— քնքշորեն ասաց Ուստան՝ ձայնի մեջ իր ողջ սերը դնելով, վազելով դեպի Սոնան, ձեռքից բռնեց և նայեց երեսին, աչքերին, անհագ, անհագ.— Սոնա ջան, [ասել է էս] ուրեմը էս աշխարհումն

էլ մահից առաջ արքայութիւն կա — ես հիմի արքայութեան մեջ եմ, [թե] թո՛ղ հոգիս հիմի Աստված էստեղ առնի, Սոնա ջան, գիտե՞ս, ես քեզ ինչքան եմ սիրում, հաշիվ չկա, չափ չկա, լեզվով չեմ կրնա ասել:

Սոնան ժպտալով լսում էր, Ուստան գրկեց գորովով նրա մեջքից, ինքը նստեց քթոցի վրա, ուզեցավ նրան էլ նստեցնել ծնկների վրա, Սոնան դիմադրեց. Ուստայի ձեռքերը թուլացան. Ուստան թեև շատ անգամ երաշխիքներ էր ստացել Սոնայի փոխադարձ սիրո մասին, բայց և ամեն անգամ նրա կանացի [նազերի] խաղերի հանդեպ դողում էր, վախենալով դրախտի թռչունը ձեռքից թռցներ:

— Սոնա ջան, հոգիս, հերիք ինձ կրակես, ես քո դերիդ եմ, աչքիս արևը, սրտիս բլբուլը, հոգուս աստղն ու ծաղիկը, իմ վիզս քո առաջ մազից բարակ է, էդ անուշ ճկուլթովդ էլ կրնաս կտրե, դու ինչո՞ւ սերս չես հասկանում, անունիդ մեռնիմ, էդ անուշ անունդ որ ասում եմ, բերանս մեղրով լցվում է. ասա՛, դու սեր ունի՞ս խեղճ Կարոյի համար:

Ուստայի կրակոտ խոսքերը Սոնային ազդեցին, և մեղմ ձայնով հնչեց.

— Թե որ չսիրեի, էստեղ ի՞նչ գործ ունեի:

— Բլբուլ էր խոսողը, լեզուդ ուտեմ, ասա, խոսիր, Սոնա ջանս, ծովերի մարջանս:

— Կարո, ինչ որ սիրտս է ասում, լեզուս ինչպես կրնա ասել:

— Ջան, ջան, էյ ջան, դուն օր ու գիշեր սրտիս մեջն ես. պետք է որ ես էլ քո աղիզ սրտիդ մեջը ըլնեմ, Սոնա ջան, նստիր, ոտներիդ մեռնեմ, ինչի ես կանգնել:

Եվ նստեցրեց ծնկների վրա, Սոնան [չբողոքեց] չմերժեց: Երբ Ուստան [զգաց] վայելեց Սոնայի քաղցր մար-

մինը իր ծնկների վրա և [այն զգայութիւնն ունեցավ] մազերի ծայրերը դիպան երեսին, նրա անուշ չունչը թափանցեց [ողողեց Ուստայի ամբողջութիւնը] Ուստայի հոգուց ներս, մի անանուն երանութիւն ողողեց, լցրեց նրա ամբողջութիւնը և մի թափով հանկարծակի համբուրեց [նրա] Սոնայի աչքերը. Սոնան ձեռքով աչքերը ծածկեց, Ուստան համբուրեց շրթունքները. Սոնան այս անգամ [բերանը գոցեց] երկու ձեռքով դեմքը ծածկեց:

— Վայ Սոնա ջան, աչխարհ գլխիս մի մթնացրու, էդ լույս պատկերդ, որ տեսնում եմ, ամպ ըլնի թե գիշեր, սիրտս ու բոլորքս արևով լցվում է...

Այս խոսքի վրա Սոնան [բարձր] լիահնչուն ծիծաղեց, գոմի մեջ արձաթ[ե] զանգի մի քաղցրութիւն փռեց: Եվ բազուկը նետելով Ուստայի վզովը, կսկուծ համբուրեց նրա բերանը... ինչպես որ գինու գավը լցվում է կարմիր գինով ու պռունկներից թափվում, Ուստան ինքն իրենից ելավ, հորդեց...[1]

— Վայ, ես մեռա, մեկ էլ, մեկ էլ, մի հատ էլ,— և չսպասելով պատասխանի, ինքը համբուրեց ու համբուրեց, Սոնան ուղղակի բռնկվեց նրա համբույրներից, երեսն ու աչքերը բոցեր էին ցայտում:

— Ախ, էս ժամանակը չանցներ, կանգներ, մնար, հավիտյան ըլներ. հավիտյան մնայինք էստեղ, իրար հետ, իրար հետ, իրար գրկած, երես երեսի,— ասաց Ուստան խելակորույս:

Սոնան թե — Կարո, երթամ, ժամանակն է:

---

[1] Պարբերութեան կողքին, աջ լուսանցքում, առանց տեղը նշելու. «Գոմի իրերը ոսկի հագան. լույս ու բեհեզ, և անկյունում կապած ավանակը՝ [հրեղեն ձի] ծովերից ծնված ձի. մոռացավ ուր լինելը»:

— Չէ, չէ, Հոդիս, բան ունեմ քեզ ասելու,— զգաստացած [ուշքի եկած] ասաց Ուստան,— գիտես, ուխտից մի երկու շաբաթ հետո Արտաշի հարսանիքն է, հետո մերը, Հոդի ջան,— և զննիչ նայեց նրա աչքերի մեջ:

— Կարո, գիտես, կողբեցու չիլ աչքը վրաս է, կեսուրս ասավ, որ ինձ լավ պահեմ, հասկացա՞ր. թաղեմ կողբեցու գլուխը, ես չէի ուզում նրա խոսքի վրա պար գալ... կեսարս հրամայեց. ես էլ քո սիրու համար պարեցի, էնպես գիտեի, թե մենակ դու ես էնտեղ, քո առջևդ եմ պարում — Կարո, գույնդ ինչո՞ւ քցեցիր, վախնաս թե նրան առնեմ, ո՞վ է նրա աչքերին կարոտ, աչքի մեկը Սիս է, մեկը Մասիս, վրաս նայելուս չէի իմանում, թե ում է նայում:

Ուստան լսում էր ու քանի գնում եփում, իրան ուտում էր.

— Էդ կողբեցի՛ն, գնդակը նրա ճակատի մեջ կգամեմ, քանի գլուխ ունի իմ առջև ձի խաղցնելու, ինձ Կարո են ասում, խնդրեմ՝ ճանչնաս, ես մեղավոր չեմ, թե գլուխը թռնի:

Եվ մտքի մեջ շատ ցավեց, որ ատրճանակը տունն էր թողել, բայց մի կողմից էլ լավ էր, որ հետը չէր բերել. փորձանքի մեջ պիտի ընկներ, արյուն թափվեր, փախստական ընկներ, ամեն բան [ձեռքից] կորցներ...

— Աման, Կարո, ես վախենում եմ, ի՛նչ ես խոսում, ինչո՞ւ էդպես բաներ...

— Սիրտս ելած էր, ասի. բանը քեզնից է կախված. կողբեցին ո՞ւմ չունն է, Թորոն ի՛նչ իրավունք ունի քու վրադ, ես հո մեռած չե՞մ, ծով ըլնի առջևս կճեղքեմ, սար լինի՝ կծակեմ...

— Կարո, մի տակն ու վրա ըլնիր, ես ում որ ուզենամ, նրան կառնեմ, կեսրարս շատ բան կուզե. լսողն ո՞վ է. ես

կողքեցուն՝ ոսկու մեջ թաթախ լինճ, անունը բերանս չեմ առնի. 1000 թուման պարտքս ըլնի, մարդամիջի յարս ըլնի... Կարո, դու լինճ չես ճանաչում, թե աչխարհանցում ըլնի ու 1000 կտոր դառնամ, էլի ամեն կտորս քեզ համար պիտի բաժին հասցնեմ...

Ուստան լարված լսում էր, շրթնները դողում էին: Սոնան կամացուկ քաչեց նրա բեխից.

— Ես ասել եմ քեզ, էլի կասեմ, մեռնեմ՝[քուկդ]քոնն եմ, ապրեմ՝քոնն եմ, քոնն եմ, [7000] քառասուն կողքեցի քո մեկ մազիդ հետ չեմ փոխե, հասկացա՞ր,— և [համբուրեց] շրթները երկնցրեց՝ Ուստան համբուրեց, համբուրեց նրան:

— Կարո, ականջիդ մի բան ասեմ, ծածուկ պահես, քեզ էլ չասես.— և ականջից փսփսաց,— երբ որ դու կեսարիս քովը պապիրոս էիր ծխում, երեսս քո կողմը դարձրի՝ որ [ծուխդ] մուխդ դիպներ լինճ, կարոտս առնեի քեզնից...

Այս խոստովանանքի վրա, Ուստան բազմապատկվեց, հազարապատկվեց:

— Սոնա ջան, Սոնա, հազար անգամ քեզ մատաղ, երբ լմս ըլնիս, ասենք լմս ու լմս ես հիմի էլ, կուզեմ ասել, երբ սուրբ պսակով լմս ըլնիս, քեզ թագավորի կնկա պես պիտի պահեմ, շարան-շարմազ, վարդի ու բմբուլի մեջ, ձեռքդ տաքից պաղը չպիտի մտնի. կերածդ խորոված կաքավ պիտի ըլնի, խմածդ նռան գինի, հագածդ աղլաս ու զառ ոսկի, քո դործդ պիտի ըլնի գլխիս վրա արևի պես պտտես, թև ու թուր ըլնիս լինճ...

Սոնան խոսքը կտրեց ասելով.

— Կարո ջան, ասել է մի ամսից հետո ես քո...— և չկարողացավ ասել՝ թե կնիկ եմ լինելու, խորհրդավոր ծիծաղեց, ամաչեց ու գլուխը կախեց, ապա ավելացրեց.— գի-

տե՞ս, Կարո, ես վարդի պես եմ, թե որ սիրես, ծոցիդ մեջ կբացվիմ, թե որ չսիրես, թուփիս վրա կթառամեմ...— և նորից ականջից փսփսաց.— մի ամիս անց, ես քո Հորդ Հարսն եմ... Հասկցար, մեկ խոսք, մեկ Աստված:

— Սոնա ջան, Աստված վկա, թե որ ինձ հավկթի պես առնես, զարկես պատին, ցրիխ անես, նորից երջանիկ եմ, որ ձեռքիդ մահ առա:

Եվ Ուստան սրտապնդած ձեռքը մեկնեց նրա ատլաս կրծկալին. Սոնան չէր թողնում, քաշում էր նրա բեխերից, բայց անդիմադրելի էր Ուստայի փափագը, և կորցրել էր պաղարյունը — ճգնում էր քանդել կրծկալը, Սոնան պայքարում էր:

Ուստան հարբած ձայնով խնդրեց.

[— Թող տեսնեմ էդ ջուխտակ մարմար պալատներդ, հոգուս տուընը, թող մի հատ պաչեմ, հազար տարի ծարավ եմ, ծարավ եմ, վառվում եմ, մեռնում եմ, Սոնա ջան, մեռա, ես մեռա: Հոգիս առ, թող մի համտես անեմ:

Թուլացան Սոնայի կամքն ու ձեռքերը:

Ուստան արձակեց կրծկալի վերի կողմից, և իր բախտավոր աչքերի առջև չողաց, փայլեց, վառվեց, բուրեց ու լեզու առավ Սոնայի կուրծքը, ստինքները:]

— Թող տեսնեմ, Սոնա ջան, էդ ջուխտակ մարմար պալատներդ, հոգուս տուընը, թող մի հատ պաչեմ

— Ջէ, Կարո ջան, հետո, ամոթ է, հետո:

— Թող մի պստիկ համտես անեմ, թե չէ կխելոհիմ:

— Համտես, համտես, պուտուկը՝ կես:

— Կյանքս, լույս, մեղրի ծով է, չի պարպի, հոգիս առ, թող, թող, [1000] 40 տարի ծարավ եմ, ծարավ եմ, վառվում եմ, մեռնում եմ, մեռա ես...

— Քո սիրուդ համար,— ասաց Սոնան, և Թուլացան կամքն ու ձեռքերը:

Ուստան վերևի կողմից արձակեց կրծկալը և իր բախտավոր աչքերի առջև [չողաց] փայլեց, վառվեց, բուրեց ու լեզու առան Սոնայի ստինքները:

Կարոն [1000] 40 տարվա ծարավի պես հարձակվեց, համբուրում էր, համբուրում, և մրմնջում, ինչ լուսաթաթախ ծիծիկները՝ կաթնաղբյուր, լուսաղբյուր, մեղրահամ, և մատներով շոյում էր ստինքները, և հարբել էին ոչ միայն նրա շրթունքները, հոգին բովանդակ, այլ Սոնայի մարմինը, մանավանդ մատները, որ հարբել էին և դողդողում, սարսռում...[1]

Եվ ժամանակի բոլոր ձևերը կանգ առան նրա համար:

Լորիկը գոմի դուռը ծեծեց. նորից ծեծեց, և Սոնան ցնցվեց, և [շանթվեց] ամուր հրեց Ուստային, երազը ցնդվեց, Ուստան դարձավ իրականություն... Լորիկը գլուխը կոխեց ներս ասելով.

— Ինչ որ արիք, հերիք է, մնացածն էլ սուրբ պսակի դիշերը, սուրբ պսակի համար էլ բան թողեք:

Եվ նորից ծածկեց դուռը:

Սոնան ոտքի կանգնեց, կրծկալն ուղղեց, կլոր պստիկ հայելին հանեց գրպանից. խառնափնթոր էին մազերը, հագուստը ճմրթված:

— Վայ, հողը գլխիս, էս ի՛նչ հալի եմ...

— Թո՛ղ էս ըլնի միշտ մեր հալը,— ասաց Ուստան, և վերջին անգամ մնաս բարևի համար համբուրեց Սոնայի երեսը. և վրա-գլուխը չիտկելով, թռավ բակը, նույնիսկ Լորիկին առանց մի բառ, շնորհակալություն հայտնելու, այնպես հուզված էր, չվոթված, ուղղվեց դեպի դուրս:

Լորիկը ետևից ասաց.

---

[1] Հեղինակը ջնջել է այս պարբերությունը, այնուհետև աջ լուսանցքում դրել է. «*Ջնջել*»:

— Արհեստը ձեռքը, սիրուն կնիկը ծոցը, տերն ես աշխարքի, թագավոր ես. աչքիդ թե մարդ, թե մորեխ մեկ են...

Ուստան ելավ դուրս, մի ակնարկ նետեց աջ ու ձախ, ապա բեխերը ոլորելով, լիուլի մրմնջեց ինքնաբավական.

— Է՛ս էլ էսման...

Այս էլ այսպես, այս էլ եղավ, այս էլ կարգադրվեց:

Ուստան թև էր առել, ինքն իրեն նման չէր. թե ինքն իրենից ելել էր, սակայն երբեք իրեն այս կերպ տեսած չէր. մի քանի րոպեի մեջ ողջ գյուղը ոտքի տակ առավ, ընկերներին գտնելու, կիսվելու, թեթևանալու. անկարելի էր տանել մենակ այս ահագին երջանկությունը. [ոչ մի մարդ] քայլում էր, և աչքերը բան չէին տեսնում, ամբոխների միջով անցնելով՝ մարդ չէր նկատում. «Երկնքի, դրախտի համն առա, անմահական գինի խմեցի, էլ ինձ մահ չկա, մահ չկա, համով լցվեց սիրտս, աշխարհն էլ, ամեն բան էլ... Սուլթան, սուլթան, փափախս թախթիդ վրա սլիտի թափ տամ...»[1]

Ջավուշը կտրեց առաջը.

— Ուստա ջան, որ էսման առջևդ չես նայում, ի՞նչ է եղել:

— Ջավուշ ջան, Ջավուշ ջան, Ջավուշ ջան, ջան, ջան...

Եվ բռնեց կսկուծ համբուրեց.

— Ո՞ւր են խելառները, Հարուքս, Մարուքս...

---

[1] Պարբերության կողքին, ձախ լուսանցքում, առանց տեղը նշելու. «Բաղը. Եվ լիզում էր շրթունքն ու քիմքը լեզվով...»:

– Գետի ափին են, ծառների տակ, նստել քեզ են մնում, Գոգորը:

– Էս մեռանք քեզ վինտռելով, տեղ չթողինք, ո՞ւր էիր:

– Հարութ ջան, ի՞նչ ասեմ, էստեղ չէի, [ամպերի վրա] էստեղ չէի:

Հարութն ու Մարուքը քարի վրա նստած նայում էին [ուխտատեղի] վերջալույսին, որ ծիրանիով [ծածկել] ներկել էր երկինք, ժայռ ու Մասսա սև-սև ապառաժները [արևավառ] արևակեզ...

<«ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ» ԳԼԽԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՏԱՐԲԵՐԱԿ>

«ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ԱՆՏԻՊ ՎԵՊԻՑ
(Մի հատված «Բագրանի ուխտը» գլխից)

* * *

...Ուստա Կարոն՝ պար-տուն չհասած, պատահեց սա-նամեր Լորիկին, որին տեսել էր Թեև[1] և Սոնայի հետ տե-սակցություն սարքելու խոստումն առել, հիմա էլ ուզեց[2] ավելի ապահովել, որովհետև մնացել էր միայն այս պարի առիթը:

— Սանամեր ջան, հոգիս ձեռքիդ է, գիտես, Թորոյին լավ կխմցնեմ, հավկուր կշինեմ, դու Սոնային դուրս[3] տար, ես հոն կըլնիմ:

— Քավոր ջան, խոսքս խոսք է, մենակ, սատանոք է, որ չեկանք, մեզ մի՛ սպասե, Քերս (գյուղ) կեփեմ գործը:

— Վա՛յ, սանամեր, չի ըլնի, էսօր էլ որ Սոնայիս չտես-նեմ, էլ ի՞նչ սրտով մարդամեջ ելնեմ, գիշերն էլ հոն կմնամ, մեկէլ օրն էլ, մինչի վերջին օրն[4] էլ...

Լորիկը երդումով խոստացավ:

---

1 D + երեկ
2 D ուզեցավ
3 D գոմը
4 D օրս

Ուստան Հանգստացած գնաց. տան առջև, բաց տեղում, սեղան էր դրած, արաղ-դինիով և աղանդերներով. Հարս-աղջիկ, երիտասարդ, պատանի տղաներ, Հանդիսատեսներ լցվել էին դուռն-երթիկ: Օսկանը սեղանի գլուխը նստել սպասում էր խնամիներին, արդեն կինն ու եղբոր կինը գնացել էին Հարսի և խնամոց եւևը:

— Ուստա Ջան,— ասաց Օսկանը,— ուշացան, լավ չի՞ ըլնի, դավուլ-զուռնան առնենք՝ երթանք բերենք:

Ուստայի սրտից ջուր խմեց Օսկանը. ճանապարհ ընկան. Թորոյի իջևանած տան մոտ հնչեց դավուլ-զուռնան «Հարանաուի» եղանակը. արդեն պատրաստ էին Թորոյենք. խսկույն դուրս թռան, և նվագի տակ Հանդիսավոր քայլում էին դեպի պար-տունը:

Օսկանի կինը բռնել էր նորահարսի աջ թևը, ձախ թևն էլ՝ Սոնան. Թորոյի հետ էր իր կինը, ուրիշները և վերջապես իր Հյուրը՝ Հարուստ կողբեցին: Հարսին տարան ներս Հյուրասիրելու Համար. Արտաշը (փեսան) ընդառաջ եկավ աներն (Թորոյի) և ղոքանչի ձեռքերը համբուրեց, սրանք էլ նրա երեսը: Նստեցին սեղանի, ուր կային և Օսկանի աներանք, Ռես Հոսեն, Ջավուշը և ուրիշ պատվավոր բաղրանցիները: Հաստավիզ Թորոն ծանր ու մեծ նստեց, մեկ[1] ոտքը ձեռքով բռնելով դրեց[2] մյուսի վրա, կողբեցուն աչ կողքին տեղ տալով:

Օսկանը բաժակները լցրեց, խմեց Թորոյի, նրա ընտանիքի և իրենց անխախտ բարեկամության կենացը. Թորոն կենացները դարձրեց պատշաճ բառերով:

Զուռնան պարի եղանակ էր նվագում, Հասած ու մանր տղա-աղջիկ կլոր պար էին բռնել, ինքնաբեր. պաշտոնա-

---

[1] D մեկը

[2] D բռնելով դրեց *փխ* բռնած պնելին

կան պարը տակավին չէր բացվել: Քավոր Ուստա Կարոն պիտի բանար պարը նորահարսի համար, իսկ սա ուշանում էր. Ուստան օգտվելով առիթից անընդհատ օղի էր լցնում Թորոյի բաժակը:

— Խմե՛, խմե՛, խնամի Թորո, մեռնել կա, էսօրվա օրը որ չխմենք, բա ե՞րբ խմենք պիտի. էս օրը քեզ համար էլ և մեզ համար էլ[1] մի հատիկ օր է, էլ ձեռք չի ընկնի:

— Էդպե՛ս է, քավոր Կարո,— Թորոն էր խոսողը,— Աստված բոլորիդ էլ[2] բարի տա, Աստված լուսավորե ձեր անցավորաց հոգին,— ու դառնալով առաջ կողբեցուն, հետո բոլորին,— Մինա-աղա կենացդ, թո՛ղ ըլնի ամենքիդ կենացը:

Եվ խմում էր, ու նորից լցվում էր բաժակը:

— Պարոն Մինա աղա, անուշ արեք,— խնդրում էր Օսկանը:

Հարսը դուրս բերին. Օսկանը մոտեցավ պաչեց հարսի ճակատը[3] և ոսկի մանյակը ձգեց վիզը. հարսը խոնարհ պաչեց կեսարի ձեռքը: Հանդիսատեսների մեջ շշուկ ընկավ, լարեցին հայացքները. հիմա հարսը պիտի պարեր, նվագում էին «Մանուշակի» պարը, Ուստա Կարոն, իբրև քավոր, թևերը պարզեց և սկսեց մի վայրկյան պարել, ապա հարսի ձեռքից բռնեց, բերեց ասպարեզ և բաց թողեց մենակ. հարսն սկզբում վախվխելով, հետո սիրտ առնելով, դաշն ձևերով պարեց. ամենքը խրախուսիչ ձայներ էին ձգում ու ծափ տալիս:

Օսկանը չաբաշ տվեց մի մանեթ, որ դավուլչին[4] բարձրաձայն հայտարարեց:

---

1 D և էլ մեզ համար փխ և մեզ համար էլ

2 D չիք

3 D ճակատից

4 D դավուլճին

– Էդպես է բանը, խնամի Թորո, վարդդ քաղինք, փուշը կրակին տվինք. ա՛ռ խմե, սիրտդ հովնա:

– Արժեցող տեղ տվինք, չենք խաբվել,– ասաց Թորոն բաժակը դատարկելով:

– Արտաշիս պարի հանել, Արտաշիս,– գոչեց Օսկանը, և Ուստան իսկույն Արտաշին դուրս եկավ, հանեց ժողովրդի միջից և քաշեց ձգեց հարսի առջևը. նորափեսան պարելով դառնում էր իր հարսի շուրջը:

Թորոն խռպոտ ձայնով ասաց.

– Արսա՛չ ջան, չա՛տ ապրիս, քաղցր պառավիս ձադուկիս հետ. ծլիք, ծաղկիք, ճուղքեր տաք, Տեր Աստված, քեզ փառք,– և քսակը դրպանից հանելով, գաղտնի բացեց բերանը ու հանեց մի մանեթ[1] շաբաշ, որ դավուլչին[2] նորից բարձրաձայն հռչակեց. շաբաշի հերթը եկավ քավորին, որ նվիրեց երկու ռուբլի[3], դավուլչին ավելի բարձր ձայնով հայտարարեց շաբաշը. կողբեցին նվիրեց մի ռուբլի[4]:

Նորահարսի պարը վերջացավ: Հարսը կարմրած եկավ կարգով համբուրեց հոր, կեսրարի, քավորի և մյուսների ձեռքերը, և բարև բռնած կանգնեց կեսուրի մոտ:

Պարի եղանակը փոխեցին մի պարզ տեսակի, և հերթով մնծերը պիտի պարի ելնեին: Թորոյին հանեցին պարի, որ մի պահ օրորվեց, դլորվեց և հևալով եկավ նստավ իր տեղը՝ ընդհանուրի գվարթ ծափերի տակ. հետո Օսկանը պարեց, հետո Թորոյի և Օսկանի կինները, որոնք իրենց հարսնությունը միտք բերելով չանք էին թափում կոտրտվել-

---

[1] D + (րուբլի)
[2] D դավուլճին
[3] D րուբլի
[4] D րուբլի

ծեքծեքվել, որ միայն անչար ծիծաղ էր զարթեցնում[1] հյուրերի և դիտողների երեսին: Այս պարն էլ վերջացավ, սկսվեց երիտասարդների պարը, իսկ սեղանի վրա կերուխում կար, խոսք ու զրույց:

— Քավոր Ուստա Կարո,— բերանը բացեց Թորոն,— ես քեզ չա՛տ եմ սիրում, չնորհքով մարդ ես, ձեռքդ բարի ըլնի, պսակին հաստատ կենան. դիտե՞ս էլի, գլորվող քարը հիմքի քար չի ըլնի. Տեր Աստված, փա՛ռքդ չա՛տ:

Ուստան հասկացավ, որ վերջին խոսքն իրեն է ուղղված, բայց չուզեց հասկանալ, որ չվիրավորե Թորոյին, հետը չթշնամացնե. «Աղվես մարդ է,— մտածում էր նա,— չորս աչք ունի, քնեցնել պետք է, վառեկը ձեռքից խլել»:

— Խնամի Թորո,— դարձավ Ուստան,— խմենք էն մարդու կյանքի համար, որ իր գլխի պատիվը աշխարքի հետ չի փոխե. ի՞նչ ես ասում էս խոսքիս:

— Ընդունակ է, ընդունակ, խմենք...

Ուստան մինչ այդ աչքի ծայրով որոնում էր Սոնային, երբ լսեց Թորոյի ձայնը.

— Մինա աղա, չե՞ս ուզում մի պար գալ, ջահել, կտրիճ մարդ ես:

Մինան համաձայնեց և Կողբի մի եղանակ ածել տալով սկսեց պարել, բոլորը ծափ էին տալիս. Մինան աչքերը հարավ-հյուսիս ուղղված՝ պարում էր, աջ ձեռքը գլխի վրա բռնած, ուր շողում էին ոսկի մատանիները կարմիր ու կանանչ քարերով. ձախ ձեռքը ոսկե գոտիի վրա, ժամացույցի ոսկեջուր շղթան ծփում էր ատլաս արխալուխի վրա, իսկ նոր կոշիկները ճռճռում էին...

---

[1] D զարթնեցնում

Թորոն ոգևորված, հևալով, փնչալով ծափ էր զարկում ու «կեցցե՛ս, կեցցե՛ս» մռմռում: Ու դարձավ Օսկանին ու Ուստային.

– Մինա աղան օջախի[1] տղա է. ես վաղուց գիտեմ դրա բունքը. ինքն էլ կտրիճ մարդ է, ձեզնից լավ մարդ չըլնի, անուշ մարդ է, տո, մի տեսեք ի՛նչ տնկոզ պար է գալում:

Ուստայի սիրտը չկարողացավ տանել այս գովքը:

– Էդման է, խնամի Թորո, Հարուստ կաղը լավ պար կվսաղա:

– Տո՛, քավոր Կարոյի բանը, ես քեզ ի՞նչ եմ ասում, դու ի՞նչ ես ասում:

– Ես էլ էն եմ ասում, թե կուլը Հարուստի լույս աչքերը միշտ կդովեն:

Ուստայի այս խոսքերը, որ ակնարկ էին Մինայի չիլ աչքերի վրա, քահ-քահ ծիծաղ առաջ բերին սեղանակիցների մեջ. Թորոն իրենն առավ, տնքաց, ճակատի երակները ցցվեցին, Օսկանը սեղանի տակից կամացուկ Ուստայի[2] ոտքը սեղմեց, Ուստան ուշք չդարձրեց:

Թորոն դեմքն ուղղակի մոտեցնելով Ուստայի դեմքին ծանր շեշտով ասաց.

– Կարո, է՛յ Կարո, քավորս որ դու ես, չիտակը կուզես, փողն է բանը, մարդու դինը էնքան է, ինչքան փող ունի. մեկ մանեթ ունիս, մեկ մանեթ արժես, միլիոն մանեթ ունիս, միլիոն արժես. Հասկացա՞ր. խելոք խոսքը քանի՞ դռոշ արժե, տո՛, դու ինձ մի կտոր հա՛ց տուր, քեզ էնպես խելոք բաներ ասեմ, որ եպիսկոպոս մարդն էլ պապանձի[3]... լի՛ց խմենք, տղա ես դեռ:

---

1 D օճախի

2 D Կարոյի

3 D պապանձի

— Է՛յ, Թորո ջան, խելոք ես խոսում, խմենք, իմաստուն խոսք է ասել ասողը, թե՝ ոսկին դիր իշու վրա, ամեն մարդ էլ գլուխ կուտա...

Օսկանը նորից սեղմեց Ուստայի ոտքը, այս անգամ ավելի ամուր, Ուստան զգաստացավ և արագ լցրեց, ասելով.

— Խնամի Թորո, դու իմ մեծ ախբերն ես, խոսք է՝ ասինք, ներող եղի՛ր:

Սակայն Թորոյի սիրտը չիջավ. թուչն կար դեռ մեջը, պիտի կծեր, որ հանգստանար:

— Քավոր Կարո, ականջիս դիպավ թե՝ էսօր ընկերության չրջիկ կայծակի հետ սեղան եք նստել, լավ քեֆ եք արել, տո՛, արե՛ք, արե՛ք, քանի ռուսի գլուխը խառն է, հիմի դարը ձերն է, դաշնակ-հնչակով ջրի երես եք ելել, ձի եք խաղցնում, հա՛, հա՛, հա՛, անշուն գեղ եք տեսել անջոխ ման կուգաք. Աստված ամչցնել չտա...[1]

— Էդ քո գովված ռուսդ էլ հոտած հավկթի պես ճըխլ դուրս եկավ,— սեղանակիցներից մեկն էր խոսք նետողը. Թորոն կրակված դարձավ դեպի նա[2]*.*

— Տո, հոպպոններն[3] *(Ճապոն, ռուս-ճապոն պատերազմի ժամանակն էր) ի՞նչ են ռուսի առաջ, գումար ծովը պիտի թափե, ռուսի առջև թուրք ու ինգլիզ, ֆրանկ ու լամսա, ոնցոր հարդի դեզ*[4]*, փչե՝ էրանի կուտա. Հետո ախբերս որ դուն ես, ասածի պես՝ ծոծրակս քերեմ, տեղը կբե-*

---

1 D *դաշնակ-հնչակով ջրի երես եք ելել ... Աստված ամչցնել չտա... — Այս հատվածը կրճատված է 1951 և 1975 թթ. հրատարակություններում:*

2 ԸԵ-1948 և ԵԺ-1951 — Հոտած հավկիթի պես ... դեպի նա *փխ* տեսանք

3 ԸԵ-1948 և ԵԺ-1951 Հոպպոններն

4 D + հնչտանքով

ըեմ, էդ ձի խաղցնողները մկի ծակին էրնկ պիտի տա՛ն...— Եվ[1] բաժակը տարավ բերնին,— խնամի Օսկան, կենացդ. թող ըլնի ամենքիդ կենացը:

Ուստան չրթունքները ծամում էր, ուզում էր այնպիսի ձևով պատասխաններ Թորոյին, որ կռիվ չծագեր, պարհրավերքը չփչանար, կշռում էր իր ասելիքը, երբ Օսկանը բոթեց նրա կողքը խորհրդավոր կերպով: Ուստան նայեց պարին, ի՞նչ տեսավ. հավատա՞լ աչքերին, Մինա աղան Սոնային պարի է խնդրում: Ուստան աչքերը նախանձի կրակով լցված, անթարթ նայեց Սոնային, Սոնան էլ Ուստային, մի երկու վայրկյան, Սոնայի սև աչքերի մեջ մի վայլուն ժպիտ խաղաց Ուստայի հանդեպ, իսկ նուրբ շրթների վրա մի բարակ ծաղր Մինայի հանդեպ: Սոնայի սիրտը իր դեմքի վրա լեզու էր առել, Ուստան հասկացավ այդ քաղցրիկ լեզուն և բոլորովին հանդստացավ, ու իրեն չմատնելու համար դարձավ Թորոյին, ու հանելով գրպանից ծխատուփը, պատրաստի սիգարեթներ հրամցրեց Թորոյին ու Օսկանին, և ծխելով անխռով, անայլայլ դիտում էր: Սոնան նայեց կեսրարին, Թորոն գլխով համաձայնություն տվավ, և Սոնան պատրաստվեց պարել: Կողբեցին երկու ռուբլի[2] չաքաշ տվեց և ինքն էլ մի-երկու շրջան արավ նրա բոլորքը, ապա կանդնեց մոտիկը, ծափ տվեց մի պահ, հետո լուռ, բերանաբաց[3] նայում էր:

Սոնան պարում էր «Նունուֆարի» կոչված պարը. մի շքեղ, բարդ խաղ, լի քնարիկ ձևերով. նա ինքը հենց նունուֆարին էր մարմնացած[4]:

---

1 D թևզ

2 D րուբլի

3 D բերաբանաց

4 ԸԵ-1948 և ԵԺ-1951 – *չիք* մի շքեղ, բարդ խաղ ... նունուֆարին էր մարմնացած:

«Մ՛ւր է սովորել[1] էդ պարը. որբևայրի տեղովը, կարելի է երազի մեջ, ի՛նչ վարպետ է պարում»,— խոսում էր Ուստան իր մտքի հետ:

Մատաղ ուռենու պես դողում էր Սոնան[2] ու սրսփում կանգնած տեղը, երկար, նուրբ ձեռքերը օձերի պես գալարվում էին ծաղկուն մարմնի չուրջը. աչքերը կիսախուփ էին հեչտանքի մեջ մարածի պես. մոռ գույնի հագուստի փեշերը ծփում էին, ինչպես լեռնային լճակի ալիքները իրիկվան գույների մեջ:

Սոնան իր մարմնի հարուստ չնորհները հանդես դրեց ու պանծացրեց, վառելով այրիական տարիների մեջ խտացած հույզերը և չապրված տարփանքը իր տակավին թարմ ու բեղուն կազմի բոլոր սարսռուն ձևերի մեջ: Եվ փթթած նռնենու պես կրակ-կարմրել էր նրա ողջ երեսը[3]:

Բոլոր դիտողները հիացած, բոլորի հայացքները գեղեցկացած Սոնային նայելով[4], ծափ էին տալիս, իսկ Ուստայի սիրտը երջանկության անհունի մեջ էր, որովհետև այդ[5] աննման կնիկը իրենն է, միայն իրենը, սրտով արդեն վաղուց, իսկ մարմնով էլ օրերի հարց է[6], և սակայն հազիվ էր իշխում իր հորդ զգացմունքներին[7], մազ էր մնում, վազեր, գրկեր[8] նրան և տաներ հեռո՛ւ, հեռո՛ւ այն տեղերը, ուր ո՛չ

---

1 D սորվել

2 D Նա

3 ԸԵ-1948 և ԵԺ-1951 — հեչտանքի մեջ մարածի պես ... կրակ-կարմրել էր նրա ողջ երեսը *փխ* սիրուն դեմքի վրա:

4 ԸԵ-1948 և ԵԺ-1951 — *չիք* բոլորի հայացքները գեղեցկացած Սոնային նայելով

5 D այս

6 ԸԵ-1948 և ԵԺ-1951 — *չիք* իսկ մարմնով էլ օրերի հարց է

7 D զգացումներին

8 ԸԵ-1948 և ԵԺ-1951 — բռներ

իր[1]*, և ո՛չ էլ մի ուրիշի քարվանը տակավին ոտք չէր դիպցրել. բայց իր բոլոր ուժությունը թափեց և գսպեց*[2] *իրեն, ու կծու*[3] *հեգնանքով նայեց կողբեցուն, որի աչքերը կոպերից պոռթկած ավելի էին ծռմռել. «Տո՛, իշոտ, դու գիտես թե, Սոնան քեզ համար է պարում, խելքիդ քշա՛ արա», և մտքի մեջ դարձավ Սոնային. «Ինձ համար ունեցած սրտի սերը երեսի վրա վարդ է դառել. քո թուփ ու տերևիդ մեռնիմ, Սոնա ջան»,— խոսեց իրեն հետ Ուստան և մի սիգարետ նորից վառեց, ծուխը անհագ ծխելով, իբրև թե Սոնայի բուրյան չունչը լիներ:*

Պարը վերջացավ, ծափերն ու հիացական կոչերը դեռ շարունակվում էին. Մինան եկավ սեղանին, Թորոն Հարսին (Սոնան նրա այրի Հարսն էր) մոտը կանչեց, ճակատը պաչեց, Հարսն էլ նրա ձեռքը, ապա Օսկանի ձեռքը, մոտեցավ Ուստայի ձեռքին, Ուստան չթողեց, ապա կանգնեց նրա առջևը: Ուստան անլսելի «ա՛խ»-ով բերնիցը ծուխ հանեց, իսկ Թորոն օրհնեց. «Ապրի՛ս, Հարս, դուն իմ անգին զավակն ես, իմ սրտիս ցավը. ես քեզնից գանգատ չունիմ, բարի հիշատակ ես, մեր զինավոր սուրբ Գեորգը քեզ պահապան ըլնի, ես մեռնիմ, օճախս դու պիտի ծխացնես[4]*, ապրիս, գնա, աղջիկս...»:*

Սկսվեց կլոր մեծ պարը, որ դրեթե բոլոր հյուրերին մեջն առավ: Ուստա Կարոն, որ մշտական պարքաշն էր, պարապլուխը, եկավ, փափախն ուղղեց, կարմիր մեծ թաշկինակն առավ աջ ձեռքը, ձախ ձեռքը տվեց սանամեր Լորիկին և թաշկինակը ճոճելով քաշ տվեց իր նեռից պարի շղթան, ուր ծաղկավուն, երփներանգ զգեստներ հա-

---

[1] D իրեն

[2] D բռնեց

[3] D անկշռելի

[4] ԸԵ-1948 և ԵԺ-1951 – *չիք ես մեռնիմ, օճախս դու պիտի ծխացնես*

գած հարս-աղջիկ, եռուն կտրիճ տղերք, օղակ-օղակ, իրար ձեռք բռնած՝ կամարվելով հասնում էին մինչև պարապլուխը, մի-երկու քայլ հեռու. դավուլ-զառնան պարի մեջն էր, երեսը միշտ ուղղած դեպի պարքաշը[1], հաճախ նրա հետ ընթանալով, հավասար քայլով:

Քանի գնաց պարն այնքան մեծըցավ, որ տան առջևի ողջ բացատանը բռնեց. հնչում էր զուռնան ու դավուլը թնդում, ծուփ-ծուփ գալարվում էր պարը:

Ուստան երգեց, և ողջ խումբը, բոլորը կրկնեցին նրա երգած տողերը.

Դե՛հ, սիրուն կաքավ, բռնե, պարը բոլորի,
Մեր թշնամին, պարի ետքում մոլորի.
Լուսնյակը շող է քցել,
Իմ յարը քող է քցել.
Բարակ քամին գալիս է,
Ալ քողը դող է քցել:
Դե՛հ, սիրուն կաքավ, բռնե, պարը բոլորի,
Մեր թշնամին, պարի ետքում մոլորի[2]:

Զպարող հյուրերը, ծերերը, պառավները և կողմնակի հանդիսատեսները «ա՛յ ապրիք, ապրիք» գոչելով ոգևորում էին պարը: Սոնան դեռ պարի մեջ չէր. նա դիտմամբ նստել էր կեսուրի մոտ, լուռ դիտում էր, ցույց տալու համար թե՝ սիրտ չունի ուրախանալու... Ուստան երբեմն-երբեմն նայում էր Սոնային[3], որի[4] աչքերից ու ողջ մարմնից

---

1 ԸԵ-1948 և ԵԺ-1951 – պարաշարքը

2 ԸԵ-1948 և ԵԺ-1951 – *չիք* Լուսնյակը շող է քցել ... ետքում մոլորի

3 D նրան

4 D և նրա

լույսի, գինու[1] հրեղեն մի գետ էր խուժում Ուստայի հոգուց ներս, և Ուստան կրակված՝ ոտքը զարկում էր տափին, և սկսում էր մեկը մյուսից հետո նոր-նոր պարեր. «Հաբրբանը», «Խնկի ծառը», «Վեր-վերին», «Աչխենի պարը», բոլոր այս պարերը խիստ գվարթ անցան. խումբը երախտագետ, ոգևորված գոչեց.

Կլոր պա՛ր, կլոր պա՛ր.
Ուստան գլխին ոսկի ծառ:
Ով չպարի, վա՛յ իրան,
Մկները ոտքը կերան:

Կեսուրը, Թորոյի կինը, հանկարծ գարճավ հարսին.

— Աղջի Սոնա, դնա՛ դուն էլ մեջ մտիր, ի՞նչ անենք, գիտեմ, մոռնալու բան չէ, էհ, աղջիկս, դնա, աչխարքի կարգն էս է:

Սոնան դրան էր սպասում, չտասղ քայլերով մոտեցավ և բռնեց Լորիկի ձեռքը, ամաչեց և[2] սիրտ չարեց մտնել նրա և Ուստայի մեջև. վառ ու վարար մի գգացումով լցվեց ու լուսացավ Կարոյի հոգին ու ողջ աչխարհը, երբ այնքան մոտիկ տեսավ իր սրտի սիրածին. և ավելի ու ավելի մեծ թափով ցնցեց իրեն ու իրեն հետ էլ ողջ պարաչղթան[3], ոտքը զարկեց գետին, թաչկինակը վաթաթեց թևին, ապա արձակեց ու գլխի վրա բարձր ծածանելով, երգեց իր բոլոր[4] ավյունով.

Նչի ծառին նո՛ւշ կըլնի,
Պաչ մի տաս, անո՛ւշ կըլնի,

---

1 ԸՆ-1948 և ԵԺ-1951 – չիք լույսի, գինու

2 D ու

3 D + նրկու

4 D + արյունով և

Թե պիտի տաս, էսօր տուր,
Թե չէ էգուց ո՛ւշ կըլնի:

Խումբը խինդով ու ծիծաղով կրկնեց երգը:

Թորոն ալեխառն մեծ մորուքն[1] ափի մեջ առած, աչքերը ճակատի տակից չորսել էր Սոնայի և մանավանդ Կարոյի վրա, նախազգական մի կասկածանքով:

Պարը շարունակվում էր նորանոր ձևերով, ավելի գինովցած, ավելի ինքնամոռաց: Մեկէկ Ուստան նկատեց, որ Թորոն մորուքն ափի մեջ, աչքերը կուլ գնացած՝ նիրհում է,— վայրկենի մեջ Լորիկին հասկացրեց, որ պարից՝ հոգնութեյան պատրվակով դուրս գա, և առավ Սոնայի ձեռքը իր բոցավառ ափի մեջ: Երբ ունեցավ իր սիրածի պստիկ ձեռքը ափի մեջ, իրապես համոզվեց, որ ձեռքերի այս միացումը պայծառ նշանն է իր այն խորհուրդի, որ տերտերը եկեղեցում աշխարհի առջև սուրբ պսակով պիտի հաստատե միացնելով երկու իրար սիրող սրտեր[2]: Մի պահ կանգնեց, սրբեց ճակատը, դավուլչի Զուրաբին կանչելով մի երեք ռուբլիանոց[3] կպցրեց նրա ճակատից և «Լաչիմ-նանա» պարերգը նվագել պատվիրեց, ավելացնելով որ ինչքան հնճարք ու չնորհք ունին թափեն. դավուլչին «Ուստա Կարոն չե՛ն մնա, երեք կանանչ մանեթ չաբա՛չ» գոռալով, իր ընկեր զուռնաչիների հետ իրենց բոլոր վարպետութեյունը սպաս դրին. աչքերը խուփ, ինքնամփոփ նվագում էին զուռնաչիները, այտերը պայթելու չափ ուռցրած, և դավուլչու հետ օրորվելով հետևում էին պարքաշին:

---

1 D մորուքը
2 D սրտերը
3 D րուբլիանոց

Ուստան փափախը չուռ տված ծոծրակի վրա, բարձր ձայնեց «Լաչիմ-նանա». և ողջ խումբը միասին, միաբերան երգեցին:

Լաչիմ-նանա, լաչիմ-նանա,
Լաչիմ սարից գլդոլ-մլդոլ:

Եվ Ուստան գլուխը մեկ դեպի աջ, մեկ դեպի Սոնայի ականջը թեքելով, նրան միայն լսելի, երգում էր փոխելով պարի խոսքերը, պահելով եղանակը և հանկերգը: Ուրիշները դավուլ-դուռնայի և ընդհանուր աղմուկի տակ չէին կարող լսել Ուստայի խորամանկ խաղը, որով նա սրտի ուզածը հայտնում էր Սոնային: Եվ նա ծիծաղերես՝ հանկերգը բարձր հնչելով, թև առած թռչում էր ու դուխում դեսինը:

Լաչիմ, լաչիմ, լաչիմ նանա,
Սո՛նա յար ջան, Սոնա՛, Սո՛նա,
Թուշդ պաչեմ, մարդ չիմանա,
Լաչիմ նանա, լաչիմ նանա.
Գոմը[1] կերթամ, դուն էլ արի.
Էնպես արա՛, մարդ չտեսնի,
Լաչիմ նանա, մարդ չիմանա,
Լաչիմ, լաչիմ, լաչիմ նանա:
Կերել եմ ծոցիդ միջինը.
Էնպես ուտեմ, մարդ չիմանա[2],
Մարդ չտեսնի, լաչիմ նանա.
Բամբասանքի բան չունենա,

---

[1] Ըե-1948 և եԺ-1951 – գոմը *փխ* ես դուրս

[2] Ըե-1948 և եԺ-1951 – *չիք* Կերել եմ ծոցիդ ... մարդ չիմանա

Ձենը տակը, քարը վրան,
Լաչիմ, լաչիմ, լաչիմ նանա...

Այս կատաղի, թափով ու թռիչքով պարից ողջ խումբը քրտնաթոր ու չնչասպառ լուծվեց, խառնիխուռն ցրիվ եկավ[1]*:*

Այս իրարանցումից օգտվեց սանամեր Լորիկը ու Սոնայի թևից բռնած՝ անհետացան երկուսով[2]*: Ուստան գաղտագողի աչքերը ձգեց Թորոյի վրա. զարթնել էր նա և կողբեցով էր զբաղված, վայրկյանի մեջ ինքն էլ ծլկվեց հակառակ ուղղությամբ, մտքի մեջ ծիծաղելով. «Ծեր աղվես Թորո, աշխարքն էսպես կուտեն»*[3] *և կամացուկ մտավ Օսկանի անեղրոջ գոմը: Լորիկը գոմի բակումն էր, նա հսկում էր, որ եթե եկող այր մարդ լինի հետ ուղարկե՝ թե գոմում կին կա...*[4]*:*

Լորիկը գլխով դուռը ցույց տվեց, Ուստան մտավ գոմը. կիսախավար էր[5]*. մի աղոտ լույս միայն ծորում էր*[6] *երդիկի պատուհանից*[7]*: Աչք ածեց չորս կողմը՝ որոնածը չգտավ*[8]*, միայն մի իշուկ կար մսուրի առջև*[9]*, և մի*[10] *կործած քթոց գոմի մեջտեղը*[11]*:*

---

1 D եկան

2 D անհայտացան *փխ* անհետացան երկուսով

3 D Այստեղ 1948 և 1951 թթ. հրատարակությունների բնագիրն ավարտվում է: Հեղինակը վերջին բառից հետո բազմակետեր է դրել, ինչը տվյալ դեպքում բնագրի կրճատման ազդանշան է:

4 D որ եթե եկող ... գոմում կին կա *փխ* իբրև լրտես պահակ

5 D չիք կիսախավար էր

6 D միայն ծորում էր *փխ* կար

7 D + ցաթած

8 D չտեսավ

9 D առջևը

10 D և մի *փխ* մեկել

11 D չիք գոմի մեջտեղը

Աչքերը սրտրելով նորից նայեց, և նորից չգտավ փափագածը, չվարած կանգնել էր, երբ հանկարծ Սոնան, որ այսունի եռևը թաքնվել էր, գլուխը երկարացրեց բարձր սիրազեղ ծիծաղեց — ակնթարթի մեջ աղոտ դոմը լցվեց լույս ալայծառությամբ, դարձավ Զինմաչինի թագավորի պալատ, այսունները ոսկի հագան և խորքի կանգնած ավանակը՝ ծովից ծնած նժույգ[1]:

— Սոնա ջա՛ն, Սոնա՛ ջան ու ջան,— քնքշորեն ասաց Ուստան ձայնի մեջ ողջ սիրտը դրած, վազելով դեպի սիրած կինը. ձեռքից բռնեց և նայեց երեսին, աչքերին, անհագ[2], առանց կշտանալու.— Սոնա ջան, ուրեմն էս աշխարհումն էլ մահից առաջ արքայություն կա. ես հիմի արքայության մեջ եմ, թո՛ղ հոգիս հիմի Աստված էստեղ առնի. Սոնա՛ ջան, դիտե՞ս, քեզ ինչքան եմ սիրում, հաշիվ չկա, չափ չկա...

Սոնան ժպտալով լսում էր, Ուստան դորովով գրկեց նրա մեջքից, ինքը նստեց քթոցի վրա, ուղեց նրան էլ նստեցնել ծնկների վրա, Սոնան դիմադրեց. Ուստայի ձեռքերը թուլացան. նա թեև շատ անգամ երաշխիքներ էր ստացել Սոնայի փոխադարձ սիրո մասին, բայց և ամեն անգամ նրա քմայքների հանդեպ դողում էր, վախենալով դրախտի թռչունը ձեռքից թռցնել[3]:

---

1 D Աչքերը սրտրելով նորից նայեց ... ծովից ծնած նժույգ *փխ* մնկել նայեց, նայեց. Սոնան այսունի եռևը թաքչել էր, գլուխը երկարացրեց և սիրազեղ ժպտաց — աղոտ դոմը ակնթարթի մեջ լցվեց լույս ալայծառությամբ, դարձավ Զինմաչինի թագավորի պալատ, այսունները ոսկի հագան և անկյունում կանգնած ավանակը՝ ծովից ծնած նժույգ:

2 D *չիք*

3 D *չիք* վախենալով դրախտի թռչունը ձեռքից թռցներ

— Սոնա՛ ջան, հոգիս, հերիք կրակես ինձ, ես քո գերիդ եմ[1], աչքիս արևը, սրտիս բլբուլը, կյանքիս աստղն ու ծաղիկը, իմ վիզս քո առաջ մազից բարակ է, էդ անուշ ճկութովդ էլ կընաս կտրե, անունիդ մեռնիմ, էդ անուշ անունդ որ ասում եմ, բերանս մեղրով լցվում է. ասա՛, դու սեր ունի՞ս խեղճ Կարոյի համար...

Ուստա Կարոն երբեք կյանքի մեջ այսչափ չէր խեղճացել մի կնոջ առջև, բայց սա ուրիշ էր. կրակն առել էր սիրտը և մարելու ճար չկար:

Ուստայի կրակված խոսքերը Սոնայի վրա[2] ազդեցին, և մեղմակի հնչեց[3].

— Թե որ չսիրեի, էստեղ ի՞նչ գործ ունեի...

— Բլբուլ էր խոսողը, լեզուդ ուտեմ, ասա, խոսի, Սոնա ջանս, ծովերի մարջանս:

— Կարո, ինչ որ սիրտս է ասում, լեզուս ի՞նչպես կրնա ասել:

— Ջա՛ն, ջա՛ն, սրտիդ մատաղ, գիտեմ որ սրտիդ մեջն եմ, չէ՞[4] որ դու օր ու գիշեր իմ սրտիս մեջն ես. Սոնա ջան, նստիր, ոտներիդ մեռնիմ, ինչո՞ւ ես կանգնել:

Եվ նստեցրեց ծնկների վրա, Սոնան չմերժեց. երբ Ուստան վայելեց[5] Սոնայի ծաղկած մարմնի[6] քաղցր ծանրութիւնը իր ծնկների վրա, այն զգայութիւնն ունեցավ[7], թե աշխարհը իր[8] բոլոր գանձերով իր գոգը թափե-

---

1 D *չիք* ես քո գերիդ եմ
2 D Սոնայի վրա *փխ* Սոնային
3 D *չիք* և մեղմակի հնչեց
4 D ինչու
5 D զգայ
6 D *չիք* ծաղկած մարմնի
7 D զգայութիւնն ունեցավ *փխ* իմացավ
8 D *չիք*

ցին, և երբ Սոնայի մազերի ծայրերը դիպան երեսին և Սոնայի[1] անուշ շունչը թափանցեց Ուստայի հոգուց ներս, մի անանուն երանություն պռունկե պռունկ լցրեց նրա ամբողջությունը... և մի թափով հանկարծուստ համբուրեց Սոնայի աչքերը. Սոնան ձեռքով աչքերը ծածկեց, Ուստան համբուրեց շրթները. Սոնան այս անգամ երկու ձեռքով ծածկեց դեմքը:

— Վա՛յ, Սոնա ջան, աշխարհը գլխիս մի մթնացրու, էդ լույս պատկերդ որ տեսնում եմ, ամպ ըլնի թե դիշեր, սիրտս ու բոլորքս արևով լցվում է:

Այս խոսքի վրա Սոնան լիահնչուն ծիծաղեց, գոմի մեջ արծաթե զանգի մի քաղցրություն փռելով: Եվ բազուկը նետելով Ուստայի վզովը կսկուծ համբուրեց նրա բերանը... ինչպես որ գինու գավը լիուլի լցվում է կարմիր գինով ու պռունկներից թափվում է, այնպես էլ Ուստան ինքնիրենից ելավ ու հորդեց.

— Վա՛յ, ես մեռա, մեկ էլ, մի հատ էլ,— և չսպասելով պատասխանի, ինքը փակչեց Սոնայի շրթուքներին[2], և երկա՛ր, երկա՛ր ծծեց նրա շրթունքների անուշ կրակը. երկուսով էլ բռնկվել էին համբույրներից, երկուսի երեսներն ու աչքերը բոցին էին տալիս:

— Ա՛խ, էս ժամանակը չանցներ, ոտքը կոտրեր, մնար, Հավիտյան ըլներ. Հավիտյան մնայինք էստեղ, իրար գրկած, երես-երեսի,— ասաց Ուստան խելակորույս:

Սոնան թե — կարո, երթամ, թո՛ղ, երթամ:

— Ջէ՛, չէ՛, հոգիս, բան ունեմ քեզ ասելիք,— զգաստացած ասաց Ուստան,— գիտե՞ս, ուխտից մի-երկու չաբաթ

---

[1] D նրա

[2] D շրթներին

Հետո Արտաշի հարսանիքն է, հետո... մերը, հոգի ջան,— և զննող նայեց նրա աչքերի մեջ:

— Կարո, կռահե՞լ ես[1], կողբեցու շիլ աչքը վրաս է, կեսուրս ասաց, որ ինձ լավ պահեմ. հասկացա՞ր. թաղեմ կողբեցու գլուխը, ես չէի ուզում նրա խնդիրքի վրա պար գալ. կեսարս հրամայեց. ես էլ քո սիրու համար պարեցի, էնպես գիտեի թե՝ մենակ դու ես էնտեղ ու քո առջևդ եմ պարում. տեսա՞ր, ինչ սիրուն պարեցի, Կարո, գույնդ ինչո՞ւ քցեցիր, վախնաս թե նրան առնեմ, ո՞վ է նրա աչքերին կարոտ, աչքի մեկը Սիս է, մեկը Մասիս, վրաս նայելուս, չէի իմանում, թե ո՞ւմ է նայում:

Ուստան լսում էր ու քանի գնում եփում, իրան ուտում էր.

— Է՛դ կողբեցին, գնդակը[2] նրա ճակտի մեջ կգամեմ[3], քանի գլուխ ունի իմ առջև ոտք երկնցնելու, ինձ Ուստա Կարո են ասում, խնդրեմ՝ ճանչնաս, ես մեղավոր չեմ, թե գլուխ թռնի:

Եվ մտքի մեջ շատ ցավեց, որ ատրճանակը տունն էր թողել, բայց մի կողմից էլ գոհ էր հետը չբերելուն համար. փորձանքի մեջ պիտի ընկներ, արյուն թափվեր, փախստական դառնար, ամեն բան տուրը տար:

— Ամա՛ն, Կարո ջան, ես վախում եմ[4], ի՞նչ ես խոսում, ինչո՞ւ էդպես ահռելիկ բաներ...

— Սիրտս ելած էր, ասի. բանը քեզնից է կախված, կողբեցին ո՞ւմ չունն է, Թորոն ի՛նչ իրավունք ունի վրադ, դու որ ինձ ուզենաս, ես հո մեռած չե՞մ, ծով ըլնի առջևս կճեղքեմ, սար ըլնի՝ կծակեմ...

---

1 D գիտե՞ս
2 D գյուլլեն
3 D կմխեմ
4 D վախենում եմ

— Կարո, մի տակն ու վրա ըլնիր, կեսարս չա՜տ բան կուզե, լսողն ո՞վ է, կողբեցին ինձ ոսկու մեջ թաթխե, նրա անունը բերանս առնողը չեմ. հազար թուման պարտքս ըլնի, մարդամիջի մարդս ըլնի... Կարո, դու ինձ չես ճանչնում[1], թե աչխարհանցում ըլնի ու հազար կտոր դառնամ, էլի ամեն կտորս քեզ համար պիտի բաժին հասցնեմ...

Ուստան լարված լսում էր, շրթները դողում էին: Սոնան կամացուկ քաշեց նրա բեխից.

— Ես ասել եմ քեզ, էլի կասեմ, մեռնիմ՝ քոնն եմ, ապրիմ՝ քոնն եմ, քառասուն[2] կողբեցի քո մեկ մազի հետ չեմ փոխի, հասկացա՞ր,— և շրթները երկնցրեց համբույրի համար:

— Կարո, ականջիդ մի բան ասեմ, ծածուկ պահես, քեզ էլ չասես.— և կամացուկ փսփսաց,— երբ որ կեսարիս քովը պապիլոս[3] էիր քաշում, երեսս քո կողմը դարձրի, որ ծուխդ դիմներս ինձ, ծծեի[4], կարոտս առնեի քեզնից...

Այս խոստովանանքի վրա՝ Ուստան բազմապատկվեց, հազարապատկվեց:

— Սոնա ջան, Սոնա, հազար անգամ քեզ մատաղ, երբ իմս ըլնիս, ասենք հիմի էլ իմս ու իմս ես, կուզեմ ասել, երբ սուրբ պսակով իմս ըլնիս, քեզ թագավորի կնկա պես պիտի պահեմ, չարան-չարմադ վարդի ու բմբուլի[5] մեջ, ձեռքդ տաքից պաղը չպիտի մտնի. կերածդ խորոված քաքավ պիտի ըլնի, խմածդ նռան գինի, հագածդ ատլաս ու

---

1 D ճանաչում

2 D քառասուն

3 D Սիկարեթ (ծան. հեղինակի):

4 D չիք

5 D վարդի ու բմբուլի փոխ բմբուլնորի

զառ ոսկի, քո գործդ պիտի ըլնի գլխիս վրա արևի պես պտուտ գաս, թև ու թռուր ըլնիս ինձ:

Սոնան խոսքը կտրեց:

— Կարո ջան, ասել է, մի ամսից հետո ես քո...— և չկարողացավ ասել՝ թե քո կինն եմ լինելու, խորհրդավոր ծիծաղեց, կարմրեց ու գլուխը կախեց. ապա ավելացրեց.— գիտե՞ս, Կարո, ես վարդի պես եմ, թե որ սիրես, ծոցիդ մեջ հազար թերթերով[1] կբացվիմ, թե որ չսիրես, թուփիդ[2] վրա կթոռմիմ...— և նորից Ուստայի ականջին փսփսաց.— մի ամիս անց, ես քո հորդ հարսն եմ...[3] հասկացա՞ր, մեկ խոսք — մեկ Աստված:

Ուստայի գիտակցությունը մթնեց, հազիվ մի պահ անց՝ կարողացավ իրեն նորից գտնել.

— Ա՛խ, Սոնա ջան, Աստված վկա է, թե որ ինձ հավկթի պես առնես, զարկես պատին, ցրեխ-ցրեխ անես, նորից երջանիկ եմ, որ ձեռքիդ մահ առա:

Եվ Ուստան մղված մի անպարտելի զորությունից՝ ձեռքը մեկնեց Սոնայի ատլաս կապույտ կրծկալին. Սոնան չէր թողնում, քաշում էր նրա բեղերից, ետ հրում[4]. նա[5] ճգնում էր քանդել կրծկալը. Սոնան պայքարում էր, բայց Ուստան կորցրել էր բոլոր պաղարյունը և դիմադրություն[6] չճանաչող փափաքն էր նրա բռնակալ տերը:

— Թո՛ղ տեսնեմ, Սոնա ջան, էդ չուխտակ մարմար պալատներդ տեսնեմ, հոգուս տունը, թող մի հատ պաչեմ, իմս են, չէ՞...

---

1 D թերթով
2 D թուփիս
3 D չիք մի ամիս անց, ես քո հորդ հարսն եմ...
4 D ձեռքերից փխ ետ հրում
5 D Ուստան
6 D դիմադրությունը

— Ջէ՛, Կարո, չէ՛, Հետո, ամոթ է, Հետո...

— Թո՛ղ մի պստիկ համառես անեմ, թե չէ կխնդրեմ...

— Համառես, համառես, պուտուկը՝ կես...

— Սոնա ջան, կյանքս, քոնը մեղրի ծով է, չի պարպվի, հոգիս առ, թո՛ղ, թո՛ղ, հարյուր տարի ծարավ եմ, ծարավ եմ, ծարավ եմ, վառվում եմ, մեռնում եմ[1]*...— նա այլևս չէր խոսում, այլ բառերի կտոր-փշրանքներ էր շշնջում, անկապ, բայց բոլորը միասին մի խորհուրդ ունեին, մի հուր-ուենչ:*

— Քո սիրուդ համար,— բարակ շշնջաց Սոնան, և թուլացան[2] *ձեռքն ու կամքը:*

Ուստան դողդոջուն, բայց բախտավոր մատներով պարանոցի կողմից արձակեց կրծկալը և բաց թողնց, և հուզմունքից այլայլված[3] *աչքերի առջև փայլեցին ու վառվեցին*[4]*, ու լեզու առան Սոնայի ստինքները. Ուստան գլուխը թաղեց նրանց մեջ և առավ իր քարավանի անցած դաշտերի ու սարերի ծաղիկների ու ծոթորների խելք թռցնող բույրերը. գլուխը մի պահ վերցրեց, նայե՛ց, նայե՛ց*[5]*, ապա հարյուր տարվա ծարավի պես հարձակվեց և համբուրում էր ու համբուրում, կաթնակեր երեխայի պես մշմշելով — ի՛նչ լուսաթաթախ ծիծիկնե՛ր. կաթնաղբյո՛ւր, մեղրաղբյո՛ւր, լուսաղբյո՛ւր. և*[6] *մատներով չոյում էր, շոյում էր*[7] *մի պապակով, որ հազուրդ չունի. և անուշ ղրույց էին անում մատները ստինքների հետ, և աչքերից*

---

1 D չիք ծարավ եմ, վառվում եմ, մեռնում եմ

2 D + իր

3 D շաղված

4 D + բուրեցին

5 D + ստինքներին

6 D չիք կաթնակեր երեխայի պես ... լուսաղբյո՛ւր. և

7 D չիք շոյում էր

ավելի, և չրթունքներից ավելի մատներն էին, որ տեսնում էին ու համբուրում: Հարբել էր ո՛չ միայն նրա հոգին բոլոր-բովանդակ, բայց մանավանդ մատները, մատները մանավանդ, որ թունդ հարբել էին[1], ու դողդողում, սարսռում էին մի անկուշտ ծարավից, որ ծայր չուներ: Լուռ էր Սոնան, լուռ էր Կարոն՝ համր ու պապանձ:

Եվ ժամանակի բոլոր ձևերը կանգ առան նրանց համար:

Լորիկը գոմի դուռը ծեծեց. նորից ծեծեց, նորից ավելի ամուր ծեծեց. Սոնան ցնցվեց, և թափով հրեց Ուստային. երազը ցնդվեց, Ուստան դարձավ իրականությանը. գոմումն էր. նայեց ժամացույցին, իրիկնադեմ էր[2]...

Լորիկը գլուխը կոխեց ներս ասելով[3].

— Ինչ որ արիք[4], հերիք է, սուրբ պսակի գիշերվա համար է՛լ բան թողեք...

Եվ նորից ծածկեց դուռը:

Սոնան ոտքի կանգնեց, կրծկալն ուղղեց, կլոր պստլիկ հայելին հանեց գրպանից. խառնափնթոր էին մազերն ու հագուստը ճմրթված:

— Վա՛յ, հողը գլխիս, էս ի՛նչ հալի եմ...

— Թո՛ղ էս ըլնի միշտ մեր հալը,— ասաց Ուստան, իր վրա-գլուխը չիտկելով[5], աչքերը տրորելով և վերջին անգամ մնաս բարևի համար համբուրելով Սոնայի երեսն ու

---

1 D մի պապակով, որ հագուրդ ... թունդ հարբել էին *փխ* կուրծքը, վիզն ու մազերը և անուշ զրույց էին անում մատները նրանց հետ, և աչքերից ավելի, և չրթունքներից ավելի մատներն էին, որ տեսնում էին ու համբուրում: Եվ մատները թունդ հարբել էին

2 D չիք գոմումն էր ... իրիկնադեմ էր

3 D չիք

4 D չիք Ինչ որ արիք

5 D չիք իր վրա-գլուխը չիտկելով

աչքերը, թռավ բակը. նույնիսկ Լորիկին առանց մի չնորհակալության[1] խոսք ասելու, ուղղվեց դեպի դուրս, ա՛յնպես հուզված էր, ա՛յնպես չփոթված:

Սանամեր Լորիկը եռևից ասաց.

— Բախտավոր մարդ, ինչո՞ւ չէ, արհեստը ձեռքդ, սիրուն հարսը ծոցդ, տերն ես աշխարքի. առջևդ թե՛ մարդ, թե՛ մժեղ մեկ են...

Ուստան ելավ դուրս, մի ակնարկ նետեց աջ ու ձախ. թարմ օդը դիպավ երեսին[2]. զգաստացավ է՛լ ավելի, հավաքվեց, մի պահ՝ տարած հաջողությունը և վերջին անապատելի ապրումները մտքում ամփոփեց ու կշռելով նրանց մեծ արժեքն ու նշանը, լիուլի ինքնաբավությամբ ոլորեց բեխերը, քթի տակ մրմնջալով.

— Է՛ս[3] էլ էսման...

Այս էլ եղավ, այս էլ կարգադրվեց. և քայլ առավ դեպի դեղամեջ[4]:

---

1 D շնորհակալու

2 D + իրիկվան զովը

3 D ես

4 D չիք Այս էլ եղավ ... դեպի դեղամեջ

<«ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. <ԹԱՂՎԵՑԻՆ ԱՅԴ ԱՆԾԻՐ...>

Թաղվեցին այդ անծիր խավարի հետ... Դժբախտ մարդ է Ուստան, հեր ու մեր չունի, մանկուց որբ մնաց, ուրիշի դռները ջան-ջիգյար, քուր-աղբեր չունի. հետո թափառական կյանք, էստեղ-էնտեղ, կնիկ չունեցավ, տուն-տեղ...

Կամաց-կամաց խավարը նոսրացավ, նոսրացավ, հանկարծ հոգու խորքերից ծագեց արևը – Հայաստան, կռիվ, գործ, փառք, անուն, ընկերներ... Պայծառացավ, սիրտը լցվեց կրակով, ջերմ, լույս, կամք, եռանդ, նպատակ... Ցնցվեց, աչքերը բացեց... Մութն էր սենյակում, բայց հոգում չա՛տ լույս կար. աչքերը չփեց, ճակատը չոյեց, և մեկ էլ ուժգնապես ձեռքը զարկեց օճախի քարին – [40000 Սանամ] Հայաստանի մի թիզ հողը չեմ փոխի 40000 Սանամի հետ... լավ եղավ. էս բանից էլ պրծանք, էլ ցավ չկա, էգուցվանից Հայաստան կերթամ, էգուցվանից թեզը չկա, լավ պրծանք, իստակ. առանց հետևս նայելու կերթամ կռիվ, ո՛չ կնիկ կթողնեմ հետև, ոչ երեխա... լավ եղավ, Աստծու մատը մեջն էր: Հայաստան, էլ ուրիշ բան չկա: Վերջ: Էս էլ էսման:

Եվ ոտքի կանգնեց, ամուր-ամուր գնաց եկավ մութ սենյակի մեջ. պապիրոս վառեց: Ոտքի ձենի և լուցկու լույսի վրա Լորիկը ներս մտավ:

— Վա՛յ, քոռնամ, քավոր ջան, ջուր մաղվավ վրաս, ըսի, քավորիս խելքին բան չեղավ, չունքի էնպես տեսակմ՝ դառաբ. վազեցի մեր մարդուն բերեմ, քեզի հետ լինի, խոսք հասկցնե, ընկա դես ու դեն, ջուդամը՝ [բաղն] խոռ է դնացե... բան ուներ, միտքս ընկավ: Եկա տուն, մոլորվածմ. դրանդ առաջ ականջս ձենի, օրթե ինձի կանչելիր. չէի իշխնա ներս գա, ձենդ առա եկա. վա՛յ, քոռնամ, մթանն ես մնացե...

Եվ լամբը վառեց:

— Քավոր ջան, անոթի կէղնիս, սիրտդ ի՞նչ կուզե, չայ չինեմ, արագ բերեմ, ձվածեղ չինեմ, ձեռաց:

Կարոն.— Մեկ արագ բեր, մեկ բրդուճ պանիր-հաց:

Բերեց, խմեց:

— Երթամ:

— Ո՞ւր: Կեցի դիշերվան, առտվան կերթաս, էս մթանն էլ մարդ տեղ երթա, ի՞նչ է, հավա՞ր է...

— Չէ, երթամ պիտի:— Այնպես կտրուկ ասաց, որ Լորիկի թախանձանքները ջուրն ընկան:

Ձին քաշեց, մնաս բարև ասեց, նստավ ու մութ դիշերով Քիրսի փողոցները դուխյունի և փոշու մեջ թաղելով, քշեց, սլացավ ոչ մի հայացք չձգելով Թորոյենց տան կողմը: Դավաճան, թշնամի տուն:

— Հեռու աշխարհներից Ուստան դառնում է Հայաստան (հայի աշխարհ) կարոտից, զարիբուլթյունից զզվելով:

— Ուստան իրենց գյուղից փախչելիս երդվում է՝ իրենց գյուղ չդառնալ մինչև իր անունը իր անձից առաջ չմտնի գյուղը: Իր հղիթի անունը:

— Ուստեն որոշել էր բնավ չամուսնանալ, իր ազատ գլուխը կնկա հա ու չէի հետ չկապել:

– Աչքալուսանքի երեկոն Ուստան կալում: Կռվել է սուլթանի հետ, սուլթանին զարկել, բայց ինքն էլ վիրավոր ընկել է դաշտում... Բոլորը ուրախ են, ազատվել են, տոն է, բայց մոռացել են նրան. մենակ ընկել է, ծարավ, բերանը չորացած, արյունը [լճացած] քովը [լերդ-լերդած] ծով կապած: Միայն Սանամն է հիշում, տեսնում և լալիս...

– Լորիկը սկզբում Սանամի մասին ասում է թե՝ քավոր ջան, Սանամը գլխակեր կնիկ է: Էնոր համար երկու կտրիճ խելառան, խաղցող է, սատանա է: Հեռու կեցի, ես քեզի համար լավը կգտնեմ... Հետո երբ Սանամը դավաճանում է՝ Լորիկը հիշեցնում է իր նախազգուշացումը:

– Երբ Թորոն մերժում է Սանամին տալ Ուստային, Ուստան ձին նստում, թռնում է Քիրս այն մտքով՝ որ Սանամի հետ խոսք կապե և գիշերը փախցնե, տանի Բվիկ ու պսակվի... Սանամը Լորիկին ասում է՝ ես Ուստային չեմ ճանչնա, Ուստան վո՞վ է, ինչացու է: [40000 կարոյի] Մինա աղի մեկ մազը չեմ փոխի 40000 կարոյի հետ:

Երբ Լորիկը ասում է Ուստային (որ օթաղում անհամբեր սպասում է պատասխանին և անպայման դրական պատասխանի և մտմտում է առևանգման մանրամասնությունների մասին) Սանամի լիրբ պատասխանը, Ուստան հարցնում է.

– Ով կըսե էդման բանը:

– Սանամը:

– Ո՞վ,– կրկնում է Ուստան:

– Սանամը, մազ կտրած Սանամդ...

– Դու ի՞նչ ըսիր,– հարցնում է Ուստան:

– Ես ըսի, ի՞նչդ չես ճանչնա, դուն չէիր բաղի մեջ Ուստայի գիրկը նստողը, թե՞ ես էի, դու չէի՞ր գոմի մեջ. ես որ չէղնեի, Ուստան բմբուլդ երկինք էր հասցրել... ինչ

ասեմ, քավոր Ջան, ուտող-ուրացող է, ես չէի՞ ըսե՝ էն գլխեն...

Ուստան չուզեց մնացածը լսել, ձեռքով նշան արավ, որ Լորիկը դուրս գնա: Լորիկը գնաց Թե չէ, Ուստան գլուխն առավ ափերի մեջ, արմունկները ծնկներին և սուզվեց իր մեջ: Սկզբում ոչինչ չէր մտածում, ապշել, քարացել, շշմել էր. մի պահ հետո գլխում անդադար դառնում էին Սանամի խոսքերը՝ լիրբ, դառն, կծու, կիզիչ, թունոտ: Կրկնում էր, բայց չէր հասկանում իմաստը... Երբ ղգաց իմաստը, մի խավար դարանվեց հոգում և բոլոր աշխարհի վրա, և իր անցյալի վրա, և իր ներկայի ու իր արագայի: Հայաստան, կռիվ, անուն, փառք:

Մութ գիշերով կտրեց ճանապարհը, մտրակելով ձին և գլխի մեջ միայն մի միտք՝ վաղվանից պատրաստվել ճամբա ընկնել...

Կես գիշերն անց էր, երբ Նախճվան հասավ. Ջավուշը շորերով կես-քուն, կես-արթուն, ելավ, ձին բռնեց, հարցրեց.

— Տղա՞ ես, Թե՞ աղջիկ:

— Տղամարդ եմ,— ասաց,— հազար տղամարդ. ձին տար գոմը, կեր տուր, արի կպատմեմ:

Ջավուշը կարծեց, Թե վախցնելու գործը հաջողվել է, և Սանամը խոսք տվել է, և այլն:

Երբ գոմից դուրս եկավ, Ուստան պատմեց իր վճիռը, Ջավուշը տխրեց. չէր ուզում Հայաստան գնալ. բայց Ուստայի կամքից չէր կարող խոտորել:

Առավոտ, գյուղում արդեն ձեն-ձենվեց, որ Ուստան գնում է Հայաստան:

— Ուստան որոշելով Հայաստան գնալ իր ծրագիրը շրջիկին չի պատմում, այլ որոշումը, միևնույն ժամանակ Անի գնալիս ճանապարհին շրջիկին հարցնում է Թե՝ սուլթանին ինչո՞ւ չի սպանում դաշնակցությունը, կոմիտեն,

չրջիկն էլ թե՝ չա՜տ դժվար գործ է, որովհետև էդ գազանը պալատից դուրս չի գալիս, գալու ժամանակ էլ մեծ զորքով է շրջապատված լինում, հնար չկա, տեռոր անկարելի, անհնար է... Այս մտքի վրա Ուստան մտածում է զորքով գնալ և կռվել, հաղթել, բռնել և իրեն ոսկի թախտի վրա կախել...

— Ուստան արտաքսման դիշերը ճանապարհներով չի գնում, մեկ՝ որ մարդ չպատահի, հարց ու պատասխանի մեջ ընկնի, երկրորդ՝ որ չէր ուզում գեղացոց ոտ կոխած տեղը ինքը ոտք դնե:

— Մրենում Ուստան անորոշ, տարտամ, անվճիռ վիճակի մեջ էր, մի տեսակ չշմած, չփոթված, և ինքն իր մեջ դարձած, սուզված, լսում էր Զավուշի խոսքերը, բայց բան չէր հասկանում... սակայն մի բան բանտում էր մեջը, քանդում ու չինում...

— Մրենում, երազով գնաց Հայաստան: Կանգնեց քարի վրա և կրակեց ռուսի և թուրքի վրա: Նրանք կրակեցին միասին. համազարկ. Ուստան ընկավ՝ ասելով. ես [ընկա] զարկվա [յարաբ նրանք էլ զարկվան և տես], որտեղ Հայի արյունը թափավ, էնտեղ Հայաստան է...

Եվ զարթնեց, զգաց, որ երազ է. աչքերը գոցեց, նորից երազեց... տեսավ եկան և կողոպտեցին, տեսավ իրեն ընկած մեջքի վրա, տեսավ եկան երգով ու դրոշակներով և մարմար քար դրին վրան (թաղեցին) և գրեցին վրան տապանագիր... Զարթնեց և տխրեց. ի՞նչ կնշանակե այս երազը, ի՞նչ խորհուրդ ունի...

Արդեն լուսացել էր. վեր կացան, թեյ: Ուստան ակամա խմեց... Եկավ Հարուքը.

— Վա՜յ, Ուստա ջան, դուն էսպես պատերի տակը... ել երթանք ջաղացս, ջան ասենք, ջան լսենք... անիծած աշխարքի հերն ու տերը:

Ճաչեցին, երգեցին... գնացին բերդը: Կարոն ասաց.

— Աչխարքի չորս կողմից էլ գուրկ մնացի... Հեր ու մեր չունեցա... սերս կորցրի, սիրած յարս: Բարեկամներս քշեցին գյուղից, խայտառակեցին, Հայաստանի կողմից էլ, կոմիտեի կողմից էլ, ազգի կողմից էլ՝ զրկեցի...

Հարուքը հուզվեց, որովհետև Ուստան հոգու ձայնով ասաց իր մեծ վիշտը, և ասաց, էլ հանդաստան անենք, աչխարքի չորս կողմն էլ անիծենք...

— Հարուքի տեսած օտարուհին մութ կապույտ աչքերով աղջիկ էր, ծովի գույն աչքերով, և խարտյաչ:

— Հարուքը մտածում էր, քանի որ մարդ իրան չի կարող սպանել, լավ է, որ խմե, խմե, ու խմած երազե սրտի ուզած բաները, սրտի ուզած աչխարհը: Հեքիաթ, երազ, գեղեցիկ սուտ, պատրանքներ...

— Կարոն: Տո, մարդասպան, աչխարհասպան, Աստվածասպան Հարուք, ամեն բան քանդեցիր, էլ ի՞նչ մնաց:

Հարուքը: Ես ու դուն, ու ջաղացս, հերիք չէ՞:

— Աչխարքը որ կործանի, ջաղացդ ի՞նչ կմնա:

— Ես ու դու կմնանք, լավ կէղնի:

ԲԱԳՐԱՆ
ԲԱԳՐԱՆՈՒՄ

2. <ՀԱՐՈՒԹԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ...>

— Հարուքի մանկությունը:

— Ջաջուռի համալսարան:

— Գարեջուր:

— 60 տարի:

– Զարչի:

– Ուզես-չուզես՝ պիտի ծերանաս, պարես-ճչաս, էլի պիտի ծերանաս, նստածդ, քնածդ տեղն էլ պիտի ծերանաս:

3. <ԹԱԼԻՆՑՈՒ ՄԱՀԸ...>

Թալինցու մահը Հարությին ճզմեց, դողաց, թևերն ընկան, Զավուշի հետ տարան, պառկեցրին, չայ տվին, քնեցրին: Ուստան ասաց, Զավուշ, դու մոտը կաց, երթամ տեսնեմ ի՞նչ եղավ գեղը, ժողովուրդը. ուխտը գլխներս դառն եղավ:

Գնաց: Հարությի տեսիլը, զարթնում է, խրտնած, և փախչում է մոր մոտ, Զավուշն էլ հետևից: Առավոտ վաղ նա մեկնել էր մոր հետ՝ առանց մնաս բարևի ո՛չ Կարոյին, ոչ Զավուշին...

4. <ՋՈՒՌՆԱՋԻՆ...>

[Ջուռնաչին վարը, վերը, առանց ձեռքերի. դավուլչին՝ շորորելով չաբաչը դավլչու ճակատին]:

[Թասը ծոծրակին դնել:

Բղավեց Քյոռօղլին:

Ձեռքը ծոծրակին դրած փսփսում էր]:

Թալինը սահմանակից է Մաստարային:

5. <ԿԱՐՈ. ՏԵՍ...>

Կարո. Տես մայրերը խելառան, մազերը փետտեցին, Աստծուն հայհոյեցին մորթվող տղաների ցավից:

6. <ԿԱՐՈ ՋԱՆ...>

– Կարո ջան, ել երթանք ժուռ գանք, աշխարհ տեսնենք:

– Ջէ, Հարութ ջան, ես ժամանակ չունեմ, Հայաստան պիտի երթամ:

– Դեհ, Հայաստանն էս աշխարքի մեջն է, հո դուրսը չէ, ել, էն էլ կտեսնենք:

Ուստան համաձայնեց:

7. ՀԱՐՈՒԹ-ԿԱՐՈ

Իմ ուզած աշխարհը մտքիս մեջ վաղուց չինել-պատրաստել եմ, մնում է Աստծունը քանդել, իմս դնել տեղը:

Հարութը ասում էր. Ես իմացա աշխարհի ուղն ու ծուծը, արմատը տեսա – ցավն է, չարն է, գեշն է, մարդու համար մահն է. ու ոչ մի դեղ ու ճար չկա. պիտի քանդել այս աշխարհը հիմքից, նորը չինել:

Երազի մեջ ես աշխարհը կտեսնեմ, ինչպես որ կուզեմ. ամեն բան կլինի սրտիս ուզածի պես. իմ աշխարհը կլինի – իմ ուզած, չինած աշխարհը:

8. ՀԱՐՈՒԹ-ԿԱՐՈ

Հարութը.– Խառնեմ ողջ աշխարհը իրար հետ. արև, աստղեր, լուսնյակ, ծով-ցամաք. խառնեմ, շաղվեմ, տրորեմ խմորի պես, ու զարկեմ Աստծու երեսին:

Երազի մեջը՝ աշխարհատեսություն:

9. ՀԱՐՈՒԹ

— Մրոտի պատմությունները — ջարդերը:

— Մատաղների մորթումը. մորթված ոչխարներ, խոյեր, հորթեր...

Տխուր, անհունության տխրությամբ, ցավագին տեսք ուներին մորթված մատաղները: Հարությը նայեց և սիրտը մղկտաց: Զգաց աշխարհի ծանր դառնությունը՝ ապրելու համար պիտի ուրիշին ուտել: Փրկվելու համար պիտի ուրիշին կորցնել:

— Սերը Հարության հոգում փորեց վշտի անդունդներ, զգացմունքի և ըմբռնումի խորություններ[1]*:*

10. ՀԱՐՈՒԹ, ԿԱՐՈ, ՄԱՐՈՒՔ

Ուստան Մարուքի մասին լավ գաղափար ունի.— [Մարուքս էլ իմաստուն տղա է, Հարությիս կիսու չափ խելք ունի]:

Հարության մոտ կգովե Մարուքին, ինչպես և Մարուքի մոտ կգովե Հարությին:

Խոսքի մեջ միշտ կըսե — Հարություս, Մարուքս:

11. ՀԱՐՈՒԹ

— Սերը լավ է, ինչու որ էն մոռացություն կբերե մարդու հոգուն:

---

[1] Բնագրում բառը կրկնված է՝ ավելի հստակ գրությամբ:

Սիրո մեջ թունդ գինի կա. կնկա մեջ գինի կա:

Երեկվա օրը մեռելինն է,
Այսօրվա օրը՝ քուկդ է,
Վաղվա օրը՝ վաղը ապրողինն է:
Երեկը չկա, այսօրն է որ կա, վաղը – հույսինն է, հուսալու է:
– Մոռնալու է այս աշխարհը:

12. ՀԱՐՈՒԹԸ

– Ուստա, աշխարքի բոլոր գումար կնիկները ինձի տան, չեմ կշտանա:
– Բագրան: Նստել էին մարդ ու կնիկ, պստիկ երեխայով, պատի տակ, հաց էին ուտում. կինը հավկիթը մազով կտրեց կես արավ, կես<ը> տվեց մարդուն:
Հարութն ասաց. Էդ սիրուն հարսը օրթե գիտնամ թե էդ մազով ինձի կկիսե, դիրկը կերթամ կընկնիմ:
Էդ մազով ինձի կրնա կիսե:

13. ԿԱՐՈՆ

– Հարութ, ի՛նչ անուշ, ի՛նչ թունդ բան է եղել սերը. նոր կիմանամ:
– Սոնային տեսա, աշխարքի կնիկները մոռցա:

Հարութը Հրեղենն էր պահանջում, խմած. Ուստան նկարագրում էր այս ու այն...

Հարութը չէր հավնում. կարոն նեղացած ասաց.

– Ջկա, իմացար. ես քեզ համար Հրեղե՞ն դառնամ... ասածդ ի՞նչ է...

14. <ՕՐԵՐԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ...>

Օրերի ավերակների փոշիով լեցուն.– աչքերի մեջ ապրած օրերի պղտոր փոշին:

– Հողաբույր ծիրանի:

– Օրթե Հարութը երբ Հրեղենին տեսավ – չիմացավ ապրում էր, թե մեռնում:

– կարո, մեկ-մեկ ես էլ կուզեմ թվանքն առնեմ ու քարի տակ չոքեմ: Բայց մեկ էլ էդ բանի մեջ միտք չեմ գտնի:

– կարո, քու ինչ գործն է ազգը. գործիդ աչե:

– Ազգի գործը – իմս ասել է:

Մտածելը ցածր խոսել ասել է:

Խոսելը՝ բարձր մտածել: (Ջայնի նկատմամբ):

15. ԵՐԱՋԻ ՄԵՋ՝ ՍԱՐԻ ԳԼՈՒԽԸ

Հարութն ու կարոն նայում են աշխարքի աղետին, ոճիրներին, սրիկաների, լրբերի գազանություններին...

Հարութն ասում է. կարո, մինչև աշխարքի վերջը էսպես պիտի լինի. լրբեր, գազաններ, արյուն, ջարդ, կոտորած...

16. ԱՍՈՑԻ ՄԱՀԸ

Կնիկը կլցնեն աչխարքը, մահը կդարտկե:

Այնինչ ուրիշները պիտի կյանքը վայելեն, ուտեն, խմեն, քեֆ անեն. կնիկ, պար, երգ, ձի, գինի...

17. <ԿԱՐՈ, ՕՐԹԵ...>

— Կարո, օրթե Աստծուն սպանեմ, ինչ կդառնամ:

— Աստված:

Հարուքը [Բագրանից հետո] մտածելով, մտածելով դառնում է անաստված. աչխարհը պատուհասված է ու պատուհաս, Աստված չկա, ես Աստված սպանեցի:

Մրեն. երբ Հարուքը նզովում է աչխարհը. վեր-վար, երկինք գետինք, Կարոն ասում է.

— Մարդասպան, <անընթ.> Աստվածսպան Հարուք, էդ ինչ արիր, էլ ինչ մնաց...

Ես ու դու, հերիք չէ՞, էլ ոչ աչխարհ կա, ոչ մարդ, ոչ Աստված...

Տեսիլի մեջ Ուստան ուզում է սուլթանին սպանել. չի կարող, իսկ Հարուքը Աստված է սպանում, նա սպանում է, Աստված չկա...

– Զարթնելիս խոսում է ինքնիրեն, Ուստան չկարողացավ սուլթանին սպանել:

– Նեռն է, Նեռն է, աչխարհանցում, փախեք, մի լսեք նրան, սուտ հրաչքներ պիտի անե, մի հավատաք, սատանայի ընկերն է, սատանան է, իրեն Աստված է հաչվում, մի <անընթ.>եք, փախեք:

18. <ՈՒՍՏԱՆ ՊԻՏԻ ԹՈՂՆԵՐ...>

– Ուստան պիտի թողներ իր բույնը, որ չինել էր ի՛նչ երազներով ու տենչանքներով: Սիրել էր ամեն քարն ու անչունչ իրը. որ ամենքը իր զրույցն ունեին, անգին հիշատակներ, հուչեր:

– Կանայք գետափին լվացք էին անում:

– Խելառ էր, կապելու խելառ:

Բայց խելառ ասելով բանը չի վերջանում. խելառների խելառը:

– Մարդ չի կրնա աչխարքի գանձերն ու հրաչքները մենակ երկու աչքով տեսնել:

19. <ԻՐԵՐԸ ՔԱՅՔԱՅՎՈՒՄ ԵՆ...>

Իրերը քայքայվում են, իրերը կայուն չեն, քայքայվում են, լուծվում ամեն վայրկյան, սակայն մեր աչքերի համար պահելով իրենց ձևը. այնպես ինչպես մի արև (Սիրիուս կամ Արջի մեծը) թռչում է վայրկյանի մեջ

100000, բայց մեր աչքում երևում են անփոփոխ և նույն ձևով:

Հարբած մարդ. աչքերը կիսաբաց, քայլում է օրորվելով կցկտուր խոսում է իր հետ.

— Նա բացարձակապես իր հետ է, իր աշխարհում, մեր աշխարհից — ժամանակից դուրս, ամբողջովին իր գլխի մեջն է, իրենով է լցրել սլեզերքը, ինքը հարցնում, ինքը պատասխանում:

20. <ԳՅՈՒՂԱՑԻՔ ԻՆՉՊԵՍ...>

— Գյուղացիք ինչպես Ուստայից թյություն էին խնդրում, գանազան ձևերով:

— Պոտոսի մայրը.— Կարո, կնիկ առ. տուն երթաս՝ երեսիդ խնդացող կըլնի:

— Երբ Բագրանում մաստարեցին գլխապատառ ընկավ մեռած, Ուստան վախեցավ մահից.— «Ի՛նչ ահռելիկ բան է եղել [մահը] մեռնելը», և իր ներքին անկեղծության մեջ խոստովանեց մի պահ, որ ինքը քաջ չէ: Կռիվ ո՞նց պիտի երթա...

Բայց մի վայրկյան:

21. <ՄԵԿ ՄԱՐԴՈՒ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ...>

— Մեկ մարդու հարցնում են, մի ծեր հայ մարդու:—

— Աշխարքի վերջն ի՞նչ է:

— Աշխարքիս վերջը մարդու/մեր վերջն է:

– Նա, այս տղան, Թիֆլիզի հայ, Մոցարտից հետո ա-մենա-աբսոլյու կամ աբսոլյու ականջ ունեցողն է. լսելիք:

– Ս. <...սիսի> մեծ վանքը մի ամբողջ երաժշտություն է, մի մուզիկա:

– Թաչկինակը ինչպես ծխնու վրա դառնում էր, պարը Ուստա Կարոյի:

22. <ԷՆՊԵՍ ՀԱՐԲԵՑԻՆՔ...>

– Էնպես հարբեցինք, որ աշխարհը մերը դարձավ:

– Էնպես ուրախացավ, աշխարհը իրեն տվին:

= Հյուր կընդունե՞ք:

= Հյուրն Աստծունն է...

– Նույն, նույնացած, նույնանալ = միևնույն բանը դառնալ. ես ու դու նույնացանք:

– Հոգեհմա:

– Միատարր. նախարարություն:

– Ավետազանգ:

– Կարենալ = կարողանալ:

– Սիրաբույր:

– Ալիքները գալիս էին, սկիզբը թույլ, ապա որոշ-որոշ կշեշտվեին:

23. <ՈՒՍՏԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ...>

Ուստան վերջին անգամ Սանամի մոտից գալիս, մերժ-ված...

Զավուշն անքուն սպասում էր Ուստայի գալուն: Ուստան կես-դիշերն անց, ձին արագ քշելով, աղմուկով, թափով իջավ իր այվանի դուռը: Զավուշի սիրտը թնդաց. իրեն թվաց թե Ուստան հաջողություն է ունեցել, որովհետև շա՛տ աչխույժ կերպով եկավ, թռավ վար...

Զավուշն ելավ դուրս, անհամբեր.

— Վարպետ ջան, տղա՞ ես, թե՞ աղջիկ:

— Տղա եմ, տղա, տղամարդ-տղա...

— Ըսել է՝ էգուց դուռնան պտի փչենք:

— Ջուռնա էլ, <անընթ.>, թուխ էլ պտի տրաքեցնենք...

Եվ ներսը մխայն պատմեց իր ծրագիրը:

— Վաղը թո՛ղ դեղ ու քաղաք իմանան, որ Հայաստան պիտի երթանք:

(Զավուշը տխրեց):

24. <ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ՇԻՆԵԼ Է...>

— Ուստա կարոն չինել է 11 աղբյուր, 15 կամուրջ, X տուն, X ջաղաց, ամպար — և այլն, և այլն[1]:

25. <ԹԵԵՎ ԴՈՒ...>

— Թևև դու ծաղիկի (վարդի) պես գունատվել, թառամել ես, բայց բուրմունքդ ավելի անուշ է դարձել, ավելի զորեղ, թառամած ծաղիկների պես:

— Նախատեսել կնշանակե կառավարել և ընդհակառակը (կառավարել՝ նախատեսել):

---

[1] Գրութեյանը հաջորդում են հաշվարկներ ծախսերի մասին:

– Դանակով կկտրեն (կխոցեն), բամբակով կծածկեն (կգոցեն): Հար և նման՝ գլուխը կտրեցին, հիմի կսանդրեն:

– Ես մտովի ասացի՝ նա հիմար է:

– Աննախա<պա>չար մարդ, վերաբերմունք:

– Այս խուսափելու մի ձև է, եղանակ է:

– Ազնվական նահատակ, գործ, վարմունք, բնավորություն:

– Կյանքի վախճանականություն:

– Մեռելանալ. քաղաքը մեռելացավ, մեռելացած քաղաք = մեռած, ջնջված, ավերված:

– Հարկահարկ չենքեր:

– Ժման = ժամին, ատենին:

– Ժղլանք = մանր-մունր գիտելիք, զբոսանք: Դրանից ժողովրդական ձևը. ժղլվել = զրույց, խոսք, զավզակել:

– Էս աշխարքը երկու օր է,
Մեկը կարմիր, մեկը սև.
Կարմիրը անցավ-գնաց,
Մնացածը սև է, սև:

– Դահ = հնացած. դահանալ. դահնալ:

26. <ՆՐԱՆԻՑ ՀԵՏՈ...>

Նրանից հետո՝ ունայնության գաղափարը, մահը,– այդ եղավ Հարութի աչքում իմացության սկիզբը, սկիզբն ու վերջը...

Դարդ մի արա, քանի մահ կա,
Լաց, քանի որ մահ կա,
Սիրիր, [քանի որ] մահ կա,
Մի սիրիր, մահ կա:
Քեֆ արա, մահ կա,

Էսպես թե էնպես՝ մահ կա,
Հաշիվը մեկ է, մահ կա:
Բայց և այնպես, սատկած առյուծը՝ չունը:
Եվ ապրում էր դեռ հույս ունենալ<ով> Հրեղեն տեսնելու,
Որ անմահն է, <անընթ.> բանն է:
— Հարուրթի մտքերի աշխարհը կենտրոնացավ այդ մահ գաղափարի չուրջը, որպես առանցքի չուրջ, ինչ որ անում էր, այդ գաղափարից էր ղեկավարվում, այդ էր շարժում նրա կյանքի անիվները:

27. <ԲԱՐԵՎ ԲՈՒՆԵԼ...>

— Բարև բռնել կանգնել էին Ուստայի առաջը. Բագրատում:
— Աշխարհը ամեն օր ծնվում է, ստեղծվում է և ամեն օր իրեն սպանում:
— Աշխարհն ինչպե՞ս գիտես:
= Սրտիս պես:
Աշխարքը մարդ ինչպե՞ս գիտե,— իրան սրտի պես:
— Ղուկաս աղի աչքը բաց է,
Խիղճը՝ գոց:
Միտքը բաց,
Սիրտը, խիղճը՝ գոց:

28. <ԱԿԱՆՋՆԵՐԸ ԼՈՇՏԱԿ...>

— Ականջները լոշտակ:
— Ո՛վ Սուրբ Գէորգ, առանց սանամոր էս սարի ծերին ինչպես կապրես:

Հարուքը Բագրանում՝ Ուստային կատաղեցնելու համար:

– Քյաչալ Մաղաք,
Նստի մարաք
Կարծե թե ինք
Արժե աչխարք:

29. <ԿԱՐՈ, ՀՈՂՆ ԷՆ ՄԱՐԴՈՒ...>

– Կարո, հողն էն մարդու գլուխ, որ կնիկը գիրկը բացել՝ կանչում է ու նա չի գնում:

– Բագրանում տեսնելով ազատ քաղաքացի «օրիորդները» Հարուքին է ասում՝ Կարո, այ էն հարսը օրիորդ է, կամ՝ նայե էս օրիորդին՝ ինչ լավ հարս է... Քաղաքացու աղջիկն ու հարսը չես կրնա ջոկել, մինչի չփորձես, Կարո, ամենքի էլ երեսը բաց է:

– Հարուք, հարսի կնկա երեսը բա՞ց լավ է, թե փակ:

– Ուրիշի համար փակ, ինձի ու քեզի համար բաց էլնի՝ լավ կէլնի...

Վեճ այդ մասին:

– Հարուք, հարստուքյունը լա՞վ բան է:

– Ինչ խոսք, հարուստ էղնիմ, աչխարքի հերն անիծեմ, ամենքի կնտոցը հեծնեմ, գինին կոնծեմ:

30. <ԵՐԱԶՆԵՐՈՎ ՔՈՒՆ ՄՏԱՆՔ...>

– Երազներով քուն մտանք,
Առանց երազի զարթնանք:

– Հարուքը՝ երբ ընկավ մաստաւեցին – Տեսա՞ր ոնց բլավ էս մարդը, էնոր համար էս սհաթին՝ ողջ աշխարքն էլ բլավ:

31. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ

– Բադրանում, երբ Ուստան պարում էր Սոնայի ձեռքը բռնած, մի-երկու կին՝ նկատելով՝ իրար մեջ բամբասում էին՝ խորհրդավոր հայացքով նայելով նրանց:

32. <ՀԱՐՈՒԹԸ ՄՐԵՆՈՒՄ...>

– Հարուքը Մրենում, աշխարհի դատաստանը կատարելիս, վերի և ներքևի եղած աշխարհը անիծելիս, խոսում էր արագ-արագ, խեղթացած, ջղայնացած և չէր լսում Կարոյի սարսափած ճիչերին:

– Սոնան անկեղծ էր սիրում Կարոյին. բայց երբ իմացավ, որ Հարուստ մարդ կա իրեն ուզող և լսեց, որ Կարոն մտադիր է Հայաստան երթալ՝ թողեց, լքեց նրան: Դավաճանեց: Սոնան[1] ասաց, 40000 մարդու հետ չեմ փոխի Ուստա Կարոյի բեխի մեկ մազը. հետո էլ ասաց, 40000 Ուստա Կարոյի հետ չեմ փոխի Մինա աղայի բեխի մեկ թելը [ի հետ]:

Ուստան էլ խորհելուց հետո ասաց մտքի մեջ գրեթե բարձր խոսելով, մենախոսելով. [40000 Սոնա կնիկ չեմ փոխի] Հայաստանի մեկ թիզ հողը չեմ փոխի 40000 Սոնա ու կնկա հետ:

---

[1] Բնագրում՝ *Սանան:*

Երբ Լորիկը տխուր լուրը հաստատեց՝ այսինքն Սանամի մերժումը, դավը, Ուստան լսեց և ապա ձեռքի մի նշանով հասկացրեց, որ Լորիկը իրեն մենակ թողնե, ու ինքը փուլ եկավ իրեն մեջ. ժամերով կռծեց, ծամեց իրեն հոգին վշտի ատամներով... մինչև հասավ իր վճռին. իսկույն թռավ կեսգիշերին ձիու մեջքին, գնաց Նախճվան, և հասած վայրկյանին Ջավուշին հայտնեց, որ առավոտ հենց կանուխից սկսեն պատրաստվել Հայաստան գնալու:

33. <ԲԱՑ ԵՍ ՄԵԾ ԳՈՐԾ ՈՒՆԵՄ...>

18.[1]

<...> Բայց ես մեծ գործ ունեմ, էդպես մանր-մունր բաները հեչ. ինձի համար է՛լ Սանամ չկա, մենակ Հայաստան կա:

– Մարուքի մոտ Ուստեն հեռվից հեռու Սանամի մասին հարց ու փորձ կենե. կխոսի Թորոյի մասին, նրա կնոջ, աղջկա, ձիու, մալի մասին և այլն.

– Կարո, էնոր էն ազիզ ապրանքը աչքիդ չընկա՞վ:

– Ո՞րը:

– Հարսը:

– Հա, որբևերին:

– Տեսա՞ր, ի՞նչ մալ է:

– Գեշ չէ:

– Էդպես սիրուն հարս դու ո՛չ Հնդստան ես տեսել, ո՛չ Զինմաչին:

– Էնպեսներին եմ տեսել, որ դու երազիդ մեջ էլ չես տեսել:

---

[1] *18-ը տետրից պոկված թերթիկի էջակալումն է:*

— Չէ, Ուստա, աչքիս տեսածը երազից վեր է. լավն է, լավն է, հմա խաղցող է, չա՜տ տուն է քանդել, չատի աչքը ծուվ դարձրեց, չատի մուրազը չորցուց...

(Ուստեն մի ժուրի վախ ղգաց, բայց ետև իրեն սիրտ տվավ. «Հոգին բռիս է, իմ թոռս ընկավ, ես էնոր համար քար ու ապառաժ եմ, հետս չի կրնա խաղա»):

— Է՛յ ջան աղջիկներ, որ գարնան խնճորի պես սիրուն կծաղկեք,

Է՛յ ջան հարսներ, որ աշնան խնճորի պես անուշ կհասնեք:

— Սմրղանդը կռվի մեջ էր մտել [Հաբաշի] Մսրա հետ:

— Հնդուքուշ երբեք մեր ժողովուրդը գործ չի ածի, իսկ Հնդու Յաման գոյություն չունի: Ուստի աշխարհագրական տեղերն են — Մսր, Արաբըստան, Հաբաշ, Սպահան, Ղանդահար, Բաղդատ, Սմրղանդ, Հինդ ու Հաբաշ, Հնդստան, Զինմաչին, Յրանգստան, Ինգիլիզի աշխարհը, Օսմանլու հողը:

— Հարուքին ասում է, ես ուսում չեմ առել, բայց իմաստուն հոգով եմ ծնվել. իմաստունը մեծ ցավ ունի, չա՜տ բան գիտցողը, չատ ցավ կունենա:

— Հարուքը երբեք չի ասում, թե Աստված չկա, մեր ժողովուրդը անաստված չէ, Հարուքի կարծիքով Աստված կա, բայց լավ Աստված չէ:

— Կարոն միշտ խրատական տոն ունի, միշտ առածներ կասե, միշտ կփիլիսոփայե:

— Կարոն է բերել Զուչվոց աղբյուրը, քար ու ապառաժ վառոդով փշրել ու բերել. այդ պատճառով էլ նա միշտ կպարծենար. ուրեմն — տուն չինող, ջուր բերող, հոր փորող:

— Հարուքին ասում է, ես օր ու գիշեր մահի մասին եմ մտածում. գլխավորը մահն է. մահն է որ աշխարհը սուտ,

երազ ու չեղած ու հեքիաթ կդարձնե: Տես, էս ոչխարը կա. ես <...>[1]

34. <ՀԱՐՍՆԵՐԻՑ ՎՍՏԱՀ...>

— (Հարսներից վստահ պաչ ուզիր. ուզողի մի երեսը սև, չվողի — երկու երեսը, ախր [աղմուկ] կռիվ կսարքեք, գլխներին թռփ կենեն գեղը: Բ<ագրանի> ուխտը:

— Հա, օրթե մարդ տեսնի, օրթե չտեսնի, ինքը թռուչը բերանը կդնե):

— Ա՛յ Հարս, ինչ կա, որ ձենդ աչխարհք ես քցել. պաչ ուզեցի, խո հոգիդ չառա, չես ուզում, չէ՛ — իմը ինձ, քոնը քեզ, պրծանք): Բագրանում:

Խոսում են երկու մարդ իրար հետ.

— Էս էլ հետի տարով չորս ոտնանի եղանք, անուշ չնչի տեր եղանք, կարճ ետև էլ ուրիշի դուռ ժամանականժամանակ չենք ծեծի ու կամ գող կատվի պես ներս սլա՝ խալխի պանիրը գողնալու. հիմի մենք չաթանով առանք, լցրինք մեր մարագը. հանգիստ, արքով, հալալ սեղան նստած կամաց-կամաց կծամենք:

— Հա, լավ է կնիկ ունենալը, համա սիրեկան ունենալը միշտ աչխարքից փրթել փախցնել է:

— Հարութ, էդ խեղճը չիտե, որ մեզ պես ուստա մկներ կան, որ կմտնեն էդոր մարագը...

(— Կարո, հարսների երեսը ծածկում են, որ էն մարդ աչքով չենե, չխոսի՝ մարդու համոզե. բերանը կապում են, որ պաչ չտա. [չա՛տ խելացի են եղել մեր պապերը]

---

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

կինը սատանա է, մարդու կբռնե, կհարբեցնե. կնոջ գիրկը — սատանի դրախտն է. օրթե մեր պապերը խելոք չէղ-նեին, լավ կէղնեը. էղ քաղաքի հարսները՝ երեսները բաց — քաղաքի երեսին կխնդան, պաչ կուտան ու կանցնեն...)

35. ՏԻԿՈՐ

Խծկոնքից երեք վերստ Հեռավորութեամբ:

Ունի և ավերակ բերդ:

Ունի և մահմեդական բնակիչներ:

Նախճվան գավառակի կեդրոնն է, վարչանիստը:

Տիկորը հիշվում է պատմութեան մեջ 724 թվին, երբ Վաղարշապատի ժողովում (ըստ Հովհաննես Սարկավագի) Հովհան Օձնեցին տիկորցի Հովհաննեսին կրոնի մեջ մոլորված լինելուն համար մերժեց ներկա լինել, մասնակցել:

Հարութի հորեղբայրը հիշում է այս դեպքը և ասում է, որ երևի Հովհաննեսի հոգին մեջն է, սատանայական հոգին, անշուշտ:

Բագարանը, ձորի միջի եկեղեցին Բագրատունի ցեղի դամբարանն է եղել:

— Կաղզվանում վաճառականները և արհեստավորները գլխավորապես Ալեքսանդրապոլցի են:

Ինչպես և Ուստա Կարոյի մեջ Նալբանդ Ալեքը:

— Կաղզվանից երևում են Զանկլի լեռը, Մամասա սարը, Վարդհեր լեռները: Ինչպես և Մրենից, Նախճվանից են երևում:

36. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Երկու կին (տարիքոտ՝ 45-50) իրար գլուխ գլխի տված նստել էին պարի ժամանակ (Լաչիմ-Նանա) մեկուսի և բամբասում էին սրան-նրան.

— Օխթը տաշտից հաց ուտողները իրար գտել են, Ուստան ու Սանամը...

Եվ առհասարակ ուրիշ բամբասանքներ. ոչ միայն կարոյի, այլև ուրիշների:

Բնորոշ, կարճ գծելով:

37. ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք, անուշ ձայների քնար.
Սուրբ հիշատակների վայր.
Սիրող սրտերի պարտեզ:

Հայրենիքի, Հայաստանի լեռ ու ձոր, բուրգ ու բերդ,
Քաջության դպրոց:

38. ՈՒՍՏԱՅԻ ՀԱԳՈՒՍՏԸ

Աշխատանքի ժամանակ մեծ, հաստ գոտի, իսկ տոն-ա-զատ օրերը արծաթե կամար-գոտի:

6. Լաչիմ նանա:

7. Կարո-Հարութ կռիվն ու հաշտությունը:

8. Մաստարեցին[1]*:*

---

[1] Համալրակալված այս տողերից հետո հեղինակը սեղ է թողել՝ լրացնելու համար:

39. <ՀԱՐՈՒԹԸ, ՏԱՐԻՆԵՐ...>

ՀարուԹը, տարիներ կար, իր ջաղացից դուրս չէր եկել: Հիմա Ուստայի սիրու համար, նրա պատվի համար համաձայնեց Բագրան գալ: Աչխարհը, մարդիկ նրա համար հիմա նոր բաներ էին, հետաքրքիր նայում էր չուրջը: Վաղուց բան չէր տեսել: Ապրել էր երևակայուԹյամբ, և իր կապը դրսի աչխարհի հետ ջաղացը եկողների միջոցով էր պահել:

40. <Ի՞ՆՉ ԱՉԳԱԿԱՆ...>

— Ի՞նչ ազգական. կամուրջից անցել են, մեջք-մեջքի են դիպել:

— Ախ, բոլոր հարսներին գրկեի ու մեռնեի:

— Դաչտի ծաղիկներ, կապույտ, կապույտ՝
Սանամի աչքերի նման,
կարմի՛ր, կարմի՛ր դեղձեր, նռներ...
Սանամի պռունկների նման
կարմիր հյուԹալի...

— Հին ժամանակ նչանավոր էր և երկյուղ ներչնչող պարսկին ու հույնին — հայոց այրուձին:

41. <ԵՐԲ ՈՒՏԱՆ ԼՍՈՒՄ ԷՐ...>

Երբ Ուստան լսում էր աչուղին և հետո փողերին (դյուդյուկները), սիրտը տակնուվրա էր լինում, ծփում էր հոգին անհուսուԹյան մեջ. սև, խավար: Մի սև ալիք բարձրացնում էր սիրտը և ձգում մի ուրիչ ալիքի վրա:

Լալիս էր հոգին. ամեն բան աչքին երևում էր ունայն, անմիտ, անցավոր, սուտ, երազ: Ո՛չ մի մուրազ հասած, ո՛չ մի նպատակ կատարված... ուզում էր հավիտյան լալ, գլուխը զարկել քարերին, սպանել իրան, մեռնել, քանդել աշխարհը, այրել...

42. <ՍԻՐԵԿԱՆՆ ՈՒՇԱՑԱՎ...>

– Սիրեկանս ուշացավ,

Դրուֆյունս իչացավ:

– Հարուֆը կամ Մարուքը, մանավանդ Մարուքը, գովում է Սոնային. լավ ապրանք է, ամեն բան տեղն է, քելքը եղնիկի, հետևմետևը թագավորի թախթ, ծծերը ատլաս բարձեր, համա, խաղցնողն է. քահլան ճիու պես վրան հեծնողին վար կթապլե...

Ուստան խոժոռեց աչքերը. չէր ուզում ավել-պակաս խոսք Սոնայի վրա...

43. <ՈՒՄ ՆՄԱՆ Է ԷՍ ՄԱՐԴԸ...>

– Ում նման է էս մարդը:

Կնմանի XX:

– Էլ բան չթողեց հայհոյեց – մեռել, կենդանի, հին ու նոր, տուն ու տեղ, ճին ու էշն, եզն ու գոմեշը, էծն ու ոչխարը:

– Ուստան Քիրս սիրազեղ նայեց նախիրին՝ Սոնայի կթած կովերին:

(Երբ Թորոյի մոտ եկավ, բաղից հետո):

– Ջավուշը Ուստայի ամենահամբերատար լսողն էր, ուշադիր:

– Զավուշը (վերջին օրերում) հակառակ իր սովորության, բնույթի, լեզուն բացեց: Զարախոսում էր՝ Ուստային մխիթարելու համար, երբեք նա իր կյանքի մեջ այդքան չէր խոսեցել:

– Հարությը միշտ վեճի մեջ էր իրեն հետ:

– Նա չհաշտվեց մարդկային ճակատագրի հետ – մահի հետ:

44. ԲԱԳՐԱՆ

– Կնիկը դրսի պատ է, մեջք տաքցնող:

– Հայրոյի կնիկը դառել է օրնի սել:

[– Քելե, յար ջան, քելե,

Սերդ վայելե:

Պայծառ երկինք էր, կարոն ասաց – Այ, այ, երկինքումն էլ տոն է. ճրագալուց. ջահերը, կանթեղները ամենքը վառ]:

– Բաժակաճառեր.

[– Աստված կնկա չառնեն ազատ պահե:

– Էն լամբի կենացը, որ չորս կողմը լույս կուտա]:

[– Թեկուզ Հնդստանու Թագավորի կնիկը, թեկուզ ամենեն ամուր, բերդի պես ամուր կնիկը, շատ չեմ ասում, մի երկու սհաթ քովս մենակ թողեք, ես էնոր խելքից հանեմ: Կարո]:

45. <ՈՒՍՏԱՆ ՋՂԱՅՆՈՒԹՅՈՒՆԻՑ...>

– Ուստան ջղայնությունից (սրտնեղությունից) թաղբեհը ափում ամուր սեղմեց: Հատիկները թաղվեցին մսերի մեջ:

– Ծեր կանայք, բեխավոր: Պառավները բեխավոր են դառնում:

– Երբ հոգուդ ու մարմնիդ բոլոր ուժով, կրքով սեղմում ես (մի բան, իր, weib), այնպես ես զգում կամ գիտակցում, թե կարող ես ողջ երկրագունդը պոկել իր առանցքից և շպրտել անհունի մեջ: Սակայն այս պատրանք է: Ներքին ուժն է քեզ այդպես հավատացնողը:

– Երեխաները մրգերին, գաթաներին, քաղցրավենիքներին ուշակորույս տենչով նայում էին: Ոտները գնում էին, բայց աչքերը մնում էին խայծերի, հրապույրների վրա:

46. <ՏՂԱՍ ԾԱՂԿԵՑՆԵՄ...>

– Տղաս ծաղկեցնեմ = ամուսնացնեմ:

– Օր ու գիշեր անել քեզի հետ = կենակցել:

– В любви мужчина должен подчиняться, должен быть одурачен, и единственный способ приблизиться к женщине – это ползком.

А. Стриндберг

Սիրո մեջ տղամարդը պիտի ենթարկվի, պիտի հիմարանա, և միակ միջոցը կնոջը մոտենալու – այս սողալն է:

– Ամեն մի ռեժիմի հետ կհաշտվի երկիրը, եթե այնտեղ լավ արդարադատություն կա:

Նապոլեոն

– Թողենք, որ խոսին,
Թողեն, որ գործենք:

Տալեյրան

— Կ.Պոլիս մի բանվոր գտել է մի պայուսակ, 130000 թղթադրամ ոսկի, քաշվել է մի անկյուն՝ նայելու թե ինչքան է գտած դրամը,— ոստիկանը տեսել և առել է ձեռքեն. թերթը հաղորդել է լուրը հետևյալ հաջող կերպով. «130000 ոսկու երազը»:

Ճիշտ որ երազ:

— Ամերիկայում, մի մարդ, մահվան դատապարտված, բողոքում և պահանջում է, որ իրեն կախեն (կամ մեռցնեն) նախկին ժամով, ոչ փոփոխած, դրանով նա դեռ ապրելու է մի ժամ ևս: Մի ժամ... ահա փիլիսոփայական խորհելու նյութ: Իսկ մենք վատնում ենք մեր ժամերը, օրերը, տարիները — մեր դրամագլուխը:

— Տան հորթը լավ կով չի լինի:

— «Հոր թշնամին որդուն բարեկամ չի լինի»:

(Հայն ու թուրքը) Քրդական առած

— «Լեզուն երբ սկսի չատախոսել,
Պետք է գլուխը ծեծել»:

Քրդական

— Մի աղքատ ժամ կուգա. կասեն տեղ չկա, խիտ է, պռունկե-պռունկ. եպիսկոպոսը կգա, կճենեն — տեղ տվեք, բացվեք...

(Կերակուրի մասին. երբ կուշտ մարդը կուտե լավ բան բերելիս... լավ կերակուրը — եպիսկոպոս է):

47. ԹՈՂԵՑԻՆ ՄԵՌԱԾ

Էնոր մերը, կինը, աղբերը, տղան — սգերգերը: Պրիստավն եկավ:

— Կարո, վախննենք մեզ չբռնե. էսոնք միշտ անմեղնեերին են բռնում...

– Ջէ, Հարութ, փախնենք, վրեներս կկասկածեն, ի՛նչ կվախնաս՝ քուլի գիտեն թե ով է – մաստարեցիք... բռնեցին տարան... [մեզ էլ կնալեն] մեզ էլ կնալեն, արի ցույց տուր, որ մենք լապստրակ չենք:

Նորից կատաղի, ցինիկ քեֆ...

[Դժոխքը տեսնում է]

Հարութը իր հայտնության մեջ տեսնում է դժոխքը...

[Ա. անգամ, Բ. գիշերը:

– Հարութ, գնանք, Համբարձման գիշերը լսենք աշխարքի լեզուն:

– Ես գիտեմ, ես միշտ լսում եմ:] Ես եմ աշխարքի լեզուն. առանց ինձի աշխարքը մունջ կմնար:

– Գոգնոցը խմիչք կբերե:

– Գոգնոցն ինչ ունի, որ խմիչք կբերե. անիծեմ էնոր բերած խմիչքը, մածուն ունի, թող իր գլխին քսե, մնացածն էլ մոր կոտին:

– Խմիչք որ չբերե, հաց կբերե:

– Սխալ ես, քու ըսածդ ուրիշ տեղ, գոգնոցը հացի ցեց է, էն կուգա հացդ ուտելու: Հաց ունենա, թող նստի ուտե. չենք ուզում հացը...

– Բա ինչ կբերե գորնոցը:

– Տղա, երեխա, <անընթ.>...

– Հիմիկվա ջահելները մնծերի... տղեն անուշ որդունք է: Այսպես էին խոսում երկու մարդ, մի ծեր և մի ջահել:

– Երկու պառավներ խոսում են պատի տակ, երկու ջահելներ, երկու հարսներ, երկու աղջիկներ, մի խոսքով՝ ողջ կյանքը դուրս բերել:

– Ջան յայլի, յարխս բաղը,
Ջան Կողբա, Կողբա աղը:

Ադա ես եմ, ադա ես եմ,
Մի կողբեցի գյադա ես եմ:

Կայնի, յարս, գալիս եմ,
Քրտներ եմ, լալիս եմ:

ՀԱՍԱՆ ԱՂԻ ՄՈՏ

[Կարոն Օսկանին է կանչում: Հասանը հարցնում է, ինչու են կռվում հայերը: Կարոն, թե արդարության <համար>, որ աշխարքը էնման էղնի, էսման չէղնի, էսման էղնի, էնման չէղնի:

Հասանը միչտ կրկնում էր.

– Լա՛վ բան է, լա՛վ բան է:

Հետո թե Կարոն, որ թե լավ բան է, դու էլ աշխատիր:

– Լավ, Կարո, ձեռքես եկածի չափ:

– Աղա, էդ քիչ է, պիտի մեռնիս էլ:

– Ինչո՞ւ մեռնիմ:

– Որ թոռներդ լավ ապրին:

– Ես մեռնիմ, թե թոռներս լավ ապրին, չէ, ջահնամը թոռներս...]

[Կարոյի 2 ստերը. կարմիր ձյուն էր գալիս, կանանչ ձյուն, էնման պաղ տեղեր կային, որ սառույցը պատի պես հաստ էր. մեջը տուն էին չինել ապրում, օճախ էին վառում սառույցի մեջ, չէր հալում, օճախը...

Էնման տաք տեղեր, որ հավկիթը հավի փորից խորոված էր դուրս գալիս. ավազի վրա դնում էինք միսն ու ձեռաց խորոված դառնում, ուտում...]

ՀՄԱՅԱԿ ԱՂԻ ՄՈՏ

[— Ինձնից լավ գրի՛ր, հերս անիծիր:

Թև չէ՝ ես քու հերն կանիծեմ, էսօր էլ, էգուց էլ, ամեն տեղ: Մեկել՝ ինձնից լավ մարդու հերն անիծած, փիսը զաթի փիս է. ասում են Հարուքին ու Կարոն միասին Համայակ աղի, Ճերմակ Համոյի գյուղում:]

48. <ԶԱՎՈՒՇԸ ՈՒՍՏԻՆ ԽՆԴՐԵՑ...>

— Զավուշը Ուստին խնդրից թուլլ տալ իջնել Բագրան, օղի, թյություն, թեյ-շաքար առնել, հավ, հավկիթ, պանիր, հաց առնել: Ուստան համաձայնվեց, բայց պատվիրնց, որ ոչ ոքի չասի իրենց տեղը. նթե պետք եղավ, ասե՝ որ քուրդ բարեկամների մոտն է: Ջոեսնի իրենց ընկերներին:

Իսկ Զավուշը (իհարկե խոստացավ) մոտածում էր, գնալ Բագրան, տեսնել Մացակին, իրենց լավ բարեկամին, որ Մացակը լուր տա Ուստայի տեղի մասին (պատմելով գլխին եկածը) Մարուքին, Եղոյին, Հարուքին, Աղանիկին: Զավուշը հավատացած էր, որովհետև մեծ վստա-

հուբյուն ուներ սրանց անդավաճան սիրո մասին, որ սրանք իսկույն կգան Ուստայի մոտ, մենակ չեն թողնի, կմխիթարեն, խրատ կուտան, խորհուրդ, հետները կտանեն, կամ մի տեղ կղրկեն, մի խոսքով երեսի վրա չեն ձգի:

Գնաց Բագրան, գնեց օղի, թյուբյուն, չայ-շաքար, և գնաց Մացակի մոտ: Մացակը մրսել էր և հիվանդ պառկած էր. լսել էր և չա՜տ վշտացել ու զայրացել: Եթե համառեց չեկավ, ես վաղը-մյուս օրը ոտքի կելնեմ, կերթամ գոռով կբերեմ: Բարևներով ճամբու դրեց՝ հետը դնելով հավկիթ, կարագ, յուղ, հավ, հաց: Թե՝ քանի այդտեղ եք (եթե Ուստան հակառակի մնալ) միշտ արի ուտելիք տար, մինչև ես լավանամ և տղերքը հասնեն:

Ջավուշից լսեց մանրամասնությունները աքսորի մասին. լսեց, որ Ուստան չա՜տ տխուր է, չի խոսում, դլուխը զարկվածի պես է, անելիքը չի իմանում,— ցավեց, կատաղեց, հայհոյեց Ղուկասին, Օսկանին, դատավորին, տիրացուին, Ուստի սանահերներին և այլն, և այլն:

Մացակը Ուստի ընկերն էր, բայց սանահերը չէր, և ոչ էլ Մարուքի, Եղոյի սանահերն էր. նրանք մեծ տղերք ունեին: Մի խոսքով նրանց բարեկամությունը գուտ սիրո վրա էր հիմնված:

Ջավուշը վախվխելով Ուստային հայտնեց Մացակի ասածները: Ուստան բարկացավ, բայց սրտանց մխիթարվեց և աչքերը լցվեցին արցունքով: Մենակ չէր, անտեր չէր:

Երբ Ջավուշը գնաց Բագրան, Ուստան մենակ նստեց հին (հնադարյան) բուխարիկի առաջ, ծխում և խորհում էր. ցուրտ էր բավական, կամ գոնե ինքը մրսում էր, և օրը մթնում էր արագ-արագ, աշնան կարճ օր (Ջավուշը գնաց ճաշից հետո) և ավելի խստորեն զգաց մենակու-

թյունը, անտերությունը, անզորությունը, լքվածությունը: Ավելի ցախ դրեց գազ կրակի վրա, բոցկլտաց, որով մի փոքր մենակությունը, լքվածությունը վանվեց, զգաց մի բանի ներկայությունը, ընկերակցությունը:

49. <ՀԱՐՈՒԹ, ՕՐԹԵ ԱՇԽԱՐՔԸ...>

– Հարութ, օրթե աշխարքը կա ու կմնա:

– Կարո, կա ու հեչ, հեչ էլ կմնա. օրթե հեչ չելներ, լավ կէղներ:

– Օրթե լավ էղներ, ինչ կէղներ:

– Օրթե լավ էղներ, չա՛տ լավ կէղներ:

[[– Հարութ, կայծակը գիր կարդացող է, լեզու, բերան, ազնիվ] էն կուզե աշխարքը լավցնել:

– Խելքդ քամուն մի՛ տար, երեխա մի լինիր, աշխարքը ոչ մի մարդ չի կրնա լավցնել. Քրիստոսը չկրցավ, խաչեցին էդ խեղճին. աշխարքը Աստված է էդպես չինել. օրթե Աստված լինես՝ կրնաս նորը, լավը չինել. Աստված էլ կրնար, օրթե չիներ ու ուզեներ, ճեռքեն բռնող հեչ մարդ չկար, լավ աշխարքը չինել.– չուզեցավ, էնորից դուրս մարդ չի կրնա բան անել, էս ս<ուրբ> ծրագիրը, կայծակը ինչ են աշխարքի գիշության առաջ. իմ կարճ խելքով էդոնք ջուր կծեծեն, ջուր պնդացնեն, օր կմթնացնեն, իրանց ու գյուղացիների են խաբում. դու էդոնց հետ գործ չունիս:

[– Հարութ, քաղքցիք էշ են: Տո, քաղքցու էշը շատ է. էնոնց վրա փալանի տեղ պալտո կա, մի խաբվիր:] Օրթե կուզեն աշխարքը քանդել ու նորը չինել, թող էնեն, մենք չենք խանգարի. օրթե լավը չինեցին, մենք դհա չա՛տ կուրախանանք, քանի որ մենք լավ տղերք ենք ու էդ

ննք ուզում՝ ի բնև... բայց ինձի նայե. դու՝ խմիր էդ դինին՝ պաղավ, ինձ նայե. աշխարքը մարդ չի կրնա քանդե. Աստծուց մեծ պիտի լիննես, որ Աստծուն հաղթես, տեղը նստես, ու սրտովդ կարգին, սիրուն չիննես[1]:

– Հարուբթ ջան, գիտես, քուլի գիտեն քո սերդ Մաշինկի հետ:

– Թող գիտնան. [գեչ] լավ մարդը՝ դու խելոք կըսեիր, թե գաղտնիք չունի. ես գեչ բան չեմ բռնել. [ես կպաչեմ, թող] դու կուշտ պաչե, թող աշխարքը հաչե. նախանձից է, կարո ջան, ամեն մարդ էլ՝ թե ծերն ու քոսոտն էլ՝ կուզենն, որ աշխարքի բոլոր կանայք իրենը էղնին. ես իմ գործս գիտեմ, թող էս սհաթիս Մաշինկեն կրծքիս քնած էղներ, [ինչ կելներ] օրթե ի՛նչ կէղներ, թող էղներ. աշխարքի աչքն եմ հանել, հերն անիծած աշխարքի][2]:

Արաբսաանի կողմերից, թե ներսի ու դրսի աշխարհներից անշշուկ սահեց-եկավ մի բարակ, թեթև, ունայնության շնչի պես մի քամի, հեզ, անգո և մեղմիկ քշեց, տարավ տարտամ ծուխը հեռու-հեռո՛ւ. նրանք ընդհատ-ընդհատ ծխում էին՝ ասես՝ քնի միջից և նոսր, նուրբ ծուխը քամին միալար տանում էր հեռո՛ւ, հեռո՛ւ Մարա ու Արաբսաանի կողմերը, Գյուլստան թե Հնդստան, ներսի թե դրսի աշխարհներ: Եթե / Օրթե էդ ծուխն էլ չլիններ, լավ [կելներ] կլլիններ:

[Աննշմար, անշշ<ուկ>] Ցնորվել, չքացել էր ծուխը. նրանք անշարժ, թանձր խավարի մեջ գլուխները գետնաքարշ աննշմար, անշշուկ, անհնչուն շնչում էին հազիվ, և

---

[1] Այս և նախորդ պարբերությունների վրա հղինակը կարմիր մելանով թևքությամբ գրել է. «*Բ. անգամ*»:

[2] Այս և նախորդ պարբերությունների վրա հղինակը կարմիր մելանով թևքությամբ գրել է. «*Բ. դիշերը*»:

[քամին հեզ] հեչի պես քամին՝ մեղմ և տխուր, անհույս և լուռ՝ ինչպես չունչը ունայնության, մեղմիկ սահելով տանում էր նրանց [մեռած մեռելային անգո] չունչը հեռո՛ւ, հեռո՛ւ [Մսր, Գյուլիստանու, Հնդստանի, Գյուլստանի ու Հնդստանի] Հնդստանու, Ղանդահարի, Հնդուքոզու ու Զինմաչինի, և [անծիր] ներսի ու դրսի աշխարներից հեռո՛ւ, հեռո՛ւ ու հեռո՛ւ...

Եթե / Օրթե էդ չունչն էլ չելներ, լավ կլիներ:
Եթե էդ ունայն քամին էլ չելներ, լավ կելներ...

[Շունն էլ էր հետները. երբ նրանք քարացած մնում էին, շունը քաշքշում էր նրանց փեչերից և հաչում ու ոռնում էր, բայց նրանք չէին լսում. նրանց հոգին ցրված, տարտնղած էր հեչի մեջ և հեչի պես և հեչ էր եղել (հեչացել). իսկ քամին տանում էր չան հաչոցը և այլն, և այլն]:

Կարոն ծրագրում էր գնալ ներսի ու դրսի աշխարհները — չոլերի մեջ, տուն չինիր և ապրիր Ջավուչի հետ:

...Հարութն ու <Կարոն> գնացին Համայակի գյուղի վերև, Կամսարականների ավեր բերդի վերա, նստան ավերակների վերա (այս ժամանակը իր ձեռքն է դրել Աբուլ-<անընթ.> գլխից) սկսեցին խոսել:

— Հարութ, հույսս Աստծու վրա է, օրթե Աստված ուզեց, լավ կեղնի:

— Կարո, օրթե Աստված լավ էղներ, աշխարքն ինչու գեչ կէղներ: Օրթե Աստվածը գեչ է, լավ կէղներ, հեչ չէղներ:

Օրթն դու էլ որ չէղնիս, էլ աչխարքը չէղնի,
Օրթն աչխարքը չէղներ, հեչ ինչ բան չէր էղնի:

50. <ՄՊՆԻ. ՀՈՏՆ ԵԿԱՎ...>

Մպնի *— հոտն եկավ ոչխարի. մայուն, բառաչ:*

Նախճվան *— նախիրը եկավ, երեխեքը դեմ են գնում, նստում դոմեչների վրա, կովերը դնում են իրենց տները, կթում են հարսները. Օսկանենց տան կաթի հերթը, կալի ժամանակ:*

Քիրս գնալուս *Օսկանի ձիով բոչաներ եղունգ աչող. բոլորը զարկվեցին. մի ձիավոր մարդ է, կտրիճ, ծովերու բոլոր ման կուգա. միտքը ծովու պես. փոթորիկներ կան, կուզն երթալ հեռու, հեռու. մի մարալ դեմն եկավ — չի թողնում. վազեց մարալին բռնելու, մի սև մարդ դեմն եկավ...*

Աղբուրի *մոտով անցնելիս. հարս ու աղջիկ ջուր էին լցնում ու խոսում.— Էս քավոր կարոն է, ինչ տնկոզ մարդ է:*

Անի գնալուս. *<անընթ.>*

Բագրանում. *քեֆին իմ բարձիս թոռը քցեք. ջահելները քցում են (I գլխում)*

Մեռնողին — հոգույն հանգուցելոց եղավ:

Բագրանի ուխտին. *մի մարդ մեկի հետ խոսում է. դեչ վախտ է. մահի էժանություն է, հացի թանգություն:— Հարկը շատ է: Ինչո՞ւ թագավորը չի կտրում էնքան փող, որքան իրեն պետք է, ու մեզի աղատե հարկից:*

— Խնոցի հարել. հայ թխել:

— Հարուքի բոստանը նկարագրել. ծաղիկ, ջուր, աղբյուր...

– Արտաշի [և Կարոյի] համար նոր շոր ճևելը – ընդհատ լինի, ջրերդ վրեդ է: Հարսանիքից առաջ:

– [Ուղտերի քարվան անցավ Անիից էն կողմը]:

– Եզան բեռներով և իշու տանում էին Բագրանից միրգ:

*– Հարսանիքին սափրվեց. **Սափրիչը**:*

[– Աչքալուսանքին. Կայծակը խոսում է մի քիչ. Կարոն իր չոնգուռի գովքը. երգում են Ջարդը. Կարոն պարզում է նրանց առաջ իր և Ջավուշի կրոնական հայացքները:]

– Այ խաչողներ,
Էշ ներկողներ:
– Կողբա աղ – սելեր:
– Կարոն յայլա գնաց. երթը յայլի:
– Ղոչ կռվեցնել (Գյումրիում):

Հարութ – Կոմիտեն մեջ է ընկել. պրիստավ, թագավոր, նրանք էլ են մորթում: Լավ տղերքը, որ կուզեն փրկել աշխարքը, խեղճերին, Քրիստոսին, Հայաստան գնացողներին, բոլորին էլ մորթում են, կախում.– Կարո, տես:– Տո՛, ինչ լավ որ ես դեռ Հայաստան չեմ գնացել: (Կարոն)

(Աշխարքի այցը),

– Էս ջուրը կերթա մեծ ջրի մեջ, կերթա ման գալով, արուևքներով ժողովելով. կերթա աշխարհներ ման գալով, կերթա կթափվի աշխարքի բոլոր պատած ծովը... էնտեղից էլ վար կթափվի մեզ վրա, մարդկանց վրա:

51. ԲԱԳՐԱՆ
ՄԱՏՈՒՌԻ ՄԵՋ

Փոքրիկ մատուռ, Սուրբ Գեորգի պատկերը, վիշապին հաղթահարած: Մոմեր, մոմեր՝ փոքր ու մեծ, կերոններ, մանր, պստիկ նիհար մոմեր, ուխտավորների ձեռքով վառված, ուխտով, մատաղով, աղոթքով:

Հոծ բազմություն, գլխաբաց այրեր, կանայք, ծերեր, ջահելներ. երեխաները մեծերի ոտքերի միջով թափանցում են, սլսկում: Բոլորը աղոթում են, ցածր կամ բարձր ձայներով. աղոթք և աղաչանք, հառաչանք և լաց... Ի՞նչ են աղոթում. հազար ու մի բան. իրենց երեխաներին բժշկություն, իրենց գործերին հաջողություն, տավարին աճում, ցլավերի վերացում, արտերին՝ բերք, ստերջ կանանց՝ զավակ, պանդուխտներին՝ ողջությամբ վերադարձ, զինվոր դնացող տղաներին՝ վերադարձ... և այլն, և այլն:

Քաղաքից եկած վարդապետը կանգնել է. մի ծեր ավագ քահանա պատարագ է անում, գյուղերի քահանաները՝ ժամասացություն, ինչպես տիրացուները:

Մատուռը բռնված է խնկի հոտով: Քրտինքի, թյութունի ծխի հոտով, որ բղխում է ուխտավորների չորերի վրայից: Աղոթքի հետ՝ թոքերից:

Աղոթողները, ուխտավորները գլուխները կախ, լուրջ, մեջքները կռացած, հոգսերի, օրերի ծանրության տակ: Շատերը, գրեթե բոլորը, հագնված են իրենց դրսնավուր չորերը, ոմանք (կին կամ տղա) իրենց պսակի չորերը:

— Մոմերը հյուծվում են, հալվում են, սպառվում են իրենց զոհաբերողների ցավերի, հոգսերի պես:

52. ԲԱԳՐԱՆ
ՅԱԼԱՆՋԻՆ

Սիրուն կին,
Կարմիր գինին,
Յարոջ գրկում
Կեր ու խում:
Քեֆ էրա, ա՛յ քեֆ էրա,
Աչխարք քեզի չի մնա:

53. ԲԱԳՐԱՆ

— Տեղ-տեղ երիտասարդների ըմբշամարտ:

ՄԱՍՏԱՐԵՑՈՒ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

Մահի լռությունից հոսեց մի ծանր լռություն և ծավալվեց գյուղի վրա: Զուռնայի ճայները լռեցին: Շատերը ուխտավորներից ժողովեցին իրենց իջևանները, ոմանք էլ չտապեցին տուն իրենց գյուղերը դառնալ: Միայն ուշ երեկո այս ու այն անկյուններից լսվում էին երգի բեկորներ:

Ուստայի ականջին դիպավ երգի մի կտոր.

Սարին ի՛նչ եղավ,
Քարին ի՛նչ եղավ,
Մեռնողը մեռավ,
Ողջին/Սաղին ի՞նչ եղավ:

54. ԲԱԳՐԱՆ

Հարուքը մատուռի բարձունքից նայելով.
— Ամեն մարդ մեկ հոգեվարք է, մեկ դերեզման:

55. ԲԱԳՐԱՆ ԿԱՅԾԱԿԻ ՃԱՌՈՒՄ

Հայերը խելացի, ընդունակ, աշխատասեր, չինարար ժողովուրդ են, իսկ թուրքը ծույլ, կործանիչ, անընդունակ... Եվրոպացու համար մենք մրցակից ենք, վնասակար. նրան պետք են ոչխարները, որ բուրդը խուզեն: Թուրքերն են պետք նրան, որ չահագործեն: Բայց երբ մենք կուվենք, զենք չողացնենք, Եվրոպան կսիրե մեզ և կհենվի մեր վրա՝ իր քաղաքական ծրագրերի համար:

Երբ հարմար տեղ եղավ, Ուստան ասաց.
— Որ ասում են, ուր ջուր է եկել, նորեն կուգա:
Հարուքը ցած ձայնով ասաց, որ լսեց ճարտարապետը. մինչի առուն ջուր գա, գորտի աչքերը դուրս կուգա:
Ճարտարապետը ժպտաց: Հարուքը նրա մոտն էր նստած՝ իր կամքով հենց:

56. ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ

Երբ մենակ լսում էր դյուդուկահարներին. երկու դյուդուկ և մի երգիչ:

Երգեց մի Քեչիշ օղլի:
Ուստային դուր եկավ շատ այս կտորը.

«Հանգստությունն չունիմ գիշեր ու ցերեկ
Ինչպես քամի մտած ծովերու նման.
Աստղս խավարավ, բախտս կուրացավ,
Շիվար եմ վայրենի <անընթ.> նման»:

Ուստան մտածում էր, ծփում էր սիրտը.
«Նստեմ կատաղած, փրփրած մեկ ձի,
Խառնվեմ հովերու մեջ,
Երթամ, երթամ, երթամ...»

57. <ԲԱԳՐԱՆՈՒՄ ԵՐԳԵՐ...>

Բագրանում երգեր, որ լսում են ամեն անկյուններից. միայն մի երկու տող մեջբերումներ –

– Բարդի ծառը բարձր է,
Սիրած յարը քաղցր է:

– Դուն կայներ ես դեմ ամբրոցին,
Ջուխտակ շամամ մեջ քու ծոցին,
Մե քիչ տուր դնեմ իմ խոցին:

– Սայաթ Նովայից:
– Ջախորդ օրերը:

58. ԲԱԳՐԱՆՈՒՄ

— Տո տղա, հերդ ո՞ղջ է,— հարցրեց Ուստան:
— Ջէ, մահացած է:
— Քեռի՞դ:
— Ջէ, էն էլ:
— [Հորքուրը] Հորողբերդ, Մարգարը:
— Ջէ... դուք ողջ լինեք:
— Էհ, ի՞նչ հասկցանք... [հեչուփուչ աչխարք...]
— Ինչո՞ւ չհասկցար, պարզ բան է,— միջամտեց Հարութը:
— Հասկնալով մեկտեղ չհասկցա:
Ոչուփուչ աչխարհ, Աստված քեզի ողջ պահե:
Գնացին:

59. ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ

Բերել էին սուրբ Գևորգի դուռը հիվանդ երեխաներին, կույրերին, ծերերին, անդամալույծներին... Մարդիկ հավատը կորցրած լինելով երկրային ուժերի փրկությանը, աչքերը հառել էին երկնքի ուժերի, խորհրդավոր, գերբնական զորությանը:

Լսում էին պատարագին, լալիս էին, կրծքերը ծեծում, հողը, քարերը համբուրում, և սպասում էին հրաչքի... կույրերը չոչափում էին աչքերը, կաղը՝ ոտքերը, սպասելով, թե հիմա կգա փրկությունը:

Հարութը նայում էր խղճահարվելով և անհույս:

— Մխ-մորթելի աղոթք:

– Ջոհի կոկորդը դեպի արևելք են դարձնում, դանակի բերանով խաչ քաշում կոկորդի վրա և կտրում...

– Ջեռաց մի երկու չամփուր խորոված են ուտում, մինչև կերակուրը պատրաստվի:

60. ԲԱԳՐԱՆ (ԾԵՐԵՐԸ)

Երկու օրվա աշխարք:
Երեկ ավազան,
Էսօր գերեզման:

61. ԲԱԳՐԱՆ

Թուրքը հայ մայրերի փորը ճեղքում է թրով, երեխան մնում է սրի ծայրը և ձգում Աստծու դիմաց: Թող տեսնի Աստված, եթե կա. եթե կա, տեղնուտեղը կայծակով զարկե նրան.–

Ռեսը – դրուստ է:
Նրանց մարգարեն էլ ջարդարար է:
Նրանց աստվածն էլ ջարդարար է:

Հարուքը տեսնելով մորթվող ոչխարներին, մտածում էր. ամենքիս ճակատագիրն էս է: Պրծում չկա: Մեռնել-մորթվել Աստծու ձեռքով կամ բնության: Միևնույնն է:

62. ԲԱԳՐԱՆ

Հարուքը մատուռի գլխին: Տեսնում է հիվանդներ, ցավագարներ, անհնարին տանջանքներ. մի ծեր՝ դողդոջուն

ծնոտով, հաշմեր, անդամալույծներ... լալիս են, մղկտում, գալարվում, նրանց մայրերը լաց են լինում...

Հարուքը. «Աշխարքը հեչ բան է, միայն մարդու տանջանքն է մեծ, անչափելի...»

Լուսնյակը ելավ, կարծես, ականջը կախել լսում էր մարդկանց ուրախության և ցավի ձայները. և անտարբեր, անզգա, անկարեկից:

63. ՈՒՍՏԱՆ ՄԵՆԱԿ, ԲԱԳՐԱՆՈՒՄ

Մի գինետան մեջ. փողեր (երկու դյուդուկ): Կարգադրեց, որ ամենաոխուր բաներ նվագեն: Նվագում են: Ուստան նվագի տակ, վերստին ապրում էր անցյալը, ծփում էր հոգին ապրած կյանքի դեպքերից դեպքերը. մանկություն, հայր, մայր, հոր և մոր մահերը, իր թափառական կյանքը, անձկությունները, վշտերը, նեղությունները, հիասթափությունները, պատրանքները... Տխրությամբ թաթախվեց, հարբեց Ուստան...

Երգերը — Ձախորդ օրերը ձմրան նման...
— Հովերն առան սար ու ձարեր,
Լաց, մերիկ ջան, որ էլ չեմ գա:
— Արագն եկավ լափին տալով...
— Կռունկ, ուստի կուգաս...
— Սիրտս նման է էն փլած տներ...
— Սայաթ-Նովայից:

Սա նոր երգ է:

[Էս ծով ցավերին
Ինչպես դիմանամ,

Թղթիկ մ'ալ չես գրում՝
Դարդերդ իմանամ:
Մանդիլդ ուղարկիր
Լվանամ,
Դնեմ թաց աչքերիս
Պառկեմ քնանամ:]

Եվ Ուստան լաց էր լինում, արցունքները լցվում էին բերանը, կոկորդը, կուլ էր տալիս և նորից լալիս, հոնգուր-հոնգուր լալիս:

64. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԱՌԱՋԻՆ ԳԼԽՈՒՄ

Ուստան կես լուրջ, կես կատակով է խոսում գետի աղջկա, փերիի մասին, որ այնտեղ է, և մարդիկ է որսում, և ինքն էլ պատրաստ է կուլ գնալու այդպիսի աղջկա համար: Մեռնելու, զոհվելու: Որպես սիմվոլ է սա գործածվում. ոչ մի անգամ Ուստան չի հավատում այդպիսի պառավական զրույցներին:

«Թե որ էդ հուրի-փերին, էդպես մի աղջիկ դուրս գա, ինձի կանչե, ինչի՞ պտի չերթամ հետևեն. կրնամ չերթա, թե որ մեռնիմ էլ»:

Խնդիրը թեական պիտի դնել, եթե կա, պատրաստ եմ նրա համար մեռնել, նրան կյանքս տալ, զոհվել: Բացարձակ հավատ չունի հավերժահարսների գոյության նկատմամբ:

65. <ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆԻ ՔԵՖԻՆ...>

— Ուստան Բագրանի քեֆին, երբ չա՛տ ոգևորված էր, գոչեց. «Ուզում եմ աչխարքը ուտեմ»:

Հարուքը ասաց.
— Ինձ էլ չուտես...

— Երբեմն մարդիկ տգեղ բաներ են անում, այնպես որ երբ հիշում են՝ կարմրում են. երբեմն նույնիսկ այդպիսի արարքներից ցմահ կարմրում են:

— Շեքսպիրն ասել է. «Խոսել թե ի՞նչ է օրն ու թե ի՞նչ է գիշերը, կշանակե՝ կորցնել թե օրը և թե գիշերը»:

66. ԱՆԻ

— Ամեն մարդ իր ծնկների վրա հենվելով/կռթնելով է, որ պիտի բարձրանա:

ԲԱԳՐԱՆ

Մարդու կյանքի նպատակն է երջանկությունը, բայց նախապայմանն է ազատությունը: Ստրուկ անազատ մարդը չի կարող երջանիկ լինել: Ամենամեծ թշվառությունը ստրկությունն է: Հայերս թշվառ ենք:

Բագրանի երկու մարդիկը, որ կայինն կայծակի հետ. մեկը նախկին ուսուցիչ պատմաբան, հիմա հոգևոր վար-

չուքյան քարտուղար, վարդապետի հետ եկել էր Բագրան ուխտի հասույթը դանձելու. մյուսը նույնպես վարժապետ թվաբանության, հիմա մի վաճառականի մոտ հաշվապահ:

67. <ՍԵՐԿԵՎԻԼԻ ԲՈՒՅՐՈՎ...>

– Սերկևիլի բույրով բռնված Բագրանի փողոցները, դռները, այգիները: Փշատի հոտով լցված: Սեխի, խնձորի հոտով ճանապարհները, ուր վաճառի էին հանված:

68. ԲԱԳՐԱՆ

– Կինը կնոջը որ տեսնում է մեկ առաջ ու առաջ հագուստին է նայում, վրա գլխուն՝ հագուստ-կապուստին, հետո դառնում իր շորերին է նայում, համեմատելու համար: Ամենից հետո նայում է դեմքին:

69. <ԴԱՈՒԼՉԻՆ ՇՈՐՈՐՎՈՒՄ ԷՐ...>

Դաուլչին շորորվում էր, կլոր դառնում, պարի հետ գնում, շաքաշը նրա ճակատին են կպցնում: Թառչին թառը դրեց ծոծրակի վրա ու նվագեց:

Քյոռօղլի երգողը, մեկ էլ ձեռքը դրեց ծոծրակին, փափախը չրջեց մի կողմ, և սարսափելի ձայնով բղավեց, ասես, ձեռքը դրել էր ծոծրակին՝ որ գլուխը չպայթի: Գլուխը վեր բռնած էր երգում, աչքերը կամ փակ, կամ կիսախուփ:

— Ուստան անցնելով մի երկրից, ուր օր ու գիշեր գերեզմաններ կային, հարցնում է թե՝ այ 100 տարվա մեռելներ, ինչ ցավից եք մեռել.— նրանք էլ թե — կնկա ցավից, կնկա ձեռքից:

70. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐԸ

Լույս հինգշաբթի. կեսգիշերին ամեն սարեր, քարեր, ծառեր ջուխտ-ջուխտ կգան իրար, ողջում կտան: Ամենից հետը Լեյլին ու Մաջլունը իրար վզով փաթաթված կգան, իրար ողջում կտան... Հենց էն վախտը ինչ որ սիրտդ ուզի, ասես, կկատարվի:

Բայց ո՞վ կարող է տեսնել.— ով որ մի թասով ջուր դնի լուսնակի առաջ, աչքերը առանց թարթելու թասի մեջ նայե (աչքի) մինչև կես-գիշեր, կես-գիշերին կտեսնի, որ սարեր, քարեր...

71. <ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԿՆՔԻ ՄԵՋ ՄԽՐՃՎԱԾ...>

— Հայաստան, երկնքի մեջ մխրճված, երկնքից կախված, Հայաստան, դու երկինք ես, քան թե երկիր...

— Թուրքերը... ավերեցին մեր տաճարները, ավերեցին մեր հրաշակերտները, փշրեցին մեր հոգեկան գոհարները, մեր արվեստի գանձերը... ցամաքեցրին մեր աղբյուրները, մեր վտակները, կտրեցին մեր անտառները, չորացրին մեր դաշտերը, մեր պուրակները...

Կոտորեցին մեր ժողովրդին, մեր չինականին ու ոստանիկին, մեր ահեստավորին ու գեղջուկին... Այրեցին մեր ոստանները, մեր քաղաքները, մեր ավանները. մեր

երկիրը դարձրին ավերակ, ամայի, <անընթ.>, գերեզմանն...

Մեռավ մի ընտիր, ստեղծագործ ժողովուրդ...

— Այնքան ժամանակ, որ հայը ուժ չպիտի ունենա, նրան կկոտորեն, կզրկեն, կփչացնեն. երբ ուժ ունենաս — այն ժամանակ կհարգեն, հավասար կընդունեն իրենց, դաշն կկապեն — ուրեմն ո՛չ քրիստոնեությունը, ո՛չ մարդասեր Եվրոպան, ո՛չ սոցիալիզմը անկարող են փրկել մեզ: Մենք միայն պիտի փրկենք մեզ — երբ ուժ ունենանք, ուժով, զորավոր լինենք: Ո՛ւժ: Թուրքին, վրացուն միայն այդ հատկության համար են հարգում, մարդու տեղ դնում, սիրում. և ուժի չնորհիվ է, որ նրանք գրավեցին Հայաստանը և հայերի հարստությունը:

72. ԲԱԳՐԱՆ ԳՆԱԼԻՍ

— Մասիսը տեսան, երեսները խաչ հանեցին:

— Բագրան, գյուղացիք, ամեն տեսակի, հասակի, իրար ցույց էին տալիս — էս թագավորների (հայոց) պատշգամն է, էս պալատն է:

Ասում էին հպարտությամբ, ցավով, ակնածությամբ: Նայում էին կարոտով, ցավով, ափսոսանքով, ախ քաշելով:

— Համբուրում էին ավերակների բեկորները, շոշափում էին ձեռքերով.

«Մեր թագավորներ են շինել, էրնեկ էն ժամանակներուն:

Էրնեկ էր, մենք էլ էն ժամանակ ծնված ըլնեինք:

Էրնեկ հիմի ըլներ...»

Այս լսում էին ճարտարապետը, Հարությը չըջելիս: Եվ տեսնում էին:

Մտածում էր ճարտարապետը.

— Ի՞նչ է ազգությունը — նա հող է և արյուն: Ի՞նչ է հայրենիքը՝ նա հող է և արյուն: Արյունը չաղախված հողի հետ կաղապարում է ազգությունը, ցեղը, նրա լեզուն, մշակույթը:

Ժողովուրդը ինչպիսի՜ խորհրդավոր, հզոր կապերով սերտ կապված է իր հողի հետ, իր արյունով կապված, անգիտակցաբար, բնազդաբար, ենթագիտակցաբար կապված թերևս, բայց ավելի հզոր է, քան գիտակցաբար կապը: Այո, նա ավանդություններով, առասպելներով գիտե իր երկիրը, բայց դրանք ավելի ճշդրիտ են, քան պատմագրքերը, որովհետև նրանք ազգի էությունը, ոգին են կազմում ու պատմում:

Ինչպես հարազատ եմ զգում ինձ այս վայրերում, ինչպես ժողովուրդն է զգում հարազատ, իրենը. ես էլ արյունով, հոգով չաղախված եմ այս հողի, այս ավերակների և այս թշվառ, ստրուկ ժողովրդի հետ, մեծ ազգի այս բեկորների հետ իր քաղաքների բեկորների պես:

Օգտվել Գ. Լեբոնի մտքերից:

73. <ՔՅԱՆԴՐԲԱԶ...>

Քյանդրբազ.— Լապլա ջան, ղարդաշ,
Հունար, հունար իչո՞ւն (<անընթ.> ումի՞ց է).
Հունրոն ալլահ իչուն.
Յա՛, Մշու Սուլթան Սուրբ Կարապետ:
Դու հասնիս իմ դատին (հասցես)
Հունար քեմն իչուն:

Յալանչի – Հունար Պողոս աղային իչուն:

Էս երկնի-գետնի Աստված, ասում է և վազ տալիս Պողոս աղայի մոտ: Աղեն տալիս է շաբաչ 1 ր<ուբլի>, վազելվազ գալիս է թախլա տալով և կանգնում է քյանդրի տեղն ու ասում – Պողոս աղան իչուն 1 մանեթ փեշքեշ տվեց. հիմի կգրեմ. չոփը թրջում է լեզվին և իբրու թե գրում է անունը դավթարի մեջ:

Քյանդրբազը հագած է կարմիր շապիկ, գլխից աղլուխ կապած. նեղ չալվար, բարձը չեքերի մեջ, «զաթ» զարկելու, վրեն երկու շարք, կրծքին խաչ-փեշք քցած՝ հմայիլներ. պարանի վրա կամ մաչիկ հագած, կամ միայն գուլպա:

Նստում է սինու վրա լարի մի ծայրից բարձում է սլաղով, ⟋⟍ հետո սահում պարանի վրա և ապա իջնում մյուս ծայրից, գլխին բատելը, բատելի վրեն ստական լիքը մեջը արաղ: Դնում է տաբուրկեն, վրեն սամովար, սամովարի վրեն կամֆորկա, գլուխը դնում է կամֆորկի վրեն, ոտները դեպի վեր ցցած: Պարանի միշտ բարձում ⟋⟍ կապում է ցից երկու արշինանոց մի ճիպոտ, վրայից լոք տալիս, անցնում մյուս կողմը. ոտների տակը կապում է երկու դաշույն այս ձևով ⟋⟍ ... կախվում է պարանից ծխնիով, գետնից վերցնում է ձեռքը երկու երեխա, կապում է և էլի նստում երեխաների հետ պարանի վրա – խաղում: Իր աչքերը կապում է, երեխի աչքերն էլ կապած առնում է շալակը, ոտներից կապում են մի պարան՝ ճոճքի պես (ճլորթիկ) վրեն նստում է մի երեխա – և այդպես քայլում է մի ծայրից մյուսը: Ոտները կաթսի մեջ:

Փետի անունը «Թարաջ» բարձրությունը լարի – գետնից մոտ 7-8 արշին:

Ջաթի ժամանակ տրնկի է չալում:

40 տարվա հին գինի:
Տոլիբաշ = թամադե:
Քյոռօղլիի ձին – ղռատն է:
Քաղաքը ձեն կուտա, ձենը կերթա թագավորին
Թախտըդ գլուխդ կանցնիմ, թագավորն ապրած կենա:
Ամեն մարդ իր զուռնան ունի, էշը՝ իր, մարդը՝ իր:
<անընթ.> ունի 40 կնիկ. մեծը, գլխավորը Նիկյարն է:

74. <ԵՐԲ ԲԱԳՐԱՆՈՒՄ...>

– Երբ Բագրանում չչուկով գովում են Սանամի գեղեցկուհիյունը, Ուստայի ականջին այդ չչուկները ամենաքաղցր երգի պես էին:

– Քունը հաղթեց վչտին, և Ուստան քնեց:

– Տերտերը ձեռքը միրուքի տակը տարավ, հետո վերևը, հետո տափնեց, գավազանը պատին հենեց, նստեց: Նրա խորունկ գրպանը, տերտերների:

– Առաջին անգամն էր հագուստի ծալը բացել...

– Գոտին մի գրվանքա ոսկի էր:

– Կանայք քիթ-քթի տված խոսում էին:

– Գյուղացիք Բագրան գնալիս, երբ Մասիսը տեսան, երեսները խաչակնքեցին, գլուխները բացին:

75. ՔՑԱՆԴՐԱԶԸ. ՃՈՊԱՆԽԱՂ

Փեհլեվանը սապոն է կապում ոտներին, կաթսայի մեջ է դնում ոտները:

Պարանի վրա սամովար է դնում և չայ խմում (եփած սամովարը վերն են հանում):

Խորոված է անում, ուտում:

Ուստան անքուն էր: Կատուները տարփոտ մլավում էին:

Մի ռոմանտիկ պատկեր. վարդերը մազերի մեջ մի աղջիկ՝ լքված լալիս էր և վարդերից թերթիկներ էին ընկնում մեկ-մեկ, արցունքների հետ:

ԲԱԳՐԱՆ
ՔԵՖ

76. <ԲԱԳՐԱՆ...>

Բագրան: Պատիկները (տղա-աղջիկ) պարում էին:

77. <ԲԱԳՐԱՆ, ԿԱՄ ԱՅԼՈՒՐ...>

Բագրան կամ այլուր. ճերմակ ու կարմիր ճին նստեմ քարվանիդ չեմ հասնի (օղի և գինի):

78. <ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ...>

Ուստան Բագրանում իրեն-իրեն խոսում էր կողքեցու մասին:

— Տո, ծուռ աչքերը չիտակ վրան էր քցել: Կփորեմ էդ աչքերդ... հա՛:

79. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Զինվորները քոչարի էին խաղում:

80. ԲԱԳՐԱՆ

Հարուստը չէր կարող տեսնել խեղանդամների:
Զգում է նույն ցավը համապատասխան տեղում — ոտքում, ձեռքում:

81. ԲԱԳՐԱՆ

— Մրգերը՝ արևի համով: Մրգերն ու պտուղները սիրել էին արևի համը չորս դին, չորս կողմը, ամենուրեք:

82. <ԲԱԳՐԱՆ ՈՒՍՏԱՅԻ ԹԵՎԵՐԻՑ...>

Բագրան Ուստայի թևերից կախ էին ընկնում, երբ նա իջնում էր կամ բարձրանում, թևերի տակն էին մտնում, օգնում.— այդպես պատիվ էին տալիս:

83. <ԿԱՏՎԻ ԱՉՔԵՐՈՎ...>

Կատվի աչքերով մի կին:
(Բագրան)

84. ԲԱԳՐԱՆ

Մի աղքատ –
Աստված երկեն ձեռքը չկարճըցնե:
Ուստան փող է տալիս նրան:

Կույր մարդիկ, իրար ուս բռնած, իրար հետևից գնում են – մուրացիկ ուխտավորներ:

85. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Մի ըմբիշ պարծենում է կանանց խմբում՝ սեղանի վրա.
– Իմ մեջքս դեռ գետին չէ առել:
Հարուածը լսելով ասում է կարոյին.
– Կարո, էդ կնանիք, էս ուխտի կնանիք, ողջ աշխարհի կնանիք կարող են էդ տեսակ լեզու բանեցնել, թե իրանց մեջքը գետին չէ տեսել:

– Փառավորվիս, տերտեր, կարգիդ հաստատ մնաս:
[– Կնմանի տնփեսու վիզ:]
[– Սև ու դեղին,
Ով որ տեսնի, պատռի լեղին:]
– Հարուստները աչխարք կթալնեն՝ գող չեն համարվի, աղքատները մի բրդուճ կճանկեն – աչխարհով մեկ գող կհռչակվին:

86. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ոսկի դեղին օրեր էին, մեղրի պես անուշ օրեր:

Արևը փաղաքուշ, մեղմ:

Քամի չկար:

Պարտեզներում, այգիներում — ոսկի տերև, սաղարթի մինչից փայլում էին տանձ, խնձոր, փշատ, սերկևիլ:

87. ԲԱԳՐԱՆ

Հին Բագարանում, հին աստվածների ժամանակ, փառքի օրերին, արևը վրնջում էր և դաշտերը կանգուններով ցորենի հասակ էին քցում:

88. ՄԻ ԱՂՔԱՏ: ԲԱԳՐԱՆՈՒՄ

— Հաց ուզողին քար չեն տա:

— Ողորմությունը երկնքի սյունն է, օրթե չլինի, փուլ կուգա երկինքը մարդու վրա:

— Աստված երկան ձեռքը չկարճացնե:

— Մեկի տեղակ հազարապատիկ առնես:

— Լավություն արա, ջուրը քցե, ձկները երախտիքը կդարձնեն:

89. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Սրա ու նրա — մթնոլորտում

— Անամոթ մարդը ավելի հարգի տեղ ունի կնկա ծոցում, քան նամուսով մարդը:

— Կնիկը իրեն սիրունության ավելի գին է տալիս:

— Կնկա աղոթքը կես-գիշերին միայն կես տեսնել՝ մարդ ունենալն է:

– Կռիվ կերթաս՝ Աստված կանչե մի անգամ:
– Երկու կնիկ իրար հետ դրախտումն էլ չեն ապրի:

90. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Երբ Ուստան մենակ լսում էր փողերին (սրինգների, դյուդուկ) միտքը թափառեց, պատկերացան Հայր, մայր... մանկություն, փախուստ... և չա՜տ բաներ... Սանամ, Հայաստան, մահ...

Հետո նվագը նրան տարավ հեռու, հեռո՜ւ, տարտնղեց միտքը, սիրտը... մաղվեց, ցրվեց ինքը, դարձավ հող, ջուր, ամպ. աչխարհով մեկ եղավ, աչխարհ դարձավ... անծայր, անվերջ...

91. ՈՒՍՏԱՆ ՍԱՆԱՄԻՆ ԲԱԳՐԱՆ

Երբ Ուստան Սանամին Բագրանի գոմում գրկեց և համբուրեց, այնպես զգաց, թե ամբողջ աչխարհը գրկեց ու համբուրեց:

Երջանկացավ անսահման կերպով:

92. <ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ...>

– Ուստան Բագրանում, նոր մտած ժամանակ, շատ ուրախ էր, աչքերի առաջ [չողչողուն] չքեղ տեսիլներ էին չողչողում – Սանամին տեսնել, Հարուքը, քեֆ, պար...

Եվ սիրտը բազմապատկվել էր:

— Բագրանում պար:
— Ի՞նչ պար, փոթորկի մեջ նետված մարմին:

93. ԲԱԳՐԱՆ

Կույրը, արևի տակ, բայց հավիտենական խավարի մեջ նստած, մեկնել էր չոր ձեռքը, մուրում էր:

94. ՈՒՍՏԱՆ ԳՅՈՒՄՐԻ ԿԱՄ ԲԱԳՐԱՆ

Երբ շատ կիներ է տեսնում, ասում է.
— Էսօր աչքերս դրախտի մեջ էին:
Մարուք, Աղանիկ:

95. ԲԱԳՐԱՆ, ՍՈՆԱՅԻ ՊԱՐԻՆ

Կողբեցին հետո եկավ նստեց Թորոյի կողքին: Թորոն հարցրեց.
— Ես չէի տեսե, թե հարս էսման պար կուգա:
— Շիտակ է, լավ է պար գալում, պատվական չնորհք է ցուց տալում:
(Գոնե մի անգամ Կողբեցուն պիտի խոսցնել...)

96. <ԲԱԳՐԱՆՈՒՄ...>

— Բագրանում: Հարուքը տեսնում է մի շատ սիրուն հարսի, և ոգևորված (չկարողանալով հարսին պահել)

դրկում է և Ուստային պաչում, հարսը տեսնում է, գգում, կարմրում և ծիծաղում:

97. <ԲԱԳՐԱՆՈՒՄ, ՄԻ ԳՅՈՒՄՐԵՑԻ...>

– Բագրանում, մի գյումրեցի երիտասարդ, որ Կայծակի հետ եկել էր, Բագրանում հարբած ճառում էր աշխարհի ունայնության մասին: Ուստան լսեց և ասաց.

– Էս էլ Գյումրվա Հարութն է:

98. ԲԱԳՐԱՆ
ԿԱՄ ՀՈՐ՝ ՎԱՐԴԱՆ ԱՂԻ ՄԱՀԸ

Մահն էր, որ նրան շատ մոտիկ եկավ, սև ստվերը ձգեց նրա՝ Հարութի հոգու վրա և զարկեց հորը կամ մաստարեցուն:

Եվ մահը չոշափեց Հարութին:

– Նա իր սրտի մեջ ապրելով, աշխարհը իբրև երազ տեսավ:

– Նա անձնատուր էր տաժանելի խոկումների:

– Նրա ձայնի վրա՝ հազար հուշեր էին ոտի ելնում իր մտքի մեջ:

– Ներուժ ուշադրություն, ներուժ սեր, ապրում:

– Եռանդուն երևակայություն:

– Նվիրվեց խոկման, ինքնահայեցության:

– Իր շրջապատը լցրեց երևակայության շինած էակներով, իրերով:

– Այդ անցնող ակնարկը ուզեց որ հիշողության մեջ տպվի:

— Հոր մարած աչքերը. միայն այդ աչքերը օր ու գիշեր ներկա էին նրա մոքի աչքի առջև:

99. ԲԱԳՐԱՆ, ԱՅԼՈՒՐ. ԱՆԻ. ԱԼԵՔՊՈԼ: ԵՐԳԵՐ

— Ղարսա բերդը բլել է...
— Ապարակ բանձր գեղ է
Ջուրը հիվնդի դեղ է:
— Լելե յաման...
Արև դիպավ Ամկու բերդին...

100. ԲԱԳՐԱՆ

Այս լեռների ու դաշտերի վրա հազար տարիներ առաջ վրնջացել է հայոց քաջաձի արևը,— ես լսում եմ այդ վրնջյունը հիմա էլ: Սիրտս ապրում է այն ոսկի ժամանակներում, հազարավոր տարիներ առաջ, ուր հայ ժողովուրդը, ազատ և անկախ տոնում էր իր բարի աստվածներին: Եվ լսում եմ մեր ձորերն ու ծերպերը լցված հին-հին ձայները, որոնք որոտացել էին նրանց կրծքերից...

101. ԲԱԳՐԱՆ

— Արամազդին. մեծ, արի, արարիչ երկնի և երկրի, լիություն և պարարտություն տվող:

— Անահիտը ոսկեծին:

— Արեգակը՝ Արամազդի աչքը:

— Հայոց հին զոհերը — մանավանդ Անահիտի համար — ճերմակ արջառներ, ճերմակ նոխազներ, ճերմակ ձիեր, ճերմակ ջորիներ:

– Միր հարդագողի = Միր Կաթին:
Մեհյան = կռատուն:
Բագին = զոհասեղան:
– Աղբյուրները պաշտվում էին Ակնեղբայր անունով:

102. ԲԱԳՐԱՆ

Մահմեդն ասում է, քարոզում է՝ ոչ մահմեդականների կյանքը, գույքը իսլամինն է. սպանե, առ, թալանե – ջեննաթ կերթաս:

Քուրդն ասում է – հռե կոպալ է, հռե ջաննաթ է, լախտի ուժով դրախտ կերթամ:

Իսկ մեր կրոնը – սիրի՛ր թշնամուդ, զենք մի՛ վերցրու, գլուխ խոնարհի՛ր... հետևանքը՝ ստրկություն:

103. ԲԱԳՐԱՆՈՒՄ ՏԻՐԱՄՈՐ ՎԻՐԱՎՈՐՆԵՐԸ

Երբ Հարութը տեսավ այդ դժբախտների վերքերը (աչք, քիթ, բերան, ձեռք) այնպես ներգործվեց, տպավորվեց, որ իրապես զգաց այդ վերքերը իր վրա: Վախեցած ձեռքը տարավ երեսին...

Ոչ թե գարշեց, զզվեց, այլ սարսափեց վտանգից, ցավից:

104. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Երկու, երեք կանայք խոսում են: Ուստան լռեց, Հարութի հետ –

«Էդ բանը հին բան է, էդ եղել է Թումոյի Վարդանի սպանութեան տարին»: —

105. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ղարսեցիք երգում էին.
— Աշխարհը մեկ փանջարե է —
Սայաթ Նովա:
Հարուածի վրա ազդեց այդ երգը — իմաստով և եղանակով:

106. ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆ ՄԵՆԱԿ

Նվագում էր փողը (դյուդուկը), փողը մահ էր նվագում... ինքն ուզեց, որ նվագե ամենատխուր երգերը, տաղերը, եղանակները...

107. ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆ ՄԵՆԱԿ

Գիննետուն. մի դյուդուկ. մի բոզ, երգում էր տխուր մեղեդիներ: Լսում է. լռութիւն. կրոնական լռութիւն: Կիսախաւար: Ուստան աչքերը գոցել, լսում էր: Նվագը Ուստայի հոգին իր բանաստեղծական թևերի վրա առած տանում էր հեռո՛ւ, հեռո՛ւ — Բագրանից հեռու: Նվագի ալիքների վրա դնում էր նա: Ուստան գլխիկոր, ծնրադիր ծնողների դերեզմանների վրա, աչքերը բաց, անթարթ նայում է գերեզմանի լռութեանը. հուշեր մանկութեան օրից, համբուրում է դերեզմանները և լաց լինում...

Փողը նվագում էր. Ուստան գլուխն առած ձեռքերի մեջ, մեղմ, անձայն լաց էր լինում:

108. ՀԱՐՈՒԹԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ս. Գեորգի մատուռի առաջ: Թափթփված իրար վրա հիվանդներ, հաշմեր: Հարուքը նայեց նրանց և ասաց.

— Եթե Աստված բարի է, թող բժշկե սրանց, թե կարող է՝ թող հրաշք գործե: Օրթե բարի է՝ կուզե, բայց չի կարող, անզոր Աստված է, ուրեմը էդպես Աստված մարդուն պետք չէ. եղած-չեղած. օրթե կարող է, բայց չի ուզե, կնշանակե չար է, ուրեմն և պետք չէ մարդուն չար-Աստվածը:

109. ԲԱԳՐԱՆ

Հարուքին Ջավուշի հետ տուն ուղարկեց, որովհետև Հարուքը դեղնել էր և դողում էր. ինքը մնաց տեսնելու հետևանքները: Եկան թափվեցին շատ մարդ, բայց նույնքան էլ փախան, գալիս էր պրիստավը:

Ուստան նայեց մեռելին, վերքը, լերդացած արյունը, աչքերը խավար, մեկը կիսաբաց, մյուսը արյունի տակ ծածկված: Լեզուն դուրս ընկած, ծնոտը կախված... Զարհուրեց և հոգու մեջ տեսավ իրեն նույն վիճակի մեջ, կռվի դաշտում ընկած այսպես, ինքը Ուստան այսպես մեռած: Կռիվ գնացողը կմեռնի էլ, կմեռցնե ուրիշին, ուրիշն էլ քեզ կմեռցնե...

Եվ շատ տխրեց... ու շփոթ քայլերով հեռացավ մռայլ, տխուր վայրից... գնում էր, չգիտեր ուր գնար. ոչ մի տեղ,

ո՛չ մի բան սիրտը չէր քաշում, չէր ջերմացնում: Նույնիսկ Սանամը եթե կանչեր՝ վրան հոգի չուներ գնալու... Գնաց, թափառեց և ակամա, կարծես մեկը կռնակից հրելով ներս քշեց դյուղական գինետունը՝ մի պստիկ սենյակ, անշուք...

Տեսավ երկու քաղքցի զուռնաչիներ, փողհարներ...

Ջմոռանամ ասել, որ Ուստան Բագրանը հետը չէր բերել ատրճանակը: Անհարմար համարեց անտեղի գինված գալ: Թո՛ղ չիմանան, թե Հայաստան գնալու միտք ունիմ, դաղտնիք է, մինչև որ նպատակիս հասնեմ, ամուսնանամ:

Հետո:

110. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Կարսից եկած երիտասարդների մի խումբ գարմոն (գարմոնյա) էր նվագում:

Հայ սալդաթները թևերը իրար ուսերով ճգած՝ պտըտվում էին ու երգում —

Գացի եկեղեցի, վառի մոմերը,
Ջեռքս տարա, հանի <անընթ.> ծամերը:
Յար ջան, յար ջան,
Սալդաթ գացող, յար ջան:

Ես մի խեղճ տղա եմ,
Աստծուն ծառա,

Աստծո խնդրվա,
Մուրազդ չառա:

Յար ջան, յար, անմուրազ յար ջան:

111. ԲԱԳՐԱՆ ՔՑԱՆԴՐԲԱԶԸ

Յալանչին, առակ-պառակը, ծաղրածուն այծամարդն է: Հագնված է այծի մորթով, կոտոշներ ունի պզտիկ, այծի մորուք: Սև է, մազոտ: Արագավազ, ցինիկ, կայտառ, մկմկում է այծի պես, այծի պես թռչկոտում է...

112. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Տոնավաճառի մեջ ծախում են տանձ, խնձոր, նուռ, խաղող, ձմերուկ, սեխ, փչատ, սերկևիլ:

Կողբա տառիկները, աղահանքի բանվորները, ծախում էին աղի-աչքերը (բյուրեղներ) բյուրեղից չինած խաչեր, ավետարաններ:

113. <ԲԱԳՐԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ...>

– Բագրանի վանքերը չինող վարպետները 30 կոտ տաքդեղ են կերել...

Գմբեթի տակ, արձագանքի համար թաղած պատերի մեջ, կարասների մեջ ադամնիները բույն են դրել, և սար-յակները:

– Մաստարեցիք և թալինցիք կռվեցին իրենց հին վեճի համար. յայլայի, ջրի, հողի...

– Կայծակի ընկերը փառաբանում էր տրադիցիաները, նրա պահպանումը, իբրև ազգի գոյության հիմերը:

114. <ԲԱԳՐԱՆ. ՈՒՍՏԱՅԻ ԹԵՎԻՑ...>

– Բագրան. Ուստայի թևից կախ էին ընկնում, երբ նա իջնում էր կամ բարձրանում:

(Եվ Հայաստան գնալու օրերը):

– Երբ Ուստան բոլորովին զբաղված էր Հայաստան գնալու մտքերով, խոսում էին նրա մոտ, նա չէր լսում, նրա աչքերը հեռուն էին նայում:

Ուստան: Հիմի էլ երթամ ազգի տունը չինեմ: Հերիք է-սար-էնոր տունը չինեցի:

115. <ԳՅՈՒՂԱՑԻ ԿԱՆԱՑՔ...>

– Գյուղացի կանայք Բագրանում բռնում զննում էին քաղաքացի կնկա չորերը...

— Հարութ. Դու որ քու տեղովդ էդ գիտես, ըբա՛, Աստված, որ ստեղծել է...

— Կմեռնենք, հոգիներս կերթա կխասնի մեր հոր ու մոր հոգուն, վերջն էլ՝ ամեն մարդ վերջն էլ Աստծու հոգուն:

— Բոշաների հարսները չատ լավն են, սիրուն, խաղացող, բայց բերդի պես ամուր բաներ են: Թագավորի հարսը, աղջիկը ձեռք կընկնի, էնոնցը — հեչ:

— Փարիսեցություն, կեղծավորություն:

— Նա դողում էր, նա մի տարօրինակ երկյուղի մեջ էր: (Կրկնել նա):

116. ԲԱԳՐԱՆ

— Սայլերը ճռինչով իջնում էին զառիվայրը՝ առջևը եզների սայլապանները բռնելով:

— Հարս-աղջիկ, գույն-գույն, ծաղկանկար հագուստներով, զարդերով, ոսկի-արծաթներով՝ զնգուն, զրնգուն:

— Մանուկների ուրախ ճիչ:

Մատղացու ոչխարների մայուն, խոյերի բայուն: Խոյեր ներկված կարմիր, կանանչ: Կոտոչները, գեղմը:

— Ադամնինները թռչում էին թևերը գետի ջրերին զարկելով:

— Բագրանի այգիները կթել էին արդեն, բայց ծառերի վրա տեղ-տեղ կային կախված դեղին-ոսկի տերևների մեջ՝ որոնց միջից արևը մաղում էր իր ոսկին, տանձ, խնձոր, սերկևիլ:

— Մատաղի օճախների ծուխը, տանտիկին կանայք: Տերտերը աղ էր օրհնում: Աղ էին օրհնում:

— Մի այլ տեղ տոնավաճառ՝ կերպասներ, գուլբա, թաշկինակ, մաշիկներ, կոշիկներ, հայելի և այլն, և այլն: Թյութուն, չաքար, միրգ:

Էշերի գոռոց:
Եզների բոռոց, բառաչուն:
Ձիերի խրխինջ:

117. <ԳԻՇԵՐԸ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ...>

— Գիշերը աղբյուրները, գետերը աւելի հնչուն են լինում, քան ցերեկները:

— Լուսնյակ գիշերների մասին խոսելիս՝ միշտ նկատել՝ թե լուսնյակը կարող է լինել այդ օրերը, թե մոտավորապես լուսնի քանիսն է լինում: Լուսնյակ գիշերներին աստղերը ո՞րքան պայծառ են լինում:

— Բագրանում խմեցին մաճառ:

— Ջուռնաչիք 2 հոգի, և մի դավուլչի:

118. <ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ...>

— Ուստան Բագրանում, աշուղի հետ մենակ. լսում էր սազին, և ընկնում տխրությունից տխրություն, թախիծից թախիծ, տրտում հուշերից տրտում հուշերի մեջ:

Բայց անուշ էին թվում նրան այդ տխրությունները. մանավանդ երբ Սոնայի շուրջն էր հածում:

— Երեխաները կանգնած (Բագրան) գետի ափին քարեր էին նետում ջրի մեջ, սլիկներ, և համրում էին թռիչները, ոստումները...

— Ինչո՞ւ համար ես տխուր:

— Տղայիս համար եմ: Ձգիտեմ՝ ի՞նչ պիտի դառնա:

– Ինչու համար կմտածես:
– Ազգիս համար եմ:
Այս ամենքը մեկտեղ հոգիս աղացին, մանրեցին:

119. ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ

Դավիթի խանութում, դախլ, դարակներ, չուստեր, լամբի շիշեր, միրգ, սապոն և այլն. առաստաղից մի փոքր լամբ կախված՝ տխուր, նսեմ լույս էր այրում փոքր սենյակում, անկյունները մութ, աթոռի տեր մութ-Դավիթը հենված արմունկների վրա: Դախլի վրա գինեբաժակներ, երեք բաժակ. ինքը, Ուստան և աչուղը (սազ) Փելեշը՝ տխուր, լուռ, տրամադրություն:

120. ԲԱԳՐԱՆ, ՄԱՏՈՒՌԻ ԱՌԱՋ

Մատուռի առջև, փոքր հրապարակի վրա, հինավուրց պարիսպների տակ, թափվել էին զանազան տեսակի բազմաթիվ ցավագարներ: Նրանց բերել էին զորավոր Սուրբ Գեորգի դուռը բուժման համար, հրաշքի հավատով: Այնտեղ կային բաց աչքերով կույրեր, հաշմեր, համրեր, անդամալույծներ, տիրամոր վերքով կոնված դեմքեր, ընկած քթերով: Թոքախտավորներ ճլիքի ընկած, չոլախներ, ոտները քաշ տվողներ:

Մատուռի աջ կողմը ստվերի մեջ գետին էր փռված մի ընկնավոր՝ փրփուրը բերանին, մի պատանի աղջիկ: Ժողովուրդը սարսափով, սոսկումով նայում էր ցավագարներին, նրանց համար փրկություն հայցում իրենց աղոթքների մեջ:

Հարուքը նայում էր և սիրտը կտրտվում. սև ամպի նման մռայլվում, չարախնդաբար նայում նրանց ջերմեռանդ աղոթքի վրա, որ հույս, հրաշք, փրկություն են սպասում, իղուր, ընդունայն:

121. ՀԱՐՈՒԹ

— Ուտելու հարսներ են:

— Բագրան, երբ Հարուքը չատ մարդ տեսավ՝ աշխարքը հազար անգամ լցվել է մարդկանցով ու դատարկվել. մարդիկ կծնվին, իրար նման, իրարե տարբեր, կապրին, կկռվեն, կտանջվեն, իրար կչարչարեն ու խաչեն, ամեն մեկն էլ էն կարծիքին է, թե առանց իրեն աշխարք չկա, ինքը ամենեն պետքական բանն է աշխարքում. ամենքն էլ իր մասին մեծ գաղափար ունի... ու մի օր էլ, փը՛ս, կմարին, մեռնին, կերթան: Ինչո՞ւ եկան, ինչո՞ւ գնացին, ինչո՞ւ պիտի գան, ինչո՞ւ պիտի երթան: Մարդ չի հասկանա էս խաղը, ճկի պես կաթսայի մեջ կպարինք, չգիտենք, որ տակներս կրակ կա:

122. ԲԱԳՐԱՆ

Հարուքը դիպավ ամուր կերպով մի կնոջ: Կարոն թե՝ Հարուք [քիչ մնաց] ուրիշի մսուրին մի մոտեցիր:

— Տո, էդքան էլ իրավունք չունենք. դրա մարդը ոտով-գլխով տերն է, օր-գիշեր մսուրի վրա. մեկ հատ դիպնելու իրավունք չունի՞նք:

Կարոն.— Քեզ ի՞նչ, թե ճիճուները իրար կուտեն. բանը մարդն է. թող հայերին չուտեն. թող մարդ մարդուն չուտե. մնացածները շաբա՛շ:

— Ինչքան էլ աշխարհը փոխես (ՀարուԹը), էլի աշխարհի ծառը դառը պտուղ պիտի տա. հիմքը աղու է. էլի մահ կա, հիվանդություն, ծերություն: Հիմքից պիտի փոխել:

123. ԳՆՈՒՄ ԷԻՆ ԲԱԳՐԱՆ

Սայլեր, ոտավորներ, ձիավորներ: Ուստան և Արտաշը՝ ձիավոր: Ջավուշը ոտավոր, Օսկանը սայլի վրա և ձիով:

Ագրակից եկան ուխտավորներ, միացան նրանց: Եկողների մեջ կար և ճարտարապետը: Բարևներ Ուստային և գնում էին: Բնությունը — պեյզաժ. աչնան պարզ երկինք, երազային, վճիտ, հեռավոր... խորհում էր ճարտարապետը... Հայոց երկիրը, լեռները՝ սյուներ, վրան երկնքի տանիքը... հոյակապ երկիր: Մասիսի երկճյուղ գլուխները բաց են:

Խորհում էր... հողի, հայրենիքի, գյուղացու մասին...

124. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ճառերի մեջ. թուրքի վայրագությունները: Կանայք իրենց երեխաները իրենց ձեռքով խեղդում են ջրերի մեջ: Իրենք նետվում են ժայռերից ցած: Գետնի վրա խաչել՝ քահանաներին, վարժապետներին: Բռնաբարել... Եվ հետո, թուրք, քուրդ — մոլլա, ձեռները լվանում են և խիղճները հանգիստ գնում են մզկիթ ալլահին փառաբանում:

Իսկ Եվրոպան/մարդկությունը սուլթանին չքանչաններ է ուղարկում և առևտրական պայմաններ է կնքում: Հայերի ինչքը եվրոպացին էժան գնով առնում է: Հայերի դրամով թուրքը կաշառում է մամուլ ու պարլամենտ, և Եվրոպան իր հոտած խիղճը հանգստացնելու համար մեղադրում է հայերին՝ իբրև վաշխառու, վաճառական տարրի, որին պետք է, արժանի է ոչնչացնել:

125. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Երբ Բագրանում չրջիկ Կայծակի և մյուսների քեֆին, չրջիկ Կայծակը իր ինտելիգենտ ընկերներով հեռացավ, մնաց Ուստան իր ընկերների հետ, սկսեցին ազատ քեֆ անել: Ուստան պարեց բերզենի պարը, հույներից սովորած: Զորս թեյի բաժակներ առավ, երկուսը անցկացրեց աջ ձեռքի մատների մեջ, երկուսը ձախ ձեռքը, այնպես որ ձեռքերի միջամատները մնացին ազատ բաժակների միջև և սկսեց պարել, բաժակները զանգակների կամ կաշտանեաների պես իրար զարկելով: Castagnettes-ների պես (բամբիռների պես): Բթամատը և ցուցամատը մի բաժակի մեջ, ճկուքը և մատնեմատը մյուս բաժակի մեջ, միջնամատը ազատ թողնելով...

126. ՀԱՐՈՒԹԻ ԵՐԱԶԸ

— Ամեն բան, ասես, իր տեղից փախս կառներ, երկինքը փուլ կուգար, փլեր, վար կուգար, սար ու ձոր իրար կզարնվեին, հազար-հազար տարվա մեռելները առկա առկայի կզարնեին. զարհուրելի էր, զարհուրանք:

– Տեսնես ո՞ւմ կախարդ մատներն են այս ծաղիկները ցանել, այս աղբյուրները բղխեցրել, այս ժայռերը հունցել:

– Մարդու ոտքը չպլստա, [մի անգամ] որ պլստաց ու ընկավ, ոտքի կոխան կդառնա, էլ չի կրնա կանգնել. Հայոց ազգն էլ էդպես եղավ իր չար բախտին ու դարձավ ճանապարհի ծեծկված փոշի:

– Մեծ փող ունեցողը չէ մեծ մարդ, մեծ սիրտ ունեցողն է մեծ մարդ: Ուստա Կարո:

ԲԱԳՐԱՆՈՒՄ

Մի մարդ (մաստարեցի կամ թալինցին՝ այն, որ սպանվում է).

– Տո, գիտեք ես ով եմ, ես Զուգունի Օհաննեսն եմ, աչխարք զարի զարի եմ բերել. հլա մեկ ասեք Զուգունի Օհաննես, տեսեք՝ քանի մարդ կդողա:

127. <ԱՐԱԶ, ԱՐԱԶ...>

– Արազ, Արազ,
Խան Արազ,
Բին գյոլդան,
Ղալխան Արազ:
(Արազ, խան Արազ, իշխան Արազ, հազար լճերից բղխած Արազ):

– Արաքսաձոր:

– Վարդիհեր:

– «Սառ ջրերոտ, քաղցր պղտոր, դալար խոտոտ Կաղզվան»:

– Բագրան գալիս էին՝ Ղարսի, Շյորագյալի, Թախթի, (Բասենի) Կողբի, Կաղզվանի, Մաստարա, Թալինի գյուղացիները:

128. <ՄԵՆՔ ՄԻ ԱԶԳ ԵՆՔ...>

– Մենք մի ազգ ենք, որ ապագա ունենք:

– Աշխարհագահ իմ Հայաստան:

– Ջրաղացի նկարագրությունն և նրա աշխատանքների:

– Հացի չափը և նրա կենսական արժեքը:

– Հացը գետնից վերցնում է Ուստան, համբուրում ու դնում քարի վրա՝ թռչուններին համար:

– Բագրան, մի հարբած վերցրեց մյուսին և երկուսն էլ պլորվեցին գետին:

129. ԵՐԳԵՐ ԲԱԳՐԱՆՈՒՄ ԵՎ ԱՅԼՈՒՐ

– Ծիրնի ծառ ըլնեի,
Ճամբիդ բուսնեի,
Քանի մուտուվս անցնեի<ր>
Փեչիդ քսվեի:

– Հերոս մունչաց,
Սուլթան դողդողաց,
Վիլհելմի աչքից
Արտասունք ցոլաց:

130. <ՈՒՍՏԱՅԻ ԵՎ ՋԱՎՈՒՇԻ ՄՅՈՒՍ ԸՆԿԵՐԸ...>

[– Ուստայի և Ջավուշի մյուս ընկերը, մարդկության խոնարհ եղբայրներից մեկը – հշը:

– Յորենի արտեր, կանաչ քնար, ոսկե ծնծղա, արևի, հողի, ջրի, օդի գաղտնիքներով ուռճացած, ծծած...

– Օտարուհին այնքան կատարյալ գեղեցիկ էր (գեղեցկի կատարելություն էր), որ անխոս, լուռ և կախարդված պիտի նայեիր դարեր, հավիտենապես: Ո՞վ էր, ի՞նչ էր նա. մի վայրկյան ոտը դրեց երկրի վրա, ժպտաց, և գնաց, թռավ... հրաշք էր, ինչ խորհուրդ էր, ինչ խորհրդավոր երևումն էր, իրականություն էր թե աչքի-երևույթ, երազ, առասպել, հեքիաթ...]

– Ճարտարապետը: Մարդկությունը անդուլ առաջ է գնում ու չուտով կթռչենք օդի միջոցով, լեռներից վեր, ամպերից վեր: Ծովերի տակով: Խոսում ենք արդեն իրար հետ հեռվից... Կվերանան պատերազմները, ջարդերը, իրար ուտելը:

Հարութը: Մահը կմնա: Ի՞նչ օգուտ, ի՞նչ մխիթարանք:

Զգիտնայինք, խիղճ չունենայինք, ավելի լավ:

[– Ի՞նչ է, Սանամիդ ոտներն ամպոտ են:

– Սանամերները գաթա էին չինում գալիս Ուստային տեսության:]

– Բագրանում: Քեֆին:

Սուրբ Բագարան, մեր հին լավ աստվածների սրբավայր, Արամազդի, Վահագնի, Անահիտի: Դուք քաջ դիք, արի և մեզ արի էիք դարձրել: Ձեր զորությամբ մեր հայրենիքը հզոր էր: Ձեր փոխարեն եկավ ստրուկների կրոնը

քրիստոնեությունը, որ մեզ զինաթափ արեց, մեղկացրեց, կորցրինք մեր ռազմական առաքինությունները: Մեզ չի-ննեց գառներ աշխարհի գայլերի առաջ: Հիմա նոր կրոնի ժամն է. եկել է դաշնակցությունը, նա հայության ողնա-շարը պիտի ուղղե և պողպատ դարձնե, զինե պիտի գայլ աշխարհի դեմ:

Այս աշխարհում պիտի գիտենաս գլուխ պահել, կռվել, պաշտպանել քեզ, եթե ոչ՝ կուտեն: Այս աշխարհը կռվի դաշտ է, գոյության կռվի: Կռիվը բնության էությունն է, բայց վա՛յ հաղթվողին, պետք է կեր չգնաս, եթե ուզում են քեզ սպանել, դո՛ւ սպանիր նրանց: Այս աշխարհում խաղա-ղություն չկա, սուտ խոսք է. չկա և սեր, մարդասիրություն, գութ. իրար ուտել կա, ջարդելը թույլին, թույլերը ա-վելի թույլին: Միայն այն ժամանակ խաղաղություն կլինի, երբ բոլորը հավասարազոր կլինեն, հավասար-հավասարի դեմ ելնի, կռվի. պիտի ուժեղանանք, զորանանք, հավա-սարվենք ուժեղների հետ, որ մեզնից վախենան և հարգեն մեզ: Պետք է լինենք քաջ, հանդուգն, տղամարդ, զինվոր, մարտիկ: Եվ ահա գալիս է այդ նոր սերունդը...

131. ԲԱԳՐԱՆՈՒՄ

— Թուրքը զինված է, նա արյունարբու է, նա չի լսե մարդկության քարոզները, պետք է նրա պես լինել, որ նա վախենա:

Թող կորչի քրիստոնեությունը.— լավ իմացեք, որ մար-դը մարդու դեմ գայլ է: Ուժեղ լինենք, կռվենք, կեցցե կռիվը, նա սուրբ բան է, նա է մարդուն մարդ դարձրել, կռվով ենք տեր դարձել գազաններին. կռվով կկոփվի կամքը, նկարագիրը:

(Հարուքը լսում էր և սոսկում, իսկ Կարոն հրճվում էր):

132. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Հայոց Արծվի ճառից:

Ես բախտավոր եմ, որ գտնվում եմ հայ երկրում, հայ ժողովրդի մեջ: Այս երկիրը, այս հողը՝ իր խորհրդով ու գաղտնիքներով ստեղծել է հայ ժողովուրդը, և հայ ժողովուրդն էլ իմաստավորել է այս երկիրը, իր Հոգու պատկերը դրոշմել է այս հողի վրա: Այս հողին տվել իր Հոգին, հայացրել է, իր Հոգին առարկայացրել է այս հողի ու քարերի մեջ:

Այս հին, միլիոն տարիների կյանք ունեցող անհոգի, անտարբեր քարերին ճև է տվել, իմաստ, գաղափար, այս քարեղեն մագաղաթները լեզու են առել և հայ բարբառով պատմում են մեր նախահայրերի գործերի մասին, նրանց ապրումների, նրանց գաղափարների, մտքերի մասին:

Արամազդ, Անահիտ, Վահագն, Գեորգ Մարզպետունի... Բագիններ, տաճարներ, դարերի պատմություն, որոնք [ապրում են] շարունակում են ապրել մեր արյան, մեր Հոգու մեջ: Ասում են, որ դու հայ ես, հայի չառավիղ, և հայ պիտի մնաս, միշտ նորոգվես, արդիանաս դարի համաքայլ, բայց միշտ հայ, հին արմատի վրա, ընդերքից ծնված հյութերով նոր հայ՝ նոր գաղափարներով շնչող հայ:

133. <ԲԱԳՐԱՆԻ, ՆԱԽՃՎԱՆԻ...>

Բագրանի, Նախճվանի, Բվիկի, Զուչի, Ծպնի, Ագրակ, Մավրակ, Կաղզվան, Քիրս...

Այս գյուղերի համար նայել հետևյալ գրքերի մեջ, թե նրանք ռուս տիրապետությունից առաջ (1877-ից) բնակված էին, թե՞ ամայի էին:

— Բնաշխարհիկ բառարան:

— Հայր Ներսես Սարգսյան, Ուղևորություն:

— Հայր Ինճիճյանի, Հին և նոր Հայաստան:

— Հայր Ալիշան, Շիրակ, Այրարատ:

— Լինչ:

— Զամչյանց՝ Պատմություն:

Հոռոմոսի վանքը և այլն:

— Հայր Ալիշան, Աշխարհագրություն, այն գիրքը որ տվեց ինձ Աթոռակալը:

— Տիկոռ, Թորամանյան:

— Մրեն:

134. ԲԱԳՐԱՆ

Ես խմում եմ աստվածների կենացը, և կրկնում եմ անմահ աստվածների, հերոսների ճառը,— Արամազդի, Վահագնի, Միհրի. նրանք մեզ արիություն էին տալիս, կռվելու, հաղթելու: Թո՛ղ կորչի քրիստոնեությունը, Քրիստոս մեզ թուլամորթ դարձրեց, ստրուկ, վատ, վախկոտ...

Այս աշխարհը կռիվ է մարդը մարդու դեմ, ազգերը իրար դեմ, մարդկությունը գազանների, տարերքի, բնության դեմ, մահի դեմ. հետևապես պետք է զինվոր լինել, քաջ, որ կարողանաս ապրել. ավելի լավ է, որ սպանվի նա, որ ուզում է քեզ սպանել:

Ամեն հաշիվ այս աշխարհի մեջ է մաքրվում: Ուրիշ աշխարհ չկա: Թուրքը կոտորում է մեզ, մենք էլ նրան պիտի կոտորենք. նա ասում է՝ կամ ես, կամ դու. մենք էլ նույնը պիտի ասենք՝ կամ ես, կամ դու:

«Աչքի տեղ աչքը հանենք,
Ատամի տեղ ատամը.
Մեկ հատ տղայի
Ամբողջ տունը թաղենք» –

Լավ իմանան հայերը՝ հաշիվը այստեղ է մաքրվում, չկա վերջին ահեղ դատաստան, հեքիաթ է, չկա, որ թուր-քերը դատվեն և դժոխք երթան, իսկ զոհ-հայերը՝ դրախտ: Չկա հոգու անմահություն: Սուտ բաներ են: Ոչ Աստված կա վերևը, և ոչ խիղճ՝ ներքևում, մարդկանց մոտ: Եթե թույլ գտնվենք, թուրքը կջնջե մեզ և կմարսե. ո՞վ է հա-շիվ պահանջում: Մարդը գազան է, մարդը մարդուն գայլ է, բնությունը կռիվ է, թույլը կեր է գնում, մեծ ձուկը պստիկ ձուկն է ուտում. ուրեմն ուժեղ լինենք, պստիկ ձուկ չլինենք. աշխարքը արյունոտ, անգութ պատերազմ է և խոսքը հաղթողինն է:

Մնացածը սուտ բան է. քրիստոնեական վախկոտ, կոր-ծանարար լմաստուբյուն, ստրուկների կրոն, թշվառների մխիթարություն:

Կորչեն եկեղեցիները, խաչերն ու խաչվառները, խունկն ու պատարագը, կեցցե բերդերն ու հրացանները, վառոդն ու ռումբը:

Այսպիսի ճառեր, անաստված, դիվական, արյունարբու, որ Հարությը լսե, հաստատվի իր չարության մեջ, և իր տեսիլքի մեջ հոգեբանորեն պատրաստված, տեսնի աշ-խարհի ողջ սարսափելիությունը:

135. ԲԱԳՐԱՆ ԿԱՄ ՔԱՂԱՔ ԿՌՈՑ

Այրարատա Արշարունիք գավառի մեջ:

Երվանդ Բ. չինել տվեց քաղաքը և Արմավիրից կուռքերը հոս փոխադրեց և շատ բագիններ ունենալուն պատճառով Բագարան կոչվեցավ: Մեհյանների վայր:

Աշոտ Մսակեր գնաց կամսարականներից քաղաքը և այնտեղ դրեց իր աթոռը: Իր թոռը՝ Աշոտ Ա., չինեց իր ապարանքը, ուր 862 թվին իր դուստրը հարսնացույց Արծրունեաց տան պայազատ Գրիգոր Դերենիկի հետ:

[Մատուռի մեջ] եկեղեցու փոքրիկ մատուռի մեջ կա որոցաձև մի չիրիմ Ս. Գեորգի: Բժշկություններ տեղի կունենան:

Ջորս ավերակ եկեղեցիներ, հինգերորդը, չինված տասերորդ դարում, մայր եկեղեցին էր, Տապանատան Ս. Կաթողիկե, որովհետև յուր մեջ կքաղվեին Բագրատունի իշխանազունք: Հովհան կաթողիկոս հիշելով Աշոտի որդի Շապուհ սպարապետի թաղումը, կգրե. «Եդին զնա ընդ հարս իւրում ի չիրիմն Քնարանացն որ ի քաղաքագեօղն Բագրանու»:

Հոս թաղված է նաև Մուշեղի և յուր հոր բազմաչարչար խոստովանող Ա. Սմբատի մարմինները, որոնք դավով սպանվեցան Հուսուփեն Դվինի մեջ: Շինեցին զպճնասպայծառ եկեղեցին Բագրանա:

ԲԱԳՐԱՆՈՒՄ
ՏՈՆԻՆ

136. ԲԱԳՐԱՆ

Ուստան բան է պատմում, կամ ուրիշները՝ Մացակ, Մարուքը, հարսներ են անցնում, նայում են նրանց և ասում են իրար տղերքը.

— Տո, էս հարսները չեն թողնում, որ մարդ բան ասե, բան լսե:

137. <ԲԱԳՐԱՆՈՒՄ ԱՄԵՆ ՄԱՐԴ...>

Բագրանում ամեն մարդ Ուստայի հայացքն էր փնտռում: Դա մեծ չնորհ էր՝ երբ նրա հայացքը իջնում էր մեկի վրա:

138. ԲԱԳՐԱՆ ՔԵՖԻՆ ՈՒՍՏԱՅԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

– Նալբան Աղանիկը:

– Զուչեցի Դաստոյենց Եղոն: Հսկա մարդ, կոշտ ու պլոչտ, զվարթ, մի ծիծաղը վերջանում էր մի նոր ծիծաղով:

– Մացակը:

– Մարուքը:

– Թաթոս վարժապետը:

– Ռես Հոսեն:

139. ԲԱԳՐԱՆ

– Քաջ ձեռքդ դիր
գլխուս տակը,
Հանգիստ քնեմ,
Հայ տղա:

140. <ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ԳՆԱԼԻՍ...>

Ուստան Բագր<անի> ուխտին գնալիս ճիով, սրտում իրականացնում էր ինչ որ պիտի լիներ Բագրանում: Սա-

նամի հետ լինել, խոսել, գաղտնի տեսնել, քեֆ, պար, կեր ու խում: Ուղղակի ներկա էին այդ բոլորը իր աչքի առջև:

141. ԲԱԳՐԱՆԻ ՔԵՖԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուրբաթ երեկո հասնում են Բագրան: Շաբաթ առավոտ կարոն գտնում է Հարուքին և ընկերներին:

Թորոյենք էլ եկած են լինում:

Մինչև ճաշ – գնում են վանքը. ճաշվա ժամին – պատարագ:

Ճաշում են գետի ափին, շրջիկի և Աղբալյանի հետ: Նրանք գնում են: Ուստան ընկերներով շարունակում է քեֆը: Երեկոյան խմբով շրջում են ժողովրդի մեջ. ծաղր ու կատակ:

Կիրակի առավոտ – քյանդրբազ:

Ճաշ Թորոյի հետ. պար Սանամի հետ, հետո գոմում, հետո քեֆ, հետո մաստարեցու սպանումը, հետո Ուստան մենակ խմում է, Հարուքը տեսիլք գնում:

142. ԲԱԳՐԱՆ. ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մաստարեցին ու Թալինցին[1] կռվեցին, սահմանի վեճ ունեին:

Մաստարեցին ասավ, տո, էշ խուզող Թալինցի, ես քեզ հում-հում կուտեմ, գիտես, ես ով եմ:

– Դու հնչ ես, եղած-չեղած, հնչ մարդ, հեչ, հնչ:

---

[1] Ինքնապրում՝ *Թալիչցին:*

– Ես էս սարը Մասիսն եմ, իմ փափախն էլ Նոյա տապանն է,– վրա պրծավ:

– Հա, էդպես, ես քու մի բուռ արյունը,– ասաց ու քարը չպրտեց, դիպավ ճակտին, փուվեց գետին, ճակատը ջախջախված, արյունը բղխեց:

– Հարութ, տեսար,– ասաց Կարոն,– ոնց Մասիս սարը չրջավ, տապանն էլ թռավ, լողկուտա արյունի մեջ:

– Տեսար, ինչպես հեչ դարձրեց, հեչ, հեչ, ոչինչ, չկա, կար, չկա...

143. <ԷԴ ՄՈՒՆԴՈՒԿ ՄԱՀԸ...>

Էդ մունդուկ մահը չախես կոտրում է. թե չէ մեկել բաները հեչ:

Էլի մահի մասին:

– Հարութ, էսօր Բագրանը դառել է Նոյյան տապան, ով ըսես կա, է՛լ հարս ու աղջիկ, է՛լ քոռ ու քաչալ, է՛լ ստրաժ ու կողբեցի, է՛լ Ղուկաս աղա ու ջորի, էշ ու խնամի:

Կարո ջան, գիտես, որ պիտի մեռնինք ու սրտերիս մեջ հող պիտի լցվի. քեֆիս լավ վախտն էլ էդ միտքս է գալիս:

Հարութ ջան, աչխարքը աչխարքից որ անցնի, մենք իրարուց չենք անցնի:

— Էդ կա ու կա, դու նոր բան ասա՛:

ԲԱԳՐԱՆ

— Կարո, Ագրակու հարսները վնաս չունին:

— Կրնաս երթա էնոնց դուռը, երկու ոտնանի չները փորդ քամուն կուտան:

— Ինչ գործ ունիմ ուրիշ հավին ջուջու անելու. կուտ ունենամ, մենք կուտենք / մերոնք կուտեն:

144. ԿԱՐՈՅԻ ՊԱՐԸ

Բագրան, Կարոն պարեց մենակ (Սոնայի ներշնչող աչքերի տակ). կարմիր թաշկինակը կախել էր աջ ձեռքին, աչքերը սևեռած նրան, դառնում էր նրա վրա, ինչպես մի ծխնիի վրա. ձախ ձեռքը երբեմն կանուում էր քամարին, երբեմն գազազում կանգնում էր ոտների ծայրին, պտույտ-պտույտ էր անում, դաշնօրոր ոլորում և շորրում, աչքերը բնավ չհեռացնելով թաշկինակից: Ամբողջ կրակ էր — խանդ, ձև ու արվեստ:

Այդ պարը ուրիշ տեսակների հետ նա սորվել ու բերել էր հեռու աշխարհներից: Բոլորը բևեռուն աչքերով նայում էին թաշկինակին, որ դրեթե անշարժ էր մնում, մինչդեռ Ուստան ցնցվում էր, ծփծփում նրա չուրջը: Հայիլները ծափում էին և Ուստայի կրակին բոց տալիս:

— Ուստա մարդ է, գլուխ-վարպետ ամեն բանի մեջ. էս աշխարհ մարդ պիտի նրա պես գա կամ իսկի չգա:

145. ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ

Մի քանի օր է, Օսկանի ընտանիքը պատրաստություններ էր տեսնում Բագրանի ուխտի համար: Խնամիների տեր էին, ինչքան կարելի է չքեղ և ճոխ ձևով պիտի հանդես գային: Հազար թշնամու և բարեկամի աչք նրանց վրա էր:

Տաշտերով հաց թխեցին, գաթա ու բաղաջ եփեցին: Խաուրմա: Բրինձ, յուղ, պանիր: Ուստան բավական դրամ հավաքեց, և 10, 5, 3, 1: Հետո խառիխուռն իր<ար> վրա, դրեց արխալղի ծոցն ու գրպանները սև ու սպիտակ մետաղյա փողերի հետ: Մեծ ծախսի դուռ էր բացվել. թե քավոր էր և թե վերջին անգամն էր, որ Բագրանում քեֆ պիտի աներ: Վերջին քեֆը ամենից հզոր և տևական տպավորությունը պիտի թողներ բազմաթիվ գյուղերից եկած ուխտավորների հոգիների մեջ, անջնջելի հիշողություն:

Ուրբաթ օրը, վաղ առավոտյան, Օսկանենց տնից ճռնչյունով մեկնեց երկու սայլ. ուժեղ եզներով լծված, բարձած սնդուկներով հաց, գաթա, յուղ, պանիրով: Դոշակների և կարպետների և բարձերի վրա նստած էին Օսկանի կինը, հարսը, երեխաները, աշուղը, Ռես Հոսեն իր ընտանիքով: Սայլի մեկը վարում էր Ջավուշը, մյուսը՝ ծառան: Արտաշը սայլի վրա էր: Օսկանն ու Ուստան ձիավորվել էին: Մատաղցու ղոչեր, ոչխարը՝ սայլից կապած:

Գյուղի ծայրին քարվան էին բռնել մոտ [30] 40 սայլ: Ճամբան բռնել էին 100-ավոր սայլեր մոտակա և հեռավոր գյուղերից: Շարժվում էին սայլերը: Բառաչ, ճռնչյուն <...>[1]

---

[1] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է:

146. ՀԱՐՈՒԹԸ ԵՎ ԲԱԳՐԱՆԻ ՄԱՏՈՒՌԸ

Դուրսը կանդնած նայում էր և խոցոտվում և ընկճվում և զայրանում տեսնելով բազմաթիվ հիվանդներ, ցավագարներ՝ թաւիւված մատուռի դռան առաջ՝ սպասելով հրաշքի...

Ինչ հետո, ներս մտավ մատուռը, մեղավոր աչքերով նայեց — մոմեր վառ, ջերմեռանդ ծունր դնողներ...

Մեղավոր ականջներով լսեց պատարագը, աղոթողներ, հեծկլտոցներ...

Ուստան ջերմեռանդ աղոթում էր:

ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ
Նյութեր

147. <ԿԱՐՈՆ ԿԱՄ ՀԱՐՈՒԹԸ...>

Կարոն կամ Հարուբթը չա՜տ տխուր էր. նստել էր. գիշեր էր. սև-մռայլ. ասես Կարոյի [սրտից] սրտի միջից հոսում էր վիշտը ու աշխարհը սևացնում:

148. ՀԱՐՈՒԹԸ ԱՍՈՅԻ ՄԱՀԻ ԳԻՇԵՐԸ

— Տերտերս ասավ, թե Քրիստոսին նմանիր. չէ. նրան նմանվել ո՛չ կարելի է, ո՛չ էլ լավ է. բայց ես սիրում եմ նրան, լավն էր, կեր ու խումից վախչող չէր, տո, ջուրը դինի դարձրեց, ոնց չսիրես էդպիսի մարդուն:

149. <ՈՒՍՏԱՅԻ ԾԻԾԱՂՈՎ...>

— Ուստայի ծիծաղով լցվում էր ողջ աշխարհը. ծայրե ծայր:

150. <ՈՒՍՏԱ, ՀԱՐՑՐԵՑ...>

– Ուստա,– հարցրեց Հարուքը.– Զինմաչին եղե՞լ ես:

– Երկու անգամ. մեկ անգամ սուտ, մեկ անգամ ղորթ:

– Ուստա ջան, սուտ անգամվանից պատմիր բաներ, հեքիաթներ, էնոնք ավելի սիրուն են – ղորթ եղածներեն:

151. ԾԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծերերը չարունակ մտածում են, հիշում են անցյալը. նրանց մտքերը չարունակ անցյալի մեջն է, որովհետև ինչ ունեն-չունեն անցյալի մեջն է, իրենց հետևն է. ապառջները բան չունեն. առաջները – միայն մահ ու գերեզման կա. չա՜տ մոտիկ:

152. <ՎԱՅ, ԷՍ ԾԵՐ ՄԱՐԴԸ...>

– Վայ, էս ծեր մարդը, որ իր ճերմակ միրուքը տեսնի հայելու մեջ, լեղին չի՞ պատռի:

– Հեչ չի էլ պատռի, աչքին չի երևա: Կամ – չի հավատա, չտեսնելու, չհավատալու, չհասկանալու կուտա, վրան չի առնի, չի համոզվի, չի հավատա:

153. ԲԱԳՐԱՆ

Հարուք: Ուստա, տես էն հարսը՝ քիթը չոմբախ է՝ օրթե վրայից ճանճ ընկնի, հազար կտոր կեղնի... Թյո՜ւ էդոր մարդուն:

Կարո: Հաստատ է ասած՝ ծակ քարը գետին չի մնա:
Հարութ: Էդիկ ծակ տաշտ է:

Հարութ: Ուստա, էն կնիկը՝ որ թե կանանչ դերյա ունի, կտեսնես, կշորորա:

Կարո: Լավն է. ում վառելն է:

Հարութ: Իմն էր, վերջին չնչին. երեսիս էնպես կաշե, գիտես թե հեչ չի ճանչնա. լա՛վ, կերել-կշտացել եմ:

Կարո: Էդ կանանց բնութն է. կատվի դոլին՝ կուտեն, կուրանան, տո, լսչո, լա՛վ թամք ունի, լավիկն է, ինչի թողեցի...

Հարութ: Տո դու, Հարցու. չորս կնիկ եմ առել, թողած օրերն եմ մենակ ուրախացել. գիտես, Կարո ջան, ինչ հալ քաշեցի՝ մինչև որ կնտոցս յա ճամբեցի էնդիի աչխարքը, յա էսդիի. ախր ամեն կնիկ կպտոցնե իր մարդու դլուխը ուտել, էդ է կնկա սիրու ուղնուծուծը. կնիկը կդատի օր ու դիշեր՝ մարդու հոգին առնի. <անընթ.> ես պրծա էդ հոգեառներից[1]:

Կարոն: Հարութ, մեջեն չէ ասածդ, կնիկ էլ կա, կնիկ <էլ>. լավ կնիկ ունես՝ հարսնեատուն ինչ գործ ունես, գեշ կնիկ ունես՝ սգեատուն ինչ գործ ունես:

— Էդման կրնա էղնի, որ էղնի:

[— Ուստեն: Հարութ ջան, էնքան խմեցինք, որ բլբուլ դառանք:

---

[1] Պարբերութեան կողքին՝ ձախ լուսանցքում. «*Մարուքը կամ ուրիշն է ասում*»:

– Հարութ: Բմբուլ, հա՛, բմբուլ:

– Տո չէ՝ հավք, բլբուլ:

– Հա էլ ի՛նչ գլուխս տարար, հավի բմբուլ...]

– Ինչ ասեմ քեզ մարդ ասողին:

– Սոի թագավոր, սիրուն սանամերների սիրելի աշխարքի քավոր, կռվողների հաչտարար, որբևայրիների մխիթարիչ Ուստա Կարո.– ինձ մարդ ասողն էդպես մարդ կէղնի...

[– Հարութ ջան, Լեյլի ու Մաջլումն ինչ է, գիտես չէ:

– Հա, երկու սիրականներ, աստղեր էլի, դու ինձի ինչու տեղ ես դրել:

– Դեհ, խոսքիս մտիկ, Աստծուց էն կխնդրեի՝ էդոնք մեկ պսակվեին՝ ես էլ էղնեի էդոնց քավոր, դուն էլ ազապ բաշի, երկնքում մի լավ քեֆ էնենք աստղերի հետ. մեր դյուղերից տեսնեին մեզի, նախանձեին:

– Ուստա ջան, թագավորի վայել սուտ կխոսիս:]

– Հարութ ջան, կյանքը շա՛տ է կարճ. մինչև հա հո՛ւ, թեփդ կհատնի:

– Ինչքան երկեն էղներ, էլի կարճ կէղներ. տո՛, ես միշտ քեզի կըսեմ մահ չպիտի էղներ:

Վերջը, Կարոն. Ափսո՛ս, կյանքը կարճ է:

154. ԲԱԳՐԱՆ

Ուստան քեֆ էր անում. խմեց, խմեց: Եվ գլում էին զուռնաչիները և Ուստան շաղ էր տալիս ռուբլիները իբրև չաբաչ. չաբաչ:

155. ՈՒՍՏԱՆ

— Ուստան ուր որ գնում էր, մթնոլորտ էր ստեղծում: Ամենքը նրա տրամադրությունից ազդվում էին, վարակվում:

— Վախնամ էդ հարսը հեռու լսողաց լինի: (Շան փայ դառնա, բոզ լինի):

— Մարուքն որ զորք ունենա, էծը եպիսկոպոս կլինի:

— Ի՞նչ ես ծաղկազարդի ծիծեռնակի պես (ճչակ, ճչանակ) հենց մի գլուխ խոսում ես, գլուխս տարար, բո՛ղ է:

156. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ

— Էնքան հարբել էի, որ Հնդստանը ծախեցի, Զինմաչինը առա:

— Մի բան, որ ուրախ ժամանակս տխրեցնեն, տխուր ժամանակս ուրախացնեն:

«— Այս էլ կանցնի»:

157. ՈՒՍՏԱՆ

— Ուստան աչքերը կպցրեց երազելով Սանամին. և երազով գրկած նրան, քնեց Սանամի հետ գիրկ գրկի:

— Ուստան բախտավոր էր, աշխարհը պարում էր ու երգում իր աչքերի առաջ: Հոգու մեջ Գյուլոտանի բլբուլները երգում էին:

— Ուստան երազում մորը տեսավ, նորոգվեց վիշտը:

— Ծխեց երկու-երեք ծխախոտ իրար վրա, նորը վառելով նախորդի ծայրից:

158. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ

– Ամեն մարդ, հրապարակով, ուզում էր Ուստա Կարոյի հետ խոսել, ման գալ, ցույց տալ իրեն հասարակության առաջ, թե մոտիկ է, մտերիմ է Ուստայինն:

– Ռես Հոսեն ասում էր նրան թե՝ վարպետ, դու մեր ազգապետն ես:

159. <ՍՈՆԱՅԻ ՊԱՐԸ...>

– Սոնայի պարը. Ուստայի երևակայության մեջ դեռ պարում էր Սոնան իր անթառամ հմայքներով:

– Սիրո մեջ իրենց մարմինները և սրտերը խառնեցին իրարու:

– Աղջկա աչքերից կրակ ընկավ նրա սրտի մեջ:

– Մի թախիծ, մշտատև, կնքել էր նրա շրթունքները:

– Բոլոր տառապողները, բոլոր երիտասարդ մեռելները հեռուներից ձեռք էին մեկնել նրան, օգնության ձեռք, եղբայրական ձեռք:

– Կուզե հավատալ, որ երազ չէ: Որովհետև հրաշք, զեղեցիկ բան է տեսածը:

– Երբ մի հրաշալի բան կտեսնես, կթվի թե՝ կերազես:

– Շրթունքները կողպել, նստում է. չի ուզում խոսել, որ խոսի՝ պիտի ցնդի երազը:

– Սիրո, վշտի, տառապանքի մի ամբողջ տիեզերք:

[– Նրա հոգու ձայնը:]

– Լսեց իր հոգու ձայնը – տխուր, մահաշունչ:

– Տերևների զմրուխտ:

– Սիրուհու պարտեզը – մի դրախտ էր այն:

160. ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ

— Ինչքան որ վող աչխատեցինք, դումար Նախճվանը կառնեինք ծախու: Գումար կերան ու մերկ ի մոլեն դուրս էրին...

(Վերջը, աքսորին:)

— Ձեռքես թռցուցի տղաս, զավակս:

— Սև են հայերի աչքերը: Սրտի սև վշտերից են սևացել մեր աչքերը, մեր ցեղի աչքերը:

— Ճանապարհ... ի՞նչ է ճանապարհը, ինչքան մեծ լինի նա կամ պստիկ, լայն կամ նեղ, վերջ չունի, ու կապում է աչխարհները իրար, ամեն ծայրերը հանդուցյց է անում. հեռավոր հողերը, անծանոթ երկիրները մոտիկացնում է ու ծանոթ չինում, մոտիկներն ու ծանոթները հեռավոր չինում ու անծանոթ...

Ճանապարհը... այս կորած-մոլորած քրդի դյուղը կապում է Լոնդոնի ու Զինմաչինի հետ: Գլխու ես, թե ինչ բան է ճանապարհը...

— Մինչև հիմա չի մեռել, կարծում է թե էլ չպիտի մեռնի: Մինչև այսօր որ չի մեռել, կարծում է թե էսուհետ էլ մահ չունի, մեռնելու չէ:

— Էնքան հպարտ է, քիթը վեր, որ կարծես աստւմ լինի.— կամ-չկամ՝ ես եմ, որ կամ:

161. <ԿԸՍԵՆ, ՈՒՄ ԲԵՐԱՆԸ...>

— Կըսեն, ում բերանը բռնես:

– Մեկի մասին որ գեշ կամ լավ խոսեն, համբավ ելնի, անծանոթն էլ, նրան չճանաչողն էլ նույնը կկրկնե, կերդվի, կհաստատե:

– Քոստ էր, մեկ էլ տեսա փայլեցավ – փող էր թռցրել, հագուստ էր առել, նոր, չքեղ:

– «Յաւելեալ սրտի խօսի բերան» – ավետարանի խոսքը չարափոխած ասում է Կ. Գազեթը՝ երբ մարդ հայհոյում է կամ ցինիկ ցանկություն է հայտնում: Օրինակ. այս կնկա թևը կոծեմ:

Երբ նկատողություն են անում, նա այդպես է պատասխանում:

Առհասարակ նա միշտ չարափոխում է Ավետարանի, Աստվածաշնչի մտքերը, նախադասությունները:

– Երկու կնիկ մաչեցի (թաղեցի), վրա երեքինն եմ: Կնկա համովը 15 տարեկանից մինչև 25-ն է: Էնդուց հետև մինչև 40, էհ, ըչտե բան է: 40 հետև – չի ուտվի: Ջահել տղի առկա է պետք: Ծերերի համար – ճերմակ, մատղաշ հավի միս պետք է, վառեկ:

162. <ՉՆՉԻՆ, ԽԵՂՃ ԱՌՕՐՅԱՅԻ...>

– Չնչին, խեղճ առօրյայի վրա տարածվում է մեծ, խորիմաստ հավերժությունը:

– Առողջ, թրթռուն մսերով եղներ, կիներ:

– Խոսել հացի, փողի, գենքի լեզվով:

– Լույսը մեր մոտն է = ճշմարտությունը:

– Եզները իմաստուն ռունգերով հոտոտում են խոտերը, և առողջները ուտում:

— Զայների, գույների բանաստեղծությունը:

— Կա ու չկա այս աղջիկը կա:

— Մարգարենների, բանաստեղծների, հերոսների, մարտիրոսների... ուսերի վրա է հենված ու կանգուն աշխարհը:

— Հայերը զրկվեցին ու զարկվեցին, և զրկված ու զարկված մնացին:

— Գյուղացիք՝ հողից չինված այս մարդիկ:

— Ճշմարտության դառնությունը ճաշակեց իմացավ:

— Զգտել ավելի վախճանական, ավելի կատարյալ ճշմարտության:

— Մի գեղեցիկ իր (կին, ծաղիկ, եղնիկ...) անհուն գեղեցկության անցավոր, խուսափուկ ձևն է:

— Մարդ անուն՝ վրեն չես թքնե, չես նայե. բայց՝ մարդը գլուխ-վարպետ է ծնել:

— Տունս, տեղս էնոր ճակատն եմ գրել:

163. <ԾԱՂԻԿՆԵՐԸ ՏՈՆ ԷԻՆ...>

— Ծաղիկները տոն էին կատարում այսօր դաշտերում:

— Թռչունները տոն էին անում ծառերի վրա:

— Թիթեռների տոն:

— Պար էր, ոտների տոն էր:

— Բագրանում բազմությունը դիտում էր, հետևում էր Ուստայի ամեն շարժումներին: Փսփսում էին իրար ականջ կամ ասում էին իրար. Ուստան եկավ, նստեց, նայեց, ձեռքը դրպանը տարավ, ծխեց, խնդաց... ժամացույցին նայեց...

— Ուստայի մոտ ուրիշները դիմակազրկվում էին, լռում, կորչում, ոտնահարվում:

– Դաշնակցությունը նոր հոգեգալուստ էր ժողովրդի համար:

Երկաթուղին, ընդհանուր կրթությունը մի նոր հոգեգալուստ եղավ մեր ժողովրդի կյանքում:

– Թուրքը անապատներից խուժելով մեր երկիրը, ջարդել է մեր նախահայրերին և մեզ, գրավելով մեր տունն ու հողը, ավերելով մեր հոգեկան և նյութական մշակույթը, և համարում է մեզ իրեն թշնամի, որին մինչև վերջին մարդը ոչնչացնել է ձգտում...

164. <ԿՐԱԿ ԿՏՐԱԾ...>

– Կրակ կտրած, հրաբորբոք ռունգերով հովատակի հզոր ոտների և կրծքի տակ տրոփում էր մատաղ զամբիկը:

– Սարսուռով և հրայրքով, ու հևքով:

– Կրքի ձայնով ասաց:

Տրտում, թախծալի գույնով:

– Վրաս մի այնպիսի կրակ եկավ = զայրույթ, սրտնեղություն:

– Արյունիս հրայրքը:

– Կրքի հևքը:

– Արյունի բոց կարկաջը:

– Աչխարհը ծանր կչռում է ուսերիս:

– Վիշտը, սերը, հոգսը ծանր կչռում է սրտիս վրա:

– Պահերը տխուր են: Տաղտուկ պահեր:

– Պարզ խոսինք:

Ասում եմ և կրկնում եմ.

Ասել եմ և կասեմ:

– Ջյունած մազերով մի մարդ:

— Ապրում ենք, բայց չենք ապրում:

— Կյանքը: Բանըմ է, բռնել, գռքաշ կերթանք. [ամեն օր] օրը՝ նոր — փորձանքը՝ նոր, հույսը՝ նոր: Ամեն օր կխաբվիս, ամեն օր կհուսաս:

— Օրըմ էլ կըսեն, մեռավ, տանին կքցեն հորը: Հա՛ եղել ես, հա՛ չես եղել:

165. <ՄԵՆՔ ԱՂՔԱՏ ՄԱՐԴԻԿ ԵՆՔ...>

— Մենք աղքատ մարդիկ ենք, բայց ուրիշի աչքն ենք խաբում:

— Այդ աղջկա աչքում հոգի կար: Ջվարթ հոգի կար աչքում:

— Ի՞նչ քաղաք է, աչքի հաճույք չկա: Վերեն վար տգեղություններ:

— Երթամ չուկա, հաց պիտի առնեմ, բան-ման...

— Թող վերջ տամ խոսքիս, երբ մյուսը կխանգարես:

— Էս խոսքիս վրա հարություն առավ:

— Աշխարհը մեզի հետ է. մենք կանցնենք, էն էլ կանցնի:

— Ի տես երիտասարդների:

— Էրնեկ էսոնց... մերն անցավ, մեր բանը:

— Էսոնց էլ թաղող կէղնի: Մի վախեցիր:

— Ծերանալու վրա ի՞նչ դարդ պիտի էնեմ. ուրիշներն էլ, աշխարհ-դումար, գալու են մեր հետևից:

— Ամայի էր, ո՛չ մարդ կար, ո՛չ հոգի:

— Փողի մեռած չեմ. փող կամ ծուխ, ինձի համար մեկ կշիռք ունեն:

— Ճակտին գրած է գող լինել:

— Գիտեն թե՝ Փարիզ իրենց ճակատն է գրած, ուրիշ մարդ իրավունք չունի Փարիզ ոտք կոխելու:

166. <ՃԱՄԲՈՒ ԵԶՐԻՆ...>

– Ճամբու եզրին մի մարդ էր նստել. մեզ տեսնելով, ոտքի ելավ, բարևեց և մեզ ընկերացավ: Խոսում էր մեզ հետ այնպես ընտանի, կարծես, վաղուցվա տես ու ճանանչ լինեինք:

– Արտերի մեջ այնքան կակաչ կար, կարծես, դիտմամբ ցանել էին:

– Կիներ հանդիպեցանք, որոնք դնչկալները իսկույն չրթների վրա քաշեցին: Աչքերը ծածկեցին: Եվ կռնակ արին մեզ:

– Գյուղի անուն հարցրինք, մի կին մի աղջկա ականջին չշնջաց. աղջիկը, պստիկ, տվեց գյուղի անունը: Կամ ուրիշ հարց. ո՞ւրտեղից ես:

– Երթանք մոտիկ գյուղը. գիշերը հոն քնենք. ես էնտեղ իմ գյուղիս պես եմ:

– Էստեղը ապրողը գիտե, թե ջուրն ի՜նչ թանգ բան է:

– Այնքան բարձր էր աշտարակը, որ գլուխս հետ կախեցի՝ տեսնելու համար ամբողջ հասակը:

– Տղային կզարթնցնե. քանի ես ձայն կուտամ, ինքը՝ մեկէլ կողքի վրա ու կմշշացնե:

– Էս ինչ սար է, հարցրեց մատով նշան տալով:

167. ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի ոճ ունեցող ազգի չենքերը՝ տաճարները և տները, այնպես են հղացված ու կառուցված, որ լրացնեն այդ ազգի հայրենիքի բնությունը. իսկ <անընթ.> ներդաշնակվեն բնության հետ:

[Ահա մեր գյուղացու խրճիթը – գմբեթավոր:]

Ահա մեր Մասիսը՝ դմբեթ,
Մեր տաճարները՝ Մասիսի նման,
Մեր գյուղացու խրճիթը՝ դմբեթ,
Մեր հոգևորականների վեղարը՝ դմբեթ...
Մասիսի գագաթը, եկեղեցու դմբեթը, խրճիթի դմբեթը և հոգևորականների վեղարները — մի ողջ ներդաշնակություն... (մի հզոր երգ, չարական):

Ոճ, ինքնուրույն մշակույթ ունեցող ազգը կարող է ոչնչանալ, կոտորվել, բայց ճուլվել չի կարող...

168. <ԹՐՔԱԿԱՆ ԽՈՒԺԱՆԸ...>

— Թրքական խուժանը դարերի անվերանալի մղձավանջ է հայերի գլխին: Ոչ մի հզոր երևակայություն չի կարող ընդգրկել այն խեղճ, խոլական զարհուրանքը, որ վրչել է հայերի գլխին:
Եզակի, եզակի դժբախտ ճակատագիր է ունեցել հայը: Զարհուրանքի աշխարհ. ահա՛ մեր հայրենիքը, որից, ինչպես արյունոտ գետեր, վխախել են հայերը: Թուրքը չնչել է հային և նրա գերեզմանի վրա իր հայրենիքն է չինել:

169. ՈՃԵՐ

— Ես փորս բան պահող չեմ = գաղտնապահ, զուսպ, լսող (պահող):
— Ես էս գործի համար ձեռքս կրակի մեջ կոխող չեմ = հաստատ բան չեմ. չեմ միջամտի, հավատա:

– Մազից մանանեխ ջոկող:

– Էրնեկ էն տարին, որ Սաքոն գիրկս էր, Մարոն՝ փորս: Որ Անթառամը գիրկս էր, Մայրամը՝ փորս:

170. <ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԸ...>

– Հայաստան աշխարհը իր լեռներով մի խոլական, վիթխարի հրաբխային ծով է, որի երկնահաս ալիքները կատաղի հորձանքներ են տվել ու քարացել՝ կազմելով այս հսկա լեռների ու վիհերի բավիղը, խուժանը, խառնիճաղանճը:

171. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառը – նրա հոգու մի կույտն է: Այդ բառերի մեջ են նյութացած, առարկայացած մեր վիշտը, զրկանքները, դառն ու զվարթ ապրումները: Մեր երազները, հույսերը, ըղձերը, սերը... մեր ամբողջ ժողովուրդը:

Եվ ինչպե՞ս լքենք հիմա այդ լեզուն, ուրանանք, մոռանանք, մեռցնենք: Նրա համար արյուն են թափել մեր նախնիքները...

172. ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

Ուրիշ հայրենիքներում մարդիկ զվարճանում են, և <անընթ.> են, ու հոգիները մարդկանց մանրացած է մանր իրերով, իսկ մեր հայրենիքում մարդիկ մտածում

են՝ խոհուն են և մտորուն, և անհունի մեջ սուզվում են նրանց խոհերը, ինչպես գագաթները մեր հավերժախոհ լեռների:

Հայաստան աշխարհ, քո դաշտերը այրված են՝ Աստուածո հայացքի բոցերից, և անծայր փոշիներն են դեգերում քո արդար ճանապարհների վրա, Աստուածո քայլափոխներից ելած փոշիները...

Եթե երբեմն մարգերդ չոայլված են ծաղիկների շնորհքներով և աղբյուրների բարիով (բարութեամբ), բայց ժայռերդ կիզող ու մերկ՝ ճշմարտի նման, և աղքատ ես դու ինչքերով, ինչպես մենք, բայց հարուստ ես և կարող մտքերով ու խոկերով, ինչպես մեր հոգիները...

Եվ խորն են մեր մտքերը քո ձորերի նման, և բարձր են քո լեռների նման, որոնց ճակատները աստղերին են դիպչում, և խոհերը անհունի մեջ...

Երկիր, Մասիսը քո գմբեթն է, և մեր երազներն ու ըղձերը, մեր աղոթքներն ու խոհերը գալարվելով, հյուսվելով քո սյուներով, գմբեթն ի վեր հասնում են անհունին:

Ուխտի և աշխատանքի, ճգտման և գաղափարախոս երկիր, քո սրտից ու սրտներից պատգամներ են ծագում համբարուների և ելուզակների համար, որոնք իրենց եղբոր արյունով են անվում...

[Երկիր պայքարի, Աստուածո]

Պատգամաբեր երկիր:

Աստուածո շնչով կիզված երկիր:

Քո ժայռերդ՝ հավատարիմ և հավատով:

Իմ տոկուն երկիր, երկաթաքար քո լեռնալանջերիդ նման:

Աստվածաբարբառ լեռներ:

173. <ԻՆՁԵՆ ԼԱԱԾ...>

– Ինձեն լաած չլինես:

– Ինձեն քեզի ասեմ, որ ես ազգիս բարեկամ եմ:

– Ա՛յ, քոռնաս, քոռ ապրիս:

– Այ, տունը մնաս, այ աղջիկ:

Խմում եմ հայրենիքի, լեզվի և գիտության <կենացը>:

Սկսում եմ հակառակ կողմից, հայրենիքից:

Խմում եմ հայրենիքի կենացը: Հայրենիքն այն երկիրն է, ուր մեր հայրերը, մայրերը ապրել են, տոկացել, աշխատել, ստեղծել արժեքներ, և կտակել մեզ՝ իրենց չառավիղներին: Նրանք իրենց հոգին տվել են մեզ և փոչիացել, հայրենիքի հողի հետ հող դարձել:

Այդ հողի՝ արյունով, քրտինքով... տոգորված, անմահության կենացը...

Լեզվի...

Եվ գիտության՝ նա է որ ստեղծել է հայրենիքս, նրա իմաստության կենացը. նա, որ ստեղծել է լեզուն, հայ լեզուն:

174. <ԿՈՎԻ ԴԱՇՏՈՒՄ...>

– Կովի դաշտում զինվորը մահվան հավիտենական սպասումի մեջ է:

– Ամեն մի զինվոր կովի դաշտում բնազդաբար ձգտում է իր վիճակի արհավիրքը չպատկերացնելու:

– Ջիերը գարի էին ուտում, իսկ ճնճղուկները շուրջը դեգերում էին թափված գարեհատիկները թռցնելու:

— Այս խոսքի մեջ էր ամբողջ աղը:

— Աղջկա մոտ: Նա իրեն մեջ զգում էր սիրածի անուշ և պայծառ հայացքը:

— Ես քո մասին մի հեքիաթ եմ երևակայել, ստեղծել: Մի առասպել եմ հյուսել քո մասին:

— Դու իմ արյան մեջ արև ու հիացմունք, սեր ես ներարկել, ուժ ես սրսկել, սեր ես սրսկել:

— Երազում էին մի մեղմ ալիքի թևի վրա օրորվելով:

— Խոսք բացվավ, առարկա եղավ:

— 31 մարդ մտավ, 31 մարդ դուրս ելավ մեր տնից:

175. <ԹԵՎԵՐԸ ՄԵՋՔԻՆ...>

— Թևերը մեջքին գոտի արեց:

— Այս աղջկա գեղեցկությունը և կամ այս տղայի ոսկին համոզիչ փաստեր էին:

— Պարտեզում, արգելված պտուղը քաղում էին միասին:

— Օձեր-կարիճները, գայլերը զարթնեցին նրա սրտում (զայրացավ):

— Մենք գերեզմանը խուփ աչքերով ենք գտնում: Այնքան որոշ է տեղը գերեզմանի, որ խուփ աչքով գտնենք:

— Առանց սիրո աշխարհը անմիտ մի մեքենա է, արևը դղում հասցնող, ծաղիկները էշերի կեր, աղբյուրները լվացքի համար: Աղտոտ լվացք: Աղբյուրները վճիտ, երգող...

— Բագրան: Հովը մի կնոջ դոդնոցի ծայրը վերցրեց: Կինը չատ կարմրեց:

176. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Հարուածը քսվեց մի սիրուն կնոջ, դարձավ ասաց Ուստային.

– Հոգիս քսվավ էնոր:

ՍԱՆԱՄԸ

– Երկու աչք ուներ. մեղրի գույն ու մեղրի նման քաղցր: Աչխարհում նմանը չես գտնի անուշ... կուզես իսկի չմեռնես, հուր հավիտյան ապրես և միալար նայես, նայես էդ անուշ, մարդու կյանք ու հոգի տվող աչքերին:

177. <ՀԻՄԻ ՄԻ ԼԱՐ...>

– Հիմի մի լար. պահե ուրիշ հեղ. էվելի գեշ օրերու համար: Ասաց Կարոն:

– Իր քրքիջով լցրեց ողջ սենյակը, ողջ աչխարհը:

Զուռնան իր ձայնով լցրեց ողջ աչխարհը:

– Կարոն բան-գործ արել էր, ամեն օր այսինչ մարդուն այցելել:

– Կանայք հավերին ջու-ջու կանչելով կուտ կուտան: Գոգնոցների մեջ կուտը:

– Պառավները դռների առաջ նստած՝ հին տեր-ողորմայի հատիկները չխկչխկացնում են:

– Հարսները կուժերով, փարչերով ջուր են կրում:

178. <ՈՎ ԲԱՐԵՎ Է ՏԱԼԻՍ...>

– Ով բարև է տալիս, Ուստան նրան ծխախոտ է հրամցնում:

— Թե գործ չունես, նրանց (հարուստների) փողերը հաշվիր, դաշնակցության հիմարությունները հաշվիր:

179. <ՀԱՄԲԱՎԸ (ՈՒՍՏԱ ԿԱՐՈՅԻ)...>

— Համբավը (Ուստա Կարոյի) մեծացավ, ալիք նետեց, լայնացավ, հասավ ամեն տեղ ու ամեն ափ, հեռու ափեր...

— Երազը կես իրականացում է:

— Մահը իր այլանդակություններով երևակայելը կես իրականացնել կնշանակե: Եվ սարսափում է մարդ:

Երևակայելուց նույնիսկ մարդ սարսափում է:

— Երևակայությունը իրականացնում է ոչ ներկա մի վիճակ, այլ անցյալ և ապագա:

180. <ԱՉՔՈՎ ՁՍՊԵՑ...>

— Աչքով զսպեց նրան:

— Աչքով կերավ, համբուրեց, աչքերով կերավ, հրամայեց, սաստեց, հասկացրեց:

— Ես գիտեմ ինչ կա սրտիդ մեջ: Ես սրտագետ եմ:

— Մահն այնքան սարսափելի բան է որ, եթե նույնիսկ Աստված էլ գոյություն ունենա, անարժեք է նա մարդու համար:

Ուրիշ բան, եթե հոգու անմահություն լինի... Բայց այդ էլ չկա: Սրանից հետո Աստված կա թե չկա, մարդու համար միևնույն է:

181. <ՇՈՒՆԸ, ԿԱՏՈՒՆ...>

— Շունը, կատուն հոտոտեց/հոտվտեց նրա հագուստները, խուրճինը, տրեխները և գնաց:

– Գյուղացին արևին նայեց սայլը լծելու համար (ժամ):

– Գյուղացները հանդից եկան, լցվեցին գյուղի փողոցները, տները:

– Մոտը մարդիկ լցվեցին, չենցավ, չենցավ:

– Այս զրույցի, խոսքի մեջն էին, երբ նա ներս մտավ:

– Երկու ձեռքը երկու ականջի վրա դրեց մունետիկը և գոռաց (Գյումրի):

– Այնպես տխուր էր, լուռ, պապանձված, բերանը դանակով չէր բացվի:

– Երբ բախտը ծուռ երթա, քառասուն մոմ, օխթը մաքի մատաղ օգուտ չունի էլ:

182. <ՄԱՅՐՍ ԱՆՈՒՆՍ ՏՎԵՑ...>

– Մայրս անունս տվեց, ինձի կանչեց:

– Եվ հանկարծ խոսքը փոխեց:

– Հառաջ չապիկն հագավ, հետո ելակը, հետո խրխայի <անընթ.>, հետո... ամենից վերջը օսկե մանյակս վիզս ձգեցի...

– Ուստան և Ջավուշը զրույց էին անում, նստած այվանում, նայելով Յաղլճա կանաչ լեռներին...

– Ուստան բացեց լուսամուտները և անուշ հովը եկավ Ալաճայի փեչերից և ծաղկած դաշտերից:

– Մեղրի խորիսխ:

– Կշռավոր արձակ, ռիթմ ունեցող արձակ:

183. <ԱՑՍ ՄԱՐԴՈՒ ՎՐԱՑԻՑ...>

– Այս մարդու վրայից կաթում էր կամքի ուժը. գաղափարականությունը:

– Զրկված ենք հայրենի արևից:

– Պետք է պաշտենք մեր ազգային նվիրականությունները – լեզու, հայրենիք, դրականություն, ճարտարապետություն, երգ ու ավանդներ:

– Ավանդությունների պահելով և ծեսերը կիրառելով (Զատիկ, Վարդավառ, Նոր-տարի, ուխտեր... տոներ, սովորույթներ) մենք հարաբերության մեջ կմտնենք մեր նախահայրերի հետ և կապի մեջ կմտնենք, կկապվենք մեր ցիրուցան հայրենակիցների հետ, մեր ժողովրդի հատվածների հետ:

184. <ԱՇԽԱՐՀՆ ԷՍՊԵՍ ԵԿԵԼ Է...>

– Աշխարհն էսպես եկել է, էսպես էլ կերթա = ասում են ավանդապաշտները: (Օրինակ. կինը մարդուն պիտի հնազանդի: Աղքատ ու հարուստ պիտի լինի: Հրամայող և կատարող: Գող և բոզ):

– Հիմի նա մտքի մեջ ինձ ինչքա՞ն է հայհոյում: = Ասում է մեկը, որ նստել է մի կնոջ հետ, որ մյուսի սիրո առարկան է): կամ անզոր վրեժ տածող մեկը:

185. <ՔՈ ԹԱՆԸ...>

– Քո թանը դեռ շատ ջուր կվերցնե: (Թանձր թան է):

– Էս խմորը չա՛տ ջուր կվերցնե:

– Խելացի Դավիթ (ծաղրական):

– Ջութի պես էս աղջիկը տղայիս փակավ, կպավ:

– Հայաստանը դռնամեջ տեղ է բռնել աշխարհում: Կամ՝ չեմքամեջ:

186. <ԷՍ ՀԱՐՍԸ...>

– Էս հարսը կնմանի լալա, թշերը կարմիր, աչքերը սև:

– Քաղքցի կնտիկ ի՛նչ անուշ հոտն ունին, յարաբ ի՛նչ կուտեն. էրնեկ էսոնց մարդկանց:

– Ուտեն – կամփետ, չաքըլամա յաղլի – մեր հարսներն որ թե ուտեն՝ դհա անուշ հոտ կունեննա<ն> – մեր հարսներե ժախի ու կովի հոտ կուգա:

– Տո դե կորցրու մեր լվոտ հարսները:

– Հարսներ իրար ցույց տալիս:

– Էս հարսը Լոռո է, յա՛, լոռեցի, լոռեցի չէի տեսել, տո՛, մարդու նման են, ախր, էնոնք քուլի շաշ են, էնոնց հացը խելաո է:

– Էս հարսը կլմանի գեղաց մատռի, ամեն տեղ կնիկ է, յարաբ ո՞վ է սրա տերը:

– Էս ով է – էս Ս. Կարապետի լկտին, մաստակը բերանը – ինչքան երկեն է. էսոր մարդը նարդվան կդնե կելնի՝ նոր կպաչե...

187. <ՄՈՒԶԻԿԱՆ ԳՐԱՎԵՑ...>

– Մուզիկան գրավեց մարդուն:

– Մուզիկան տարավ, տարավ նրան, աչխարհից հանեց:

– Մտածեցի, միտք արի, միտք արի, աչխարհից ելա:

– Թուրքերենից է թարգմանում ասում այս չողոքորթ խոսքերը:

– Քաղաքակրթությունը մի <անընթ.> ույժ է, դարերի ընթացքում:

188. ԳՅՈՒՂՈՒՄ

Երեխաները՝ կիսամերկ, ցնցոտի, բոկոտն, գզգզված մազերով, աչքերը ճեպռոտ, ճանճերը կոպերի վրա, քիթ ու բերնի վրա, վսլնքոտ: Այր ու կին՝ աղտոտ, ցնցոտի, մխահոտ, լվոտ, ոջլոտ, քերվում էին, քթիվ էին անում, աղտոտ բթերով, արյունոտ եղունգներով:

Պատերի տակ աղբակույտեր, գարշահոտ, հավերի քճուճ, շների գզգոց, թրքահոտ: Փոչի, խեղդող փոշի:

Աղտոտ, լվացք չտեսած շորեր:

Տղամարդիկ՝ կրծքերին թաշկինակ կապած՝ շապիկները լվացքի են, կնչանակե:

Շապիկները մեջքերին կպած, աղտի մեջ փթած, հանելիս պատռվում էին:

Թոնիրների վրա շապիկները թափ տալ՝ ոջիլից ազատվելու համար: Ոտաց ճանապարհի դաղափար չունին:

Գյուղ — աղտ, գարշահոտ, լու, ոճիլ, վաշխառու, պրխտավ. ծեծ, հայհոյանք, տգետ, խավար, փոշի, թրիք, քաղց, կարիք, հիվանդություն...

Անձրև է գալիս, կաթում է տունը: Փողոցները՝ ցեխ, աղբ. տները՝ ցուրտ, խոնավ, թաց, մութ: Անկողինները՝ աղտոտ, ցնցոտի, խոտ ու կապերտի կտոր...

ԲԱԳՐԱՆ

189. <ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏՈՒՄ...>

— Բագրանի ուխտում:
Աղջիկների-հարսների պար և երգ:
— Տարանինե, տարանինե,

Էս մեր հարսը չա՜տ անգին է.
Տարանինե...
Զուռնի ձենը գեղով մին է:
– Մի հնչակյան:
– Մի հակաղաչնակ գյուղացի:
– Ուստան Ասոյի տնից գնալիս նստեց ձորում, մի քարի վրա և սկսեց խորհել – իրեն երևակայեց մեռած, որդեր, հոտած, առավ հոտը... Հետո ձեռքը թափ տալով ասաց.– «Աստված ողորմած է, ստեղծել է, չի կորցնե»:

190. ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ ԳՅՈՒՂԸ

Հազարավոր բազմություն կար, ողջ գյուղը, բաղերը, ձորերը, գետի ափերը, մատուռը, ճանապարհը – մարդ էր դարձել:

Խռնվում էին, ծփում, երեխաները վազում, ճչում, լալիս. պառավները թոնթոնալով օրորվում, հարսները ծեք-ծեքում / սեթևեթում, երիտասարդ տղերք ծեք-ծեքալով ծխում: Հետ ու առաջ գնում, գալիս, եռ ու եփ, շարժում, մղում, ուղղակի տարերք, ալեկոծվող տարերք:

191. ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ

Մատուռում գյուղացիք համբուրում էին քարերը, հատակը, պատերը, դարերի ծխով (խունկի և մոմի) սևացած պատերը: Քրտնել էին բազմության շնչից պատերը: Ուխտավորների սրտերը իրենց նվեր բերած մոմերի պես այրվում էին:

— Կանայք, ծերեր, ուխտավորներ սրբի գերեզմանի հետ խոսում էին, սրտաբաց խոսում, իրենց ցավերը մրմնջում, այցելություն խնդրում, վերքերի, տառապանքների ամոքում...

192. ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ

— Մի տեղ պար, մի ուրիշ տեղ պար: Զուռնա: Մի այլ տեղ սաղ, մի այլ տեղ տիկ (պարկապզուկ):

— Ուստան քեֆին բորբոքված՝ (Սանամը հեռվից նայում էր) կանդնեց զուռնաչու մոտ և ասում էր.

— Փչե, փչե ակնջիս մեջ, փչե զուռնադ:

Եվ մի ոտքի վրա կանգնած ականջը թեքել էր՝ թեքվելով ողջ մարմնով դեպի զուռնաչին, զուռնու բերանը ականջին դրեթե ընդհուպ, կիսով:

193. <ԳԵՏԱԿԻ ԱԼԻՔՆԵՐԸ...>

— Գետակի ալիքները թռչկոտում էին քարից քար՝ ճերմակ աղավնիների պես:

ԲԱԳՐԱՆ

Լուսնյակ գիշեր, արծաթյա գիշեր, արծաթյա լեռներ, ժայռեր, դաշտեր, արծաթյա ծառեր:

194. ԲԱԳՐԱՆ

Մայրաքաղաք աստվածների, դիցարան, բագինավայր: Մայրաքաղաք կամսարականների և Բագրատունիների:

195. <ԲԱԳԱՐԱՆ...>

– Բագարան. աստվածների սրբավայր, երկնքի արև անմահ [մեհյանի] ատրուշանի ներքև վառվում էր Արամազդի մեհյանի ատրուշանը...

– Արևը արգասավորում էր երկիրը՝ օրհնելով ամեն ծիլ ու արարած:

– Արևը իր բոլոր կրքով ու կրակով...

– Բնությունը բռնկված է ստեղծագործական կրակով, տագնապով, խանդով:

196. <875 ԹՎԻՆ...>

875 թվին Բագրատունի Սմբատ Խոստովանողի որդին՝ Աշոտ զորավարը, Աշոտ Ա. անունով թագավոր պսակվեց Բագարանի մայր եկեղեցիի մեջ, հիմ դնելով Բագրատունյաց հարստության, որ տևեց մինչև 1045 թ.:

197. ՀԱՐՈՒԹԸ ԲԱԳՐԱՆ

Նայում է, տեսնում է խոյերին՝ ներկած, բուժոժներով, տանում են մորթելու... խոտերը բերանը, այս կամ այն խոյին գլուխ բռնելով՝ կռվի համար...

Ուրիշ տեղ նայում է – մորթված, գլուխները կտրած, աչքերը ապակի, սառը, լեզուները դուրս հանած, կապույտ...

Խոր ցավ է զգում, մտածում է – ի՜նչ անգթություն... Թե գիտնային, որ պիտի տանեին մորթելու, ինչքան պիտի լային, փախչեին... խենթանային...

Ուտել, ուտել, ուտել... վայ ես քո սարքն ու կարգն ա-նիծեմ, աշխարք, ով քեզի էսպես անգութ չինեց, գազա-նանոց:

198. <ՆԿԱՐԱԳՐԵԼ ԲԱԳՐԱՆՈՒՄ...>

— Նկարագրել Բագրանում քեֆի փոքրիկ սեղաններ. կանայք չիտկում են սեղանները, բողչաներից, խուրճին-ներից, հաց, գաթա, պանիր, հավկիթ, հավ, միս... օճախ են վառում:

— Տեղ-տեղ պատերի տակ, ծառների տակ նստած փոք-րիկ խմբակներ: 3, 4, 5, 6 հոգուց քեֆեր, երգեր:

— Ուստայի քեֆի խումբը 15-16 հոգի:

— Թերևս մի ցինիկ, պեսիմիստ մարդ հանդես բերել Բագրանի քեֆերին:

— Նկատի առնել — դիմագծերը, հագուստները, տա-րիքները հերոսների, եղանակը օրվա, բնության միջա-վայր և հասարակական միջավայր:

(Բոլոր միջոցները գործադրել, կարելին անել, կարա-վան, քարավան, քյարվան, քյարբան:)

199. ՀԱՐՈՒԹԸ ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ս. Գեորգա մատուռի առաջ տեսավ հիվանդոտ, վերքե-րով լի մարմիններ, անդամալույծ, դողդոջուն, կույր, թափված քթեր, խոցոտ շրթներ... զառանցական դեմքե-րով... միստիկական, անբացատրելի վախով նայում էր նրանց, նայում էր և չէր ուզում հեռանալ, չէր ուզում աչքերը նրանցից դարձնել. անվերջ նայում էր սարսա-

փով, բայց չհագեցած... Աչքերը տրորում էր և նայում, կարծես չէր հավատում աչքի տեսածին. սուտ էր, անիրական... այսքան չարիք, արհավիրք միայն այստեղ, իսկ ինչքա՜ն կան ամեն տեղ, աշխարհի վրա:

200. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Մաստարեցու մահից հետո:

Ուստան մի խանութում. [փող են նվագում] դյուդուկ էր նվագում. մի հոգի փողահար...

Ուստան լսում էր, լսեց և սուզվեց մտածմունքների մեջ — երազանքի... զգացումների, մտքերի և տեսիլների ծով, հոգին արթնացել էր իր բոլոր կետերով, մթին, անհայտ, հեռու տեղերից խուժում էին անցած, հնացած, մեռած տարիների հուշեր, ապրումներ, դեպքեր, դեմքեր, պատկերներ, խոսքեր, իրեն մանկությունից պատկերներ, տասնյակ տարիներով մոռացված խոսք, մարդ, դեպք: Հոգու՝ այս անծայր անդունդի ամեն մի անկյունից աղբյուրներ էին բղխում ու աղմկում, լցվում անդունդը և պատկերներով, խոսքով, ջրով ներկայանում Ուստայի աչքին, ականջին: Լսում էր և տեսնում էր բովանդակ անցյալը, և նույնիսկ ապագան...

Տեսավ հորը, մորը, նրանց մեռած, գերեզմանները, նեղությունները, թափառանքները, տառապանքները... ապագան... Սանամ, Հայաստան, կռիվ, մահ... մա՛հ.— Հոգու մեջ հուզումներ, հույզեր, փշրված հույսեր, չիրականացած տենչեր. բաղխում, հակասական տենչեր... ցցվում <էին> իրար դեմ կիրք ու հույզեր, հույսի և վհատության ցավի հանդիպումներ:

201. ՈՒՏԱՆ

Երևակայությունը տանում էր նրան, պատում չքեղ, գեղեցիկ երկրներ: Երազած, վաստակած վայրեր:

— Երևակայությամբ, երազներով, իր քարվանով միացած էր աշխարհի հետ, աշխարհի հեռավոր վայրերի հետ:

Այդ երևակայությունը, քարվանը չղթայում էր, կապում էր, հարաբերության մեջ էր դնում նրան մնացած աշխարհի հետ:

202. <ՁԱՐ ԲՌՆԱԿԱԼԸ...>

«Ձար բռնակալը, հայոց կեղեքիչ,
Վախեն պահվեցավ ոսկե գահուն տակ,
Խուլ Եվրոպայի թնդաց մեծ պահլիճ,
Հայը սարսռեցավ, կարմրեցավ հնչակ»:

Մեր հեղափոխությունն էլ մեր երգերի պես մեծխոսիկ, լոպպազ, ամբարտավան:

— Դաշնակցությունը՝ արկածախնդրություն, ղեկավարները՝ պոռոտ, համառ, տգետ, թերթերը՝ լիրբ, փողոցային, արյունարբու, չեֆերը՝ դրամասեր, ավազակ. նույնը հնչակյանները: Բոլորը ցուցամոլ, անպատասխանատու, անխելք, հիմար, նկատի չառնող տեղը, ժամանակը... և այս բոլորը միասին, իրենց միացման մեջ — ողբալի, ծիծաղելի, ցավալի:

203. <ՍԻՐԵԼԻՍ, ԱՐՏ ԿՅԱՆԵՄ...>

— Սիրելիս, արտ կյանեմ,
Սարերով դարդ կյանեմ.

Լծել եմ արնոտ դուքանը,
Կվարեմ, դարդ կցանեմ:

Գուքան, դուքան, հայի դուքան,
Արդար դուքան, աստվածաբան:

204. <ՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՍԱՏԱՆԱ ԿԱ...>

<...> որ աշխարհում սատանա կա, թուղթ խաղա: Խաղի տարվիր: Թուղթ խաղալ սորվիր:

– Գերանդու բերանից չինել էր դանակ. չղփիկ, չեղբ, չեղփ:

– Թուրք պետության համար երկու անգամ երկու կնշանակե հայերին կողոպտել, ջարդել, ոչնչացնել:

– Հայերին չնչելու համար անհրաժեշտ է հաց, յուղ, դինի և ազատություն, ձեռներեցություն:

– Տղամարդու երեսը մոմի լուսով, կռնակը արևի լուսով տեսնելու է (գործի մարդ, չուկայի մարդ, ոչ իր տունը նստող):

Հայկական խոսք

– Այնպես ժայռոտ առապար էր, կարծես, ժամանակը քարացել էր այստեղ, քար կտրել, քար դառել:

– Ճամբա ընկած ջուրի (ջրի) պես պիտի վազդ դա:

(Գուշակություն):

– Փչկեց = գլուխ չեկավ, վիժեց:

205. <ԺՈՂՈՎՈՒՐԴԸ...>

Ժողովուրդը, հայ ժողովուրդը իր տխուր հայրենիքի տխուր երդերն էին տխուր երգում:

206. <ԱԶԳԸ ՏԵՂ Է ԵՎ ՑԵՂ...>

— Ազգը տեղ է և ցեղ.
Հոգի է և ձև:

Հայրենիքը մեր սրտերին խոսում է, մեր սրտերի մեջն է:

207. <ԱՀԱ՛ ՄԵՐ ՀԱՅՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ...>

Ահա՛ մեր հայրերի աշխարհը՝ բարձր լեռներով վսեմացած, մթին ձորերով խորացած, ծաղկավոր դաշտերով բուրումնավորված, աղբյուրներով երգված, երկնքի կապույտով ոգեղինացած և հայ ժողովրդով իմաստավորված:

Եթե ամեն զռռացողի համար ախոռ չինես, ամբողջ աշխարհը չի բավի:

208. ՇԱԲԱՇ ԶՈՒՌՆԱԶԻՆԵՐԻՆ

Դավուլչու (թմբկահար) ճակատին կպցրեց մեկը մի արծաթ դրամ, մյուսը նրա բերանը լցրեց արծաթ դրամ-

ներով, երրորդը ճակատից կախեց (գլխարկի տակ ծայրը դնելով) մի թղթադրամ: Եվ դավուլչին գոչում էր.

– Շեն մնա, 5 մանեթ չաբաչ, Գալուստ աղեն...

209. <ՈՒՍՏԱՆ ԻՆՉՔԱՆ...>

– Ուստան ինչքան աչխարհներ եղել էր, այնքան նրա մտքի հորիզոնը ընդարձակվել էր:

– Լորիկի բաղում Ուստան չի փռում յափունջին:

– Նալբանդ Աղանիկը կաղզվանցի էր:

Բագրանի քեֆի ընկերները –

1) Մացակ,

2) Զուչեցի,

3) Ագրիկցի,

4) Ծպնեցի:

210. ՀԱՐՈՒԹԻ ՏԵՍԻԼՔԸ

Տեսիլքը կլինի առհասարակ կեսքուն-կեսարթուն ժամանակ:

Հարութի միտքը, հոգին հուզված է, խառնափնթորված, աղմկված օրվա դեպքերից, պատկերներից, ապրումներից: Պառկում է քնելու: Ուղեղը գործում է խառնաչփոթ. հազար պատկերներ իրար հրում են, հրմշտկում, մագլցում իրար վրա, քաշքշում. տեսնում է այլանդակ բաներ: Վեր է կենում նստում, նորից պառկում, յափունջին գլխին քաշում...

Ասում է Ուստային, որ պատրաստ կանգնել է՝ Հայաստան է գնում, մնաք բարև է ասում Հարութին: Հարութը

թե՝ չեմ թողնի, առաջ-առաջ երթանք, աշխարք ման պանք:

Գնում են. և տրամաբանական, իմաստավոր պատկերների հետ, նրանց ընդմեջ, խառն, անկապ, դեպքեր, մարդիկ: Նորից խզված գծի կապվումը. նորից տեսիլքը:

211. <ՆԺԱՐՆԵՐԸ...>

Նժարները:

Տեսանկյուն, լուսամուտ:

Մեծ հեղափոխություն է մարդկության պատմության մեջ:

Բաղաքական և ընկերային:

Սեփականության, համայնավարության:

Երկու սոցիալիզմ: Բայց տարբեր միջոցներ:

Օրգանիզացիա, կրթություն:

Կենցաղը կաղապարում է մեր հոգեկանը:

Վերնինաչենք և վերնաչենք:

— Մարքսը — Գիտությունը մեզ միջոցներ պիտի տա ոչ թե միայն ճանաչելու տիեզերքը, այլև օգտագործելու նրա ուժերը. ոչ թե ճանաչելու մարդը, այլև փոխելու նրան, վերաստեղծելու:

Հոլանդացիք ասում են — Աստված ստեղծեց ծովը, իսկ մենք ցամաք ենք ստեղծում այդ ծովից:

Հակառակ մամուլը

— Հայաստանը անկախ չէ:

— Ձկա ազդային կուլտուրա: Ձևով ազգային:

— Շահագործում է, չինարարություն չկա:

— Կրոնի մասին —

Թատրոն, սինեմա, դպրոց, պետական լեզու: Բուրժուական ամեն ինչը մեռնում է:

Volter չաբաթ, 25 հոկտ<եմբերի>

212. <ՍԱՆԱՄԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ...>

Սանամի դավաճանության վրա, թեև Կարոն ասաց թե՝ որ թե 1000 հրեղեն աղջիկներ կամ թե չէ թագավորի աղջիկը ուզենան ինձ առնել, որ Հայաստան չերթամ, չէ, ես կերթամ, դրանք թող մատաղ ըլնի Հայաստանին: Սակայն այս խոսք էր, մխիթարանք. իրոք, նրա սիրտը արյունոտվեց և չա՛տ տխրեց. դրանից հետո նա ասաց Քերոբին. Սանամի էս խաբելուց հետո էլ միտք չունի մնալը, երթամ Հայաստան, զարկեմ ու զարկվիմ թե Սանամի, թե Հայաստանի դարդից ազատվիմ:

Ղարսից էլ նա գլուխը զարկված հետ դարձավ: Ո՛չ Սանամը կար, ո՛չ հին ուրախ սիրտը, ոչ սեր դեպի արհեստը. ամեն բանից ձեռնթափ էր եղել:

213. <ԴԵՂԻՆ ԹԵՐՄԱՇ...>

– Դեղին թերմաշ, լավ, լավ, ես էլ կլրբանամ, հիմի ես էլ կլրբանամ:

– Սև թերմաշ:

Մազեր:

– Գիր գրողը լավ չի գրել ղալմի ծերիցը,

Բերեք ինձ մոտ, ես կգրեմ մազիս ծերիցը / լեզվիս ծերիցը:

— Մոմը <անընթ.> բերանը:

Ոլոր-մոլոր [ամպն] Կուրն էր գալիս Կովկասու սարիցը,
Մի փեչատած գիր ստացա ես իմ յարիցը:

— Ուստան, ջա՛ն, ջա՛ն,— գժվեց, ուզեց, հոգով պատրաստ էր գլուխը քարերին զարնել: Մտքում ասաց.

— «Սանամ ջան, քեզի մեռնիմ, փետրեմ պիտի քեզի, տղամարդ եմ ես».— Հետո բարձր ձայնով — Աչխարքը տղամարդունն է, սերն էլ, կնիկն էլ, գործն էլ, բանն էլ:

— Էդ կտորն էլ երգի, ետև մեռնիմ, էլ ցավս չէ:

ԲԱԳՐԱՆ
ՔԵՖ
ՄԵՆԱԿ ՔԵՖ

214. ԲԱԳՐԱՆԻ ՔԵՖԻՆ
(Ցալանչէի)

Սիրուն կին,
Կարմիր գինին:
Յարոչ գրկում
Կեր ու խում:

Սեր արա, հա՛յ, քեֆ արա՛,
Աչխարք մեզի չի մնա:

Կեր ու խմե,
Պար ու ժպտա (խնդա)
Ու էգուցվան
Մի հավատա:

215. ԲԱԳՐԱՆ

Քեֆին կամ այլուր. մի մարդ՝ ի տես մի սիրուն կնոջ դիմում է իր ընկերին.

– Տո, մենք հո կնիկ չենք պահե, մենք բոշի էշն է, որ կպահենք:

[– Էն ինչ <...>]

216. <ՄԱՏԱՂՑՈՒ ԽՈՑԻ...>

Մատաղցու խոյի ճակատը կարմիր են ներկում, և մեջքին կարմիր խաչ քաշում:

217. <ՈՒՍՏԱՆ ԱՉՔԵՐԸ...>

– Ուստան աչքերը գոցեց, և իր հայրենի գյուղի դաշտերը փուվեցին իր փակ աչքերի առաջ: Տեսավ հոր տունը, մայրը, հայրը... մանկությունը...

Բագրանում, Ուստան առանձին քեֆին: Ուզեց մխրճվել մեծ տխրության մեջ, խմել մեծ տխրությունը, հարբել այդ տխրությամբ:

218. <ՍԻՐՈՒՆ ԿԻՆ...>

Սիրուն կին,
Կարմիր գինին,
Յարի գրկում
Կեր ու խում,
Սեր արա, հայ, քեֆ արա,
Աշխարք մարդու չի մնա:

Հարուբ:

219. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ուստայի խումբը, քեֆին, խաշլամա ևփելու տեղ մատաղ են եփում — մի ողջ խոյ կաթսայի մեջ, համեղ, համով, մատնելդ հետը կուտես: Բաժին են հանում աղքատներին:

Խորոված, խաշլամա, փլավ:

220. <ՀԱՆՁՆԵՍ ՔԵԶ...>

— Հանձնես քեզ կանանց ճերմակ, կլոր, երկար թևերի պպվանքին, անուշությանը:

Տիկին Սևումյան: Արևելյան քաղցր ձայն, մեղեդի, ներդաշնակ, քնքուշ և սրտաբուղխ:

Ձայնը հլու և կիրթ գործիք ապրումները մի թշվառ կնոջ արտաչխարհ բերելու: Ձևերը՝ քնարիկ և մեղեդիկ՝ ամբողջ շնորհք ու նազանք՝ օծուն կնոջական քաղցրությամբ:

Բագրան: Ուստան օղի բաժնել տվեց իրենց քեֆը դիտող գյուղացիներին և միրգ՝ երեխաներին:

Երբ Ուստայի խումբը պարելով առաջ էին գնում, Բագրանի և այլ ուխտավոր մանուկները՝ նրանց հետևից ու կամ առջևները ընկած լման պարում էին:

Սոցիալիզմը օրգանիզացիոնի հարց է: Թե պատմական երկաթե անխուսափելի անհրաժեշտություն:

221. <ՈՒՍՏԵՆ ԽՈՍՔ ՀԱՍԿՑՈՂ...>

– Ուստեն խոսք հասկցող մարդ է:

– Ո՞ւր էիր, խելառ չուն:

– Բագրանի քեֆից հետո՝ երբ Ուստեն Սանամին գիշերով ճանապարհ էր ձգում՝ այդտեղ Թորոն կանչեց Օսկանի<ն> ասավ, թե Ուստի ոտքը պիտի կտրվի մեր տնից... Օսկանը նույն բանն ասավ Ուստին՝ գեղը, տունը

Հասնելուս. այնպես որ Ուստի քեֆը չխանգարվեց: Ուստեն զարմանք մնաց և մյուս օրը գնաց Քիրս անձամբ ստուգելու — և ստուգեց...

— Էնքան քամիներ ու փոթորիկներ են անցել գլխովս աշխարքներ ման գալուս, էնքան չար ու բարի եմ տեսել, գազաններեն ու հարամիներեն ազատվել, հազար ու մի փորձանքի հաղթել, աշխարքի գլխին ի՛նչ խաղ ասես որ չեմ խաղացել, բայց Սանամը ամենեն մեծ փորձանքն եղավ ու ամենեն մեծ փոթորիկն ու հարամին, ասես, անհաղթելի, էնիկ լավ խաղ խաղաց գլխուս... հողը գլխուդ, Ուստա, մի հարս իր կնիկ տեղովը քեզ էս օրին ձգե — ... չէ, ես տղամարդ եմ, չեմ հաղթվի, ես գյուլլա եմ, գյուլլա, ու տաք, թեժ գյուլլի պես կերթամ իմ նպատակին՝ սուլթանի դեմ. ես էսօրվանից Հայաստանի փեսան եմ, Հայաստանի վրա եմ կարգված, ազդի ազատությունն է իմ սուրբ պսակը:

— Աշխարքը, կարո ջան, ինքը մարդն է, մարդու սիրտը, մարդու կյանքը, մարդուց դուրս աշխարք չկա, օրթե էղնի էլ, մի չէղնել արժեննա. լավ կէղնի, որ ոչ մարդ էղնի, ոչ էլ աշխարհ:

— Ախուրյանը իր արծաթե գոտին քանդեր, Շիրակի դալար մեջքին է ձգել...

— Հարութ, էս կնկա համար քարվանս մի ամբողջ տարի պտըտցրի նրա հետևից, էն կերթար, կերթար. վրաս աչք չէր քցում, կերթար սարերի գլխով, ձորերի միջով, օձոտ անապատներով՝ ես էլ հետևից. անցնող-դարձող արար աշխարք կկարծեր, թե մի մեծ բանի հետևից եմ գնում, նպատակս մեծ է. բայց մի կնկա հետևից՝ ողջ տարի, չվաքի պես...

— Կարո, ամենեն լավ բանն էդ է, որ արեր ես. ուրիշնեըը իրարից լավ <...>[1]

---

[1] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է:

222. ԲԱԳՐԱՆ

Քեֆ են անում մի խումբ հնչակյաններ: Ասում են դաշնակները իրար.

«Ազգային փողերով քեֆ են անում»:

Քեֆ են անում դաշնակները: Հնչակյաններն ասում են. «Ահա՛, էսպես կուտեն [ազգային] ազգի փողերը»:

Կամ մի քանի քաղքենիներ (կարսեցիներ, անձնական վարդապետի հետ) և տեսնում են դաշնակներին և հնչակյաններին, այդ կարծիքն են հայտնում:

223. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Ղարսեցիք քեֆ են անում.
Մեկն ասում է.
«Քանի սաղ եմ, մեռելների հերն անիծած...»
Ուստան և Հարուքը լսեցին.
— Ա՛յ դրուստ խոսք, այ դրուստ ճամբա, բռնի ու գնա՛:

224. ԲԱԳՐԱՆ

Վարա կոպալե,
Հասա ջաննաթե:

Աղոթք. քեֆին:
Հայրը, որդին, հոգին սուրբ,

Օրեն սատկի հազար թուրք,
Հայերը մեկ ճառ,
Էն էլ սուտ:

225. ՄՐԵՆ

— Սարերը մռայլ էին, [սև նոթերը կախած] սև ամպերը վրանները կախված: Ուստան էլ մռայլ էր սարերի և ամպերի պես:

226. ԲԱԳՐԱՆ, ՔԵՖԸ, ՈՒԽՏԻՆ

Գյուղացիք գոռում էին, գոռգոռում, բղավում, կռվում, իրար քաշքշում, հայհոյում, երգում, պարում, ուրախանում, ճոճվում, երերում, իրար համբուրում, գրկում... Այսպես էին քեֆ անում:

227. ԲԱԳՐԱՆՈՒՄ, ՔԵՖԻՆ

Վարժապետին, խոսելուց առաջ, կայծակը և մյուսը, ուսերեն ասացին, որ իր հոռետեսական մտքերը չդրսևորե, առաջին, որ սխալ են, երկրորդ, որ ժողովրդին կհուսահատացնեն. բայց նա վրդովված ասաց, ես սուտ խոսելու իրավունք չունեմ. իմ բարոյականը այն է, որ մարդ ասե՝ ինչ որ անկեղծորեն, համոզմունքով մտածում է...

Եվ ասաց իր պեսիմիստ խոսքերը Եվրոպայի նկատմամբ, ուսների նկատմամբ և առհասարակ մարդկու-

թյան, քաղաքակրթությանն նկատմամբ հանդեպ հայկական հարցին:

228. ԲԱԳՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԵՖԻՆ

Քեֆ են անում մի պահ, հետո է Ուստան հիշում, որ մոռացանք սեղանը օրհնել. և Մարուքն օրհնում է:

– Մի կին ասում է. մի տղա ունեմ, մեկուճար ու կդողամ վրան, Աստված ավելի չտվեց:

Մյուսը պատասխանում է ասելով թե. մեկ ծառի տակ 70 մարդ կրնա նստի. մենակ Աստծու աչքը վրան լինի:

Կարոն ասում է Հարությին. դու էլ էդ ծառից ես, Հարությը թե՝ դու էլ:

229. <ՆՐԱ ՍՈՍԿԱԼԻ ՀԱՅՑԱՑՔԸ...>

– Նրա սոսկալի հայացքը խոսքը կնոջ բերնի մեջ գամեց:

– Այս զարհուրանքը ո՛չ թե տեսնողի, այլ լսողի հոգին պատանքի մեջ փաթաթում էր:

– Այս չքեղությունները ժողովրդի երևակայությունը բորբոքելու համար էր:

– Այս ժպիտը (կեղծ) դիմակի պես ծածկեց սրտի բուն զգացումը:

– Ողնաթեք ծերունի:

– Երգիծական ձայնով:

– Նա բաղդի ճամբու վրա նժույգ ձի ունի նստած: Բախտի ձին է նստել, բախտի ճամբով կերթա:

– Ջահերի ճառագայթները բազմապատկել էին նրանց զգեստների ոսկու և մետաքսի փայլը:

— Այս տոնի օրը, ամեն մարդ բանաստեղծ-երգիչ, պարող ու սիրահարված էին դարձել. երգում էին ու պարում, ոտանավորներ ասում ու սեր արտահայտում:

— Ապագայի ոգին իր թևերը սփռել է իմ երկրի վրա:

230. <ԵՐԲ ՌԵՍ ՀՈՍԵՆ...>

Երբ Ռես Հոսեն պատմում էր քուրդ-թուրքերի սպանդը, երեխաներ խլում էին մորերի կրծքից ու մորթում նրանց աչքերի առջև, Օսկանի կինը, որ ներկա էր, և իր երեխան մոտն էր, վախով դրկեց ամուր՝ կրծքին, այն երևակայությամբ թե զգացումով, թե իրեն երեխան էր, որ պիտի խլեին:

Երբ գոտեպինդ կար Բագրան, հավաքվողները նույն չարժումն էին անում՝ պիրկ ու ջղային, ինչ որ մրցողները, զգալով իրենց նրանց վիճակում: Եվ ուրախություն կար նրանց դեմքի վրա, երբ հաջող դիրքի մեջ էր իրենց համակրածը: Եվ հակառակը:

Կինը խորամանկ է,
Մարդը՝ բռնակալ:

Ուստան դեռ անկումը՝ միշտ լավատես էր և լավակարծիք աշխարհի և իրերի, նրա արտահայտությունների մասին:

231. <ԱՐԵՎԸ ՈՍԿԻ...>

– Արևը ոսկի գորգ էր փռել:

– Գործող անձերի դեմքն ու հասակը նկարագրել: Ուսերը, քայլքը, դեմքը, ճակատը, աչքերը: Գրել հանդարտ, չշտապելով:

– Մի հաստ, կարմիր, մսոտ, արյունոտ մարդ: Խոսում էր ծանր, դանդաղ, ընդհատ-ընդհատ:

– Առավոտ կանուխ, երբ արտույտները նոր էին սկսել երգել, ճանապարհ ընկավ:

– Տեսածս և լսածս աշխարհը աչքիս ու ականջիս մեջ ունեմ միշտ:

– Ռադիո-տելեֆոնը և ռադիո-սինեման այն զարգացմանը պիտի հասնին վաղը-մյուս օրը, որ տան մեջ նստած, կամ վագոնի, նավի և սավառնակի վրա նստած՝ պիտի լսես ու տեսնես երկրագնդի կյանքը, անցքերը, իրերը: Անհատը կարող է իր եղած կետից ամբողջ աշխարհի հետ հաղորդվել, ականջի – աչքի մեջ ունենալով ամբողջ աշխարհի ներկան: Գերամարդի դար:

Այն, ինչ որ հեքիաթների մեջ կար, հիմա իրականություն է:

– Քնկոտին:

Տո, ինչ է, ծոցիդ մեջ դրախտի հարսներ կան, չես ուզե ելնի, օրը կես օր է:

Հայրը ասում է տղային կամ ծառային, լուսումուրթին:

– Մի գեղջկուհի, բազմածին, որ ունի 8-10 երեխաներ, հարցնում է մի քաղաքացի կնոջ.

– Քանի երեխա ես բերել:

– Երկու հատ:

– Երկուս, երկուսն էլ բան է: Հալա ձեր դործներու անունն ինչ է եղել մինչի օրս. պարապ տեղը ջաղաց դարձնել:

232. <ԵՍ ՍԻՐԵԼ ԵՄ...>

– Ես սիրել եմ իմ Հայրենիք:
Եվ դու պնա նույն չավղով:
(Մանկության օրերից):

– Շատ տխուր բաններ կխոսիս, Հարութ ջան:

– Ես ինչ անեմ, կարո ջան, աշխարքի բաները էդպես են:

– Հա, էլի, որ լավ բանն ասես, դարձնես մեկել կողմը՝ պեշ է, գեշը կերևա:

– Մենակ կնիկն է որ, կարո ջան, որ կողմը դարձնես, լավ է:

– Կնիկ, կնիկ, ասար անցար,– բարկացավ Ուստան:

(Երբ Ուստան կռիվ, Հայաստան, ազգ, կոմիտե, և այլն կդովեր, Հարութը գտնում էր նրանց վատ կողմերը. Ուստեն էլ երեսանց, խոսքը վերջացնելու համար ասաց թե՝ դարձնես, դեշ կողմը...):

233. <ԱԾԱՆ ՀԱՎԸ...>

– Ածան հավը կարկչան կեղնի = Գործունյա մարդը թե չատախոս լինի, ներելի է:

– Աղքատն ունի հաց ու պանիր,
Գիշերը քունը չի տանիր:

– Ամեն խոսավանք տերտերին չի ըսվի = Կան բաներ, որ պիտի պահվեն:

– Ամենի հոգնած տեղը խան չի շինվիր = Ամենի քմահաճույքը չի կարելի կատարել:

– Անողաց գտնողաց = Կպատժվեն:

– Անոթին քարը կուտե:

– Աչքի տես, բերնե կարոտ:

– Առանց հրամանի տերև չի շարժիր: Աստծու հրամանը, կամքը:

– Պետք է խմել – առտվան ցողուն, ցորեկվան չողուն, իրիկվան հովուն:

– Աստված աղքատը խնդացնել թե ուզենա, էշը կորցնել կուտա, հետև գտնել:

– Բանի մեջը բան կա,

Պուտիկի մեջը թան կա: = Գործի մեջ գաղտնիք կա:

– Գրողի պարկեն ընկել է = մահվանե ազատվեր է:

– Գդալով ժողվեց,

Շերեփով ցրվեց: = Ագահ և չռայլ:

– Ես ըսելը սատանա ըսել է:

Եսամոլություն:

– Էվել բարին աչք չի հանե:

– Կատուն մուկը փորի համար կբռնե = իր շահի համար գործել:

– Գողության ելանք, լուսնակը առջի իրկունը ծագեց: = Անբախտ, ձախորդ:

– Մեկը մեկին այգի է նվիրել, էն էլ էնոր ճութ խաղող չի տվեր: = Ապերախտ:

234. <ՋԱՐԴԵԼՈՎ ԳՆԱՑԻ...>

[<...>[1] ջարդելով գնացի մինչև Ստամբոլ, մի լավ հոգով-խղճով մարդ գտնեի, սուլթան դնեի:

---

[1] Սկիզբը պակաս է:

– Կաթողիկոսից 10 ր<ուբլի> է վերցրել և հետո տա-րել ետ է տվել: Իբրև պարտք:]

– Նավթուղթ գետին (Բագվում):

– Հողը հոտ է անում (հողից հոտ է քաշում, հոտհո-տում[1] է) իմանալու թե ջուր ունի. ջրհոր փորելու:

– Երբեք փող չի ուտում. հաշվի մեջ չա՛տ մաքուր է, աշխատասեր:

– Աչուղները իրար աչքերի մեջ նայելով իրար բերանի մեջ կանչում են: Բագրանում:

– Ինչու Ս. Կարապետ չի գնացել.

Քանի պզտիկ էինք՝ բոբլիկ էինք,

Երբ որ մեծացանք, ջուտամցանք:

– Ուստա Կարոն քեասեք (ամաններ) է կոտրում, հար-սի պես:

Հարսը տունը (հարս բերելուս) դռնից վեր է ավլում: (Թարս է ավլում):

Հալաբին հինգ մանեթ կտրին, բերեցին,
Սաթոյիս կուստուշկեն ֆորմով կարեցին,
Սադաֆ կոճակ երկու ջերդա չարեցին,
Ես՝ մեկ Սաթո, սրտով սիրած յար չառա:

– Էշը դու լինես, փալանը իմ վրա դնեն, խոտը իմ սա-լը դնես:

– Ախ՛ ուղտ չեմ, որ սայլին նստեմ, գլորվեմ:

---

[1] Ինքնագրում՝ այսպես:

[– Ի՞նչդ ես, սարի գլուխը առանց ժամի յոլլա կերթանք:

– Ինչդ որ քաղաք յոլլա կերթայինք՝ ընպես էլ էստեղ:]

– Քառսուն ավազակ չկարողացան մի աղքատի պլոկել:

– Աստված գալստական փորձանքներից ազատ պահի, մանկության մեղքը երեսով չտա:

– Ըհն, ճուռճուռիս կորած ձագերը գտա, դուք էիք:

– Աստղերին համբարք կա, քո փողին չկա:

235. <ՍԱՆԱՄԻ ՈՒՆՔԵՐԸ...>

– Սանամի ունքերը դահիճի խանչալի պես կեռ են, ու սրտից արյուն կքամեն:

– [Ռուսն] Ինչ Ուստեն (անկուշտ) եղավ գել, աչխարք կերավ:

[– Առանց կնկա մարդու օրը օր չէ:]

[– Լավը լավին (պիտի հասնի, լինի)...

Ինչպես [որ] վարդը բլբուլին,

Գեչը գեչին՝

Ինչպես որ էշն ու փոշին:]

– Շատ հոգեհան է Սանամը:

Մեկ <անընթ.> չրջիկ եկավ քննեց. գրեց, ճղեց, հարցուց – չվախեցուց իսկի. համա որ գրությունի տակը օձի պես գրիչը ոլորեց ու պտցուց՝ ասի էս է՝ գլուխս առավ մեջ, ես կորա վայ տեր կանչելով...

– Ես թշնամուն կեր չեմ էղնի:

– Գիլու կեր եղավ:

– Ես Շորագյալի տղա եմ:

– Ուստեն մթնդեց, ասես սարի գլուխ լիներ ամպերի տակ:

– Մարդու մարմինը հոգու ամանն է, քո տարեն որ դուրս գանք, քեզ էլ բան չի մնա (քեզ որ կշռենք, տարեդ էլ որ դուրս գանք, հոգու կտոր չի գտնվի մեջը):

– Աստված էս հարսին իր քեֆի լավ ժամանակն է ստեղծել: Բագրան: Սոնային:

– Ուստա Կարոն ճրագի պես կերևա:

– Ղասըմ աղան ճրագի պես կերևա, բայց չեն ուզում տեսնել, չեն բռնում:

– Ես կշտանալուց հետո սովորութ չունեմ հաց ուտելու:

– Ժողովուրդը միշտ կշեռքի ծանր կողմն է թեքվում:

– Նրա աչքը չի վերցնում, որ ես բաղդավոր եմ:

– Աչխարհ՝ ունայն աչխարհ է:

236. <ԷԴ ԱՍԵԼ Է ԹԵ...>

– Էդ ասել է թե՝ գողի ծոցը քար դնել = խրախուսել:

– Պըպզած կհաչա = ծերացել է:

– Ինչ որ ունեմ սնդուկումս – կռնակիս է (մեջքիս), ինչ որ ունեմ ամբարումս – փորումս է:

– Ղուրբան լինեմ, թազբեհ, քեզի,

– Ղուրբան օլըմ թազբեհ սանա,
Քիմսա գյուման էդման բանա,
Գիջա գիտար խրխզըղա,
Գյունուզ գյալըտ
Սուֆան ալլահ, Սըֆան ալլահ:

Ոչ ոք կասկած տանի ինձի,
Գիշերը կերթամ գողության,
Ցերեկը որ դա՝
Փառք քեզ Աստված, փառք քեզ Աստված:

– Փառքդ չա՛տ Աստված,
Փառքդ չա՛տ Աստված:
– Փառք քեզեն Աստված:
– Ուստեն ասում է – իմ դարդս էն է, որ ազգը թուրքի ու քրդի ձեռքից գլուխ թափե:
– Ուստեն ինչ որ ասում է, Հարուրթն ասում է «օրթե»:
– Գուցե Մահմուդի Զավուշը դուրս քցվի. Ազատ Հայաստանի գաղափարը նորից...
– Կաղպարն էս է, կուզես կեր, կուզես մի ուտիր:
– Խե՛ղճ եմ:
= Խիղճ ժողվող է եկել:
– Խոզ մարդ է:
– Շիտակը խոսիս, գեչամարդ կլինես:
– Բլուլ = քրդերեն կնչանակե չվի, սրինգ:

237. <ԵՐԲ ՊԻՏԻ ԱՆԻՐԱՎ ԹՐՔԻ ԹԱԹԸ...>

– Երբ պիտի անիրավ թրքի թաթը կտրվի մեր երկրի վրայից:
= Ես կկտրեմ,– ասում է Ուստան:
– Ամեն մի արարած իր օրհասը ունի, որ ուրուրի պես պտույտ է գործում գլխի վրա:
– Իշուն ասին չնորհքդ ինչ է, պոչը տնկեց ու գռռաց:

— Փոր է, խո ջհուդի չուկա չէ:

— Ո՛ւժ, ո՛ւժ, թող քեզնից գնան գանգատ<վեն>. ամեն հայ պիտի տանը ծակ-երկաթ ունենա. մեկ ձեռքով պիտի արտ ցանես, գիր գրես, տուն չինես, ծառ տնկես, մյուս ձեռքով պիտի զենք ունենաս, քո աշխատանքը, տունդ, ազատությունդ պահպանելու համար:

— Թուրքերին չի կարելի հավատալ, նրանք միշտ վերևին են նայում, տեսնեն՝ թե ինչ մատի չարժում կանեն՝ ջարդ թե եղբայրություն:

— Մի խոսքով՝ թուրքի հետ եղբայրացիր, փայտը ձեռքեդ վայր մի քցիր:

— Ռես Հոսեն չի հավատում եղբայրության՝ քրդերի և թուրքերի հետ. այլ եթե հնար է՝ հայկական անկախության. Ուստեն մոլորված է՝ կայծակը ֆետերալիստ է, Ուստեն մի modus-viventi *է ստեղծում, թե թուրքն ու քուրդն էլ է նեղվում սուլթանի ձեռքի տակ. կազատեմ ողջ երկիրը, հետո կքաժանեմ իրար մեջ կամ մի ուրիշ ելք: (Դրա մասին մտածել, այնպես որ Հայաստանի գաղափարը մնա): Իսկ Բյուրոյի չրջիկը և ռուսների դեմ — ընդհանուր ֆեդերացիա:*

— Տասնապետ, հիսնապետ, հարյուրապետ, հազարապետ:

— Էդով Գարանը հարսնիք չի երթա:

— Երկու իշու գարի տալ չգիտե:

238. <ԷԼԻ ՀԱԶԱՐ ԹՈՒՔ ՈՒ ՄՈՒՐ...>

— Էլի հազար թուք ու մուր ռուսի երեսին: Էլի ռուսը լավ է (համեմատած):

— Հա՛, կռիվն էն տարին էր, որ Շաքեր օղլու ձին տարան:

— Մամս էլ կանե էդ բանը. մամս էլ կրնա էշ հեծնել, փլավ ուտել:

– Վարնոց մարդ է = ցած մարդ է:

– Կոլոտ, պոչատ:

– Պլըճորեց:

– Հարուլթը: Էդ հարսին մարդ գդալով ուտե... Գդլտիմ, հոգուդ մեռնիմ:

– Ի՞նչ պիտի անես: Միրուքներս տվել ենք ձեռքերը:

– Հայոց փառքի ծիրանին դարձավ ցնցոտի:

– Իր օղորթն ասավ, փախավ, մեր ստի ձեռքից չազատվեց, մեր սուտը ետևն ընկավ:

– Ձեռքի գտնվածը էս է = լավ-վատ էս է:

– Գլխների վրա ման կածեին = Ուստին չա՛տ կպատվեին:

– Գլխից վեր լավ մարդ է:

– Ջոռով հոգի ենք պահել: Ռես:

– Երթալիք տեղերդ լավ է:

– Դուրսանք = դրսերը:

– Էս ուրտեղից եք ծնել = էս փուչ մարդը որտեղից է:

– Բարակ հաչիվ կտեսնես:

– Թուրքը և ռուսը մի-մի մեծ լեշեր են:

– Ո՛վ – իշու մեկը:

– Խոսքը բերնից վերցրեց ու ասաց:

– Գլուխ չեմ իջեցնե:

– Գլուխ իջեցնել = խոնարհվել:

– Բախտիդ գլխուն քար քցեցիր = քեզ վնասեցիր:

239. <ՈՒՍՏԵՆ ԼՍՈՒՄ Է...>

– Ուստեն լսում է հնչակյանների ժողովում, թե ինչպե՞ս նրանք քարոզելիս բամբասում են դաշնակներին: (Ասել այն, ինչ որ հնչակները միշտ հերյուրել են):

— Ուստան չրջիկների հետ խոսելիս՝ իրեն համար պարզում է հայոց հարցը, բոլոր խնդիրները, ապագան, ներկան, անցյալը:

— Կայծակը. ներկան հղի է ապագայով:

— Երեք (4, 5) գոմշի գլուխը մի կաթսայի մեջ չեն եփվիլ: Երեք մեծ մարդ (2) մի գյուղում կամ քաղաքում չեն կարող հավաքել: Տեղավորել:

— Ուստա,— ասում է Հարությը,— էն Մաքթաչին դու լավ վայելեցիր:

— Հարութ, հոգուդ մեղք մի էրա, հոգի ունիս Աստծուն տալու:

— Է՛հ, Ուստա, քարփից մի քցիր ինձ, ասենք՝ խելք չունեմ, հո քթի ծակեր ունեմ, հոտ կառնեմ, օրթե հոտ էղնի:

Ռեա Հոսեն ասում է. մեր սուրբ ազգակուսակցությունը, մեր սուրբ նահատակները:

Ռեան ասում է՝ Ուստա, թուրքի և քրդի հետ չի կարելի բարեկամ լինել, ներել, հաշտվել, մոռանալ. նրանք գազան են, գազան:

Հարությը: Կարո չան, ի՞նչ է, ուստությունդ Հայաստանի գլխո՞ւն սիրտ բանեցնես:

240. ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

— Ես դրավ կգամ ինչով ուզում ես, եթե մեկ ուրիշը էսպիսի մի ձի, ժամացույց ունենա:

– Համո աղան ամեն անգամ ինձ հանդիպելիս, կխնդրեր, սահաթս կառներ, կնայեր, կնայեր, ու չէր կշտանա նայելով, գովելով:

ՏԻԿՈՒՌ

– Կարոն աշխատանքից դուրս գալով կշրջեր գյուղամեջ, կմտներ X մոտ մի արաղ անուշ կաներ, կանցներ մյուսի մոտ՝ մազա կուտեր:

– Երբ պիտի ինձի սիրես, երբ պիտի ինձի առնես – Քրիստոսի մեկել գալուստյան:

– Ի՞նչ տամ մինչև Ղարս տանես ու ետ բերես:
– 5 մանեթ, տանեմ Ղարս, ետ բերեմ:
– Ի՞նչ 5 մանեթ:
– Ինչի, չա՛տ ասի, տանեմ-բերեմ, 5 մանեթ:
– Ղարս տանի՞ս բերե՞ս:
– Հա, տանեմ-բերեմ:
– 5 մանե՞թ:
– 5 մանեթ:
– Գնա, ախբեր, գնա:
– Դեհ, դու է՛լ գնա, արի...

ՏԻԿՈՒՌ

– Ես քեզ էնպես տակով անեմ որ, ագռավը լեշդ (գեշդ) չգտնի... Ղուկասի մասին:

– Ուստա Կարոն՝ մի սանահորը.
– Աթո, մի արաղմ՛ քցե:

— Աթո մի հատ էլ քցե, ճամբեն չլտկվեց:

— Չէ, Ուստա Ջան, չա՜տ եղավ:

— Տո, մի հատն ինչ է որ, քցե, երթա:

— Չէ, Ուստա, չեմ կրնա վերցնե:

— Մի հատմ', Ուստիդ պատվի համար:

— Պատվիդ համար ջուրը կընկղնեմ, բայց չեմ կրնա, Ուստա Ջան, սիրտս կցավի:

— Մի հատմ', ինձի աչե:

— ...

— Մի հատմ'...

Ճարահատ՝ թթված քիթ ու մռութով վայ էն խմելն էր, որ խմեց խեղճ սանահերը...

[ՏԻԿՈՈՒ]

Տեսան մի ահագին, խոշոր, բարձրահասակ մարդ: Հարցուբեն ասավ,— սա թշնամուն ցուցնելու բան է, Ուստա Ջան... Բագրան:

241. <ԳՈՄԻՑ ՀԵՏՈ...>

Գոմից հետո, Ուստան գտավ ընկերներին, լավ քեֆ սկսեց, և զուռնաչիների խումբը առաջը ճգած ընկերներով եկավ անցավ Թորոյի իջած տան առջևով, որ Սանամը տեսնի: Եվ Սանամը տեսավ Ուստին, հայացքները իրար հանդիպեցին և համբուրվեցին: Ուստան կատղեց, հրամայեց ուժգին փչել, փչել իրեն ականջի մեջ. գժվեց, գժվեց, խենթացավ, մինչև որ Թորոյի գլուխը հանկարծ երևաց փողոցի

ծայրից, Սանամը թագնվեց, Ուստան էլ զգաստացավ և երթը շարունակվեց, երգով, փողոցե փողոց:

242. ԲԱԳՐԱՆ ՈՒՍՏԱՅԻ ՔԵՖԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

– Հարութ.
Մարուք.
Նալպանտ Աղանիկ.
Ռես-Հոսե.
Թաթոս վարժապետ.
Մացակը (բագրանցի).
Օսկանը.
Մի սանահեր ծպնեցի.
Մի սանահեր զռչեցի.
Մի սանահեր ագրակցի:

243. <ՀԱՃԱԽ, ՍԱՔՈ...>

– Հաճախ, Սաքո, քո կենացդ, քեզ ըլնի <անընթ.> կենացը:

– Խմեք, քեֆ էրեք, էս երկրի վրա քեֆն է մնացողը, աչքիս նայե, խմե, աշխարհ ունայն աշխարհ է, էսօրվա օրը ձեռք չի ընկնի:

Քեֆին բղավում են՝ հայ, հո՛ւյ, հայ, հույ...

Երկինքը ամպել է,
Գիշերը թաց է,

Մանանս կանդնել է,
Աչքերը թաց է:

— Դուք [էսպես] էսման ողջ ըլնիք:
Էդման ողջ լինեք:

244. ԲԱԳՐԱՆ. ՔԵՖԻՆ

— Առ դանակը, բաց խուրջինը, կամ՝ տուր դանակը...
— Պաղ աղբյուրի մոտ.
Ինքն էր քաջ ֆիդահ:
Առհասարակ նույն չրջանի տարածված երգերը —
— Ալլուղս կորավ ձեր դուռը:
— Էսօր չաբաթ ըլներ,
Վաղը՝ կիրակի:
— Մարոն.
Մազերդ հյուսել ես...
— Խնձոր կտրեմ, տամ յարիս դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ:
Ուստան դիլիմի վրա ոգևորվում էր և անվերջ կրկնում — դիլիմ, դիլիմ...

245. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Խումբեր գանազան գյուղերից և կարսից, կաղզվանից, քեֆ էին անում, աշխարհ մոռացած քեֆ. սրտաբուղխ երգում էին՝ Սայադ-Նովա, Ջիվանի, ժողովրդական երգեր, սիրո երգեր:
Հարուքը լսում էր հուզված:

— Ծերունիներ գլուխները ժաժալով:

246. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Երբ Բագրանում քեֆ էին անում Ուստան, և ներկա էր կայծակը, Նիկ<ոլ> Աղբալյանը, և ճառեր ասացին. վերջինը ոգեկոչելով անցյալը՝ Բագրան, հայ թագավորների հանգստարան, դամբարան, կամսարականների, Բագրատունիների օրորան, քաղաք, աստվածների բագարան, բագիններ, մեհյաններ, ոսկե արձաններ...

Կարսեցի մի վարժապետ մի երկու խոսք ասաց — Ես իբրև հայոց լեզվի ուսուցիչ, բաժակս բարձրացնում եմ հայոց լեզվի կենացը, մաղթելով նրան արևշատություն: Այդ բոլոր չքեղ անցյալից բան չի մնացել մեզ՝ միայն այս ավերակները, և այս ավերակների տքնող, աշխատող, կռացած այս խեղճ ժողովուրդը, անտեր, ճնշված, ոչ իր տերը ճակատագրի. բայց այս բոլոր տխուր իրականության վրա թևատարած ճախրում է մեր լեզուն (բանալին ազատության), դարերի խորքից եկած, մեր նախահայրերի հոգու խորքից եկած, այս չքեղ, քաղցր, վեհ լեզուն, որին չի ընկճել ո՛չ մի յաթաղան ու մտրակ, թո՛ղ միշտ հնչե՛ այդ լեզուն, նրանով մենք մենք ենք, և միշտ մենք կմնանք: Ես հավատում եմ միայն մեր լեզվի ուժին, խորհրդին, նրա մեջ մեր հոգին կա և մեր ըմբռնած աշխարհը, մեր տեսիլքները... նա է մեր հզոր զենքը...

Երբ մանուկը թոթվում է հայ բառը, նա արդեն զինված է, նա հաղթել է արդեն:

Կեցցե՛ հայոց լեզուն:

Բայց ճառի սկզբում ասաց — Ընկերներս ճանաչում են ինձ. ես երազ տեսնող չեմ և պատանեկության օրերիս

տեսած երազներս էլ գեչ դուրս ելան. ես չեմ հավատում Եվրոպայի կամ Ռուսաստանի մարդասիրությանը. մարդկությունը ատում է մարդկությանը, մարդը մարդուն ուտում է. հայերս թող հույս չդնենք մարդկության վրա, ինձ համար չկա մարդկության խիղճ, թքել եմ ամբողջ աշխարհի վրա: Ես տեսա, որ հայության կոտորածները երբեք մարդկության պետքը չեղավ. մի մարդ ամբողջ մարդկության մեջ, բացի մեղնից, չխղճաց մեզ վրա, այլ բարեկամացավ մեր թշնամուն: Մարդկությունը գազան է, բնությունը նրան գազան է ստեղծել և այդպես էլ կմնա. բնությունը սեր չի դրել մարդու կրծքի տակ, որովհետև ինքն էլ չունի... Եթե այսօր ամբողջ մարդկությունը մեռնի, մի վայրկյանի մեջ, ո՛չ մի ճանճ, ո՛չ մի տերև վիշտ չի գգա, և այդ վշտից ո՛չ կմեռնի, ո՛չ կթառամի...

— Ջայնդ... է՛հ, հետո, ինչ կուզես ասել, չենք հասկանում...

— Թողեք խոսեմ... ես իբրև վարժապետ հայոց լեզվի, խմում եմ հայոց լեզվի կենացը...

Հարութին չա՛տ դյուր եկավ նրա պեսիմիզմը. նա հիշեց, որ հոր մահի ժամանակ նկատել էր, որ աշխարհի բնավ պետքը չէր, որ հայրդ մեռել է: Արևը ցոլում էր, գետերը գնում էին, թռչուններըը, ծաղիկները բուրում էին...

247. <ՈՒՍՏԱՆ, ԱՌԱՆՁԻՆ...>

Ուստան, առանձին, քեֆ է անում. նվագում է մի դյուդուկ, և մի տղա էլ երգում է: Ուստան խնդրեց, որ նվագեն և երգեն ամենեն տխուր երգերը: Տխուր, չա՛տ

տխուր երգեր է ուզում լսել: Ուզում է սիրտը վշտերի մեջ խեղդվի: Նրանք երգում էին: Ուստայի սիրտը վշտերի մեջ խեղդվում է, պատառվում է, տրաքվում է. կտոր-կտոր է լինում, բայց նորից ուզում է: Երգում են: Ուստայի հոգում իրար ետևից հորդում են անցյալի պատկերները – հայրը, մայրը, նրանց անտեր գերեզմանները, հոր տունը ավեր, բլբլկած պատերով ուրվացավ հոգում... Սանամը, Հայաստան գնալը, կռիվը, մահ...

Երգում են.

Ոլոր-մոլոր Քուռն էր գալիս
Կովկասու սարիցը.
Մի պեչատված գիր ստացա
Ես իմ յարիցը:
Գիր գրողը լավ չէր գրել
Ղալմի ծերիցը.
Տվեք ինձի ես կգրեմ
Մազիս ծերիցը...

– Ջա՛ն, ջա՛ն,– ասաց Ուստան,– ուրիշը...

Պաղ աղբյուրի մոտ
Կանգնած հայ աղջիկ,
Ջեռին սափոր բռնած՝
Ջուրն էր անուշիկ:

Պաղ աղբյուրի մոտ
Կանգնած հայ տղա,
Ջեռին մոսին բռնած
Ինքն էր քաջ ֆիդահ...

<ԱՅԼ ԹՂԹԱՊԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ «ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

248. ԲԱԳՐԱՆՈՒՄ

— Մի տեղ, աղջիկների մի խումբ պար էին բռնել, իրենք երգում էին և երգի տակ թռչում:

Երգ.— Յար ջան դու բարով եկար,
Կանանչ կալերով եկար,
Կարմիր սոլերով եկար:

— Աչնան մի անուշ երկինք կար փռված Բագրանի վրա:

249. ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ, ԳՈՄԻ ՄԵՋ

Լորիկը խոստացավ Սանամին գոմը բերել: Ուստան մտավ գոմը. մեծ գոմ չէր. երթիկից աղոտ լույս էր իջնում: Ուստան նայեց — մի մսուրի առաջ մի խեղճ էշ էր կապած, առաջը մի կտոր խոտ դրած. մի անկյունում — մի նիհար հորթ էր կապած. գոմի մեջտեղը մի քթոց կար բերանի վրա շուռ տված: Ուստան նայեց քթոցի վրա և անհամբեր սպասում էր. Սանամն ուշացավ. թրիքի հոտ առավ. պապիրոս չինեց՝ ծխեց, որ հոտն անցնի, չզգա: Սիրտը նեղվում էր: Վերջապես դուռը բացվեց և Սանամը ներս մտավ. Լորիկը նրանց ներս քցեց և ինքը փախավ, դռան հետևը մնաց, որ չթողնե մարդ մտնի՝ ասելով, որ հարս կա այնտեղ...

Ուստան թռավ, բռնեց Սանամի ձեռքը, մեջքը, և բերեց քթոցի մոտ, նստեց և Սանամին նստեցրեց ծնկան վրա: Լռություն: Բաբախում էր խիստ Ուստայի սիրտը... Ուստան նայեց չուրջը. իրեն թվաց՝ որ գոմը մի չքնաղ սենյակ է, մի ոսկե լույս է թափվում, անուշ բուրմունք կա. իշու փոխարեն մի ջահել նժույգ քուռակ է կապված և հորթի փոխարեն տեսավ մի քնքուշ եղնիկ...

250. ԲԱԳՐԱՆ: ԱՆԻ

– Իմ մայր հայրենիք, վերքերդ ծածկիր քո ցնցոտիներով, աչխարհի անխիղճ աչքերից:

– Արար աչխարհ թշնամի դառավ մեզ. լուսավոր աչխարհը սուր դրեց սուլթանի ձեռքում – և մենք մորթվեցինք եվրոպական լույսի տակ. և մեր արյունը ցայտեց, կարմիր անջնջելի կնիքով հավիտյան խարանեց Եվրոպայի ճակատը՝ լուսավոր աչխարհի ճակատը:

251. ՈՒՍՏԱՆ ԳՈՄՈՒՄ

Գրկել էր Սանամին. և այն զգայությունն ուներ, թե իրենից և Սանամից բացի էլ ոչ ոք չկա ամբողջ աչխարհում:

252. <ՈՒՍՏԱՆ ԻՐ ԱՆՀԱԳ ԱՉՔԵՐԸ...>

Ուստան իր անհագ աչքերը սերով և կրքով պտտցնում էր Սանամի մարմնի վրայով, բոլոր կետերով: Աչքերով չոչափում էր, զգում, ուտում նրա բովանդակ մարմինը:

253. ՈՒՍՏԱՆ ԵՎ ՍԱՆԱՄԸ

Երբ Ուստան գոմն էր, և Սանամը գրկում, գոմը նրան թվաց մի ուրիշ աշխարհ, սովորական աշխարհից չա՛տ տարբեր, դերբենական, չքնաղ — կախարդական աշխարհ, ուր նա հազվագյուտ բախտի բերումով ընկել է:

Սանամը գրկումն էր. Ուստան աչքերը փակել էր, երբ բացեց, նայեց՝ գոմը չկար. տեղը մի ուրիշ աշխարհ էր, պալատ, ոսկե սներ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆԱԼԸ

Երբ վճռեց Հայաստան գնալ, արդեն իրողություն էր համարում գնալը, և հոգով ու մտքերով այնտեղ էր, մտքերով և երազներով:

254. <ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐՎԱՆԻՑ...>

Հինգշաբթի օրվանից պատրաստություններ:

Գաթա, հավ, և այլն:

Ուրբաթ օրը Ուստան պատրաստվեց, հագնվեց, սափրվեց, Ջավուշն էլ. աղքատների համար սև փող, ճերմակ փող, եկեղեցու, <անընթ.> համար:

Գնում են, ձիով: Գիտե, որ գալու են <անընթ.>:

Հասան իջևան, երեկոյան հասան, քնեցին: Երազով վարդ պիտի տեսնե:

Առավոտ Մարուքին է պատահում, հարցնում են քեֆ, հալ, գտնում են Հարուքին: Ջավուշը անբաժան

է – գտնում են ընկերները – Մացակը, մի-երկու սիրելի սանահերները, ջաղցի Ուստա Գոգորը, Օսկանը (երբեմն էր ներկա), զուռնաչի են վարձում, գառ առնում, խորոված, տներից բերած բաներ՝ Երեցխեղդի մոտ: Ռես-Հոսեն:

Հետո քեֆին կանչում են Բագրանի կոմիտեն. Կայծակը, վարժապետները:

Քեֆի ընկերները – Օսկան, ջաղացպան Գոգորը, Հարուքը, Մացակ, Մարուք, Կարո, Զավուշ, երեք ուրիշներ – 10 հոգի:

Քեֆ, կենացներ, սրախոսություններ, կատակներ, պարեր: Երեկոյան դեմ դեռ արևով պտտվում են դավուլ-զուռնայով գյուղի մեջ, նայում են հարսներին. Սոնան... Ուստան մենակ պարում է տրնկի, գոռում է՝ է՛յ, սարերը չաղախեմ, ծովերը հունցեմ:

Հարուքը, Մացակը սրախոսում են ցինիկ, քիչ, պատահաբար – քեֆը վերջանում է, ուշ երեկո. ցրվում են մյուս օրվա համար. Կ<արոն>, Մ<արուքը>, Հարուքը չրջում են ժողովրդի մեջ, ուր խոսում են՝ լսում են... Մյուս օր, առավոտ [զուռնան հետն է] հետներն է [զուռնայով գնում են] Կարոն, գնում է Հարուքի մոտ, մոր ձեռքը պաչում, Օսկանի հետ գնում են Թորոյին տես, Զավուշը [Հարուք] Սոնան օղի է պատվում, [Օսկանենք] կողբեցին բեխը ոլորեց՝ Սանամին տեսավ. ճաշից հետո մեծ պար կա՝ Օսկանի կողմից, հարսի համար՝ պար հանել. մինչև այդ ընկերները իրար գտած են՝ զուռնան առաջնեը ձգած պարում են, ըմբիշ, քյանդրբազ. (Սոնան էլ նայում է). ճաշ՝ եկել է Կայծակը, վարժապետ Թաթոսը, զինվորներ, Բագրանի եննթակոմիտեն, ճաշ է տալիս. հավաքվել է իր ընկերներով՝ Մարուք, Հարուք. Կայծակի ճառերը: Իր զուռնան հանե:

Հետո պարը. բոլորը պարում են մեկ-մեկ. կողբեցուն էլ են հանում, կաղ է. Թորո-Կարո:

Գոմից հետո Կարոն իրենից ելած, ոգևորված, խենթացած դանում է Հարությին, Մարուքին, Ջավուշին.— դրկում է, համբուրում է նրանց, սիրտը գեղում է Հայաստան գնալու, սուլթանի դլուխը մեկ զարկով կտրեմ, Մարուքը հակառակ է, Հարությը հասկանում է ու ականջին փսփսում՝ Սոնայի քովեն կուգաս, մեջդ զորք է լցվել...

Եվ չարությամբ, ծաղրով քննադատում է Սոնային — հետո ներողություն է խնդրում, նույնիսկ լացով, Ուստան ներում է — մի գավ աղբյուրների ջուրը <...>[1]

255. <ԿԱՐՈՆ ԳԻՇԵՐԸ ՔՆԵԼԻՍ...>

Կարոն դիշերը քնելիս խոսում էր սրտում — Հարությը քանի գնում է, դաղազում է, սատանան հաղթել է, էսպես որ երթա, հենց ինքը սատանա է դառնալու, չար լեզու ունի հիմի, բայց սիրտը լավն է, լավը:

Ասա Սոնայի մասին.— Տո, երազ էր, ի՛նչ ծծեր, ինչ <...> ու մերգ... Ա՛խ, երբ պիտի Հայաստան ազատենք, որ Սոնային դրկած, ձեռք...

Էյ դիտի Հայաստանի սարեր, ինչեր պիտի տեսնեք, ինչ թրեր պիտի չողան, հրեղեն ձիերը խրխնջան, սուլթանի թախթի վրա պիտի փսփսիս թաւ տամ, և հանկարծ կասկած ընկավ սրտում, կարելի է կզարկվիմ, անմահ մարդ չկա, փորձանք է՝ եղավ, քաջն էլ կզարկվի, քաջն ավելի շուտ, վախկոտն է որ գլուխ է պահում:

---

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

Տեսնես՝ ո՞ր սարում պիտի դարկվիմ, ո՞ր քարի տակ պիտի ընկնիմ, ու տեղս պիտի կորցնեն. տարիները պիտի դան երթան, միսըս ագռավները պիտի ուտեն, ոսկորներս Մսրա ու [Հաբեշ] Թուրանից եկած ամպերը, ձյունը պիտի ծածկե, գելերը պիտի օռնան նաշիս վրա, քամին նաշս պիտի տանե՝ ամեն ճամբեքով. ինչ ըլնի, թո՛ղ ըլնի, բայց Հայաստան պայծառ կլինի արդեն ու ազատ, ու հոգուս թասը կխմեն ու կասեն.

– Էյ, լուսահոգի Ուստա Կարո, երկնքի մեջ ականջդ կանչե, ուզածդ եղավ, ազգն ազատվեց գազանների ձեռքից…

Եվ նորից սրտի [մեջ] մի ծայրից ծագեց Սոնայի երեսը, ուր սրտի և սիրո կրակը վարդի պես վառվում էր… և համբուրեց…

256. <ՀԱՐՈՒԹԻՆ ՔՆԵՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ…>

Հարութին քնեցնելուց հետո՝ պահապան թողեց մոտը Գոգորին ու Ջավուշին, ինքը գնաց Մարուքին [ու Մացակին] գտնելու, (մաստարեցու սպանման ժամանակ, ուխտավորները վախից, սարսափից փախան, պրիստավը բռնում էր ձեռքն ընկածին քննելու համար), ողջ գյուղը սկլել էր, հող ու մոխիր էր մաղվել գյուղի վրա, ոչ մի տեղից երգի, ծիծաղի, նվագի ձայն չէր լսվում, Ուստան պատերի տակ սահելով, անցավ այն – X կողմ, գրեթե մարդու չհանդիպեց. տուն դառնալ, քնել չէր կարող, սիրտը պռունկե պռունկ լցված էր, միտք ծագեց գլուխը՝ գնալ Շահպազի օղետունը. գնաց, մի-երկու խմող կային, որ իրար անհասկանալի զրույց էին անում, ձեռուոտով:

Ուստան բարև տվավ նորից. [արաղ] դինի ուզեց, նկատեց անկյունում մի աշուղ կար, սազը կողքին պառկել էր, ձայն տվեց նրան, վոդ տվեց, խնդրեց, որ սազը ածե, բարակ, սրտալի եղանակներով, առանց խոսքերի. աշուղը նստեց Ուստայի առաջը և նվագում էր, նվագում էր տխուր, թախծանուշ, մելամաղձիկ եղանակներ, երազաբեր... Լարերից ծորում էին տխրության [կաթիլները] բարակ [երիզի աղբյուրները] մետաքսաթել առվակներ, որ ողողում էին վշտով կարոյի սիրտ ու հոգին: Ուստան պատվեր չէր տալիս. նվագից-նվագ անցնելով, Ուստան կում-կում խմում էր դինին, ու աչքերը կիսախուփ լսում էր ու խորհում, ի՞նչ էր խորհում... անհնար էր որոշել. հոգու մեջ ծփում էին հազար ու մի պատկերներ, մանկության օրերից, դյուղի ընկերները, հայրը, մայրը, իր թափառական օրերը, նեղությունները, վաղանցուկ սերերը, և գլուխը կամաց-կամաց իջավ սեղանի վրա, ձախ թևը իբրև բարձ, իսկ աջ ձեռքը դրեց ծոծրակին՝ երբեմն [մատները] չարժումները անելով՝ աշուղին հասկացնելու, որ քնած չէ, թող նվագե... և արթնության մեջ՝ որ քնի նման էր, Ուստան երազում էր՝ սիրտը քնքուշ թախիծով օրորուն...

— Հարուքը քանի գնում է...

Եվ քնեց դեմքը ձախ ձեռքի վրա, աջ ձեռքի ափը ծոծրակի վրա. աշուղը լռեց. երկու հարբածները իրար վրա ընկած քնում էին մի անկյունում, Շահպազը ինքն էլ խանութի սարքի վրա գլուխը ձեռքերի վրա հենած՝ նույնպես [քնում էր] կիսաքուն էր՝ մի ականջը միշտ պահապան դրած դռան զարկին՝ հյուրերի համար:

[Արշալույսը] Արևելքը կարմրեց, Շահբազը զարթնեց, և կամաց-կամաց ձայն տվեց իր հարբած քնով ընկած հյուրերին: Ուստան զարթնեց, լվացվեց, գնաց Հարուքի

մոտ. Հարուքը մի ժամ առաջ մոր [հետո] հետ, արդեն մեկնել էր Բագրանից. Զավուշի հետ Ուստայի խոսակցությունը այդ առթիվ:

257. <ԲԱԳՐԱՆՈՒՄ՝ ԼԱՉԻՄ ԽԱՂԱԼՈՒՑ ՀԵՏՈ...>

— Բագրանում՝ Լաչիմ խաղալուց հետո, երբ Ուստեն Սանամի հետ տեսնվում է դոմը... Թորոն նկատում է և դնալուս՝ երբ Ուստեն Սանամի սայլի առջևը ձի էր խաղացնում, հետ ու առաջ գնալով, Թորոն ասում է Օսկանին՝ թե Ուստեն բարեկամ չէ մեր օճախին, չուն մտքով է նայում հարսին. թե որ կուզես լավ բարեկամ մնանք, էդոր ոտքը պիտի մեր տնից կտրվի:

Օսկանը հասկացնում է՝ որ Ուստեն լավ մարդ է, լավ սրտով է հարսին նայում ու դեչ չի լինի էդոնց իրար հետ կարգենք:

Թորոն. Ես գիտեմ, որ կարոյի միտքն էլ էդ է՝ համա էդոր հարս տվող չկա. թող խելքն քչա՛ էնե. թո՛ղ Հայաստան երթա. էդ մարդը առիք սևցնող չէ. թոկե փախածի մեկն է, ո՛վ գիտե ո՞վ է, ունն ու բունը. ո՛վ գիտե կծիկը ո՞ւր է դրել ու եկել մեր կողմերը. ես խելա՞ռ եմ էդոր հարս տամ:

Օսկանն ավելի համոզիչ է խոսում, համարյա ուզնկանի դերի մեջ է, քանի որ միանգամ երես ելավ, բերանը բացեց, խոսքը Թորոյից ելավ. սակայն<...>[1]

---

[1] Ձեռագիրն այստեղ ընդհատվում է:

258. ԿԱՅԾԱԿԸ (ԲԱԳՐԱՆՈՒՄ)

— Ժողովուրդ, գիտեք թե դուք ո՞վ եք, ինչ պապերի ու Հայրերի որդի եք. աշխարքի սկզբից մինչև հիմա, [ու մինչև աշխարքի] այս հողը մերն է եղել ու մերը պիտի մնա մինչև աշխարքի վերջը: Մեր պապերի օրրոցքն ու գերեզմանն է եղել սա և մերն է հիմի, ու մեր թոռներինը պիտի լինի: Արագը եկել է հին ժամանակ էլ հայոց լեռներից ու անցել է հայոց դաշտերով, հայոց արտերը ջրելով. ու հիմի էլ կուգա մեր արյունոտ լեռներից, ու կջրե մեր ավերակ արտերը: Տեսեք՝ Մասիսը հեռվից, երկնքից, մեզի կնայե (ժողովուրդը դարձավ դեպի Մասիսը): Քանի հազար-հազար տարի նա նայել է այսպես մեր պապերի, մեր Հայրերի վրա, մեր պապերի աչքը դիպել է նրա բաձրագլուխ ճակատին, ու մենք էլ նայում ենք նրան, ու մեր թոռներն էլ պիտի նայեն: Մեր երկիրը ամեն տեղ մեր չինարար, քաջ պապերի ձեռքն է դիպել. տեսեք՝ մեր քթի տակն են՝ Աշխարք-Անին, Բագնայր, Երերուք, Տիկոռ, Խնձկունք, Ագրակ, Մրեն, Նախճավանը՝ Բագրան, Կողբ, Կաղսվան, Քիրս, Երդանաուր, Երվանդակերտ, Ցոլակերտ, էլ չեմ ասում Կոշ, Էջմիածին, Մուղնի, Գեղարդ, Խոր-Վիրապ, Դվին, Արմավիր, Արտաշատ, Ղարս, Մարմաշեն, և հազարներ, հազարներ...

Դուք որ կտեսնեք այդ բոլորը, մեր փառքի կենդանի, անմահ վկաները ի՛նչ կասեն ձեզ. չեն ասե՝ թե դուք մեր որդիքն եք՝ հին, հարուստ, չեն, մեծ օճախի որդիքներ, որ հիմա խեղճ եք ու աղքատ. բայց որ վաղը, եթե ուզենաք, կլինեք ձեր պապերի պես՝ մեծ ու չեն: Դուք հպարտ չեք զգալու ձեզ, որ այդ մեծ Մասիսի տղերքն եք, ձեր արյունի մեջ մեծի, հզորի արյունն է վաւվում:

Մի՞թե խեղճ հայ չարչին, որ քոսոտ էշը քցած առաջը, աղքատության, կարիքի տակ մեջքը ծալված, գյուղերն է քաշ գալիս, հավկիթ հավաքում, միթե՝ երբ նա Անի դարպասով է անցնում, միթե հոգին չի մեծանում Անիի պես, և իր էշը իրեն աչքին նժույգ չի դառնում, և հավկիթները ալմաստ ու գոհար, մի՞թե չի ուղղվում նրա մեջքը, հասակը [մեծանում] երկնում, այո՛, նա ույժ է դնում իր փառավոր հայրերի օճախի մեջ և բարձրագլուխ ու բարձրավիզ քայլում է՝ իբրև մեծ օճախի հարուստ տղա...

Իմ սիրելի, չա՛տ սիրելի ժողովո՛ւրդ, միացեք, իրար թև ու թիկունք դառեք, դաշնակցեք իրար հետ, կազմեցեք [Հայ-Յեղ. Դաշնակցությունը] դաշնակցություն, [փոշիների միջից հանեք հին]<...>[1]

259. ՍԱՆԱՄԻ ՄՈՏ

Բագրանում, գոմը, Լորիկի հսկողության տակ. այդտեղ խոսում են, վերջնականապես որոշում իրար պատկանելու, փախնելու Գյուլստան գնալու, կողբեցու մասին:

Այդտեղ Ուստեն մի լավ համբուրում (զորս դու պատվիրեցիր), դուրս գալուս ասում.

– Էս էլ ըսմանն:

– Սանամին առաջին անգամ բաղը տեսնելուս (Ուստեն կամ Սանամը).

Տեսի՞լք էր, աչքի երևութք... դո՛ւ, էստե՞ղ:

---

[1] Զեռագիրն այստեղ ընդհատվում է:

260. <ՈՒՍՏԱ ՋԱՆ, ՕՐԹԵ ԴՈՒ...>

— Ուստա ջան, օրթե դու Հայաստանն ազատեցիր,— ասում է Փիլոսը,— ազգը պիտի մի փառավոր ժամ շինե ու պատկերդ դնե էնտեղ, քեզի սրբի պես պաշտե:

— Ասելը կասեմ, բայց դեռ կաց:

— Ուզեմ-չուզեմ պիտի երթամ:

Ուզենամ-չուզենամ: Ուզեի-չուզեի:

— Ուստան որ մի պատմություն էր անում, երբ գդում էր՝ որ երկար եղավ, ասում էր. «Դեհ հիմի խոսքիս վերջը մտիկ արեք, ականջ արեք (դրեք)»[1]:

— Բագրանում.— Գյուղացիք խմբած, հարբած իրար հետևից օրորվելով ման էին գալիս:

— Երբ Ուստան լսեց Սանամի դավաճան խոսքերը, ասես, այդ խոսքերը հասարակ հնչյուններ չէին՝ այլ թրեր և դանակներ, որ կտրում էին նրա սիրտն ու հոգին:

— Ա՛խ, Ջավուշ ջան, ախ,— (ասաց Ուստան):

= Ջան, Ուստա ջան, ա՛խ,— (պատասխանեց Ջավուշը):

— Ուստան մի անգամ Թորոյի մոտ կրակ կտրած խոսում էր Հայաստանի մասին, այնինչ Թորոն նստած տեղը խռմբացնում էր... Ուստան նկատեց, և վիրավորված լռեց՝ «Իշու գլուխ» մտքի մեջ ասելով:

— Երբ Ուստան նկատեց, որ Բագրանի ուխտին Թորոն չատ լավ է վերաբերվում կողբեցու հետ, և սա էլ մեկ-մեկ աչքի տակով, քննական ու ցանկասեր հայացքով ոտից գլուխ դիտում է Սանամին՝ մտքովն անցավ մի կասկած, բայց հետո մտածեց, թե ինչ կա որ. Թորոն չուն մարդ է, փողասեր, փողով մարդուն պատվել գիտե՝

---

[1] Ձախ լուսանցքում. «*Տիկոո*»:

աչխարքե պարտք առնել, բայց Սանամի վրա նայելուց ինչ կարող էր դուրս գալ՝ Սանամը հոգով-մարմնով Ուստինն է:

— Օ, էն ինչ չուննն է, էդ Պողոս ասածդ, կրնաս մեկ սխալվես, մատդ բերանը դնես (այսինքն՝ հավատաս նրան, կուտե քեզ):

— Էնպես հպարտ է, որ չի էլ նայում, թե մոտը կաս, թե չկաս:

— Աչխարքում էնքան էշ կա, ես ո՞րին խելք հասկացնեմ:

261. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Գյուղացիք ասում են Ուստի ետևից — Ուստեն տեսնես, որ ուզենա, կրնա սուլթանին հաղթել... կամ կրնա այսինչ բանն անել:

— Կարո, տարան, աչքդ քոռնա, տարան (այս հարսին):

— Հարուբթ, թող տանին, աչխարքից բան չի պակսի:

— Կարո, կնախանձեմ ամեն տղամարդու՝ օրթե հետը սիրուն կնիկ կա, կուզեմ իմս էղնին:

— Հարուբթ, տղամարդը հպարտ պիտի էղնի, կնկան աչքի պոչով պիտի նայե, հեչ չպիտի նայե, որ կնիկդ վազե, գիրկդ ընկնի:

— Կնիկն ու երեխեն մի հաչվի բաներ են. երեխի պես կնկան չոյե, գուրգուրե, կակա տուր, սիրտը շահե. մինակ մեծի պես երևա՛, ոտները չընկնիս, կհասկնաս, կնիկդ միշտ պիտի երեխի պես, մեծից վախենա, տղամարդը սաստ պիտի ունենա. կնիկը տղամարդու գրկի մեջ՝ իրեն բերդի մեջ պիտի զգա. տղամարդը կնկա սուննն է (սյունը), կնիկը էնոր վրա է, օրթե սուննը խախուտ, թուլլ ե-

ղավ, կնիկը կփլի, վար կընկնի. աչխատե ամուր, դիմացկուն սուն մնաս[1]*:*

— Կարո, էդիկ խելքիս պառկավ. տղամարդը կնկա այուննն է:

— Լավմ' դոդովեցի = հանդիմանեցի:

— Կարոն ինքնիրեն կխոսի. «Սանամի առաջ պզտիկ եղանք, չա՜տ պզտիկցանք: Սերը մարդու մկի ճագ կչինե, ափսոս տղամարդությանդ, Կարո»:

— Կարո, արի, երթանք ծիածանի տակովն անցնենք, կնիկ դառնանք, կնկա համն առնենք, կնկա աչքով աչխարհին նայենք կամ տղամարդու համն առնենք:

— Է՛հ, Հարութ, էնպես ծանր բաներ կըսես, օրթե ճեռք զարկնենք, տակը կմնանք:

— Աչխարքի տակն ու վրեն չիմացանք:

— Աչխարհը երազ է, կա ու չկա:

— Կարոն կըսեր — Ջինմաչին եղած ժամանակս, քարվանիս մեջ կար և այսինչ մարդը (մեկի անունը) էնիկ հիմի Կավկաս կնստի: Կրնաք հարցնել, իմանալ: Գյուղացոց:

— Կարո, կնկա համար ինչ անես, զատ չէ, աչխարք որ ծախես, կնկա տաս՝ զատ չէ:

262. <ԲԱԳՐԱՆ ԳԱԼՈՒՑ ԱՌԱՋ...>

— Բագրան գալուց առաջ սպասում էր Կայծակի գալուն Տիկոռից. Թաթոս վարժապետը և Ռես Հոսեն մնացին նրան ուղեկցելու կիրակի օրը Բագրան:

---

[1] Կարմիր մատիտով ինքնագրի վրա թեքությամբ հեղինակը դրել է. «Արտաչին»:

– Ուստան Բագրան գալով երեկոյան իսկ գնաց ենթա-կոմիտեին այցի, և պայմանավորվեցավ կիրակի օրվա ճա-չին: Իսկ Մարուքի հետ վաղուց քեֆին դավուլչի (դհոլ) Զուրաբ, զուռնչի Սրաբ ու Դավիթ (2 զուռնա) <ան-ընթ.>: Առավոտ տեսնում է Լորիկին:

– Շաբաթ օրը՝ դարձ-դարձ են անում Թորոյի իջևանի չուրջը, Ուստան երգեց –

«Ծիրանի ծառ ըլնեի, դուռդ բուսնեի
Ամեն քովես անցնելուս փեչիդ քսվեի,
Յան ջան, յար ջան,
Ծովերի մարջան»:

– Խումբը կան՝ Ուստա, Հարութ, Մացակ և ջաղացպան Գոգորը (Ուստա), այնպես որ սրախոսությունների մի մասը նրան վերագրել:

– Առավոտը, երբ առաջին անգամ մատուռ են բարձ-րանում, Հարութը զվարթ էր. տեսավ մի խենթի, ուժով քաշ էին տալիս դեպի սրբի դուռը. Հարութը մեջ ընկավ. «Թողե՛ք էդ տղին, էն ինձնից բախտավոր է...»: Խենթի տերերը ասին. «Մենք քեզ ճանաչում ենք, խելառի մեկն էլ դու ես, Աստված էլ քեզ դարձ տա...»: Ընկերները խնդրեցին:

– Երեկոյան, երբ չորս հոգով դարձան գիշերվա պտույտից Հարութի մոտ, մայրը սեղան սարքեց, ուրա-խանալով, որ Հարութին զվարճացնեն ընկերները: Ու-ղարկեցին զուռնաչիների հետևից, որ փողերով քեֆ ա-նեն:

Լավ խմեցին, պարեցին, երգեցին, գոռացին (մայրը քնեց). այստեղ էր էնքան խմեցին, որ քուրդն ու էշը ի-րարուց չէին կարող ջոկել, թե առջևները լինեին:

Մարուքը երգեց — Դու Ուստա ես ուստոց միջին...

Հարուքը — Կին կա տեղեն...

Հարուքը — Վրա երեխին երեխա բերեց...

Կարոն հարբած էր, ասում էր, տո, Հարուք, դու հայելու մեջ աղջիկ ես տեսել, խեռլել, ես Հրեղենը գիրկս ունիմ. տո Հարուք, գիտես, Աստված Սոնային իրեն լավ քեֆի ժամանակ է ստեղծել: Դու ինչի Աստծու հետ կռիվ կուզես, տղամարդ ես, սատանի փորը քամուն տուր:

— Մայակը — ես քեզ մեռնեմ, հոգիդ ուտեմ, ով է ոտքիդ տակ քար դրել, զարկ գլխին, տո, թե կրնաս տրեխ կարել, բիզը տամ քեզ — օ՛, ո՛ւհ, տաչի, տուչի: Եվ խենթ պարում էր:

— Գոգորը — Աստված վկա, մեծ խոսել չլինի, բան որ Ուստային գա, վարպետ կարոյի ու իմ վրա պրծած է, տո, խելառներ, կնիկ սիրելս է ուստուհյուն. էս տղա վաստակելն է — գլոխ՝ ուստուհյուն: Ուստա ջան, մեծ Ուստա, գիտես, աչքիս նայե, մուրթ տեղը աչքով չեմ անում, կնիկը բաղ է, վարդի բաղ է, մտի՛ր, քաղի՛ր, հոտն ա՛ռ, ծծիր. տղամարդ պիտի ըլնել:

— Հարուքը. Երկուսդ էլ ուստա եք, կրնաք պստիկ մասերը մենծ մասի վրա դնել...

— Դու ո՞վ, դու կապելու,— ասաց Ուստան,— ես մենակ կարող եմ մեծ Մասիսը պստիկի վրա դնեմ. ինչ ես մտածում:

— Դիր, Ուստա ջան, դնողն ես, վրան էլ հեծնողն ես, քարվանի պես քշողն ես, յա, տաչի, տուչի, ով որ չունի, սիրտը մաշի:

Կարոն Գոգորին էր ասում ցած ձայնով, բայց բոլորը լսում էին:

— Գոգոր. Նրա սիրտը իմ սրտիս մեջն է, իմ էլ նրա անոշ սրտի մեջն է, խոսք չի վերցնե:

– Հա, քավոր աղա,– ասաց Հարությը,– Սոնայիդ հետ քարվան պիտի քշես, էստուցեն մինչև Թավրիզ քանի օրվա ճամբա է, կարելի է մեկ սհաթի մեջ երթաս:

– Էստուց Թավրիզ 12 օրվա ճամբա է, ամեն ճամբու վրա 12 քարվանսարա կա, ամեն քարվանսարի գլխին գինի աղբուր կա, բոլորը վարդ, մեխակ, շուշան. յարիս հետ անմահական ջուրը խմենք, մեկ երես պաչեմ, մեկ վարդի հոտն առնեմ, մեկ գինին խմեմ, մեխակի հոտ քաշեմ:

– Դրանից էլ ճշմարիտ բան ի՞նչ կա,– ասաց Հարությը,– սուտ չխոսիս, հա՛, և այլն:

– Տո, չնչահավատ, քնի մեջ ապրող. քո ասածդ թե մի անգամ ճշմարիտ է, իմը հազար անգամ...

263. <ՄԱՍՏԱՐԵՑՈՒ ՍՊԱՆՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ...>

– Մաստարեցու սպանվելուց հետո – Երեկոյան քեֆին Հարությը գլուխն առել ափերի մեջ նստել էր՝ քար կտրած: Առավոտ կանուխ առանց մնաս բարև անելու Ուստին, կամ նույնիսկ առանց հայտնելու ճամբա է ընկնում տնեցոց հետ Տիկոռ:

– Ուստեն Սանամին առանձին տեսնում է մեկ – բաղը, մեկ էլ Գյումրիից հետո՝ Լորիկի մոտ. մեկ էլ Բագրան: Վերջին տեսակցություններից մեկի ժամանակ պարզում է իր ծրագիրը – Հայաստան գնալ. թե կմտնեմ երկիր ու մեկ գլուխ չիտակ՝ Ստամբոլ ու փափախիս փոշին սուլթանի թախթի վրա պիտի թափ տամ:

Սանամը Քիրս գնալուս ճամբին՝ [Ուստեն ձիով կամ] բաժանման տեղում՝ երբ խնամիները իրար մնաս բարև են ասում, Սանամը հարմար ժամանակ է գտնում և ասում է Ուստային՝ չիբուխիդ ծուխը վրաս արա՝ կարոտդ առնեմ:

Թորոն աչքի պոչով ամեն ինչ նկատում է և տանը հարսին մի լավ խրատում ու դնգստում նույնիսկ:

Հարության վերջին երազը՝ Կարոյի հետ աշխարք տեսնելու դնալը՝ կարճ ու հակիրճ դնել:

— Ուստի համար (անկման ժամանակ) գյուղում դաշնակցականները և մյուսները ծեծում են իրար... Այդ անպատճառ դնել, որ Ուստային մի քանի ժամանակ հեռացնելու հիմնավորումը տրամաբանական լինի:

264. <ԲԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԱՌԱՋ...>

— Բագրանի ուխտից անմիջապես առաջ կամ հետո Ուստան Կայծակին խնդրեց, որ Պլոյին հիշեցնեն իր խոստումը, պատրաստություններ տեսնի գնալու համար. եթե հարկ կա՝ ինքը կգա Ղարս իր ձեռքով հոգալու, բայց կուզե իմանալ երբ պատրաստ կլինի գնալը: Կայծակին նա մանրամասն չպատմեց իր ծրագիրը, միայն — գնալու միտքը. նույնպես չասեց, թե առայժմ ինչու է մնում, մի խոսքով Սանամի մասին չասաց:

— Բագրանի ուխտից հետո՝ երբ սերը վիժեց, և Օսկանի հետ կռվելով հեռացավ, [այդ ժամա...] նրա բացակայության միջոցին Կայծակը վրդովված գրում է տիրացու Հովակին, որ Ուստայի Հայաստան գնալը չի հաջողի, քանի որ նա ծիծաղելի, ցնդական պահանջներ է դրել, որ ինքը Կայծակը ուղղակի անպատված է, որ այդպիսի մարդուն դատավոր է նշանակել. խայտառակություն է ուղղակի: Այս նամակի բովանդակությունը հայտնի դարձավ գյուղում և ծայր տվեց բամբասանքների, հին ու նոր խոսքերի...

Կարոյին այս ամենը պատմեց Ռեսը, որ եկել էր Մրեն, Ուստային համոզելու, որ քիչ մնալուց հետո դես ու դեն,

սիրտը իջնի, նորեն վերադառնա Օսկանի տունը: Ուստան Կայծակի նամակի և նրա հետևանքի վրա՝ բամբասների, չա՜տ խոցվեց, և այդտեղ է, որ վճռեց մենակ Հայաստան գնալ, և գնաց գիշերով ու նահատակվեց: Մյուս օրը եկավ Հարությը իր մոտ տանելու: (Նախիջևանում բամբասանքները նկարել առաջվա գրածիս պես, ցույց տալու համար մարդկային դավաճան հոգեբանությունը):

265. ՄԱՍՏԱՐԵՑԻՆ

Հարությը նրա մասին մտածում էր.— Էլ արևը չի տեսնելու, էլ նրա համար աշխարհ, կնիկ, գործ, վեճ, կռիվ չկա. էլ հեչ բան չկա. նրա համա՞ր էլ գեղը ջուր կունենա թե չէ — մեկ է: Ամեն բան վերջացավ:

266. <ՀԱՐՈՒԹԸ Ս. ԳԵՈՐԳԻ...>

Հարությը Ս.Գեորգի մատուռից նայեց ներքև — գետի պես գնում էին մարդիկ և ծովի պես ծփում էին, անթիվ մարդիկ...

Հարությն ասաց ինքնիրեն.

— Ամեն մարդ մեկ գերեզման է. ուշ թե կանուխ...

267. ԲԱԳՐԱՆ

— Հայրենիքի հողի մեջ մի հավիտենական բոց կա, մի խորհուրդ... մի հոգի, որ ծնեցնում է միշտ մեր ծառերն ու ցորենը և մեզ:

Մենք մեր մայրերի և հայրերի չարունակական կյանքն ենք:

Երբ մաստաբեցին ընկավ և փափախը թռավ, Հարութն ասաց,— Ուստա, տեսա՞ր, Մասիսը փլավ, տապանը թռավ: Բայց երբ տեսավ ճակտի վերքը, գլխից բխում էր արյունը և մարմինը կծիկ դարձավ, դալարվեց, Հարութը սարսռեց ու ծաղրը մարեց:

— Հարութի հայացքը մի տխուր աշխարհ էր:

— Հարութը ամենին գեչ է ասում, կարոն գեչին լավ է ասում:

268. <ԲԱԳՐԱՆՈՒՄ: ՇՐՋԻԿԻ...>

— Բագրանում: Շրջիկի ընկերներից մեկը, կիսահարբած, ինտելիգենտ, ասաց քեֆին.— Արևից լույսը հասնում է մեզ 10 րոպեի մեջ, իսկ աստղեր կան, որոնց լույսը հասնում է մեզ 3 միլիոն տարվա մեջ... ի՞նչ է մեր երկրագունդը, փոշեհատիկ. մարդը, մարդկությունը՝ ոչնչություն, անիծ, լու... Իրեն մեծ բան է կարծում, ամբողջ մարդկությունը, որ այս րոպեիս մեռնի, ծառից ո՛չ մի տերև ախ չի քաշե, վար ընկնի... Ամեն բան մահ ունի, կարճ-երկար: Միևնույն բանն է. միլիոն տարին՝ մի տարի է... Տիեզերքը դարդակ բան է, մարդն էլ ոչ ու փուչ բան, էդպես է, պարոն Ուստա Կարո ջան...

Հարուքը լարված լսում էր և մտքում ասաց. «Էլ ինչ պարոն, էլ ինչ Ուստա Ջան»:

269. <ՀԱՐՈՒԹԸ ԼՍԵԼ ԷՐ...>

– Հարուքը լսել էր, և լսեց Բագրանում, որ Անգլիան, Գերմանիան, Ռուսիան թուրքերի բարեկամ են, հայ կոտորածների պատճառ եղողներ իրենց շահերի համար... և այլն, և այլն: Այդ հիման վրա նա Մրենում նզովելով աշխարքը չորս կողմից՝ հատկապես նզովում է Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, գետինն անցնեն, ջնջվեն.–

Եվ իսկապես հայ ժողովրդի արյունը և հայ հողերի կորուստը Անգլիայի փորն է (Շուշվա ջարդը), Գերմանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի... դրանք ոչնչացրին մեզ...

270. ԲԱԳՐԱՆՈՒՄ

Վարժապետը (Կարսից) փառաբանում է հեթանոսությունը, որ մեզ ուժ էր հաղորդում, կռվելու ոգի, ռազմականություն: Այն ժամանակ մեր հայրերը աչխարքին նայում էին իրատես աչքերով, կյանքը կռիվ է, պետք է կռվել ապրելու համար. բնությունն էլ կռիվ է: Բայց քրիստոնեությունը մեզ մեղկացրեց, ներքինացրեց, ստեղծեց ստրուկ հոգեբանորեն, քարոզեց սեր, եղբայրություն, խաղաղասիրություն, պատերազմը ատել, չարի չհակառակել... Եվ հավատացինք հրեա [Աստծուն] վախկոտ Աստծուն, դարձանք անկեղծ քրիստոնյա: Բայց ո՛չ քրիստոնյա Աստվածը մեզ փրկեց, ո՛չ քրիստոնյա ազգերը՝ սկսած Բյուզանդիայից մինչև ներկա Մեծ Բրիտա-

նիա: Որովհետև նրանք սուտ քրիստոնյաներ են, <անընթ.> չահախնդիր, ավազակ, ոճրագործ, թուլլերին լափող, ուժեղների առջև քծնող: Մեզ լափում են, որովհետև թուլլ ենք, կռվող չենք, թուրքերին քծնում են, որովհետև ուժեղ է, կռվող է:

Քրիստոնյա են եվրոպացիք. երբ Անգլիան հայկական ջարդերին ասաց՝ իմ նավերը չեն կարող Արարատ բարձրանալ, բայց Հնդկաստանի Հիմալայը բարձրացան 200,000,000 հնդիկի տիրելու, իսկ մի 10 միլիոն թուրքի առջև քծնում են: Գերմանիան քծնում է — երբ ասաց իմ փրկիչ գինվորը <անընթ.>...

Ռուսը՝ որ իրեն հաշվում է ամենաքրիստոնյա ազգը և հռչակում է իրեն՝ արևելյան քրիստոնյաների պաշտպան, թե՝ Հայաստանը ինձ պետք է առանց հայերի:

Ֆրանսիան — Թուրքը իմ մարդն է...

Պիտի կռվել, ուժով զարկել... երբ Եվրոպան տեսնի, որ մենք ուժ ունենք, կօգնի մեզ՝ իր շահերի համար. մեզ հաշվի կառնի իբրև ուժ, և կհենվի մեր վրա: Ինչ անենք թե քանակով քիչ ենք թուրքից, բայց որակով բարձր ենք: Ի՞նչ է թուրքը՝ տգետ, վախկոտ, հոտ... և այլն, և այլն:

Կեցցեն հեթանոս աստվածները — Արամազդ, Միհր, Վահագն:

Կորչի Եվրոպան և իր վախկոտ արքաները...

Կայծակը — Ճոռոմություններ, խոսքեր...

Իսկ ճարտարապետը — խմում է հայ գյուղացու կենացը, որի վրա է ծանրանում ազգությունը պահելու մեծ գործը, հողին կառչած, լեզու, ավանդություններ. և խմում է մեր մշակույթի կենացը... լեզվի: Գյուղացին է ստեղծել մշակույթը և կպահե: Մենք պիտի տանք նրան ներկա քաղաքակրթության նվաճումները և նրանից ստվորենք մշակույթը:

271. <ԲԱԳՐԱՆՈՒՄ ԿԱՐՈՅԻ ԵՎ ՀԱՐՈՒԹԻ ԵՐԱԶԸ>

Բագրանում Կարոյի և Հարութի երազը: Որ լավ հարբեցին՝ գնացին Ս. Թեոդոսի պատի տակ, ծառների (ծեղնի) տակ փռեցին յափնջին, [իրար գլխներին], կակուղ, փափուկ խոտեր գտան, բարձ չինեցին՝ գլխները դրին վրենները ու պառկեցին՝ [իրար փաթաթված՝ երես երեսի և խոսում էին... Ջավուշը նրանց մոտ նստած՝ արթուն հսկում էր՝ որ մարդ չմոտենա: Մխում էր և ասում ինքն իրեն. «Լավ մարդիկ են, <անընթ.> մեջ ու աշխարքի մեջ ամենեն լավ մարդիկն են. օրթե սրանք չէղնեին, ես հող ու մոխիր կէղնեի»:] Նրանք իրար գրկած պառկել էին. Հարութի երեսը [Կարոյի դեմ] կնայեր արևելք, Կարոյինը՝ արևմուտք. էդպես իրարուց անբաժան, փաթաթված՝ գնացին իրենց երեսի ուղղությամբ՝ Կարոն արևմուտք, Հարութը արևելք, Կարոն սուլթանի դեմ, Հարութը արևի դեմ-դեմով աշխարքը նորից տեսնելու (իմաստության դուռն և այլն). Կարոն գնաց, զորք կանչեց, մեծ դրոշակ գործեցին Գյումրվա ու Ղարսի սիրուն խորոտ աղջիկներհարսները, մի կարմիր դրոշակ, վրեն՝ արծիվ ու վիշապ, մյուս երեսը՝ վարդ. չինել տվեց <անընթ.> թոփեր, բերդեր <անընթ.> հետ: [Ջավուշն նաև] Ասկյար, քուրդ, թուրք քուլի կռիվ էին Կարոյի դեմ. Ջավուշը ասաց ժողովրդին, որ հեռու կենան, հայերը չեն ուզում բախտ, այլ իրավունք և արդարություն. համոզեց՝ գնացին ժողովուրդը <...>[1]

---

[1] Ինքնագիրն այստեղ ընդհատվում է:

272. <ԲԱԳՐԱՆՈՒՄ. ՄԹԱՆԸ...>

([– Հարբածը լավ է, աշխարհում պիտի հարբած էղնիս, որ լավ ապրիս, հոգիդ միշտ դրախտում, փերիների կաթ-մարմար կրքերի վրա] Աստված թե մի լավ բան է ստեղծեր՝ էդ գինին է:

– Դու որ կասես, թե էդման է, հո, խոսքդ կոտրելու չեմ, սատանի գործ է, չվկայեմ:)

– Շավաղը դիպավ:

– Ինչու ձեր ասած թոլուղները լիքն են ու իմոնք դարտարկ, յա հեքիաթ: (Կարոն)

– Աշխարքը թնջուկ է, գեչ, սրտմաշուկ կարկաչ, ո՞վ կրնա իստակել, բան հասկնալ, ասում է Հարուքը, օրթե մարդ խմե՝ քիչմ խելքը բանի կհասնի, օրթե մարդ լա՛վ, լավ երկնքի գինի խմե՝ կրնա աշխարքի տակն ու վրեն լավ հասկնալ:

[– (Հարուքը երբ գյուղն էր գնում, յա աղն էր պակաս լինում, յա արաղը. չաղցում ուներ մաղ... գարուն-ձմեռ չաղացում:)]

– Գյումրեցոց կանանց անուննները. Մայրաքաղաք:

[– Խելառ Հարուք, կատղած Հարուք, լոքի Հարուք, դիվոտ: Այդպես էին ասում գյուղացիք իրեն:]

– Մասիսի մասին ստեր:

Բագրանում, մթանը. – Կարոն տեսնում է մի կույր աշղ գնում է.

– Տո, խեղճ տղա. էս մթանը ինչպես <ես> գնում, մենք սաղ աչքերով չենք կրնա գնալ:

– Գլխիդ մեռնեմ, ալա ինձի համար գիշեր-ցերեկ մութն է...

— Տո, ի՛նչ խայտառակ բան է, որ մարդ ցերեկն էլ բան չտեսնի. լեղիս կպատռի, որ միշտ մթան մեջ էղնիմ,— դիմեց Հարուքիին Կարոն:

— Կարո, ինձի համար մեկ է. օրթե միշտ ի չքի էղնի խմեմ, արևի լուսը պետք չէ. ես միշտ հարբած վախտս աչքերս կծածկեմ ու սրտիս մեջ կնայիմ. էնտեղ էն հրեղեն աղջիկը կա. ետև ինձի հեքիաթ կպատմեմ, էն լավ հեքիաթթս. լուս թե մուքի ինձի մեկ է. դու ասա՛, արաղի լուսը չկտրի մեր գլխից. օրթե արաղ կա, արև չէղնի էլ, լավ կէղնի:

— Հարուքի, գինին ինձի քոռացնում է, օրթե շատ եմ խմում...

— Լավն էն է. էդոր քոռացնելը անուշ կէղնի, Աստծու ձեռքից քոռանալն է զուլում[1]:

— Ամեն ճամբա գնացողներուն բարի դարձ, ամեն նեղ/հիվանդներուն բարի բարձ:

(— Հարուքի, շատ խելոք տղա ես, հմա որ Աստծու մասին գեչ բերան ես բանում, աչքես ընկնում ես... ա՛յ խոսիր սուլթանի և ուրիչ գեչ արընքտեր մարդոց մասին...)

— Մի փոր հացը մի հոր հաց է գտել կամ կորցրել:

(— Ուստա, ասում է Հարուքիը, Հայաստան գնալս որն է. մեռնելու ի՛նչ տեղիք ունիմ. գուր տեղը անցավ գլուխս տանեմ, դնեմ ավետարանի տակ. [թող հացն ու

---

[1] Ինքնագրի վրա կարմիր մատիտով հեղինակը թեքուքյամբ գրել է. *«Տիկոռ»:*

արաղն էղնին] ինձի համար համ Հայաստան է, համ Գյուլստան:

[— Շան սատկելիքը որ գա, կերթա ճամբու վրա կպառկի:

Խոզի գլուխը խալուն չի մնա, ցեխ կուզե, որ թաթլտվի...] Հարսների ծոցից դուրս էլ ի՞նչ գահ կուզես, խելքի ծով կարո՛...

= Հարուրթ, ճանճ եղիր, պատին կպիր:

= Քյաֆթառ սուլթանի բերնից մեռելի հոտ է գալիս՝ էլի հայերին կոտորելուց ձեռք չի վերցնում, էդ չունը ա՛խր հոգի չունի, որ վրեն մտածե:)

273. ՈՒՍՏԱՆ ԲԱԳՐԱՆՈՒՄ ՍՈՆԱՅԻՆ ՏԵՍՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

— Ուստան Բագրանում Սոնային տեսնելուց հետո՝ լավ քնի արեց, խենթ ու խելառ, հետո մաստարեցին զարկվեցավ. Հարուրթը տխրեց, ինքն էլ: Մենակ դնաց մի խանութ. մի աշուղ. սա երգեց, Ուստան գլուխը ափերի մեջ լսում էր նրան... զգաց աշխարհի ունայնությունը, ուրախության ռեակսիոնը եկավ, սիրտը սազի հետ լալիս էր, պատռում էր, դողում էր, մաս-մաս հատնում, քրքրում, Սոնան գալիս էր հրապույրներով և գնում, անմատչելի դառնում, տանջող, մորթող զգացում: Կնոջ զարհուրելի ուժն զգաց, սեռի տիրական-բռնակալությունը, միտքն եկավ Հայաստանը, կռիվ, մահ... անորոշ ապագա, վտանգավոր, ազգի դառն վիճակ, ցավ ու արյուն, տանջանք իր սրտում և սրտից դուրս լցված աշխարհը, աշխարհն աշխարհ տարածված...

Մեռնել էր ուզում, ինքնասպանություն, ջնջվել, վերջանալ...

Դատարկ բան է երջանկությունը, և չկա նա, կա, բայց իրենը չէ... մա՛հ... Սոնան էլ պիտի մեռնի... [Սոնան իրենը չէ...] Այս աշխարհը գեչ մարդկանց համար է, անգգա, անսիրտ մարդկանց համար:

274. <ՈՒՍՏԱՆ ԵՐԲ ՍՈՆԱՅԻՆ ՏԵՍԱՎ...>

– Ուստան երբ Սոնային տեսավ.

Մի պահ ապուշ կտրեց, խոսքերը փսոր դարձան բերնի մեջ, աչքերը հիմարի պես մեծ-մեծ բացեց, բայց մի պահ. և Սոնան չնկատեց, նա գլուխը կախ էր ձգել. սկեսուրը նկատել էր նրանց աչքերի վտանգավոր առուտուրը, իրար սևեռումը. և սաստող հայացք էր ձգել հարսի վրա:

(Սերը ապուշ է դարձնում):

Ամբողջ նշանդրեքի ընթացքին ապշությունը չանցավ Ուստի վրայից, բայց Ուստան անհնարին ճիգ էր գործ դնում իրեն վառ ու աչխույժ, զգաստ դարձնել, և հաջողեց: Երբ Սոնան եկավ և նստեց հեռու, հանդեպը, բոլորովին գտավ իրեն և դարձավ հին Ուստան՝ ավելի, կրկնապատկված:

– Թորոն ասել էր Կարոյի մասին Օսկանին, որը ստիպված եղավ կրկնել Ուստային, որ սա ձեռք քաշե հարսից. Օսկանը առաջ դժկամ եղավ ասելու, բայց Կարոյի ստիպմունքի վրա ասաց – թե՝ Թորոն կըսե թե՝ ես հարսիս չեմ կորցնե, Ուստան ինչ ունի որ՝ մեկ չագուչ և [քարվանի Աստված գիտե որ քո ինչդ] չունեցած քարվանի հեքիաթները. Մինա աղան... տուն ունի, [խանութ ունի], բամբկի արտ, բաղ, հող, փող, իսկական քարվան ունի՝ աղ կրելու: Ես հարսիս արուևքը չեմ մտնի, թող երթա բախտավորվի... իմ զավակս է...

275. ԲԱԳՐԱՆ

[– Լավ մարդու կենացը, ով էլ որ ըլնի, ուր էլ որ ըլնի:]

– Լավ մարդու հերն անիծած, փիս հա փիս ու փիս: (Հարութ):

– Բախտը առաջ ժպտում էր, հիմա ծիծաղում է վրաս:

[– Զուռնաչին զուռնան վեր էր բռնում, վար էր բռնում, դեպի գետին փչում, կամ ուղղակի առանց ձեռքերով բռնելու վեր էր փչում:]

276. <ԼՈՒՆ ԻՐ ԼՎՈՒԹՅՈՒՆԸ...>

– Լուն իր լվուԹյունը պիտի անե, պիտի խածե:

– Մարդ իրենից մեծի հետ պիտի կռվի, որ մեծանա, բանձրնա. իրենից պզտիկի հետ կռվողը ինքը կպզտիկնա:

Լաչիմնանա: Ուստեն պարի գլուխ, աջ ձեռքը կարմիր ախլուղը, ձախ ձեռքը Սանամին. Սանամի մյուս ձեռքն էլ Լորիկը (Բագրանում է՝ կիրակի օրը՝ ՀարուԹին քնցնելուց հետո):

Լաչիմնանա, լաչիմնանա,
Լաչիմ սարեն գլդոլ-մլդոլ.
Լաչիմնանա, լաչիմնանա...
Թուշդ պաչեմ, մարդ չիմանա,
Լաչիմնանա:
Լորիկին առ, գոմը գնա՛,

Էնպես էրա՛, մարդ չտեսնի, լաչիմնանա,
Ես էլ կուգամ՝ մարդը չիմանա, լաչիմնանա...
Ծիծերդ ուտեմ, լաչիմնանա,
Մարդ չտեսնի, մարդ չիմանա,
Ձինը տակդ, քարը վրեն...
Լաչիմնանա, լաչիմնանա:

Գոմում. խոսեցին, համբուրվեցին. մութն էր, թե ինչ ա-րավ Ուստեն, ինչ չարավ, մութն էր, լուս չէր, մարդ չտե-սավ, մարդ չիմացավ... (Ուստեն դուրս գալուս. «Էս էսման. դժարը ու մեծ բանը Հայաստանն է...»: Ինքնիրեն:)

Սանամը դուրս գալուս (Լորիկը հսկում էր դուռը) – Աղջի, կարմրել ես՝ վարդ ես դառել, հյուսերդ իրար են խառնվել, չիտկե, կրծկալդ էլ՝ շամամներդ մանտրիկ կերևա, քյամարդ ծռվել է. արի լուսուն լավ մը նայեմ, որ ետև մարդ բան չտեսնի, բան չիմանա, բանբասանքի բան չունենա:

Համայակ աղի մոտ. Ուստեն թազբեհ քաշելով՝ մուշտու-կը ատամների տակ սեղմած՝ ծուխը բարակ հանելով ետ ու առաջ էր գնում աղի կալերում ու մտախոհ էր սաս-տիկ. Ջավուշը օրորվելով մոտեցավ Ուստին.

– Ի՞նչ կմտքես, Ուստա, հերիք մեկ չեղավ. դու էլ մաշվար, մեզ էլ մաշեցիր, խղճի արի, ես մեղք եմ...

– Ջավուշ ջան, աչքիս լուսը, չէ՛ էնպես, բան չկա, միտք եմ անում աշխարքի բանը. թե փուչ է ամեն բան՝ Հարութի ասածի պես, թե փուչ աշխարքին աշե ու ախ քաշե... մի չարք աֆորիզմներ, ու էսպես հազար ու մեկ մտքեր:

Ջավուշը լսելիք դարձած ուշի-ուշով լսում էր ու զարմանում Ուստի իմաստությյան մասին — <անընթ.>

277. <ԲԱԳՐԱՆ. ԿԻՐԱԿԻ...>

— Բագրան. կլորակի ուշ գիշերը քնելուս՝ հարբած՝ Ուստեն մոմոուս էր — Երբ պիտի ազգը ազատեմ, Սանամիս գրկիս քուն մտնենք, մեկ ձեռքս գլխի տեկը, մեկելը թուրս բուռը բռնած, Արաբստանի ձիս էլ ոտքիցս կապած...

[Բագրանում Ուստի դաստեն՝ դյուդյուկներով (դուդուկ) կշրջեին ու բարակ, մեղմ կերգեին (Ուստեն թաշկինակը ձգած ուսերին) — կանցնեին կդառնային Թորոյենց բոլորքը. (Թորոն ծուռ-ծուռ կնայեր) —]

Ծիրնի ծառ էղնեի ճամբիդ բուսնեի,
Էնքան չմեռնեի, մեկ էլ տեսնեի:
Երկինքը ամպել է, գետինը թաց է,
Նազանըս կայնել է, աչքերը լաց է:
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, Նազան ջան:
Ինձի տարեք յարիս դռնեն անցուցեք,
Ա՛խ, վերքերս բացեք, յարիս ցուցեք:

Ջանազան խմբերգեր (տղա-աղջիկ), պարերգեր —

Յար ջան, էդ ի՛նչ համ ունես,
Աբրեշումե (քառսուն հուսի) ծամ ունես

Խունջիկ-մունջիկ գալում ես,
Ինձ առնելու կամ ունես:

278. <ԱՅՆՔԱՆ ԷՐ ԾԱՂԿԱԾ...>

– Այնքան էր ծաղկած ու չեն այն երկիրը, որ բլբուլը մի պտղատու ծառից մյուսը ոստոստելով ամիսներ կթռչեր և ոտքը գետին չէր առնի: Նշանդրեք:

– Աստված-Աստված էր անում, որ այս բանը գլուխ չգա:

– Ասելդ ի՞նչ է:

– Ջոռով էլ պսակվել կլինի:

– Ես եմ, որ կամ:

– Հազար ուզենամ՝ չի լինի. հազար կանչես, չի լսի:

– Ուրի՞շ, ի՞նչ կա, ինչ չկա:

– Ոչի՛նչ, ժամանակ եմ սպանում:

= Իսկ ինձ ժամանակն է սպանում:

– Սերը դարձավ իր մյուս ծայրին – ատելությանը:

– Մտապատկերել = պատկերացնել. մտապատկերեց այն տեսարանը:

– Քեզ հետ մի օր ապրելը կարևազարդե իմ ամբողջ կյանքը մինչև մահ:

– Նա փայլեցրեց ազգի անունը:

– Լիություն սեղանոյս այսմիկ անպակաս լինիցի (քահանան Ուստա Կարոյի մեջ, ճաշի վերջը, օրհնենք):

ԲԱԳԱՐԱՆ. «Երվանդ փոխադրեց ուրիշ չաստվածների հետ և Անահիտի ոսկե արձանը ի Բագարան, իբրև լատինաց Պանթեոն մի ընելով այս ավանը:

Հայր Արամազդ, հզոր և ամենազոր, արարիչ երկնի և երկրի և հայր դիցն ամենայնի:

Արին Արամազդ, որ տալիս էր «լիուբիւն պարարտութեան»:

Լիացուցիչն Արամազդ:

Արամազդի որդին էր՝ Միհր, իսկ աղջիկները՝ Անահիտ և Նանե: Արամազդի տոնն էր Նավասարդին՝ Ամանորին:

Արամազդի տաճարը, մեհյանը, կոչվում էր «Տուն Արամազդա»:

Անահիտ դիցուհի:

Ոսկեմայրն Անահիտ, Տիկինն Հայոց. «Փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, մայր ամենայն գգաստութեանց, բարեբար ամենայն մարդկան բնութեան, մեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց»»:

279. <ԱՖՍՈՆ ԲՌՆՈՂ...>

– Աֆսոն բռնող օձ չէ = չի խաբվի, ենթարկվի:

– Մտքի տուն ընկած՝ նստել էր. մտքի ծուվն ընկած:

– Հոգիս տուն տվեց՝ թե պիտի գաս:

– Մատս հո՞տ եմ արել, թե պիտի գայիր...

– Բագրան՝ Ուստեն դառնում ասում է՝ հավքերին – բաղը: Կանչեցե՛ք, հավքեր, Ուստա Կարոյի պես կռնակ ունեք:

– Խելքը գլուխն եկավ... վրա հասո՞ւ ես, քեզ հետ եմ:

– Ինձի որ լսես, ոտքդ քարի չի գա:

– Սիրտս տալիս է, քեզի գրկեմ ու պաչեմ:

Այնպես գրել, որ բոլորովին մութ մնա Ուստա Կարոյի հարաբերությունների ինչ տեսակի լինելը սանամոր-

ների հետ. երբեք չհասկացվի, և միշտ կասկածի մեջ մնա՝ թե Ուստեն նրանց հետ լուրջ կապերի մեջ էր, թե՞ ոչ: Այդպես և գռեհիկ չի լինի Ուստի տիպը, և վեպը գռեհիկ չի լինի: Հետևապես Հարութի հետ խոսած այն տեղերը, թե բոզությունը լավ բան է, չոռաչքի դժոխքից դրախտ գնալը և այլ ցինիկ խոսքեր ու տեղեր՝ բաց թողնել:

– Հարութը, որ իր լավ աշխարքի հեքիաթ, իր ստեղծած աշխարքի հեքիաթն է պատմում՝ թե ես օրթե Աստված լինեի... Հետո հարցնում է Կարոյին թե՝ տես ի՞նչ լավ աշխարք է, էսպես աշխարք կուզեմ ստեղծել, դու կրնա՞ս էսպեսը ստեղծել:

– Ջէ, Հարութ ջան, արևդ վկա, ինձի որ կհարցնես՝ Հայաստան ազատելը էդպես աշխարք ստեղծելուց լավ է. ի՛նչ աշխարք է, որ՝ մարդ միշտ հարբած, աղջկա գրկում ապրի՝ չէ, իսկի լավ աշխարք էլ չէ. մարդ պիտի մեծ գործեր կատարե, կռվի, հաղթե, զարկե, զարկվի: Քո աշխարհի բնակիչները [հարբած ճանճերի] միկիտանի հարբած ճանճերի պես պատեպատ պիտի զարկվին ու չիմանան, թե ի՛նչ անեն, իրենք ով են, ի՞նչ են. էդպես աշխարքում ես չէի կրնա ապրի, պարապուրթյունից միշտ պիտի քնեի, թե չէ նեղուրթյունից սիրտս կպատռեր:

[Սանամը Բագրան Ուստի առաջը Ուզունդարա կամ մի ուրիշ պար կխաղա – քեֆի ժամանակ. սոլո պար... բոլորը ներկա են՝ Թորոն և այլն...]

– Սանամը ամեն անգամ՝ թե բաղում, թե Բագրան, թե գոմից դուրս գալուս միշտ փոքրիկ, կլոր հայելիով, որ ծոցը կպահեր, չարունակ հանում էր ու ուղղում մազերը,

և այլն... Այդտեղ է, որ Ուստեն ասում է ինքնիրեն, թե «Հարսն ու Հայելին» և այլն:

Սանամից դուրս բերել սիրուն, կոկետ կնկա տիպը:

280. ՈՒՍՏԱ ԿԱՐՈ. 10 ՀՈՒՆՎԱՐԻ 1922

— Նշանդրեքից վերադարձին, ուրախություն են անում, սակայն այս նկարելու չէ, այլ Հարևանցի կերպով անցնել, ասելով, որ երևկոյան բարեկամները, դրացիները հավաքվեցին աչքի լուսի, կերան խմեցին: Մյուս օրը նա Զավուշին հայտնում է իր սիրահարված լինելու պարագան, դյուղի կալերը երթալով՝ դյուղից հեռու, [(ծիծաղելի է)] խոստովանելու համար մենակության մեջ, լռության մեջ: Ապա մյուս օրը առավոտ վաղը մեկնում է Քիրս և Սանամին տեսնում առաջին անգամ. այցելում է Մեսրոպին, և մյուս օրը վերադառնում է Նախճվան Զավուշին, որ անհամբեր սպասում էր վերադարձին, ասելու իր հաջողությունը:

Այդ օրերը դյուղումն էր կայծակը. եկավ և Թորոն, որ Տիկոռ դործ ուներ. հյուր եղավ Օսկանի տանը. ի պատիվ խնամուն կերուխում սարքեցին, որ ներկա էր և կայծակը: Այդ պիշեր է կատարվում «աչքալուսանքի» տեսարանը: Ուստան կալում է, մտորում է, երազում է Հայաստան գնալ, բայց մի բան է ընկնում Սանամը. որոշում է ամուսնանալ, ժառանգ թողնել, ապա գնալ: (Այդ իմաստով ինքը և Զավուշը առաջարկում են, որ Օսկանը գնա խնամախոս, որովհետև իրանք վռազ են: Օսկանը պատճառաբանում է, թե հիմա անհարմար է, Արտաշին պսակեն՝ հետո. Կարոն համաձայնվում է):

— Բագրանի ուխտին Թորոն Օսկանին ասում է թե, ականջիս դիպել է, թե Կարոն մեր Հարսի վրա աչք է քցել.

քեզի ասեմ, որ հարսիս մազն էլ էնոր չեմ տա. թող մտքեն հանե. ո՞վ գիտե ի՞նչ թոկե փախածն է, ոչ ունն է հայտնի, ոչ բուլը. իրան ասա, որ հեռու ման գա. տունս բարեկամ կմտնի, թշնամի դուրս կգա. հացիս խոռ կնայե. Օսկան, թե դու մեր տան պատիվը կպահես, հասկացրու էնոր որ խելքեն քշա անե. հարսի անունը չկոտրե. կողբեցի աշխարքի տեր հարուստը կուզե հարսիս:

Օսկանը հայտնում է դժվարավ. Կարոն կատաղում է, ասում է, որ հարսի սիրտը հետս է. Թորոն զոռ կբանեցնե. ես էս է կերթամ հարսին կտեսնեմ, ու կամք կառնեմ փախցնեմ: Գնում է Քիրս. Սանամը չի ուզում Ուստային տեսնել. հուսահատված, ձեռնունայն դառնում է, և սկսում է պատրաստվել Հայաստան գնալու:

– Ջմռռնամ ասել, որ «աչքալուս» կերուխումից հետո, Կարոն նորից գնում է Քիրս, հանդիպում է չհաս պսակող տերտերին, ապա գնում է հովիվների մոտ: Սանամին տեսնելը չի նկարագրվում, այլ մի քանի խոսքով ասում է հեղինակը:

– Եվ: Եվ ինքը յափունջին առած թռնում է դուրս. մի վայրկյան բոլորը քարացած են լինում, ապա անդրադառնում են. Օսկանը վազում է հետևից.– Ուստա ջան, ախբերս, հիմի չէ, ո՞ւր, ո՞ւր, խոսք էր՝ ըսինք:

Ջավուշը արդեն հասել էր նրան, բայց Ուստան ասում է, գնա էշս, չոնգուռս առ արի. ես Բագրանի ճամբու վրա եմ.– թե որ Օսկանն ու մեկելները գան՝ կգյուղեմ, Աստված է վկա: (Աչնան երեկո էր. մութը. մոտ ժամը 8):

Ջավուշը դառնում է և ասում Կարոյի խոսքը: Նրանք անհարմար են գտնում գնալ համոզել. ամաչում են, ու վախենում, մտածելով, որ մի-երկու օր հետո, երբ բարկությունը իջնի, միջնորդ կղրկեն մոտը. և խորհուրդ են տալիս Ջավուշին, որ չգնան Բագրան, հեռու է, այլ Հա-

մո աղի գեղը: Ջավուշը իշով, հացով, արաղով հետևում է նրան: Գիշերը դուրսը բարակ անձրև. չի ուզում գնալ Համո աղի մոտ. լուսադեմին՝ Մրեն: Տացուն մարդիկ է ղրկում դես ու դեն իմանալու թե՝ ո՞ւր է. (Համո, Հարութ, Բագրան). տեղեկանում են. Մրեն մի քանի օր հետո. ուղարկում են Ռեսին, որ ետ դառնա. Տացուն կսկծուց հիվանդացել է. Օսկաններց տունը լաց է. (Ջավուշը Բագրանից արաղ առնելուս լսել է, որ Սանամը նշանվել է, կամ արդեն Նախջևան լսեցին, վերադարձին Ղարսից): Մինչ այդ՝ Ռեսի գալը՝ Կարոն ասում է իր մտքերը: Ուստան չի համաձայնում, ասում է, որ ինքը մենակ Հայաստան պիտի երթա, ժողովուրդը գլխին հավաքե, և կռվի կամ կմեռնի, կամ իր նպատակին կհասնի: Սրտի չուշեն կոտրվել է, էլ հետ չի դառնա, թե որ ուզենա տուն-տեղ, կերթա իր հին ման եկած տեղերը, էլ չի ուզե Նախճվանի երեսը տեսնել. Ջավուշն էլ նույն կարծիքին է, այսինքն գնալ ուրիշ երկրներ, բայց ոչ – Հայաստան: Մի-երկու օր մնում է Ռեսը. այդ գիշեր Ուստան Հայաստան է գնում, թողնելով Ռեսին և Ջավուշին քնած:

Առավոտ գալիս է Հարութը Ուստային իր մոտ տանելու: Բերդի գլուխը և վերջ:

Երազը՝ Ուստա Կարոյի վեպը՝ ցնդվեց:

281. <ԲԱԳՐԱՆ...>

<...>[1] նոցի տեսակի մարդ: Թուրքերի կարծիքով՝ կինը մուռտառ է. նրան մոտենալուց հետո՝ պետք է լվացվել՝

[1] Սկիզբը պակաս է:

մաքրվելու համար: Քահանան պատարագի պատրաստվելուս հեռու պիտի մնա կնոջից՝ պատարագը չպղծելու համար... Սուրբ օրերում կնոջից հեռու պիտի լինեն մարդիկ...

Եվ այլ այսպիսի կարծիքներ ժողովուրդների մեջ:

Հագուստը կեղևն է, կաճը. կպչի՛ր, որ պտուղը վայելես...

– Ուստեն ասում է, որ ղազախները ծնած օրվանեն ղազախ են:

Շան լափ թափեց գլխին:

Լակեց, գնաց:

Ջինվորի անուններ – Առյուծ, Զարզանդ, Վրեժ, Սարսափ, Դև, Գայլ-Մոսե և այլն:

– Լեզվակոխ անել:

– Բագրան. ուրիշ գեղացիք, որոնք Ուստին չէին տեսել և համբավը լսել էին, հարցնում էին իրար – Ո՞ւր է էդ մարդը. մեկ տեսնենք, էլ բան չենք ուզե:

Տեսնում են և ասում իրար.

– Տո, մեզի պես մարդ է եղել. ոտք-ձեռք. փափախ կդնե, կխնդա, պապիլոս կքաշե...

282. <ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂ՝ ԲԱԳՐԱՆՈՒՄ...>

– Մի քանի տեղ՝ Բագրանում, ժողովուրդը ասում է, Ուստա Կարոն էս մարդն է, առջևից երթցողն է, էն շախով մարդը:

– Ճամբա բացեք, համեցեք, Ուստա:

283. <ՍՈՒՐԲ ՂԱՐԱԼԱՄՊՈՍ...>

— Սուրբ Ղարալամպոս...

— Էդ աղջիկը հոր ծերուԹյան գոնտիկը պտի ըլնի (չէ՞ որ տղանարը հորը գավազանն են):

— Բագրան: Երբ Ուստան տեսավ ա՛յնքան շա՛տ բազմուԹյուն, ասաց ՀարուԹին.

— Տո, էս ի՛նչ քան մարդ կա, որ իսկի անունն էլ չենք [տեսե] գիտե, երեսն էլ չենք տեսե:

Պատասխան: Էնոնք էլ մեր անունը չեն տեսե, ու չիտեն Թե Ուստա կարո գոյուԹյուն ունի:

Ուստան ԹեԹև ախրեց. հավատացողը, Թե աշխարհ իրեն ճանաչում է:

— Դժվարը փող ուննենալն է, դրանից հետո ամեն բան կդյուրանա: Կամ դյուրանում է:

= Կարծեմ, ես ծերացա:

284. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Երբ Ուստան գնում էր Բագրան, ճանապարհին նրանց միացան ագրակցիք, որոնց մեջ էր և ճարտարապետը:

Երբ Մասիսի առաջ գլուխ բացին, հարցրեց, իմացավ, իհարկե ինքն էլ էր բացել՝ հետևելով դեղացոց:

Հուզվեց, հիացավ և ասաց.

— Ես չգիտեի, ես չգիտեի, և մտքի մեջ, բայց մենք ի՞նչ գիտենք, ինտելիգենտներս, ի՛նչ վեհ ավանդուԹյուն է: Հայ ժողովուրդը գլուխ է խոնարհում Արարատի առաջ. նա իր սրբուԹյունն է, որովհետև Արարատ կնշանակե Հայաստան, հայուԹյուն:

Արարատը հսկա մագնիսի պես ձգում է հայությանը իր չուրջը և պահում, պահպանում նրան: Այդ մագնիսից հեռու հայերը կորած են: Սրբազան, հավերժական Արարատ, հայության խորհրդանշան: Այն հայը, որ մի անգամ հայացք է ձգել էս վեհափառ ճակատին, ուր էլ որ լինի, միշտ հայ կմնա: Արարատը հավիտենապես հայ ինքնության տարրը, անհատականությունը կպահպանե. այո՛, միայն նա բավ է, <որ> մեր ժողովուրդը միշտ հայ մնա...

285. ՈՒՍՏԱՆ ԳՈՄՈՒՄ

Գրկել էր Սանամին. և այն զգայությունն ուներ, թե իրենից և Սանամից բացի էլ ոչ ոք չկա ամբողջ աշխարհում:

Ուստան իր անհագ աչքերը սերով և կրքով պտտցնում էր Սանամի մարմնի վրայով, բոլոր կետերով: Աչքերով չոշափում էր, զգում, ուտում նրա բովանդակ մարմինը:

286. ՈՒՍՏԱՆ ԵՎ ՍԱՆԱՄԸ

Երբ Ուստան գոմն էր, և Սանամը գրկում, գոմը նրան թվաց մի ուրիշ աշխարհ, սովորական աշխարհից չա՛տ տարբեր, գերբնական, չքնաղ, կախարդական աշխարհ, ուր նա հազվագյուտ բախտի բերումով ընկել է:

Սանամը գրկումն էր. Ուստան աչքերը փակել էր, երբ բացեց, նայեց՝ գոմը չկար, տեղը մի ուրիշ աշխարհ էր, պալատ, ոսկե սներ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆԱԼԸ

Երբ վճռեց Հայաստան գնալ, արդեն իրողություն էր համարում գնալը, և հոգով ու մտքերով այնտեղ էր, մտքերով և երազներով:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՍՏԱ ԿԱՐՈ ԵՎ ՕՐԹԵ ՀԱՐՈՒԹ

<ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԱՆԻՈՒՄ>

ԱՆԻ ԳՆԱԼԸ. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Իսահակյանը Անիին առնչվող գրառումները խմբավորել է «Անի գնալը. ճանապարհին» և «Անի» վերտառությամբ թղթապանակներում: Թղթապանակների համարներն են՝ 31 և 32 (ԳԱԹ, ԻՖ, 326-II): Ինքնագրերը գրված են տարբեր չափերի առանձին թերթիկների վրա և աշակերտական տետրերում, սև կամ կապույտ մելանով, սև մատիտով: Անիին առնչվող գրառումներ կան նաև թեմատիկ այլ խմբավորումներում:

1. ԱՆԻ ԳՆԱԼԻՍ

(Էջ 21)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 1:

Էջ 21, տ. 8. ***Որ ոչն աչխատէ, կերիցէ և մի՛*** — Համմտ. «Թէ որ ոչն կամիցի գործել՝ եւ կերիցէ մի» (Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ թուղթ, Գ 10):

Տպագրվում է առաջին անգամ:

2. ՀԱՑԱՍՏԱՆ

(Էջ 21)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 2:

Տպագրվում է առաջին անգամ:

3. ԱՆԻ

(Էջ 21-22)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իմ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 3:

Տպագրվում է առաջին անգամ:

4. ՃԱՌԵՐ

(Էջ 22)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իմ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 4:

Տպագրվում է առաջին անգամ:

5. <ԵՐԲԵՔ ԽՈՐՈՒՆԿ ՄԻ ՔՆԻՐ...>

(Էջ 22)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իմ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 5:

Տպագրվում է առաջին անգամ:

6. ԱՆԻ

(Էջ 22-23)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իմ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 6:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 22, տ. 23. - էջ 23, տ. 2. ***Ուստան և մյուսները հիշում են ... սպանեին էդ գազանները*** – Տե՛ս Խաչատուր Աբովեան, Վէրք Հայաս-

տանի, բնագիրը հրատարակութեան պատրաստեց և առաջաբանը գրեց Գուրգէն Գասպարյանը, Եր., 2021, Գլուխ երրորդ, էջ 204–283:

7. <ԽԵԼԱ ԽԵԼԱԻ ՏԱՆԱ...>
(Էջ 23)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 7: Գրված է ծոցատետրից պոկված թերթիկի վրա, հեղինակային համարակալմամբ՝ 4: Կարմիր մատիտով ինքնագրի վրա հեղինակը գրել է. «Անի»:

Տպագրվում է առաջին անգամ:

8. <ԹՑՈՒՐԸ ԿՈՏՈՐՈՒՄ Է...>
(Էջ 23–24)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 8:

Տպագրվում է առաջին անգամ:

9. <ՋԵՎՈՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՆԵՑ...>
(Էջ 24–25)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 9:

Տպագրվում է առաջին անգամ:

10. ԹՑՈՒՐԸ
(Էջ 25)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 10:

Տպագրվում է առաջին անգամ:

11. ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑ

(էջ 25-26)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 11:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 25, տ. 20. ***Լևոն Շանթ*** (***Սեդրոսյան***, 1869-1951) – հայ գրող, պետական-հասարակական գործիչ:

12. <ԱՆԻ ԳՆԱԼՈՒՍ...>

(էջ 26)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «Անի գնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 12:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 26, տ. 7. ***մի քաղաք կա, ոսկի քաղաք*** – «Ոսկի քաղաք» թեմայով ավանդապրույցը Իսահակյանը մշակել և հրատարակել է Կ.Պոլսի «Բյութանիա» օրաթերթում (1913, թիվ 23, էջ 7. ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 504-II): Այս ընագիրը Իսահակյանը մտադիր էր պետեղել «Ուստա Կարո» վեպում՝ որպես հեղինակային շեղում: Վեպի հատվածական ընագրերում Ուստա Կարոն մի քանի անգամ հիշատակում է այս ավանդապրույցը, իսկ «Ուստա Կարոյի ղրույց-հեքիաթները» ծրագրային դրառման մեջ նշում է. «Անի գնալուս. Ոսկի քաղաքը» (տե՛ս ԳԱԹ, ԻՓ, 396-II, թերթ 7): Տե՛ս նաև **Ավետիք Իսահակյան**, եԺ 14 հատորով, հտ. 5, Եր., 2014, էջ 162-164, 705, 930:

Էջ 26, տ. 13. «**Հայաստան առանց հայերի**» արտահայտությունը չրջանառության մեջ է դրել Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Լոբանով-Ռոստովսկին Օսմանյան Թուրքիայում 1895-1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ:

13. ՈՍԿԻ ՔԱՂԱՔԸ

(Էջ 26-27)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 429-II, թերթ 7:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 27, տ. 9. ***Պղնձե քաղաք*** *– տե՛ս* Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք, Կ. Պոլիս, 1820:

14. <ՀՈՎԻՎԻ ՀՈԳԻՆ...>

(Էջ 27)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «Անի պնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 13:

Տպագրվում է առաջին անգամ:

15. <ՇԱՌԱՑԼ...>

(Էջ 27-29)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «Անի պնալը. ճանապարհին» վերնագրով թղթապանակ, թերթ 14: Ինքնագիրը գրված է ծոցատետրից պոկված թերթիկի վրա: Գրառումների մի մասը վնասին չեն առնչվում:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 28, տ. 6-11. ***Քու մազդ է քնքուշ ... և մէկը արեգակ*** – Տողերը Ղազար Սեբաստացու «Տաղ սիրոյ» տաղից են: (տե՛ս **Արմեն Տեր-Ստեփանյան**, Ղազար Սեբաստացու տաղերը, Բանբեր Երևանի համալսարանի, 1977, թիվ 3, էջ 202): Իսահակյանը կրճատել է «Որ ճերմակ վզիկդ առեր մանէման» տողին հաջորդող հետևյալ երկու տողը.

Ջտեսայ հողածին գաւակ քեզ նման,
Ջամէնն ես լինեմ, այ քեզի զուրբան:

16. ԱՆԻ
(ԷՀ 29)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 1: Այս և հետագա 19 գրառումները խմբավորված են արխիվը մշակողի կողմից «20 թերթիկ» վերնագրով: Սրանք հավանաբար Իսահակյանի խմբավորած գրառումներից դուրս մնացած, բայց «Անի» ընդհանուր թղթապանակում եղած նյութերն են:

Տպագրվում է առաջին անգամ:

17. <ՋԱՐԻՔ ԿԱՐԿԱՌԵԱԼ...>
(ԷՀ 29)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 2:

Տպագրվում է առաջին անգամ:

ԷՀ 29, տ. 23. *Ջարիք կարկառեալ գան ի հիւսիսոյ* – Աստվածաշնչյան այս մեջբերումը կիրառված է «Ակոռա Տեր Մաթոսը և նաչավոր Ադամ ամին» գլխում (տե՛ս եժ 14 Հատորով, հ. 8, դիրք Ա, էջ 530):

18. <ՎԱՍԱԿԸ ՀԱՍԱՎ...>
(ԷՀ 30)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 3:

Տպագրվում է առաջին անգամ:

ԷՀ 30, տ. 2-3. *Վասակը հասավ կապույտ լյառը ... ջախջախվեցավ ու փախավ* – Աղբյուրը Եղիշեի բնագիրն է. «Եւ յառաջ խաղաւթին ի մէջոց աշխարհին, մարտ եդեալ կռուէին ընդ մեծ ամուրս կապոյտ լերինն: Իսկ որ ի ներքսն էին, քաջութեամբ մարտուցեալ հարկանէին զբազումս ի գնդէն Պարսից, եւ զմնացեալսն փախստական ի

բանակն արկանէին» (տե՛ս **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Վեցերորդ եղանակ, յորում կարգագիր դարձեալ առաքինութիւնն Հայոց եւ չարագոյն նոյս երեւի անաւրէնութիւնն Վասակայ, Մատենագիրք Հայոց, հ. 1, եր., 2003, էջ 663-667): Կապուլտ բերդը Արտագերսի հետ նոյնացնում է Վարդան աշխարհագրի ընդարձակողը (Տե՛ս **Ղուկաս Ինճիճեան**, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 398-399):

էջ 30, տ. 4-5. ***Տրդատ թագավորը Անին նվիրել էր Կամսարականներին*** – Իսահակյանի աղբյուրը նորենացու պատմությունն է. «Յայնմ ժամու եւ ազգային նոցա Կամսար մկրտի իւրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի. արքայի (Տրդատի) ընդունելով ի ջրոյն՝ տայ նմա ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ, եւ զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում եւ մտերիմ հարազատի: Այլ նա ոչ սւելի բաւեալ քան զեաւթն աւուրս յետ մկրտութեանն, վախճանի: Բայց թագաւորին Տրդատայ մխիթարեալ զգլուխ որդւոցն Կամսարայ զԱրշաւիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ գնա սերէ յանուն հաւրն, եւ կարգէ ի թիւ նախարարութեանց: Յաւելու եւ այլ պարգեւս – զքաղաքն Երուանդայ եւ զնորին գաւառն մինչեւ ցկատար ձորոյն մեծի. միայն զի ի մտաց նորա հեռացուսցէ զյիշատակ բնիկ աշխարհին որ Պահլաւն կոչի, որպէս զի անվրդով զհաւատսն պահիցէ: Իսկ Արշաւիր առաւել սիրեալ զգաւառն՝ յիւր անուն կոչէ Արշարունիս. քանզի յառաջ Երասխաձոր կոչէր: Ահա ասացաք եւ զպատճառս գալստեան երկուց ցեղիցն, Պարթեւաց եւ Պահլաւկաց» (Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. Ղ):

էջ 30, տ. 5. ***Աչոտ Առաջինը գնեց նրանցից, ողջ գավառով*** – «Իսկ ըստ իշխանաց կարգին զկնի Սմբատայ՝ որդւոյ Աչոտոյ՝ Աչոտ որդի նորա, որ Մսակերն կոչիւր՝ ամս Ի: Սա գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսարականաց եւ զարքունիսն ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց» (**Ասողիկ**, Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԵ, եր., 2011, էջ 707):

19. <ԵՎՐՈՊԱՆ ՀՈԳԻ ՋՈՒՆԻ...>
(Էջ 30)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 4: Տպագրվում է առաջին անգամ:

20. ԱՆԻԻ ԿԱՄ ԱՑԼ ՏԵՂԵՐԻ ՃԱՌԵՐԻՑ
(Էջ 30-31)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 5: Տպագրվում է առաջին անգամ:

21. <ԱՆԻԻ ՔԱՂԱՔԻ...>
(Էջ 31)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 6: Տպագրվում է առաջին անգամ:

22. <ԻՐԱԿԱՆԱՑՐԻ...>
(Էջ 31)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 7: Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 31, տ. 15-16. ***լենկ-թեմուրները, ալփ-ասլանները, համիդները, թալաաթները*** – Լենկթեմուր (1336-1405) – թաթար-մոնղոլ նվաճող: Երկու անգամ ասպատակել է Հայաստանը:

Ալփ-ասլան – Մուհամեդ Ալփ-Արսլան իբն Դաուդ (1029-1072) – սելջուկյան սուլթան: Բյուզանդացիների և նրանց հայ և վրացի հարևանների դեմ Ալփ-Արսլանը մի չարք արշավներ ձեռնարկեց:

1064-ին գրավեց Անին և Կարսը, ավերեց քաղաքները, բնակչության մեծ մասին սրի քաշեց կամ գերեվարեց:

Համիդ – Աբդուլ Համիդ II (1842-1918) – Օսմանյան կայսրության սուլթան 1876-1909 թթ.: Աբդուլ Համիդը թուրքական զորքերով և քրդերից կազմված «Համիդիե» հեծելազնդերով Օսմանյան կայսրությունում բնաջնջեց ավելի քան 300 հազար հայ 1895-1896 թթ.:

Թալաաթ – Թալեաթ փաշա (1874-1921) – թուրք պետական գործիչ: Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից: 1913-1918 թթ. Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարար, Հայոց Եղեռնի գլխավոր կազմակերպիչներից: 1921 թ. մարտի 15-ին՝ Բեռլինում, գնդակահարվել է Սողոմոն Թեհլերյանի կողմից՝ նամեսիս գործողության շրջանակներում:

23. <ՄԵՆՔ ԿԱՑԻՆՔ...>

(էջ 31-32)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 8: Տպագրվում է առաջին անգամ:

24. <ՎԱԶԱՆ ՋՐԵՐ...>

(էջ 32)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 9: Տպագրվում է առաջին անգամ:

25. ԱՆԻ

(էջ 32)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 10: Տպագրվում է առաջին անգամ:

26. <ՈՐՊԵՍԶԻ ՄԻ ԱԶԳԻ...>
(Էջ 33)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 11:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 33, տ. 5. **Օտտո ֆոն Բիսմարկ** (1815-1898) – Գերմանական կայսրության առաջին կանցլերը (1871-1890):

27. ԱՆԻ
(Էջ 33-34)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 12-13:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 33, տ. 23. ***Աբդյուլ-Համիդ*** – *տե՛ս* Էջ 31, տ. 15-16. Ծանոթագրությունը:

28. <ԼՈՒԾԸ ՔԱՂՑՐԱՑՆԵԼ...>
(Էջ 34-35)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 14:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 34, տ. 27. ***մի արձանագրություն կրում է 1384 թիվը*** – Անիի Առաքելոց եկեղեցու արձանագրությունները տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, Էջ 12-30:

29. <Ո՛ ՏԱՑՐ ԶԳԼՈՒԽՍ...>
(Էջ 35)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 15:
Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 35, տ. 7-9. ***Ո՛ տայր զգլուխս ... ժողովրդեան իմոյ*** – Իսահակյանը որոշ հավելումներ է արել Երեմիա մարգարեի բնագրում՝ օգտվելով Երեմիայի ողբի այլ հատվածներից: Համմտ. «Ո տայր զգլուխս իմ ջուր, եւ զաչս իմ աղբեւրս արտասուաց. եւ լայի զժողովուրդս զայս զտիւ եւ զգիշեր, եւ զվիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ» (Երեմ. Թ 1):

Էջ 35, տ. 11-16. ***Իսկ բարեսէր և գեղեցիկ ... մեծամեծ բանս խօսել*** – Տե՛ս Պատմութիւն Թաթարաց Վարդանայ պատմչի Հանեալ ի ձեռագիր օրինակաց Թանգարանի Սրբոց Յակոբեանց, յԵրուսաղէմ, 1870, Գլուխ Թ., էջ 31:

30. <ԻՍԿ ՈՒՐ Է ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ...>
(Էջ 36)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 16:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 36, տ. 6. ***Քիթաբ-Կորկուտ*** – Օղուզ թուրքերի էպոսը, որի գործողությունները ընթանում են Հայկական բարձրավանդակում:

Էջ 36, տ. 16. ***Իբն ալ-Հազմ*** (994-1064) – պատմաբան, իրավաբան, փիլիսոփա և աստվածաբան, ծնված Կորդովայի խալիֆայությունում (Իսպանիա): Գրել է 400 աշխատություն, որոնցից պահպանվել է 40-ը: Իբն ալ-Հազմը համարվում է մահմեդական աշխարհի առաջատար մտածողներից մեկը: Սիրո թեմային է նվիրված Իբն-Հազմի «Աղավնու վզնոցը» տրակտատը, որը համարվում է արաբական միջնադարյան գրականության գլուխգործոցներից մեկը: Իսահակյանը հավանաբար թարգմանել է «Աղավնու վզնոցը» տրակտատի հետևյալ հատվածը. «Все эти виды любви прекращаются с прекращением их причин, увеличиваются с их увеличением, уменьшаются с их уменьшением, укрепляются с их приближением и ослабевают с их отдалением, **кроме любви по истинному влечению, овладевающей душой, – это та любовь, которой нет конца иначе как со смертью**» (**Ибн Хазм**, «Ожерелье голубки», Издательство восточной литературы, Москва, 1957):

31. <ՄՏԻՆ ՀԵԹԱՆՈՍԴ...>
(Էջ 36-37)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 17:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 36, տ. 18-19. *Մտին հեթանոսք ... զտաճար Նորա սուրբ* – Համմտ. Սաղմ. ՀԸ 1:

32. ՀԱՑԸ ԲԱՐԵԿԱՄ ՋՈՒՆԻ
(Էջ 37)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 18:
Տպագրվում է առաջին անգամ:

33. <ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ...>
(Էջ 37)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 19:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 37, տ. 18. *Գրիգոր Արծրունի* (1845-1892) – հայ հրապարակախոս, հասարակագետ, քննադատ, գրական-հասարակական գործիչ:

34. <ՀԱՑՈՑ ՏԱՌԱՊԱՆՔԸ...>
(Էջ 38)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, «20 թերթիկ», թերթ 20:
Տպագրվում է առաջին անգամ:
Էջ 38, տ. 3. *Շա՛տ մեծ աբլոմբ ունի – աբլոմբ (ֆր.* aplomb*) – չափազանց ինքնավստահություն ինչ-որ մեկի հետ չփվելու ժամանակ:*

Էջ 38, տ. 12. ***Այաշ*** – 1915 թ. ապրիլի 24-ին (11-ին) երիտթուրքական իշխանությունը ձերբակալել և Այաշի բանտ է տեղավոխել Կ.Պոլսում գտնվող հայ մտավորականության մեծ մասին, ուր նրանցից շատերին տանջամահ են արել կամ կախաղան են բարձրացրել (Տե՛ս **Ա. Նագգաշեան**, Այաշի բանտը, Պոսթըն, 1925, տպագրութիւն «Հայրենիքի»):

<ԱՆԻ>

35. ԱՆԻ

(Էջ 38-39)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, առաջին խմբավորում, թերթ 1:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 38, տ. 20. ***Սաադիի միտքը գենքի մասին*** – Իսահակյանը նկատի ունի պարսիկ բանաստեղծ **Աբու Մուհամմեդ ադ-Դին իբն Աբդ Ալլահ Սաադի Շիրազի** (մոտ 1210 - մոտ 1292) «Բուստան» պոեմի հինգերորդ գլխի հետևյալ տողերը.

«Բայց թե հարկ լինի, ինչպես Դամասկոսի սուրը,
Իմ լեզուն կարող է թշնամուն կյանքից զրկել»:

36. ՀԱՑՈՑ ԴԵՐԸ

(Էջ 39)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, առաջին խմբավորում, թերթ 2:

Տպագրվում է առաջին անգամ:

37. ԱՆԻ
(Է 40)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, առաջին խմբավորում, թերթ 3:

Տպագրվում է առաջին անգամ:

38. ԱՆԻ
(Է 40)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, առաջին խմբավորում, թերթ 4:

Տպագրվում է առաջին անգամ:

39. ՀԱՑԻ ԴԵՐԸ
(Է 40-41)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, առաջին խմբավորում, թերթ 5:

Տպագրվում է առաջին անգամ:

40. ԱՆԻ
(Է 41)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, առաջին խմբավորում, թերթ 6:

Տպագրվում է առաջին անգամ:

41. ԱՆԻ
(Է 41-42)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 1: Թղթապանակի վերնագիրն է «Անի. Ճառեր»:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 42, տ. 4. **Լի Բո** (701-762) – չինացի բանաստեղծ: Իսահակյանը թարգմանել է Լի Պոյի բանաստեղծություններից և նրա մասին մի ավանդազրույց (տե՛ս **Ավետիք Իսահակյան**, եժ 14 հատորով, հտ. 5, էջ 81-90):

Էջ 42, տ. 4. ***Ֆրեյդ Զիգմունդ*** *(1856-1939)* – ավստրիացի հոգեբույժ, հոգեվերլուծության հիմնադիր: Իսահակյանը հավանաբար նկատի ուներ Ֆրոյդի «Երազների մեկնություն» և «Հաճույքի հիմունքներից անդին» աշխատությունները:

42. ԱՆԻ
(էջ 41-42)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 2:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 42, տ. 8. ***61 հոդվածի մասին*** – 1878 թ. հունիսի 1-ից (հունիսի 13) առ հուլիսի 1-ը (13) տեղի ունեցավ Բեռլինի վեհաժողովը, որը Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի ջանքերի արդյունքում հրավիրվել էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման նպատակով: Մասնակից պետություններն էին՝ Ռուսաստանը, Օսմանյան կայսրությունը, Անգլիան, Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան: Վեհաժողովն ավարտվել է փաստաթղթի ընդունմամբ, որը պատմության մեջ մտել է Բեռլինի դաշնագրություն (տրակտատ) անունով: Վեհաժողովի արդյունքներից մեկն այն էր, որ Արևմտյան Հայաստանի հարցը միջազգային դիվանագիտության մեջ մտավ որպես «Հայկական հարց»:

Մկրտիչ Խրիմյանը մասնակցում է Բեռլինի վեհաժողովին որպես Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ներկայացուցիչ: Խրիմյանը կոնգրես է ներկայացնում Գրիգոր Օտյանի կազմած Հայաստանի «Ինքնավարության ծրագիրը», որի հաստատվելու դեպքում ճա-

նաչվելու էր Հայաստանի անկախությունը Օսմանյան կայսրությունից: Ավստրո-Հունգարիայի պատվիրակության ղեկավար Անդրաշին առաջարկում է օրակարգում ընդգրկել Հայաստանի ինքնավարության ծրագիրը: Բեռլինում Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Գորչակովը վետո է դնում Հայաստանի ինքնավարության ծրագիրը կոնգրեսի օրակարգ ընդգրկելու վրա՝ պատճառաբանելով, թե հայերն անկախություն չեն ուզում: Կոնգրեսի աշխատանքների ընթացքում Գորչակովին փոխարինում է Պյոտր Շուվալովը: Խրիմյանի խնդրանքով, Անգլիայի ներկայացուցիչ Սոլսբերին կրկին առաջարկում է օրակարգ մտցնել Հայաստանի ինքնավարության ծրագիրը, սակայն Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Շուվալովը կրկին վետո է դնում: Այդ պատճառով Հայաստանի անկախության հարցը չի մտնում Բեռլինի վեհաժողովի օրակարգ, սակայն Սոլսբերիի առաջարկով օրակարգ է մտնում բարենորոգումներ իրականացնելու հարցը, որը ներառվում է դաշնագրության մեջ:

Բեռլինի դաշնագրությունում Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի փոխարեն մտցվել է նոր հոդված՝ 61-րդը, որտեղ ասված էր հետևյալը. «Բարձր Դուռը հանձն է առնում հայաբնակ վայրերում անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին նա պարտավոր է պարբերաբար հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրությունը»: Սակայն այդ հոդվածի իրագործման հսկողությունը դրվում էր վեհաժողովի մասնակից բոլոր պետությունների վրա, ինչը վերջիններիս հնարավորություն էր տալիս միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Վեհաժողովը պարտավորեցնում էր Ռուսաստանին իր զորքերն անհապաղ դուրս բերել դրավված տարածքներից և ոչ մի երաշխիք չէր տալիս 61-րդ հոդվածի իրագործման համար: Բացի այդ, «Հայաստան» բառը փոխարինվում էր «Հայկական մարզեր» և «Հայաբնակ վայրեր» բառակապակցություններով: Այսինքն՝ օսմանյան կողմն ազատվում էր այդ երկրամասը Հայերի հայրենիք ընդունելու Սան-Ստեֆանոյի պայմանագրի ձևակերպումից:

Ռուսաստանին էր անցնում Կարսի մարզը, իսկ Ալաշկերտն ու Բայազետը հանձնվում էին Թուրքիային:

Էջ 42, տ. 12. ***Խրիմյանի չերեփը և իր թուղթը, հարիսան*** – 1878-ին Խրիմյան Հայրիկը, Բեռլինի վեհաժողովից վերադառնալով, արձանագրեց, որ իզուր էին հայ ժողովրդի հույսն ու հավատը, թե եվրոպական քաղաքակիրթ տերությունները թույլ չեն տա հերթական անգամ ոտնահարելու հայերի իրավունքները: Ուրիշ ժողովուրդներ «այնտեղ ապուրը» երկաթե չերեփով էին ճաշակում, այնինչ մեր չերեփը թղթից էր:

43. ԱՆԻ

(Էջ 42)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 3:

Տպագրվում է առաջին անգամ:

44. ԹՈՒՐՔԸ

(Էջ 43)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 4:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 43, տ. 4. ***Նապոլեոն Բոնապարտ*** (1769-1821) – Ֆրանսիայի կայսր (1804-1814), զորավար և պետական գործիչ:

45. <ԻՐԱԿԱՆ ՀԱՑԱՍՏԱՆԸ...>

(Էջ 43-44)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 5-6:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 43, տ. 22. *61 հոդված կնչանակե* - Տե՛ս Էջ 42, տ. 8 ծանոթագրությունը:

46. ԹՈՒՐՔԸ
(Էջ 44)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 7:

Տպագրվում է առաջին անգամ:

47. <ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ՓԱՌԱԲԱՆՈՒՄ ԵՆ...>
(Էջ 44-45)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 8:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 44, տ. 24. *Բանկ Օտոմանի գրավում* (օգոստոսի 14, 1896) – 1894-1896 թթ. համիդյան ջարդերին հաջորդած, սուլթանից և արևմտյան տերություններից ի նպաստ հայերի բարեփոխումներ պահանջելու, Հայկական հարցի վրա ուշադրություն հրավիրելու նպատակով կատարված գործողություն: Կազմակերպիչներն էին դաշնակցական գործիչներ Բաբկեն Սյունին, Արմեն Գարոն և Հրաչը (Հայկ Թիւրաքյան): 1896 թ. օգոստոսի 14-ին 31 զինված հայեր գրավում են Կոստանդնուպոլսի օսմանյան բանկը և Եվրոպական դեսպաններին ուղղված հայտագրով պահանջում արագացնել հայկական բարեկարգումների ծրագիրը, հակառակ դեպքում սպառնում են պայթեցնել բանկը:

Էջ 44, տ. 24-25. *Խանասորի արշավանք* – քուրդ Մազրիկ ցեղախմբի դեմ գործադրված պատժական գործողություն, որ կազմակերպել էր Հայ Հեղափոխական Դաշնակցությունը:

1896-ին քրդական Մազրիկ ցեղախումբը, սուլթան Ապդուլ Համիդի հրամանով, կոտորածի է ենթարկում Վանից Պարսկաստան անցնող հայ մարտիկներին՝ ավելի քան 300 հայ երիտասարդների:

1897-ի հուլիսի 25-ի լույս գիշերը թուրք-պարսկական սահմանը հատում են 253 դաշնակցական մարտիկներ: Խումբը ուղղվում է դեպի Վանա լճի հարավ-արևելքում գտնվող Խանասորի դաշտը, որ քուրդ Մազրիկ ցեղախմբի ամառային հավաքատեղին էր:

Գործողությունն ամբողջովին ծառայում է իր նպատակին:

Էջ 45, տ. 1. ***Սասունի ապստամբություն*** – Սասունի հայերի դինված ընդվզումը 1904 թ. թուրքական բռնատիրության դեմ, Սասունի հայերին բնաջնջելու նպատակով թուրքական կառավարության 1904 թվականին ձեռնարկած խոշոր արշավանքը: Սասունի ապստամբությունը ղեկավարում էին Հրայր Դժոխքը, Անդրանիկ Օզանյանը, Գևորգ Չավուշը և Սեբաստացի Մուրադը:

Էջ 45, տ. 2. ***1903 թվի կալվածական կռիվները*** – Ցարական Ռուսաստանը 1903 թ. հունիսի 12-ին օրենք հրապարակեց Հայոց եկեղեցու կալվածքների և գույքի բռնագրավման մասին:

Հայ ժողովրդի բոլոր հատվածները դժգոհությամբ մերժեցին այդ օրենքը: Ալեքսանդրապոլում, մասնավորապես, 1903 թ. հուլիսի 29-ին տեղի ունեցած ցույցի 5000 մասնակիցները հավաքվեցին առաջնորդարանում, ուր իջևանել էր Խրիմյան կաթողիկոսը, պահանջելով մերժել կառավարության պահանջը և չհանձնել եկեղեցական գույքը: Նմանատիպ ելույթներ տեղի ունեցան գրեթե բոլոր հայաբնակ վայրերում՝ Երևանում, Կարսում, Էջմիածնում, Ախալքալաքում, Գանձակում, Թիֆլիսում, Բաթումում, Շուշիում, Նոր Նախիջևանում և այլուր (**Դավիթ Անանուն**, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հտ. 3, էջ 39:): Շարժմանը ուղղություն տալու նպատակով ստեղծվեց «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»: Կոմիտեի մեջ հետագայում մեծ դեր ստանձնեց ՀՅԴ-ն: Շարժմանը հարեցին նաև «Հնչակյան», «Սոցիալ-դեմոկրատ» կուսակցությունները: Հայ ազգային կուսակցությունները որդեգրեցին նաև ահաբեկման ճանապարհով իշխանություններին եկեղեցու կալվածների

և դրամագլուխների բռնագրավման գործունեությունից հետ պահելու քաղաքականությունը: 1903 թ. հոկտեմբերի 14-ին Թիֆլիսում հնչակյան 3 ահաբեկիչ դաշույններով ծանր վիրավորեցին կառավարչապետ իշխան Գոլիցինին: Հետագայում մահափորձի ենթարկվեցին Բաքվի նահանգապետ Նակաշիձեն, Գանձակի փոխնահանգապետ Անդրեևը, գավառապետներ՝ Բոգոսլավսկին, Շմերլինգը, Պավլովը, ոստիկանապետ Սախարովը, պրիստավներ Նաչկանսկին, Ջավախովը և այլոք:

48. ԱՆԻ
(Էջ 45)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 9:

Տպագրվում է առաջին անգամ:

49. ԹՈՒՐՔԸ
(Էջ 45)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 10:

Տպագրվում է առաջին անգամ:

50. ՈՒՍՏԱՆ ԱՆԿՄԱՆ ՕՐԵՐՈՒՄ
(Էջ 45-46)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 11:

Տպագրվում է առաջին անգամ:

51. <ՍԿՍԵՑ ՈՒՏԱՑԻՆ ԾԱՂՐԵԼ...>

(Էջ 47-48)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 12:

Տպագրվում է առաջին անգամ:

52. ՃԱՌԵՐԻՑ

(Էջ 48-49)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 13:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 48, տ. 24. ***Քսենոփոն*** (430-356 թ. մ. թ. ա.) – Հույն պատմիչ, «Նահանջ բիւրուց» («Անաբասիս»), «Կիրոպեդիա» (Թարգմանուեցյուն՝ «Քսենոփոնտեայ՝ Կիւրոսի խրատու պատմուեթիւնք», զոր թարգմանեալ է Հ. Յովսեփայ Գաթրճանց», Վիեննա, 1843) երկերի հեղինակ:

Էջ 49, տ. 3. ***Ռայա*** – Հպատակ ժողովուրդ:

53. ԿԱՑԾԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ I ԳԼՈՒՄ

(Էջ 49)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 14:

Տպագրվում է առաջին անգամ:

54. <ՁԱՎՈՒՇԸ ԱՆԻ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ...>

(Էջ 50)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 15:

Տպագրվում է առաջին անգամ:

55. <ԵՎՐՈՊԱՆ ԱՍՈՒՄ Է ԹՈՒՐՔԻՆ...>
(Էջ 50-53)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 16-17:

Տպագրվում է առաջին անգամ:

56. ԱՆԻ
(Էջ 53-55)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 18-19:

Տպագրվում է առաջին անգամ:

57. ԱՆԻ
(Էջ 55-56)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 20:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 56, տ. 14. *Հայաստանն առանց հայերի* – Տե՛ս Էջ 26, տ. 13 ծանոթագրությունը:

58. <ՄԵՆՔ ՍԵՓԱԿԱՆ ՈՒԶԻ ՋՈՒՆԵՆՔ...>
(Էջ 56-57)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 21:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 57, տ. 1. ***1895-6 թթ. ջարդերը*** – Հայերի զանգվածային ջարդեր Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում: Կազմակերպել և իրագործել է սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարությունը՝ արևմտահայերի ազատագրական շարժումը ճնշելու և հայկական հարցին վերջ տալու նպատակով:

59. ԿԱՑԾԱԿԸ ԱՆԻՈՒՄ

(Էջ 57-59)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երկրորդ խմբավորում, թերթ 22:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 57, տ. 25. **Պլատոն** (մ. թ. ա. 427 - մ. թ. ա. 347) – Հին Հունաստանի դասական շրջանի աթենացի փիլիսոփա, առաջին բարձրագույն ուսումնական հաստատության՝ ակադեմիայի հիմնադիրը:

Էջ 58, տ. 14-15. ***Դարերե ի վեր ... չա՞տ է աչքաբաց*** – Տողերը Ռափայել Պատկանյանի «Ի՞նչ է մեզ պակաս» բանաստեղծությունից են (տե՛ս ԵԺ 8 հատորով, հ. 1, եր., 1963, էջ 159-160):

Էջ 58, տ. 22 - էջ 59, տ. 1. ***Կեցցե չատ օրեր ... փոշի բարձրացավ*** – Տողերը Ռափայել Պատկանյանի «Հայ պատանին երգում է» բանաստեղծությունից են (տե՛ս ԵԺ 8 հատորով, հ. 1, եր., 1963, էջ 85-87):

Էջ 59, տ. 1. ***բարձրացավ*** – Պատկանյանի բնագրում՝ ***վերացավ***:

60. ՈՒՏԱՆ ԱՆԻՈՒՄ

(Էջ 59-60)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 1: Այս խմբավորման թերթերը պահվում են «Անի» վերտառությամբ թղթապանակում (42 թերթ):

Տպագրվում է առաջին անգամ:

61. ԱՆԻ
(Էջ 60)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թիվ 2:

Տպագրվում է առաջին անգամ:

62. ԱՆԻ. ՋՈՐՈՒՄ (ԱԽՈՒՐՑԱՆԻ)
(Էջ 60-61)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թիվ 3: Գրված է ծոցատետրից պոկված թերթիկի վրա:

Տպագրվում է առաջին անգամ:

63. ԿԱՐՈՆ ԵՎ ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ
(Էջ 61)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թիվ 4:

Տպագրվում է առաջին անգամ:

64. ԱՆԻԻ ԾԵՐՈՒԿԸ
(Էջ 61)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թիվ 5:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 61, տ. 18. ***Մաքիավելլական*** – **Նիկոլո Մաքիավելի** (1469-1527) – իտալացի պրոզ, պատմաբան, փիլիսոփա, քաղաքական գործիչ: Մաքիավելու

սկզբունքները պետության կազմավորման և կառավարման մասին շարադրված են նրա «Տիրակալը» քաղաքական տրակտատի մեջ (գրել է 1513 թ., հայերեն թարգմանությունը՝ եր., 2010): Գիրքը նկարագրում է իշխանությունը գավթելու ուղիները, կառավարման մեթոդները և այն հմտությունները, որոնք պետք է ունենա իդեալական կառավարիչը:

65. <ԵՐԲ ՈՒՏԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ...>

(Էջ 62)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 6:

Տպագրվում է առաջին անգամ:

66. <ՀՈԳԻՆ ԼՑՎԱԾ Է ԲՑՈՒՐ ԵՐԳԵՐՈՎ...>

(Էջ 62)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 7:

Տպագրվում է առաջին անգամ:

67. ՈՒՏԱՆ ԱՆԻ

(Էջ 62-63)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 8:

Տպագրվում է առաջին անգամ:

68. ԱՆԻ

(Էջ 63)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 9:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 63, տ. 9. ***պարոն Աղբալյանը*** – **Նիկոլ Աղբալյան** (1875-1947) – հասարակական-քաղաքական գործիչ, պրոկանապետ, մանկավարժ, ՀՅԴ կուսակցության անդամ, Հայաստանի առաջին հանրապետության կրթության նախարար:

69. ՈՒՏԱ ԿԱՐՈ (ԱՆԻ)
(Էջ 63-64)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 10:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 63, տ. 23. ***Խրիմյանի աստածը, երկաթե չերեփը, Հարխան*** – Տե՛ս Էջ 42, տ. 12 ծանոթագրությունը:

70. ԱՆԻ
(Էջ 64)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 11:

Տպագրվում է առաջին անգամ:

71. ԱՆԻ. ԳՈՋԸ
(Էջ 64)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 12:

Տպագրվում է առաջին անգամ:

72. ՈՒՍՏԱՆ ԱՆԻՈՒՄ

(Էջ 65)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 13:

Տպագրվում է առաջին անգամ:

73. <ՈՒՍՏԱՆ ՀԱՐՑՆՈՒՄ Է...>

(Էջ 65)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 14:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 65, տ. 12. **Տրդատ ճարտարապետ** (չուրջ 940 - մահվան թվականն անհայտ է, հավանաբար՝ 1020 թ.), Բագրատունյաց Հարստության դարաշրջանի հայ ճարտարապետ և քանդակագործ: Շինարարություն է ծավալել հիմնականում Շիրակում: Կառուցել է Անիի մայր տաճարը և կաթողիկոսարանի շենքը: Ըստ հայ պատմիչների (Ստեփանոս Տարոնեցի և այլք) վկայության, երբ Կոստանդնուպոլսում երկրաշարժից փլվել է Սբ. Սոֆիայի մայր տաճարի գմբեթը, Տրդատին հրավիրել են այն վերականգնելու: Նա գմբեթը կառուցել է 4 մույթերի (սյուների) վրա՝ տալով նրան հայկական ճարտարապետական ոճ, ապա կամարի վրա հայերեն տառերով գրել է Տրդատ (994 թ.): Կառուցել է Արգինայի կաթողիկոսարանի Կաթողիկե եկեղեցին (973–977), Գագկաշեն Սբ. Գրիգոր եկեղեցին (1001–1010) Գագիկ Ա Բագրատունի թագավորի հանձնարարությամբ: Տրդատին է վերագրվում Հաղպատի վանքի ամենահին եկեղեցու՝ Սբ. Նշանի, Սանահինի վանքի Սբ. Ամենափրկիչ, Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցին, Անիի Սբ. Փրկիչ եկեղեցին, Արգինայի կաթողիկոսարանի համալիրը, Անիի Սմբատաշեն պարիսպի և այլ հուշարձանների կառուցումը:

74. ԱՆԻԻ ՎԱՐԴԱՊԵՏԸ
(էջ 65)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 15:

Տպագրվում է առաջին անգամ:

75. ԱՆԻ
(էջ 65)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 16:

Տպագրվում է առաջին անգամ:

76. ԱՆԻ
(էջ 66)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 17:

Տպագրվում է առաջին անգամ:

77. <ԷԴ ԿՆԻԿԸ...>
(էջ 66)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 18:

Տպագրվում է առաջին անգամ:

78. ԱՆԻ
(էջ 66-67)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 19:

Տպագրվում է առաջին անգամ:

79. ԱՆԻ

(Էջ 67)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 20:

Տպագրվում է առաջին անգամ:

80. <ԿԱՄ ԵՐԱՋ ՏԵՍԱԾ...>

(Էջ 67)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 21:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 67, տ. 24. *ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ* – Արտահայտությունը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկից է: Այս չարությամբ են սկսվում աղոթագրքի բոլոր գլուխները:

81. ԱՆԻ

(Էջ 68)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 22:

Տպագրվում է առաջին անգամ:

82. ԱՆԻ

(Էջ 68)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 23:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 68, տ. 15. *տիկ. Այծեմնիկի* – Այծեմնիկ տիկնոջ մասին վկայում է Սամուել Անեցի պատմիչը. «Եւ յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս, առնացի առացեալ սիրտ, հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն՝ յելանել ընդ պատուարն, առ ոչինչ համարեալ վնասուածս նետից, զոր վիրաւորէին արտաքուստ. եւ էր անուն նորա ըստ արժանի արագութեան նորա՝ Այծեամն կոչեցեալ» (տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս պիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեան, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, առաջաբանը՝ Կ. Մաթեւոսեանի, Եր., 2011, էջ 131:

Էջ 68, տ. 16. *Ժաննա դ'Արկ* – (1412-1431) Ֆրանսիայի ազգային հերոսուհի, 1909 թ. արբանյակվել է կաթոլիկ եկեղեցու կողմից: Գլխավորել է ֆրանսիական ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ անգլիացիների Հարյուրամյա պատերազմի (1337-1453 թթ.) ժամանակ:

83. ԱՆԻ
(Էջ 68-69)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 24:

Տպագրվում է առաջին անգամ:

84. ԱՆԻ
(Էջ 69)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 25:

Տպագրվում է առաջին անգամ:

85. ԱՆԻ
(ԷՀ 69-70)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 326-II, երրորդ խմբավորում, թերթ 26-27:

Տպագրվում է առաջին անգամ:

ԷՀ 69, տ. 17. ***Աշոտ Ողորմած*** – Աշոտ Գ Ողորմած (*անհայտ* - 977) Հայոց արքա (953-977): Աբաս Ա Բագրատունու որդին, Բագրատունիների թագավորական տոհմից: 961 թ. մայրաքաղաք է հռչակել Անին:

ԷՀ 69, տ. 18-19. ***Սմբատ Բ. Տիեզերակալ*** (10-րդ դար-989) – Հայոց թագավոր 977 թվականից, Բագրատունիների արքայատնից: Իսահակյանի աղբյուրը Ստեփանոս Ասողիկի պատմությունն է. «Զայսու ժամանակաւ մեռաւ թագաւորն Հայոց՝ աւրհնեալն Աշոտ՝ ի ՆԻԶ թուականին, եւ ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ՝ որդի նորա ամս ԺԳ: Սա լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրեան գետոյ մինչեւ ցձորն Ծաղկոցաց, կրով եւ վիմաւք մածուցեալ, մահարձանաւք եւ աշտարակաւք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բազադոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, եւ մայրագեղան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բեւեռապինդ ամրացուցեալ: Արկանէ հիմն եւ մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին չինեաց յԱրգինայ» (Մատենագիրք Հայոց, հտ. ԺԵ, Եր., 2011, էջ 760):

ԷՀ 69, տ. 21-22. ***Տրդատ ճարտարապետը*** – Տե՛ս ԷՀ 65, տ. 12. ծանոթագրությունը:

ԷՀ 69, տ. 22-23. ***Խաչիկ կաթողիկոս*** – Խաչիկ Բ Անեցի, Հայոց Կաթողիկոս (1047/58-1065): Պետրոս Ա Գետադարձի հաջորդը և քրոջ որդին: Ըստ Ստեփանոս Ասողիկի. «Յաւուրս Կիւրեղ-Ժանայ Յունաց կայսեր եւ ի թագաւորութեան Հայոց Աշոտոյ ի ՆԻԱ թուականին, զկնի Վահանայ եւ Ստեփանոսի, եկաց կաթողիկոս Հայոց Տէր Խաչիկ եպիսկոպոս Արշարունեաց քուերորդի Տեառն Անանիայի, որ միապետեալ խաղաղացոյց զաշխարհս Հայոց ամս ԺԹ: Եւ նորոգեաց զտուն կաթո-

Դու, խոհուն Հայ, որ խորհրդածո՛ւմ ես
Եփրատի ինչ-որ վտակի ափին. դու նրազանքով նայո՛ւմ ես
Նինվեի ավերակներին. դու բարձրանո՛ւմ ես Արարատ լեռը:

Էջ 160, տ. 18. *Գլադստոն* – Տե՛ս Էջ 114, տ. 12-16 ծանոթագրությունը:

Էջ 180, տ. 19. *Հաքստհաուզենի խոսքերը* – Ավգուստ Հաքստհաուզեն (1792-1866) – պրուսական ազդագրագետ: Ճանապարհորդել է Կենտրոնական Ռուսաստանում, Ուկրաինայում, Պովոլժիեում և Կովկասում: 1856 թ. հրատարակել է «Անդրկովկաս» (Հայերեն թարգմանությունը՝ «Բարօն Օգոստոս Հակստհաուզենայ Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս», թարգմանութիւն Արիստակէս վարդապետի Սեդրակեան Խալֆալուեցւոյ, մխիթարեան Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1872 թ.) ուղեգրություն-ուսումնասիրությունը, որտեղ ամփոփել է նաև Հայաստանին վերաբերող ճանապարհորդական նոթերը (գլուխներ Դ, Զ-Թ):

223. ԱՆԻ
(Էջ 162-163)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 398-II, թերթ 3բ:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 162, տ. 22-27. ***Դու պատմիր նույնպես ... փլցրել սյունք*** – Տե՛ս Կռունկ Հայոց աշխարհին, ամսագիր, 1861, թիվ Բ, էջ 83: Մեջբերումը «Արագածոտնից և Արարատյան դաշտից. Ողջոյն Կռնկան» բանաստեղծությունից է «Պահլավունի» ստորագրությամբ: «Կռուկի» բնագրում «քանդում են, կրում են» ձևերի փոխարեն կիրառված են «քանդուին, կրուին» ձևերը: «Օրավուր քանդուին, կրուին քարերը» տողից հետո Իսահակյանը բաց է թողել հետևյալ երկու տողը.

Ա՛խ, չատերի մեջ աղօթքի տեղակ
Պատսպարուում են Պարսկաց հոտերը:

224. ԱՆԻ
(Էջ 163-164)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 417-II, էջ 7-8:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 163, տ. 24-25. ***Ալփասլանը ... Այծեմնիկ տիկինը*** – Տե՛ս էջ 31, տ. 15-16 և էջ 68, տ. 15 ծանոթագրությունները:

225. ԱՆԻ
(Էջ 164-166)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 401-II, էջ 8-9:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 165, տ. 8. ***կանտեան իմբերատիվ*** (Kants Imperativ)– Կանտի իմպերատիվը – «Կատեգորիկ հրամայական» եզրույթը չրջանառության մեջ է դրել գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Իմանուել Կանտը (1724-1804) «Պրակտիկ բանականության քննադատություն» (1788) աշխատության մեջ: Կանտն առաջարկել է ինքնա-

վար էթիկայի հայեցակարգը, ըստ որի՝ բարոյական սկզբունքները միշտ գոյություն ունեն, կախված չեն շրջակա միջավայրից և պետք է մշտական կապի մեջ լինեն միմյանց հետ: Իսկ կատեգորիկ հրամայականն ասում է, որ մարդ պետք է կիրառի իր վարքագիծը որոշարկող հատուկ սկզբունքներ: Մարդը կյանքում պետք է գործի ինչպես իր, այնպես էլ ուրիշների համար օրենքի ուժ ունեցող կանոններով, պետք է մարդկանց հետ վարվի այնպես, ինչպես ուզում է, որ իր հետ վարվեն, չպետք է դիմացինին համարի անձնական շահ առանալու միջոց:

էջ 165, տ. 13. *Բուդդա – Գաութամա Բուդդա* (մ.թ.ա. 6-րդ դար – և ոչ ուշ քան մ.թ.ա. 4-րդ դար), բուդդիզմի ուսմունքի հիմնադիրը:

էջ 165, տ. 13. *Լաոտզի – Լաո Ցզի* – չին փիլիսոփա և գրող:

էջ 165, տ. 13. *Սոկրատ* (մ. թ. ա. 469-մ. թ. ա. 399) – հին հունաստանի հայտնի փիլիսոփա:

էջ 165, տ. 13. *Կանտ – Իմանուիլ Կանտ* (1724–1804) – գերմանացի փիլիսոփա:

էջ 165, տ. 14. *Մարքս* – Տե՛ս էջ 132, տ. 7-8 ծանոթագրությունը:

էջ 165, տ. 14–15. *Պրոմեթեոս* – Տե՛ս էջ 118, տ. 5-6 ծանոթագրությունը:

էջ 165, տ. 23. *Հերակլիտ* (մ.թ.ա. 544–484) – անտիկ դարաշրջանի հույն փիլիսոփա:

էջ 165, տ. 27. *Եսայի մարգարեի տեսիլը* – տե՛ս Եսայի, Ա-ԿՋ:

էջ 165, տ. 28. *Շոպենհաուեր – Արթուր Շոպենհաուեր* (1788–1860) – գերմանացի փիլիսոփա: Կանտի ամենահայտնի աշակերտը, իռացիոնալիզմի հիմնադիրը:

էջ 166, տ. 4. **Biologie des Krieges.** *օգտվել այդ գրքից* – Նկատի ունի G. F. Nicolai, Die Biologie des Krieges (Պատերազմի կենսաբանությունը), Յուրիխ, 1917 գիրքը: Խահակյանի գրադարանում առկա է այս հրատարակությունը (տե՛ս Ավ. Խահակյանի տուն-թանգարան, գույքահամար՝ 1791): Գեորգ Ֆրիդրիխ Նիկոլաի (1874–1964) – գերմանացի բժիշկ, կենսաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

226. ԱՆԻ
(էջ 166-167)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 399-II, թերթ 3:
Տպագրվում է առաջին անգամ:

227. ԱՆԻ. ՌՈՒՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(էջ 167-168)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 399-II, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

228. <ԱՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ. ԾԵՐՈՒՆԻՆ...>
(էջ 168)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 33լր, թերթ 7:
Տպագրվում է առաջին անգամ:

229. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(էջ 168-169)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 377-II, թերթ 7:
Տպագրվում է առաջին անգամ:

230. ԿԱՑԾԱԿԸ ԿԱՄ ԾԵՐԸ. ԿԱՄ ՄԻ ՈՒՐԻՇԸ
(էջ 169-170)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 412-II, թերթ 18բ:
Տպագրվում է առաջին անգամ:

231. ԳԵՐԵԶՄԱՆՆՈՑ
(Էջ 170-171)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 414-II, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

232. <ՍՐԻԿԱ ԵՎՐՈՊԱՑԻ ԱՆՈՒՆԸ ՄԻ ՏՎԵՔ...>
(Էջ 171-173)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 429-II, թերթ 6:
Տպագրվում է առաջին անգամ:

233. ԱՆԻ
(Էջ 173)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 424-II, թերթ 16:
Տպագրվում է առաջին անգամ:

234. <ԱՆԻՈՒՄ...>
(Էջ 173-174)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 376-II, թերթ 32:
Տպագրվում է առաջին անգամ:

235. <ՄԻ ՀԱՑ ՄԱՐԴ, ՄՏԱՎՈՐԱԿԱՆ...>
(Էջ 174)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 33լր, թերթ 6բ:
Տպագրվում է առաջին անգամ:

236. <ՈՒՏԱ ԿԱՐՈՑԻ ԽՈՒՄԲԸ ԱՆԻՈՒՄ...>
(Էջ 174-175)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 430-II, թերթ 40:
Տպագրվում է առաջին անգամ:

237. <ՈՒՏԱՆ ԱՆԻԻ ՄԵՋ...>
(Էջ 175-176)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 431-II, թերթ 21:
Տպագրվում է առաջին անգամ:

238. <ԹՈՒՐՔԸ՝ ՀԱՑԵՐԻՆ ԿՈՏՈՐԵԼՈՎ...>
(Էջ 176-177)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 33-IIլր, տետր՝ «Հայկական հարցի մասին» վերնագրով, թերթ 1:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 176, տ. 12. *Հրեաների խախամապետը՝ Նաումը* – Խախամապետ – խախամի – Հրեաների կրոնավոր ուսուցիչ, ռաբբի: Պոլսի «Ճակատամարտը» մասնավորապես 1922 թ. մայիսյան համարում (թիվ 1076) գրում է. «ԽԱԽԱՄԱՊԵՏ Նաում էֆ.ի հասած է Փարիզ և կշարունակ իր թրքական փրոփականտը»: Խայիմ Նաում (1872-1960) – Ֆրանսիայում Սորբոնի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում Խայիմ Նաումը սովորել է լեզվաբանություն, պատմություն և փիլիսոփայություն: Դասավանդել է թուրքական ռազմական վարժարանում, որտեղ ծանոթացել է բազմաթիվ երիտթուրքերի հետ: 1922 թվականին օսմանյան հրեաների ներկայացուցիչ Խայիմ Նաումը Լոզանի խաղաղության կոնֆերանսի ժամանակ հանդես է եկել որպես Թուրքիայի վարչապետ Իզմեթ փաշայի խորհրդական: Երիտթուրքերը

նրան գործուղել են ԱՄՆ և Եվրոպա՝ թրքահայրական և հակահայկական քարոզչություն անելու համար:

Էջ 176, տ. 16. *Հնդկական Գանդին* – Մոհանդաս Կըրըմչընդ Գանդի (1869-1948), Հնդկաստանի քաղաքական և հոգևոր առաջնորդ, Հնդկաստանի՝ Մեծ Բրիտանիայից անկախանալու շարժման ղեկավարներից և գաղափարախոսներից: «Պարոն Անդրյուսի դժվարությունները» (MR. ANDREWS' DIFFICULTY) հոդվածում Գանդին տեսականորեն կողմ է արտահայտվել Սևրի պայմանագրով Հայաստանին տրվող անկախությանը, սակայն գործնականում անարդարացի է համարել Օսմանյան Թուրքիայից մի շարք տարածքների օտարմանը կամ դրանք հայերի և արաբների վերահսկողության տակ անցնելը: Ըստ Գանդիի՝ դա «ինքնորոշման գողի տակ Անգլիայի և մյուս տերությունների անամոթ փորձն է՝ նահանգանել և մասնատել Թուրքիան»: Ակադեմիական դիրքերից քննարկելով խնդիրը՝ Գանդին գրում է. «Փաստն այն է, որ ո՛չ մուսուլմանները, ո՛չ էլ հինդուները չեն հավատում..., որ արաբները կամ հայերը ցանկանում են Թուրքիայից լիակատար անկախություն: Որ լրենք ուզում են ինքնակառավարում, կասկածից վեր է: Ոչ ոք չի վիճարկում այդ պնդումը: Բայց ոչ ոք երբեք չի պարզել, որ թե՛ արաբները, թե՛ հայերը ցանկանում են վերացնել Թուրքիայի հետ բոլոր կապերը, նույնիսկ անվանական»: Գանդիի կարծիքով՝ «Ջմյուռնիան և Թրակիան, ներառյալ Ադրիանապոլիսը, անազնիվ կերպով խլվել են Թուրքիայից, և որ մանդատները անբարեխիղճ կերպով հաստատվել են Սիրիայում և Միջագետքում» և այլն:

Էջ 176, տ. 17-25. *Թումանի խումբը ... մորթեցին հայ հայդուկներին* – Տե՛ս Էջ 158, տ. 6 ծանոթագրությունը:

Էջ 176, տ. 26. *Ջանփոլադյան Համոն* – Համայակ Ջանփոլադյան (1886–1905) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՅԴ կուսակցության անդամ: 1903–1904 թթ. մասնակցել է Արևմտյան Հայաստան զինք փոխադրելու գործին: 1904 թ. օգոստոսին ահաբեկել է Օլթիի սահմանագծի կազակական վաշտի պետին, որը, Թուրքերի հետ համագործակցած, սահմանի վրա մայիսին սպանել էր Թումանի խմբի անդամներին: 1904 թ. աշնանը Թիֆլիսում կազմակերպել է հայ հեղափոխա-

կաններին հետապնդող պրիստավի ահաբեկումը: 1905 թ. փետրվարին Բաքվում հայ-թաթարական ընդհարումների ժամանակ կռվել է՝ պաշտպանելով հայ բնակչությանը: Զոհվել է Բաքվում՝ հայատյաց նահանգապետ Նակաշիձեի դեմ կազմակերպած մահափորձի ժամանակ:

էջ 177, տ. 1-2. ***բժիշկ Հակոբ Զավրիևին*** – Հակոբ Զավրիև (1866-1920) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, բժիշկ, աղնվական, ՀՅԴ կուսակցության անդամ:

էջ 177, տ. 8. ***Խրիմյանին*** – Տե՛ս էջ 42, տ. 8 ծանոթագրությունը:

էջ 177, տ. 8. ***Նար-Պեյին*** – *Նար-Պեյ* – Խորեն Գալֆայան (Նար Պեյ Լուսինյան, 1831 -1892) – հայ բանաստեղծ, թատերագիր:

էջ 177, տ. 10. ***Բեռլինի ժողովին*** – Տե՛ս էջ 42, տ. 8 ծանոթագրությունը:

էջ 177, տ. 14. ***Թաալաթի*** – Տե՛ս էջ 31, տ. 15-16 ծանոթագրությունը:

239. <ԱՅՍՕՐ, 1955 ԹՎԻ...>

(էջ 177-179)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 33-IIլր, տետր՝ «Հայկական հարցի մասին» վերնագրով, թերթ 2:

Տպագրվում է առաջին անգամ:

էջ 177, տ. 18-19. ***Գ. Զիչերինը*** – Գեորգի Վասիլևիչ Զիչերին (1872-1936) – ռուս դիվանագետ, ՌԿ(բ)Կ անդամ, 1918 թ. ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, 1918-1930 թթ. արտգործժողկոմ: Ստորագրել է 1918 թվականի Բրեստի հաշտության պայմանագիրը Գերմանիայի հետ:

240. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐՆ Է»

(էջ 179)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 33-IIլր, տետր՝ «Հայկական հարցի մասին» վերնագրով, թերթ 3:

Տպագրվում է առաջին անգամ:

241. «ՈՒՍՏԱ ԿԱՐՈՑԻ» ՄԵՋ
(Է՟ 179-180)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 33-II՟ր, տետր՝ «Հայկական հարցի մասին» վերնագրով, թերթ 3բ:

Տպագրվում է առաջին անգամ:

242. ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ
(Է՟ 180-184)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 33-II՟ր, տետր՝ «Հայկական հարցի մասին» վերնագրով, թերթ 4-6:

Տպագրվում է առաջին անգամ:

Է՟ 180, տ. 13. ***1919-20 թվերին Անգլիայի գաղութների մինիստրը*** – 1919-1920 թթ. Մեծ Բրիտանիայի գաղութների նախարարության պորթֆելը վարել է **Ալֆրեդ Միլները** (Alfred Milner, 1854-1925) – բրիտանացի պետական գործիչ, դիվանագետ, որը կարևոր դեր է խաղացել բրիտանական արտաքին և ներքին քաղաքականության ձևավորման մեջ 1890-ականների կեսերից մինչև 1920-ական թթ.: 1916 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. նոյեմբերը եղել է վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջի ռազմական կաբինետի ամենաակարևոր անդամներից մեկը:

Է՟ 180, տ. 18. ***Պուանկարեն*** – Ռայմոն Պուանկարե (1860-1934), ֆրանսիացի քաղաքական և պետական գործիչ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1909), 1912-1913 թթ.՝ պրեմիեր մինիստր և արտգործնախարար, 1913-1920 թթ.՝ Ֆրանսիայի նախագահ, 1922-1924 թթ. և 1926-1929 թթ.՝ վերսաին պրեմիեր մինիստր: Պուանկարեն երկդիմի և խարդախ քաղաքականություն է վարել արևմտահայության հարցում: Հայկական բարեկործությունների ծրագիրը առաջ քաշելու ժամանակ ձևացել է հայերի պաշտպան, միաժամանակ, սակայն, վարկ է տրամադրել Թուրքիային: 1918-1919 թթ. փարիսեցիական խոստումներով հրահրել է եղեռնից փրկված կիլիկիահայերի վերադարձը իրենց հա-

բազատ տները, առանց ապահովելու նրանց անվտանգությունը քամալական հրոսակների հարձակումներից: Իր թուրքապաշտպան քաղաքականությամբ նպաստել է հակահայ որոշումների ընդունմանը Լողանի կոնֆերանսում:

էջ 180, տ. 28. ***Կ. Պոլսի դեսպան Նելիդովը*** – **Ալեքսանդր Իվանովիչ Նելիդով** (1835 -1910), ռուս դիվանագետ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ՝ Կ. Պոլսի ռուսական դեսպանության խորհրդական, պատերազմի ժամանակ՝ Բալկանյան թերակղզում գործող բանակի գլխավոր հրամանատարի դիվանագիտական գրասենյակի պետ, 1883-1897 թթ.՝ դեսպան Թուրքիայում: 1877 թ. նոյեմբերին կազմել է Թուրքիայի հետ հաշտության նախնական պայմանները, որոնք ընկան նրա ստորագրած՝ 1877 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրի հիմքում: 1895-1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ սատարել է սուլթան Համիդին, որը, ի երախտագիտություն, ադամանդազարդ մի տուփ եւ այլ թանկագին ընծաներ է ուղարկել Նիկոլայ Բ. կայսրին: Ըստ Նելիդովի՝ սուլթան Համիդի կազմակերպած կոտորածների մեղավորները հայերն են: Թուրքայում հայերի վիճակի մասին Խրիմյան կաթողիկոսի նամակին ի պատասխան Նելիդովը գրում է. «Ինչ վերաբերում է գավառներին, այնտեղ կատարվում են չատ տխուր ընդհարումներ, որոնց մեջ՝ դժբախտաբար՝ **մեծ մասամբ, հայերն են լինում հեղինակ,** դրդված հեղափոխական մասնաժողովներից, որի հետևանքը լինում է տաճիկների չատ խիստ վրեժխնդրությունը և քրիստոնյաների անխնա խիստ կորուստները: Երեք պետությունների առաջարկած ռեֆորմները սուլթանը հաստատել է. նրանց իրագործման պատրաստությունները տեսնվում են. բայց սրա համար չատ կարևոր է, որ ազգի ղեկավարները ցույց տան նրան, թե անհրաժեշտ է հրաժարվել հեղափոխական շարժումների աջողության և օտար **միջամտության** սնոտի հույսերից» (տե՛ս Մշակ, 1895, 7 նոյեմբերի, թիվ 128):

էջ 181, տ. 6-12. ***երբ 1895 թ. Խրիմյան կաթողիկոսը ... Լոնդոն պիտի գնայիք*** – 1895 թ. մարտին Խրիմյան Հայրիկը պաշտոնական այցով մնկնում է Պետերբուրգ: Ռուսաստանի մայրաքաղաքում

Խրիմյանին ընդունել են մեծ պատիվներով, շնորհել են բարձր պարգևներ, Սուրբ Սինոդը Ամենայն Հայոց Հայրապետին ադամանդե խաչ է նվիրել: Խրիմյանը Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների իրականացման խնդրագիր է ներկայացրել Նիկոլայ II ցարին:

Էջ 181, տ. 13. *Դուռնովոն* – Պյոտր Նիկոլաևիչ Դուռնովո (1842-1915) – ռուս պետական գործիչ: Իսահակյանը չփոթել է. Դուռնովոն 1905-1906 թթ. ոչ թե արտաքին, այլ ներքին գործերի նախարարի պաշտոնն է զբաղեցրել:

Էջ 181, տ. 16. *Երևանի բանդում ժանդարմի պետը ինձ ասաց – Բոստոնի ՀՅԴ արխիվի Հրիստափոր Միքայելյանի ֆոնդում (փաստաթուղթ 1914-80) պահվում է Իսահակյանի հաշվետվություն-նամակը իր բանտարկության հանգամանքների և Երևանի բանտում անցկացրած օրերի մասին: Ըստ վավերագիրը հրատարակող Երուանդ Փամպուքճանի. «Փաստաթուղթը, ճիշդ է, Հրիստափորի ձեռագրով է, յայտնապէս, սակայն, ան չարագրողն է միայն առաջին պարբերութեան՝ ներածականի բաժնին, մինչ մնացեալը ամբողջութեամբ կը նկարագրուի Իսահակեանի կողմէ՝ առաջին դէմքով»: Հավանական ենք համարում, որ Միքայելյանը Իսահակյանի տրամադրած տեղեկությունների հիման վրա հաշվետվություն է պատրաստել Իսահակյանի բանտարկության մասին: Բանի որ վավերագրում Իսահակյանի նկարագրած դրվագներն ու երկխոսությունները համընկնում են սույն դրառման մեջ նկարագրվածի հետ, ուստի այն մեջբերում ենք որոշ կրճատումներով:*

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

1896 մայիսի 1-ին Ալէքսանդրապոլում ձերբակալուում է: Օրը ցերեկով, ճաշից յետոյ մտնում են տունը:

Երեւանում մի ձերբակալածի մօտ (Գաբրիէլ Մնացականեանի մօտ պնացողի) գտնում են նամակ Դիլիջանի տղերանց վրայ. այդ նամակը իրեն չէ եղած գրած, բայց Դիլիջանի տղերքը ցուցմունքների

ժամանակ անւանում են եւ Աւետիքին: Ոստիկանութիւնը Դիլիջանում հեռագրում է ձերբակալել Ալէքսանդրապոլի ոստիկանութեան. ոստիկանութիւնը հրաւիրում է եւ պահում է ոստիկանատանը. ժանդարմները դեռ հեռագիր չեն ունեցել. մի միայն գիշերից յետոյ ժանդարմները գալիս են, տանում կապիտանի մօտ, որը բանտարկում է. հին չինութիւն. յատակը ցօղուն. պառկելու համար խար: Երրորդ օրը քննութիւն, ներկայութեամբ դատախազի օգնականի – մի վերին աստիճանի լիրբ արարած, աղդով ռուս. կապիտանը՝ Մինկևիչ: Ժանդարմները նոյնպէս թղթեր չունէին, ինչպէս եւ ոստիկանները, ստացել էին միայն կարճ հեռագրական կարգադրութիւն:

Քննութիւն

Մեղաւոր չեմ զգում ինձ. չեմ պատկանում որեւէ յեղափոխական կազմակերպութեան. Դիլիջանի տղերանց, որոնց անունները յիշւում է, չեմ ճանաչում: Սրանով վերջանում է առաջին քննութիւնը. միւս օրը եկաւ մօտս կապիտանը եւ նորոգից կրկին իր հարցերը, որոնց նոյն պատասխանը տւի: Երրորդ օրը էլի կանչելով ցոյց տւին ինձ իմ մի ձեռագիրը, որ մի ստացագիր էր Դիլիջանի տղերանց տւած 15 հրացան նրանցից առնելու եւ Ալէքսանդրապոլ տանելու համար: Դա ստիպում է խոստովանել, որ այն Դիլիջանից բերել է 15 հրացան եւ տւել է մի տաճկահպատակի իրենց գիւղը ինքնապաշտպանութեան համար տանելու համար: Դատախազը այդ ժամանակ սկսում է նախատել, որ քաջութիւն չունեմ ճշմարտութիւնը խօսալ. ես պատասխանում եմ այդ աւելորդ քարոզներին, որ մենք դիմելով յեղափոխական կռւի, նւիրւելով մի ժողովրդի դատին, մի փոքր աւելի լայն սիրտ ունինք քան ինքներդ:

Այս միջադէպը տաք ընդհարման տեղիք տւեց: Բերին թէյ, մի փոքր հանգստացանք, յետոյ կրկին սկսւեց:

Հարցնում են ում եմ ճանաչում Թիֆլիզ. ես ասում եմ, ոչ ոքի, որ նրանք անյայտ են.

– Ինչպէ՞ս մտաք յեղափոխութիւն:

– Պարզ կերպով՝ լուրեր տեղում էին ամէն կողմից՝ Տաճկաստանում ապրող եւ կառավարող ժողովրդի մասին. ես էլ մտածեցի նպաստել ժողովրդի վիճակն փոխելու:

– Ձեզ ի՞նչ. թողէք տաճկահպատակները իրենց մասին հոգան, իսկ դուք ռուսահպատակ էք:

– Մենք պանսլաւականութիւն չենք դնում. մեր եղբայրներն են իբրեւ Հայեր, մեր եղբայրներն են իբր մարդիկ:

– Ինչո՞ւ էք վէնք գողանում, կառավարութեան վէնքերը:

– Մենք չենք գողանում, այդ ձեր սպաներն են գողանում եւ մեզ ծախում. այլ կերպ ոչ մի Հայ չէ կարող կառավարական զինանոցներին մօտենալ:

– Ճանաչո՞ւմ էք այդ սպաներին:

– Ոչ, մի պապախոցի թիւրքից ենք առել Դիլիջանի անտառում:

– Եվրոպայում եղած ժամանակ դուք կարդացել էք յեղափոխական պրւածքներ:

– Այո. չէ կարելի Եւրոպայում մնալ եւ այնպէս ապրել ու մտածել, ինչպէս այստեղ կամ Տաճկաստանում:

Այս հարցերից շատերը, երբ ոչ մէկ [չէին ուզում] արձանագրութեան մէջ մացնել, չէի համաձայնում, եւ մնում էին: Դիլիջանի տղերանց անուններն իսկապէս չէի էլ իմանում, դէմքերը նոյնիսկ չէի յիշում. տեսել էի միայն իմ մի ծանօթի մօտ մի անգամ, որը յանձնոց ինձ հրացանները Ալէքսանդրապոլ տանելու: Ես վերցրել էի Դիլիջանից մի քանի «Դրօշակ». այդ էլ չէր ծածկւել Դիլիջանում հարցաքննուողների կողմից եւ մինչեւ անգամ աղաւաղւած ձեւով. ոչ թէ ինձ էին տւել, այլ իբր թէ ես էի տւել բոլորին: Ամենատխուր ցուցմունքներ էր տւել Լեւոն Վարդանեան – դիլիջանցի, անիւագործ արհեստով:

Երկու շաբաթ ընդամէնը մնացի Ալէքսանդրապօլի բանտում: <...>

Յետոյ տարան Երեւան. ուշադրութեան արժանի է, որ դեռ մի օր առաջ ինձ յայտնեցին, որ տանելու են ինձ, բայց չասացին թէ ուր, այնպէս որ բոլոր ժամանակ եւ մինչեւ անգամ մինչեւ Դիլիջան, ես կարծում էի, որ աքսոր են ուղարկում: Դիլիջանում միայն երբ ճանա-

պարհը ծռւեց դէպի Երեւան, ինքս հասկացայ այդ: Երեւան տարան դնդապետ Կլիկով, ադիւտանդ (համհարզ) Գրեկով – երկուսն էլ սոսկալի մարդիկ. մէկը ալուէս, միւսը դազան: Բանտում 4–5 օր մնացի մինչ հարցաքննութեան տարան: Այդտեղ իմացայ, որ Դիլիջանի տղերքն եւս այստեղ են եւ որ նրանք են անւանել ինձ: Այդ տղերքը արդարացնում էին իրենց նրանով, որ խաբուել են: Դիլիջանում ասել են նրանց, որ նրանք խելօք արհեստաւոր մարդիկ են, որ իրենք էլ պիտին, թէ նրանք մեղաւոր չեն եւ որ իսկոյն կարձակուին հէնց որ գոյց տան իրենց գլխից հանողներին: Դիլիջանում առաջին քննութեան ժամանակ Արտաշէս Սիմոնեանց անունով մի տղայի այնտեղ դնացած Գրեկովը նոյնիսկ ապտակահարուում է, որպէսզի ամէն բան պարզ ասի: Երբ ինձ կանչեցին՝ նոյն քննութիւն սկսուեց: Իմ պատասխանները, չնայելով տղերանց տւած ցուցմունքներին, մնացին նոյնը, ինչ Ալէքսանդրապօլի խոստովանքից յետոյ էր: Ի միջի այլոց Գրեկովը յայտարարեց ինձ մի առթիւ. «Եթէ դուք հանդիսաւ չմնաք, մենք, որ անպատճառ տիրելու ենք Տաճկահայաստանը, կը վերացնենք ձեր լեզուն էլ, ձեր գրականութիւնն էլ, ձեր էջմիածինն էլ»:

Կլիկով – Ինչ էք սիրում դուք ձեր հայրենիքի մէջ:

– Իմ ազգը, իմ մայրենի լեզուն:

– Է՛հ ինչ լեզու, ձեր լեզուն՝ «Ծիծեռնակ, ծիծեռնակ». թողէք դրանք, միացէք մեզ եւ ապրեցէք իբր հզօր պետութեան անդամներ:

Բանտ

Բանտապետը մի թուրք է, տգէտ, անուսում, լեզուն փողոցներում միայն սովորած եւ Երեւանից դէն աշխարհ չտեսած: Այդ պաշտօնը ստացել է իբր ռուս-տաճկական պատերազմում մասնակցող (միլիցիայի մէջ է եղել): Ոչ մի պարտաճանաչութիւն. բանտարկեալներին վերաբերուում են ինչպէս չնների. ոչինչ չկար, որ իրեն թոյլ չտար բոլորի հասցէին. «Դեհ գործիր, դեհ լռիր, դու մարդ չես». անպրագէտ, օրինազանց: Բանտում՝ այնտեղ մնացի 11 ամիս ուղիղ. այդ բոլոր ժամանակ թէեւ ես ունէի բաւականաչափ դրամ տնից ուղարկւած՝ ոչ մի ան-

դամ չկարողացայ ինքս ինձ համար կերակուր պատրաստել կամ բերել տալ. ստիպված ուտում էի բանտի կերակուրը, որ ներկայացնում է միշտ միևնույն կերակուրը. եղան դլխի ջուրը, երբեմն միայն մսի կտորներ, որ անկարելի է ուտել. բոլոր ժամանակ մենակ. ստանում էինք մի «ունդակ» հաց օրական եւ այդչափ մսաջուր. տաք ջուր 2 անդամ թէյի համար. իմ վողով ունէի թէյ, շաքար եւ ծխախոտ միայն. պնողները միշտ դողնում էին. հինդ ֆ. փոխարէն դնում էին 2–3 ֆ. եւ դինը 5–10 կոպէկով աւել. ծխախոտը բացած թաշկինակի մէջ՝ կիսով չափ պակաս. թէյը նոյնպէս: Դիմել եմ բանտապետին, դիմել եմ ժանդարմներին, ոչինչ չէր յաջողւում: Դրսից պանիր անդամ չկարողացանք ունենալ. երբեմն ուղարկում էին ուտելիք իրենց տներից առացած մսի կամ պանրի կտորներ թիւրք քրէական յանցաւորները: Երեւանցի բանտարկեալների համար բերում էին մայրերը, բայց միայն կիրակի օրերն էին ընդունում, իսկ հանդարակ օրերը՝ երբեք կամ վերցնում, իրենք էին ուտում. կիրակի օրերը անդամ եթէ ուղարկում էին միւս ու հաւը, բրինձն էր միայն տեղ հասնում, կամ հաւի մի աննշան մասը: Ինձ հետ [պատահից] հետեւեալ դէպքը: Մայրս եկել էր յատկապէս Ալէքսանդրապոլից Երեւան ինձ տեսնելու համար.— (մօրս վրայ այնպէս էր ազդել, որ կուչ եկել, քանի տարով աւելի ծերացել էր. <...>) բերել էր բանտը կերակուր, խորոված, դաթա եւ այլն: Այս բոլորից հասաւ ինձ միայն չոր հացը, որ տուից ինձ Գրեկովը առելով. «Սա մնաց քեզ բաժին, մնացածը մենք կերանք»: Ուրեմն բանտի ծառայողների մէջ, նոյնիսկ ժանդարմների վարչութիւնը անում է միեւնոյնը: Ջմեռը չէին վառում: Սենեակները մենք էինք մաքրում, պարոշկանները նոյնպէս ինքներս էինք դուրս տանում: Ման գալու թողնում էին մի անդամ միայն, այն էլ 4–5 րոպէով՝ բացի կիրակի եւ անձրեւային օրերից, իսկ Հոկտեմբերի կէսից մինչ ապրիլի վերջերը՝ նոյնիսկ ամենեւին: Ջմեռը չէին վառում. ահագին քանակութեամբ փայտից, որ դնում էր, մեծ մասը ծախում էր յօդուտ բանտապետի:

<...>

Ժանդարմները մատնութիւնների եւ խոստովանութիւնների դրդելու համար հետեւեալ միջոցների էին դիմում.

1. Խոստանում էին աղատութիւն, փող (մէկէն 100 րուբլի), ոսկէ ժամացոյց եւ այլն:

2. Սպառնալիքներ – Սիբիր ուղարկելու եւ այլն:

3. Կեղծ վճիռների ընթերցում. կանչում են եւ կարդում վճիռներ. մէկին թէ 6 տարով տաժանակիր աշխատանքի է նա դատապարտուած. եկաւ բանտը լալով: Միւսին թէ չորս տարով աքսոր Սիբիր. եկաւ նոյնպէս լալով: Ինձ՝ «Ոչինչ նոր բան չունիք ասելու»:– Ինչ կարող եմ ասել. իմացածս ասել եմ: Գիտէ՞ք ձեզ ինչ է պատիժ նշանակուած: Ոչ: Ձեզ վճռուած է 4 տարով Սիբիր:– Եթէ արդէն վճռուած է, ապա ինչո՞ւ էիք նոր հարցնում՝ թէ չունիմ արդեօք ուրիշ ցուցմունքներ:– Մենք կարող ենք միջնորդել փոփոխելու:– Կարելի՞ է բողոքել այդ վճռի դէմ: Չէ կարելի:– Տեսնեմ վճիռը: Չէ կարելի, ես կը կարդամ, եթէ ուզում էք:– Ոչ, ուզում էք 14 տարով դատապարտեցէք:

Ես հասկացայ, որ կեղծ է. եկայ եւ բղաւեցի ընկերներիս, որ չվախենան:

Եւ այս բոլորը կատարում էր կապիտանը, եւ դատախազի օգնականը հաւասարապէս:

Վարչութեան կառավարիչ գնդապետը ներկայ չէր լինում այդպիսի անօրինական քննութիւնների ժամանակ: Նա էլ աշխատում էր համոզել, որ մենք սխալ ճանապարհի վրայ ենք:

– Նա դրդում էր մեզ գլխաւոր դեկավարների դէմ, որոնց ձեռքին մենք գործիք ենք իբր թէ:

– Նա պնդում էր, որ մեր ուզածը ներկայումս անիրագործելի է: Հայաստանին պէտք է տիրէ մեր կառավարութիւնը. դա էգուցւայ մեր գաւառն է եւ ձեր ուզածը երազ է:

– Դուք հակակառավարական ուղղութեան էք հետեւում, յոյսներդ դրած Անգլիայի վրայ: Անգլիան ոչինչ չի անի ձեզ համար եւ մենք թոյլ չենք տալ մի բան անել, քանի որ գիտենք, թէ որքան դէմ է մեզ Անգլիան: Դուք պէտք է դիմէիք միմիայն Ռուսաստանի օգնութեան եւ ինքներդ բաւականանայիք միմիայն խնդրելով: Ինքներս իմաց կը տանք ձեզ. եթէ չլսէք այժմ, մենք, ինչպէս փակեցինք ձեր դպրոցները, նոյնպէս էլ կը հալածենք ձեր գրականու-

թիւնը, եկեղեցին եւ այլն – եւ այն ժամանակ դուք լսելու կոչած կը լինէք: <...>

(Տե՛ս Բրիւսովոր Միքայէլեանի անտիպ նամակները, Եր., «Լուսակն», 2020, Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպուքեանի, էջ 293-299):

էջ 181, տ. 30. **Կուկունեանի դատ, Օլթիի, Իգդիրի խմբերի ջարդ թուրք զորքերի հետ –**

Կուկունեանի դատ – Սարգիս Մովսեսի Կուկունեան (Սարգիս Ա-վետիսեան, 1863-1913), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: Կուկունեանի խմբին՝ Արեւմտեան Հայաստան անցումից շատ չանցած երեք կողմից շրջապատում են թուրքական ուժերը, իսկ չորրորդ կողմից՝ ռուս սահմանապահները: Երեկոյեան թուրքերը նահանջում են Ալաշկերտ, իսկ խումբը որոշում է վերադառնալ ռուսական սահման: Նոյն գիշերի այդինները ռուսական 154-րդ գնդի զինուորները խմբի անդամների մի մասին ձերբակալում են, իսկ մյուս մասը, կռիւով ճանապարհ բացելով, հետանում է՝ խուսափելով ձերբակալութիւնից: Ցարական իշխանութիւնները խմբի անդամների հանդեպ ընդունում են խստագոյն վճիռներ՝ նրանց մեղադրելով «սպանութեան, ավազակութեան եւ իշխանութեանը դիմադրելու մէջ»: Երկու տարի տեւած նախաքննութենից հետո՝ 1893 թ. ապրիլի 7-ին Կարսում սկսւում է 43 ձերբակալվածների դատավարութիւնը: Սարգիս Կուկունեանը պատասխանատուում է 20 տարուա տաժանակիր աշխատանքի: 1895 թ. մարտի 1-ին բանտարկեալները շղթայակապ ուղարկւում են Սիբիր:

Օլթիի ջարդ – Ըստ «Դրոշակ» թերթի հաղորդագրութեան՝ «Հայ հեղափոխականների երկու խումբ, բաղկացած 61 հոգուց, որոնց թւում եւ մի հասակաւոր քահանա, մի բժիշկ, վիրաբոյժ, Մոսկուայի համալսարանի երկու ուսանող եւ բաւականաչափ ուրիշ ինտելիգենտ անձինք, հուլիս 15/28ի գիշերը կռիւ են բռնում Ջարդանիս գիւղի ավերակների մոտ, Էրզրումի վիլայեթում, թուրք սահմանապահ զինուորների եւ քրդերի հետ: Հայդուկները՝ բաժանված երկու խմբի, մի վիրաւոր տալով եւ բազմաթիւ զոհեր առնելով թշնամուց՝ կռւում են մինչեւ կեսօր:

Այդ ժամանակ Օլթիի չրջանի ռուսական սահմանապլխից կողակ-ներ, պլաստուններ եւ սահմանապահ զինվորներ, թվով ավելի քան 300 հոգի, հրամանատար Բիկովի եւ մի քանի օֆիցերների առաջնոր-դությամբ, մտնում են թյուրքաց հողը, չրջապատում հայկական խումբը եւ տեղում խիստ կրակ: Հայերը՝ չնայելով իրենց հաչող դիր-քերին, ոչ մի գնդակ չեն արձակում ռուսների վրա եւ շարունակում են կռիվը թյուրքերի հետ: Քիչ անցած ուղարկում են մի պատգամա-վոր ռուսների մոտ եւ բացատրելով իրենց կռվի նպատակը՝ խնդրում են դադարեցնել հրացանաձգությունը: Պատգամավորը կալանավոր-վում է: Ուղարկվում է երկրորդը: Նրա հետ՝ միեւնույն վարմունքը: Ապա քահանան՝ մի ձեռքին խաչ, մյուսում սպիտակ դրոշակ, դիմում է դեպի ռուս զորքերը, բայց դեռ տեղ չհասած՝ ստորաքար գնդակա-հար է լինում ռուսներից: Ի վերջո ինքը խմբապետը իր ընկերներով սպիտակ դրոշակը պարզած, իրրեւ վերջին փորձ, շարժվում է դեպի ռուսները, բայց սրանք նրան էլ գնդակահար են անում ընկերների հետ: Մնայածները ստիպված են լինում փախուստ տալ: Ռուսաց կո-ղակները անպատմելի անգթություններ են կատարում» («Դրոշակ», 1904, թիվ 8, էջ 108-109):

ՀՅԴ Կարսի Կեդրոնական Կոմիտեի որոշումով, մի քանի շաբաթ անց, 1904 թ. օգոստոս 31-ին, Օլթիում Բեկովը ահաբեկվեց դաշնակ-ցական ահաբեկիչ Համո Ջանփոլատյանի արձակած աորճանակի երեք փամփուշտներով:

էջ 181, տ. 31. ***Գալիցին*** – Տե՛ս էջ 98, տ. 22 ծանոթագրությունը:

էջ 183, տ. 7. ***Կիպրոսի դաշնագրով ինքը վերցրեց*** – Կիպրոսի դաշնագիրը կնքվել է Մեծ Բրիտանիայի և Օսմանյան Թուրքիայի միջև 1878 թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում: Ըստ այդ դաշնագրի 1-ին հոդվածի. «Այն դեպքում, երբ Ռուսաստանը իր ձեռքում պահե Բա-թումը, Արտահանը կամ Կարսը և կամ այդ վայրերից մեկնումեկը, կամ եթե Ռուսաստանը փորձ անե երբևե դրավելու ուրիշ մաս Ն. Մ. Սուլթանի ասիապատկան հողերից՝ որոշված Հաշտության վերջնական դաշնագրով, Անգլիան պարտավորվում է միանալ Ն. Մ. Սուլթանի հետ, զինու զորությամբ պաշտպանելու հիշեալ հողերը: Դրա փոխա-

րեն՝ Ն. Մ. Սուլթանը Անգլիային խոստանում է մոցնել այն անհրաժեշտ բարենորոգումները, որ հետագային կորոշվին երկու պետության կողմից և որոնք վերաբերում են վարչության պատշաճ կազմակերպության ու հիշատակված հողամասերում ապրող Բ. Դրան քրիստոնյա և այլ հպատակների պաշտպանության: Եվ որպեսզի Անգլիային հնարավորություն տրվի իր պարտականությունները կատարելու, Ն. Մ. Սուլթանը համաձայնում է, բացի դրանից, Կիպրոս կղզին Անգլիո գրավման և կառավարման ձգել» (Տե՛ս **Արտաշես Աբեղյան**, Միջազգային դաշնագրերներ Հայաստանի մասին, Վեմ, 1937, թիվ 1, էջ 13):

Էջ 183, տ. 10-11. *16-րդ հոդվածի դեմ՝ Սան Ստեֆանոյի դաշնագիր* – Տե՛ս էջ 42, տ. 8 ծանոթագրությունը:

Էջ 183, տ. 12-13. *Բագուի արևելյան ժողովուրդների ժողովը՝ Զինովևի և Էնվեր փաշայի նախագահությամբ* – Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը տեղի է ունեցել 1920 թվականի սեպտեմբերի 1-8-ին, Բաքվում, Կոմունիստական ինտերնացիոնալի որոշմամբ:

Համագումարին մասնակցել են Արևելքի 37 ազգեր ներկայացնող 2045 պատգամավորներ, ինչպես նաև կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի, Եվրոպայի մի շարք կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների, երիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալի պատվիրակությունները: Համագումարի աշխատանքներին մասնակցել է նաև Հայաստանի 101 պատգամավոր: Համագումարը լսում և քննարկում է Կոմինտերնի գործկոմի նախագահ Գրիգորի Զինովևի «Կոմինտերնը և Արևելքի ժողովուրդների խնդիրները», Կոմինտերնի գործկոմի քարտուղար Կ. Ռադեկի «Միջազգային իրադրության և Արևելքի աշխատավոր զանգվածների խնդիրների մասին», Կոմինտերնի գործկոմի անդամ Մ. Պավլովիչի «Ազգային և գաղութային հարցերի մասին» և այլ զեկուցումներ: Արծարծված հարցերի վերաբերյալ ընդունվել են բանաձևեր ու որոշումներ, կոչ (մանիֆեստ)՝ ուղղված Արևելքի ժողովուրդներին, ուղերձ՝ Եվրոպայի, Ամերիկայի, Ճապոնիայի սոցիալիստներին:

Համագումարին (ղեկավարության նախաձեռնությամբ) հրավիրվել է նաև թուրք քաղաքական գործիչ, Ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Էնվեր փաշան, որը ցանկանում էր հանդես գալ Մարոկկոյի, Ալժիրի, Թունիսի, Եգիպտոսի և այլ երկրների ճնշված ժողովուրդների անունից՝ պահանջելով իր ղեկավարությամբ ստեղծել «իսլամական բանակ»՝ իբրև թե ազատագրելու Արևելքի ժողովուրդներին իմպերիալիզմի լծից: Էնվեր փաշային չհաջողվեց մասնակցել համագումարի նիստերին, սակայն նրա հայտարարությունն ընթերցվեց: Դրանում Էնվերը աշխատում էր իրենից հեռացնել ցեղասպանության մեղավորությունը, ինչպես նաև մերժում էր Անդրկովկասի դեմ թուրքական նվաճողական գործողությունները, գովաբանում թուրք կառավարողների քաղաքականությունը «ազգերի ինքնորոշման և հավասարության» հարցում: Էնվերի հայտարարությունը համագումարում չարժանացավ պաշտպանության, ընդունված բանաձևը թուրք կառավարողների և հատկապես Էնվերի քաղաքականության դատապարտումն էր առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Համագումարի մի շարք պատգամավորների ելույթներում քննադատվեցին երիտթուրքերի և քեմալականների նպատակները, որոշակիորեն նշվեց, որ քեմալական շարժումը ոչ ժողովրդական է և ոչ էլ կոմունիստական: Համագումարին Էնվեր փաշայի հրավիրումը առաջացրեց Եվրոպայի մի շարք երկրների կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների խիստ տարակուսանքը: Ինտերնացիոնալի պարագլուխներից Ժան Լուրեն սխալ է համարել համագումար հրավիրել մեկին, «որի ձեռքերին միլիոնավոր հայերի արյուն կա...»:

ԷՀ 183, տ. 29. ***անեկսիայի և առանց կոտրպուեցիայի*** – Անեքսիա (լատիներեն annexio - annexus «կցված») – միջազգային իրավունքում մեկ պետության կողմից մեկ այլ պետության տարածքի կամ դրա մի մասի միակողմանի բռնակցում: Կոնտրիբուցիա (փոխհատուցում, լատիներեն contributio – «ընդհանուր ներդրում, հանրային դրամահավաք») պարտված պետության պարտադրված վճարումներ՝ հօգուտ հաղթող պետության:

243. <ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԱԶԳՈՎԻՆ...>
(ԷՀ 184)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 33-IIլր, տետր՝ «Հայկական հարցի մասին» վերնագրով, թերթ 7:

Տպագրվում է առաջին անգամ:

244. <ՀԱՑԱՍՏԱՆ ԵՐԿԻՐԸ ՀԱՅԵՐԻՑ...>
(ԷՀ 184–186)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 33-IIլր, տետր՝ «Հայկական հարցի մասին» վերնագրով, թերթ 7բ–8:

Տպագրվում է առաջին անգամ:

ԷՀ 186, տ. 10. ***Կարա-Բեքիրին*** – Քյազըմ Կարաբեքիր (1882–1948), թուրք գեներալ, օսմանյան ռազմական հանցագործ: 1918–1919 թ. եղել է 1-ին, 2-րդ, 15-րդ թուրքական Կովկասյան բանակային կորպուսների հրամանատար, մասնակցել Երզնկայի, Էրզրումի և Կարսի գրավմանը, հետագայում՝ Արևելյան ռազմաճակատի զորքերի հրամանատար: 1920 թ. սեպտեմբերին թուրքական զորքերը Կարաբեքիրի գլխավորությամբ ներխուժել են Արևելյան Հայաստան:

Կարաբեքիրը հրաժարվել է ճանաչել Հայաստանի հեղկոմի 1921 թվականի Մոսկովյան պայմանագիրը: Գլխավորել է թուրքական պատվիրակությունները Ալեքսանդրապոլի (1920 թ.) և Կարսի (1921 թ.) բանակցություններում: Կարաբեքիրի ցուցումներով Տրապիզոնում սպանվել են Թուրքիայի կոմկուսի ղեկավար գործիչները (1921 թ., հունվար):

ԷՀ 186, տ. 12. ***Սան-Ռեմո-Ռապալլո, Լոզան*** – Սան Ռեմոյի կոնֆերանս – Անտանտի Գերագույն խորհրդի նիստը Սան Ռեմոյում (Իտալիա), որը տևել է ունեցել 1920 թ. ապրիլի 19-ից 26-ը:

Կոնֆերանսը քննարկել է նաև Հայաստանի հարցը: Սան Ռեմոյի կոնֆերանսը պիտի է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին Հայաստա-

նի մանդատը ստանձնելու և հանդես գալու որպես միջնորդ նրա վերջնական սահմանների ճշտման հարցում: Որոշվել է Թուրքիայի հետ պայմանագրի՝ Հայաստանի վերաբերյալ մասում արձանագրել, որ Թուրքիան, Հայաստանը և մյուս պայմանավորվող կողմերը համաձայն են դիմել ԱՄՆ նախագահի միջնորդությանը Թուրքիայի և Հայաստանի սահմանների (Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում) հարցով և ընդունել այդ առթիվ նրա որոշումը, ինչպես նաև՝ որևէ պայման, որ նա կառաջարկի Հայաստանի դեպի ծով ելք ունենալու մասին:

Ռապալլոյի պայմանագիր – պայմանագիր ՌՍՖՍՀ-ի և Գերմանիայի միջև, ստորագրվել է 1922 թվականի ապրիլի 16-ին, Ռապալլոյում (Ջենովայի մոտ, Իտալիա), Ջենովայի կոնֆերանսի ժամանակ: Ռապալլոյի պայմանագրով ամբողջ ծավալով անհապաղ վերականգնվում էին դիվանագիտական հարաբերությունները կողմերի միջև, որոնք փոխադարձ համաձայնությամբ հրաժարվում էին ռազմական ծախսերի և վնասների հատուցումից: Ռապալլոյի պայմանագիրը տարածվում էր սովետական մյուս հանրապետությունների (այդ թվում և Հայկական ՍՍՀ) վրա:

Հայաստանի սևծովյան ելքի հեռանկարը իր հնարավոր բոլոր տարբերակներով ձախողվել է, ինչը պայմանավորված էր Անտանտի տերությունների, Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև շահերի սուր հակասություններով, ինչպես նաև այս բոլոր առաջարկների հանդեպ Վրաստանի ցուցաբերած խիստ ընդդիմությամբ:

Լոզանի կոնֆերանս – միջազգային կոնֆերանս Մերձավոր Արևելքի հարցով՝ Թուրքիայի դեմ անգլո-հունական արշավանքի (1919-1922) ձախողումից հետո: Տեղի է ունեցել 1922 թ. նոյեմբերի 20-ից 1923 թ. հուլիսի 24-ը, Լոզանում (Շվեյցարիա): Մասնակցել են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ճապոնիան, Ռումինիան, Հարավսլավիան, Թուրքիան, ինչպես նաև՝ դիտորդի կարգավիճակով ԱՄՆ-ը: Խորհրդային (ռուս-ուկրաինական-վրացական) միացյալ պատվիրակությունը մասնակցել է միայն սևծովյան նեղուցների հարցի քննարկմանը: Լոզանում ստորագրված

հաշտության պայմանագրով հաստատվեցին Թուրքիայի արդի սահմանները:

Էջ 186, տ. 14-15. *Վորոշիլով – Վորոշիլով Կլիմենտ Եֆրեմովիչ (1881-1969)* – ռուս հեղափոխական, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի մասնակից, խորհրդային պետական, կուսակցական և ռազմական գործիչ:

Էջ 186, տ. 16-17. *իսկ Քեմալը թուրք կոմունիստներին ծովն էր թափում...* – 1920 թ. սեպտեմբերի 10-ին Թուրքիայի կոմունիստների առաջին ընդհանուր համագումարում Թուրքիայի կոմունիստական խմբերը միավորվեցին և հիմնեցին Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը, որի նախագահ ընտրվեց Մուստաֆա Սուբհին: Համագումարից հետո Մուստաֆա Սուբհին իր ընկերների հետ մեկնեց Անատոլիա՝ Թուրքիայում հեղափոխության համար անհրաժեշտ հող ու պայմաններ նախապատրաստելու: Սակայն Կարսում և Էրզրումում Մուստաֆա Քեմալի կողմնակիցները հալածանքներ հարուցեցին նրանց նկատմամբ և թուրք կոմունիստները որոշեցին Տրապիզոնով վերադառնալ Բաքու: 1921 թ. հունվարի 28-ին մի խումբ թուրք կոմունիստներ Սուբհիի գլխավորությամբ նավ նստեցին՝ վերադառնալու համար: Հունվարի 29-ի գիշերը նավի նավապետը և անձնակազմը Մուստաֆա Սուբհիին և նրա բոլոր ընկերներին մորթեցին և ծովը նետեցին (տե՛ս **Սիմոն Վրացյան**, Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, Պեյրութ, 1953, էջ 30):

ՈՒՍՏԱ ԿԱՐՈՆ ԳՑՈՒՄՐԻՈՒՄ

ԳՑՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ

(Էջ 189-238)

Գրել է 1921 թ. Վիննաևիկում: Առաջին անգամ «Կապիտան Ղազարը» վերնագրով տպագրվել է՝ «Հայրենիք» ամսագրում (1923, ապրիլ,

N 6, էջ), ապա, մեկ հատվածը փոփոխություններով՝ «Ընտիր երկեր», հ. II, 1940 և «Ընտիր երկեր», մեկհատորյակ, 1948: Այնուհետև «Հայրենիք»-ի տեքստը համբագրված (հատկապես վերջին ենթագլուխը)՝ «Երկերի ժողովածու», հ. III, 1951, էջ 303–323, որտեղից և արտատպվում է:

1951 թ. հրատարակության մեջ հեղինակը ավելացրել է հետևյալ ծանոթագրությունը. «Ուստա Կարոն, երբ Գյումրի էր, լսեց ծերունի կապիտան Ղազարի քաջություննների մասին, փափագ հայտնեց ծանոթանալու նրա հետ, լսել նրա բերնից իր արկածների պատմությունները: Երեկոյան դեմ դարբին ուստա Մացակը առաջնորդեց նրան կապիտան Ղազարի հաճախած սրճարանը»:

«Հայրենիքի» բնագրի համեմատությամբ տարբերությունները նշանակել ենք D տառով:

Էջ 190, տ. 8–15. ***Զինվորիս երգերը, եղբա՛րք, լսեցեք ... կասեն՝ մնաս բարև*** – Երգի թարգմանության հեղինակը Գևորգ Դոդոխյանցն է: Իսահակյանը որոշ համբագրումներ է արել Դոդոխյանի բնագրում (մտածեցեք – ճանաչեցեք, կտան քեզ պարգև – կտան մեծ պարգև), ինչպես նաև բաց է թողել երգի վերջին երկու տողերը.

Ուր դնամ ես մենակ աչխարքիս վրան,
Ահա՛ քեզ լավ վաստակ քսան մեկ տարվան:

(Տե՛ս Մուղայք Հայաստանի, Նոր երգարան, ժողովեց Աղէքսանդր Խուդեանց, ի լոյս ընծայեաց Ա. Շահազիզեանց-Կամսարական, Տփխիս, 1873, էջ 42):

Էջ 191, տ. 19. ***Բեյբութով – Վասիլ (Բարսեղ) Հովսեփի Բեհբութով*** (1791–1858) – իշխան, հետևակազորի գեներալ (1856), հայազգի զինվորական: Բեհբությանների իշխանական տոհմի ներկայացուցիչ:

Էջ 191, տ. 19. ***Շամիլ*** (1797–1871) – Դաղստանում ստեղծված ռազմա-աստվածապետական պետության ղեկավար՝ երրորդ իմամը (1834 թվականից):

էջ 191, տ. 20. *Վարշավայի կռիվները* – Լեհական թագավորությունում, Հյուսիսարևմտյան երկրամասում և Վոլինի պատմական տարածքներում 1863-1864 թթ. ապստամբությունը:

Ապստամբությունը նպատակ ուներ վերականգնել Համագործակցությունը 1772 թ. սահմաններում: Այն սկսվել է 1863 թ. հունվարի 10-ին (22) և շարունակվել մինչև 1864 թ. հունիսի 6-ը (18): Աննշան խմբերը դործեցին մինչև 1864 թ. հոկտեմբերի 22-ը (նոյեմբերի 3), իսկ ապստամբների վերջին դաշտային հրամանատար պիներալ Ստանիսլավ Բժուսկան ձերբակալվեց միայն 1865 թ. ապրիլին: Հյուսիս-արևմտյան տարածքում գործող վերջին մեծ ապստամբ վասիլի Կոնոպացկին հայտնաբերվեց կանոնավոր զորքերի կողմից և գրավվեց միայն 1866 թ. հոկտեմբերին: Լեհաստանի Թագավորությունում դործող վերջին մեծ ապստամբ Ստեֆան Կարչմարչիկին հաջողվեց պահպանել մինչև 1872 թ. հունիսը: Այն ավարտվեց ապստամբների պարտությամբ եւ Հանգնեցրեց ռուսական իշխանությունների հակալեհական քաղաքականության ակտիվացմանը:

էջ 194, տ. 1. *Հայկ Նահապետի Խոռ որդուց* – Աղբյուրը խորենացու Պատմությունն է. «Իսկ Խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ պչէնս իւր. եւ ի նմանէ ձգնալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց, արք քաջք եւ անուանիք, որպէս եւ որք առ մեսք են այժմ երեւելիք» (Ա, Գլ. ԺԲ):

էջ 194, տ. 2-3. *Խոռխոռունի Մալխազը նրա թիկնապահն եղավ* – Աղբյուրը խորենացու Պատմությունն է. «Եւ թիկնապահս իւր, պինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս եւ քաջս, նիզակաւորս եւ սուսերաւորս. եւ դլուխ նահապետութեանն նոցա զՄալխազ ոմն այր բարի եւ արուեստ: Բայց անուն ազգին զնախնականն պահէ» (Բ, Գլ. Է):

էջ 194, տ. 6-7. *Նրանց սեփական Խոռանց մեծ գյուղը* – Հորանց (Խոռանց, Խոռյանց, Խորանիս, Խորանս, Խորանց) – գյուղ Արևմտյան Հայաստանում: Գտնվում էր Վանա լճի հյուսիսային ափից 2-3 կմ հեռավորության վրա, Արծկե քաղաքից 18-19 կմ արևելք:

Էջ 197, տ. 4. ***Ղազարոսի պես հարություն առավ*** – Տե՛ս Ավետարան ըստ Յովհաննու, գլ. ԺԱ:

Էջ 197, տ. 10. ***Ջանփոլադ*** = երկաթե մարմին:

Էջ 198, տ. 21. ***Իմամ Շամիլի*** – Տե՛ս Էջ 191, տ. 19 ծանոթագրությունը:

Էջ 200, տ. 3-4. ***Երբ ռուսները 1828-1829 թվերին արշավեցին թուրքերի վրա*** – Ռուս-թուրքական պատերազմ (1828-1829), ռուսական բանակը, Պասկևիչի գլխավորությամբ, անցավ Ախուրյան գետը և շարժվեց դեպի Կարս: Ռուսներին հաջողվեց գրոհով վերցնել ռազմական կարևոր նշանակություն ունեցող այդ հենակետը: Ռուսների ճեռքն անցավ մեծաքանակ ռազմամթերք, իսկ գերիների թիվը անցնում էր 1300-ից: Կարևոր այդ հաղթանակից հետո գրավում են Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը: Ռուսական մի զորամաս, գեներալ Ճավճավաձեի գլխավորությամբ, գրավում է Բայազետը և Ալաշկերտը: Ռուսական զորքերին հաջողվում է կասեցնել թուրքերի գրոհները, անցնել հարձակման և գրավել Էրզրումը՝ Թուրքիայի ռազմական ամենակարևոր կենտրոնը: Շարունակելով հաղթարշավը՝ ռուսական զորքերը գրավում են Օլթին, Խնուսը, Մուշը և այլ բնակավայրեր:

Պատերազմի արդյունքում Ռուսաստանին անցավ Սև ծովի արևելյան ափի մեծ մասը (ներառյալ Անապա, Սուջուկ-Կալե, Սուխում, Փոթիի կարևորագույն նավահանգիստը) և Դանուբի դելտան:

Օսմանյան կայսրությունը ճանաչեց Թուրքմենչայի հաշտության պայմանագրով Պարսկաստանի կողմից փոխանցված Քարթլի-Կախեթի, Իմերեթիայի, Մենգրելիայի, Գուրիայի թագավորության, ինչպես նաև Արևելյան Հայաստանի որոշ մասերի (Երևանի և Նախիջևանի խանությունները) փոխանցումը Ռուսաստանին:

Էջ 201, տ. 5. ***ազնվականների Ոսկե Գրքի*** – Ազնվականական տոհմաբանության գիրքը վաստաթուղթ էր, որը պաշտոնականացնում էր Ռուսական Կայսրության յուրաքանչյուր նահանգի բնակչության ազնվական մասի արտոնությունները: Նման գիրք կազմելն ու պահպանելը, որում գրանցվել են տվյալ գավառի բոլոր ազնվական տոհմերը, սահմանվել է Եկատերինա II-ի կողմից 1785 թվականի ապրիլի 21-ին:

Ըստ այդ կանոնների 4-րդ կետի՝ աղնվականության արտոնություններից օգտվում էին նաև Ռուսաստան եկած այն օտարերկրացիները, որոնք արդեն իսկ ունեին ազնվական ծագում:

Էջ 202, տ. 10-11. *Վաղարշակ արքայի թիկնապահ Մալխազի* – Տե՛ս Էջ 194, տ. 2-3 ծանոթագրությունը:

Էջ 210, տ. 17. *Նիկոլայ Պաբլովիչի* – Նիկոլայ I Պավլովիչ (1796-1855) – Ռուսական կայսրության ցար, Ֆինլանդիայի մեծ իշխան, Լեհաստանի թագավոր: Ռոմանովների հարստության ներկայացուցիչ: Պավել I-ի և Մարիա Ֆյոդորովնայի երրորդ զավակը, Ալեքսանդր I ցարի հարազատ եղբայրը, Ալեքսանդր II-ի հայրը:

Էջ 211, տ. 6. *Վասիլ (Բարսեղ) Հովսեփի Բեհբութով* (Վասիլ Բեհբության, 1791-1858) – իշխան, ցարական բանակի գեներալ, Բեհբության իշխանական տոհմի ներկայացուցիչ: Մասնակցել է 1806-1812, 1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմներին Կովկասյան և Ղրիմի ճակատներում:

Էջ 217, տ. 4. *Զռիխլուի կամուրջ* – կամուրջ Շիրակի մարզի Զրավի գյուղում:

Էջ 224, տ. 14-18. *Նապոլեոն մեծն էլ ... ընկավ մեռավ* – 1816 թ. հոկտեմբերից Նապոլեոնի առողջական վիճակն սկսել է վատանալ պսակիլ կնճռակերպ վարիլու և մշտապես վատ տրամադրություն ունենալու պատճառով: 1817 թ. հոկտեմբերին Նապոլեոնի բժիշկ Էդվարդ Բարի Օ'Միրան նրա մոտ ախտորոշել է հեպատիտ: Նապոլեոնը մահացել է 1821 թ. մայիսի 5-ին:

Էջ 225, տ. 24. *Դարգո* – գյուղ Զնչենիայում:

Էջ 225, տ. 24. *Սալավաթ* – լեռ. Կովկասյան լեռնաշղթայում:

Էջ 231, տ. 13-15. *ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ... ՓՈԽԱՐՔԱՑԻ ՀԵՏ* – «Հայրենիքում» այս ենթագլուխը բաժանված է երկու մասի «Կապիտան Ղազարի ամուսնական կյանքը և լեհերի ապստամբությունը» և «Ռուս-թրքական պատերազմը և Ղազար աղայի տեսակցությունը փոխարքայի հետ» ենթավերնագրերով (տե՛ս «Հայրենիք», 1923, թիվ 6, էջ 15-19): Վերահրատարակելով (ԵԺ, 1951, հ. 3, էջ 319-323)՝ Իսահակյանը բնագրից հանել է լեհերի ապստամբությունը ճնշելու և կա-

պետան Ղազարի թոշակը կիսով չափ կրճատելու դրվագները՝ միացնելով այս երկու ենթապլուխները: Այս փոփոխության արդյունքում հեղինակը լեզվաոճական և կառուցվածքային մի շարք վերադասավորումներ է կատարել պատումի մեջ: Գլխի վերջին ենթապլուխների՝ «Հայրենիքի» բնագիրը սույն հրատարակության մեջ ներկայացրել ենք որպես բնագրային տարբերակ (տե՛ս սույն հրատարակությունը, էջ 239-248):

Էջ 233, տ. 7. ***«Եկեսցէ»*** – երեկոյան աղոթք, որ կատարվում է երեկոյան ժամերգությունից հետո, սովորաբար տներում:

Էջ 235, տ. 6-7. ***երբ նորից ռուս և թուրք իրար դեմ ելան, 1877 թվին*** – Նկատի ունի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Տե՛ս նաև էջ 180, տ. 28 ծանոթագրությունը:

Էջ 236, տ. 7. ***Լոռիս-Մելիքովին – Կոմս Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքով*** (նաև՝ Միքայել Լոռու Մելիքյան, 1824–1888) – Ռուսաստանի Կայսրության ռազմական և պետական գործիչ, գեներալ-համհարզ, հեծելազորի գեներալ, Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ (1879 թվականից), Կովկասի փոխարքայի պաշտոնակատար (1880), Ռուսաստանի վարչապետ-դիկտատոր (1880-1881), Ռուսաստանի ներքին գործերի նախարար (1881), Ռուսաստանի Գիտությունների կայսերական ակադեմիայի ակադեմիկոս (1880): Ծնվել է հայ ազնվական (մելիքական) ընտանիքում, Թիֆլիս քաղաքում: Կրթությունը ստացել է նախ Թիֆլիսում՝ ավարտելով Ներսիսյան դպրոցը, ապա Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում, նախ՝ Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանում, ապա՝ հեծելազորի յունկերների դպրոցում:

Էջ 236, տ. 17. ***Մուխթար փաշան*** – **Ահմեդ Մուխթար փաշա** (1832-1919) – Մուշիր և Օսմանյան կայսրության մեծ վեզիր: 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ղեկավարել է մարտերը Կովկասյան ռազմաճակատում՝ Էրզրումի շրջանում:

Էջ 236, տ. 18. ***գեներալ Գեյմանին*** – **Վասիլի Ալեքսանդրովիչ Գեյման** (1823-1878) – ռուս գեներալ, Կովկասի դրավման և 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի մասնակից:

<«ԳՑՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ» ԳԼԽԻ ՎԵՐՋԻՆ ԵՆԹԱԳԼԽԻ ԲՆԱԳՐԱՑԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ>

ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿՑԱՆՔԸ ԵՎ ԼԵՀԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՑՈՒՆԸ

(Էջ 239-248)

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», 1923, թիվ 6, էջ 15-19, որտեղից էլ արտատպվում է:

Էջ 241, տ. 12. ***լեհական ապստամբությունը*** – Տե՛ս էջ 191, տ. 20 ծանոթագրությունը:

Էջ 245, տ. 28. ***Մուխթար փաշան*** – Տե՛ս էջ 236, տ. 17 ծանոթագրությունը:

Էջ 245, տ. 29. ***գեներալ Գեյմանին*** – Տե՛ս էջ 236, տ. 18 ծանոթագրությունը:

<«ԳՑՈՒՄՐԵՑԻ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԸ

(Էջ 249-251)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, տետր՝ «Ուստա Կարոն Գյումբլուում» վերտառությամբ, էջ 1-2:

Տպագրվում է առաջին անգամ:

2. ՂԱԶԱՐ-ԱՂԱՆ

(Էջ 251-252)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, տետր՝ «Ուստա Կարոն Գյումբլուում» վերտառությամբ, էջ 9:

Տպագրվում է առաջին անգամ:

3. ՈՒՍՏԱՆ ԳՑՈՒՄՐԻ

(էջ 252-254)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 327-II, թերթ 37:
Տպագրվում է առաջին անգամ:

4. ՈՒՍՏԱՆ ԿԱՊԻՏԱՆ ՂԱԶԱՐԻ ՄՈՏ

(էջ 254)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 431-II, թերթ 39:
Տպագրվում է առաջին անգամ:

ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

(էջ 255-271)

Երկու հատվածական ինքնագրեր պահվում են ԳԱԹ, ԻՓ 98-I և ԻՓ, 493-II, և ևս երկու հատվածական ինքնագիր ԳԱԹ, ԻՓ, 327-II (թերթ 10, 11) գույքահամարների տակ: Այս չորս հատվածական ինքնագրերը նույն ձեռագրի հատվածներ են, ընդ որում ԻՓ, 327-II-ի ինքնագիրը (թերթ 11) անմիջական շարունակությունն է ԻՓ, 493-II-ի ինքնագրի (թերթ 3), իսկ ԳԱԹ, ԻՓ, 327-II 10-րդ թերթը բնագրի վերջին պարբերությունն է:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», 1923, նոյեմբեր, N 11, էջ 3-7, առանց հեղինակային հղման, որ այս բնագիրը «Ուստա Կարո» վեպի գլուխներից է: ԳԱԹ, ԻՓ 2172-II գույքահամարի տակ պահվում է «Հայրենիքի» թերթոնը՝ հեղինակային ուղղումներով: Հետագայում 1925 թ. Վահան Նավասարդյանին Վենետիկից գրած հուլիսի 21-ի նամակում Իսահակյանը հավաստել է. «Իմացած եղիր, որ «Կապիտան Ղազար», «Մելքոն վարժապետ» չմշակված գլուխներ են «Ուստա Կարո»ից (տե՛ս ԵԺ 14 հատորով, հ. 14, Եր., 2021, էջ 111):

Ջնայած հեղինակային այս հղմանը՝ այս բնագիրը, որպես առանձին ալատմվածք, չնտեղվել է սուլն ակադեմիական հրատարակութլան 6-րդ հատորում (տե՛ս ԵԺ 14 հատորով, հ. 6, եր., 2019, էջ 97-108, ծանոթ.՝ էջ 775-776): ԳԱԹ, Ի֎, 493-II հատվածական բնագրում (թերթ 1) գրառված է հեղինակի հետևյալ ծանոթագրութլյունը.

«Ծանոթ<ագրութլյուն>. Հեղինակը [նկարագրում է Մելքոն վարժապետին այն] Մելքոն վարժապետին 55 տարեկան հասակի մեջ է ներկայացնում, որովհետև այդ ժամանակ [պատիվ] բավատ ունեցավ նրա հետ ծանոթանալու»:

Հատվածական ինքնագրերի բնագրային տարբերութլյունները տրվում են տողատակին՝ ըստ գուլքահամարների:

Տպագրվում է հեղինակային ուղղումներով օրինակից:

էջ 256, տ. 3-4. *երբ ռուսաց պետութլյունը գոցեց հայկական դպրոցները* — Տե՛ս էջ 98, տ. 22 ծանոթագրութլյունը:

էջ 265, տ. 9. **ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ «ՄՏԱԾ ՄԱՏՑԱՆԻՑ»** — Այս հատվածը Իսահակյանը Ռուբեն Դարբինյանին է ուղարկել 1923 թ. սեպտեմբերի 24-ին՝ գրելով. «Ուղարկում եմ «Մելքոն վարժապետ»ի համար այս կտորները, որ իր տեղին հարմարցնես: Ուզում եմ վարժապետի մտքերի թիվը հասցնել 100ի, բայց միշտ որոճալով լավը չինել: Հիմա, երբ դա տպվի, կտեսնեմ թուլլ կողմերը: Զարմանալին այն է ինձ համար, որ ես նյութերիս տպվելուց հետո տեսնում եմ նրա թերութլյունները, կարծես ուրիշ բան է դառնում, մի այլ օբյեկտ, ինձնից հեռու, ուրիշից գրված: Այդպիսով բոլոր տպվածներս սրբագրում եմ: Ուրեմն, «Մելքոնի» տպվելուց հետո, մտքերս կմաղեմ և ժամանակի ընթացքում կփոխարինեմ ավելի հաջող մտքերով» (ԵԺ 14 հատորով, հ. 13, էջ 508): «Ուստա Կարոյի» արխիվում նման մտքերի երեք մեծ ցանկ է պահպանվել, որոնց մի մասը ներառված է Մելքոն վարժապետի «Մտաց մատյանում», մնացածները օգտագործված են վեպի այլևայլ գլուխներում, ինչպես նաև գրողի արձակում ընդհանրապես:

էջ 266, տ. 15. *Երբ Հիսուս ասավ սիրիր թշնամուն* — Տե՛ս Մատթ. ե 44:

<«ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՄՈՏ
(Էջ 272-273)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 327-II, տետր՝ «Ուստա Կարոն Գյումրիում» վերնագրով, էջ 4:

Ծրագրային այս գրառումը, ըստ հեղինակի մտահղացման, պիտի մչակվեր որպես չարունակություն «Մելքոն վարժապետը» գլխի: Դա է վկայում Իսահակյանը հղումը. «Առաջ կենսագրականը, այն ամենը, ինչ որ գրել եմ»: Գրողն այստեղ, անշուշտ, նկատի ունի «Հայրենիք»-ի 1923 թ. 11-րդ համարի հրապարակումը:

Տպագրվում է առաջին անգամ:

2. ՈՒՍՏԱՆ ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՄՈՏ
(Էջ 273-274)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 327-II, թերթ 27:
Տպագրվում է առաջին անգամ:

3. ՈՒՍՏԱՆ ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՄՈՏ
(Էջ 274)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 327-II, թերթ 40:
Տպագրվում է առաջին անգամ:

4. <ՄՈՌԱՑԱ...>
(Էջ 274-275)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 493-II, թերթ 2:
Տպագրվում է առաջին անգամ:

5. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ ԵՎ ԿԱՐՈՆ
(Էջ 275)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 14:
Տպագրվում է առաջին անգամ:

6. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏ
(Էջ 275-276)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 10:
Տպագրվում է առաջին անգամ:

7. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ ԵՎ ՎԱՐՊԵՏ ՍԻՄՈՆԸ
(Էջ 276)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 21:
Տպագրվում է առաջին անգամ:

8. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ
(Էջ 276)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 23:
Տպագրվում է առաջին անգամ:

9. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ (ուղղումներ)
(Էջ 276-278)

Ինքնապիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 20:
Տպագրվում է առաջին անգամ:

10. ՄԵԼՔՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԸ

(Էջ 278)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 447-II, թերթ 14:
Տպագրվում է առաջին անգամ:

11. ԳՑՈՒՄՐԻ

(Էջ 278)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՓ, 327-II, 2-րդ խմբավորում, թերթ 7:
Տպագրվում է առաջին անգամ:

ՏԵՐ ՄԼԵՀԸ

(Էջ 279-301)

Ինքնագիրն անհայտ է: Առաջին անգամ տպագրվել է «Ապագա», 1935, թիվ 110-115: ԳԱԹ, ԻՓ, 2178-II գույքահամարի տակ պահվում է «Ապագայի» թերթոնը՝ հեղինակային լրացումներով, որտեղից էլ արտատպվում է: «Տեր Մլեհը» գլուխը, ըստ Իսահակյանի ծրագրային գրառումների, պետք է զետեղվեր Ուստա Կարոյի՝ Գյումրի կատարած այցելությունը նկարագրող հատվածում՝ «Կապիտան Ղազարը» և «Մելքոն վարժապետը» գլուխների շարքում (տե՛ս ԳԱԹ, ԻՓ, 327-II, տետր 2, էջ 3ե), սակայն հետագայում մշակել է որպես առանձին պատմվածք: Այդուամենայնիվ, «Ուստա Կարոյի» արխիվում այդ գլխին առնչվող հատվածական բնագրեր և ծրագրային գրառումներ են պահպանվել, ուր հերոսի անունը կիրառված է երեք ձևով՝ Տեր-Մլեհ, Տեր-Մլե, Տեր-Մրեմ:

Տպագրվում է «Ապագա», 1935, թիվ 110-115:

Էջ 281, տ. 9. ***Գեորգ Կաթողիկոսը (Ճեմարանի հիմնադիրը)*** – **Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի** (1813-1882) – Ամենայն Հայոց կա-

թողիկոս 1866 թվականից: 1874 թվականին հիմնել է Գևորգյան ճեմարանը, ապա էջմիածնի թանգարանը: Կաթողիկոսը հնաւողական աշխատանքներ է կատարել հայկական բոլոր եկեղեցիներում մխակնալ ժամերգութիւն մատչելու ուղղութեամբ: Նրա ջանքերով են տպագծվել «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (1874), «Ձայնագրեալ Շարական հոգևոր երգոց» (1875), «Ժամագիրք» (1877), «Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց» (1882) գրքերը:

Էջ 286, տ. 1. *Ինճիներ* = ինժիներ:

Էջ 286, տ. 6-8. *հայկական կոտորածների մասին ... Թրքահայաստանում* – Տե՛ս էջ 57, տ. 1 ծանոթագրությունը:

Էջ 291, տ. 2. *ռուս-թրքական պատերազմին, 1877-78 թթ.* – Տե՛ս էջ 235, տ. 6-7 ծանոթագրությունը:

Էջ 291, տ. 22. *մեր վարժատուները փակեց* – Տե՛ս էջ 98, տ. 22 ծանոթագրությունը:

Էջ 295, տ. 20-22. *ողորմութիւն տվողը ... գողերը կտանին* – Համմտ. «Վաճառեցէք պինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ապականէ» (Ղուկ. ԺԲ 33):

<«ՏԵՐ ՄԼԵՀԸ» ԳԼԽԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՑԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ>

1. ՏԵՐ-ՄԼԵՀ
(Էջ 302-304)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ի֊Ֆ, 327-II, տետր՝ «Ուստա Կարոն Գյումրիում» վերնագրով, էջ 13-14:

Տպագրվում է առաջին անգամ:

Էջ 302, տ. 5-6. *Սմբատյան եպիսկոպոս* – Դատելով նկարագրությունից՝ Խահակյանը հավանաբար նկատի ունի Արարատյան Հայրա-

պետական թեմի առաջնորդական փոխանորդ, բանասեր-պատմաբան, եկեղեցական գործիչ Մեսրոպ Սմբատյանցին (1833-1911):

Էջ 302, տ. 18. ***Մաշտոց – տե՛ս*** Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան Սուրբ եկեղեցւոյս Հայոց, Երուսաղեմ, 1879:

Էջ 304, տ. 1-2. ***պաշպորտ եստ*** (ռուս.) паспорт есть (անձնագիր ունե՞ս):

2. ԳՅՈՒՄՐԻ

(Էջ 304)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 43:

Տպագրվում է առաջին անգամ:

3. ՏԵՐ-ՄԼԵՆ

(Էջ 304)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻՖ, 327-II, թերթ 29:

Տպագրվում է առաջին անգամ:

